

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. «Նաիրի», 2010,

էջ:

Գրքում համակարգված ձևով ներկայացված է հունարենի ազդեցությունը հունաբան դպրոցի թարգմանությունների վրա: Քննարկվում են բառային, ձևաբանական և շարահյուսական հունաբանությունների տարբեր տեսակներ՝ պարտադիր բնագրային վկայակոչումներով: Ցույց է տրվում, որ դրանցից շատերն առկա են արդեն «նախահունաբան» թարգմանություններում, իսկ առանձին տեսակների հատ ու կենտ օրինակներ կարելի է գտնել նաև վաղ շրջանի դասական թարգմանություններում: Բոլոր դեպքերում մեջբերված են հունարեն սկզբնաղբերի համապատասխան հատվածները (եթե այդպիսիք պահպանվել են): Ենթադրվում է մեծ մասամբ եզրափակվում են համապատասխան լեզվական երևույթների հունարենից չազդված՝ դասական թարգմանության օրինակներով:

ISBN

© Գոհար Մուրադյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	7
ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑ.....	7
ՆԱԽԱՀՈՒՆԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ	23
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՆԵՐԿԱ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	33
Ա ԲԱՌԱՊԱՇԱՐ	35
1.1 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ՊԱՏՃԵՆՈՒՄ	35
1.2 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԿԻՍԱՊԱՏՃԵՆՈՒՄ	50
1.2ա Կիսապատճենում մակբայ պարունակող բառակապակցություններ	51
1.2բ Կիսապատճենում բարդ բառերի օգնությամբ	55
1.2գ Կիսապատճենում նախադրություններ պարունակող բառակապակցությամբ	58
1.3 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ	59
1.4 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ	61
2 ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ՊԱՏՃԵՆՈՒՄ	62
3 ՎԵՐՋԱԾԱՑԱՎՈՐ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	70
3ա Հայերենի բառակազմական նորմերով կազմված նորաբանություններ	71
3բ Հայերենի բառակազմական կաղապարների տեսանկյունից նորաբանական կազմություններ	75
4 ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ՝ «ԼԻ»-ՈՎ ԲԱՅԱԾԱԿԱՆՆԵՐ	85
5 ԱՅԼ ՈՒՇԱԳՐԱՎ ԺԽՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ	86
6 ԻՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐ	87
7 ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՌԵՐԻ ՏԱՐԲԵՐ՝ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՀՈՒՆԱԲԱՆ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ	93
8 ՆՈՐ ԲԱՌԵՐ ԲԱՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԻՄՔԵՐԻՑ	96
Բ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	100
1 ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԵՌ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ	100
1ա Ցուցական դերանունների իգական սեռը	100
1բ «Մի» թվականի զուգահեռ ձևերը	101
2 ՀՈՒՈՎԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	102
2ա Եզակի տրականի զուգահեռ վերջավորությունները	102
2բ Եզակի սեռականի «ը» վերջավորությունը	108
2գ Հոգնակի սեռական-տրականի «ց» վերջավորությունը	109
2դ Եզակի բացառականի «ուստ» վերջավորությունը	110
2ե Կոչական «ե» վերջավորությամբ	111
2զ Այլ անկանոն հոլովական ձևեր	112
3 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐ	113
3ա «ն/նի/ըն» նախդիրը հայցական և տրական հոլովների հետ	113
3բ «ն/ըն» նախդիրը բացառական հոլովի հետ	114
3գ Այլ արհեստական նախդիրներ	115
4 ԵՐԿԱԿԻ ԹԻՎ	118
5 «ԵՐԿԱՔԱՆՁԻՐ» ԴԵՐԱՆՈՒՆԸ	119

6 «ԻՐ» ՎԵՐՋԱԾԱՑՈՎ ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ	120
7 ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	121
7ա «Իլ»-ով կրավորական անորոշ դերբայ	121
7բ «Ե» լծորդության բայերի կրավորական սեռի և «ի» լծորդության բայերի անցյալ անկատարի եզակի թվի երրորդ դեմքի «իւր» վերջավորությունը	122
7գ «Ա» և «ու» լծորդության բայերի արհեստական կրավորական ձևեր	123
7դ «Իցեալ»-ով անցյալ դերբայներ	124
7ե Բայի սեռի տարբերակման այլ դեպքեր	126
8 ԱՃԱԿԱՆԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ	126
9 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐ	128
9ա Ենթակայական դերբայ՝ ներկայի հիմքից	128
9բ «Եղանիլ» բայը	128
9գ Պատճառական բայեր ոչ բայական հիմքերից	129
9դ «Եմ» բայի անորոշ դերբայը	129
9ե Բայական հիմքեր՝ «ոց» վերջածանցով	130
9զ Ավելորդ «եաց» ածանցի կցումը անցյալ կատարյալի արմատական հիմքին	132
10 ԷԱԿԱՆ ԲԱՅԻ ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ «Է»-ՈՎ	132
11 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ «ԴԱՍԱԿԱՆ»	133
ԵՎ «ՀՈՒՆԱԲԱՆ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	133
Գ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ	134
1 ՀՈՒՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	134
1ա «Էթիկական տրական» (dativus ethicus)	134
1բ «Բնորոշման սեռական» (genetivus characteristicus)	135
1գ «Ունենալ» նշանակությամբ էական բայի հետ սեռական և տրական	135
1դ Մասնական սեռական (genetivus partitivus)	137
1ե «Համեմատության սեռական» (genetivus comparationis)	139
1զ «Տարբերակման սեռական» (genetivus distinctionis/separationis)	140
1է Բացականչության սեռական (genetivus exclamationis)	140
2 ԳՈՅԱԿԱՆԱՑՈՒՄ	141
2ա Գոյականացված ածական	141
2բ Գոյականացված անորոշ դերբայ	142
2գ Բայի դիմավոր ձև	143
2դ Գոյականացված մակբայ	143
2դ1 Մակբայ որոշչի դերում	144
2ե Այլևայլ ժխտական արտահայտություններ	144
2զ Թեք հոլովներով բառեր	145
2է Գոյականացված նախդրավոր բառակապակցություններ	146
2ը Այլ նախդիրների կոտակումներ	147
2թ Երկու հոլովական վերջավորության միացում	149
2ժ Գոյականացված նախադասություններ	153

3	ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ	155
3ա	Ենթակայական դերբայի և «իչ» ածանցով գործող անձի անվան հետ ուղիղ խնդրի կիրառությունը	155
3բ	Բայի խնդրառություն փոփոխություն	157
3գ	Նախդրի խնդրառության պատճենումը հունարենից	158
3դ	Նախդիրների ընտրություն	158
3ե	«Ստորոգիմ» բայի խնդրառությունը	159
3զ	«Ուրոյն» ածականի խնդրառությունը	161
4	ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ	162
4ա	Որոշչի առումով կիրառված դերբայական կապակցություն	162
4բ	Գոյականացված դերբայներ	163
4գ	Պարագայի առումով կիրառված դերբայներ	165
4դ	Զանազան հոլովներով անունների հետ համաձայնեցված դերբայի թարգմանությունն անորոշ դերբայի գործիական հոլովով	167
5	ԲԱՅԱՐՁԱԿ ՍԵՌԱԿԱՆ (genetivus absolutus)	172
5ա	«Բացարձակ սեռական»-ի պատճենում	172
5բ	Թարգմանություն «տեառն ասելով» տիպի դարձվածով	175
6	ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ	179
6ա	Բացարձակ անորոշ դերբայ (infinitivus absolutus)	179
6բ	Հրամայական իմաստով կիրառված անորոշ դերբայ	179
6գ	Հայցականն անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo)	181
6գ1	Նախդրով գոյականացված անորոշ դերբայ կամ հայցականն անորոշ դերբայի հետ	184
6գ2	ὥστε կամ ἕως («մինչ»/«մինչև»/«մինչ ց», նաև «իբր զի», «որպէս զի») շարկապին հետևող անորոշ դերբայ կամ «հայցականն անորոշ դերբայի հետ»	188
6դ	Ուղղականն անորոշ դերբայի հետ (nominativus cum infinitivo)	190
7	«Լի»-ով ԲԱՅԱԾԱԿԱՆԸ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՌՈՒՄՈՎ	191
8	ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՀԵՏ	193
9	ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԲԱՅԹՈՂՈՒՄՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	194
10	ԹՎԱՐԿՈՒՄ ՀՈԴԻ ՀՈԼՈՎԱԶԵՎԵՐԻ ԵՎ μέν ՈՒ δέ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ («Մեկը... Մյուսը»)	195
10ա	Թարգմանված՝ «է որ/ինչ որ/զի» կրկնվող կապակցությամբ	195
10բ	Թարգմանված՝ «ոմն» անորոշ դերանվամբ, հաճախ՝ իբի առումով	197
10գ	Դերանունների այլ տարօրինակ կիրառություններ	197
11	ՀՈՒՆԱՐԵՆ λένω ԲԱՅԱԶԵՎՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	198
12	ՀՈՐԴՈՐԱԿԱՆ «ԲԵՐ» ԶԵՎԸ	199
13	ՀՈՒՆԱՐԵՆ ՄԱԿԲԱՅ «ՈՒՆԵՆԱԼ» ԲԱՅԻ ՀԵՏ	200
14	ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ	201
14ա	Որոշչի համաձայնությունը որոշյալի հետ	201
14բ	Ենթակայի և ստորոգյալի անհամաձայնություն	202
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	204
1	ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ	204

2 ԴԱՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ «ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՈՃԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՈՒՆԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	215
3 ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՆՐԱ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻՆ	229
4 «ՊԻՏՈՅԻՑ ԳՐՔԻ» ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀՈՒՆԱԲԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ	241
1 Դասական թարգմանություններում կերտված հունաբանություններ	241
2 Նախահունաբան թարգմանություններում կերտված հունաբանություններ	246
3 Հունաբան թարգմանություններում կերտված հունաբանություններ	265
5 ԳՐԻԳՈՐ ՔԵՐԹՈՂԻ ԹՂԹՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	277
ՆԱԳԱՎՈՒՄՆԵՐ	279
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	283

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑ

5-րդ դարում սկիզբ առած Հայ գրական լեզուն անխուսափելիորեն ենթարկվել է հունարենի ազդեցությանը. այն հավանաբար զգալի էր նաև քրիստոնեության քարոզման նախագրական¹ մեկդարյա ժամանակահատվածում, երբ քարոզիչները բանավոր թարգմանությունում ունեցելիքներին էին մատուցում հունարեն կամ ասորերեն գրի առած տեքստը²: Սակայն առաջին թարգմանիչները գործ ունեին լայն զանգվածների հետ, հետևաբար ձգտում էին գրել հնարավորին չափ հասկանալի, բնական լեզվով և խոստովել հունարենի ազդեցությունից³: Եզնիկ Կողբացու թարգմանությունում պահպանված (հունարեն սկզբնագիրը կորսված է)⁴ 4-րդ դարի Հայտնի եկեղեցական գործիչ Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնություն»⁵ առաջաբանի հետևյալ խոսքերը, Գ. Սարգսյանի համոզմամբ (էջ 28), այդ շրջանի թարգմանիչների «հռչակագրի պես մի բան» կարելի է համարել. «յուրաքանչյուր լեզվում կան բազմաթիվ յուրահատուկ դարձվածներ, որոնք իրենց տեղում թեև գեղեցիկ, պարզ, արտահայտիչ և պատշաճ են թվում դրանք օգտագործողների համար, բայց երբ նույն բառերով այլ լեզու են փոխադրվում, չեն արտահայտում մտքի բովանդակությունը... Քանզի անհրաժեշտ է վերանայ ցանկացած լեզվի յուրահատուկ արտահայտչաձևերից և լեզվի միտքը թարգմանել ու վերաշարադրել... Եթե մեկը թարգմանության այս սկզբունքով չի ղեկավարվում, ապա բազում հոգս է պատճառում ընթերցողներին...»⁵:

Հաջորդ սերնդի թարգմանիչների թարգմանած ավելի բարդ՝ աստվածաբանական երկերը (Աթնաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու) պետք է ավելի պատրաստված ընթերցող ակնկալներին: Դրանք կազմում են «նախահունարեն» թարգմանությունների խումբը. դրանցում կան զգալի թվով հունարենից պատճենված բառեր, չարհյուսություններ էլ բավական խրթին է հունարենի ազդեցության պատճառով: Սակայն ընթերցողների հոգսն իսկապես «բազմացավ» դրանց հետևած

¹ Գ. Զահուկյանը բերում է հունարենից փոխառյալ 107 բառ և 52 հատուկ անուն, որոնք կարող էին 5-րդ դարից վաղ մտած լինել Հայերենի մեջ. տե՛ս ԶԱՀՈՒԿՅԱՆ 1987, 615-630:

² Այսպես կոչված «հետերոէպիկ ընթերցման» ընթացքում. տե՛ս ՍԱՐԳՍՅԱՆ 1990:

³ Ասորերենից թարգմանությունները պատկանում են ամենավաղ շրջանին և թվով զգալիորեն զիջում են հունարենից թարգմանված երկերին: Դրանցում տեղ գտած ասորաբանությունների մասին տե՛ս ТЕР-ПЕТРОСЯН 1986, 24-28: Տեր-Պետրոսյանի կարծիքով, ասորաբանությունները համեմատելի են դասական շրջանի թարգմանություններում հանդիպող հունաբանությունների հետ. երկու դեպքում էլ դրանց կիրառությունը գիտակցված չէ և թերևս հետևանք է թարգմանիչների փորձառությունից պակասի, մինչդեռ հունաբան դպրոցի թարգմանիչները գիտակցված ու ծրագրված եղանակով Հայերենի մեջ են ներմուծել հունարենի շարահյուսական դարձվածներ ու քերականական կատեգորիաներ (էջ 27):

⁴ ԵԻՍԵԲԻՈՍ ԵՄԵՍԱՑԻ 1980:

⁵ Աշխարհաբար թարգմանությունը քաղած է հետևյալ հոդվածից՝ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1982², 65-66:

Հունաբան դպրոցի թարգմանությունների (5-րդ դարի վերջերից մինչև 8-րդ դարի առաջին երեք տասնամյակները) ի հայտ գալով: Դրանք հիմնականում «գիտական»՝ ժամանակի տարբեր մակարդակների դպրոցներում ուսումնասիրվող գրվածքներ էին, թեպետ հունաբան լեզվով թարգմանվել են նաև մի շարք կարևոր աստվածաբանական երկեր: Դրանք վերին աստիճանի ճշգրիտ՝ բառ առ բառ, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ձևով թ առ ձևով (խոսքը բառապատճենումների մասին է) թարգմանելու պահանջը հանգեցրեց հունարենի ազդեցություն շոշափելի աճի, իսկ որոշ թարգմանություններում՝ արհեստական լեզվի, ինչն էլ ավելի դժվարեցրեց առանց այդ էլ բովանդակությունամբ ոչ պարզ գրվածքների ընկալումը:

Նման զարգացում մատնանշում է Ս. Բրոքը՝ հունարենից ասորերեն թարգմանություններում. եթե չորրորդ-հինգերորդ դարերի թարգմանիչների նպատակն էր հունարեն երկը հասկանալի լեզվով մատուցել ասորի ընթերցողին, ապա նրանց հետնորդները վեցերորդ-յոթներորդ դարերում ձգտում էին ընթերցողին հասցնել թարգմանվող երկի ընկալմանը, ինչը հանգեցրել է ասորերենի նորմերին հակասող՝ արհեստական բառերի և քերականական ձևերի կերտմանը⁶:

Տիպաբանորեն նույնպիսի զարգացում են ունեցել նաև հունարենից սլավոններեն թարգմանությունները: Այսպես, Կիրիլ-Մեթոդիի ժամանակաշրջանի թարգմանությունները բնորոշվում են թարգմանվող բառերի ու հասկացությունների ներքին իմաստի բացահայտումով, ինչը հաճախ բերում էր սկզբնաղբից արտաքին, ձևական շեղման: Հետագայում այդ մեթոդի կիրառման տեսակարար կշիռը նվազեց՝ տեղի տալով սովորական բառերը տեղմինաբանական արժեքով օժտելուն և բառապատճենմանը: Նույնիսկ իմաստավորման եղանակով ստեղծված որոշ հին եզրեր փոխարինվում էին նոր՝ պատճենված բառերով, ինչը հանգեցնում էր տառակերության և իմաստի մթազնման⁷:

Այսպիսով հունարենի ազդեցությունն իր գաղաթնակետին հասավ հունաբան թարգմանություններում:

Հետազոտողներն անդրադարձել են հունաբան դպրոցի գնահատմանը պատմական կոնտեքստում, հատկապես եկեղեցական վեճերի առնչությամբ⁸: Այդ կապակցությամբ նրանք իրարամերժ կարծիքներ են հայտնել դպրոցի ծագման ժամանակի վերաբերյալ⁹: Դպրոցը գիտվել է որպես հունական գիտե-

⁶ BROCK 1983, 4, BROCK 2001¹, BROCK 2001², 73: Այդպիսի փոփոխությունը Բրոքը կապում է ժամանակի ընթացքում հունարենի կարևորության և վարկանիշի բարձրացման հետ:

⁷ ВЕРЕСПАГИН 1982:

⁸ ԱՆԱՆԵԱՆ 1958, АРЕВШАТЯН 1973, 141-142, 181-184, ԱԿԻՆԵԱՆ – ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ 1977, և այլն:

⁹ Եթե հունաբան դպրոցի գործունեության վերին ժամանակային սահմանն են համարվում Ստեփանոս Սյունեցու թարգմանությունները 8-րդ դարի առաջին տասնամյակներում, ապա բազում վեճեր է հարուցել դպրոցի սկզբնավորման ժամանակի հարցը: Հ. Մանանդյանն իր թվագրումների անկյունաքարն է դարձրել Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության ժամանակի որոշումը. վերջինս նա համարում է հունաբան դպրոցի գործունեությամբ:

լիքը ներմուծելու միջոց¹⁰: Հունաբան թարգմանությունների հանդեպ որոշակի հետաքրքրություն կա հատկապես արևմտյան հայագետների շրջանում, տեքստաբանական՝ հունարեն սկզբնագրերի նախնական վիճակը վերականգնելուն դրանց բերած նպաստի տեսանկյունից¹¹: Առանձնահատուկ ուշադրություն է արժանացել հունաբան թարգմանությունների լեզուն, որը սովորաբար հակադրվել է նախորդ շրջանի «գասական» լեզվին:

Հունաբան թարգմանությունների մեթոդը Ն. Ադոնցն անվանել է «նյութական» (материальный)¹² և, լեզուն բնորոշելիս, հպանցիկ հիշատակել է «չարհյուսական և այլ առանձնահատուկությունները»՝ որպես ամենակարևոր հատկանիշ չեղտելով «հունարենի բառակազմության հարմարեցված որոշա-

յան երկրորդ շրջանի առաջին թարգմանություն և տեղադրում 6-րդ դարի կեսերին, իսկ առաջին շրջանի թարգմանությունները՝ համապատասխանաբար 6-րդ դարի առաջին կեսում: Երկրորդ շրջանի թարգմանություններն ըստ նրա իրականացվել են 552-576 թվականներին, իսկ երրորդին՝ 576-578-ից մինչև 7-րդ դարի կեսերը (ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 202, 208): Թարգմանությունների ժամանակի մասին մեկ այլ տեսակետի պաշտպան է Ս. Արևշատյանը. առաջին շրջանն ըստ նրա ընդգրկում է 450-ականներից մինչև 480-ական թվականների սկիզբը, երկրորդը՝ 480-ականներից մինչև 510-ականները, երրորդը՝ 510-ականներից մինչև 600 թվականը, իսկ չորրորդը՝ 610-ականներից մինչև 720-ական թվականները (АРЕВШАТЯН 1973, 185-188): այս երկու հիմնականից բացի գոյություն ունեն նաև մասնավոր կարծիքներ: Մենք փորձ ենք ձեռնարկել Փիլոնի թարգմանություններում և «Պիտոյից գրքի» թարգմանական հատվածներում կերտված մի շարք նորաբանությունների՝ Ղազար Փարպեցու մոտ կիրառության հիման վրա պնդել, որ ճիշտ է դրանց թվագրումը հինգերորդ դարի երկրորդ կեսով, տե՛ս ՄՈՒՐԱԴՅԱՆ 1990, 94-104:

¹⁰ Այն փաստը, որ թարգմանված ամենավաղ գործերը ներառում էին քերականություն (Դիոնիսիոս Թրակացի), ճարտասանություն (կիսաթարգմանական «Պիտոյից գրքը») և տրամաբանություն (Արիստոտելի Կատեգորիաների Պորփյուրի «Ներածություն») առարկաները, որոնք կազմում էին փիլիսոփայությանը նախորդող «եռյակ գիտությունների» շարքը, առաջին անգամ նկատել է Ե. Դուրյանը (Դուրեան 1933, 34-35՝ որպես տրամաբանական գործ նա նշել է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրականք»-ը): այս գաղափարն ընդունել է Հ. Լևին (LEWY 1936, 15՝ որպես երրորդ աստիճան նա կարծես նկատի ունի Արիստոտելի գործերը) և հետագայում զարգացրել Ս. Արևշատյանը (АРЕВШАТЯН 1973, 145-150՝ երրորդ փուլում նա գիտում է Փիլոնի երկերը): Ա. Տերյանը նշել է Հայերեն թարգմանությունների կապը բյուզանդական դպրոցների ուսումնական ծրագրի հետ (TERIAN 1981, 19, 1982, 183): «Քառյակ» գիտությունները Հայաստանում 7-րդ դարում զարգացրել է Անանիա Շիրակացին:

¹¹ CONYBEARE 1892, BOLOGNESI 2000, 29-116 = BOLOGNESI 1962, BOLOGNESI 2000, 191-197 = BOLOGNESI 1969¹; BOLOGNESI 2000, 117-189 = BOLOGNESI 1969²; BOLOGNESI 2000, 199-208 = BOLOGNESI 1976; TESSIER 1979, TESSIER 1984, ПИРПН-ЯН 1984, OLIVIERI 1996: Ըստ Տեսսիեի՝ Արիստոտելի Հայերեն թարգմանությունները շատ կարևոր են դրանց հունարեն սկզբնագրերի վերականգնման համար. տե՛ս TESSIER 1984: Հայերեն թարգմանության ընթերցումները հաշվի են առնվել Նեմեսիոս Եմեսացու «Ցաղագս բնութեան մարդոյ» երկի հունարեն քննական հրատարակության մեջ՝ MORANI 1987 (ed.): Մորանիի հավաստմամբ՝ Նեմեսիոսի Վենետիկի հրատարակության մեջ ձեռագրերից ընտրված ընթերցումները միշտ չէ, որ լավագույնն են, հետևաբար հունարեն սկզբնագիրը պետք է հաշվի առնվի Հայերեն թարգմանության քննական բնագիր պատրաստելիս. տե՛ս MORANI 1973: Հունարեն տեքստերը հրատարակելիս դրանց Հայերեն թարգմանություններն օգտագործելու անհրաժեշտության մասին է խոսվում նաև Մ. Շիրինյանի հետևյալ հոդվածում՝ SHIRINIAN 2001, 229-240:

¹² АДОНИ 1915, CLXXXV:

կի բառապաշարը»¹³ ու նշելով հունարեն նախածանցների համար հայերենում համարժեքներ գտնելու կամ արհեստականորեն կերտելու սովորությունը:

Նախածանցավոր բառերի կիրառությունը հունաբան լեզվի գլխավոր հատկանիշ է համարել Հ. Մանանդյանը: Նա գրել է. «Ինչպես հայտնի է, հունաբան հայերենի հիմնական առանձնահատկությունն էր հունաբան հատուկ բառակազմությունը, գլխավորապես նախդիրների (այսպե՛ս. խոսքն, իհարկե, նախածանցների մասին է — Գ. Մ.) միջոցով, որ անհարազատ էր Ոսկեդարյան կոչված հայերենի համար»¹⁴: Որոշակի նախածանցների կիրառությունն այս կամ այն տեքստում հաշվի առնելով՝ նա դպրոցի արտադրանքը բաժանել է երեք ժամանակագրորեն իրար հաջորդող խմբի: Այսպես, Մանանդյանը նշում է, որ «Հակ» նախածանցը դեռևս չի հանդիպում առաջին շրջանի թարգմանություններում, և հունարեն ἀντι-ի համարժեքը դրանցում «Հակառակն» է¹⁵, նույնն ասված է նաև δια-ի դիմաց հանդես եկող «տար» նախածանցի համար (օրինակ՝ նա պնդում է, որ διαφορά-ի «տարբերություն» համարժեքը կիրառության մեջ մտավ Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանությունից սկսած¹⁶. սակայն նա չէր նկատել «տարացոյց» բառը Փիլոնի մոտ՝ Փիլ. լին. 2.34, և «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական հատվածներում՝ Պիտ. 68, 69): «Ներհակ» բառը որպես ἐναντίος-ի թարգմանություն ևս, ըստ Մանանդյանի, չընդունված մեջ է դրվել Տիմոթեոս Կուզից սկսած, հետագա երկերում¹⁷: Նշված օրինակներն ստիպում են, ընդհանուր առմամբ Մանանդյանի համակարգն ընդունելով հանդերձ, զգուշավորությամբ վերաբերվել նրա որոշ պնդումներին¹⁸:

Ընդհանուր բառապաշարի և, մասնավորապես, նախածանցավոր բառերի կիրառությունը թույլ է տվել Մանանդյանին առանձնացնել հունաբան թարգմանությունների հնագույն շերտը՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականություն»¹⁹, «Պիտոյից գիրք», Փիլոն²⁰, Իրենեոս²¹, երկրորդ շերտը՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն», Արիստոտելի «Յաղագս ստորոգութեանց» և

¹³ АЛОИЦ 1915, CLXXXIV:

¹⁴ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 111:

¹⁵ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 112:

¹⁶ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 113-114:

¹⁷ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 115, բայց Փիլոնի մոտ ավանդված է՝ «ներհակ» (Փիլ. այլաբ. 110) — ἐναντίος (Ph. LA 1.18), որտեղից այն թափանցել է «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերը՝ «ներհակ» ձևով (Պիտ. 209), մինչդեռ նույն երկի թարգմանական հատվածներում ունենք ἐναντίος (Aphth. 63, 68, 81) — «ընդդիմակ» (Պիտ. 30, 44, 71) համարժեքը:

¹⁸ Հ. Մանանդյանի բանասիրական աշխատություններում տեղ գտած անճշտությունների քննադատությունը տե՛ս հետևյալ հոդվածում. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ 1969: Տեղյալն էլ մի քանի անճշտություն է մատնացույց անում՝ մեթոդն ինքնին խնդրահարույց համարելով, քանի որ Մանանդյանն անհարկի շեշտել է առանձին նորաբանություններ և որպես իր խմբավորման վճռորոշ գործոններ դրանք այս կամ այն խմբին վերագրել (TERIAN 1982, 176):

¹⁹ Վայտենբերգը վիճարկում է «Քերականությունը» հունաբան դպրոցի առաջին թարգմանության մասին կարծիքը, տե՛ս WEITENBERG 2000, 449:

²⁰ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 105-115:

²¹ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 228-236:

«Յաղագս մեկնութեան» և Յամբղիքոսի՝ Արիստոտելի այդ երկերի մեկնությունները²², Պորփյուրի «Ներածություն»²³, Պետրոսի անունով նամակը «Գիրք թղթոցում»²⁴, և երրորդ շերտը՝ «Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնություններ»²⁵, «Հատուած ինչ մեկնութեան Ստորոգութեանց Արիստոտէլի»²⁶, Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի»²⁷ և Նոննոսի՝ Գրիգոր Նազիանզացու մոտ հիշատակվող առասպելների մեկնությունը²⁸: Յուրաքանչյուր շերտի բառապաշարը վերլուծելիս՝ նա հատուկ մատնացույց է արել, թե ինչպիսի բառեր են տվյալ շերտի թարգմանիչները փոխառել նախորդ շերտից կամ շերտերից, և որոնք են հատկապես այդ շրջանում կերտված նոր բառերը²⁹:

Շատ հպանցիկ Մանանդյանն անդրադարձել է նաև հունաբան թարգմանությունների քերականական նորամուծություններին. նա նշել է ցուցական դերանվան իգական ձևերը, որոնք հանդիպում են միայն առաջին շրջանում և Տիմոթեոսի «Հակաճառության» թարգմանությունների մեջ³⁰, այլև «ըն», «ն» նախդրի կիրառությունը առաջին և երկրորդ խմբերում³¹: Նախածանցավոր բառերից բացի, Մանանդյանը բերել է յուրաքանչյուր շերտի համար բնորոշ յուրահատուկ բառեր³²:

Հ. Մանանդյանը հունաբան դպրոցին նվիրված գրքից հետո հրատարակել է նաև առանձին բնագրեր, որոնց առաջաբաններում քննել է այդ թարգմանություններն իր առաջարկած խմբավորման համապատասխան: Այսպես,

²² ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 125-128: Հետագայում հրատարակվեց դրանցից մեկի լրիվ քննական բնագիրը (Անան. Ստոր.), իսկ Ս. Արեշատյանը վիճարկեց այդ անանուն մեկնությունները Յամբղիքոսին վերագրելու իրավացիությունը՝ լույս հանելով Որոտնեցու հիշատակած «Նոմե-լախոս» անվան հիման վրա, որ Մանանդյանը համարել էր «Յամբղիքոսի» աղավաղված ձև, մինչդեռ բազում ձեռագրերում երկուսն էլ վերագրված են Դավիթ Անհաղթին, տե՛ս АРЕВШАТЯН 1973, 202-210:

²³ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 183-191:

²⁴ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 93-95. Նորայր Բյուզանդացին և Ներսես Աղևանցի վերագրել են այն Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչին, տե՛ս ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 95, ծ. 1:

²⁵ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 142-173:

²⁶ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 170-173:

²⁷ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 191-196:

²⁸ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 236-246:

²⁹ Նույն մեթոդն օգնել է Ս. Արեշատյանին՝ Պլատոնի գրվածքները (АРЕВШАТЯН 1973, 218-227) և Եվտիքիոսի՝ «Յաղագս բնութեան և առանձնաւորութեան» երկը (АРЕВШАТЯН 1973, 239) խմբակից համարելու երրորդ շերտի թարգմանություններին: Պլատոնի երկերի թարգմանությունները երրորդ խմբի վաղագույններից են և նախորդում են Դավթի գրվածքներին, քանի որ միայն դրանցում է հանդիպում երկրորդ շրջանում թարգմանված՝ Պորփյուրի «Ներածության» մեջ կիրառվող սեռական հոլովի արհեստական «ը» վերջավորությունը. տե՛ս ԱՐԵՎԴՆԱՏՅԱՆ 1971, 14-15:

³⁰ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 234-235:

³¹ ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 130-131, 151-152:

³² Առաջին շերտի համար՝ «աղաւտ», «քաջուղէշ», «կնատ», «գործակ», «արկած» և այլն (ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 108-111), երկրորդի՝ «թուելութիւն», «կարութիւն», «խրակութիւն», «խրաւորեմ», «նոյնաբանութիւն» (ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 127-128), երրորդի՝ «խրոզութիւն», «բնաբանութիւն», «տեսակարարեմ», «եզրակացութիւն» (ՄԱՆԱՆԴԵԱՆ 1928, 159-160):

Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեան» երկի իր առաջաբանում³³, մատնանշելով այդ թարգմանությունների մեջ 100 բառ, որոնք առկա են առաջին խմբի թարգմանություններում, Մանանդյանը բերում է նաև երկրորդ խմբի թարգմանությունների հետ ընդհանուր բառեր («արտունություն», «բացորոշեալ», «նախերգան», «ներածեմ», «ներընդունիմ», «ներհակ», «պարաբառնամ», «ստորասեմ», «տարբերեմ», «հակասեմ») և քերականական առանձնահատկություններ («ն/ըն» նախդիրը, «ներում» նախդիրը³⁴), նաև «ըստմասինքն», «ի վախճանէցն», «յառաջնմէն», «պիտառոցել» տիպի հունաբանություններ, և եզրակացնում, որ խնդրո առարկա թարգմանությունը պատկանում է երկրորդ խմբին (ըստ նրա՝ 6-րդ դարի երկրորդ կես)։ Մանանդյանը նաև ցույց է տվել, որ Թեոնի թարգմանիչը լիովին օգտագործել է «Պիտոլից գրքի» ճարտասանական տերմինաբանությունը, սակայն նույնաբնույթ հատվածներում որոշ հունարեն բառերի տարբեր թարգմանությունները³⁵ վկայում են, որ դրանք ոչ միայն միևնույն թարգմանիչի գործ չեն, այլև պատկանում են տարբեր խմբերի։

Նույն երկրորդ խմբի թարգմանություններին, ըստ Մանանդյանի, խմբակից է նաև «Հերմեյո եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք» երկը³⁶։ Նա բերում է առաջին և երկրորդ խմբերի հետ ընդհանուր բառերի ցանկ³⁷ և նշում հետևյալ քերականական³⁸ առանձնահատկությունները՝ «սէ» իգականը, «ն» նախդիրը ἀπο-ի դիմաց (ինչպես Թրակացու և Թեոնի մոտ), «մի» թվականի փոխարեն «մու» ձևը։

³³ ՄԱՆԱՆԴՅԱՆ 1938 (հրատ.), ԺԵ-ԼԲ։

³⁴ ՄԱՆԱՆԴՅԱՆ 1938 (հրատ.), ԻԸ. «ներում յաղագս վերծանութեան» (Թեոն 179) հավանաբար ἐν τῷ περὶ ἀναγνώσεως-ի համարժեքն է (համապատասխան հունարեն հատվածը չի պահպանվել)։

³⁵ ἐνστοχία (Aphth. 62, Theon 96.19) – «հանդիպողություն» (Թեոն 34) և «քաջադիպություն» (Պիտ. 30.2), θεσμοφορεῖον (Theon 98.5) – «թեմոփորոն» (Թեոն 36) և «տէրունիք» (Պիտ. 40.24, սակայն այստեղ բնագրում այլ բառ է՝ θεσμοφορίους, Nik. 274), παιδαγωγός (Aphth. 63.8, Theon 99.1) – «մանկավարժ» (Թեոն 38) և «մանկածու» (Պիտ. 30.14, 31.5), βακτηρία (Nik. 272, Theon 99.1) – «մակ» (Թեոն 38) և «գաւազան» (Պիտ. 31.5, սակայն «գաւազանաւն էհար»-ին համապատասխանում է ἐτύπρησεν, Nik. 272), ἐναργῶς (Aphth. 103.18, Theon 118.7) – «յայտնապէս» (Թեոն 116) և «երևելապէս» (Պիտ. 201.2), τὸ δηλούμενον (Aphth. 103.18, Theon 118.8) – «զազդեցեալն» (Թեոն 116) և «զյայտնեալն» (Պիտ. 201.3), μελάνοχροος (Aphth. 104.1, Theon 118.11) – «աջմայտ» (Թեոն 116) և «սևագոյն» (Պիտ. 201.5)։ Երկու թարգմանությունների զուգահեռ հատվածների համար Մանանդյանը բերում է միայն Թեոնի հունարեն բնագիրը, մինչդեռ «Պիտոլից գրքի» թարգմանական հատվածների բնագիրը Ափթոնիոսի նախակրթություններն են. տեսական մասերն ու յուրաքանչյուր տեսակի համար մեկական նախակրթություն պահպանվել են նրա համառոտված ժողովածուի մեջ, իսկ նախակրթությունների մեծ մասը վերագրվել է Նիկողայոս Մյունացուն, տե՛ս ՄՈՒՐԱԴՅԱՆ 1984, ՄՈՒՐԱԴՅԱՆ 1993 (հրատ.), 250-257, МУРАДЯН 1994, MURAD-YAN 1996¹։

³⁶ ՄԱՆԱՆԴՅԱՆ 1956 (հրատ.), 288-313։

³⁷ ՄԱՆԱՆԴՅԱՆ 1956 (հրատ.), 290-292։

³⁸ ՄԱՆԱՆԴՅԱՆ 1956 (հրատ.), 292-293։

Հունարբան լեզվի ամենակարևոր կողմը համարելով նրա յուրահատուկ բառապաշարը՝ Հր. Աճառյանն ուսումնասիրել է «նախամասնիկավոր» բառերը, որոնք «հնարելու» ձգտումը նա համեմատել է իրեն ժամանակակից «ռուսագետներին»՝ ռուսերեն նախդրավոր բայերը ճշգրիտ թարգմանելու ճիգերի հետ³⁹։ Նա ՆԲՀԼ-ում հաշվել 1793 այդպիսի բառ⁴⁰։

Աճառյանը խոսում է նաև արհեստականորեն կերտված բարդ բառերի մասին, որոնք օգտագործվել են հունարեն համապատասխան բառերի դասական համարժեքների փոխարեն⁴¹։ Դրանց թվում նա հատուկ անդրադառնում է «դժուար» արմատով սկսվող բարդությունների տարածմանը (ծստ-ին համապատասխան) և նույնիմաստ՝ «դժոխ»-ով ձևերի հորինմանը, «երեք»-ով բարդությունների տարածմանը և «եռ»-ով ձևերի ստեղծմանը⁴²։

Բացի բառապաշարից, Աճառյանն ուսումնասիրել է նաև Հունարբան լեզվի քերականությունը։ Նա հիշատակում է ցուցական դերանունների իգական ձևերն իրենց թեք հոլովներով, «մի» թվականի «եզ» և «մու» տարբերակները⁴³, երկակի թվի ձևերը (օրինակները թրակացուց են), դասական թվականների «երկիր», «երիր», «չորիր» ձևերը, նոր մակբայներ՝ «սերկ», «հիբար», «որգոն», ու նախդիրներ՝ «թարց», սեռականի «ոջ», «ոյր», տրականի «ում» վերջավորությունները և ներգոյականի ու բացառականի «ըն», «ն» նախդիրները, բայի՝ հունարենի հետևությունները նոր ժամանակաձևերի կերտումը (բերում է թրակացու թարգմանությունից «կոփեմ» բայի խոնարհումը)⁴⁴։ Համառոտակի նա կանգ է առնում հունարենին հետևող շարադասություն, խնդրառություն, ածականներն ու դերբայները միշտ համաձայնեցնելու վրա⁴⁵։

Հունարբան լեզվի մասին անուղղակի դատողություններ կարելի է գտնել նաև Աճառյանի գրքի «Մեսրոպյան հայերեն» գլխում։ Այսպես, նա նկատել է, որ մեսրոպյան հայերենով գրողները չէին օգտագործում «ան» ժխտական մասնիկով և «ելի» վերջավորությամբ բառեր («անշարժելի», դրա փխ.՝ «անշարժ»), «ող» և «եալ» ածանցերով դերբայները նրանց համար շատ սովորական չէին (սովորական էին «որ շարժե», «որ շարժին», այսինքն՝ հարաբերական նախադասությունները), «իմ»-ով բայերի անորոշը կազմվում էր «ել»-ով (և ոչ «իլ»-ով), «տրեմ» վերջավորությամբ բայերը և նրանցից կազմված «ուլթիլ»-ով գոյականները գործածական չէին, «ան» մասնիկի փոխարեն հաճախ օգտագործվում էր «առանց» նախդիրը («առանց հասանելոյ»՝ փխ. «անհաս»)՝⁴⁶։

³⁹ ԱՃԱՌՅԱՆ 1951, 143:

⁴⁰ ԱՃԱՌՅԱՆ 1951, 146-147:

⁴¹ ԱՃԱՌՅԱՆ 1951, 145-146:

⁴² ԱՃԱՌՅԱՆ 1951, 147:

⁴³ Սեռի կատեգորիան ներմուծելու ջանքերն ավելի մանրամասն քննարկել է Զահուկյանը՝ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 99-101:

⁴⁴ ԱՃԱՌՅԱՆ 1951, 148-154:

⁴⁵ ԱՃԱՌՅԱՆ 1951, 155:

⁴⁶ ԱՃԱՌՅԱՆ 1951, 87-88:

Հր. Աճառյանի՝ Հունաբան Հայերենի Համակողմանի քննությունից հետո հետազոտողներին դարձյալ ամենից շատ հետաքրքրել են նախաձանցավոր բառերը:

Նախաձանցները գիտական-փիլիսոփայական տերմինաբանություն կերտելու միջոց է համարել Գ. Զահուկյանը. «Հունաբան դպրոցի ներկայացուցիչները գիտական-փիլիսոփայական որևէ տերմին հայերեն արտահայտելու համար ստիպված էին դիմել կամ արհեստական կառուցումների, կամ հայերենում, հատկապես բարբառներում հանդիպող մի քանի նախաձանցներին մասսայական կիրառություն տալ»⁴⁷: Զահուկյանը խոսում է նաև այն ծայրահեղությունների մասին, որոնք արտահայտվեցին որոշ ավելորդ տերմիններ, բազմաթիվ արհեստական ձևեր ստեղծելու և երբեմն հունարենին կուրորեն նմանվելու մեջ:

Ա. Մուրադյանը ցույց է տվել նախաձանցների կարևորությունը հայերենի քերականական տերմինների կերտման համար⁴⁸: Մանրամասն քննելով յուրաքանչյուր ածանցի կիրառությունն ու ծագումը, Ա. Մուրադյանը խոսում է նաև հունարենի նախդիր-նախաձանցների իմաստային, երբեմն նույնիսկ՝ հնչյունային պատճենման մասին:

Այդ գիտարկումները համահունչ են Գ. Զահուկյանի դատողությանն այն մասին, թե ինչ սկզբունքով է թրակացու թարգմանիչը կազմել նախադրություն-նախաձանցները (տե՛ս Ա 1):

Ս. Արևշատյանը շեշտել է արհեստական նախաձանցներով բառերի ստեղծումը որպես փիլիսոփայական տերմինաբանության կերտման հիմնական միջոց⁴⁹: Նա ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ թրակացու «Քերականություն» թարգմանության ընթացքում ստեղծվել են ոչ միայն գիտական տերմիններ, այլև հիմք է դրվել տերմինների կերտման սկզբունքին առհասարակ⁵⁰: Մյուս կողմից քերականական որոշ տերմիններ ունեին նաև փիլիսոփայական նշանակություն, ըստ այդմ էլ դրանք հաջողությամբ օգտագործվեցին ավելի ուշ՝ փիլիսոփայական երկերի թարգմանության ժամանակ. օրինակ՝ «սեռ», «սեռական», «հատուկիւն», «ներգործական», «ներկայ», և այլն⁵¹:

Հիմնականում ընդունելով Հունաբան դպրոցի թարգմանությունների՝ Հ. Մանանդյանի առաջարկած խմբավորումը՝ Ս. Արևշատյանն այն վերանայել է

⁴⁷ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 47-48:

⁴⁸ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. 1971, 138-152. 268 տերմինների ցանկում 71-ը նախաձանցավոր բառեր են. հմտ. 351-354:

⁴⁹ АРЕШАТЯН 1973, 213-216, հմտ. նաև 156-158:

⁵⁰ Գ. Զահուկյանն էլ ընդգծել է, որ այդ տերմինները ոչ միայն դարձել են Հունաբան դպրոցի տերմինաբանության հիմքը, այլև մինչև այժմ դրանց զգալի մասը կիրառվում է մեր լեզվաբանական-քերականական գրականության մեջ (ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 111): Զ. Բոլոնյեզին մասնավորապես նշել է, որ թրակացու հայերեն թարգմանությունը լեզվական մեծ ազդեցություն է գործել թեոն Ադեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկի թարգմանության վրա. BOLOGNESI 2000, 125:

⁵¹ АРЕШАТЯН 1973, 156-157:

և լրացրել: Առաջին խմբի մեջ նա մտցրել է նաև Հերմես Եռամեծի «Առ Ասկ-դեպիոս սահմանք»⁵² և Թեոնի ճարտասանական երկը⁵³, ինչպես նաև «Բարո-յախօս» ժողովածուն⁵⁴: Երրորդ խմբին նա ավելացրել է Պլատոնի երկերի, Զե-նոնի «Յաղագս բնութեան», Գրիգոր Նյուսացու «Ամենայն չար տանջելի», Եվտիքիոս Կոստանդնուպոլսեցու գրվածքի և որոշ այլ թարգմանություն-ներ⁵⁵ նշելով, որ երրորդ շրջանի թարգմանությունների լեզուն, համեմատած երկրորդի հետ, ավելի պարզ էր ու հասկանալի⁵⁶: Վերջապես, նա առանձնաց-րել է նաև չորրորդ շրջան՝ «Բանք իմաստասիրաց», Պողոս Աղեքսանդրացու «Նախերգան ի ներքսածութենէ» (կենդանակերպին նվիրված)⁵⁷, Արատոս Սո-լացու «Յաղագս ամպոց և նշանաց»⁵⁸, Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդն Քրիս-տոսի», Սեղբեստրոսի վարքը, Գևորգ Պիսիդեսի «Վեցօրեայք», Սոկրատես Աքուլաստիկոսի «Եկեղեցական պատմություն», Նեմեսիոս Եմեսացու «Յա-ղագս բնութեան մարդոյ», Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց», Գրիգոր Նյուսացու մարդակազմական երկը, Դիոնիսիոս Արեոպագացու երկե-րը (716-717 թթ.)⁵⁹: Արևշատյանը նշում է, որ չորրորդ խմբի թարգմանու-թյուններն ունեն ավելի ճոխ բառապաշար և ազատ են խրթին հունաբանու-թյուններից⁶⁰:

Հունաբան լեզվի համակարգված քննություն է Շ. Մերսյեի հոգևածը⁶¹: Ցավոք, նա էլ, չր. Աճառյանի պես, չի վկայակոչել ներկայացված օրինակնե-րի աղբյուրները: Հունաբան լեզվի նորարարությունները Մերսյեն բաժանել է երկու խմբի՝ բառապաշար և շարահյուսություն: Բառապաշարի մեջ նա նշում է փոխառյալ բառեր, բառերի՝ նոր իմաստներով օգտագործումը, փաստորեն՝ իմաստային պատճենումը, նախդիրների և նախածանցների կիրառությունը՝ նոր բառեր ստեղծելու համար (նշվում է, որ հունարեն ածանցների տարբեր իմաստներն անտեսվել են, և դրանք հայերեն են թարգմանվել միևնույն հա-

⁵² АРЕВШАТЯН 1973, 154:

⁵³ АРЕВШАТЯН 1973, 164-166. Մանանդյանը վերագրել էր այն երկրորդ խմբին:

⁵⁴ «Բարոյախօս» ժողովածուի քննությունը ցույց տվեց, որ այն պատկանում է ամենավաղ դասական թարգմանությունների թվին, տե՛ս MURADYAN 2005 (ed.):

⁵⁵ «Առած Հինգ Դաւթի» (ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ 1932, 123-128) և «Վասն բաժանման» (ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ 1932, 129-130) գրվածքների հունաբան լեզուն մոտ է միմյանց: «Խօսք Սեկոն-դոսի իմաստասիրի առ Աղբիանոս կայսեր» (ԱՌՓԵՐՔ Ա. 1853, 63-70) երկում որևէ հունա-բանություն չնկատեցինք:

⁵⁶ АРЕВШАТЯН 1973, 228:

⁵⁷ Տե՛ս ԲԱՐԹԻԿՅԱՆ 1977, 148-157:

⁵⁸ Չր. Բարթիկյանը, որ ցույց է տվել, թե Անանիա Շիրակացուն վերագրված այս երկը իրակա-նում թարգմանություն է Արատոս Սոլացուց, հաշվի առնելով վերջինիս և հայերեն տեքստի միջև եղած տարբերությունները՝ ենթադրում է, որ դա կարող էր ոչ թե հենց Արատոսի, այլ նրա աղբյուրի՝ Եվդոքսոս Կնիդացու չափհասված գործի թարգմանությունը լինել. տե՛ս ԲԱՐԹԻԿՅԱՆ 1964, 331-363:

⁵⁹ Տե՛ս հունաբան թարգմանությունների ցանկը՝ АРЕВШАТЯН 1973, 186-188: Առաջին ան-գամ չորրորդ խմբի մասին խոսել է Ակինյանը՝ Նոննոսի և Արիստոտելի վերագրված «Յա-ղագս աշխարհի» երկերի առիթով, տե՛ս ԱԿԻՆՅԱՆ 1932², 273-277:

⁶⁰ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ 1971, 18:

⁶¹ MERCIER 1978:

մարժեքներով⁶²), բայի հիմքի ընտրությունն առանձնահատկությունները (տե՛ս մանրամասն Ա. 8):

Մինչև շարահյուսությանն անցնելը, Մերսյեն այլևայլ ենթավերնագրերի տակ քննել է ևս մի քանի բառակազմական և ձևաբանական առանձնահատկություններ («ոց»-ով հիմքով նոր բայեր կերտելը, նախածանցի իմաստը մակբայով կամ նախդրով արտահայտելը, ցուցական դերանունների իգական սեռը և այլն) և հունարեն բառի իմաստային նրբերանգները երկու կամ ավելի հոմանիշներով արտահայտելը:

«Շարահյուսություն» բաժինը նվիրված է հոգի ավելի հաճախակի կիրառությունը, «զ» նախդրի՝ որպես հունարեն հոգի համարժեքի հանդես գալուն, մասնական սեռականին, «նոյն» բառի հետ տրական հոլովին, հոգնակի ենթակայի հետ եզակի ստորոգյալին, «մինչ զի» + անորոշ դերբայ արտահայտությունը, դերբայների և անորոշ դերբայի կիրառության առանձնահատկություններին և այլն:

Հունաբան դպրոցի գործունեության իր ընդհանրացնող ակնարկում⁶³ Վ. Կալցուլարին մի ենթագլուխ է նվիրել լեզվական առանձնահատկություններին (3. “Particularités linguistiques”⁶⁴): Նա նշում է, որ, բացի մասնագիտական տերմիններից, հունաբան դպրոցը ստեղծել է առհասարակ վերացական բառապաշար, և դրա շնորհիվ է, որ հայերենն այսօր ունակ է արտահայտելու ցանկացած ժամանակակից հասկացություն⁶⁵:

Բացի ընդհանուր բնույթի աշխատություններից, գոյություն ունեն նաև առանձին հունաբան թարգմանությունների ուսումնասիրություններ:

Մասնագետների ուշադրությունը գրավել է հատկապես Փիլոն Աղեքսանդրացու թարգմանությունների լեզուն: Հիշատակության արժանի է Ծննդոց և Ելից գրքերի մեկնությունների (այն հատվածների համար, որոնց հունարեն զուգահեռները պահպանվել են) և «Յաղագս կենաց վարուց տեսականի» ճառի համար կազմված հայ-հունարեն երկլեզվյան համաբարբառը⁶⁶:

Շարլ Մերսյեն, Ծննդոց գրքի Փիլոնի մեկնության ֆրանսերեն թարգմանության առաջաբանում, անդրադարձել է նաև թարգմանչական մեթոդին⁶⁷: Համառոտ կրկնվում են նույն հեղինակի վերոհիշյալ ընդհանրացնող հոդվածի⁶⁸ դրույթները: Մերսյեն ուշադրություն է դարձրել այսպես կոչված դուբլետների (և տրիպլետների) վրա՝ հունարեն մեկ բառի դիմաց հայերենում հանդես են գալիս մեկից ավելի բառեր, որոնցից առաջինը սովորաբար համապատասխանում է հունարեն բառի ստուգաբանությանը, իսկ երկրորդը՝ նա-

⁶² MERCIER 1978, 64:

⁶³ CALZOLARI 1989, 110-130:

⁶⁴ CALZOLARI 1989, 122-127:

⁶⁵ CALZOLARI 1989, 124:

⁶⁶ MARCUS 1933. առաջաբանում նշված է, որ ցանկը չի ընդգրկում ողջ բառապաշարն, այլ կազմված է որոշակի ընտրությամբ:

⁶⁷ MERCIER 1979 (առաջաբան), 26-28:

⁶⁸ MERCIER 1978:

խաղասութեան մեջ նրա իմաստին: Սակայն բոլոր դեպքերում էլ, որ կարող ենք վստահ լինել, թե գործ ունենք դուրբերի հետ, քանի որ հունարենում էլ հանդիպում են գոյականների և ածականների կուտակումներ: Մերսյեն նշում է, որ շարահյուսական հունաբանությունները միշտ էլ, որ ակնհայտ են լինում, քանի որ ոչ դասական շարահյուսությունը դեռևս բավական է կռահելու, թե ինչ կառույց է եղել չափահանված հունարեն բնագրում՝ ի տարբերություն Իրենեոսի չափահանված երկերի, որոնց դեպքում օգնում է լատիներեն թարգմանությունը:

Այդ մեթոդի մասին գրելիս՝ Ա. Տերյանը նկատել է, որ Փիլոնի թարգմանություններում մեկ հունարեն բառը կարող է ունենալ տարբեր հայերեն համարժեքներ, և միևնույն հայերեն բառը կարող է համապատասխանել տարբեր հունարեն բառերի⁶⁹: Մեկ հունարեն բառի դիմաց հայերեն մեկից ավելի բառերի առկայությունը Տերյանը բացատրում է թարգմանչի կողմից բառարանի ոչ լիարժեք օգտագործմամբ: Դրա արդյունքն է եղել համադաս կամ միմյանց ստորադասված հոմանիշների կիրառությունը: Շարահյուսական առանձնահատկություններից Տերյանը նշել է ստորոգյալը ենթակայից հետո, իսկ որոշիչը՝ որոշյալից առաջ դնելը, օժանդակ բայի հաճախակի օգտագործումը:

Փիլոնի «Յաղագս բազնին իրաց» ճառի թարգմանության ու նրա հունարեն բնագրի բաղդատությանը նվիրված գրքում⁷⁰ Ռոմանո Սգարբին արձանագրել է 35 բառապատճենման, 16 շարահյուսական և 4 իմաստային պատճենման դեպք, նաև ուշադրություն է դարձրել հունարեն բառը երկու՝ ստուգաբանական և նախադասության մեջ իմաստը ճշգրտող եղանակով թարգմանելու 38 օրինակի վրա⁷¹:

Փիլոնի թարգմանչի մեթոդին երկու ընդարձակ ծանոթագրություն է նվիրել Ժ. Պարամելլը՝ Ծննդոց գրքի Բ 1-7 հատվածի մեկնության հրատարակության առաջաբանում⁷²: Մերսյեի և Տերյանի նշած առանձնահատկություններին նա ավելացնում է նախածանցն ու բառարմատը միմյանցից անջատելը (ἐπιφάνεια – «ի վերոյ երևումն», ὑπεξαίρετέον – «ի բաց հանելի», συνεχόμενον – «ըմբռնեալ... ի միասին», ինչը մենք բնութագրում ենք որպես նախածանցավոր բառը «կիսապատճենելու» երկու եղանակներից մեկը՝ տե՛ս Ա 1.2ա), նախածանցավոր բառերի թարգմանությունը նկարագրական եղանակով («պատեաց փակեաց» – περιέβαλε, «բաշխեալ տուեալ է» – διεδόθη), մասնական սեռականը («իւրաքանչիւր ոք մասանցն» – ἕκαστον τῶν μερῶν), չեզոք սեռի հոգնակի ենթակայի և եզակի ստորոգյալի բառացի թարգմանությունը («այսք... անդամք բռնադատեալ ածեալ է» – τὰ... μέλη βεβίασται), ὡς + infinitivus-ի բառացի թարգմանությունը («իբրու թէ բունանալ արիւն» – ὡς... ἐκνευεοττεσκεναι αἷμα), «հայցականն անորոշ դերբայի հետ»

⁶⁹ TERIAN 1981, 10-12:

⁷⁰ SGARBI 1989:

⁷¹ SGARBI 1989, 226-227 ("Conclusioni"):

⁷² PARAMELLE 1984, 67-69, n. 36, 38. նշված հատվածի հունարեն բնագիրը պահպանվել է և առաջին անգամ հրատարակված է այստեղ:

և «ուղղական անորոշ դերբայի հետ» դարձվածները, դերբայների գոյականացված կիրառությունը («սերմանեալն» – τὸ σπαρέν), «բացարձակ սեռական» դարձվածը, անորոշ դերբայի գործիական հոլովի ընդլայնված կիրառությունը՝ հունարեն դերբայները թարգմանելու համար, «զ» նախդիրը սեռական հոլովի հետ՝ հունարեն հոգին համապատասխան («զկերակրոյն ամանս» – τὰ τῆς τροφῆς ἀγγεῖα) և այլն: Պարամելլի համոզմամբ, շարահյուսական հունաբանությունները շատ շուտով անհասկանալի դարձան հետագա ընթերցողների և գրիչների համար, ինչի մասին են վկայում բնագրային աղավաղումների մեծ քանակն ու Փիլոնի երկերի բազմաթիվ մեկնությունները⁷³:

Սարա Մանչինի Լոմբարդին անդրադարձել է Փիլոնի «Աստուածային աւրինացն այլաբանութեան» մեջ բառապատճենման առանձնահատկություններին⁷⁴: Նա նկատում է, որ այդ մեթոդն ավելի քիչ է կիրառվել նախածանցավոր բառեր, և շատ ավելի հաճախ՝ բարդ բառեր թարգմանելիս: Նա նախածանցավոր բառերի թարգմանության չորս եղանակ է մատնանշել՝ ա) պատճենում նախածանցավոր բառի օգնությամբ, բ) թարգմանություն բայով և մակբայով, գ) երկու կամ ավելի բառերով, դ) մեկ բառով: Հոգվածագրի կարծիքով՝ հունարեն նախածանցների իմաստն արտահայտող մակբայները նրանք են, որոնցից և առաջացել են հունաբան նախածանցները, սակայն «միշտ», «ի մէջ», «շուրջ», «յառաջ», «ի դուրս», «միանգամայն» մակբայների համար այդպիսի պնդումը ճիշտ չէ: Ինչ վերաբերում է հունարենից պատճենված բարդ բառերին, ապա Մանչինի Լոմբարդին լիովին իրավացի է, երբ գտնում է, որ դրանք արհեստական բառեր չեն, այլ հայերենի համար սովորական նորաբանություններ:

Լ. Ֆրուադերվոն Իրենեոսի «Ցոյցք առաքելական քարոզութեան» երկի ֆրանսերեն թարգմանության առաջաբանում անդրադարձել է թարգմանության լեզվական առանձնահատկություններին⁷⁵: Նա նշում է «իւ»-ով անորոշ դերբայները, անցյալ անկատարի «իւր» կրավորական վերջավորությունը, «լինոցել», «լինոցիլ», «եղոցիլ» տարօրինակ անորոշ դերբայները («լինոցել»-ը նա մեկնաբանում է որպես «լինելոց» ապառնի դերբայի «ել» և «ոց» վերջավորությունների տեղափոխության արդյունք), բազմավանկ ածականը բացառապես գոյականից առաջ դնելը, «այսպէս ունել» և «զնոյն նախաստեղծելումն զմարմնութիւն» արտահայտությունները, հունարեն τὰ ζῶα τρέχει կանոնի⁷⁶ կիրառության երկու դեպք, բացարձակ սեռականի տասնմեկ դեպք, և այդ դարձվածը դերբայի ուղիղ ձևով ու գոյականի սեռա-

⁷³ PARAMELLE 1984, 69, ծան. 39:

⁷⁴ MANCINI LOMBARDI 2004, 285-295:

⁷⁵ FROIDEVAUX 1971, 14-19: Ապացուցված կարելի է համարել այն իրողությունը, որ Փիլոնի և Իրենեոսի երկերի թարգմանիչը նույն անձն է, տե՛ս CONYBEARE 1911, 183-202, նաև ՎԱՐԴԱՆԵԱՆ 1921:

⁷⁶ Ըստ այդ կանոնի, չեղոք սեռի՝ հոգնակի թվով հանդես եկող ենթական պահանջում է եզակի թվով ստորոգյալ:

կանով թարգմանելու հինգ դեպք, անորոշ դերբայի գործիականի հաճախակի կիրառություն (25 անգամ՝ «ասելով», Ավետարանում սովորական «և ասէ» ձևի փոխարեն, ընդ որում յոթ անգամ՝ որպես «բացարձակ սեռականի» համարժեք), հունարեն μέλλειν-ով կազմված ապառնին «հանդերձեալ» + անորոշ դերբայ կառույցով թարգմանելու 13 դեպք, մինչդեռ «ոց»-ով ապառնին շատ հազվադեպ է: Հունարեն ὄσπε + infinitivus թարգմանվել է «մինչ զի» + անորոշ դերբայ՝ դասական լեզվի համար սովորական դիմավոր բայաձևի փոխարեն, «զ» նախդիրն ընդհանրացվել է՝ հունարեն հոգը (և ոչ միայն հայցական հոլովի դեպքում. բերվում է ենթակայի օրինակ) արտահայտելու համար և դրվում է նաև այլ նախդիրներից առաջ: Ֆրոնադըվոն զարմանքով նշում է, որ, ի տարբերություն դասական շարահյուսության տարրական կանոնների կոպիտ ոտնահարման, այս թարգմանության բառապաշարը լիովին դասական է: Ի հաստատումն իր կարծիքի՝ նա ընթերցողների ուշադրությունը հրավիրում է Իրենեոսի մեկ այլ երկի՝ «Ընդդէմ աղանդոց»-ի քառալեզու բառացանկերի վրա⁷⁷ և դրանցում նկատում միայն հունարեն նախածանցավոր παραδέχομαι և προσλαμβάνω բայերի թարգմանությունը «առնում» և «ընդունիմ» դասական բայերով: Տարօրինակ է, որ Ֆրոնադըվոյի ուշադրությունից վրիպել են այդ նույն ցանկում ներկայացված բազմաթիվ նախածանցավոր («առարկեմ», «բալձաձեմ», «բաղաձայն», «բաղդատեմ», «բաղկանամ», «բացադրութիւն», «գերադրութիւն», «ենթադրութիւն», «ենթակամ», «հակաճառութիւն», «համագոյ», «յարակայ». «նախակրթեմ». «ներգործութիւն», «ներպարունակական», «շղապատեմ», «շարունակ», «վերագրեմ», «տարալսեմ», «տարալէն», «տրամադրութիւն», «փոխաբերութիւն») և այլ հունաբան բառերը («գոռոզաբար», «դիւրահաւանեմ», «ընդդիմաբանութիւն», «մարդարարութիւն», «միջաւրէ», «ունակութիւն», «անեղութիւն» և այլն):

Լեզվական կուլանի հիման վրա Լ. Խաչիկյանը երրորդ խմբի թարգմանություն է համարել Զենոնին վերագրված «Յաղագս բնութեան» երկը,⁷⁸ որի հունարեն սկզբնագիրը չի պահպանվել: Նա ցույց է տվել Թրակացու «Քերականության» թարգմանության միջոցով տարածում գտած բազմաթիվ տերմինների նույնիմաստ գործածությունը⁷⁹, բայց և առաջին շրջանին ոչ հատուկ «հակ» (ἀντι-ի դիմաց), «տար» (δια-ի դիմաց) և «չար» («չաղ»-ի փոխարեն) նախածանցներով բառերը, «մակացութիւն», «ներհակ» եզրերը⁸⁰, երկրորդ շրջանում ստեղծված իմաստասիրական տերմիններ («աճելութիւն», «անհատ», «ապացոյց», «բաղկացուցիչ», «բացառական», «եռանգիւնի», «ի զինչէումն», «նախադասութիւն», «ստորոգութիւն», «վերլուծութիւն» և այլն)⁸¹, նաև երկրորդ շրջանին հատուկ «փար» նախածանցի, «ըն/ն» նախդրի

⁷⁷ REINDERS 1954:

⁷⁸ ԽԱՉԻԿՅԱՆ 1949:

⁷⁹ ԽԱՉԻԿՅԱՆ 1949, 71:

⁸⁰ ԽԱՉԻԿՅԱՆ 1949, 72:

⁸¹ ԽԱՉԻԿՅԱՆ 1949, 73, ծ. 2:

բացակայությունը⁸², Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրականք»-ի հետ ընդհանուր բառեր («անգոյ», «աննիւթ», «բաղխոհական», «գասաւորութիւն», «հատումն», «տնաւրինական» և այլն): Խաչիկյանը եզրակացնում է, որ «կամ վերջին երկու բնագրերը թարգմանվել են նույն գործչի կողմից և կամ նրանց թարգմանիչները եղել են ժամանակակիցներ»⁸³: Ի դեպ, Խաչիկյանը բնագրային զուգահեռներ է բերել Հիշյալ երկի ու Դիոնիսիոսի «Քերականության», Արիստոտելի «Ստորոգությունների» և «Պերի Արմենիաս»-ի, ինչպես նաև Դավթի «Սահմանք իմաստասիրականք»-ի հայերեն թարգմանությունների միջև:

Վերջերս Մ. Սթոունը և Մ. Շիրինյանը հրատարակել են «Յաղագս բնութեան» երկը՝ անգլերեն թարգմանությամբ և մանրամասն ծանոթագրություններով⁸⁴: Առաջաբանում բերվում է մի քանի արտառուց հունաբանություն («գայլմեցն», «բնաւորեցաւ զոլ»), մեկ հունարեն բառ երկու հայերեն բառով թարգմանելու օրինակ, հունարենից փոխառության օրինակ⁸⁵ և կարևոր տեղեկանքների ցանկ՝ դրանց անգլերեն թարգմանություններով և հնարավոր հունարեն համարժեքներով⁸⁶: Հրատարակիչները վիճարկում են Է.Գ. Շվարցի և Լ.Գ. Վեստերինկի՝ Թրակացու, Արիստոտելի և Դավիթ Անհաղթի երկերի թարգմանությունների հետ բնագրային զուգահեռների վրա հիմնված ենթադրությունն այն մասին, որ «Յաղագս բնութեան»-ը գրվել է հայերեն: Սթոունի և Շիրինյանի հիմնական փաստարկը երկի խիստ հունաբան լեզուն է, սակայն հարցը մնում է վիճելի, քանզի հունաբան լեզվով գրվել են նաև ինքնուրույն երկեր:

Արիստոտելի «Ստորոգությունների» թարգմանությանը նվիրված հոդվածում⁸⁷ Գի Լաֆոնտենը նշում է, որ նյութը դասակարգելիս ինքը հետևել է Մերսյեի օրինակին: «Տեխնիկական բառապաշար» խորագրի տակ նա ներկայացնում է նախածանցների և նրանցով կազմված բառերի ցանկը՝ հունարեն համարժեքներով: Դրանց թվում թյուրիմացաբար հայտնվել է նաև «ի բաց» մակբայը՝ «բաց» նախածանցի կողքին, և «առաջ» արմատը, որպես πορο նախածանցի համարժեք: Մի փոքրիկ հատված Լաֆոնտենը նվիրել է ձևաբանական առանձնահատկություններին՝ «սայցն» փխ. «սոցա», «յորումէն» փխ. «յորմէն», «երկաքանչիւր» բառը, «անուանագործել» որպես ὀνοματοποιεῖν բառի պատճենում (երկու դեպքում էլ առաջին բաղադրիչը գոյականի սեռական հոլով է) և այլն: Նրա քննության մեջ ևս մեծ տեղ է հատկացված շարահյուսությանը. նշվում է «բաց», «ն», «ըն», «մակ» նախդիրների կիրառությունը, «ուրոյն» ածականի հետ սեռական հոլովը, մասնական սեռականի՝

⁸² ԽԱՉԻԿՅԱՆ 1949, 74:

⁸³ ԽԱՉԻԿՅԱՆ 1949, 76:

⁸⁴ STONE – SHIRINIAN 2000:

⁸⁵ STONE – SHIRINIAN 2000, 20-21:

⁸⁶ STONE – SHIRINIAN 2000, 241-244, հմտ. նաև 245-285՝ հունարեն-հայերեն-անգլերեն ցանկ, 249-252՝ անգլերեն-հունարեն-հայերեն ցանկ:

⁸⁷ LAFONTAINE 1983, 133-144:

«Իւրաքանչիւր» բառի հետ հանդես գալը, ածականի համեմատական աստիճանի հետ համեմատելին սեռականով դնելը, երկու հոլովական վերջավորութիւն մեկ բառին կցելը («ի վերոյքն»), հունարենի նմանութեամբ՝ «գոյականը նախդրի հետ» բառակապակցութեան գոյականացումը («առընչիցն»), «զ» նախդրի կրկնութիւնը («զըստ անուանն զառասութիւն»), «ի վերայ» նախդրի հոլովումը («ի վերայց»), հոգնակի ենթակայի հետ եզակի ստորոգյալի հանդես գալը՝ հունարեն τὰ ζῶα τρέχει կանոնի⁸⁸ համաձայն, բայաձեւերի գոյականացումը («նստիւն»), «մինչ զի» շղկապից հետո անորոշ դերբայը (la proposition consécutive), «բացարձակ սեռականը», դերբայների հաճախակի կիրառութիւնը, անորոշ դերբայի չհոլոված ձեւի կիրառութիւնը «վասն» նախդրի հետ (հունարեն τῷ + infinitivus-ին համարժեք), «հայցականն անորոշ դերբայի հետ» և «ուղղականն անորոշ դերբայի հետ», այլեւայլ արտահայտութիւնների պատճենումը, «հիբար», «հիզան», «հիպէս», «հիկէն», «որգոն», «որգովն», «որբար», «որկէն» «որզան», «որպակ» արհեստական մակբայները (որպես հունարեն ὄλον-ի համարժեք):

Արիստոտելին վերագրված «Յաղագս առաքինութեան» երկում որոշէի առումով կամ գոյականաբար կիրառված դերբայական դարձվածների թարգմանության եղանակներին է նվիրված Մ. Շիրինյանի հոդվածը. դրանց մի մասը թարգմանվել է դասական եղանակով՝ հարաբերական նախադասութեամբ, որոշ դեպքերում՝ թերի՝ օժանդակ բայի բացթողումով հարաբերական նախադասութեամբ, կամ էլ բառացի՝ անցյալ դերբայով, որը կարող է ստանալ հոլովական վերջավորութիւններ⁸⁹:

Մ. Շիրինյանը քննութեան է առել նաև Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» հունաբանութիւնները⁹⁰: Նա նշում է «անորոշ դերբայի հետ հայցականի», «վերաբերության հայցականի» (accusativus graecus), «մասնական սեռականի», «բացարձակ սեռականի» պատճենումը, ինչպես նաև դեպքեր, երբ այդ նույն դարձվածները չեն պատճենվել, ձևաբանական հունաբանութիւններ՝ «իլ»-ով կրավորական անորոշ դերբայը, «զ» նախդիրը ոչ թե ուղիղ խնդրին, այլ նրա նախորդող բառին կցելը, «եզոյ» ձևը (γενομένου), բարդ, նախածանցավոր բառերի պատճենումը (ընդ որում, եթե բառն ունի երկու նախածանց, թարգմանվում է միայն մեկը), նախածանցների թարգմանութիւնը մակբայներով, իմաստային պատճենումներ, արհեստական մակբայներ, նաև՝ նկարագրական թարգմանության դեպքեր: Վկայված են և հունարեն բառերի փոխառության դեպքեր: Հոգվածագրի համոզմամբ՝ Մեծ Սոկրատի մեջ կան վաղ թարգմանութիւններին բնորոշ առանձնահատկութիւններ՝ «կից» արմատը «համ» նախածանցի, «արտաքս»-ը «արտ»-ի փոխարեն և այլն:

⁸⁸ Ըստ այդ կանոնի, չեզոք սեռի՝ հոգնակի թվով հանդես եկող ենթական պահանջում է եզակի թվով ստորոգյալ:

⁸⁹ SHIRINIAN 1996, 293-297:

⁹⁰ SHIRINIAN 1995, 79-84:

Մ. Շիրինյանի՝ Սեղբեստրոսի վարքին նվիրված հոգևածուժ անդրադարձ կա նաև թարգմանական տեխնիկային⁹¹: Շարահյուսական հունաբանություններից նշված է «մասնական սեռական» ու «բացարձակ սեռականը», հիշատակված են պատճենման և կրսապատճենման եղանակով կերտված մի շարք ուշագրավ նոր բառեր, որոնք օգտագործվել են իրենց սովորական համարժեքների փոխարեն (օրինակ, πρόγονοι – «յառաջանախնիք», փխ. «նախնիք»⁹²), «Թեոնիկի» անձնանվան բացատրությունը՝ «այս է Աստուածայաղթ», փոխառված բառեր՝ κολόβιον – «կողոբ», և չհասկացված հատվածների տառադարձումներ՝ Λαττηρανησίω – «սիղափուր կիսիոյ»:

Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրված երկերի քննական հրատարակություն⁹³ անգլերեն թարգմանության առաջաբանում⁹⁴ Ռ. Թոմսոնը նշել է որոշ լեզվական առանձնահատկություններ. հոգը գոյականի փոխարեն ածականին կցելը, անեզական գոյականի հետ եզակի թվով ածականը («աստուածայնոյ կենաց»), «ինքն» անդրադարձ (emphatic) դերանվան փոխարեն «իւր»-ի կիրառությունը (αὐτὸν Ἰησοῦν – «իւր Յիսուսի»), բարդ տեխնիկական տերմինները թարգմանելիս միեւնոյն հունարեն բառը միեւնոյն հայերեն բառով «ստրկորեն» չարտահայտելը (ἱεραρχία – «բահանայապետութիւն», բայց ἱεροθεσία – «սրբազնադրութիւն»), «իվերահայելի» (Դիոն. երկն. քհ. 13.6) – ἐποπτεύει (Dion. cael. hier. 20.5), և «անիբացղնելի» (Դիոն. երկն. քհ. 7.23) – ἀμετάβολος (Dion. cael. hier. 14.7) հունաբանությունները:

Ռոմանո Սգարբիի ուշադրությունն է արժանացել Պորփյուրի «Ներածությունը»⁹⁵, որտեղ բառապատճենումներից բացի (նշվածների մեծ մասը նախածանցավոր բառեր են) քննարկված են և որոշ շարահյուսական հունաբանություններ («բացարձակ սեռական», նախդիրների կուտակումներ, «իբր թէ» + անորոշ դերբայ): Սգարբին նաև մի գիրք է նվիրել Դիոնիսիոս Թրակացու թարգմանչի մեթոդին⁹⁶: Նա դիտարկել է հունարեն 359 բառի թարգմանությունը՝ նշելով, ի դեպ, որ թարգմանիչը շատ լավ է հասկացել իր բնագիրը և միայն երկու բառ է սխալ թարգմանել: Սգարբին գրում է, որ, չնայած հունարեն բազում բառեր պատճենվել են (նշված է 87 դեպք), կան և իմաստային պատճենման դեպքեր (28 դեպք): Թարգմանիչը հաճախ նաև խոսափել է պատճենելուց, թարգմանել է ըստ իմաստի, կամ էլ կիրառել մոտավոր պատճենման մեթոդը (օրինակ՝ բառի արմատի դիմաց նրա ճշգրիտ համարժեքն է, իսկ նախածանցի դիմաց՝ այլ իմաստ ունեցող նախածանց)⁹⁷: Այսպիսով՝

⁹¹ SHIRINIAN 1997, 73-74:

⁹² Ավելի շուտ՝ «նախածնող»:

⁹³ THOMSON 1987¹:

⁹⁴ THOMSON 1987², VIII-IX:

⁹⁵ SGARBI 1972, 367-382 (calchi linguistici), 472-476 (Indice dei calchi lessicali. բացառապես նախածանցավոր բառերի ցուցակ է):

⁹⁶ SGARBI 1990. «Քերականություն» մեջ մի քանի եզրի քննությունը տե՛ս SGARBI 2004, 349-357:

⁹⁷ Հմմտ. SGARBI 1990, 366-367:

թարգմանիչների մոտեցումը բնութագրվում է որպես բարդ և ոչ մեխանիկական⁹⁸:

«Շարահյուսական հունաբանությունները հայերեն տեքստերում» հոդվածում⁹⁹ Յ. Վայտենբերգը գրում է, որ որևէ տեքստ որպես հունաբան որակելիս ինքն առաջնորդվում է Շ. Ռենուի առաջարկած չափանիշներով¹⁰⁰ այդ տեքստում պետք է դիտվեն հունարենին հետևող շարահյուսություն և յուրահատուկ բառակազմական կաղապարներ: Հունաբան լեզվի ձևաբանական առանձնահատկությունները նա զանց է առնում՝ նշելով, որ դրանց ուսումնասիրությունը պահանջում է հատուկ՝ պատմական և բարբառագիտական մոտեցում:

Վերը ներկայացրինք հունաբան թարգմանությունների լեզվի՝ մասնագետների նկատած առանձնահատկությունները. նրանք մատնանշել են բառային, ձևաբանական և շարահյուսական հունաբանությունների զանազան տեսակներ: Սակայն հաճախ թարգմանություններն ուսումնասիրվել են առանց հունարեն բնագրերի հետ համեմատության, հունաբանությունների որոշ տեսակներ, հատկապես շարահյուսական, չեն նկատվել, բառային հունաբանություններից ուշադրության են արժանացել հիմնականում նախածանցավոր պատճենումները, իսկ հունաբան լեզվի որոշ նկարագրություններ առհասարակ զուրկ են հղումներից: Է՛լ ավելի հպանցիկ ու անկանոն է լուսաբանված հունարենի ազդեցությունը նախորդ՝ դասական շրջանի թարգմանություններում, իսկ թարգմանական գրականության վերջին պարբերացումներում¹⁰¹ դրանց շարքին են դասվում հունարենի զգալի ազդեցությունը կրող «նախահունաբան» թարգմանությունները:

ՆԱԽԱՀՈՒՆԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

19-րդ դարի 30-ական թվականներին Վիեննայի Մխիթարյանները, ուսումնասիրելով 5-րդ դարի մատենագրական հուշարձանները, եկան այն եզրակացություն, որ այդ դարի առաջին կեսի լեզուն իր ոճով, բառապաշարով, մասամբ և քերականությամբ տարբերվում է երկրորդ կեսի լեզվից: Ըստ այդմ, 5-րդ դարի գրականության լեզուն բաժանվեց «ոսկեդարյանի» և «հետոսկեդարյանի»: Այդ բաժանման հիմքում դրվեց 18 լեզվական առանձնահատկություն, որոնք հատկանշական հայտարարվեցին «ոսկեդարյան» լեզվի համար¹⁰²:

⁹⁸ SGARBI 1990, 369: Զուտ տեքստաբանական հարցերի է նվիրված հեղինակի հետևյալ գիրքը՝ SGARBI 1992:

⁹⁹ WEITENBERG 2001-2002, 64:

¹⁰⁰ RENOUX 1998, 77-95:

¹⁰¹ Տե՛ս АРЕВІІІАТЯН 1973, 37-39, ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1982¹:

¹⁰² ԱՃԱՌՅԱՆ 1951, 86-89՝ «Մեսրոպյան հայերենը»:

Հետազայում «Հետոսկեդարյան» շրջանից առանձնացվեց երրորդ՝ հունաբան թարգմանությունների շրջանը: Այսպես, Ն. Ակինյանը խոսում է դասական հայերենի «ոսկեդարի», «արծաթի դարի» (թարգմանական հուշարձաններից՝ Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսարացու երկեր, «Ալեքսանդրի պատմություն») և «պղնձի դարի» (հունաբան դպրոց) մասին¹⁰³: Հր. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» մեջ հատուկ գլուխներ է նվիրել «մեսրոպյան հայերենին», «հետմեսրոպյան հայերենին»¹⁰⁴ (չնչելով, սակայն, թե ինչ հուշարձաններով են դրանք ներկայացված, այլ միայն 461 թ. համարելով առաջին շրջանի ավարտ) և հունաբան հայերենին՝ թվագրելով այն 6-7-րդ դարերով¹⁰⁵:

Ըստ թարգմանական գրականության ավելի նոր դասակարգման, որը միայն մասամբ է հիմնված լեզվական կռվանի վրա՝ կան թարգմանությունների երկու մեծ խումբ՝ դասական և հունաբան: Դասական թարգմանությունների շրջանն, ըստ Ս. Արեշատյանի¹⁰⁶, ավարտվում է 462 թ., իսկ Լ. Տեր-Պետրոսյանի կարծիքով՝ դրանք կատարվել են ոչ միայն ողջ 5-րդ դարի ընթացքում, այլ նաև ավելի ուշ՝ հունաբան թարգմանություններին զուգահեռ¹⁰⁷: Հունաբան դպրոցի թարգմանությունները բաժանվում են չորս խմբի և հասցվում մինչև 8-րդ դարի 20-ական թվականները: Այս դասակարգման համաձայն՝ դասական թարգմանությունների թվին են պատկանում նաև «Հետոսկեդարյան» թարգմանությունները, կամ էլ, ըստ Ակինյանի, «արծաթի դարի» երկերը:

Բացի լեզվականից, վերջին դասակարգումը հաշվի է առնում ևս մի կռվան՝ թարգմանվող երկերի բովանդակությունը: Դասական թարգմանությունների հիմնական նպատակը եկեղեցու կարիքների բավարարումն էր, և Աստվածաշնչից բացի դրանք ընդգրկում էին ծիսական, մեկնողական, ջատագովական, պատմական (եկեղեցու պատմության), կանոնական ու սրբախոսական երկեր¹⁰⁸: Իսկ հունաբան դպրոցի գործունեությունն ուղղված էր աստվածաբանական ու փիլիսոփայական (ինչպես և քերականական ու ճարտասանական) գործերի թարգմանությանը, և նրա նպատակն էր՝ ժամանակի բյուզանդական կրթական համակարգը հայկական հողի վրա տեղափոխելը¹⁰⁹: Հենց այսպիսի բովանդակության հետ են կապում տառացի կամ նյութական թարգմանության մեթոդի առաջացումը:

¹⁰³ ԱԿԻՆԵԱՆ 1932¹:

¹⁰⁴ ԱՃԱՌՅԱՆ 1951, 76-93, 107-113:

¹⁰⁵ ԱՃԱՌՅԱՆ 1951, 142-168:

¹⁰⁶ АРЕШАТЯН 1973, 202:

¹⁰⁷ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1982¹:

¹⁰⁸ ԱԿԻՆԵԱՆ 1932¹, 26-27: Ս. Արեշատյանը (АРЕШАТЯН 1973, 37-40) բերում է նաև դասական շրջանում թարգմանված երկերի ցանկը. այն հիմնված է Ակինյանի կազմած «ոսկեդարյան» թարգմանությունների ցանկի (ԱԿԻՆԵԱՆ 1932¹, 38-49) վրա, որը մատենագիտական ավյալներ չի պարունակում: Ակինյանը միայն նշում է, որ, բացի հրատարակվածներից, իր ցանկում ընդգրկված են նաև որոշ անտիպ երկեր, էջ 37:

¹⁰⁹ АРЕШАТЯН 1973, 26-27, ТЕРИАН 1982, 183:

Կառույցի նկարագրությունը տրամաբանական է, սակայն սխեմատիկ, ինչը բնական էր առանձին թարգմանությունների լեզվի անբավարար ուսումնասիրվածության պայմաններում: Ակնհայտ է, որ կոնկրետ հուշարձանների ի մոտո հետազոտումն անխուսափելիորեն ստիպելու է այդ նկարագրության մեջ ճշգրտումներ մտցնել¹¹⁰:

Թարգմանական գրականության զարգացման՝ շատ ընդհանուր, սակայն ճշմարիտ պատկեր է ուրվագծված Գ. Զահուկյանի հետևյալ խոսքերում. «Թարգմանությունների մի մասը, ինչպես Աստվածաշնչի թարգմանությունը, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ը, Հակոբ Մծբնացու «Զգօն»-ը, Հովհաննես Ոսկեբերանի ճառերի և մեկնությունների մեծ մասը և այլն, ունեն մաքուր հայկաբան ոճ¹¹¹, որի վրա թարգմանական լեզվի ազդեցությունը առանձնապես զգալի է: Այլ երկեր ևս հիմնականում պահպանում են այսպես կոչված «մեսրոպյան» դասական հայերենի ոճը՝ երբեմն միայն տուրք տալով առանձին ազդեցությունների: Բնագրին լիակատար չափով նմանվելը, այն նյութապես թարգմանելը արդեն որակի է վերածվում հունաբան դպրոցի հեղինակների մոտ, որոնք տառացիորեն հետևում են բնագրին՝ յուրացնելով նրա շարահյուսական առանձնահատկությունները, ստեղծելով արհեստական բառակազմական ու բառաթեքական ձևեր և քերականական կատեգորիաներ»¹¹²: Այսինքն՝ բնագրի նյութական պատճենման առանձին տարրեր, ճիշտ է, ոչ համակարգված ձևով, առկա են արդեն անցման՝ «հետմեսրոպյան» շրջանի կամ «արծաթի դարի» թարգմանություններում, սակայն այդ սկզբունքին համակարգված բնույթ հաղորդեցին և այն ծայրահեղության հասցրին հունաբան դպրոցի ներկայացուցիչները՝ հայերենը դարձնելով արհեստական ու անհասկանալի: Գ. Զահուկյանից մեջբերված խոսքերից տրամաբանորեն բխում է նրա հետևյալ կանխատեսումը. «Ոսկեդարյան կամ դասական հայերենը որպես պատմական փուլ կհակադրվի ոչ թե հունաբան հա-

¹¹⁰ Օրինակ, «Բարոյախօս» թարգմանական հուշարձանը Ս. Արևշատյանի վերոհիշյալ գրքում դասված է հունաբան դպրոցի առաջին խմբի թարգմանությունների շարքը (АРЕВШАТЯН 1973, 187), սակայն, հունարեն բնագրի հետ բաղդատելով, մենք համոզվել ենք, որ այն տիպիկ դասական թարգմանություն է, տե՛ս MURADYAN 2005 (ed.): Երկի հունաբան բնույթի մասին առաջին անգամ գրել էր Ն. Մառը՝ վկայակոչելով վերնագրի «գաղափարել», «արտասանել» և «տառ» բառերը. դրանք Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքով (որը հայտնաբերել էր հուշարձանի՝ վաղադույն խմբագրությունը պարունակող ձեռագիրը և այն, իր որոշ նկատառումներով, ուղարկել Մառին) թույլ են տալիս «Բարոյախօս»-ը համարել Փիլոնի թարգմանություններին ժամանակակից (МАРР 1894, XLIX, ծ. 1): Լ. Խաչիկյանն ավելացրել է դրանց «ստորանկեալ» բառը (ԽԱՉԻԿՅԱՆ 1992, 159), սակայն իրավացիորեն ենթադրել է, որ վերնագիրը կարող էր ավելի ուշ գրվել: Եվ իրոք՝ այն բացակայում է հունարեն բնագրում:

¹¹¹ Հետագայում պարզվեց, որ Բարսեղի «Վեցօրեայք»-ը թարգմանվել է ասորերենից. տե՛ս ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1983, 264-278: Իսկ Հակոբ Մծբնացուն վերագրված «Զգօն» իրականում չորրորդ դարի կեսերի հայտնի ասորի հեղինակ Ափրահատի քարոզներն են. տե՛ս ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 1971, 411-424:

¹¹² ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 45:

յերենին, այլ հետդասականին, որի գրական տարբերակի մեջ հանդես է եկել հունաբանությունը իր չափավոր և ծայրահեղ դրսևորումներով»¹¹³:

Ս. Արևշատյանի գրքի լույս ընծայումից հետո՝ վերջին տասնամյակների ընթացքում, մանրամասն ուսումնասիրության են արժանացել «հետմեսորոպյան» շրջանի կամ «արծաթի դարի» առանձին թարգմանություններ: Ավելին, դրանք ստացել են իրենց դիպուկ բնորոշումը՝ «նախահունաբան» թարգմանություններ¹¹⁴: Գ. Լաֆոնտենի և Բ. Կուլիի՝ Գրիգոր Նազիանզացու ճառերի ձեռագրերին նվիրված գիրքը պարունակում է լեզվական հարցեր արծարծող մի գլուխ¹¹⁵: Հետազոտողները համեմատել են Գրիգոր Նազիանզացու մեջբերումները Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» տեքստում այդ նույն հատվածների թարգմանության հետ և համոզվել, որ միևնույն հունարեն հատվածների այդ երկու տարբեր թարգմանությունները պատկանում են լեզվի զարգացման տարբեր փուլերի: Մինչ Նազիանզացու թարգմանությունը պահպանում է լեզվի դասական բնույթը, բայց և հարազատ է հունարեն բնագրին, Տիմոթեոսի թարգմանության մեջ լեզվի մաքրությունը զոհաբերված է հարազատությանը սկզբնագրին¹¹⁶: Այդուհանդերձ՝ հեղինակները նշում են, որ Գրիգորի երկերի թարգմանությունները մաքուր դասական, այսինքն՝ ոսկեդարյան լեզվով չեն գրված, և ցույց են տալիս դրանց հատուկ՝ հունաբան լեզվի բոլոր առանձնահատկությունները¹¹⁷: Հունաբան թարգմանություններում նախածանցավոր բառերի պատճենումը նրանք որակում են որպես բառիմաստը չհասկանալու¹¹⁸, իսկ Նազիանզացու տեքստերում առկա նկարագրական թարգմանությունները՝ որպես իմաստը ճիշտ ըմբռնելու արդյունք:

Վերադառնալով Նազիանզացու թարգմանությունների լեզվի բնութագրմանը (24-րդ ճառի օրինակով)՝ Գ. Լաֆոնտենը և Բ. Կուլին գրում են, որ թեև այն մնում է դասական, այնուամենայնիվ նրանում առկա հունաբան լեզվին բնորոշ հատկանիշները բացահայտում են բնագիրը ձևականորեն ճշգրիտ թարգմանելու ձգտում: Օրինակ՝ նախածանցները զանց առնված չեն, այլ, ըստ նրանց, թարգմանված են նախդիրներով կամ նախադրություններով («ի վերայ», «ի բաց»), մակբայներով («արտաքս», «չուրջ», «առաջի»)՝¹¹⁹, դերբայներով (μεταίνστημι – «փոփոխեալ կանգնիմ») և գոյականներով (προκαθηέται – «զահերեց նստէր»): Հանդիպում է նաև նախածանցավոր բառը պատճենելու մեկ դեպք (τὸν προειληφόντων – «քան զնախաժամանեալսն»):

¹¹³ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1993, 13:

¹¹⁴ “Pré-hellénophile,” տե՛ս LAFONTAINE – COULIE 1983, 137:

¹¹⁵ LAFONTAINE – COULIE 1983, 114-137. Գլուխը կոչվում է “Timotheé Elure: l’argument linguistique”:

¹¹⁶ LAFONTAINE – COULIE 1983, 129:

¹¹⁷ LAFONTAINE – COULIE 1983, 132:

¹¹⁸ Այսպիսի մեկնաբանությունը չենք կարող հիմնավորված համարել. հունաբան թարգմանիչների մեթոդը միանգամայն գիտակցված էր:

¹¹⁹ Նախածանցավոր բառերի «կիսապատճենման» այս երկու եղանակների մեր մեկնաբանությունը տե՛ս Ա. 1.2 (ա, բ, նաև գ):

Գրքում համառոտակի, առանց օրինակների, թվարկված են նաև շարահյուսական հունաբանությունները՝ «բացարձակ սեռական», բացականչության սեռական կամ հայցական, մասնական սեռական, հայցական անորոշ դերբայի հետ, անորոշ դերբայի ընդլայնված կիրառություն, ապառնի «լի»-ով դերբայի հետ հայցական հոլով, հետևանքի պարագա անդեմ նախադասություններ:

Գրիգոր Նազիանզացու թարգմանությունների լեզվի հետազոտությունը շարունակել է Աննա Շիրինյանը՝ մի հոգևած նվիրելով 7-րդ ճառում նախածանցավոր բայերի թարգմանությանը¹²⁰: Այստեղ ևս մատնանշված է միայն մեկ պատճենում (μετατίθημι – «փոխադրեմ»¹²¹): Մնացած դեպքերում նախածանցը չի թարգմանվում (ἐπιδείκνυμι – «ցուցանեմ»), թարգմանվում է մակբայով (συν – «միանգամայն», ἀντεισάγω – «փոխանակ ի ներք ածեմ»), թարգմանվում է ողջ բառն ըստ իմաստի (διαγινώσκω – «ընտրեմ»)¹²², իսկ երբեմն հունարեն նախածանցը կրկնակի է թարգմանված՝ պարզ բայն իր իմաստով համապատասխանում է ողջ հունարեն բային, և նրան, բացի այդ, մակբայ է կցված (ἐλσειμι – «մտանեմ ի ներքս»): Հոգևածագիրը եզրակացնում է, որ թարգմանչի մեթոդը մեխանիկական ու կարծրացած չէ, այլ ճկուն ու բազմազան: Որպես գույտ իմաստային, արտաքին համապատասխանությունից զուրկ թարգմանության օրինակ նա բերում է հետևյալ նախադասությունը. οὐ τὸν αὐτὸν ὑποδυσόμεθα λίθον αὐτίκα («արդյոք անմիջապես չե՞նք մտնելու այս քարի տակ») – «ո՞չ զնոյն ի վերայ դնի մեզ վաղվադակի կափարիչ»:

Գ. Լաֆոնտենի և Բ. Կուլիի դիտարկումները շատ կարևոր են. դրանք ցույց են տալիս, որ թարգմանական գրականության դասական և հունաբան շրջանների միջև եղել է մի միջանկյալ փուլ, որի ընթացքում ստեղծված թարգմանությունների լեզուն բնորոշվում է բազմաթիվ հունաբանություններով, հատկապես՝ շարահյուսական: Բայց բառապատճենման երևույթն այդ շրջանում այնքան համատարած չէր դարձել, որքան հունաբան թարգմանություններում, որոնցից չատերը, «գիտական» բնույթի երկեր լինելով, պահանջում էին տերմինների արտացոլման ճշգրտություն ու միօրինակություն. նա-

¹²⁰ SIRINIAN 1993, 89-95: Մեկ այլ հոգևածում (SIRINIAN 1996) նա ամփոփել է իր դիտարկումները Նազիանզացու 2-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ ու 12-րդ ճառերում և Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գրքում» նախածանցավոր բառերի թարգմանության վերաբերյալ՝ այս անգամ նշելով դրանք թարգմանելու հինգ եղանակ՝ ա) պատճենում, բ) թարգմանություն պարզ բայով, գ) նախածանցի թարգմանություն մակբայով, դ) թարգմանություն ըստ իմաստի, ե) թարգմանություն հունարեն բայի իմաստին համապատասխանող բայով, որն ուղեկցվում է նախածանցի իմաստն արտահայտող «ավելորդ» մակբայով:

¹²¹ Նշվում է, որ նույն ճառում այդ բառը թարգմանված է նաև ըստ իմաստի՝ «փոփոխեմ», «փոփոխումն ընդունիմ», SIRINIAN 1993, 90, ծ. 9:

¹²² Սակայն հմմտ. սրանց շարքում բերված προκαθέζομαι – «նախադահ նստիմ», προοιμαίζομαι – «նախաշաւիղ առնեմ», υπεربάλλω – «գերադանցեմ» զուգահեռները, որոնցում հունարեն նախածանցին համապատասխանում է հայերեն համարժեք նախածանցը:

խածանցավոր բառերի պատճենումները և արհեստական քերականական ձևերը եզակի են:

Այս արժեքավոր դիտարկումներին լիովին համահունչ են Գ. Ուլուհոջյանի՝ Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գրքի» թարգմանության լեզվի ուսումնասիրության արդյունքները:

Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գրքի» քննական հրատարակության¹²³ իտալերեն թարգմանության առաջաբանում¹²⁴ Գ. Ուլուհոջյանը բնորոշել է այն որպես «միջանկյալ»՝ հետդասական շրջանի թարգմանություն՝ թվագրելով այն 5-րդ դարի վերջով ու 6-րդ դարի սկզբով և քննության ենթարկելով լեզվական առանձնահատկությունները: Նրա գնահատմամբ՝ բառապաշարը հիմնականում դասական է. պատճենված են մեծ մասամբ բարդ բառերը՝ «բազմադունակ» – πολύτροπος, «փառասիրութիւն» – φιλοδοξία, «սնափառութիւն» – κενοδοξία, «մարդասիրութիւն» – φιλανθρωπία, «խոնարհամիտ» – ταπεινόφρων¹²⁵: Նախածանցավոր բառերի և դրանց հայերեն համարժեքների շարք է բերված Ուլուհոջյանի՝ Բարսեղի նույն երկին նվիրված մի հոդվածում¹²⁶: Դրանց զգալի մասը թարգմանված է ըստ իմաստի (παραφραση – «պաֆրասութիւն»), կան նախածանցը բառարմատով թարգմանելու դեպքեր (ἀντιλογικός – «ընդդիմաբան»¹²⁷), մի շարք սυν նախածանցով բառեր թարգմանված են «կից» ետադաս արմատով (ορինակ, συμπαθής – «ցաւակից»), ավելի հաճախ նախածանցների իմաստն արտահայտվել է մակբայներով (παρίστημι – «յանդիման կացուցանեմ»), կա և պատճենման օրինակ (παρτείνω – «յարաձգեմ»):

Ուլուհոջյանը նշում է, որ հունաբանությունն արտահայտվում է հիմնականում շարահյուսության մեջ: Շարահյուսական պատճենումներից¹²⁸ նա բերում է հետևյալ օրինակները՝ εὐδηλοι ἔσπε μαθεῖν τι – «յայտնի էք ուսանել ինչ» (փաստորեն, «ուղղական անորոշ դերբայի հետ» դարձվածն է), ὁ δὲ μὴ οὕτως ἔχων – «իսկ որ ոչ այսպէս ունիցի»: Խնդրո առարկա բնագրում Ուլուհոջյանը հատուկ ուշադրության է արժանացրել «բացարձակ սեռական» հունարեն դարձվածի թարգմանության տարբեր եղանակները¹²⁹: Այդ դարձվածը՝ 1) թարգմանվել է դասական եղանակով, այսինքն՝ համադաս նախադասութեամբ (τῆς γραφῆς ἔθος ἔχουσης – «գիրք սովորութիւն ունին»), ժամանակի (ὁκλασάντος τοῦ ποδός – «յորժամ ոտն բեկանիցի») կամ

¹²³ ULUHOGIAN 1993¹.

¹²⁴ ULUHOGIAN 1993², IX-XXI.

¹²⁵ Հմմտ. նաև «կենդանագիր» (Բրս. հց. 2[6]) – ζωγράφος (PG 31. 884[75]), «արդարադատութիւն» (Բրս. հց. 8[23]) – δικαιοκρισία (884[75]), «մարտագիր» (Բրս. հց. 53[139]) – ἀθλοθέτης (924[5]):

¹²⁶ ULUHOGIAN 1975, 412-415:

¹²⁷ Նախածանցավոր բառերը բարդ բառերով թարգմանելու շարքը լրացնենք հետևյալ օրինակներով՝ περίοδος (PG 31.912[67]) – «չրճագայութիւն» (Բրս. հց. 45[116]), ἀντέθηκεν (PG 31.20[92]) – «ընդդիմադրեաց» (Բրս. հց. 50[131]):

¹²⁸ ULUHOGIAN 1993², XXI:

¹²⁹ ULUHOGIAN 1975, 416-420. տե՛ս հատկապես ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ 1989, 167-176:

պատճառի պարագա (τοῦ ἀποστόλου λέγοντος – «զի առաքեալ ասէ») երկրորդական նախադասութիւններով, 2) ճշգրիտ պատճենվել է (καιροῦ ποτε συνειμπεσόντος – «ժամանակի երբեմն ի վերայ եկելոյ»), 3) թարգմանվել է սեռականով ենթակայով օժտված անցյալ դերբայով (τοῦ ἀποστόλου... παραγγέλοντος – «առաքելոյ... պատուիրեալ»), 4) թարգմանվել է «տեառն ասելով» տիպի արտահայտութեամբ, որը դարձել է մի տեսակ կայուն բանաձև (τοῦ κυρίου διδάξαντος ἡμᾶς – «տեառն ուսուցանելով զմեզ»): Հետազոտողը փորձել է բացատրել վերջին եղանակի ծագումը, որը նա որակել է որպես դասական լեզվին ոչ հատուկ, բայց և՛ ոչ լրիվ բառացի պատճենում (տե՛ս մանրամասն Գ 5բ):

Ձափազանց ուշագրավ է Գ. Ուլուհոջյանի այն դիտարկումը, որի համաձայն անորոշ դերբայի գործիականը տարածվել է «բացարձակ սեռականից» դուրս՝ բացահայտչի դերով հանդես եկող դերբայի վրա (տե՛ս մանրամասն Գ 4դ):

Բացի Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու նշված երկերից, նախահունարան թարգմանությունների թվին պետք է դասել նաև Աթանաս Ալեքսանդրացու գրվածքների թարգմանությունները, որոնց լեզուն ցուցաբերում է հունաբանության միևնույն մակարդակը: Աթանասի ճառերից մեկի թարգմանությանը նվիրված իր հոդվածում Վ. Կալցոլարին մատնանշել է նախածանցավոր բառերի պատճենումներ և մի շարք շարահյուսական հունաբանություններ՝ եզրակացնելով, որ թարգմանությունը դասական չէ, ինչպես այն բնորոշել էր Փ. Կոնիբերը, այլ՝ նախահունարան, կամ նույնիսկ՝ հունաբան¹³⁰:

Վերոհիշյալ թարգմանություններում նկատած հունաբանությունները¹³¹ ստիպում են եզրակացնել, որ դրանք խիստ հունաբան են: Այնուամենայնիվ, ոչ ոք երբեք չի համարել դրանք հունաբան թարգմանություններ:

Ինչպես իրավացիորեն նշում է Գ. Ուլուհոջյանը, նախահունարան թարգմանությունների հունաբանությունն արտահայտվել է հիմնականում շարահյուսության մեջ: Բառապատճենումը, իմաստային պատճենումն ու նոր բառերի կերտումն էլ բավական տարածված էր, սակայն նախածանցավոր բառերն ավելի հաճախ «կիսապատճենվում» էին: Ձևաբանական հունաբանությունները հազվադեպ են. մեզ հանդիպել են՝ «իլ»-ով կրավորական անորոշ դերբայը (Նազիանզացու՝ Գ. Լաֆոնտենի և Բ. Կուլիի հրատարակած «Առ Գրիգոր Նիսացի» և «Ի սուրբ խաչ աստուածընկալ» ճառում), «ա» լծորդության բայերից «ի» լծորդությամբ կրավորական ձևը՝ «իմանի» (Նազիանզացու՝ Բ. Կուլիի հրատարակած ճառերից մեկում), «եմ» օժանդակ բայից արհեստական «ել» անորոշ դերբայը («Հարցողաց գրքում»), «ա» լծորդության բայերի ենթակայական դերբայը ներկայի հիմքից՝ անցյալ կատարյալի փոխարեն (Գրիգորի «Ի սուրբ խաչ աստուածընկալ» ճառում, Բարսեղի ճառերից մեկում):

¹³⁰ CALZOLARI 2000, 138:

¹³¹ Նշված հետազոտողների դիտարկումների և մեր բացահայտած հունաբանությունների մասին տե՛ս մանրամասն MURADYAN 2004:

Ակնհայտ է, որ սովորաբար որպես «հունաբան» են որակվում այն թարգմանությունները, որոնցում նկատելի են զգալի թվով արհեստական նախածանցներով և այլ արտառոց բառեր (որոնցից շատերը եզրեր են. օրինակ՝ «բաբառնութիւն», «որակ», «տեսակարար», «նմանամասնեայ», «քառանկիւնի», «առինչունակ», «այլայլակ»), նաև այնպիսի արհեստական քերականական ձևեր, ինչպիսիք են իգական սեռի դերանունները, արհեստական բայահիմքերը, արհեստական հոլովական վերջավորություններն ու նախդիրները և այլն: Շարահյուսական հունաբանությունն ընկալվում է ավելի շուտ որպես խրթնաբանություն, անգն աչքով տեսանելի է և բացահայտվում է միայն հունարեն բնագրի հետ մանրակրկիտ բաղդատության արդյունքում:

Այսպիսով՝ այս պահին նախահունաբան թարգմանությունների շարքը կարելի է դասել բացի Գ. Լաֆոնտենի և Բ. Կուլիի առաջարկած՝ Գրիգոր Նազիանզացու ճառերից և Գ. Ուլուհոջյանի կողմից որպես այդպիսին որակված՝ Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գրքից», այդ հեղինակների մյուս հրատարակված գործերը (բացառությամբ Բարսեղի՝ ասորերենից թարգմանված «Վեցօրյայքի» և չորրորդ շրջանի թարգմանություն համարվող «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի), ինչպես նաև՝ Գրիգոր Նյուսացու և Աթանաս Ալեքսանդրացու ճառերը (որոնցից մեկի վերաբերյալ նման ենթադրություն է արտահայտել Վ. Կալցուլարին): Այս շարքը մոտավորապես համընկնում է Ակինյանի նշած «արծաթի դարի» թարգմանությունների հետ: Հիշյալ հեղեցու հայրերի գրվածքներն աչքի են ընկնում ճարտասանական ոճով ու բարդ շարահյուսությամբ, ինչն առատ նյութ է մատակարարել հունաբանության ուղին որդեգրած թարգմանիչներին: Ինչ վերաբերում է Ակինյանի հիշատակած «Ալեքսանդրի պատմությանը»¹³², ապա Գ. Ուլուհոջյանի և Ս. Մանչինի Լոմբարդիի ուսումնասիրությամբ վերջերս պարզվել է, որ այդ թարգմանությունը նույնպես նախահունաբան է¹³³: Բացառված է, որ դասական համարվող թարգմանությունների ուսումնասիրությունը բացահայտելու է նաև ուրիշ՝ հունաբանություններ պարունակող տեքստեր, որոնց թվում կլինեն և այնպիսիք, որոնք կարելի է դասել նախահունաբան թարգմանությունների շարքը: Օրինակ՝ Հովհան Ոսկեբերանի ստվարածավալ հայերեն ժառանգությունը սովորաբար բնորոշվում է որպես դասական շրջանի արդասիք¹³⁴, սակայն նրա և Եփրեմի խմբագիր «Գործք առաքելոցի մեկնության մեջ» նկատելի են զանազան տեսակի հունաբանություններ:

¹³² Ս. Արեշատյանի գրքում այն հանդես է գալիս որպես հունաբան դպրոցի առաջին շրջանի թարգմանություն. АРЕШИАТЯН 1973, 187:

¹³³ MANCINI LOMBARDI – ULUHOGIAN 1992 հոգվածում հեղինակներն ապացուցում են, որ հայկական «Բ» խմբագրությունը, որ հրատարակիչը համարում է նախնական՝ բուն թարգմանություն (Սիմոնյան 1989), իրականում 10-11-րդ դարերի վերամշակում է, իսկ խաչատուր Կեչառեցու կաֆաներով ուղեկցվող «Ա» խմբագրության բուն տեքստը շատ ավելի մոտ է հունարեն սկզբնաղբին (տարբեր խմբագրություններից՝ Բ խմբագրությանը): Նման եզրակացության էլ հանգել նաև Պ. Քաուլին՝ COWE 1996, 245-260:

¹³⁴ Բացառություն է համարվում Գրիգոր Վկայասերի աշակերտ Կիրակոս վարդապետի թարգմանած Յովհաննու ավետարանի մեկնությունը: Իսկ Անդրեա Սկալան նորագույն հրատարակության մեջ պարզել է, որ «Առ թեոդորոս» ճառն ամենայն հավանականությամբ նախահունաբան թարգմանություն է, տե՛ս SCALA 2005, 240:

Թվարկված նախահունարան թարգմանություններին առայժմ վստահաբար կարող ենք ավելացնել «Կանոնագրքի» «Երկրորդ առաքելական (Կղեմայ)», Կոստանդնուպոլսի և Եփեսոսի ժողովների կանոնները: Դրանց թարգմանիչը ձգտել է հետևել հունարենի շարադասությունը և շարահյուսական կառուցվածքին:

Այսպիսով փաստերն ստիպում են եզրակացնել, որ հունարենի լեզվական ազդեցությունը չի սահմանափակվում հունարան դպրոցի արտադրանքով. այն բավական զգալի է նաև նախորդ՝ նախահունարան շրջանի թարգմանություններում, որոնք կարծես հող նախապատրաստեցին բուն հունարան թարգմանությունների մեթոդի մշակման համար: Մյուս կողմից «նախահունարան» թարգմանությունների որոշ նմուշներ այնքան հունարան են, իսկ նրանցում հանդիպող որոշ շարահյուսական հունարանություններ այնքան արտառույց, որ հետազոտողը կարող է գայթակղվել՝ ամբողջովին վերանայելու թարգմանական գրականության ընդունված պարբերացումը և ենթադրելու, թե գոյություն է ունեցել, ասենք, հունարան թարգմանությունների երկու ուղղություն կամ դպրոց՝ մեկն այստեղ քննարկվող «նախահունարան» թարգմանությունները, մյուսն էլ՝ ավանդաբար «հունարան» համարվող տեքստերը, և առաջիններն անպայման չեն նախորդել երկրորդներին, այլ միգրացիոն իրադրությամբ են դրանց գուցահեռ: Սակայն նման հետևություն անելու համար ընդհանուր դատողությունները բավարար չեն, իսկ կոնկրետ թարգմանությունների ավելի առարկայական ժամանակագրություն հաստատելու համար փաստերը՝ սուղ: Այդուհանդերձ՝ նախահունարան թարգմանություններում կերտված նոր բառերի բավական մեծ թվի առկայությունը «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում վկայում են, որ այդ թարգմանությունները պետք է որ նախորդած լինեն ամենավաղ հունարան գրվածքներին¹³⁵:

* * *

Հունարենի չծրագրված, տարերային ազդեցության առանձին դեպքեր հնարավոր է մատնանշել և դասական թարգմանություններում. մեր արձանագրած օրինակները բերվելու են բարդ բառերի պատճենմանը (Ա 2) և իմաստային պատճենմանը նվիրված բաժիններում (Ա 6), շարահյուսական հունարանություններից գտել ենք «բացարձակ սեռական» դարձվածի մեկ դեպք (Գ 5ա), «հայցականն անորոշ դերբայի հետ» դարձվածի հինգ դեպք, ընդ որում չորս դեպքում անորոշ դերբայն է «լինել» (Գ 6գ), ὄσσε կամ ἔως + infinitivus-ի բառացի թարգմանության երեք դեպք (Գ 6գ2), թեք հոլովներով հանդես եկող բառերի գոյականացում «զ» նախդրի օգնությամբ՝ երկու դեպք (Գ 2գ), երկու հոլովական վերջավորությունների կուտակում, որպես հունարեն թեք հոլովով

¹³⁵ Տե՛ս սույն գրքի հավելված 4.2, նաև ՄՈՒԻՐԱԴՅԱՆ 1993 (հրատ.), 261, և 324-346-ի բառացանկում արտացոլված գուցահեռները:

Հանդես եկող հոգի օգնությունը գոյականացված՝ թեք հոլով պարունակող բառակապակցության համարժեք՝ մեկ դեպք (Գ 2թ)¹³⁶:

* * *

Սույն աշխատության մեջ չենք անդրադարձել ոչ թարգմանական գրվածքներում կիրառվող հունաբանություններին: Դրանք պետք է դիտել որպես հունաբան և նախահունաբան թարգմանությունների լեզվական ազդեցության արդյունք, հատուկ ոճ, սկզբնական շրջանում՝ նորաձևություն, իսկ հետագայում՝ նաև ընդունված գրական հնարք, երբ հեղինակն իր նախասիրության չափով ոճավորում էր շարադրանքը թարգմանությունների ընձեռած նոր բառերով, քերականական ձևերով և շարահյուսական դարձվածներով: Այդպես են վարվել բազմաթիվ հեղինակներ, խիստ չափավոր՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին, ավելի համարձակ, բայց դարձյալ չափավոր՝ Մովսես Խորենացին¹³⁷, ավելի հաճախ՝ Մամբրե Վերծանողը, «Ներբողեան ի սուրբ խաչ» ճառի հեղինակը (ճառը վերագրվում է Դավիթ Անհաղթին), «Գիրք թղթոցում» Հովհան Մանգակունուն և Մովսես Խորենացուն վերագրված՝ երկարանակների դեմ ուղղված երկու գրվածքի հեղինակները, Գրիգոր Քերթոզը¹³⁸, Վրթանես Քերթոզը և Աբրահամը, Դավիթ Հարքացին, Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեկնությունների հեղինակներ Դավիթը, Անանունը, Մովսես Քերթոզն ու Ստեփանոս Սյունեցին, Անանիա Շիրակացին, Սահակ Զորոփորեցին, Թեոդորոս Քոթենավորը և նրա աշակերտ Հովհան Օձնեցին, Խոսրովիկ թարգմանիչը, Գրիգորիս Արշարունին, Վահրամ Բաբունը, Գրիգոր Նարեկացին՝ աստվածաբանական գրվածքներում, Անանիա Սանահնեցին, Վանական Վարդապետը և այլ հեղինակներ: Որոշ հունաբանություններ կարելի է գտնել պատմիչներ թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփանոս Ասողիկի մոտ: Ինչ վերաբերում է Գրիգոր Մազիստրոսին, ապա նրա հունաբան ոճն արտահայտվել է հիմնականում բառապաշարում¹³⁹:

¹³⁶ ՄՈՒՐԱԴՅԱՆ 2005:

¹³⁷ Մովսես Խորենացին այս առումով ամենից ուսումնասիրված հեղինակն է, տե՛ս Մալխասյանց 1968 (առաջաբան), 37, ԱՌԱՔԵԼՅԱՆ 1975, 108, ԱՌԱՔԵԼՅԱՆ 1981, 174-190, ՄՈՒՐԱԴՅԱՆ 1993, ԹՈՓՋՅԱՆ 2000, 71-83, TOPCHYAN 2001-2002:

¹³⁸ «Արքայի տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի ի Գրիգորէ նուաստէ քերդոյէ», ԳԻՐՔ ԹՂԹՈՑ 1901, 153-160: Մանանդյանի կարծիքով այս նամակը գրվել է 607-610/11 թթ. հունաբան ոճով (ՄԱՆԱՆԴՅԱՆ 1928, 93-94), հետևաբար այն այդպիսի ոճով գրված բավական վաղ ինքնուրույն գրվածք է: Նրանում եղած հունաբանությունները ներկայացված են սույն գրքի հավելված 5-ում:

¹³⁹ ՄՈՒՐԱԴՅԱՆ 2000, MURADYAN 2001-2002: Ա. Տերյանը խոսում է հունաբան շարահյուսության ազդեցության մասին Թրակացու մեկնիչների երկերում, Դավիթ Անհաղթի ուշ գործերում, Վրթանես Քերթոզի և Գրիգոր Քերթոզի 7-րդ դարի սկզբի նամակներում, Անանիա Շիրակացու, Դավիթ Հարքացու և Թեոդորոս Քոթենավորի, Սահակ Զորոփորեցու և Հովհան Օձնեցու մոտ: Հունաբան շարահյուսությունը նա տարբերակում է հունարեն լեզվի ազդեցությունից, որը դիտվում է Եզնիկից սկսած մինչև Գրիգոր Մազիստրոս. տե՛ս TERIAN 1982, 182-183:

Բազմաթիվ ինքնուրույն հեղինակների մոտ այլևայլ տեսակի հունաբանությունների արձանագրումը ցույց է տալիս, որ հունարենի ազդեցությունը չի սահմանափակվում թարգմանական հուշարձաններով: Այն կարոտ է մանրամասն ուսումնասիրություն:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՆԵՐԿԱ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հունաբանությունները ներկայացրել ենք երեք գլխով՝ «Բառապաշար» (Ա), «Զեաբանություն» (Բ), «Շարահյուսություն» (Գ)՝ համապատասխան ենթադասարաններով: Հունաբան և նախահունաբան թարգմանություններից քաղած օրինակները բերված են կողք-կողքի՝ Ա գլխում՝ այբբենական կարգով դասավորված ընդհանուր բառացանկերի ձևով, իսկ մյուս երկու բաժիններում՝ յուրաքանչյուր տեսակի հունաբանությունների նախահունաբան թարգմանություններից քաղած օրինակները նախորդում են հունաբան թարգմանություններից քաղածներից, իսկ հունաբան թարգմանությունների վկայությունները ձգտել ենք հնարավորինս դասավորել դրանց՝ վերը ներկայացրած հարաբերական ժամանակագրություն համաձայն:

Առանձին դեպքերում միևնույն օրինակները կրկնվել են բաժնից բաժին, քանի որ տարբեր բաժիններում քննվում են դրանց տարբեր առանձնահատկությունները: Օրինակ, միևնույն բառը կարող է դիտարկվել բարդ կամ վերջածանցավոր հունաբանություններին, ինչպես նաև իմաստային պատճենումներին նվիրված բաժնում, քանի որ նորաբանություն կերտելու գործընթացին մասնակցել են ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային գործոնները:

Քանի որ գիրքը հայերենի լեզվական առանձնահատկությունների քննություն է, հայերեն օրինակները նախորդում են դրանց հունարեն նախօրինակներին: Հունարեն բնօրինակի ամբողջական կամ հատվածական բացակայության պարագայում բերվող բառերի կամ արտահայտությունների հունարեն համարժեքները հաճախ հնարավոր է եղել վերականգնել: Այդ վերականգնված բառերն ու արտահայտությունները ներմուծված են աստղանիշով:

Հնարավորության դեպքում յուրաքանչյուր բաժին աշխատել ենք եզրափակել «Բաղդատություն թարգմանության դասական եղանակի հետ» խորագիրը կրող ենթաբաժնով, որը պարունակում է հունարենի ազդեցությունից զերծ պարզ օրինակներ, ինչպես դասական թարգմանություններից, այնպես էլ երբեմն նախահունաբան և հունաբան թարգմանություններից, նաև բուն բաղդատական դեպքեր, երբ գոյություն ունի միևնույն հատվածի և՛ դասական և՛ հունաբան թարգմանություն (միևնույն բառերի կամ արտահայտությունների տարբեր թարգմանություններն իրարից բաժանել ենք $\neq$ պայմանական նշանով): Դրանք աստվածաշնչյան հղումներն են Փիլոնի թարգմանություններում, նաև մեջբերումներն Աստվածաշնչից ու Հովհան Ոսկեբերանի Պողոսի թղթերի մեկնությունից Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» մեջ:

Թվում է՝ Փիլոնի և Տիմոթեոսի թարգմանիչները ծանոթ են եղել Աստվածաշնչի Հայերեն կանոնական տեքստին, և նրանից շեղումները որոշակի մեթոդի գիտակցված կիրառություն են: Մի քանի զուգահեռների օրինակներ քաղած են «Կանոնագիրք Հայոց»-ում ամփոփված՝ Նիկիայի ժողովին հղած Կոնստանտինոս կայսեր նամակից, որը թարգմանված է դասական եղանակով, և այդ նույն նամակի հունաբան թարգմանությունից՝ Սոկրատես Աքուլաստիկոսի «Եկեղեցական պատմություն» մեջ:

Ա ԲԱՌԱՊԱՇԱՐ

Որպես հունաբան թարգմանությունների լեզվի ամենից բնորոշ առանձնահատկություն, որն անմիջապես աչքի է զարնում նման տեքստ ընթերցելիս, հետազոտողներն առաջին հերթին նշել են հունարենի կաղապարով կերտված նախածանցավոր բառերը, որոնց թիվն ու կիրառությունը դասական լեզվում անհամեմատ ավելի սահմանափակ էր: Իրականում հունարենից պատճենումների շարքում շատ ավելի մեծ թիվ են կազմում բարդ բառերը: Հունաբան բառապաշարի կարևոր շերտ բաղկացած է վերջածանցավոր նորաբանություններից: Կան բառային հունաբանությունների և այլ տեսակներ:

Բառերի անսովոր կառուցվածքի շնորհիվ է, որ նորաձև, նույնիսկ տարօրինակ կազմություն տպավորություն են ստեղծում գրեթե բոլոր նախածանցավոր հունաբանությունները (Ա 1.1) և վերջածանցավորների մի մասը (Ա 3բ), բարդ բառերի (Ա 2) և վերջածանցավորների մեծ մասի (Ա 3ա) դեպքում առավել մեծ է նոր իմաստի գործոնը, իսկ իմաստային պատճենումներում (Ա 6) այն վճռորոշ է:

Հունաբան թարգմանիչների՝ բառապատճենման եղանակին լայնորեն դիմելը սովորաբար բացատրում են տերմիններով հագեցած գիտական տեքստերը ճշգրիտ թարգմանելու ձգտումով: Թերևս այդ է պատճառը, որ որոշ հետազոտողներ, նոր բառապաշարը քննարկելիս, սահմանափակվել են բացառապես տերմինների մասին խոսելով¹⁴⁰: Սակայն բազմաթիվ բառերի քննությունը ստիպում է եզրակացնել, որ տերմիններ կերտելու եղանակները ոչնչով չեն տարբերվել սովորական բառերը թարգմանելու կամ պատճենելու եղանակներից: Այսինքն՝ բառի տերմին լինելը որևէ դեր չի խաղացել այն թարգմանելու ժամանակ, երբ պետք էր ընտրություն կատարել՝ պատճենել՝ այն, թե՞ գտնել նրա հայերեն համարժեքը. տերմինաբանական արժեքն արտահայտվել է միայն իմաստի մեջ¹⁴¹:

1.1 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ՊԱՏՃԵՆՈՒՄ

Ն. Ադոնցը, հունաբան թարգմանությունների լեզուն բնորոշելիս, որպես ամենակարևոր հատկանիշ շեշտել է «հունարենի բառակազմությունը հարմա-

¹⁴⁰ Տե՛ս, օրինակ, АРЕВШАТЯН 1973, 155-159, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 47-48, ՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. 1971 (չնայած Մուրադյանի նպատակը հենց քերականական տերմինների քննությունն էր), ՀՈՎԱՆԵՓՅԱՆ 1987, 58:

¹⁴¹ Օրինակ՝ «Պիտոյից գրքի» թարգմանական սահմանումներում «արտասանութիւն» (ἐκφρασις) տերմինը և «յարադրութիւն» (παράθεσις) բառը նախածանցավոր պատճենումներ են, «չըջակայ» (περίστασις) տերմինը, «առաջիկայ» (προκείμενος) բառը՝ նախածանցավոր բառերի՝ բարդ բառերի օգնությամբ կիսապատճենում, «բարառնութիւն» (ἡθοποιΐα) տերմինը և «բազմիշխանութիւն» (πολυκυραυνίη) բառը՝ բարդ բառերի պատճենումներ, «գրութիւն» (θέσις) տերմինը և «անուսումնութիւն» (ἀμαθία) բառը՝ վերջածանցավոր և այլն: Տե՛ս MURADYAN 1999:

րեցված որոշակի բառապաշարը» ու նշել հունարեն նախածանցների համար հայերենում համարժեքներ գտնելու կամ արհեստականորեն կերտելու սովորությունը: Նա բերում է հունարեն-հայերեն համարժեք նախածանցների ցանկն ըստ Դիոնիսիոս Թրակացու «Փերականություն»¹⁴²:

Նախածանցները գիտական-փիլիսոփայական տերմինաբանություն կերտելու միջոց է համարել Գ. Զահուկյանը¹⁴³: «Հունաբան դպրոցի ներկայացուցիչները գիտական-փիլիսոփայական որևէ տերմին հայերեն արտահայտելու համար ստիպված էին դիմել կամ արհեստական կառուցումների, կամ հայերենում, հատկապես բարբառներում հանդիպող մի քանի նախածանցներին մասսայական կիրառություն տալ»:

Ա. Մուրադյանը ցույց է տվել նախածանցների կարևորությունը հայերենի քերականական տերմինների կերտման համար¹⁴⁴: Մանրամասն քննելով յուրաքանչյուր ածանցի կիրառությունն ու ծագումը՝ նա եզրակացրել է. «Նախածանցների կազմության գլխավոր աղբյուրը ծառայել է դասական հայերենը. օգտագործվել են ա) դասական հայերենի նախդիրներ («առ», «ըստ», «ընդ»), մակբայներ («նախ», «վաղ», «յար», «ստոր»), մակբայների արմատներ («արտ», «բաց», «ներ», «վեր»), բ) դասական հայերենի արմատներ («բաղ», «գեր», «հակ», «մատ», «շաղ», «շար», «պար», «տրամ», «փոխ»)¹⁴⁵, գ) դասական հայերենի արմատներ, որոնք հնչյունական կամ իմաստային որոշ փոփոխություն են կրել. օրինակ, հնչյունափոխված են՝ «ենթ» < «ընդ», «հոմ» < «համ», «փաղ» < «բաղ», «փար» < «պար», «բազ» < «բակ», իմաստափոխված են՝ «շաղ» («կապ, զոդ, կցում») արմատը, որ իբրև նախածանց ստացել է «կից» նշանակությունը: Իմաստային փոփոխություն են կրել նաև «գեր», «ենթ», «հոմ», «մակ», «տրամ» և այլ նախածանցները»¹⁴⁶: Ա. Մուրադյանը խոսում է նաև հունարենի նախդիր-նախածանցների իմաստային, երբեմն նույնիսկ՝ հնչյունային պատճենման մասին:

Այդ դիտարկումները համահունչ են Գ. Զահուկյանի դատողությանն այն մասին, որ Դիոնիսիոս Թրակացու թարգմանիչը նախադրություն-նախածանցների ցանկը կազմելիս առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով. 1) հազվադեպ գործածական նախածանցներին տվել է սովորական գործածություն («առ», «ընդ», «ըստ»), 2) կիրառել է արմատական ձևեր, որոնք երբեմն հանդիպում են նախորդ հեղինակների մոտ՝ «արտ» (< «արտաքոյ», «արտաքս»), «ներ» (< «ի ներքս», «ի ներքոյ», «ներքս»), 3) կիրառել է նախածանցների բարբառային տարբերակներ՝ «ենթ» («ընդ»-ի կողքին)¹⁴⁷, 4) բառերից ա-

¹⁴² АДОНИ 1915, CLXXXIV:

¹⁴³ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1954, 47-48:

¹⁴⁴ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. 1971, 138-152:

¹⁴⁵ Այդ հունաբան նախածանցները դասական հայերենի արմատների հետ է կապել դեռևս Մ. Աբեղյանը. տե՛ս ԱԲԵՂՅԱՆ 1974 (աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է 1931 թ.), 170-178:

¹⁴⁶ ԱԲԵՂՅԱՆ 1974, 151:

¹⁴⁷ ԱՃԱՌՅԱՆ 1971-1979, Բ, 27, բառահոգված «ենթ». հիշատակվում է նաև «ընթ» տարբերակը և նշվում, որ այն «հարմարեցված է «ընդ» նախդրից», Դ, 55, բառահոգված «պար».

ռանձնացրել է նախաբաղադրիչներ՝ «մուշտ», «զով», «գաւ», 5) ներգրավել է սովորական գործառույթով բառեր՝ «քող», «խուն», «ունջ», «բակ»¹⁴⁸:

Ս. Արեւշատյանը չեղտել է արհեստական նախածանցներով բառերի ստեղծումը որպէս փիլիսոփայական տերմինաբանութեան կերտման հիմնական միջոց¹⁴⁹:

Լ. Հովսեփյանը նկատել է, որ հունարան նախածանցները տարբերվում են բուն նախածանցներից նրանով, որ դրանց մեծ մասը հիմքին միանում են հոգակապի օգնությամբ (բաղաձայնով սկսվող արմատից առաջ), ինչը նրանց մոտեցնում է անկախ արմատներին¹⁵⁰: Սակայն «դեր», «ներ» նախածանցներն արմատին միացած են առանց հոգակապի՝ բացառությամբ «դերաքրիստոս» բառի, «չար»-ը միանում է հոգակապով՝ բացառությամբ «չարկանալ» օրինակի, «առ»-ը, «բաղ»-ը և «վեր»-ը՝ ինչպես հոգակապով, այնպես էլ առանց:

Հունարենից պատճենված նախածանցավոր բառերում՝ ինչպես նախահունարան, այնպես էլ հունարան թարգմանություններում, արձանագրել ենք հետևյալ նախածանցներն իրենց հունարեն համարժեքներով՝

«ապ» – ἀπο, «առ» – προσ, προ, «բաղ» – συν, «բաց» – ἀπο, «դեր» – ὑπερ, «ընդ» – κατα, «համ» – ὅμο, συν, ἴσο, «հոմ» – ὅμο, συν, «յար» – παρα, συν, «նախ» – προ, «ներ» – ἐν, «պար» – περι, συν, παρα, «վայր» – κατα, ὑπο, «վեր» – ἀνα, ἐπι, «տար» – παρα, «տրամ» – δια, «փոխ» – ἀντι, μετα, συν:

Կան նաև միայն հունարան թարգմանություններում ավանդված զուգահեռներ՝

«արտ» – ἐκ, «դեր» – ἀντι, «ենթ» – ὑπο, «հակ» – ἀντι, «մակ» – ἐπι, «չար» – συν, «պատ» – παρα, «ստոր» – κατα, ὑπο, δια, «քող» – ἀμφι:

Հետևաբար հունարեն-հայերեն համարժեքներն են՝

ἀμφι – «քող», ἀνα – «վեր», ἀντι – «հակ», «դեր», «փոխ», ἀπο – «ապ», «բաց», δια – «ստոր», «տրամ», ἐκ – «արտ», ἐν – «ներ», ἐπι – «մակ», «վեր», κατα – «ստոր», «ընդ», «վայր», μετα – «փոխ», ὅμο – «համ», «հոմ», παρα – «յար», «տար», «պատ», «պար», περι – «պար», προ – «նախ», «առ», προσ – «առ», συν – «բաղ», «հոմ», «յար», «չար», «պար», ὑπερ – «դեր», ὑπο – «ենթ/ընթ», «ստոր», «վայր»:

Առանձին դեպքերում «նախ» նախածանցն արտահայտում է ἀρχ արմատի իմաստը՝ «նախասկիզբն» – ἀρχέγονος և «նախամարգարէ» – ἀρχιπροφήτης բառերում: «Համ» և «հոմ» նախածանցներին համապատասխանող ὅμο-ն նույնպես նախածանց չէ, այլ բառարմատ՝ ὅμος «նույն, միասնական» ածականի արմատը, նույնպիսին է «համ»-ը թարգմանող ἴσο՝ ἴσος «հավասար» ա-

«փար»-ը համարվում է «պար»-ի տարբերակ: Իսկ Գ, 445, բառահոգված «ներբող»՝ այդ բառը «ներ-փողոց» ենթադրյալ ձևից բխեցնելու առիթով բերվում են հետևյալ զուգահեռները՝ «ընդ» > «ենթ», «բաղ» > «փաղ», «ապագարձ» > «ապաթարց» և այլն:

¹⁴⁸ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1993, 10-11:

¹⁴⁹ АРЕВШАТЯН 1973, 213-216, հմտ. նաև 156-158:

¹⁵⁰ ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 163:

ծականի հիմքն է: «Ենթ» նախածանցը երբեմն հանդես է գալիս «ընթ» տարբերակով, որն, ըստ երևույթին, նախնական ձևն է:

Մի քանի նախածանցավոր պատճենումներ առկա են արդեն դասական թարգմանություններում՝

«Համամիտ» (Ա Պետ. Գ 8) – ὁμόφρων (1Pet. 3:8),

«Համանուն» (Եւս. քր. ա 110, Թրակ. 17) – ὁμώνυμος (Thrax 33.1-2),

«Համարուեստ» (Գծ. ԺԸ 3) – ὁμότεχνος (Act. 18:3),

«Նախադուռն» (Եզեկ. Ը 3) – πρόθυρα (Ezech. 8:3),

«Նախաստեղծ» (Իմ. է 1) – πρωτόπλαστος (Sap. 7:1),

«Հարազրող» (Ոսկ. գծ. 14) – συγγραφεύς (PG 60.93):

«Նախաստեղծ» բառում «նախ» նախածանցը թարգմանում է πρωτο- («առաջին») դասական թվականի հիմքը: «Շարագիր» բառը թերևս կարող էր ստիպել Հովհան Ոսկեբերանի և Եփրեմի խմբագիր՝ Գործք առաքելոցի մեկնությունը տեղափոխել դասական թարգմանություններից նախահունարանների շարքերը (դա հաստատող այլ լեզվական փաստեր էլ կան):

Բերենք զանազան թարգմանություններից քաղած նախածանցավոր պատճենների օրինակներ.

«ապաբանութիւն» (Թեոն 136) – ἀπολογία (Theon 9. 112.12՝ «պաշտպանական խոսք»),

«ապացոյց» (Բրս. հց. 43[108], 48[124], Նիւս. կազմ. 90, Դ. Ստոր. 207, Դ. Վերլուծ. 38, 56, 60, 64, 66, 68, 72, Սահմանք 386, Զեն.3.2.0) – ἀπόδειξις (PG 31.909[55], 918[81], 44.160.14, D. Cat. 116.30), «ապացուցական» (Դ. Պորփ. 16.18, 19.36, Զեն.1.6.9, 3.2.1) – ἀποδεικτικός (D. Porph. 88.9, 90.1),

«առադրեմ» (Դ. Պորփ. 38.35, Դ. Ստոր. 257, Դ. Վերլուծ. 88, Անան. Ստոր. 14) – προστίθημι (D. Porph. 109.29, D. Cat. 159.8՝ «ավելացնել»),

«առասութիւն» (Նիւս. Կ. Մ. 214, Թրակ. 12.17, Ար. Ստոր. 108, Դ. Վերլուծ. 96, Անան. Ստոր. 40, Անան. Մեկն. 497) – προσηγορία (PG 46.741, Thrax 23.2, Arist. Cat. 1a13՝ «դիմում»), «առասեմ» (Ար. Ստոր. 108) – προσηγορέω (Arist. Cat. 1a9),

«առարկութիւն» (Թեոն 32, Անան. Մեկն. 487) – πρόβλημα (Theon 2.71.7), «առարկուած» (Պետ. Գ.Թ. 100),

«առբայութիւն» (Դ. Ստոր. 198) – πρόσρημα (D. Cat. 110.13),

«առդնեմ» (Բրս. հայեաց 3.114, Տիմ. 1.18, Նեմես. 20) – προστίθημι (Bas. Attende 28.5, Nemes. 1.303՝ «ավելացնել»),

«առկայանամ» (Դ. Ստոր. 255, Դ. Վերլուծ. 90, 102) – πρόσκειμαι (D. Cat. 158.6),

«առէ» (Պորփ. 145) – πρόσεστι (Porph. 13.8),

«առէակեալ» (Պորփ. 141, 152) – προσγινομένη (Porph. 8.18), προσελθοῦσα (Porph. 18.18),

«առլինիմ» (Պորփ. 142, Նեմես. 20) – πρόσειμι (Porph. 9.14), προσγίνομαι (Nemes. 1.300՝ «կցվել»),

«առտուեմ» (Պղատ. Սոկր. 40, 42) – παρέχω (Pl. Apol. 19d1, 20e7),

«առճանապարհական» (Փիլ. տես. 29) – προσόδιος (Ph. Cont. 80.4՝ «*թափո-
րային (երգ)*»),

«արտաբերեմ» (Թրակ. 9.28, Թեոն 10, Անան. Մեկն. 491, Եւտիք. 21-22.9, Զեն. 1.5.2, 1.6.5, 6) – ἐκφέρω (Thrax 54.1, 58.1, Theon 1. 62.19), «արտաբերու-
թիւն» (Զեն. 1.5.1),

«արտադրեմ» (Փիլ. այլաբ. 124, Պող. Աղ. 149, Տիմ. 6.12, Բրս. ծն. 429-30, Զեն. 1.6.17, Պետ. Գ.Թ. 103) – ἐκτίθημι (Ph. LA 1.59, P. Al. 148), ἐκδεδώκασιν
(PG 31.1468.4) «արտադրութիւն» (Պիտ. 60, 71, Զեն. 1.5.1) – ἔκθεσις (Aphth. 81.7), «արտադրական» (Պիտ. 95, 124) – ἐκθετικός (Aphth. 86),

«արտանուագ» (Փիլ. այլաբ. 145, լին. 4.221) – ἐκμελής (Ph. LA 2.7՝ «*ան-
ներդաշնակ*»),

«արտաշնչութիւն» (Տիմ. 1.5) – *ἐκπνοή,

«արտասանութիւն» (Պիտ. 201.17, Թեոն 116-120) – ἔκφρασις (Aphth. 103, Theon 7՝ «*նկարագրություն*»),

«բալձաձական» (Թրակ. 18.4, Նիւս. կազմ. 121) – περιληπτικός (Thrax 33.4, PG 44.184.15՝ «*Հավաքական (գոյական)*»),

«բաղադրեալ» (Անան. Ստոր. 48), «բաղադրութիւն» (Անան. Մեկն. 493, Սահմանք 380) – *συνθετικός, *σύνθεσις,

«բաղդատումն» (Բրս. Հց. 43[110]) – σύγκρισις (PG 31.909[58]), «բաղդա-
տեմ» (Փիլ. տես. 6, Պիտ. 71) – συγκρίνω (Ph. Cont. 3.1), σύγκρισιν ἐπιφέρω
(Aphth. 81.9) «բաղդատութիւն» (Պիտ. 95.19, 124.10, 153.1, 2, 7, Թեոն 138-
144, 1903 Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, herausgegeben von A.
Manandian, Marburg III առաջ.16) – σύγκρισις (Aphth. 14, 81, 87, 93, 97, 98,
Theon 10, Nonnos 4.pr.4), «բաղդատական» (Սահմանք 384),

«բաղկանամ» (Փիլ. լին. 3.5, Նիւ. 1.4, Պորփ. 141, Դ. Ստոր. 203, Դ. Վերլուծ. 76, 90, Անան. Ստոր. 16, Զեն. 1.3.1 և այլն) – συνίσταμαι (QuGen. P. 3.5, Porph. 9.5), ἵσταμαι (D. Cat. 113.28),

«բաղկացութիւն» (Բրս. երրորդ. 3.157, Փիլ. այլաբ. 105, Պորփ. 143, Դ. Պորփ. 130.28, Զեն. 5.1.6 և այլն), «բաղկացումն» (Բրս. ծն. 427-8) – σύστημα
(PG 31.469), σύστασις (Ph. LA 1.1, Porph. 11.13, D. Porph. 182.20, PG 31.1465.12), «բաղկացեալ» (Փիլ. լին. 2.4, Պորփ. 140, Դ. Պորփ. 108.8, Պող. Աղ. 157) – συγκείμενος (Porph. 7.21-23, D. Porph. 167.23), διέστηκε (P. Al. 156),
συνεστηκός (Ph. QuGen. P 2.4),

«բացադործեմ» (Նիւս. Կ. Մ. 216, Դ. Սահմ. 66.28) – ἀπεργάζομαι (PG 46.745, D. Prol. 29.19՝ «*ավարտի Հասցնել*»),

«բացալինիմ» (Դ. Պորփ. 176.7, 178.1, 3, 180.1, Դ. Ստոր. 268) – ἀπογίνομαι
(D. Porph. 204.28, 205, 16, 17, 206.11, D. Cat. 180.8՝ «*բացակայել*»),

«բացակայ» (Եփես. Բ 279.13, 14-15) – ἀποστασία (Ephes. II. 58.24, 59.2-3՝
«*ուրացումն*», բառացի՝ «*Հեռանալը, մի կողմ կանգնելը*»), «բացակայութիւն»
(Սահմանք 382),

«բացակատարուածք» (Փիլ. տես. 7) – ἀποτελέσματα (Ph. Cont. 5.1), «բա-
ցակատարեմ» (Բրս. սղ. Ա 3.207, Պորփ. 143, Դ. Սահմ. 102.34, Դ. Պորփ. 18.35,

Դ. Վերլուծ. 58, 60) – ἀποτελέω (PG 29.213, Porph. 10.17, D. Prol. 44.3, D. Porph. 89.26՝ «*կատարել, ավարտի հասցնել*»),

«բացայիշատակ» (Պիտ. 30.2) – ἀπομνημόνευμα (Aphth. 52՝ «*հիշեցում*»),

«բացասութիւն» (Պիտ. 44.3, Դ. Պորփ. 150.9, Դ. Վերլուծ. 76, 78, Սահմանք 382, Զեն. 1.6.12, 3.2.3, 4.2.9, 4.3.1) – ἀπόφασις (Aphth. 67, D. Porph. 193.7՝ «*ժխտում*»), «բացասական» (Անան. Մեկն. 487),

«բացատրութիւն» (Փիլ. ալլաբ. 110, Թեոն 78, Պորփ. 133, Դ. Պորփ. 28.3, 11, Զեն. 2.3.2) – ἀπόδοσις (Ph. LA 1.16, Theon 4.82.24, Porph. 1.5-6, D. Porph. 97.2, 14), «բացատրեցէ... բացատրեալն» (Ար. Ստոր. 113) – ἀποδώσει... ἀποδιδούς (Arist. Cat. 2b33-34), «բացատրեմ» (Դ. Վերլուծ. 88, Պղատ. Օր. 176) – ἀποδίδωμι (Pl. Leg. 742c5),

«գերաբուն» (Դիոն. Երկ. քհ. 5.15, աստ. անու. 131.13) – ὑπερφυής (Dion. cael. hier. 2.2, div. nom. 1.4),

«գերագոյ» (Դիոն. Եկեղ. քհ. 54.15, Թղթ. 232.18) – ὑπερούσιος (Dion. eccl. hier. 1.1, epist. 4.1),

«գերազանցեմ» (Նիւս. Կ. Մ. 190, Նազ. Կ. Մ. 224.7) – ὑπερβαίνω (PG 46.836), ὑπερβάλλω (PG 35.761), «գերազանցեալ քան» (Դ. Պորփ. 72.9, 86.31, Կիւրղ. պրպ. 105) – ἐπαναβεβηκός (D. Porph. 137.1, 148.4, 147.5), ὑπερηρμένη (PG 75.1381), «գերազանցութիւն» (Փիլ. Էլ. 1.6, Բրս. ծն. 423-4) – ὑπερβολή (Ph. QuEx. 1.6, PG 31.1461.29), «գերազանց լինիմ» (Ար. Ստոր. 137) – ὑπερέχω (Arist. Cat. 10a23),

«գերազարդ» (Դիոն. Երկ. քհ. 2.8, 5.18, Կիւրղ. պրպ. 104) – ὑπερκόσμιος (Dion. cael. hier. 1.3, PG 75.1380՝ «*գերաշխարհիկ*»՝ *արտացոլված է* κόσμος բառի «զարդ» իմաստը, մինչ այն այստեղ նշանակում է «աշխարհ»),

«գերանծանօթ» (Դիոն. խորհ. ածաբ. 224.9) – ὑπεράγνωστος (Dion. myst. theol. 1.1),

«գերունակութիւն» (Պղատ. 126, Կիւրղ. պրպ. 104) – ὑπεροχή (Pl. Leg. 711d8, PG 75.1380՝ «*գերազանցություն*»),

«գերանուն» (Թրակ. 12, 30, Անան. Ստոր. 18, Զեն. 2.3.4), «գերանունութիւն» (Թրակ. 27, 28, Անան. Մեկն. 489) – ἀντωνυμία (Thrax 23.2, 63.1, 2; 64.1, 69.4),

«գերհատուցական» (Թրակ. 18, 20՝ *գերանվան տեսակ*) – ἀνταποδοτικόν (Thrax 33.3),¹⁵¹

«գերհիւսիսական» (Ար. աշխ. 519) – ἀνταρκτικός (Arist. Mu 392a՝ «*անտարկտիկական, հարաւային*»),

«ենթադրութիւն» (Պորփ. 136, Դ. Պորփ. 166.13), «ստորադրութիւն» (Դ. Պորփ. 24.26) – ὑπογραφή (Porph. 3.20, D. Porph. 200.25, 92.2՝ «*ուրվագիծ*»), «ենթադրական» (Դ. Վերլուծ. 82),

¹⁵¹ Հմմտ. նաև Փոտ պատրիարքի (9-րդ դ.) նամակում՝ «*գերաբրիստոս*» – *ἀντίχριστος (Փոտ 280):

«ենթադրութիւն» (*Պիտ. 221.6, Թեոն 140*), «ընթադրութիւն» (*Պիտ. 221.3*) – ὑπόθεσις (*Aphth. 109.2, 3, Theon 10. 113.22*), «ենթադրեմ» (*Բրս. սղ. Ա 1.204, Պղատ. Օր. 349, Սահմանք 376*) – ὑποτίθημι (*PG 29.212.7, Pl. Leg. 885b3*), «ընթադրեալ» (*Բրս. Հայեաց 5.117*) – ὑποτιθέμενος (*PG 31.209*), «ենթակայ» (*Պիտ. 184.2, Փիլ. այլաբ. 114, Հերմ. 300.1-2, Սահմանք 378*) – ὑποκείμενος (*Aphth. 101.2, Ph. LA 1.25՝ «առաջադրված, տվյալ»*), «ենթակայ» (*Ար. Ստոր., Պորփ. 145, Դ. Պորփ. 100.7, Զեն. 3.1.6*) – ὑποκείμενον (*Arist. Cat. 2a21, Porph. 12.24, D. Porph. 162.5*), «ենթակայական» (*Պորփ. 142, Դ. Պորփ. 134.11*) – ὑποστατικός (*Porph. 10.5-6, D. Porph. 185.23*), «ընթակայ» (*Դ. Ստոր. 248*) – ὑποκείμενον (*D. Cat. 152.34՝ «կրավորական»*), «Հակադարձիմ» (*Ար. Ստոր. 112, Պորփ. 153, Դ. Պորփ. 130.5, 170.1, Անան. Ստոր. 34*), «Հակադարձ» (*Զեն. 4.2.7, 13*), «Հակադառնամ» (*Դ. Պորփ. 170.18, Դ. Վերլուծ. 120*) – ἀντιστρέφω (*Arist. Cat. 2b21, Porph. 19.14, D. Porph. 182.4, 202.5, 22*), «Հակադարձեալ» (*Անան. Մեկն. 490*), «Հակադարձաբար» (*Զեն. 3.2.2*), *Հմմտ. Ա 1.2բ «անդրադարձիմ»*, «Հակակայ» (*Պորփ. 143, Դ. Պորփ. 130.31, Դ. Վերլուծ. 118*) – ἀντικείμενος (*Porph. 11.3, D. Porph. 182.22*), «Հակակայիմ» (*Ար. Ստոր. 142, 144, Մեկն. 159, Դ. Վերլուծ. 120*) – ἀντίκειμαι (*Arist. Cat. 11b17, 12b5, Int. 17b16*), «Հակասութիւն» (*Դ. Ստոր. 198, Դ. Վերլուծ. 80*) – ἀντίφασις (*D. Cat. 110.9*), «Համագոյական» (*Առաբ. ՁԱ 98.2, Տիմ. 1.18, Պետ. Գ.Թ. 106*), «Համագոյ» (*Աթ. 70*) – ὁμοούσιος (*Ap. L. 34.3¹⁵², PG 26.1136.3*), «Համակար գոմ» (*Դ. Սահմ. 152.1*), «Հանգիտակարող գոմ» (*Դ. Պորփ. 150.16*) – ἰσοδυναμέω (*D. Prol. 75.26, D. Porph. 193.13՝ «Հավասարազոր լինել»*), «Համաձայնութիւն» (*Աթ. 142, Պետ. Գ.Թ. 101*) – συμφωνία (*PG 28.9[448]*), «Համամայր» (*Փիլ. չն. 269*) – ὁμομήτριος (*Ph. Spec. 3.15*), «Համաշունչ» (*Նազ. առ Նիւս. 231*) – ὁμόψυχος (*PG 35.833 [82-83]՝ «Համաժիտ»¹⁵³*), «Համապատիւ» (*Բրս. Հց. 41[101], բարկ. 2.180, Նազ. ի բաս. 162, Կ. Մ. 223, Աթ. 137*) – ὁμότιμος (*PG 31.905[47], 357[(93), 36.406, Naz. in Caes. 4.4.2*), ἰσότιμος (*PG 28.5*), «Հոմածին» (*Պղատ. Օր. 149*) – συγγενής (*Pl. Leg. 729e6*),

¹⁵² Կանոնը հղվում է ըստ Յոաննուի Հրատարակութեան (JOANNOU 1962), քանի որ Լաուչերտի մեր օգտագործած Հրատարակութեան (LAUCHERT 1896) մեջ այն բացակայում է:

¹⁵³ Հետեյալ օրինակում միեւնոյն ὁμο նախադաս արմատը թարգմանված է ավելի բառացի՝ «Համ» նախածանցով և պակաս բառացի, բայց ևս ճշգրիտ՝ ետադաս «կից» արմատով. «Հանունակիցն իմ և Համաշունչն» (*Նազ. առ Նիւս. 231*) – τὸν ὁμόνυμον ἔμοι καὶ ὁμόψυχον (*PG 35.833[82-83]*): Հետեյալ օրինակում՝ «խորհրդակիցք և Համախորհուրդք» (*Պետ. Գ.Թ. 103*), հավանաբար նույն նախածանցով և ետադաս արմատով թարգմանված է ՍՄՆ նախածանցը, ընդ որում սա մեկ բառի (հավանաբար σύμβουλοι) երկու բառով թարգմանելու դեպք է, տե՛ս Հավելված 2:

«Հոմանուն» (Ար. Ստոր. 107, Զեն. 3.3.1) – ὁμωνυμία (Arist. Cat. 1a1), «Հոմանունութիւն» (Դ. Պորփ. 80.28, Սահմանք 386) – ὁμωνυμία (D. Porph. 143.19), «Հոմանունակի» (Թրակ. 19.2, Նեմես.) – ὁμωνύμως (Thrax 34.3, Nemes. 2.329, 7.2, 15.30),

«մակագրութիւն» (Դ. Պորփ. 2.7, 17, 4.4, 22.7, Դ. Ստոր. 221, Դ. Վերլուծ. 48, Զեն. 1.6.10) – ἐπιγραφή (D. Porph. 80.13, 81.5, 11, 91.23, D. Cat. 127.6՝ «վերնագիր»),

«մականուն» (Թրակ. 20, Փիլ. տես. 6, Դիոն. եկեղ. քհ. 57.4), «մականունութիւն» (Դ. Ստոր. 202) – ἐπώνυμον (Thrax 33.22), ἐπωνυμία (Ph. Cont. 3.3, D. Cat. 113.5, Dion. eccl. hier. 1.3),

«մակացութիւն» (Ար. Ստոր. 108, Պորփ. 139, Դ. Պորփ. 104.5, Դ. Ստոր. 252, Դ. Վերլուծ. 54, 72, Սահմանք 380, Զեն. 3.1.5, 144.2.12) – ἐπιστήμη (Arist. Cat. 1b1, Porph. 6.16, D. Porph. 165.1, D. Cat. 155.20՝ «գիտելիք»),

«մակբայ» (Թրակ. 31, Անան. Մեկն. 489, Զեն. 2.3.4) – ἐπίρρημα (Thrax 23.2),

«մակեղուտ» (Դ. Պորփ. 10.13), «մակագոյեղ» (Դ. Պորփ. 120.27), «մակագոյեղուտ» (Դ. Պորփ. 120.12) – ἐπουσιώδης (D. Porph. 84.25, 178.25, 178.13՝ «էականը լրացնող»),

«յարաբազին» (Փիլ. տես. 29) – παραβώμιος (Ph. Cont. 80.4՝ «բազինի մոտ (երգվող երգ)»),

«յարագոմ» (Պորփ. 152, Դ. Վերլուծ. 132) – πάρειμι (Porph. 19.7),

«յարադրութիւն» (Պիտ. 95.19) – παράθεσις (Aphth. 81՝ «կողք-կողքի դնելը»), «յարադրեմ» (Դ. Պորփ. 86.24, Դ. Վերլուծ. 50, 92) – παρατίθημι (D. Porph. 147.32),

«յարակայ» (Բրս. ծն. 431-2, Դ. Վերլուծ. 92) – παρών (PG 31.1468.37), «յարակայանամ» (Դ. Պորփ. 32.7) – παράκειμαι (D. Porph. 100.15), «յարակայական» (Թրակ. 31.12) – παρακείμενος (Thrax 53.2՝ «հարակատար ժամանակ»), «յարակացուցէ» (Եւտիք. 23-24.13), «յարակայութիւն» (Պետ. Գ.Թ. 100),

«յարակցէ» (Բրս. հց. 48[125]) – συνάπτει (PG 31.918[82]),

«յարացոյց» (Բրս. արբեց. 1.95, Պիտ. 31.1, Դ. Սահմ. 4.2, Դ. Պորփ. 16.37, 44.29, Դ. Ստոր. 256, Թեոն 18, 102, Պղատ. եւթ. 19, Օր. 14, Կիւրղ. պրպ. 103) – ὑπόδειγμα (PG 31.445.17), παράδειγμα (Aphth. 63, D. Prol. 10.10, D. Porph. 88.22, 113.20, D. Cat. 158.28, Theon 2.66.16, Plat. Euthph. 6e4, Leg. 632e4, PG 75.1377՝ «օրինակ»),

«յարընդունելութիւն» (Բրս. հց. 56[148]) – σύλληψις (PG 31.928[18]՝ «մասնակցութիւն», «աջակցութիւն»),

«յարկացեալ» (Բրս. հայեաց 7.120) – παριστάμενον (Bas. Attende 34.13),

«նախադասութիւն» (Դ. Պորփ. 104.18, Դ. Վերլուծ. 42, 46, 76, 80, 82, 86, 116, 126, 130, 134, Անան. Մեկն. 487, Զեն. 3.2.1, 5.2.7, 3.2.1) – πρότασις (D. Porph. 166.3), «նախադասական» (Թրակ. 27) – προτακτικός (Thrax 61.3),

«նախախնամութիւն» (Նազ. առ Նիւս. 232, Փիլ. նխ. ստեպ) – προμήθεια (PG 35.836 [95], Ph. Prov. 2.41, 46),

«նախաշաւիղ» (Բրս. սղ. Ա 3.207, Նաղ. ի բաս. 166, Կ. Մ. 227, Պիտ. 95.10, 124.8, 153.7) – προοίμιον (PG 29.213, 36.504, Aphth. 87.9, 93.12, 109.12՝ οἶμος – «ուղի, չավիղ» բառից), πρόλογος (PG 35.765), «նախաշաւիղ առնեմ» (Նաղ. Կ. Մ. 231.1) – προοιμιάζομαι (PG 35.231),

«նախաճառեալ» (Աթ. 134) – προειρημένος (PG 28.1[440]), «նախաճառեցեալ» (Դ. Պորփ. 106.4) – προειρημένος (D. Porph. 197.16),

«նախայայտ» (Նիւս. Կ. Մ. 210.12, Բրս. Հց. 52[135]) – πρόδηλον (PG 46.736.40), προδῆλως (PG 31.929[20]՝ «նախապես հայտնի»),

«նախապատուելով» (Բրս. Հց. 13[37]) – προτιμήσαντες (PG 31.897[25]), «նախապատիւ» (Պետ. Գ.թ. 99),

«նախապետաբար» (Պորփ. 146, Դ. Պորփ. 188.9) – προηγούμενος (Porph. 13.20-21, D. Porph. 209.25՝ «նախ և առաջ, գլխավորապես»),

«նախառեալ» (Բրս. բարկ. 1.178, Հայեաց 7.122) – προσλαβοῦσαι (PG 31.356[93], Bas. Attende 36.2՝ «կանխող, առաջ ընկնող»),

«նախասացեալ» (Աթ. 139, Պորփ. 151, Դ. Պորփ. 158.29) – προειρημένος (PG 28.8[445], Porph. 18.5, D. Porph. 197.16),

«նախատիպ» (Բրս. ծն. 419-20) – πρωτότυπος (PG 31.1457.45),

«նախդիր» (Անան. Մեկն. 489),

«ներածութիւն» (Դ. Պորփ. 14.32, Զեն. 3.2.3, 5.1.1) – εισαγωγή (D. Porph. 87.25), «ներածեմ» (Թեոն 6, Դ. Ստոր. 257, Դ. Վերլուծ. 126, Եւտիբ. 19-20.7, Զեն. 5.2.5) – εισάγω (Theon 1.60.29, D. Cat. 159.22),

«ներբնակ» (Պատմ. Օր. 45) – ἔμφυτος (Pl. Leg. 654a5՝ «ի ծնե տրված»),

«ներբողեան» (Փիլ. իմաստ. 97, 99, Պիտ. 95.1, 2, 14, 124.9, 153.6, 8, Թեոն 130-136, Պատմ. Օր. 278, Մին. 473) – ἐγκώμιον (Ph. Abr. 255.2, 265.2, Aphth. 86.5, 6, 11, 93.9, 97.21, Theon 9.109-113, Pl. Leg. 829c3, Min. 319c1՝ κῶμος «խրախճանք», «ուրախ երգ»¹⁵⁴),

«ներգործութիւն» (Բրս. Հց. 42[107], 48[124], Թրակ. 22.24, Հերմ. 300.29, Պորփ. 143, Դ. Պորփ. 182.21, Դ. Վերլուծ. 72, 80, Սահմանք 380, Դիոն. եկեղ. քհ. 54.6, Զեն. 1.5.10, 5.1.1, Պետ. Գ.թ. 102) – ἐνέργεια (PG 31.909[53], 918[81], Thrax 46.1, Porph. 11.5, D. Porph. 207.25, Dion. eccl. hier. 1.1), «ներգործեմ» (Նիւս. Կ. Մ. 216, Զեն. 5.2.5, 5.7.1) – ἐνεργέω (PG 46.745),

«ներընդունի» (Թեոն 164, Պորփ. 145) – ἐνδέχεται (Theon 128.8, D. Porph. 13.3՝ «հնարավոր է»), «ներընդունական» (Սահմանք 378),

«ներկայ» (Թրակ. 23, 24, 25, Փիլ. ալլաբ. 156, Պիտ. 185, Անան. Մեկն. 494, Զեն. 5.2.5) – ἐνεστώς (Thrax 53.1, 3, Ph. LA 2.42, Aphth. 81.7), «աններկայ» (Զեն. 5.4.7),

«ներհակ» (Փիլ. ալլաբ. 110, Ար. առաբ. 543, Պատմ. Օր. 458, Սահմանք 380) – ἐναντίος (Ph. LA 1.18, Arist. VV 1249a30՝ «հակառակ»), τοῦναντίον (Pl. Leg. 96), «ներհակաբար» (Զեն. 4.3.1),

«ներմարդութիւն» (Եւտիբ. 35/36.33),

¹⁵⁴ ԱՃԱՌՅԱՆ 1971-1979, Գ, 445, բառահոգված «ներբող»:

«ներյարմար և ներյեղանակ» (*Պղատ. Օր. 45*) – ἔνρυσθμόν τε καὶ ἑναρμόνιον (Pl. Leg. 654a2),

«չաղապատեմ» (*Աղեքս. 75*) – περιπλέκω (Alex. a 5.1.5),

«չաղկապ» (*Թրակ. 35, Պիսիդ. 144.120, Անան. Մեկն. 489, Դ. Պորփ. 34.9, Դ. Վերլուծ. 86, ՍաՀմանք 376, Պետ. Գ.Թ. 106*) – σύνδεσμος (Thrax 23.2, 86.2, 3, 87.1, D. Porph. 101.31), «չաղկապութիւն» (*ՍաՀմանք 384*),

«չարաբանութիւն» (*Դ. Պորփ. 104.17, 20, Դ. Ստոր. 207, 210, Անան. Մեկն. 487, Զեն. 3.2.1*) – συλλογισμός (D. Porph. 166.2, 6, D. in Cat. 116.35, 119.10), «չարաբանեմ» (*Դ. ՍաՀմ. 6.11, 13*) – συλλογίζομαι (D. Prol. 2.25, 26),

«չարաբառնամ» (*Ար. Ստոր. 127*) – περιαιρέω (Arist. Cat. 7a35՝ «Համատեղ վերացնել»),

«չարադասեմ» (*Փիլ. իմաստ. 36, Դ. Վերլուծ. 72, Պղատ. Օր. 17*) – συντάσσω (Ph. Abr. 116.2, Pl. Leg. 634b1), «չարադասութիւն» (*Դ. Ստոր. 195*) – σύνταξις (D. Cat. 137.17),

«չարադրութիւն» (*Բրս. սղ. ՃԺԴ 5 241, Փիլ. Ժ բան 229, Դ. Պորփ. 164.3, Դ. Ստոր. 257, Դ. Վերլուծ. 46, 48, 52, 62, 88, 90, ՍաՀմանք 376, Դիոն. երկն. քՀ. 2.10, 4.11, Զեն. 1.1.5, 2.3.3*) – σύνθεσις (PG 29.492, Ph. Decal. 26.3, D. Porph. 199.12, D. Cat. 159.22, Dion. cael. hier. 1.3, 2.2՝ «Համադրում»), «չարադրեմ» (*Նիւս. կազմ. 85*) – συντίθημι (PG 44.153.46), «չարադիր» (*ՍաՀմանք 388*), «անչարադրելի» (*Զեն. 5.5.4*),

«չարալծեալք» (*Պիտ. 201.9-10*) – συνεζυγμέναι (Aphth. 104.12՝ «կապակցված, բարդ»),

«չարակալեալ» (*Պիսիդ. 144.121*),

«չարակարգեալ» (*Դիոն. թղթ. 232.13*) – συντεταγμένος (Dion. epist. 4.1՝ «կարգավորված»),

«չարահիւսեմ» (*Դ. Ստոր. 201*) – συμπλέκω (D. Cat. 112.15),

«չարամանեմ» (*Բրս. մախ. 4.197, Աթ. 72, Կիւրղ. պրպ. 111, Անան. Մեկն. 491, Պետ. Գ.Թ. 102*) – συμπλέκω (PG 31.380.3, 26.1137.26՝ «միահյուսել»), συλλέγω (PG 75.1388՝ «Հավաքել»), «չարամանութիւն» (*Ար. Ստոր. 108, ՍաՀմանք 380, Զեն. 4.2.9*) – συμπλοκή (Arist. Cat. 1a16),

«չարամաւտիմ» (*Ար. Ստոր. 118, Նեմես. 12*) – συνάπτω (Arist. Cat. 4b.21, Nemes. 1.48՝ «միացնել, կապակցել»),

«չարամերձիմ» (*Դ. ՍաՀմ. 128.4, Դ. Վերլուծ. 114, Ար. աշխ. 522, Բրս. ծն. 435-6*) – συνάπτω (D. Prol. 61.6, Arist. Mu 393a 21, PG 31.1473.7),

«չարայարմարեալ» (*Պղատ. Օր. 148*) – συναρμόττουσα (Pl. Leg. 729a6),

«չարկանալ» (*Ար. Մեկն. 167*) – συγκεῖσθαι (Arist. Int. 19b21՝ «բաղկացած լինել»),

«պարագրական» (*Բրս. ծն. 433-4*) – περίγραπτος (PG 31.1472.22՝ «սահմանադատված»),

«պարունակ» (*Թրակ. 18.5, 21.4*) – περιεκτικός (Thrax 33.4), «պարունակեմ» (*Փիլ. իմաստ. 49, լին. 1.1 Պորփ. 136, Դ. Պորփ. 2.19, Դ. Վերլուծ. 64, 76, 82, Զեն. 1.1.1, 3*) – περιέχω (Ph. Abr. 61.5, QuGen. 1.1, Porph. 3.19, D. Porph.

80.17, 81.7), «պարունակող» (Բրս. Հց. 42[105]) – περιεκτικόν (PG 31.908[52]), «պարունակական» (Դիոն. Եկեղ. քհ. 57.2) – περιεκτικός (Dion. eccl. hier. 1.3),

«ստորակայ» (Ար. Ստոր. 108) – ὑποκείμενος (Arist. Cat. 1a26),

«ստորասութիւն» (Ար. Ստոր. 110.5, Մեկն. 163, Դ. Պորփ. 150.9, Դ. Վերլուծ. 62, 76, 84, 90, 124, 134, 136, 138, 140, 142, Սահմանք 382, Զեն. 1.6.12) – κατάφασις (Arist. Cat. 2a5, Int. 18a37, D. Porph. 193.7՝ «Հաստատում»), «ստորասական» (Դ. Վերլուծ. 62, 78, 82, 90, 112, 116, Անան. Մեկն. 487),

«ստորոգութիւն» (Ար. Ստոր. ստեպ, Պորփ. 133, Դ. Պորփ. 8.20, Դ. Սահմ. 8.33, Դ. Վերլուծ. 46, 48, Զեն. 1.6.10) – κατηγορία (Porph. 1.4, D. Porph. 83.28, D. Prol. 3.27), «ստորոգեալ» (Պորփ. 135, Դ. Պորփ. 151.1, Դ. Վերլուծ. 86, 122, 3.2.1), «ստորոգիցեալ» (Պորփ. 135, Դ. Պորփ. 76.18) – κατηγορούμενον (Porph. 2.16, 2.17, D. Porph. 194.22, 139.17՝ κατηγορέω – «մեղադրել, պնդել, հայտարարել» բայի կրավորական դերբայի չեզոք սեռն է, որ տրամաբանութեան մեջ յուրահաստուկ իմաստ է ստացել), «ստորոգական» (Սահմանք 376),

«վայրանցեալ» (Պորփ. 137) – ὑποβεβηκός (Porph. 6.20 4.17՝ «ստորադաս»),

«վերաբերեմ» (Նիւս. կազմ. 72) – ἐπάγω (PG 44.145.22), «վերաբերութիւն» (Պօղ. Աղ. 149, Բրս. ծն. 433-4) – ἀναφορά (P. Al. 148, PG 31.1472.28),

«վերադրեմ» (Պետ. Գ.Թ. 103),

«վերադրեմ» (Նիւս. Կ. Մ. 216՝ ուղղելի է «վերադրեմ») – ἀνατίθηναι (PG 46.745), «վերադրեմ» (Նիւս. Կ. Մ. 213) – ἐπιτίθηναι (PG 46.741),

«վերաթուղցեալ» (Դիոն. աստ. անու. 130.8) – ἀναπτρουμένους (Dion. div. nom. 1.2),

«վերամբարձական» (Դիոն. երկ. քհ. 4.10) – ἀναγωγικός (Dion. cael. hier. 2.1),

«վերաստեղծում» (Դիոն. երկ. քհ. 6.4) – ἀναπλάσσω (Dion. cael. hier. 2.1՝ «կրկին կազմավորել»),

«վերաստեղծ» (Նիւս. Կ. Մ. 217.13), «վերաստեղծութիւն» (Զեն. 5.2.5) – ἔφοδος (PG 46.745),

«վերլուծական» (Դ. Պորփ. 20.2, Դ. Վերլուծ. 38, 40, 46, 48, 50, 52, 60, 114), «վերլուծական» (Զեն. 1.6.9, 3.3.2), «վերլուծութիւն» (Զեն. 3.3.0) – ἀναλυτική (D. Porph. 90.5),

«վերծանութիւն» (Թրակ. 1, Թեոն 16, Զեն. 2.3.2) – ἀνάγνωσις (Thrax 5.4, Theon 1.65.22՝ «ընթերցանություն»),

«տարածայնեմ» (Դ. Պորփ. 8.2, Դ. Վերլուծ. 110) – διαφωνέω (D. Porph. 83.11), «տարածայնութիւն» (Դ. Ստոր. 208) – διαφωνία (D. Cat. 117.19),

«տարառնում» (Ար. Ստոր. 120) – διαλαμβάνω (Arist. Cat. 5a18՝ «տարբերակել»),

«տարացոյց» (Աթ. 145, Բրս. 40 վկայք 1.389, Փիլ. լին. 2.34, Թեոն 156, Անան. Ստոր. 14) – παράδειγμα (PG 28.11[449], Theon 11.125.12՝ «օրինակ»), ἀπόδειξις (PG 36.508), παραδειγματικός (Ph. QuGen. 2.34),

«տարբերեմ» (*Ար. Ստոր. 108, Զեն. 3.2.2*) – διαφέρω (Arist. Cat. 1a12), «տարբերութիւն» (*Նոննոս III առաջ. 24, Կիւրղ. պրպ. 102, Զեն. 4.2.3*) – διαφορά (PG 75.1376), μεταφορά (Nonnos 4.pr.6),

«տարրորոշեմ» (*Դ. Պորփ. 6.15, Դ. Վերլուծ. 80*), «տարադատեմ» (*Դ. Պորփ. 68.16*) – διακρίνω (D. Porph. 82.20, 133.19), «տարրորոշումն» (*Սահմանք 378*), «տարօրէն» (*Փիլ. Սամփս. 562*) – *παράνομος,

«տրամաբանեմ» (*Դ. Պորփ. 16.11, Նիւս. Կ. Մ. 215.16, Զեն. 3.2.1*) – διαλέγομαι (D. Porph. 88.6, PG 46.744՝ «երկխոսութիւն (διάλογος) վարել, քննարկումների արդյունքում եզրահանգումների դալ»), «տրամաբանական» (*Դ. Պորփ. 14.7, Դ. Ստոր. 197, Սահմանք 376, Զեն. 1.6.9*) – διαλεκτικός (D. Porph. 87.5, D. Cat. 109.10), «տրամաբանութիւն» (*Դ. Վերլուծ. 64, Սահմանք 378, Զեն. 3.2.0*),

«տրամադրութիւն» (*Բրս. արբեց. 3.99, Թրակ. 22.23, Փիլ. լին. 4.157, Նիւս. կազմ. 90, Ար. Ստոր. 124, Պղատ. Օր. 12, Սահմանք 382, Կիւրղ. պրպ. 102, Պօղ. Աղ. 151, Զեն. 4.2.14*) – διάθεσις (PG 31.449.31, Thrax 46.1, 47.1, 48.1, Arist. Cat. 6a33, Pl. Leg. 632a7, PG 75.1373, 44.157.54՝ «դասավորութիւն, կարգ, վիճակ, հոգեվիճակ, բայի սեռ»), διάθεμα (P. Al. 150), «տրամադրեալ» (*Պիսիդ. 146.169*),

«տրամախոհեմ» (*Պղատ. Օր. 450*), «տրամախոհութիւն» (*Զեն. 1.6.13*) – διανοέομαι (Pl. Leg. 961c10),

«տրամակայեալ» (*Ար. Ստոր. 138, Պղատ. Օր. 79*) – διακείμενος (Arist. Cat. 10b5, Pl. Leg. 678a7՝ «հակված»),

«փաղանունք» (*Դ. Պորփ. 162.15, Դ. Ստոր. 234*) – τὰ συνωνυμοῦντα (D. Porph. 198.20), «փաղանուն» (*Թրակ. 19, Ար. Ստոր. 107, Զեն. 3.3.1*) – συνώνυμος (Thrax 33.2, Arist. Cat. 1a6, D. Cat. 142.24՝ «հոմանիշ»), «փաղանունութիւն» (*Սահմանք 386*),

«փաղառութիւն» (*Թրակ. 9.17, Դ. Ստոր. 235, Անան. Մեկն. 496, Զեն. 2.3.3, 4.3.2*) – συλλαβή (Thrax 10.5, D. Cat. 143.2՝ «վանկ»),

«փոխաբերեմ» (*Նիւս. Կ. Մ. 215.15*) – μεταβάλλω (PG 46.744), «փոխաբերութիւն» (*Պղատ. Օր. 76*) – μετάθεσις (Pl. Leg. 676b1, c7),

«փոխադրելով» (*Բրս. բարկ. 4.183*) – μετατιθείς (PG 31.361[10]), «փոխադրեմ» (*Բրս. հց. 48[124], Դ. Սահմ. 36.12, Անան. մեկն. 498, Պետ. Գ.Թ. 103*) – μετατίθημι (PG 31.918[82], D. Prol. 15.6), «փոխադրութիւն» (*Դ. Վերլուծ. 134, Նեմես. 15, 18, Պիսիդ. 222.281, Պղատ. Օր. 77*) – μεταβολή (Nemes. 1.156, 234), μετάβασις (Pl. Leg. 676c8),

«փոխատրութիւն» (*Բրս. հց. 120[47], բարկ. 4.183*) – αντίδοσις (PG 31.916[75], 361[13]՝ «հատուցում»),

«փոխատարբեմ» (*Կիւրղ. պրպ. 104*) – μεταστοιχείω (PG 75.1380՝ «փոփոխել տարրական կառուցվածքը»),

«քողաղաւտ» (*Թրակ. 44.13*) – ἀμφίβραχυσ (Thrax 119.3, «երկուստեք կարճ»՝ տաղաչափական տերմին է),

«քողաբորբ» (Թրակ. 44.8) – ἀμφίμακρος (Thrax 119.1, «երկուստեք երկար»՝ տաղաչափական տերմին է),

«քողախնդրեալն» (Թեոն 14) – τὰ ἀμφισβητούμενα (Theon 1.65.3՝ «վիճելի հարց»),

«քողայցումն» (Թեոն 16) – τὰ ἀμφισβητούμενα (Theon 1.65.18):

Վերոբերյալների թվում նշենք «պարունակեմ» բայը՝ «ունակ» արհեստական հիմքից (Հմմտ. «ունակական» և «ունակութիւն» բառերը):

Այն դեպքերում, երբ հունարեն բառն ունի երկու նախածանց, արտացոլված են կամ երկուսն էլ¹⁵⁵

«առարտագործեմ» (Պորփ. 144, Դ. Պորփ. 164.1) – προσεξεργάζομαι (Porph. 12.1-2, D. Porph. 199.10՝ «ևս ավարտի հասցնել»),

«առտարորոշութիւն» (Դ. Պորփ. 192.13) – προσδιορισμός (D. Porph. 213.12՝ «լրացուցիչ սահմանում»),

«ներբալառնում» (Թրակ. 14.20) – ἐμπεριλαμβάνω (Thrax 8.4՝ «ներառնել»),

«բաղհակադրութիւն» (Սահմանք 384) – *συναντίθεσις (Elias in Cat.), Հմմտ. «Հակաբաղադրական» (Դ. Ստոր. 255՝ նույն նախածանցները տեղափոխված են) – συναντίθεσις (D. Cat. 158.2՝ «կապակցված հակադրություն»),

«տարարտողութիւն» (Թեոն 54) – παρέκβασις (Theon 3.106.3՝ «չեղում»), կամ միայն մեկը՝

«արտելութիւն» (Պիտ. 71.14) – παρέκβασις (Aphth. 81՝ «չեղում», առաջին՝ παρα նախածանցը թարգմանված է է),

«առցուցանեմ» (Թեոն 4) – προσυποδείκνυμι (Theon 1.59.24՝ «ևս ցույց տալ», երկրորդը՝ ὑπο նախածանցը թարգմանված է է),

«պարաբոլ» (Ար. աշխ. 520) – ἐμπεριέχω (Arist. Mu 392a30),

«գերազանցեալ քան» (Դ. Պորփ. 72.9, 86.31) – ἐπαναβεβηκός (D. Porph. 137.1, 148.4, 147.5),

«պարունակեմ» (Դ. Պորփ. 72.7) – συμπεριλαμβάνω (D. Porph. 136.33՝ «համատեղ ներառել»),

«չարաբերեմ» (Դ. Պորփ. 92.14) – συνεισφέρω (D. Porph. 155.28՝ «ևս ներմուծել»),

«չարաբառնամ» (Դ. Պորփ. 92.14) – συναναιρέω (D. Porph. 155.28՝ «ևս վերացնել»):

Նախածանցավոր բառերի թվում հանդիպում են և ոչ օրինաչափ կազմություններ՝

«ներանիւթելն» (Դ. Պորփ. 140.15) – κατασκευή (D. Porph. 188.22՝ «պատրաստություն, կազմություն»), «ներանիւթեմ» (Դ. Պորփ. 138.27) – κατασκευάζω (D. Porph. 188.7).

¹⁵⁵ Հետևյալ օրինակում երկու նախածանցներից առաջինը թարգմանված է մակբայով (Հմմտ. Ա. 1.2ա), երկրորդը՝ նախածանցով. «ի վերայ առնեմ» (Բրս. հայեաց 8.123) – ἐπιπροστίθημι (Bas. Attende 36.20):

ΚΑΤΑ *նախածանցը սովորաբար թարգմանվում է «ենթ» կամ «ստոր», իսկ «ներ»-ը համապատասխանում է ըն կամ εἰς նախածանցներին: Արմատները նույնպես չեն համապատասխանում: Հմմտ. «ստեղծումն» (Պիտ. 60.11, Թեոն 14) – κατασκευή (Aphth. 77, Theon 1.64.31):*

ԲԱՂ ԴԱՏՈՒԹՅՈՒՆ թարգմանության դասական եղանակի հետ

1) Թարգմանության մեջ հանդես եկող համարժեքները չեն արտացոլում հունարեն բառի կառուցվածքը՝

«չաղախեսցիս» («չաղկապեալ պատեսցիս» տարրն/թերցումն ակնհայտորեն ուշ իմբազման արդյունք է) (Phys. 3.12) – συμπλακῆς,

«չհպի» (Phys. 28.3) – οὐ... συγγίνεται,

«բոլորակ» (Phys. 22.4) – περιφέρειαν ἔχων,

«Հակառակորդ» (Phys. 3.8, 5.6, 16.9, 17.7, 20.13, 31.8) – ἀντικείμενος (ինչպես «սատանա», այնպես էլ ածականի իմաստով),

«առդիմացելոց» (Տիմ. 301) ≠¹⁵⁶ «նժդեհից» (Ա Պետր. Ա 1) – παρεπιδήμιος (1Pet. 1:1),

«բացափայլումն» (Տիմ. 308) ≠ «լոյս» (Եբր. Ա 3) – ἀπαύγασμα (Hebr. 1:3),

«դերաքրիստոսին» (Տիմ. 303) ≠ «նեոին» (Ա Յովհ. Դ 3) – ἀντιχρίστου (1Jn. 4:3),

«ենթակացութեան» (Տիմ. 308) ≠ «էութեան» (Եբր. Ա 3) – ὑποστάσεως (Hebr. 1:3),

«նախազրեալք» (Տիմ. 305) ≠ «որ... կատարեալ էին» (Յուդ. 4) – οἱ προγεγραμμένοι (Jud. 4՝ դերբայի բառացի՝ դերբայ, իսկ մյուս կողմից՝ հարաբերական նախադասություն համարժեքները նույնպես տարբեր մեթոդների արտահայտություն են),

«նախծին» (Տիմ. 313) ≠ «անդրանիկ» (Կող. Ա 15) – πρωτότοκος (Col. 1:15),

«չարունակէ» (Տիմ. 210) ≠ «ստիպէ» (Բ Կոր. Ե 14) – συνέχει (Բ Կոր. Ե 14),

«ստորերկրականաց» (Տիմ. 312) ≠ «սանդարամետականաց» (Փիլիպ. Բ 10) – καταχθονίων (Phil. 2:10),

«ստորեկեսցէ» (Տիմ. 306) ≠ «իջանիցէ» (Հռոմ. Ժ 7) – καταβήσεται (Rom. 10:7),

«վայրածել» (Տիմ. 306) ≠ «իջուցանել» (Հռոմ. Ժ 6) – καταγαγεῖν (Rom. 10:6),

«վայրարկեալս» (Տիմ. 324) ≠ «որ սերմանի» (Ոսկ. Պող. Բ 447) – καταβαλλόμενον (PG 62.437),

«վայրասանդարամետից» (Տիմ. 175) ≠ «սանդարամետականաց» (Փիլիպ. Բ 10) – καταχθονίων (Phil. 2:10),

«վերադիտող» (Տիմ. 58) ≠ «տեսուչ» (Գծ. Ի 28) – ἐπίσκοπος (Act. 20:28),

«վերակացու» (Տիմ. 294) ≠ «վարդապետ» (Ղկ. Ը 24) – ἐπιστάτης (Lk. 8:24),

¹⁵⁶ ≠ նշանն իրարից բաժանում է միևնույն հունարեն բառի երկու տարբեր թարգմանությունները:

«վերածել» (ՏԻՄ. 306) ≠ «Հանել» (ՀՈՌՄ. Ժ 7) – ἀναγαγεῖν (Rom. 10:7),
«փոխադրելով» (ՏԻՄ. 305) ≠ «որ... դարձուցին» (ՅՈՒԴ. 4) – μετατιθέντες (Jud. 4),

«փոխակացոյց» (ՏԻՄ. 313) ≠ «փոխեաց» (ԿՈՂ. Ա 13) – μετέστησεν (Col. 1:13),

«փոխարկեալ լինի» (ՏԻՄ. 324) ≠ «փոփոխմունս փոփոխի» (ՈՍԿ. ՊՕԴ. Բ 447) – μεταβάλλεται (PG 62.437):

Որոշ դեպքերում նախածանցավոր պատճենումը և պարզ բառը տարբեր թարգմանություններում միևնույն արմատն ունեն.

«առածել» (ՏԻՄ. 323) ≠ «ածել» (ՈՍԿ. ՊՕԴ. Բ 445) – παραγαγεῖν (PG 62.436),

«Հակափրկանակ» (ՏԻՄ. 98) ≠ «փրկանս» (Ա ՏԻՄ. Բ 6) – ἀντίλυτρον (1Tim. 2:6),

«նախադրեաց» (ՏԻՄ. 207) ≠ «յառաջն եղ» (ՀՈՌՄ. Գ 25) – προέθετο (Rom. 3:25),

«վերատեսեն» (ՏԻՄ. 293) ≠ «տեսանեն» (ՂԿ. Է 22) – ἀναβλέπουσιν (Lk. 7:22),

«վերեկեցէ» (ՏԻՄ. 306) ≠ «եկանիցէ» (ՀՈՌՄ. Ժ 6) – ἀναβήσεται (Rom. 10:6),

«վերեկեցէ» (ՏԻՄ. 292) ≠ «եկեցէ» (ՂԿ. Ա 35) – ἐπελεύσεται (Lk. 1:35):

2) Դասական թարգմանիչը փորձել է արտացոլել հունարեն նախածանցի իմաստը.

ա. բայի նախածանցը թարգմանության մեջ փոխարինված է այն լրացնող խնդրի նախդրով՝

«ընդ նմա իցեն» (ԱՆՈՒ. ԺԸ 217.8) – συνεῖναι αὐτῷ (Ant. XIX.48.7),

«բերկրին ընդ քեզ» (Phys. 3.9) – συγχαίρουσίν σοι,

«ուրախ լինիցի ընդ իմ» (ԾՆՆ. ԻԱ 6) – συγχαρεῖται μοι (Gen. 21:6)¹⁵⁷,

«ընդ իգին լինի» (Phys. 13.2, 13.3) – συγγένηται τῇ θηλείᾳ,

«ընդ որոյ դասի» (ՊՈՐՓ. 134) – ὧ ὑποτάσσεται (Porph. 2.10-11),

բ. նախածանցի իմաստն արտահայտված է առանձին բայով՝

«ընկղմեն և տանին» (Phys. 5.9) – καταφέρουσιν,

«չաղեալ կայ» (Phys. 3.6) – συμπλέκεται,

գ. նախածանցի իմաստն արտահայտված է մակբայով.

«բաղկացաւ» (ՏԻՄ. 313) ≠ «եկաց բովանդակ» (ԿՈՂ. Ա 17) – συνέστηκεν (Col. 1:17),

«գերբարձրացոյց» (ՏԻՄ. 312) ≠ «առաւել բարձրացոյց» (ՓԻԼԻՊ. Բ 9) – ὑπερύψωσεν (Phil. 2:9),

«նախագնացես» (ՏԻՄ. 291) ≠ «գնացես առաջի» (ՂԿ. Ա 76) – προπορεύσῃ (Lk. 1:76),

¹⁵⁷ ԾՆՆ-ից դրբից այս նույն հատվածը Փիլոնի մոտ՝ «խնդակից լինիմ» (Փիլ. ալլաբ. 169) – συγχαρεῖται μοι (Ph. LA 2.82). Հմմտ. նաև «ուրախակից լինիմ» (Փիլիպ. Բ 17, 18) – συγχαίρω (Phil. 2:17, 18):

«վերածնեաց» (Տիմ. 301) ≠ «ծնաւ... վերստին» (Ա Պետ. Ա 3) – ἀναγεννή-
σας (1Pet. 1:3),

«չարունակէ» (Տիմ. 324.29) ≠ «միախուռն ունին» (Ոսկ. Պող. Բ 447) – συ-
νέχει (PG 62.437.40),

«միահամուռ զմիմեանս զհետ... ասել» (Հաւող. Ժէ 232.12-13) – ἐπισυν-
άπτειν (Laod. XVII.74.7),

«արկանէ ի խոնարհ» (Phys. 17.4) – καταβάλλει,

«արտաքսելանիցեն» (Phys. 24.5) – ἀπολυθῶσιν,

«ի բաց դառնայ» (Phys. 26.5) – ἀποχωρεῖ,

«ի գատ շրջել» (Phys. 32.6) – ἀναχωρεῖν,

«գատ և ուրոյն բնակել» (Phys. 32.6) – ἀναχωρεῖν,

դ. նախածանցավոր բառը թարգմանված է բառակապակցութեամբ՝

«քան զիւրեանց սահմանս որ եկեղեցիքն են» (Կոնստ. Բ 274.10) – ταῖς
ὑπερορίοις ἐκκλησίαις (Const. II.46.15),

«ոյք զնոյն խորհին» (Եփես. Գ 280.6) – συμφρονούντας (Ephes. III.59.16),

«զի մի գտցուք հաւասարորդ տաւնից նոցա և մեղաց» (Հաւող. Լէ 237.9-
10) – μηδὲ συνεορτάζειν αὐτοῖς (Laod. XXXVII.76.18). «և մեղաց» հավելու-
մը հունարենում արտահայտված մտքին բարոյական գնահատական է ավե-
լացնում,

«համակամսն» (Սոկր. 27) ≠ «ոյք հաւասարեն կամաց նորա» (Նիկ. Կոնստ.
132.2) – τοὺς αὐτῷ ὁμογνώμονας (Socr. 34.2),

«չարագրեալս... համակարգութիւնս» (Սոկր. 27) ≠ «գիրք եղեալ կամ կար-
գեալ» (Նիկ. Կոնստ. 132.8) – σύγγραμμα συνταγέν (Socr. 34.8):

1.2 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԿԻՍԱՊԱՏՃԵՆՈՒՄ

Այսպիսով՝ նախածանցավոր բառերը հաճախ պատճենվել են. «պատճե-
նում» եզրն օգտագործում ենք հունարեն բառի բառակազմական տարրերը
ճշգրիտ արտացոլող նորաբանությունների համար: Սակայն մենք կիրառում
ենք և «կիսապատճենում» եզրը՝ նկարագրելու համար հունարեն նախածան-
ցավոր բառերի թարգմանութեան այն եղանակը, որը չի կարելի ճշգրիտ պատ-
ճենում համարել, քանի որ նախածանցի դիմաց հայերենում նախածանց չէ,
սակայն մյուս կողմից դա ազատ թարգմանություն էլ չէ, քանի որ հունարեն
բառի կառուցվածքը որոշակիորեն արտացոլված է՝ արմատը թարգմանված է
համապատասխան արմատով, իսկ նախածանցի իմաստն արտահայտված է
կամ ա) մեկ այլ արմատով, և արդյունքում ունենք բարդ բառ (προκειμενος
– «առաջիկայ», ἀντίθεσις – «ընդդիմադրութիւն»), կամ բ) առանձին բառով,
մեծ մասամբ՝ մակբայով, և արդյունքում ունենք բառակապակցութիւն (ἐκ-
βολή – «ի բաց հանումն», συνέχω – «ի միասին ունիմ»), կամ էլ գ) նախ-
դրով, իսկ արմատին համապատասխանող բառը թեք հոլովով է:

1.2ա Կիսապատճենում մակբայ պարունակող բառակապակցությունք

Հունարեն նախածանցի իմաստը կարող է արտահայտված լինել բայը կամ բայանունը բնորոշող մակբայով: Բառակապակցություններով «կիսապատճենումններում» առկա են հունարեն նախածանցներին համապատասխանող հետևյալ մակբայները՝

«առընթեր» – παρα, «արտաքս» – ἐκ, «ընդդէմ» – ἀντι, κατα, «ի բաց» – ἀπο, ἐκ, ἀνα, «ի միասին» – συν, «ի ներքոյ» – ὑπο, «ի ներքս» – εἰς, «ի վայր» – κατα, «ի վեր» – ἀνα, «ի վերայ» – ἐπι, «կանխաւ» – προ, «միանգամայն» – συν, «յանդիման» – παρα, «յառաջագոյն» – προ, «յար» – παρα, «շուրջ» – περι, «վերստին» – ἀνα, «փոխանակ», «փոխարէն» – ἀντι:

Նշված մակբայներից մի քանիսի հիման վրա հունաբան նախածանցներ են կերտվել՝ «ի բաց» → «բաց», «ի ներքոյ», «ի ներքս» → «ներ», «ի վեր», «ի վերայ» → «վեր», «ի վայր» → «վայր», «յար» → «յար», «փոխանակ», «փոխարէն» → «փոխ»:

«Ընդդէմ» – κατα զուգն («ընդդէմ գինիմ» – καθοπλίζομαι) ուշադրով է այն առումով, որ κατα- թարգմանություն մեջ արտահայտված է նախածանցի փոխաբերական իմաստը, մինչ նրա սովորական համարժեքն է «ստոր»-ը՝ նրա ուղիղ՝ «ներքև» իմաստին (հմտ. և «ի վայր») համապատասխան: Այն հանդես է գալիս նաև κατα-ի նշված փոխաբերական իմաստի դեպքում՝ κατάφασις – «ստորաստվիւն» («ծխտում»), κατηγορούμενον – «ստորդեպալ» (κατηγορέω բայի առաջին իմաստն է «դեմ խոսել, մեղադրել»):

«զայսրէն դառնալն» (Նազ. 6.5.29) – τὴν ἐπάνοδον (PG 35.700.44՝ «վերադարձ»),

«անարտաքս բերելիս» (Դիոն. թղթ. 234.14) – ἀνεξέλεγκτος (Dion. epist. 6.1՝ «անհանդիմանելի», շփոթված է իբր ἐκφέρω-ից կազմված *ἀνεξένηγκτος բառի հետ),

«առընթեր բուսանեմ» (Սոկր. 68) – παραφύω (Socr. 1.22.6),

«առընթեր գոմ» (Դ. Սահմ. 30.17, Դ. Պորփ. 12.17) – πάρεimi (D. Prol. 13.3, D. Porph. 86.21),

«առընթեր դնեմ» (Թեոն 28) – παρατίθημι (Theon 2.70.22),

«արտաքս ընդունելութիւն» (Պիսիդ. 221.225) – *ἐκδοχή («որեւէ մեկից ընդունելը», «ընկալում, մեկնաբանություն»),

«արտաքս հանեմ» (Դ. Պորփ. 68.21) – ἐκβάλλω (D. Porph. 133.22),

«արտաքս կաքաւեցուցեմ» (Դիոն. եկեղ. քհ. 54.9) – ἐξορχεομαι (Dion. eccl. hier. 1.1՝ «պարելով հեռանալ»),

«զնոյն խորհիմ» (Եփես. Գ 280.6) – συμφρονέω (Ephes. III. 59.16՝ «համամիտ լինել»),

«ընդդէմ եբեր» (Բրս. բարկ. 2.180) – ἀντεπήνεγκεν (PG 31.357[1]),

«ընդդէմ գինիմ» (Դ. Պորփ. 72.5) – καθοπλίζομαι (D. Porph. 135.19),

«ընդդէմ հարցաքննեալ» (Պիտ. 153.2) – ἀντεξεταστικός (Aphth. 97.17՝ «համեմատական»),

«ի բաց անկաւ» (*Նեմես. 16*) – ἐξέπεσε (Nemes. 1.181),
 «ի բաց անցեալ գնացին» (*Աղեքս. 110*) – ἀπέστησαν (Alex. α 1.18.10.5),
 «ի բաց առաքեմ» (*Առաք. ՀԶ 96.1*) – ἐξαποστολέω (Ap. LXXXII.12.19),
 «ի բաց արկանեմ» (*Եփես. Ա 280.1*) – ἐκπίπτω (Ephes. I.59.6),
 «ի բաց բարձունմ» (*Աթ. 71, Պիտ. 60.2, Փիլ. ալլաք. 161, Դ. Վերլուծ. 126, Դիոն. եկեղ. քհ. 226.21*) – ἀναίρεσις (PG 26.1137.9), ἀνατροπή (Aphth. 72), ἀφαίρεσις (Ph. LA 2.60, Dion. eccl. hier. 2՝ «վերացում»), «ի բացաբարձունմ» (*Սահմանք 388*),
 «ի բաց բառնալով» (*Փիլ. տես. 23*) – ἀφαιρούμενος (Ph. Cont. 60.4), «ի բաց բառնամ» (*Դ. Պորփ. 174.8, Դ. Վերլուծ. 60, 90*) – ἀναιρέω (D. Porph. 204.1՝ «վերացնել»), ἀνήρηται (Ph. LA 1.20) – «ի բաց բարձեալ է» (*Փիլ. ալլաք. 111*),
 «ի բաց գնալ» (*Կիրղ. պրպ. 96*) – ἀποφοιτάω (PG 75.1372),
 «ի բաց գնացումն» (*Բրս. մկրտ. 1.422*) – ἀναχώρησις (PG 31.425),
 «ի բաց դիցէ» (*Առաք. ՀԵ 95.9*) – καθαιρείσθω (Ap. LXXXI.12.9, v.l. apud I. Schol.¹⁵⁸ ἀποτιθέσθω),
 «ի բաց դնելով» (*Բրս. ընչեղ. 2.151*) – ἀποτιθέμενος (PG 31.281[80]),
 «ի բաց եղեալ» (*Դ. Պորփ. 178.13*) – ἀπογινόμενον (D. Porph. 205.24),
 «ի բաց ընկեցեալ» (*Առաք. ԺԴ 78.6, Կիրղ. պրպ. 104*) – ἀπολείψας (Ap. XV.2.27), ἀποβεβληκότα (PG 75.1380), «ի բաց ընկենում» (*Պորփ. 145, Դ. Պորփ. 182.16*) – ἀποβάλλω (Porph. 13.2, D. Porph. 207.20),
 «թող ի բաց» (*Դիոն. խորհ. ածաք. 224.17*) – ἀπόλειπε (Dion. myst. theol. 1.1),
 «ի բաց ծնեալ» (*Նիււ. Կ. Մ. 214*) – ἀποτίκτουσα (PG 46.741),
 «ի բաց կացեալ» (*Եփես. Ա 279.2-3*) – ἀποστατήσας (Ephes. I.58.2), «ի բաց կամ» (*Պորփ. 133*) – ἀπέχομαι (Porph. 1.9), «եկաց ի բաց» (*Կիրղ. պրպ. 105*) – ἀπέστη (PG 75.1381),
 «ի բաց հանումն» (*Պիտ. 71.16*) – ἐκβολή (Aphth. 81),
 «ի բաց հատեալ անկցի» (*Առաք. ԻԶ 81.9*) – ἐκκοπτέσθω (Ap. XXIX.4.14),
 «ի բաց հատցի» (*Առաք. ԻԷ 82.3*) – ἐκκοπτέσθω (Ap. XXX.4.17),
 «ի բաց մեկնի» (*Առաք. ԽԶ 88.7*) – ἀπέχεται (Ap. LI.8.13),
 «ի բաց մերժեմ» (*Առաք. ԺԴ 78.13, ԽԷ 88.13*) – ἀποβάλλω (Ap. LI.8.17, LII.8.19),
 «ի բաց շրջումն» (*Պետ. Գ.Թ. 101*) – *ἀποστροφή,
 «ի բաց որոշեմ» (*Առաք. Ը 76.14, ԺԲ 77.10, ԻԳ 78.6*) – ἀφορίζω (Ap. IX.2.4, XIII.2.15, XXV.3.27-28),
 «ի բաց քարոզեմ» (*Պետ. Գ.Թ. 103*) – *ἀποκηρύσσω,
 «ի միասին ունիմ» (*Պիտ. 221.14*) – συνέχω (Aphth. 108՝ «ազդեցություն գործել»),

¹⁵⁸ Հովհաննես Սքոլաստիկոսի ժողովածուի մեջ (IOANNES SCHOLASTICUS 1937) պահպանվել է ճիշտ ընթերցումը, որին և համապատասխանում է հայերեն թարգմանությունը:

«ի միասին խառնումն» (*Հերմ. 311.9*) – *σύγκρασις,
«ի միասին գլխաւորեմ» (*Փիլ. լին. 1.1*) – συγκεφαλαιόομαι (Ph. QuGen. 1.1),
«ի միասին ջանալով» (*Փիլ. նիւ. 72*) – συνδιαπονήσαντες (Ph. Prov. 2.42),
«ի ներքոյ եղելոյ գրոյս» (*Փիլ. լին. 1.1*) – ὑποκειμένου τεύχους (Ph. QuGen. 1.1),
«ի ներքս մտանեմ» (*Նազ. Կ. Մ. 229.6*) – εἴσειμι (PG 35.769[B6]),
«ի վայր անկումն» (*Նեմես. 16*) – ἔκπτωσις (Nemes. 1.186),
«ի վայր իջուցանեմ» (*Նազ. Կ. Մ. 221.25*) – κατάγω (PG 35.757[A3]),
«ի վայր տապալեմ» (*Նազ. Կ. Մ. 231.*) – καταφέρω (PG 35.773 n.41),
«ի վեր հայեցայց» (*Նիւս. Կ. Մ. 188*) – ἀναβλέψω (PG 46.853),
«ի վեր յարուցեալ» (*Նիւս. Կ. Մ. 196*) – ἐξανιστάμενος (PG 46.864),
«ի վեր նուիրեմ» (*Նազ. Կ. Մ. 225*) – ἀνατίθηναι (PG 35.761[C14]),
«ի վեր ունեւով» (*Դիոն. թղթ. 233.4*) – ἀνέχον (Dion. epist. 4.1' «վեր պահելով»),
«ի վերայ ածեմ» (*Պիտ. 124.9*) – ἐπιφέρω (Aphth. 93' «ավելացնել»),
«ի վերայ ածումն» (*Բրս. սղ. Ա 2.205*) – ἐπαγωγή (PG 29.212.44),
«ի վերայ երևումն» (*Նիւս. կազմ. 90*) – ἐπιφάνεια (PG 44.160.16),
«ի վերայ երթալ» (*Կոնստ. Բ 274.11, 275.8*) – ἐπιβαίνειν (Const. II.46.15, 47.8),
«ի վերայ կացուցանէ» (*Փիլ. նիւ. 71*) – ἐφίστησι (Ph. Prov. 2.39),
«ի վերայ յարուցումն» (*Նազ. ճ.5.42, Բրս. պհ. Ա 4.59*) – ἐπανάστασις (PG 35.720.9, 31.168.43), «ի վերայ յարուցեալք» (*Փիլ. տես. 17*) – ἐπανιστάμενοι (Ph. Cont. 40.6),
«ի վերայ շինեմ» (*Փիլ. տես. 15*) – ἐποικοδομέω (Ph. Cont. 34.2),
«կանխաւ գուշակեմ» (*Աթ. 151*) – προσημαίνω (PG 28.17[456]),
«միանգամայն ապականեցաւ» (*Նիւս. կազմ. 96*) – συνδιεφθάρη (PG 44.161.52),
«յանդիման կացուցանեմ» (*Աթ. 143, Փիլ. ել. 2.2*) – παρίστημι (PG 28.10[448], Ph. QuEx. 2.2),
«յառաջագոյն գում» (*Դ. Պորփ. 148.21*) – προϋπάρχω (D. Porph. 189.23),
«յառաջագոյն ժառանգեալք» (*Փիլ. տես. 9*) – προκληρονομούμενοι (Ph. Cont. 13.3),
«յար լիցի» (*Բրս. ընչեղ. 2.151*) – παρέστω (PG 31.281[87]),
«չուրջ գայ» (*Փիլ. այլաբ. 128*) – περίεσι (Ph. LA 1.66' «չըջապատել»),
«չուրջ ծաղկեալ» (*Նիւս. կազմ. 59*) – περιανθίσαντα (PG 44.137.12),
«չուրջ յածումն» (*Փիլ. լին. 4.51*) – περιπόλησις (Ph. QuGen. 4.51),
«չուրջ պաշարեմ» (*Նիւս. Կ. Մ. 188*) – περιστοιχίζω (PG 46.852),
«չուրջ փայլատակեալ» (*Բրս. ընչեղ. 4.156*) – περισταραπτομένη (PG 31.292[10]),
«վերստին կոչել» (*Նազ. ճ.4.32.2*) – ἀνακαλέσασθαι (PG 35.557.33),

«վերստին գլխաւորութիւն» (*Թեոն 66*) – ἀνακεφαλαιώσις (Theon 4.78.8 «ամփոփում»),

«փոխանակ առնուլ» (*Փիլ. լին. 1.27, Բրս. ընչեղ. 3.154*) – ἀντιλαμβάνω (Ph. QuGen. 1.27, Bas. div. 3.37),

«փոխանակ ի ներք ածեմ» (*Նաղ. Կ. Մ. 231.26*) – ἀντεισάγω (PG 35.773[C5]),

«փոխանակ ստանամ» (*Բրս. ընչեղ. 1.150*) – ἀντικτάομαι (PG 31.281 [81]),

«փոխարէն թշնամանեաց» (*Առաք. Իե 81.5*) – ἀντελοιδóρει (Ap. XXVII.4.10):

Արձանագրել ենք երկու նախածանցը երկու մակբայով թարգմանելու հետեւյալ դեպքը՝

«ի միասին ի ներքս բերողաց» (*Նաղ. ճ.5.88*) – συνεισφέροντων (PG 35.617.34-35):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ թարգմանութեան դասական եղանակի հետ

«արտաքս առաքեաց» (*Տիմ. 311*) ≠ «առաքեաց» (*Գաղ. Դ 6*) – ἐξάπείστειλεν (Gal. 4:6),

«արտաքս գնեսցէ» (*Տիմ. 310*) ≠ «գնեսցէ» (*Գաղ. Դ 5*) – ἐξαγοράσῃ (Gal. 4:5),

«արտաքս խոստովանեսցի» (*Տիմ. 312*) ≠ «խոստովան լիցի» (*Փիլիպ. Բ 11*) – ἐξομολογήσῃ (Phil. 2:11),

«ի բաց առցուք» (*Տիմ. 311*) ≠ «ընկալցուք» (*Գաղ. Դ 5*) – ἀπολάβωμεν (Gal. 4:5),

«ի բաց դարձցիր» (*Տիմ. 148*) ≠ «խորհեսցիր» (*Բ Տիմ. Գ 5*) – ἀποτρέπου (2Tim. 3:5),

«ի բաց երթուիթեան» (*Տիմ. 148*) ≠ «մեկնելոյ» (*Գժ. Ի 29*) – τὴν ἄφιξιν (Act. 20:29),

«ի բաց թողեր» (*Տիմ. 79*) ≠ «թողեր» (*Մթ. ԻԷ 46*) – ἐγκατέλιπες (Mt. 27:46),

«ի բաց կացցեն» (*Տիմ. 148*) ≠ «քակեսցին» (*Ա Տիմ. Դ 1*) – ἀποστήσονται (1Tim. 4:1),

«ի ներքս ածցեն» (*Տիմ. 303*) ≠ «սարդեալք մուծանեն» (*Բ Պետ. Բ 1*) – παρεισάξουσιν (2Pet. 2:1),

«ի ներքս մտին» (*Տիմ. 305*) ≠ «սարդեցին մտին» (*Յուդ. 4*) – παρεισέδυσαν (Jud. 4),

«ի ներքս եկն» (*Տիմ. 325.7*) ≠ «եմուտ» (*Ոսկ. Պող. Բ 448*) – ὑπεισιῆλθεν (PG 62.437.58),

«ի վայր արկեցելոյ» (*Տիմ. 324*) ≠ «յերկիր անկելոյ» (*Ոսկ. Պող. Բ 446*) – καταβληθείσης (PG 62.437),

«կատարեցան միանգամայն» (*Փիլ. ալլաբ. 105*) ≠ «կատարեցան» (*Ծնն. Բ 1*) – συνετελέσθησαν (Ph. LA 1.1 = Gen. 2:1),

«արտաքս խաղայ յԱդենայ» (Փիլ. ալլաբ. 126) ≠ «ելանէր յԵդեմայ» (Ծնն. Բ 10-14) – ἐκπορεύεται ἐξ Ἐδέμ (Ph. LA 1.63 = Gen. 2:10-14),

«ածցէ արտաքս» (Փիլ. ալլաբ. 146) ≠ «Հանցէ» (Ծնն. Ա 24) – ἐξαγαγέτω (Ph. LA 2.11 = Gen. 1:24),

«ի բաց դարձուցից» (Փիլ. ել. 2.18) ≠ «դարձուցից» (Ել. ԻԳ 25) – ἀποτρέψω (Ph. QuEx. 2.18 = Ex. 23:25),

«ի վերայ ածելով» (Փիլ. ալլաբ. 151) ≠ «ածեալ» (Բ Օրին. ԻԳ 13) – ἐπαγαγών (Ph. LA 2.27 = Deut. 23:13),

«ի բաց տուր» (Փիլ. լին. 4.65) ≠ «արձակեալ» (Ծնն. Ի 7) – ἀπόδος (Gen. 20:7):

Եթե համեմատենք «սպրդեալք» (դերբայ) և «յերկիր» («ի» նախդիրը հայցական հոլովի հետ) ձևերի կիրառությունը Նոր Կտակարանում, մյուս կողմից էլ՝ «ի ներքս» ու «ի վայր» մակբայներին՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն», և «ի բաց» ու «ի վերայ» մակբայներին՝ Փիլոնի թարգմանություն մեջ, ապա ակնհայտ է, որ վերջին եղանակը շատ ավելի ձևականացված և միօրինակ է, ինչը մեզ թույլ է տալիս այդ եղանակը «կիսապատճենում» անվանել (հիշենք և «ի բաց», «ի ներքոյ», «ի ներքս», «ի վեր», «ի վերայ», «ի վայր», «յար», «փոխանակ», «փոխարէն» մակբայներին՝ նախածանցների վերածվելու հանգամանքը): Մյուս կողմից հունարեն թարգմանություններում մեր արձանագրած «առնթեր բուսանել» – παραφύω, «ի միասին ունիմ» – συνέχω, «ի միասին խառնումն» – *σύγκρασις, «կանխաւ գուշակել» – προσημᾶναι, «կատարեցան միանգամայն» – συνετελέσθησαν, «վերստին կոչել» – ἀνακαλέσασθαι, «վերստին գլխաւորութիւն» – ἀνακεφαλᾶιωσις գուգահեռները թերևս համեմատելի են դասականներում արձանագրված՝ «սպրդեալք մուծանեն», «սպրդեցին մտին» և «յերկիր անկելոյ» մակբայներով գուգահեռներին:

Եթե բայի հետ մակբայի կիրառությունը քերականորեն նորմալ է, և այդպիսին է վկայակոչված օրինակների առյուծի բաժինը, ապա «թիւն» և «ումն» բայանունները մակբայների հետ խիստ արհեստական բառակապակցություններ են. դրանցում կարծես չեղտված է եթե ոչ մեկ բառ լինելը, ապա գոնե մեկ բառին համապատասխանելը: Այդ առումով «արտաքս ընդունելութիւն», «ի բաց բարձումն», «ի բաց գնացումն», «ի բաց երթութիւն», «ի բաց հանումն», «ի բաց շրջումն», «ի միասին խառնումն», «ի վայր անկումն», «ի վերայ ածումն», «ի վերայ յարուցումն», «ի վերայ երևումն», «չուրջ յածումն», «վերստին գլխաւորութիւն» հայերենի նորմերի կոպիտ խախտում են: Նույնը կարելի է ասել և «անարտաքս բերելիս» բայածականի հետ ժխտական նախածանցով մակբայի մասին:

1.2բ Կիսապատճենում բարդ բառերի օգնությամբ

Բարդ բառերով «կիսապատճենումներում» հունարեն նախածանցներին համապատասխանում են հետևյալ բառարմատները՝

«անդր» – ἀντι, «առաջ», «առաջի» – προ, «առաւել» – ὑπερ, «դժոխ», «դժուար» – δυσ, «զոյգ» (*Հնչյունափոխված՝ «զուգ»*), «ընդդէմ» (*Հնչյունափոխված՝ «ընդդիմ»*), «Հակառակ» – ἀντι, «մերձ», «յանդիման» – παρα, «ներքս» – εἰς, «շուրջ» (*Հնչյունափոխված՝ «շրջ»*) – περι, «վաղ» – προ, «վերին» (*Հնչյունափոխված՝ «վերն»*) – ἐπι, «կից» (*ետադաս»*) – συν, «փոխանակ» – ἀντι:

Հունարեն-Հայերեն համարժեքներն են՝

ἀντι – «անդր», «զուգ», «ընդդիմ», «Հակառակ», «փոխանակ», δυσ – «դժուար», «դժոխ», εἰς – «ներքս», προ – «առաջ», «առաջի», «վաղ», παρα – «մերձ», «յանդիման», «առընթեր», περι – «շրջ», συν – «կից»:

Վերջադիր «կից» բառարմատով բազմաթիվ բառեր են կազմվել արդեն դասական թարգմանություններում՝

«զործակից լինիմ» (*Յկ. Բ 22*) – συνεργέω (Jac. 2:22),

«լծակից» (*Փիլիպ. Դ 3*) – σύζυγος (Phil. 4:3),

«խորհրդակից» (*Սիր. ԽԲ 22*) – σύμβουλος (Sir. 42:22),

«ուղեկից» (*Ղկ. Բ 44, Ոսկ. Մթ. է 61*) – σύνοδος, συνοδοίπορος (PG 57.87):

Կա նաև «դժուար»-ով բառ՝

«դժուարակիր» (*Մթ. ԻԳ 4*) – δυσβάστακτος (Mt. 23:4):

«Կից»-ով համարժեքի կանոնավորությունը Բարսեղ Կեսարացու «Հարցմանց գրքում» նշել է Գ. Ուլուհոջյանը¹⁵⁹: Սակայն «Հաւատակից» – δόφορων զուգահեռում «կից»-ը համապատասխանում է ոչ թե συν նախածանցին, այլ նրա հոմանիշ ὁμο-ին, հմմտ. վերը՝ «հոմ» – ὁμο, συν:

«ազգակից» (*Փիլ. տես. 7*) – συγγενής (Ph. Cont. 7.4),

«ազգակցութիւն» (*Իրեն. հերձ. 19*) – συγγένεια (Ir. Her. IV.3),

«ախտակից եղեր» (*Բրս. ընչեղ. 1.150*) – συνέπασχες (PG 31.281[80]^a «կարեկցեցիր»), «ախտակցութիւն» (*Բրս. հայեաց 7.122*) – συμπάθεια (Bas. Attende 35.28),

«աղաւթակից լինիմ» (*Առաք. ԽԳ 87.10*) – συνεύχομαι (Ap. XLV.7.16),

«անդրադարձիմ» (*Դ. Սահմ. 17.18, Դ. Պորփ. 30.22, 68.2*) – ἀντιστρέφομαι (D. Prol. 40.30, D. Porph. 99.23, 133.9), «անդրադարձիմ» (*Թրակ. 19.21*) – ἀναστρέφω (Thrax. 38.1), *հմմտ. Ա 1.1՝ «Հակադարձիմ»*,

«առաջադիր» (*Թրակ. 5.2*) – προτακτικός (Thrax, 10.4),

«առաջընթացք» (*Բրս. KB I.204¹⁶⁰*) – προτρέχοντες (PG 31.285[90]¹ «առջևից ընթացողները»),

«առաջիկայ» (*Պիտ. 60.2, Տիմ. 309*) – προκείμενος (Aphth. 77, Hebr. 12:1՝ «առաջադրված»),

«առընթերադրութիւն» (*Կիւրղ. պրպ. 102*) – παράθεσις (PG 75.1376), *հմմտ. Ա 1.1՝ «յարադրութիւն»*,

«զոյակից է» (*Աթ. 137*) – συνυπάρχει (PG 28.3[442]),

¹⁵⁹ ULUHOJIAN 1975, 412-415:

¹⁶⁰ Նոր հրատարակության մեջ նախապատվությունը տրված է «առաջնորդք» տարբերակին (Բրս. ընչեղ. 2.152):

«դժոխայիչելի» (*Թեոն 72*) – δυσμημόνευτος (Theon 5.80.25 «*դժվարութ-
յամբ հիշվող*»),

«դժուարագիւտ» (*Փիլ. իմաստ. 37*) – δυσέρετος (Ph. Abr. 19.5),

«դժուարահաճոյ» (*Փիլ. տես. 12, Բրս. թէ չէ պատճառ 5.446*) – δυσάρεστος
(Ph. Cont. 24.4), δυσαρεστούμενος (PG 31.341),

«դժուարամաքուր» (*Փիլ. նխ. 71*) – δυσκάθαρος (Ph. Prov. 2.40՝ «*դժվա-
րությամբ մաքրագործվող*»),

«դժուարանջատական» (*Դ. Պորփ. 118.4*) – δυσχώριστος (D. Porph. 176.13),

«դժուարարեւելի» (*Բրս. Հց. 44[111]*) – δυσκάθεκτοι (PG 31.912[60]),

«դժուարափաստաբանելի» (*Փիլ. նխ. 111*) – δυσαιτιολόγητος (Ph. Prov. 2.51),

«եզրակացութիւն» (*Դ. Սահմ. 47.5, Դ. Պորփ. 32.22, Դ. Ստոր. 214, Դ. Վեր-
լուծ 42, 96*) – συμπέρασμα (D. Prol. 108.23, D. Porph. 100.26, D. Cat. 122.6),

«զգայակից լինի» (*Կիւրղ. պրպ. 102*) – συναισθάνεται (PG 75.1377),

«զուգաձայն» (*Փիլ. տես. 30*) – αντίφωνος (Ph. Cont. 84.2՝ «*ի պատասխան
հնչող*»),

«զուգադարձիմ» (*Դ. Սահմ. 96.34*) – ἀντιστρέφω (D. Prol. 41.28), «զուգա-
դարձութիւն» (*Դ. Ստոր. 255, Դ. Վերլուծ. 126*) – ἀντίστροφον (D. Cat.
158.2), «անզուգադարձ» (*Եւտիք. 193-4, Հմմտ. Ա 1.1՝ «Հակադարձիմ» և Ա
1.2.բ՝ «անդրադարձիմ*»),

«զուգափչումն» (*Պիսիղ. 222.267*),

«ընդդիմաբաժանեալք» (*Դ. Պորփ. 174.3*) – ἀντιδιαίρουμένοι (D. Porph.
203.26՝ «*տրամաբանորեն զանազանվող*»),

«ընդդիմաբանութիւն» (*Առաք. ԼԵ 84.17, Փիլ. նխ. ա 120, Իրեն. Հերձ. 149*)
– ἀντιλογία (Ap. XXXVIII.6.2), «ընդդիմաբան» (*Բրս. Հց. 166 [479]*) –
ἀντιλογικός (PG 31.1108),

«ընդդիմադրութիւն» (*Պիտ. 222.6*) – ἀντίθεσις (Aphth. 109), «ընդդիմադ-
րեաց» (*Բրս. Հց. 50[131]*) – ἀντέθηκεν (PG 31.20[92]),

«ընդդիմակայ» (*Բրս. բարկ. 1.178, 2.180, Զեն. 4.3.1*) – ἀντίτυπος (PG
31.356[95]), «ընդդիմակայ» (*Զեն. 4.2.6*),

«ընդդիմահար» (*Բրս. բարկ. 4.184*) – ἀντίτυπος (PG 31.361[14]),

«խորանակցութիւն» (*Նիւս. Կ. Մ. 188*) – συσκηνία (PG 46.852),

«խորհրդակցութիւն» (*Նիւս. Կ. Մ. 215*) – συμβουλή (PG 46.744),

«կռուակից» (*Բրս. բարկ. 5.186*) – σύμμαχος (PG 31.365[21]),

«Հակառակարուեստ» (*Նազ ճ.5.39*) – ἀντίτεχνος (PG 35.716.17՝ «*որեւէ ար-
վեստի կամ արհեստի մեջ ախոյան*»),

«Հաւատակից» (*Բրս. Հց. 56 [147]*) – ὁμόφρων (PG 31.928.33),

«մարտակից» (*Թեոն 88*) – σύμμαχος (Theon 5.87.31),

«մերձակայ» (*Նիւս. Կ. Մ. 189, Նազ. ճ.2.39.1, 104.4, 105.3, 5.29, Կ. Մ. 227,
Պետ. Գ.Թ. 106, Բրս. սղ. Ա 4.211, ծն. 435-6*) – παρών (PG 46.852, 35. 448.1,
504.25, 39, 701.12, 10.3.2, 29.220, 31.1472.46),

«մշտնջենաւորակից» (*Աթ. 137*) – συναΐδιον (PG 28.5[444]՝ «*Հավերժ դո-
յակցող*»),

«յառաջաբան» (*Պիտ. 71.7*) – προοίμιον (*Aphth. 81*),
 «յառաջախնամութիւն» (*Փիլ. ժ բան 238, նիւ. 72*) – πρόνοια (*Ph. Decal. 58.5*), προμήθεια (*Ph. Prov. 2.41*),
 «յառաջասացեալ» (*Իրեն. հերձ. 178, Փիլ. նիւ. 29, Թեոն 136*) – προειρημένος (*Ir. Her. V.11, Theon 9.111.22*),
 «ներքսածական» (*Պօղ. Աղ. 149*) – εισαγωγικῶς (*P. Al. 148*), «ի ներքսածական» (*Բրս. մկրտ. 1.422*) – εισαγωγικός (*PG 31.425*),
 «շուրջճանապարհ» (*Նաղ. ճ.4.19*) – περίοδος (*PG 35.548.26՝ «շրջապատելը»*),
 «շրջաբերութիւն» (*Փիլ. ժ բան 250, Նիւս. կազմ. 46, Ար. աշխ. 518*) – περιφορά (*Ph. Decal. 103.2, PG 44.128.54՝ «պտուլտ»*), περιαγωγή (*Arist. Mu 391b18՝ «շրջապտուլտ»*), «շրջաբերեալ» (*Պղատ. Օր. 308*) – περιφερόμενος (*Pl. Leg. 854b4*),
 «շրջապտուլթիւն» (*Բրս. հց. 45[116], Փիլ. իմաստ. 51, Սահմանք 388, Զեն. 1.3.4*) – περίοδος (*PG 31.912[67], Ph. Abr. 69.6*), «շրջապայ» (*Զեն. 1.6.17*),
 «շրջակայ» (*Պիտ. 221.3*) – περίστας (*Aphth. 109՝ «հանգամանք»*),
 «շրջահոսեալ» (*Ար. աշխ. 521*) – περιρρεομένη (*Arist. Mu 392b22*),
 «պարակից լինիմ» (*Ար. աշխ. 519*) – συναναχορεύω (*Arist. Mu 391b18՝ «համատեղ շուրջպար բռնել»*),
 «սննդակից» (*Պետ. Գ.Թ. 99*) – *σύντροφος,
 «վաղադասական» (*Թրակ. 5.18*) – προτακτικός (*բացակայում է հունարենից՝ «նախադաս»*),
 «ցաւակից լինի» (*Կիւրղ. պրպ. 102*), «ցաւակից» (*Զեն. 1.4.7*) – συναλγεί (*PG 75.1377*):
 «Եզրակացութիւն» բառը որպէս *συμπέρασμα-ի համարժեք հաճանաբար արդշունք է «*եզրակցութիւն» բառի աղավաղման, որի մեջ սոս նախածանցը թարգմանված է ետադաս «կից» արմատով (հմմտ. συζυγία (D. Porph. 174.13) – «լծակցութիւն» (Դ. Պորփ. 114.4), συμμετρία (D. Porph. 206.30) – «չափակցութիւն» (Դ. Պորփ. 180.25)), իսկ πέρας արմատը՝ «եզր»-ով (հմմտ. πεπερασμένον (D. Porph. 159.27) – «եզերեալ» (Դ. Պորփ. 96.12)):*

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ
 «առաջիկայն» (*Տիմ. 309*) ≠ «որ առաջի կայ» (*Եբր. ԺԲ 1*) – τὸν προκείμενον (*Hebr. 12:1*),
 «խնդակից լիցի ինձ» (*Փիլ. ալլաբ. 169*) ≠ «ուրախ լինիցի ընդ իս» (*Ծնն. ԻԱ 6*) – συγχαρείται μοι (*Ph. LA 2.82 = Gen. 21:6*):

1.2գ Կիսապատճենում նախադրություն պարունակող բառակապակցությամբ

Նախածանցավոր բառերի կիսապատճենման ամենից հազվադեպ և արտառոց եղանակը թարգմանությունն է բառակապակցությամբ, որի մեջ նախա-

ծանցի իմաստն արտահայտված է գոյականի թեք հոլովի հետ կիրառված նախադրությամբ՝

«ի վերայ բանիւ» (Պիտ. 31.3) – ἐπιλόγω (Aphth. 63), «զ'ի վերայ բանին» (Պիտ. 44.13, 95.20, 124.11) – ἐπίλογος (Aphth. 68, 87, 93՝ «եզրահանգում», բառացի՝ «ի լրումն ասած խոսք»), հմմտ. պատճենված «մակբան» (Թեոն 62) – ἐπίλογος (Theon 3.75.28),

«զ'ի վերայ աւրհնութեանն» (Փիլ. տես. 29) – ἐφύμνια (Ph. Cont. 80.7՝ «հիմնի կրկներգը»),

«ընդմիմեամբն» (Ար. Ստոր. 109, Պորփ. 138, 140, Դ. Պորփ. 106.9, Անան. Ստոր. 16) – ὑπάλληλα (Arist. Cat. 1b16, Poprh. 5.21, 7.15, D. Porph. 166.29՝ «ենթակա, երկրորդական»):

Փաստորեն, հունարեն բառի կառուցվածքն արտահայտված է շարահյուսական կառույցի օգնությամբ:

Այլ դեպք է «ի վերայ միմեանց» (Դ. Պորփ. 82.22) – ἀλλεπαλλήλου (D. Porph. 144.21՝ «փոփոխական») գոլգահեռը, քանի որ հունարեն բառն ինքն էլ քարացած ἄλλ" (ἄλλο) էπ" ἀλλήλων (բառացի՝ «մեկը միմյանց վրա») արտահայտությունն է:

1.3 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ

1) Հունարեն ἐνάντιον («հակառակ») բառի երկու համարժեքն էլ բացատրության կարիք ունեն.

«ընդդիմակ» (Նաղ. ճ.2.11, Պիտ. 30, 44, 71, Նիւս. կազմ. 47, Անան. Ստոր. 14) – ἐνάντιον (PG 35.420, Aphth. 63.11, 68.6, 81.7, PG 44.129.23), «յընդդիմակ» (Բրս. բարկ. 3.183) – τοῦναντίον (PG 31.360[8]),

«ներհակ» (Փիլ. ալլաբ. 110, Թեոն 104) – ἐνάντιος (Ph. LA 1.18, Theon 5.95.2), «ներհական» (Նիւս. Կ. Մ. 215, Ար. Ստոր. 122) – τοῦναντίον (PG 46.744), ἐνάντιος (Arist. Cat. 5b31), «ներհակ» (Պղատ. եւթ. 18) – τοῦναντίον (Plat. Euthph. 3a6):

Ավելի վաղ՝ «ընդդիմակ» տարբերակում «ընդդէմ» արմատը արտահայտում է բառի իմաստը, իսկ «ակ» վերջածանցը գոյականացնում՝ առարկայական իմաստ է հաղորդում մակբային, ինչը մասամբ նման է հունարեն ἐναντι մակբայի և ἐνάντιος ածականի (նրա գոյականացված չեզոք սեռի) հարաբերակցությունը: Երկրորդ՝ «ներհակ» տարբերակում բառի երկու մասն էլ նախածանցներ են՝ «ներ»-ը ընդ-ի օրինաչափ համարժեք, «հակ»-ն էլ՝ որպես նախածանց մեկնաբանված ἀντι-ի օրինաչափ համարժեք, չնայած տվյալ դեպքում ἀντι-ն բառարմատ է: Ստացվել է երկու նախածանցից բաղկացած բառ: «ներհական» տարբերակում «ական» ածականակերտ վերջածանցը կարծես ավելի ավարտուն, ձևավորված տեսք է հաղորդում բառին:

2) Հետևյալ երկու օրինակումներում՝

«զմիմեանս կալութեամբ» (Փիլ. ել. 2.90) – *συνεχεία,

«վասն զմիմեանս ունելոյ և անընդհատ... պարգևի» (Փիլ. ել. 2.72) – *συνέχουσ,

Փիլոնի հունարեն սկզբնագիրը չի պահպանվել, և համարժեքները մենք վերականգնել ենք: Հունարեն վերականգնված բառերը սովորաբար պատճենվել են՝

«չարունակութիւն» (Փիլ. իմաստ. 81, Դ. Վերլուծ. 118) – συνέχεια (Ph. Abr. 188.5), «չարունակեմ» (Տիմ. 210) – συνέχω, «չարունակ» (Ար. Ստոր. 118, Դ. Սահմ. 130.11, 18, 33, 132.13) – συνεχής (Arist. Cat. 4b23, D. Prol. 61.3, 35, 62.31):

Խնդրո առարկա օրինակներում σὺν նախածանցը թարգմանված է է ո՛չ «չար» կամ «բաղ», «հոմ», «յար», «պար» նախածանցներից մեկով, ո՛չ «ի միասին» կամ «միանգամայն» մակբայով, ո՛չ էլ «կից» ետադիր արմատով, այլ փոխադարձ դերանվան հայցական հոլովով՝ «զմիմեանս»: Որպես ἐχ (ἐχω «ունենալ») արմատի համարժեք են հանդես գալիս «ունիմ», «կալայ» բայի տարբեր հիմքերից կազմված վերացական գոյականը («կալութիւն») և անորոշ դերբայի սեռական հոլով թվացող «ունելոյ» ձևը, որը սակայն ըստ իմաստի պետք է անցյալ դերբայի՝ անկանոն «*ունեալ» ձևի սեռական հոլով լինի: Բացի այդ «զմիմեանս ունելոյ» նկարագրական թարգմանությունը լրացված է «անընդհատ» հոմանիշով¹⁶¹, և հաստատում է մեր վերականգնման արդարացի լինելը:

3) Բացառիկ դեպք է Դավթի՝ Պորփյուրի մեկնության մեջ մի ողջ բառակապակցության թարգմանությունը մեկ բառով՝

«առինչունակ» (Դ. Պորփ. 60.26, 80.20, Զեն. 4.2.15, 4.3.5) – τὸ πρὸς τί (D. Porph. 126.19, 143.10):

Ուրիշ թարգմանություններում τὸ πρὸς τι (Ph. Abr. 51.5, Arist. Cat. 1b27՝ «հարաբերություն») օրինաչափորեն թարգմանված է «առ ինչ» (Փիլ. իմաստ. 46, Ար. Ստոր. 109, Սահմանք 382), սակայն «ունակ» տարրն անհասկանալի է: Այն բացատրվում է Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» թարգմանության ազդեցությամբ, որտեղ «առինչունակ» (Թրակ. 18) բառը կերտվել է որպես πρὸς τί ἔχον (Thrax 33.1) արտահայտության համարժեք և նշանակում է «հարաբերվող»:

4) Բառակապակցությունը մեկ բառով է թարգմանված նաև հետևյալ օրինակներում՝

«յարտունողացն դիր... մասանց» (Ար. Ստոր. 120) – τὸ ἐκ θέσιν ἐχόντων... μορίων (Arist. Cat. 5a16),

«արտադիրունողացն... մասանց» (Ար. Ստոր. 120) – τὸ ἐκ θέσιν ἐχόντων... μορίων (Arist. Cat. 5a15),

«յարտադիրունողացն... մասանց» (Ար. Ստոր. 120) – τὰ ἐξ ἐχόντων θέσιν... μορίων (Arist. Cat. 5a37),

«ներբողենիւք» (Թեոն 130) – ἐν κώμῳ (Theon 9.109.28):

Առաջին օրինակում հունարեն գոյականացված դերբայի նախդիրը թարգմանված է նախածանցով, և ենթակայական դերբային, ինչպես և հունարեն

¹⁶¹ Սա սովորական երևույթ էր Փիլոնի թարգմանություններում, տե՛ս Հավելված 2, նաև ՄՌԻ-ՐԱԴՅԱՆ 1997¹, MURADYAN 1996¹:

նում, հետևում է ուղիղ խնդիր (սա էլ շարահյուսական հունաբանություն է, տե՛ս Գ 3ա): Երկրորդ և երրորդ օրինակներում ուղիղ խնդիրը ներմուծված է նույն նախածանցի (նախածանցը միացած է «ա» հոդակապով, հետևաբար բացառվում է այն որպես նախդիր մեկնաբանելու հնարավորությունը) և դերբայական ձևի միջև՝ կազմելով բարդ բառ, ընդ որում այսպիսի դասավորությունն արդարացված է միայն երկրորդ օրինակում, որի հունարեն նախօրինակում էլ համապատասխան բառը միջադաս է: Առաջին և երրորդ օրինակներում «արտ» հունաբան նախածանցի իմաստն ուժեղացված է «ի» («յ») դասական նախդրով:

Նույն տեքստում, սակայն, նույն բառակապակցությունը թարգմանված ենք գտնում ավելի սովորական եղանակով.

«այնք որ դիրն ունին... է որք ոչ յանցան է որ դիրն ունին» (Ար. Ստոր. 119) – τὸ μὲν ἐκ θέσιν ἐχόντων... τὸ δὲ οὐκ ἐξ ἐχόντων θέσιν (Arist. Cat. 4b21-22):

Վերջին օրինակը քաղած է «ներբողեան» – ἐγκώμιον բառի ծագման բացատրությունից. այն կոչվում է այդպես, քանի որ հներն աստվածներին բարեբանում էին տոնական շքերթներում: Այդպես է մեկնաբանում Թեոնը. սա բացատրում է հունարեն բառը, բայց չի բացատրում հայերենը: Բանն այն է, որ «ներբողեան» բառն ավելի վաղ է ստեղծվել՝ «Պիտոյից գրքում», որտեղ ասվում է, որ այն այդպես է կոչվում «յաղագս հնոյն ի գեղս գովութիւնս առնելոյ. գեղս կոչէին զներբափողոցս» (Պիտ. 95.3-4), քանի որ Ափթոնիոսը, ի տարբերություն Թեոնի, կապում է այն ոչ թե κῶμος «տոնական շքերթ», այլ κῶμη «գյուղ» (Aphth. 86) բառի հետ: Փաստորեն «ներբողեան» բառը կապվում է գյուղի հետ նույնացվող «փող-ոց» բառի հետ («փող»/«բող» հնչյունափոխությամբ): Թեոնի մոտ այս պատրաստի բառը շքերթի հետ կապող բացատրության մեջ ստիպել է, որպեսզի նախդրավոր ἐν κῶμῳ «շքերթում» կապակցությունը թարգմանվի նախածանցավոր «ներբողեանիւք» («ներբողյաններով») գործիականով:

1.4 ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Իհարկե, հունաբան թարգմանություններում էլ բազմաթիվ դեպքեր կան, որոնցում նախածանցավոր բառը թարգմանվել է դասական եղանակով՝ նախածանցը որևէ կերպ չի արտացոլվել: Բերենք միայն մի քանի օրինակ.

«բաժանեմ» (Պիտ. 95.15) – διαίρέω (Aphth. 87), «բաժանումն» (Դ. Պորփ. 2.8) – διαίρεσις (D. Porph. 80.13),

«եղծումն» (Պիտ. 60.1, 2, 11, Թեոն 14) – ἀνασκευή (Aphth. 72, Theon 1. 64.31),

«զանազանութիւն» (Պիտ. 44.15, 221.9, Դ. Պորփ. 14.17) – διαφορά (Aphth. 68, 109, D. Porph. 87.12),

«ընթեռնում» (Դ. Պորփ. 4.8) – ἀναγνώσκω (D. Porph. 81.14),

«ծածկիմ» (Պիտ. 30) – ἀποκρύπτω (Aphth. 63),
 «ձեռնարկութիւն» (Դ. Պորփ. 50.25) – ἐπιχείρημα (D. Porph. 117.9),
 «յորդորեմ» (Պիտ. 44.3) – προτρέπω (Aphth. 67),
 «պատմական» (Պիտ. 201.2) – περιηγηματικός (Aphth. 103),
 «փոփոխումն» (Դ. Պորփ. 164.20) – μεταβολή (D. Porph. 200.10):
 Նախածանցավոր բառը թարգմանվել է հարաբերական նախադասությամբ՝
 «որ լինելոցն է» (Դ. Պորփ. 52.1) – μεταγενέστερος (D. Porph. 117.15):

2 ԲԱՐԴԻ ԲԱՌԵՐԻ ՊԱՏՃԵՆՈՒՄ

Պատճենված բառերի մեջ զգալի թիվ են կազմում բարդ բառերը, իսկ դասական թարգմանություններում դրանք գերակշռող են: Եվ դա տարօրինակ է, քանի որ այս դեպքում հունարենի ազդեցությունն արտահայտվել է հայերենին հատուկ բառակազմական կաղապարների ակտիվացման մեջ: Լինելով հայերենի համար նորմալ նորաբանություններ՝ այդպիսի բառերն այնուամենայնիվ կերտվել են հունարեն բառերի հետևությունով¹⁶²: Այդ են վկայում, օրինակ, այն դեպքերը, երբ հունաբան թարգմանություններում պատճենված բարդ բառերի փոխարեն դասական թարգմանությունները համապատասխան տեղերում ունեն հունարեն բառերի կառուցվածքը՝ չարտացոլող բառեր, ինչպես՝ «բարեբանեալ» (Տիմ. 292) ≠ «օրհնեալ» (Ղկ. Ա 42) – ἐὺλογημένη (Lk. 1:42) և այլն: Իսկ թե որտե՞ղ է այն սահմանը, որից այն կողմ կարող ենք հայտարարել, թե տվյալ հայերենի բառակազմական նորմերին համապատասխանող բառը հունաբանություն է, հարցին միշտ է, որ հնարավոր է միանշանակ պատասխանել: Այսպես, եթե առաջին գրավոր հուշարձանում՝ Աստվածաշնչում ունենք «եղբայրասպան» – ἀδελφόκτονος գուգահեռը, այստեղ արձանագրված է նոր բառի ստեղծման պահը, սակայն և չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ թարգմանիչը պարզապես կարող էր գտնել լեզվում գոյություն ունեցող պատրաստի համարժեքը: Նույն տարակուսանքն է առաջանում այնպիսի բառերի պարագայում, ինչպիսիք են, օրինակ, «մարդասէր», «չարասէր», «բարեխրատ», «երկրագործ» և այլն: Սակայն կրկին հիշենք Բենվենիստի այն դիտարկումը, որ բարդ բառերն Աստվածաշնչում համապատասխանում են հունարեն ոչ միայն բարդ, այլև նախածանցավոր, պարզ բառերի, ողջ բառակազմակցությունների: Այդ դեպքերում ակնհայտ է, որ որպես ոչ բարդ բառերի թարգմանություն հանդես եկող հայերեն բարդ

¹⁶² Հմմտ. BENVENISTE 1967, BENVENISTE 1968. պատճենված բառերը Բենվենիստը բնութագրել է որպես «տեխնիկական տերմիններ» («ողջակէզ» – δόκαστος, «քարկոծ» – λιθόβολος, «նորատունկ» – νεόφυτος, «եղբայրասպան» – ἀδελφόκτονος) և «բանաստեղծական» բառեր («մահաբեր» – θανατηφόρος, «ամենակալ» – παντοκράτωρ): Հմմտ. նաև Եվսեբիոսի «Փրոնիկոնում» «երկթևեան» – διπτέρος (Եւս. քր. 22), «չորեքթևեան» – τετραπτερος (Եւս. քր. 22), «երկզիմի» – διπρόσωπος (Եւս. քր. 22), «չորեքմարմին» – τετρασώματος (Եւս. քր. 23), «շնագլուխ» – κυνοκέφαλος (Եւս. քր. 22):

բառերը լեզվում գոյություն են ունեցել, իսկ եթե հունարեն բարդ բառի դիմաց ունենք բառակազմական նույնպիսի բաղադրիչներով¹⁶³ բարդ բառ, որքան էլ այն բնական հնչի հայերենի համար, բացառված չէ, որ այն նորաբանություն է:

Բարդ բառերի հունաբան լինել-չլինելու հետ կապված տարակուսանք կարող է ծագել հունարեն բառի կառուցվածքը ճշգրիտ արտացոլող պատճենումների դեպքում, որոնք հունեն տերմինաբանական արժեք¹⁶⁴: Այս տեսակը հնագույն սլավոնական թարգմանություններում Ջերնիչևան բնորոշել է որպես «բառակազմական պատճենումներ» (словообразовательные кальки): Սակայն կան բառեր, որոնք արտաքուստ թվում են բառակազմական պատճենումներ, սակայն դրանց իմաստն առանց հունարեն սկզբնաղբին դիմելու անհասկանալի է մնում, քանի որ նոր բառի բաղադրիչներից մեկը հունարեն բառի ազդեցությամբ օժտվում է նոր իմաստային երանգով: Նա առաջարկվում է կոչել դրանք «իմաստային-բառակազմական պատճենումներ» (семантически-словообразовательные кальки)¹⁶⁵:

Նմանօրինակ «իմաստային-բառակազմական» պատճենում կարող ենք համարել այն բարդ նորաբանությունները, որոնց այս կամ այն բաղադրիչը, կամ էլ բառն ամբողջովին, հունարեն բառի հետևությամբ նոր իմաստ (ոչ անպայմանորեն տերմինաբանական) է ձեռք բերել: Նմանօրինակ բառերի յուրահատուկ իմաստները նշում ենք փակագծերում.

«ազգաբանեմ» (Բրս. ընչեղ. 2.152) – γενεαλογέω (PG 31.285[89])՝ «ծագումը պարզել»),

«ամբոխաբեր» (Նիւս. Կ. Մ. 217.6) – λεωφόρος (PG 46.745՝ «մայրուղի», բառացի՝ «ժողովուրդ տեղափոխող»),

«ամենաբազում» (Բրս. ընչեղ. 2.152, թէ չէ պատճառ 5.444) – παμπληθής (PG 31.285[89]), πάνδημος (PG 31.337),

«ամենաբարի» (Փիլ. տես. 31) – πάγκαλος (Ph. Cont. 88.5),

«ամենասուրբ» (Փիլ. տես. 15, 29) – πανίερος, παναγέστατος (Ph. Cont. 36.1, 81.3),

¹⁶³ Խոսում ենք միայն բառակազմական բաղադրիչների համապատասխանության մասին, ի տարբերություն ձևաբանականների, որոնք կարող են և չհամընկնել (հմտ. Էլոյան 1963, 56-65. «Բառակազմական և ձևաբանական մասնիկների տարբերական հարցի մասին» գլուխը): Օրինակ, ի տարբերություն հայերենի, հունարենում ոչ մի գոյական կամ ածական պարզ կամ արմատական բառ չէ, քանի որ դրանց ուղիղ ձևերն էլ հոլովական վերջավորություն ունեն: Հետևաբար զարմանալի չէ, որ վերը նշված օրինակում (Ա 1.3) ἐναντίον ածականի գոյականաբար կիրառված չեզոք սեռը (որը համապատասխան εἰς πάντι մակբայից տարբերվում է միայն հոլովական վերջավորության առկայությամբ) թարգմանելիս՝ հայ թարգմանիչը «ընդդէմ» մակբային ավելացրել է «ակ» բառակազմական գոյականակերտ վերջածանցը:

¹⁶⁴ Որն ակնհայտ է անպիսի քերականական տերմինների դեպքում, ինչպես «բերանուն», «երկամանակ», «կիսաձայն», «հայրանուն», և այլն, տե՛ս ՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. 1971, 330 («խական բարդություններ»):

¹⁶⁵ ЧЕРНЫШЕВА 1984. որպես օրինակ նա բերում է образонисецъ – ιστοριογράφος, որ հիմնված է ἱστορία բառի մի երկրորդական՝ «նկար», «պատկեր» իմաստի, իսկ лежахъ – κῆτος («կես ձուկ») κείμαι «պառկած լինել» բառի սխալ ստուգաբանության վրա՝ անդ, 126-127:

«աննմանասեռ» (*Դ. Պորփ. 162.11*) – άνομοιογενής (D. Porph. 198.16՝ «այլ սեռի պատկանող»),

«ամենատաւն» (*Փիլ. տես. 15*) – πανέορτος (Ph. Cont. 36.1՝ «մեծ տոնակատարութիւն»),

«այլաբանութիւն» (*Փիլ. տես. 28*) – άλληγορία (Ph. Cont. 78.2՝ «այլ կերպ խոսել»),

«այլաբուն» (*Կիւրղ. պրպ. 103*) – έτεροφύης (PG 75.1377՝ «բնությամբ տարբերվող»),

«անբարեփորձութիւն» (*Փիլ. տես. 20, Իրեն. Հերձ. 226*) – άπειροκαλία (Ph. Cont. 53.1, Ir. Her. V.24՝ «գեղեցիկի անգիտութիւն», «գռեհկութիւն»), «անբարեփորձ» (*Բրս. ծն. 419-20*) – άπειρόκαλος (PG 31.1460.3),

«աշխատասէր» (*Բրս. ընչեղ. 2.152, առ Նաղ. 5.336*) – φιλόπονος (PG 31.285[90], 32.288),

«աշխարհագործութիւն» (*Փիլ. ժ բան 248*) – κοσμοποιία (Ph. Decal. 97.2՝ «աշխարհի ստեղծում»),

«աստուածազերծ» (*Փիլ. նիւ. 70*) – θεοσύλης (Ph. Prov. 2.39՝ «սրբապիղծ», բառացի՝ «աստված կողոպտող»),

«աստուածածնութիւն» (*Փիլ. բազն. 219, Պղատ. Օր. 350*) – θεογονία (Ph. Spec. 1.334, Pl. Leg. 886c3՝ «աստվածների ծննդաբանութիւն»),

«աստուածամարտ» (*Նիւս. Կ. Մ. 861, Բրս. 40 վկայք 4.394*) – θεόμαχος (PG 46.741, 31.513),

«աստուածաշունչ (գիրք)» (*Աթ. 143, Կիւրղ. պրպ. 110*) – θεόπνευσται γραφαί (PG 28.10[448], 75.1385՝ «աստծուց ներշնչված»),

«աստուածապաշտ» (*Նիւս. Կ. Մ. 190*) – θεοσεβής (PG 46.850),

«աստուածասէր» (*Փիլ. տես. 25*) – θεοφιλής (Ph. Cont. 68.6),

«աստուածաստեղծեմ» (*Փիլ. բազն. 219*), «աստուածաստեղծեալ» (*Բրս. Հայեաց 6.119*) – θεοπλαστέω (Ph. Spec. 1.344՝ «աստվածացնել»), θεόπλαστος (Bas. Attende 33.6),

«արձանագրութիւն» (*Նաղ. ճ.4.20*) – στηλογραφία (PG 35.549.12՝ «սաղիկի վրա մակագրութիւն»),

«բազմադէմ» (*Դիոն. երկ. քհ. 3.21*) – πολυπρόσωπος (Dion. cael. hier. 2.1),

«բազմախտութիւն» (*Նեմես. 20*) – πολυπάθεια (Nemes. 1.292՝ «բազում ցավեր կրել»), «բազմախտ» (*Դիոն. եկեղ. քհ.*) – πολυπαθής (Dion. eccl. hier. 86.1՝ «բազում կրքերի ենթակա»),

«բազմածին» (*Նիւս. Կ. Մ. 214.20*) – πολύτοκος (PG 46.741),

«բազմապատիւն» (*Բրս. ընչեղ. 1.151*) – πολυτίμητα (PG 31.281[81]),

«բազմաձև» (*Փիլ. տես. 18*) – πολυειδής (Ph. Cont. 49.6),

«բազմամեայ» (*Փիլ. տես. 25*) – πολυετής (Ph. Cont. 67.2),

«բազմատեսակ» (*Նաղ. ճ.2.44*), «բազմատեսիլ» (*Նիւս. Կ. Մ. կազմ. 59*) – πολυειδής (PG 35.452, 44.137.13),

«բազմիշխանութիւն» (*Պիտ. 44.8*) – πολυκοιρανίη (Aphth. 67՝ «շատերի իշխանութիւն»),

«բազմոտանի» (*Դիոն. երկ. քհ. 3.20*) – πολύπους (Dion. cael. hier. 2.1),
 «բազմօրեայ» (*Փիլ. Ժ բան 263*) – πολυήμερος (Ph. Decal. 161.2),
 «բանազիւտ լինել» (*Փիլ. նխ. բ 82*) – ἐνρεσιλογέω (Ph. Prov. 1.1՝ «Հնարամիտ փաստարկներ հորինել»),
 «բարառնութիւն» (*Պիտ. 184.2, 3, 4, 185.5, Փիլ. լին. 2.112, 118, ել. 2.76, 83*) – ἡθοποιία (Aphth. 101՝ «բնավորութեան ընդօրինակում»՝ ճարտասանական վարժութեան տեսակ է), «բարառնական» (*Զեն. 2.2.3*),
 «բարեղէմ» (*Բրս. ընչեղ. 7.161*) – εὐπρόσωπος (PG 31.297[34]),
 «բարեզարդ» (*Նիւս. Կ. Մ. 192*) – εὐσχήμων (PG 46.857),
 «բարեժառանգութիւն» (*Նիւս. Կ. Մ. 188*) – εὐκληρία (PG 46.859),
 «բարեկեցութիւն» (*Բրս. բարկ. 5.185, ոպտ. 1.316, Փիլ. տես. 18*) – εὐστάθεια (PG 31.364[(17)], εὐσταθές (Bas. epist. 260.1.2), εὐωχία (Ph. Cont. 49.1),
 «բարեկեցիկ» (*Բրս. յուղիտ. 6.371*) – εὐημερῶν (PG 31.249),
 «բարեհամբաւ լեր» (*Թեոն 18*) – εὐφήμει (Theon 2.66.6՝ «խոսափիր անպատշաճ խոսքերից», բառացի՝ «բարի խոսքեր ասա»),
 «բարձրալիզ լինել» (*Փիլ. նխ. բ 57-58*) – ὑψαυχενεῖν (Ph. Prov. 2.14՝ «ամբարտավան լինել»),
 «բարօրութիւն» (*Փիլ. տես. 31-32*) – εὐημερία (Ph. Cont. 27.3՝ «բարեբախտութիւն»),
 «բիւրամարդ» (*Նիւս. Կ. Մ. 196*) – μυριάνθρωπος (PG 46.861),
 «բնախօսութիւն» (*Փիլ. ալլաբ. 125*) – φυσιολογία (Ph. LA 1.60՝ «բնական երևույթների ուսումնասիրութիւն»),
 «զազանակերպութիւն» (*Դիոն. երկ. քհ. 3.22*) – θηριομορφία (Dion. cael. hier. 2.1),
 «զնդաձև» (*Պիտ. 221.15*) – σφαιροειδής (Aphth. 108),
 «դիմառնութիւն» (*Պիտ. 184.10, Թեոն 122-128*) – προσωποποιία (Aphth. 101, Theon 8՝ «գործող անձանց անունից ճառեր հորինելը»՝ ճարտասանական «բարառնութիւն» վարժութեան ենթատեսակ է),
 «դիւրադարձ» (*Բրս. հայեաց 8.123*) – εὐστροφος (Bas. Attende 37.6),
 «դիւրակոչելի» (*Բրս. բարկ. 5.187*) – εὐανάκλητος (PG 31.365[24]),
 «դիւրալուզ» (*Թեոն 14*) – εὐμνημόνευτος (Theon 1.64.30),
 «դիւրաշարժ» (*Ար. առաք. 547, Զեն. 5.1.3*) – εὐκίνητος (Arist. VV 1250a18),
 «անձևութիւն» (Բրս. արբեց. 8.108, Փիլ. այլաբ. 151) – ἀσχημοσύνη (PG 31.464, Ph. LA 2.27),
 «անմարմին» (Պորփ. 133, Դ. Պորփ. 40.27, Զեն.1.1.2, 1.5.4, 4.2.4) – ἀσώματος (Porph. 1.11, D. Porph. 111.3),
 «անյօղ» (Դ. Պորփ. 8.27) – ἄναρθρος (D. Porph. 83.32),
 «աննշանական» (Դ. Պորփ. 68.7) – ἄσημος (D. Porph. 133.12),
 «աննշական» (Դ. Պորփ. 72.25), «անշունչ» (Դ. Պորփ. 34.31) – ἄψυχος (D. Porph. 136.20, 186.19),
 «անորակ» (Փիլ. այլաբ. 168, բազն. 213, Դ. Պորփ. 178.26) – ἄποιος (Ph. LA 2.80, Spec. 1.328, D. Porph. 205.34),
 «անորիշ» (Դ. Պորփ. 10.10), «անորոշ» (Դ. Պորփ. 102.2) – ἄοριστος (D. Porph. 84.22, 162.27):

6 ԻՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐ

Եթե թարգմանվող բառի որևէ փոխաբերական կամ երկրորդային իմաստ հաղորդվում է թարգմանող լեզվի՝ այդ բառի ուղիղ իմաստին համապատասխանող բառին, գործ ունենք իմաստային պատճենման հետ: Փաստորեն լեզվում գոյություն ունեցող բառն օժտվում է նոր իմաստով, հետևաբար նորաբանություն է ստեղծվում:

Իմաստային պատճենումներ հունարենից նկատվել են արդեն դասական թարգմանություններում: Է. Բենվենիստը մատնանշել է երեք այդպիսի բառ՝ «վիճակ» (բառացի՝ «բաժին ընկածը»), որը հունարեն κλήρος-ի ազդեցությամբ ստացել է «կղեր»¹⁹¹ իմաստը, և նրանից ածանցյալ «վիճակաւոր» ու «վիճակաւորութիւն» բառերը¹⁹², «մեհենակապուտ» (Գծ. ԺԹ 26), որը հունա-

¹⁹¹ «Կղեր» բառն էլ նույն κλήρος բառի փոխառությունն է:

¹⁹² Հմմտ. κληρικὸς բառի մեկ այլ համարժեքը՝ «ժառանգաւոր», «Երկրորդ առաքելական» կանոններում՝ ՀԱԿՈԲՅԱՆ 1964, 76.3, 77.10, 78.5, 79.7, 79.9, 79.13, 80.1, 80.8, 83.1, 89.4, 90.1, 90.9, 91.1, 91.5, 92.2, 92.8, 92.14, 95.1, 96.8 – LAUCHERT 1896, 1.16, 2.15, 2.27, 3.14, 3.15, 3.19, 3.22, 4.1, 4.27, 8.27, 9.12, 9.21, 10.1, 10.7, 10.18, 10.25, 11.1, 11.30, 12.25. այս բառն էլ իմաստային պատճենում է, չէ՞ որ κλήρος նշանակում է նաև «ժառանգություն»:

րեն ἱερόσυλος («սրբապիղծ») բառի տառացի թարգմանությունն է¹⁹³, «անասուն» («կենդանի»)։ Հունարեն ἄλογος նշանակում է ոչ թե «խոսելու ընդունակությունից զուրկ», այլ «բանականությունից զուրկ», սակայն λόγος-ն ունի և՛ «խոսք» և՛ «բանականություն» իմաստը, և ἄλογος-ը թարգմանողն ընկալել է բառի այդ առաջին իմաստը¹⁹⁴։ Նույն հունարեն բառի «անբան» թարգմանությունն էլ կարող էինք համարել իմաստային պատճենում, սակայն այս դեպքում իրավիճակն այլ է։ իմաստային պատճենման է ենթարկվել արդեն «բան» պարզ բառը, սկզբնապես «խոսք» նշանակությամբ, որը հունարեն λόγος-ի ազդեցությամբ ստացել է «բանականություն», ինչպես և աստվածաբանական ու փիլիսոփայական բոլոր հարակից իմաստները։ Հմմտ. «անասնոց անբանից» (Սաղմ. ԽԸ 13 – τοῖς κτήνεσιν τοῖς ἀνοήτοις) բառակապակցությունը։

Մյուս վաղ իմաստային պատճենումներից հիշատակության արժանի է «վկայ» (և նրանից ածանցված՝ «վկայեմ», «վկայութիւն», «վկայաբանութիւն», «նախավկայ» և այլն) բառը, որը հունարենի ազդեցությամբ ստացել է «մարտիրոս» իմաստը, «երէց», որի «ավագ» իմաստին πρεσβύτερος-ի ազդեցությամբ ավելացել է «քահանա» իմաստը¹⁹⁵, «ժողովրդական» – λαϊκός («աշխարհիկ» իմաստով՝ ի հակադրություն կղերականի)¹⁹⁶։

Մեկ իմաստային պատճենում ենք արձանագրել «Բարոյախաւս» ժողովածուի մեջ՝

«կարևորք» (Phys. 12.3, 13.3, 26.2) – τὰ ἀναγκαία («սեռական օրգաններ»)։

Հետևյալ բայերն ու բառակապակցությունները ևս հունարենի ազդեցությամբ օժտվել են լրացուցիչ իմաստային լիցքով։

«Լնում» բայը «լի առնել զթափուրն, լցուցանել» կոնկրետ իմաստից բացի, հունարեն πληρόω բայի ազդեցությամբ ստացել է նաև վերացական «լրացուցանել, կատարել» իմաստը՝ «լցեալ են աւուրք» (Ծնն. ԻԹ 21) – πεπληρώνεται γὰρ αἱ ἡμέραι μου (Gen. 29:21), «առ ի Լնուլ բանին Տեառն» (Բ Մնաց. ԼԶ 21) – τοῦ πληρωθῆναι λόγον κυρίου (2Para. 36:21), «լցցի որ ասացաւ ի Տեառնէ» (Մթ. Ա 22) – ἵνα πληρωθῇ τὸ ῥηθὲν ὑπὸ κυρίου (Mt. 1:22)։

«Դնեմ» բայը կոնկրետ «զետեղել, կացուցանել» իմաստի կողքին, հունարեն τίθημι բայի ազդեցությամբ ստացել է վերացական «կարգել, հաստատել» իմաստը՝ «օրէնք զոր եղ Մովսէս» (Բ Օր. Դ 44) – ὁ νόμος ὃν παρέθετο Μω-

¹⁹³ Հմմտ. ստորև նրա «սեղանակապուտ» համարժեքը «Պիտոյից գրքում» (Պիտ. 71.4), ինչպես նաև «սեղանակապուտ»՝ Թեոնի նախալրթություններում (Թեոն 112), նաև «տաճարակապուտ» (նույն տեղում), նաև «տաճարակապուտ» (Պղատ. Օր. 448) – ἱεροσύλος (Pl. Leg. 960b3)։

¹⁹⁴ BENVENISTE 1964, 36-37։

¹⁹⁵ Տե՛ս ՀԱԿՈՒՅԱՆ 1964, բազում վկայություններ, օրինակ՝ 75.6, 80.5, 96.3, 154.1, 187.1, 193.12, 205.9, 230.11, 256.10, 344.11 – LAUCHERT 1896, 1.2, 3.26, 12.20, 29.28, 36.20, 81.12, 43.14, 73.15, 56.19, 127.14։

¹⁹⁶ Տե՛ս ՀԱԿՈՒՅԱՆ 1964, 80.3, 87.6, 90.15, 91.3, 91.6, 92.6, 92.14, 96. 8 – LAUCHERT 1896, 3.24, 7.11, 9.28, 10.1, 10.6, 11.1, 12.26։

սոյ՛Տ (Deut. 4:44), «օրինադրիլ» (Բ Օր. Ժէ 10, եբր. Ը 6) – νομοθετέομαι (Deut. 17:10, Hebr. 8:6), «օրէնս դնել» (Բ Մկ. Գ 15) – νομοθετέω (2Ma 3:15):

«Պահեմ» բայը հետեւյալ հատվածում հանդես է եկել ոչ ուղիղ իմաստով, այլ փսլաստ բայի ազդեցութեամբ նշանակում է «հետեւել, ենթարկվել»՝ «պահեսջիբ զօրէնս զայս» (Եւբ. ԺԳ 10) – καὶ φυλάξεσθε τὸν νόμον (Ex. 13:10):

Հունարենում «բարձրացնել» (βασιάζω, ἀναφέρω, αἴρω) իմաստով բայերն ունենում են և փոխաբերական՝ «վերացնել, ոչնչացնել» իմաստը. նրանց հետեւութեամբ այդպիսի իմաստով են օգտվել «բառնամ», «վերացուցանեմ»¹⁹⁷ բայերը՝ «բարձրութեւ զյիշատակս նորա յերկրէ» (Առակ. Ա 12) – ἄρωμεν τὴν μνήμην ἐκ γῆς (Pr. 1:12), «բարձեր զանտառն յերկրէ Յուդայ» (Բ Մնաց. ԺԹ 3) – ἐξήρας τὰ ἄλση ἀπὸ τῆς γῆς Ιουδα (2Para 19:3), «զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ» (Մթ. Ը 17) – τὰς ἀσθενείας ἡμῶν ἔλαβεν καὶ τὰς νόσους ἐβάστασεν (Mt. 8:17), «զմեղս բազմաց վերացոյց» (Ես. ԾԳ 12) – ἀμαρτίας πολλῶν ἀνήνεγκεν (Is. 53:12):

«Առնեմ զկամս» նշանակում է «կամքը կատարել»՝ «արարից զամենայն զկամս քո» (Գ Թագ. Ե 22) – ποιήσω πᾶν θέλημά σου (3Reg. 5:22), «արասցես զկամս իմ» (Գ Թագ. Ե 23) – ποιήσεις τὸ θέλημά μου (3Reg. 5:23)¹⁹⁸:

Իմաստային պատճենումը՝ սովորական բառերը հատուկ տերմինաբանական իմաստով օգտելը, կարևոր դեր է խաղում տերմիններ ստեղծելու մեջ: Տերմիններ են դասական շրջանի վերը նշված իմաստային պատճենումներից՝ «բան», «վիճակ», «վկայ», «երէց» բառերը. սրանք ստացել են քրիստոնեական գաղափարախոսութեան և եկեղեցու կազմակերպութեան հետ կապված նոր հասկացութեաններ արտահայտող նոր իմաստներ: Իսկ վերջածանցավոր «անասուն», «ժառանգաւոր», և «ժողովրդական» («աշխարհական» իմաստով) կազմութեաններն իմաստային-բառակազմական պատճենման արդյունք են:

Հունարեն թարգմանութեաններում էլ մի շարք կարևոր տերմիններ ստեղծվել են իմաստային պատճենման եղանակով: Քերականական տերմինների բառակազմական տեսակների մեջ Ա. Մուրադյանն առանձնացրել է «պարզ կամ արմատական տերմինները... դասական հայերենում սովորական գործածութեան ունեցող բառեր, որոնք թարգմանչի կողմից իմաստի մասնագիտացման ենթարկվելով՝ կայունացել են որպես քերականական հասկացութեաններ»¹⁹⁹: Փաստորեն նրա թվարկած «անուն» (ὄνομα), «բայ» (ῥῆμα), «բարդ» (σύμθετος), «բուծ» (βαρύς), «գիր» (γράμμα), «զեմբ» (πρόσωπον),

¹⁹⁷ Որից էլ ծագում է ժամանակակից հայերեն «վերացնել» բայը:

¹⁹⁸ Հունարենից հին ռուսերեն թարգմանութեաններում իմաստային պատճենումներից բացի կոպիլենկոն առանձնացնում է «фразеологические кальки-гнезда» (Հմմտ. «լցեալ են աւուրք», «առ ի լնուլ բանին Տեառն», «լցցի որ ասացաւ ի Տեառնէ», նաև «բարձրութեւ զյիշատակս նորա յերկրէ», «բարձեր զանտառն յերկրէ Յուդայ», «զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ», «զմեղս բազմաց վերացոյց») և «индивидуальные фразеологические кальки» (Հմմտ. «օրէնս դնել», «պահեսջիբ զօրէնս զայս», «արասցես զկամս իմ»), տես КОПЫЛЕНКО 1972:

¹⁹⁹ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. 1971, 324:

«Թաւ» (δασύς, «Թաւ Հագագն» է՝ փաստորեն բառակցքի ձայնավորից առաջ հնչող *h* հնչյունի նշանը), «Կիրք» (πάθος), «Հեչտ» (ῥξύς), «պարզ» (ἀπλοῦς), «սեռ» (γένος), «վանգ» (συλλαβή), «տառ» (στοιχείον) և այլն, իմաստային պատճենման արդյունքում ստեղծված տերմիններ են:

«Պիտոյից գրքում» այս եղանակով կերտվել են ճարտասանական տերմիններ՝ «առակ» (Պիտ. 31.1, 44.12) – παραβολή (Aphth. 63, 68՝ «պէտք» և «խրատ» ճարտասանական վարժություններում գլուխներից մեկն է, որում կյանքի այլևայլ ոլորտներից օրինակներ են բերվում՝ քննարկվող ասույթը հաստատելու համար),

«դէմք» (Պիտ. 95.4, 124.4, 153, 201, Թեոն 116) – πρόσωπον (Aphth. 86, 93, 98, 103, Theon 7.118.8՝ «անձ»),

«իւր» (Պիտ. 95.4, 124.4, 153, 201, Թեոն 116) – πρᾶγμα (Aphth. 86, 93, 98, 103, Theon 7.118.9),

«խրատ» (Պիտ. 67, Թեոն 34) – γνώμη (Aphth. 67, Theon 3. 96.22՝ ճարտասանական վարժության տեսակ է),

«Հասարակ տեղի» (Պիտ. 71) – κοινὸς τόπος (Aphth. 80՝ ճարտասանական վարժության տեսակ է),

«պարսաւ» (Պիտ. 124, Թեոն 130, Պղատ. Օր. 278) – ψόγος (Aphth. 93, Theon 8. 109.19, Pl. Leg. 829c3՝ ճարտասանական վարժության տեսակ է),

«պէտք» (Պիտ. 30, Թեոն 34) – χρεία (Aphth. 62, Theon 3՝ ճարտասանական վարժության տեսակ է),

«սնունդ» (Պիտ. 95.12) – ἀνατροφή (Aphth. 87՝ «գաստիարակություն»):

Այդ մեթոդի օգնութեամբ ստեղծվել են և փիլիսոփայական տերմիններ, որոնցից կարևորագույններն են՝

«սեռ» (Ար. Ստոր. 110.17, Պորփ. 133, Դ. Պորփ. 8.4) – γένος (Arist. Cat. 2a17, Porph. 1.4, D. Porph. 83.12),

«յատուկ» (Պորփ. 133, Դ. Պորփ. 8.4, 26.36) – ἴδιον (Porph. 1.5, D. Porph. 83.13, 97.1՝ «առանձնահատկություն»),

«բոլոր» (Պորփ. 140, Դ. Պորփ. 6.22, 110.19) – ὅλος (Porph. 8.1, D. Porph. 82.27, 172.5),

«Հանուր» (Դ. Պորփ. 154.16, Դ. Ստոր. 203) – καθόλου (D. Porph. 195.1, D. Cat. 113.20), հմտ. «զըստբոլորէ» (Թեոն 34) – τὸ καθόλου (Theon 3. 96.27), «ընթանուր» (Թեոն 48) – καθόλου (Theon 3. 102.30),

«Հնար» (Դ. Պորփ. 140.6, Դ. Ստոր. 205) – μέθοδος (D. Porph. 188.16, D. Cat. 115.21՝ «մեթոդ»),

«սահման» (Պորփ. 138, Դ. Պորփ. 18.35, 28.3) – ὅρισμός (Porph. 1.4, D. Porph. 89.26, 97.2՝ «սահմանում»):

Մատնանշենք նաև մի շարք այլ տերմինաբանական արժեք չունեցող իմաստային պատճենումներ.

«ախտանամ» (Ոսկ. Թեոդ. 21.33, Նիւս. Կ. Մ. 77, Նազ. ճ.2.6, Բրս. մախ. 5.200, Պղատ. Սոկր. 37, 44) – πάσχω (Chrys. Theod. 4.19, PG 46.553, 35.413.7, 31.381, Plat. Apol. 17a1, 22a2՝ «կրել»),

«անապատացեալ ի գործոց բարեաց» (Բրս. Հց. 9[24]) – τὴν ἐρημίαν τῶν ἀγαθῶν ἔργων (PG 31.892[2]), «անապատ սիրելոյ, ամայի յօգնականաց» (Բրս. ընչեղ. 6.160) – ἔρημος φίλων, ἔρημος βοηθῶν (PG 31.296[24]), «անապատ մանկանց եմք» (Պղատ. Օր. 18) – ἐρημία τῶν νέων (Pl. Leg. 635a3), «անապատ»՝ «ամայի» նշանակութեամբ,

«առողջութեամբ» (Առաք. Ը 77.12) – ὑγιῶς (Ap. IX.2.6՝ «ճիշտ»),

«արարած (Հոմերոսի)» (Թեոն 24) – ποίησις (Theon 2.68.22՝ «պոեզիա»),

«բնաւորեցայ» + անորոշ դերբայ (Բրս. Հց. 42[104], սղ. Ա 2.206, Փիլ. իմաստ. 67, Պորփ. 144, Դ. Պորփ. 156.31, Թեոն 140) – πέφυκα + infinitivus (PG 31.908[5], 29.213, Ph. Abr. 132.1, Porph. 11.19, D. Porph. 196.18, Theon 10.113.30՝ «ստվորութիւն ունեմ»),

«դժնեայ»՝ «Հմուտ» իմաստով, «ճարտասանի կամ բանագրի դժնէի» (Բրս. գորդ. 1.407) – ῥήτορος ἢ λογογράφου δεινοῦ (PG 31.489), «դժնդակութեան ճարտարութեան բանիւք» (Փիլ. տես. 28) – ἐπὶ δεινότητι λόγων (Ph. Cont. 75.8), «դժնդակագոյն ոք ասել» (Փիլ. տես. 5) – δεινότατος εἶπεῖν (Ph. Cont. 1.7),

«էապէս» (Փիլ. տես. 12, Հերմ. 299.7) – ὅντως (Ph. Cont. 27.3՝ «իսկապես»),

«ունական (Չերմութիւն)» (Դ. Պորփ. 180.17) – ἐκτικός (πυρετός) (D. Porph. 206.24). «ստուգաբանական» թարգմանութիւնն է (արտահայտված է կապը ἔξις – «ունակութիւն» բառի հետ), սակայն նշված հատվածում հունարեն բառն ունի յուրահատուկ իմաստ՝ «քայքայիչ» (խոսքը տենդի մասին է),

«պատմեմ» (Դ. Պորփ. 170.6) – ἐξηγέομαι (D. Porph. 202.14), «պատմութիւն» (Դ. Պորփ. 26. 3) – ἐξηγησις (D. Porph. 95.8), «պատմող» (Դ. Պորփ. 2.5, Դ. Ստոր. 215) – ἐξηγήτης (D. Porph. 80.6, D. Cat. 122.25). Ի թիվս այլ իմաստների, ἐξηγέομαι նշանակում է «մեկնաբանել» և «պատմել». նշված հատվածներում առկա է «մեկնաբանել» իմաստը, իսկ «պատմել» թարգմանությունը իմաստային պատճենման արդյունք է: Սակայն հանդիպում է նաև «մեկնող» (Դ. Ստոր. 215) – ἐξηγήτης (D. Cat. 121.23) զուգահեռը: Իսկ «մեկնիչ և պատմող» (Դ. Պորփ. 215) – ἐξηγήτης (D. Cat. 122.25), «պատմէ և մեկնէ» (Դ. Ստոր. 215) – ἐξηγῆται (D. Cat. 122.28) զուգահեռներում ճիշտ թարգմանությունը զուգակցվում է իմաստային պատճենման հետ,

«ստեղծիչ» (Փիլ. նխ. 58) – πλαστής (Ph. Prov. 2.15՝ «քանդակագործ»),

«տէրն եղբայր բոլորիցս հանդիպի»՝ «է» իմաստով (Աթ. 151) – πάντων ἀδελφὸς τυγχάνει ὁ Κύριος (PG 28.16[456])²⁰⁰,

«յարժանեացն» (Պիտ. 33) – τῶν δεόντων (Nik. 279՝ «անհրաժեշտ բաներից»),

«զսիրելիս» (Պիտ. 33) – τοὺς φίλους (Lib. 63՝ «բարեկամներին»),

«տիրապէս» (Բրս. Հց. 44[111], Դ. Ստոր. 230, Դ. Վերլուծ. 126, Եւտիք. 25-26.18) – κυρίως (PG 31.912[61], D. Cat. 139.10՝ «իսկապես»), «տիրաբար» (Դ. Ստոր. 254) – κυρίως (D. Cat. 157.5),

²⁰⁰ Հմմտ. ՆԲՀԼ-ում «հանդիպիմ» բայի վերջին իմաստը՝ «ըստ յն. ոճոյ. τυγχάνω, sum, գոյ, ել, լինել, գտանիլ»:

«քերթողք ծաղուց» (*Փիլ. տես. 22*) – ποιηταὶ γελοίων (*Ph. Cont. 58.4* բառն այստեղ կիրառված է նախնական՝ «ստեղծող, արարող» իմաստով, իսկ թարգմանիչն արտացոլել է նրա սովորաբար հանդիպող «բանաստեղծ» իմաստը), «քերթող աստուածոց» (*Պղատ. եւթ. 12*) – ποιητῆς θεῶν (*Plat. Euthph. 3b2*),

«որ յուսումնականին դեգերեալ է» (*Փիլ. Ժ բան 230*) – τοῖς περὶ τὰ μαθήματα διατρίβουσι (*Ph. Decal. 29.3*), «որ յուսումնականին դեգերին» (*Փիլ. Ժ բան 250*) – οἱ περὶ τὰ μαθήματα διατρίψαντες (*Ph. Decal. 102.2*), «ի դեգերանս կրթութեան» (*Թեոն 172*) – *ἐν διατριβῇ ἀσκήσεως, «յաղաքս քաղաքավարութեան և օրինաց դեգերմունս» (*Պղատ. Օր. 2*) – περί τε πολιτείας... καὶ νόμων τὴν διατριβήν (*Pl. Leg. 625a6-7*). «դեգերիմ» բայը՝ διατρίβω-ի հետեւությամբ կիրառվել է «ժամանակ անցկացնել, զբաղվել» իմաստով,

«մի վարդապետաւ վարեսցիս»՝ «սովորել ուսուցչի մոտ» իմաստով (*Բրս. բարկ. 3.180*) – μὴ διδασκάλῳ χρήσῃ (*PG 31.357[3]*), «բարեկամաւ վարեցեալ»՝ «չփվել, մտերիմ լինել» իմաստով (*Նազ. առ Նիւս. 232*) – φίλῳ χρώμενος (*PG 35.96*), «խորհրդակցաւ վարեցեալ» (*Նազ. ի բաս. 207*) – συμβούλῳ χρώμενος (*Naz. in Bas. 68.3.6*)²⁰¹, «վարիլ խօսիւք» (*Թեոն 30*) – χρῆσθαι διαλέκτῳ (*Theon 2.71.24*), «վարի որպէս իւրով մարմնով յորում են» (*Կիւրղ. պրպ. 104*) – χρῆται δὲ, ὥσπερ ἰδίῳ σώματι τῷ ἐν ᾧ ἐστι (*PG 75.1377*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

Փիլոնի և Տիմոթեոս Կուզի աստվածաշնչային մեջբերումների մեջ հունարենն այս կամ այն բառի կամ արտահայտության համարժեքների Տիմոթեոսի և Փիլոնի թարգմանությունների տարբերակները կարող են որակվել որպես իմաստային պատճենում.

«ախտակրեալ» (*Տիմ. 197.13*) ≠ «չարչարելն» (*Ա Պետ. Դ 1*) – πεποιθότος (*1Pet. 4:1*),

«պարապեցին ունայնս» (*Տիմ. 141.5-6*) ≠ «խորհեցան ի սնոտիս» (*Սաղմ. Բ 1*) – ἐμελέτησαν κενά (*Ps. 2:1*),

«որքան» (*Տիմ. 294*) ≠ «զոր ինչ», «որ ինչ» (*Մկ. Ե 19, 20*) – ὅσα (*Mk. 5:19, 20*),

«զծաւորութիւն» (*Տիմ. 308*) ≠ «նկարագիր» (*Եբր. Ա 3*) – χαρακτήρ (*Hebr. 1:3*),

«յողուց» (*Տիմ. 293*) ≠ «այսոց» (*Ղկ. Է 21*) – πνευμάτων (*Lk. 7:21*),

«զիտաւորեաց» (*Տիմ. 291*) ≠ «այց արացէ» (*Ղկ. Ա 78*) – ἐπισκέψατο (*Lk. 1:78*),

«լսաւորութիւն» (*Տիմ. 301*), «լսաւղ» (*Տիմ. 312*) ≠ «հնազանդութիւն» (*Ա Պետ. Ա 2*), «հնազանդ» (*Փիլիպ. Բ 8*) – ὑπακοή (*1Pet. 1:2*), ὑπήκοος (*Phil. 2:8*),

²⁰¹ Հունարենն χρᾶσθαι բայի «օգտվել» իմաստը խորթ է «վարեմ» բայի կրավորական սեռին (տե՛ս ՆԲՀԸ «վարիմ»). հունարեն բայը ունի նաև «չփվել, մտերիմ լինել», «սովորել ուսուցչի մոտ» իմաստները:

«լինելութիւն» (*Փիլ. ստեպ*) ≠ «ծնունդ» (*Ծնն. ստեպ*), «արարածք» (*Ծնն. Բ:4*) – γένεσις (Gen. 2:4),

«տաղաւարեաց» (*Տիմ. 297*) ≠ «բնակեաց» (*Յովհ. Ա 14*) – ἐσκήνωσαν (Jn. 1:14),

«առնումք» (*Տիմ. 305*) ≠ «ունիցիմք» (*Ա Յովհ. Ե 9*) – λαμβάνομεν (1Jn. 5:9),

«արարեալ» (*Տիմ. 305*) ≠ «յանձին կալեալ» (*Յուդ. 3*) – ποιούμενος (Jud. 3),

«բայն» (*Տիմ. 306*), «բայիւ» (*Տիմ. 308*) ≠ «բանն» (*Հռոմ. Ժ 8*), «բանիւ» (*Եբր. Ա 3*) – τὸ ῥήμα (Rom. 10:8), τῷ ῥήματι (Hebr. 1:3),

«բազում պտուղ բերէ» (*Տիմ. 296*) ≠ «բազում արդիւնս առնէ» (*Յովհ. ԺԲ 24*) – πολὺν καρπὸν φέρει (Jn. 12:24),

«ի Հանդիպութիւն նորա» (*Տիմ. 299*) ≠ «ընդառաջ նորա» (*Յովհ. ԺԲ 13*) – εἰς ὑπάντησιν αὐτῷ (Jn. 12:13),

«ամա վկայից» (*Տիմ. 309*) ≠ «զբազմութիւն վկայից» (*Եբր. ԺԲ 1*) – νέφος μαρτύρων (Hebr. 12:1),

«մանկունք բժշկաց» (*Տիմ. 324.29*) ≠ «արուեստագէտք բժշկաց» (*Ոսկ. Պող. Բ 447*) – παῖδες ἱατρῶν (PG 62.437.39),

«ոչ գիտացին» (*Տիմ. 324*) ≠ «չգիտեն» (*Ոսկ. Պող. Բ 445*) – οὐ ἴσασι (PG 62.436),

«սկզբունք» (*Տիմ. 313*) ≠ «պետութիւնք» (*Կող. Ա 16*) – ἀρχαί (Col. 1:6),

«զանձեութիւն» (*Փիլ. ալլաբ. 151*) ≠ «զաղտեղութիւն» (*Ք Օրին. ԻԳ 13*) – τὴν ἀσχημοσύνην (Ph. LA 2.27 = Deut. 23:13),

«մարդ» (*Փիլ. ալլաբ. 158*) ≠ «այր» (*Ծնն. Բ 24*) – ἄνθρωπος (Ph. LA 2.49 = Gen. 2:24),

«յարեսցի ի կին իւր» (*Փիլ. ալլաբ. 158*) ≠ «երթիցէ զհետ կնոջ իւրոյ» (*Ծնն. Բ 24*) – προσκολληθήσεται πρὸς τὴν γυναῖκα αὐτοῦ (Ph. LA 2.49 = Gen. 2:24),

«խածանէին» (*Փիլ. ալլաբ. 167*) ≠ «Հարկանէին» (*Թիւք ԻԱ 6*) – ἔδακνον (Ph. LA 2.77 = Num. 21:6),

«փայտ» (*Փիլ. ալլաբ. 123, 136*) ≠ «ծառ» (*Ծնն. Բ 9, 22, Բ 16-17*) – ξύλον (Ph. LA 1.56 = Gen. 2:9, 22. Ph. LA 1.100 = Gen. 2:16-17):

7 ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՌԵՐԻ ՏԱՐԲԵՐ՝ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՀՈՒՆԱԲԱՆ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ

1) Նոր Կտակարանում Հարադիր բայերով թարգմանված բայերը Տիմոթեոսի թարգմանիչն արտահայտում է մեկ բառով.

«զերասպարեցից» (*Տիմ. 282.32*) ≠ «վերակացու եղէց» (*Դ Թադ. ԺԹ 34, Ի 6*) – ὑπερασπιῶ (4Reg. 19:34, 20:6),

«լուսաւորէ» (*Տիմ. 297*) ≠ «լուսաւոր առնէ» (*Յովհ. Ա 9*) – φωτίζει (Jn. 1:9),

«կէցեն» (*Տիմ. 210*) ≠ «իցեն կենդանի» (*Ք Կոր. Ե 15*) – ζῶσιν (2Cor. 5:15),

«Հովանասցի քեզ» (Տիմ. 292՝ «քեզ» տրականը՝ հունարենի հետևություն) ≠ «Հովանի լիցի է վերայ քո» (Ղկ. Ա 35) – ἐπισκιάσει σοι (Lk. 1:35),

«Երանեալ է» (Տիմ. 293) ≠ «Երանի իցէ» (Ղկ. Է 23) – μακάριός ἐστιν (Lk. 7:23),

«սրբեմ» (Տիմ. 300) ≠ «սուրբ առնեմ» (Յովհ. Ժէ 19) – ἁγιάζω (Jn. 17:19):

2) Հունաբան թարգմանիչը տառացիություն սկզբունքին է դիմում՝ անեղական գոյականները հունարենի նմանությունը եզակի թվով կիրառելիս.

«Երկին» (Նաղ. ճ.4.2) – οὐρανέ (PG 35.532.34),

«Երկին» (Դ. Սահմ. 6.5) – οὐρανός (D. Prol. 2.19),

«Գերկին» (Տիմ. 14.28) ≠ «գերկինս» (Յովհ. Թ 8) – τὸν οὐρανόν (Job 9:8),

«յերկին» (Տիմ. 306) ≠ «յերկինս» (Հռոմ. Ժ 6) – εἰς τὸν οὐρανόν (Rom. 10:6),

«Երկնի» (Փիլ. ալլաբ. 145) ≠ «երկնից» (Ծնն. Բ 19) – τοῦ οὐρανοῦ (Ph. LA 2.9 = Gen. 2:19),

«Երկնի» (Փիլ. ել. 2.37) ≠ «երկնից» (Ել. ԻԴ 10) – τοῦ οὐρανοῦ (Ex. 24:10),

«Ի հաւատոյ» (Տիմ. 306) ≠ «զհաւատոցն» (Հռոմ. Ժ 6) – ἐκ πίστεως (Rom. 10:6),

«հաւատոյ» (Տիմ. 207) ≠ «հաւատոցն» (Հռոմ. Գ 25) – πίστεως (Rom. 3:25),

«զչնորհն» (Տիմ. 309) ≠ «զչնորհսն» (Բ Կոր. Ը 9) – τὴν χάριν (2Cor. 8:9),

«չնորհիւ» (Տիմ. 297) ≠ «չնորհօք» (Յովհ. Ա 14) – χάριτος (Jn. 1:14),

«ընդ աւրինաւ» (Տիմ. 84) ≠ «ընդ օրինօք» (Գաղ. Դ 4) – ὑπὸ νόμον (Gal. 4:4),

«օրէն» (Պղատ. Մին. 463, 464, 466) – νόμος (Pl. Min. 313a1, b2, c5):

3) Փոխադարձ դերանունները «անձն» գոյականով թարգմանելու փոխարեն Տիմոթեոսի թարգմանիչը նախընտրում է դերանուն կիրառել.

«գիւնքն» (Տիմ. 312) ≠ «զանձն» (Փիլիպ. Բ 8) – ἐαυτόν (Phil. 2:8),

«ընքեան» (Տիմ. 306) ≠ «անձամբ» (Հռոմ. ԺԴ 7) – ἐαυτῷ (Rom. 14:7),

«ինքեան» (Տիմ. 306) ≠ «անձամբ» (Հռոմ. Դ 7) – ἐαυτῷ (Rom. 4:7),

«ինքեան» (Տիմ. 210) ≠ «անձանց» (Բ Կոր. Ե 15) – ἐαυτοῖς (2Cor. 5:15),

«զիս» (Տիմ. 300) ≠ «զանձն իմ» (Յովհ. Ժէ 19) – ἐμαυτόν (Jn. 17:19):

4) Հետևյալ օրինակներում տարբերակները համեմատաբար չեզոք են՝ բառացի – ոչ բառացի դիտվելու տեսանկյունից.

«Ի՞բր» (Տիմ. 292, 307) ≠ «զիա՞րդ» (Ղկ. Ա 34, Գաղ. Դ 9) – πῶς (Lk. 1:34, Gal. 4:9),

«ճանաչեմ» (Տիմ. 292) ≠ «գիտեմ» (Ղկ. Ա 34) – γινώσκω (Lk. 1:34),

«չինեցաւ» (Տիմ. 313) ≠ «հաստատեցաւ» (Կող. Ա 16) – ἐκτίσθη (Col. 1:16),

«ծագել» (Տիմ. 291) ≠ «երևել» (Ղկ. Ա 79) – ἐπιφάναι (Lk. 1:79),

«զգուլն» (Տիմ. 312) ≠ «զլինելն» (Փիլիպ. Բ 6) – τὸ εἶναι (Phil. 2:6),

«անտեսանելոյ» (Տիմ. 313) ≠ «աներևութին» (Կող. Ա 15) – ἀόρατου (Col. 1:15),

«լինի» (ՏԻՄ. 324) ≠ «ծնանի» (Ոսկ. Պող. Բ 446) – γίνεται (PG 62.437),
 Հմմտ. «լինելութիւն» – «ծնունդ» *զուգահեռը* (Ա 6),
 «բուծանին» (ՏԻՄ. 324) ≠ «կերակրին» (Ոսկ. Պող. Բ 447) – τρέφεται (PG 62.437),
 «հրաշագոյնն» – (ՏԻՄ. 324) ≠ «զարմանալիք» (Ոսկ. Պող. Բ 447) – θαυμαστόν (PG 62.437),
 «յարուցանել» (ՏԻՄ. 323) ≠ «կանգնել» (Ոսկ. Պող. Բ 445) – ἀναστῆναι (PG 62.436),
 «նաւակոծութիւն» (ՏԻՄ. 323) ≠ «նաւաբեկութիւն» (Ոսկ. Պող. Բ 445) – ναυάγιον (PG 62.436),
 «եղանի» (ՏԻՄ. 324 *ուղղելի է՝ «յեղանի», Հմմտ. մի քանի տող ներքե՝* τρέπεται – «յեղանի», որը նաև ձևաբանական հունաբանություն է՝ -ու խոնարհման «յեղում» բայից արհեստականորեն կազմված կրավորական ձև) ≠ «փոփոխի» (Ոսկ. Պող. Բ 447) – τρέπεται (PG 62.437),
 «վիճակ» (Փիլ. ալլաբ. 158) ≠ «ծառանդութիւն» (Բ Օրին. Ժ 9) – κλήρος (Ph. LA 2.51 = Deut. 10:9),
 «զրաւստ» (Փիլ. ալլաբ. 123, 126) ≠ «զրախտ»²⁰² (Ծնն. Բ 9, 18, Բ 10-14) – παράδεισος (Ph. LA 1.43 = Gen. 2:9, 18, Ph. LA 1.63 = Gen. 2:10-14),
 «դէմս» (Փիլ. ալլաբ. 114) ≠ «երեսս» (Ծնն. Բ 6) – τὸ πρόσωπον (Ph. LA 1.28 = Gen. 2:6),
 «ի դէմս» (Փիլ. ալլաբ. 115) ≠ «յերեսս» Ծնն. Բ 7) – εἰς τὸ πρόσωπον (Ph. LA 1.31 = Gen. 2:7),
 «ընդ դէմս» (Փիլ. ալլաբ. 163) ≠ «ընդ երեսս» (Թիւք ԺԲ 14) – εἰς τὸ πρόσωπον (Ph. LA 2.66 = Num. 12:14),
 «զոյգ» (Փիլ. ալլաբ. 132) ≠ «հանգոյն» (Թիւք ԺԲ 12) – ἴσον (Ph. LA 1.76 = Num. 12:12),
 «մշակ» (Փիլ. ալլաբ. 133) ≠ «արդիւնարար» (Ծնն. ԽԹ 15) – γεωργός (Ph. LA 1.80 = Gen. 49:15),
 «ոչ էր» (Փիլ. ալլաբ. 169) ≠ «ոչ զոյր» (Բ Օր. Ը 15-16) – οὐκ ἦν (Ph. LA 2.84 = Deut. 8:15-16):
4ա) Որոշ դեպքերում հունաբան տեքստի տարբերակը նոր բառ է.
 «քառից» (ՏԻՄ. 49) ≠ «չորից» (Մթ. ԻԴ 31) – τῶν τεσσάρων (Mt. 24:31),
 Հմմտ. «ի քառաց» (Հերմ. 299.19), «քառ» (Պող. Աղ. 157) – τέσσαρες (P. Al. 156), «քառից» (Անան. Մեկն. 490),
 «մէնածին» (ՏԻՄ. 297) ≠ «միածին» (Յովհ. Ա 14) – μονογενής (Jn. 1:14):

²⁰² Բայց և «զրախտ» (Փիլ. ալլաբ. 119, 122, 136) = «զրախտ» (Ծնն. Բ 8, 17, Բ 15, 22, Բ 16-17) – παράδεισος (Ph. LA 1.41 = Gen. 2:8, 17, Ph. LA 1.53 = Gen. 2:15, 22, Ph. LA 1.90, 206 = Gen. 2:16-17):

8 ՆՈՐ ԲԱՌԵՐ ԲԱՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԻՄՔԵՐԻՑ

Դասական գրաբարում բաղադրյալ բառերի մեծ մասում անվանական հիմքը համընկնում է ուղղականի հիմքին, իսկ բայականը՝ բայարմատին, որը նույնանում է մերթ պարզ բայերի ձևաբանական հիմքին, մերթ կատարյալի արմատական հիմքին²⁰³:

Շ. Մերսյեն հունաբան դպրոցին նվիրված հոդվածում նշել է, որ նոր բառեր էին կազմվում դասական պարզ բայերի՝

ա. ներկայի հիմքից, հմմտ. մեր վերոբերյալ ցանկերում՝

նախածանցավոր (Ա 1.1)՝ «առասուլիսին», «առլինիմ», «բաղդատումն», «բացադործեմ», «բացալինիմ», «բացասուլիսին», «ենթագրուլիսին», «հակադառնամ», «յարընդունելուլիսին», «նախաճառեալ», «նախապատուելով», «ներգործեմ», «ներընդունի», «շաղապատեմ», «շարալծեալք», «շարակարգեալ», «շարամանեմ», «ստորասուլիսին», «ստորոգեալ», «վերագրեմ», «վերելուլիսին», «քողախնդրեալն», «առցուցանեմ», «շարաբառնամ», «վերադիտող», «նախագնամ», «շարագրեմ»,

բարդ (Ա 2)՝ «արդարադատուլիսին», «դիւրաշարժ», «կիսակատար», (Ա 1.2բ)՝ «չրջահոսեալ», (հավել. 4.3բ)՝ «բնախօսուլիսին»,

վերջածանցավոր (Ա 3ա)՝ «ընդունելուլիսին», «հրաժարական», «յորդորական», «անանջատական», «պատահումն», (Ա 3բ)՝ «ունմունք» > «ունումն», «ակ» ածանցով (Ա 3բ3ա)՝ «անընդունակ», «բուժակ», «գործակ», «Երեակ», «կրթակ և վարժիչ», «նախունակ», «ողբերգակ», «քարոզակ», «մոլորակ», «առինչունակ», «գերերեակ»,

բ. անցյալ կատարյալի հիմքից (բերում է «փաղառուլիսին» (συλλαβή) և «վերծանուլիսին» (ἀνάγνωσις) օրինակները), հմմտ.

նախածանցավոր (Ա 1.1)՝ «առարկուլիսին», «բաղկացուլիսին», «բաղկացեալ», «գերազանցեմ», «հակադարձիմ», «նախառեալ», «նախասացեալ», «շարակալեալ», «շարամերձիմ», «վայրանցեալ», «վերամբարձական», «վերաստեղծեմ», «վերլուծականն», «փոխարկեմ», «արտելուլիսին», «պարառող», «ենթակացուլիսին», «նախծին», «ստորեկեսցէ», «վայրարկեալս», «փոխարկեալ լինի», «վերատեսեն», «վերածնեաց»,

բարդ (Ա 2)՝ «աստուածաստեղծեմ», «աստուածածնուլիսին», «բարեկեցուլիսին», «կիսակեր», «կիսասպան», «հացարար», «մարդակեր», «մեհնազերծուլիսին», «միարար», «նազարարուլիսին», «նաւաբեկուլիսին», «ուղղորդազնաց», «փափկակեաց», (Ա 1.2բ)՝ «անդրադարձիմ», «գուգադարձիմ», «ընդդիմահար»,

վերջածանցավոր (Ա 3)՝ «տեսական», «առած», «կալումն», «տեսաւորուլիսին», «աճեցական», «աճեցուլիսին», «եղուտ», «անեղ», «անհատ», «ակ» ածանցով (Ա 3բ3ա)՝ «վերելակ», «ցուցակ», «շաղառակ», «տեսակ»:

գ. Ոչ բայական՝ «տր» և «դր» հիմքերից²⁰⁴: Սակայն իրականում դրանք էլ բայական հիմքեր են՝ «տամ» և «դնեմ» բայերի հրամայականի հիմքերը: Ա.

²⁰³ ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 72, 75:

²⁰⁴ MERCIER 1978, 67-68:

Մեյեն հիշատակում է այդ հիմքերն այն բարդ բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը բայանուն է՝ արմատական անուն, որը «սկզբնական բայերում» նույնանում է անցյալ կատարյալի հիմքի հետ՝ «ուխտադիր», «թագադիր», «աւրինադիր», «աստուածատուր», «քաղցրատուր»²⁰⁵: Գրաբարի բառակազմական բայական հիմքերի թվում է. Հովսեփյանը նշում է բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքի հետ համընկնող հիմքեր, որոնցից ամենից լայնորեն կիրառվել են՝ «դիր» («դնեմ»), «լուր» («լսեմ», հմմտ. «ինքնալուր»՝ Ա 2), «տուր» («տամ») ²⁰⁶: Մեյեի բերած օրինակները ածական անուններ են. կարելի է ենթադրել, որ «դրեմ»-ով և «տրեմ»-ով բայերի ստեղծմանը նախորդել է միջանկյալ «զաղտնի բառակազմական քայլ», օրինակ՝ «նահատակադիր» (ἀθατο-θετης) → «նահատակադրեմ»-ի (Ա 2) նմանությամբ՝

«դիր»-ից.

(«առադիր» →) «առադրեմ» (Ա 1.1),

(«առընթերադիր» → «առընթերադրեմ» →) «առընթերադրուծիւն» (Ա 1.2բ),

(«արտադիր» →) «արտադրեմ» (Ա 1.1),

(«ենթադիր» →) «ենթադրեմ» → «ենթադրուծիւն» (Ա 1.1),

«առաջադիր» (Ա 1.2բ),

(«ընդդիմադիր» → «ընդդիմադրեմ» →) «ընդդիմադրուծիւն» (Ա 1.2բ),

«մարտադիր» (Ա 2),

(«մտադիր» → «մտադրեմ» →) «մտադրուծիւն» (Ա 2),

(«յարադիր» →) «յարադրեմ» → «յարադրուծիւն» (Ա 1.1),

(«նախադիր» →) «նախադրեմ» (Ա 1.1),

(«չարադիր» → «չարադրեմ» →) «չարադրուծիւն» (Ա 1.1),

(«վերադիր» →) «վերադրեմ» (Ա 1.1, հավել. 4.2),

(«տրամադիր» → «տրամադրեմ» →) «տրամադրուծիւն» (Ա 1.1),

«տուր»-ից.

(«բարետուր» → «բարետրեմ» →) «բարետրապէս» (Ա 3բ4),

(«բացատուր» →) «բացատրեմ» → «բացատրուծիւն» (Ա 1.1),

(«փոխատուր» → «փոխատրեմ» →) «փոխատրուծիւն» (Ա 1.1, հավել. 4.2),

«տրական» (Ա 3ա):

Այդ նույն բայերի ներկայի հիմքից էլ են կազմվել նախածանցավոր բայեր (Ա 1.1)՝ «առընեմ», «բացատուեմ», «առտուեմ»:

Մերսյեն նշել է նաև բայի լծորդության փոփոխությամբ կազմված «հակա-կայիմ» բայը (փխ. «հակակամ»): Ավելացնենք «տրամակայիմ», «չարկանամ», «բաղկանամ» (Ա 1.1): Հետևյալ օրինակներում՝ «ընկալում» (Պղատ. Օր. 178, 460, Սոկր. 41, 50) – κτάομαι (Pl. Leg. 743c91), παραλαμβάνω (Pl. Leg. 968d5), λαμβάνω (Pl. Apol. 20a8, 25e5), «վերաստեղծուլ» (Դիոն. երկ. քհ. 4.17, 6.4, 7.16) – ἀναπλάττειν (Dion. cael. hier. 10.18, 12.8, 14.1), «ուլ» լվորդությամբ ներկայի հիմքերը ստեղծվել են «ընդունիմ»/ «ընկալայ» և «ստեղծանեմ»/

²⁰⁵ Մեյեն 1978 (Թարգմանութունն է հետևյալ հոդվածի՝ Meillet 1913):

²⁰⁶ Հովսեփյան 1987, 81:

«ստեղծի» բայերի անցյալ կատարյալի հիմքերից: Հետևյալ օրինակում՝ «եղողիդ» (Բրս. առ Նազ. 1.327) – τιθεμένης (Bas. epist. 2.7), անկանոն «դեմ» բայի ենթակայական դերբայը կազմվել է անցյալ կատարյալի «եղ» հիմքից: «Արտասանութիւն» (Ա 1.1) բառի մեջ, որ կարելի է բխեցնել «արտասանեմ» բայից, «ան» ածանցով նոր ներկայի հիմք է կազմվել:

Վերադառնանք բայական հիմքերին: Նոր բառերի կազմությանը մասնակցում են մեծ մասամբ պարզ հիմքերը՝

ցոյական անցյալ կատարյալ ունեցող բայերի դեպքում՝ ներկայի («անջատեմ», «ասեմ», «բուժեմ», «գնամ», «գործեմ», «գրեմ», «դատեմ», «դիտեմ», «երգեմ», «երևիմ», «լծեմ», «խնդրեմ», «խօսիմ», «կատարեմ», «կարգեմ», «կրթեմ», «հոսեմ», «հրաժարեմ», «ճառեմ», «մանեմ», «մոլորիմ», «յորդորեմ», «չարժեմ», «ոգեմ», «պատահիմ», «պատեմ», «պատուեմ», «վարժեմ», «քարոզեմ» բայերից),

ներկայի հիմքում «ան», «են», «ն» ածանցների դեպքում՝ անցյալ կատարյալի («անցանեմ», «առնում», «արկանեմ», «բեկանեմ», «ելանեմ», «զանցանեմ», «զերծանեմ», «լուծանեմ», «ծնանիմ», «հատանեմ», «հարկանեմ», «մերձենամ», «սպանանեմ», «ստեղծանեմ», «տեսանեմ», «ցուցանեմ» բայերից):

Բացառություն են՝

ա) ածանցավոր ներկայի հիմքից կազմված «առցուցանեմ» բայը. այստեղ նախածանցը հավանաբար կցվել է պատրաստի «ցուցանեմ» բային,

բ) «նախասացեալ» անցյալ դերբայի մեջ անցյալ կատարյալի հիմքը պայմանավորված է քերականական ձևով, չնայած «*նախասեմ» բայ ավանդած չէ,

գ) «աճեցական», «աճեցութիւն» գոյգը. ածականակերտ և վերացական գոյական կերտող ածանցները միացել են անցյալ կատարյալի «աճեց» ցոյական հիմքին:

«Բաղկացութիւն», «բաղկացեալ», «ենթակացութիւն», «բարեկեցութիւն», «փափկակեաց», «ուղղորդագնաց» նորաբանությունների կազմությանը մասնակցել են անցյալ կատարյալի ցոյական հիմքեր, ինչը նույնպես չի հակասում գրաբարի բառակազմական կաղապարներին: Չէ՞ որ քերականական ձևավորում ունեցող հիմքերից ամենից ավելի լայն կիրառություն ունի անցյալ կատարյալի ցոյական հիմքին համընկնող բառակազմական հիմքը²⁰⁷:

«Անբաղկացելի» (Ա 4) ապառնի դերբայի մեջ անցյալ կատարյալի ցոյական հիմքն անկանոնություն է, քանի որ ապառնի դերբայը կազմվում է ներկայի հիմքից (պիտի լինեք «անբաղկանալի»): Այդ կանոնավոր եղանակով են կազմվել, օրինակ, մեր արձանագրած «անելանելի», «անստեղծանելի», «անհասանելի», «անմերձենալի» ձևերը, չնայած համապատասխան բայերն անցյալ կատարյալի հիմքով են մասնակցում բառակազմությանը:

«Բերեմ» և «ածեմ» բայերի ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը նույննում են, հետևաբար հնարավոր չէ որոշել, թե որ հիմքն է մասնակցել հետևյալ բառերի բառակազմությանը.

²⁰⁷ ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 78:

«արտաբերեմ» (Ա 1.1), «ամբոխաբեր» (Ա 2), «թունաբեր» (Ա 2), «Լուսաբեր» (Ա 2), «վայրաբեր» (հավել. Ա 4), «չարաբերեմ» (Ա 1.1), «չըջաբերութիւն» (Ա 1.2բ), «վերաբերութիւն» (Ա 1.1, հավել. 4.3ա), «տարբերութիւն» (Ա 1.1), «փոխաբերեմ» (Ա 1.1),

«առածել» (Ա 1.1), «մանկածու» (Ա 2, հավել. 4.3ա), «մտածութիւն» (Ա 3ա), «ներածութիւն» (Ա 1.1), «ներքսածական» (Ա 1.2բ), «վայրածեմ» (Ա 1.1), «վերածեմ» (Ա 1.1), «վերածապէս» (Ա 3բ.4), «Փայլածու» (Ա 3ա):

Տարահիմք բայերի դեպքում ավելի հաճախ մասնակցում է անցյալ կատարյալի հիմքը²⁰⁸ («առնեմ»/«արարի», «գամ»/«եկի», «ունիմ»/«կալայ», «ուտեմ»/«կերայ», «լինիմ»/ «եղէ», «դառնամ»/«դարձի», «ամբառնամ»/«ամբարձի»): Այս կանոնից չեզոքում են՝

«առնեմ» բայի ներկայի հիմքից (Ա 2)՝ «բարառնութիւն», «դիմառնութիւն», «կերպարանառնութիւն»,

«բառնամ» բայի ներկայի հիմքից (Ա 1.1)՝ «չարաբառնամ»,

«լինիմ» բայից (Ա 1.1)՝ «առլինիմ», «բացալինիմ»,

«ունիմ» բայից՝ «ունմունք» > «ունումն», «նախունակ», «առինչունակ»,

«ընդունիմ» բայից՝ «ներընդունի» (Ա 1.1), «անընդունակ» (Ա 3բ.3ա):

Միևնույն բայի ներկայի և անցյալ կատարյալի հիմքերից են կազմված «հակադարձիմ» և «հակադառնամ» (Ա 1.1) տարբերակները²⁰⁹:

Լ. Ա. Հովսեփյանը նշում է, որ բառակազմական հիմքերի թվում հանդիպում է ներկայի հիմքի տարատեսակություն՝ եզակի երրորդ դեմքին համընկնող հիմք. «բայ», «գայ», «գոյ», «կայ», «գնայ», «մնայ»²¹⁰, հմտ. (Ա 1.1)՝ «առկայանամ», «բացակայ», «գերագոյ», «ենթակայ», «համագոյական», «ներկայ», «ստորակայ», (Ա 1.2բ)՝ «առաջիկայ», «ընդդիմակայ», «մերձակայ», «չըջադայութիւն», «չըջակայ», (Ա 2)՝ «դիւրակայ», (Ա 5)՝ «անզգայ»: Սրանց որոշակի վերապահությունը կարելի է ավելացնել «է» եզակի երրորդ դեմքը (Ա 3բ.3բ՝ «էակ»)։ «էապէս» նորաբանությունը համեմատելի է «զգայաբար»-ի հետ, իսկ «էակ»-ը՝ «զգայական»-ի, մանավանդ որ դասական լեզվում կար այդ հիմքից կազմված «էութիւն» բառը:

«Լինելութիւն», «ծնելութիւն», «ընդունելութիւն», «թուելութիւն» (Ա 3ա) բառերում «ութիւն» վերջածանցն ավելացել է անորոշ դերբային²¹¹, «եղելութիւն» (Ա 3բ) անցյալ դերբային, «եղանութիւն» (Ա 3բ)՝ «եղէ» անցյալ կատարյալից արհեստականորեն ստեղծված «եղան» ներկայի հիմքին (տե՛ս Բ 9բ):

Ինչպես տեսնում ենք, հունաբան նորաբանությունների բառակազմական սկզբունքները հիմնականում համապատասխանում են գրաբարի նորմերին:

²⁰⁸ Պրաբարում սովորաբար տարահիմք խոնարհման բայերի դեպքում (ինչպես՝ «ուտեմ»/«կերայ») բառակազմությանը մասնակցում է անցյալ կատարյալի հիմքը՝ «աթոռակալ», «գիշակեր», «դիմադարձ», «կենդանաբար»։ ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 75:

²⁰⁹ Լ. Հովսեփյանը (ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 91) նշում է «գրաբարի բառակազմության մեջ առկա հիմքակազմական տարբերակների առատությունը»:

²¹⁰ ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 75-76:

²¹¹ Հովսեփյանը (ՀՈՎՍԵՓՅԱՆ 1987, 80) այդպիսի բառակազմական կաղապար էլ է նշում:

Բ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զեւաբանական հունաբանություններից մի քանիսը (ցուցական դերանունների իգական ձևերը, «մի» թվականին զուգահեռ օգտագործվող բառերը) փորձ էին սեռի՝ հայերենի համար ոչ հատկանշական քերականական կատեգորիան լեզվի մեջ ներմուծելու: Մյուս քերականական հունաբանությունների նպատակը դասական լեզվում չտարբերակված ձևերի (սեռական և տրական հոլովների) տարբերակումն է, ինչպես նաև դասական լեզվում բացակայող նոր ձևերի ստեղծումը. «իլ»-ով կրավորական անորոշ դերբայը, «իւր» կրավորական վերջավորությունը, «ա» և «ու» լծորդության բայերի կրավորական ձևերը, «ից»-ով հիմքերից կրավորական անցյալ դերբայները, գուցե և՛ ածականով արհեստական ձևերն ստեղծվել էին համաչափության հասնելու նպատակով, քանզի միշտ էլ, որ այդ սկզբունքին է հետևում լեզվի կառուցվածքը:

1 ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԵՌՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

1ա Ցուցական դերանունների իգական սեռը

«Աա, դա, նա» ցուցական դերանունների իգական սեռի՝ «սէ, դէ, նէ», «է» վերջավորության աղբյուրն ակնհայտորեն հունարեն իգական սեռի վերջավորությունն է՝ η (α/η տարբերակներից մեկն է), որն առկա է համապատասխան դերանունների իգական ձևերում՝ αὐτή, ἐκείνη²¹²: Թեք հոլովներում հիմքի «ո» ձայնավորը փոխարինված է «ա»-ով:

«սէ» (Փիլ. ալլաբ. 156, տես. 26, Հերմ. 306.28) – αὐτή (Ph. LA 2.44), ἡ (Ph. LA 2.44),

«դսէ» (Փիլ. ալլաբ. 156) – αὐτήν (Ph. LA 2.40),

«սարա» (Փիլ. ալլաբ. 156, 157) – αὐτή (Ph. LA 1.18, 27),

«ընդունողն սարա» (Փիլ. ալլաբ. 125) – τὸ δεδουλευμένον αὐτήν (Ph. LA 3.102),

«մի սացա» (Փիլ. ալլաբ. 157) – μία αὐτῶν (Ph. LA 2.48),

«նէմա» (Տիմ. 15.32):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

²¹² Հմմտ. նաև «է» վերջավորությամբ հունական ծագման իգական անձնանունները. «Գալանէ», «Հոնիփսիմէ»՝ Ագաթանգեղոսի մոտ, «Աղբրինէ»՝ Սինայի մի արձանագրությունից (STONE 1982, 156: H Arm. 70): Սթունը բնորոշում է այն որպես «անթվագրելի», սակայն ենթադրում է, որ Վադի Հազգազի բոլոր հայերեն արձանագրությունները տասներկուերորդ դարից վաղ են (STONE 1982, 11):

«զսէ» (Փիլ. ալլաբ. 155) ≠ «զնա» (Ծնն. Բ 22-23) – αὐτήν (Ph. LA 2.40 = Gen. 2:22-23),

«սարա... սէ» (Փիլ. ալլաբ. 156) ≠ «նորա... սա» (Ծնն. Բ 23) – αὐτῆς... αὐ-
τή (Ph. LA 2.44 = Gen. 2:22-23),

«սացա... սացա» (Փիլ. ալլաբ. 157՝ մասնական սեռական է՝ հունարենի
հետևություն) ≠ «ի նոցանէ» (Բ Օրին. ԻԱ 15-16՝ մասնական բացառական է)
– αὐτῶν... αὐτῶν (Ph. LA 2.48 = Deut. 21:15-16),

«սարա» (Փիլ. ալլաբ. 163) ≠ «նորա» (Թիւք ԺԲ 14) – αὐτῆς (Ph. LA 2.66 =
Num. 12:14),

«նէրա» (Տիմ. 283.12) ≠ «կուսին» (Ոսկ. Մթ. Բ 25) – αὐτῆς (PG 58.28.47):

1բ «Մի» թվականի զուգահեռ ձևերը

Ըստ Հր. Աճառյանի²¹³ «մի»-ին զուգահեռ «եզ» և «մու» բառերը մտցվել
են սեռը տարբերակելու համար. արականն է՝ «եզ», իգականը՝ «մի» և չեզոքը՝
«մու»: Այս դիտարկումը հիմնված է Տիմոթեոս Կուզի հետևյալ նախադա-
սություն վրա.

«եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն» (Տիմ. 311) – εἷς κύριος, μία πίσ-
τις, ἓν βάπτισμα (Eph. 4:5):

Սակայն այլ թարգմանություններում դերերի բաշխման որևէ կանոնակո-
րություն չկա՝

«եզ» (Թրակ. 9.21, 11.1, 21) – εἷς (Thrax 17.1, 19.6, 20.1՝ չեզոք),

«եզով» (Թրակ. 39.3) – μιᾶς (Thrax 109.3՝ իգական),

«մու» (Թրակ. 8.18, 15.1, 21.22) – εἷς (Thrax 18.2, 44.4՝ արական),

«մի» (Թրակ. 8.10, 11.5) – εἷς (Thrax 14.5, 20.1: չեզոք),

«մի» (Թրակ. 10.4) – μίαν (Thrax 18.2՝ իգական),

«մու» (Փիլ. լին. 4.110) – εἷς (Ph. QuGen. 4.110՝ չեզոք),

«մու» (Հերմ. 299.19, 301.6),

«մու» (Պորփ. 139) – εἷς (Porph. 6.22՝ արական),

«եզոյր» (Պորփ. 139) – ἐνός (Porph. 6.25՝ չեզոք),

«մու բացասություն մուլմ բացասություն» (Ար. Մեկն. 161) – μιά κατάφα-
σις μὴ ἀποφάσει (Arist. Int. 18a8՝ իգական, «մուլմ» տրական հոլովի ձև է՝
«ուլմ»-ի փոխարեն՝ «լմ» վերջավորություն, տե՛ս Բ 2ա),

«մու զմիջի» (Ար. Մեկն. 162) – ἐν καθ' ἐνός (Arist. Int. 18a12՝ չեզոք),

«մու անուն» (Ար. Մեկն. 162) – ἐν ὀνομα (Arist. Int. 18a18՝ չեզոք),

«մու մոյր», «երկուք մոյր» (Ար. Մեկն. 386) – μία μιᾶς, δυο μιᾶς (Arist.
Int. 20b4, 10՝ իգական, սեռական հոլով),

«եզ» (Դ. Ստոր. 196, 197) – εἷς (D. Cat. 108.25, 109.16՝ չեզոք):

Հմտ. նաև «եզ»-ից ածանցված բառերը՝

²¹³ ԱՃԱՌՅԱՆ 1951, 148:

«եղական» (Թրակ. 16.23, 17.3, 7, 23.16, 17 և այլն, Դ. Ստոր. 228, 246, Եւտիք. 37/38.33) – ἐνικός (Thrax 30.5, 31.2, 3, 40.4, 51.2, D. Cat. 137.15, 151.22),

«չեզոք» (Թրակ. 13.8, Ար. Մեկն. 164) – οὐδέτερον (Thrax 24.8, Arist. Int. 18b17),²¹⁴

«եզարար» (Պորփ. 139) – ἐνοπιός (Porph. 6.23),

«եզակ» (Փիլ. լին. 4.2, Դ. Սահմ. 34.19) – μονάς (D. Prol. 24.19),

«եզակի» (Դ. Սահմ. 150.16, Դ. Վերլուծ. 98) – ἐνικῶς (D. Prol. 74.30),

«եզականաբար» (Դ. Ստոր. 244, 255), «եզաբար» (Դ. Ստոր. 244) – ἐνικῶς (D. Cat. 149.21, 24, 158.12):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն» (Տիմ. 311) ≠ «մի տէր, մի հաւատ, մի մկրտութիւն» (Եփես. Դ 5) – εἷς κύριος, μία πίστις, ἐν βάπτισμα (Eph. 4:5):

2 ՀՈԼՈՎԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

2ա Եզակի տրականի զուգահեռ վերջավորությունները

Տրական հոլովի դասական դերանվանական «ուժ»²¹⁵ վերջավորությունն օգտագործվել է նաև «ո» հոլովման մի քանի ածականների, ինչպես նաև «մի» թվականի հետ՝ օրինաչափ «ոյ» վերջավորությանը զուգահեռ՝ «աջոյ»/«աջում», «միոյ»/«միում»/«միոջ», և այլն. այն օգտագործվել է հատկապես տրականի՝ «ի» նախդրով ներգոյականի իմաստի դեպքում²¹⁶: Ի լրումն քերականություններում նշվող բառերի, բերենք հետևյալ օրինակները՝

«Ի հանդերձելումն» (Մթ. ԺԲ 32, Եփես. Ա 21) – ἐν τῷ μέλλοντι (Mt. 12:32, Eph. 1:21),

«Ի չորրորդում պահու» (Մթ. ԺԴ 25) – τετάρτη φυλακῇ (Mt. 14:25),

«յաւուրն յետնում» (Յովհ. Զ 40, 55) – ἐν τῇ ἐσχάτῃ ἡμέρᾳ (Jn. 6:40),

²¹⁴ Ադոնցը բացատրել է «չեզոք» բառը որպես «չ-եզ-ոք» = «ոչ մի ոք». չէ՞ որ οὐδέτερος նշանակում է «ոչ մեկը, ոչ մյուսը», այսինքն՝ «ոչ արական, ոչ իգական (սեռ)», տե՛ս «Ինչպես պետք է գրել «ամեն» և «չեզոք» բառերը», ԱԴՈՒՅ 2008, 360-363:

²¹⁵ Հավանաբար այն կապված է դերանվանական «մ» վերջավորության կամ տրականի ցուցիչի հետ, հմմտ. «այսմ» («այս»-ի տրականն է), «սմա» («սա»-ի տրականն է), «սմին» («սոյն»-ի տրականն է), «իմիք» («իմն»/ «ինչ»-ի տրականն է), «ումեմն» («ումն»-ի տրականն է), «ումեք» («ոք»-ի տրականն է), «ում» («ո»/«ով»-ի տրականն է), «իմ»/«հիմ»/«էրում» («գի»/ «գինչ»-ի տրականն է): Տե՛ս նաև այլ դերանունների «իմում», «քում», «իւրում», «մերում», «ձերում», «որում», «այլում», «միւսում», «այսպիսում» եզակի տրականները՝ լիարժեք «ում» վերջավորությամբ:

²¹⁶ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 22-23 (41). ածականներն են՝ «աջ», «արտաքին», «ձախ», «հին», «վերին», «վերջին», թվականները՝ «մի», «առաջին»:

«յերկրորդումն» (*Գործ. Է 13*) – ἐν τῷ δευτέρῳ (Act. 7:13),
 «ի Սաղմոսին... յերկրորդումն» (*Գործ. ԺԳ 33*) – ἐν τῷ ψαλμῷ... ἐν δευ-
 τέρῳ (Act. 13:33),
 «լիճն այրեցելումն» (*Յայտ. ԻԱ 8*) – ἐν τῇ λίμνῃ τῇ καιομένῃ (Apos. 21:8):
 Հունաբան դպրոցի երկրորդ և երրորդ խմբի թարգմանություններում
 «ում»-ը լայնորեն օգտագործվել է գոյականների, ածականների և դերբայնե-
 րի հետ: Երբեմն նույն դերում հանդես է եկել նաև է՛լ ավելի հազվագյուտ
 «ոջ» վերջավորությունը²¹⁷: Այս նորամուծության նպատակն, անշուշտ, եղա-
 կի սեռականի և տրականի տարբերակումն է²¹⁸.
 «Հանդերձելում» (*Նազ. ճ.2.14*) – τῷ μέλλοντι (PG 35.424.6),
 «ըստ երևցելումն» (*Նիւս. կազմ. 65*) – κατὰ τὸ φαινόμενον (PG 44.140.52),
 «նահատակեցելումս» (*Նազ. ճ.4.6*) – ἡγωνισμένῳ (PG 35.537.5),
 «փութացելումն» (*Բրս. յուզիտ. 5.370*) – ἐπειγομένῳ (PG 31.249),
 «ի խորոջն» (*Բրս. մախ. 1.193, Նիւս. կազմ. 90*) – ἐν τῷ βάθει (PG 31.373, 44.160.1),
 «ի գինւոջ» (*Բրս. Ա պհ. 11.79*) – ἐν οἴνῳ (PG 31.184.6),
 «զ՛ի խորւոջ կայսն» (*Բրս. հայեաց 1.109*) – τὰ ἐν τῷ βάθει κείμενα (Bas. Attende 23.8),
 «յերկրորդումն» (*Բրս. ապաշխ. 2.131*) – ἐν τῇ δευτέρᾳ (PG 31.1484.46),
 «ասացելում» (*Փիլ. տես. 14*) – ἐν τοῖς λεχθεῖσι (Ph. Cont. 30.2),

²¹⁷ Հր. Աճառյանը բնորոշում է այն որպես եզակի սեռականի վերջավորություն, տե՛ս ԱՃԱՌ-
 ՅԱՆ 1951, 155: Դասական լեզվում «ոջ» վերջավորության համար Մինասյանը բերում է
 միայն «ի տարւոջէ» (Յայտ. Բ 5), բացառականը (41) և «ի թնդոջ», «ի հանդիպոջ» (Քր.
 162) ներգոյականները (42.դ): Ա. Աբրահամյանը հիշատակում է «ում» վերջավորությունը,
 ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1964, 42՝ հիշատակելով «ոջ» վերջավորությունը «ո»-«ա» խառն հոլով-
 ման առիթով. նա բերում է հետևյալ ներգոյականները՝ «յայգւոջ» (Ես. Ա 8, Մթ. ԻԱ 28,
 Ղուկ. ԺԳ 6), «ի գինւոջ» (Գ. Թադ. Ի 12, Առ. ԻԳ 30), «ի դալարւոջ» (Սղ. ԻԲ 1), «ի
 կղզւոջ», «ի ծղխնւոջ» (Առ. ԻԶ 14), «ի ջորւոջ» (Բ. Թադ. ԺԳ 29), «ի տամալւոջ», «ի տեղ-
 ւոջ» (ստեպ), և «ի տարւոջէ» (ստեպ), «ի տեղւոջէ» (ստեպ) բացառականները, ԱԲՐԱՀԱՄ-
 ՅԱՆ 1964, 52: Մինասյանն էլ համապատասխան բաժնում բերում է «յայգւոջ», «ի կղզւոջ»
 (Գծ. ԻԸ 9), «ի ջորւոջ» (Գ. Թադ. Ա 33), «ի տեղւոջ միոջ» (Բ Մկ ԺԲ 18), «ի տեղւոջ ուրեք»
 (Ղուկ. ԺԱ 1), «ի տեղւոջ միում» (53) ներգոյականները: Տե՛ս նաև «ի կաղնւոջ» (Ծնն. ԺԳ
 18), «յեկեղեցւոջ» (Դտ. Ի 2, Մթ. ԺԸ 17, Գծ. Է 38, Ա. Կոր. ԺԲ 28, Գաղ. Գ 21), «ի մորեն-
 ւոջ» (Մկ. ԺԲ 26, Ղուկ. Ի 37), «ի թգենւոջ» (Ովս. Թ 10, Ղուկ. ԺԳ 7), «ի միաշաբաթւոջ»
 (Յովհ. Ի 1, 19), «յաւուր միում յերեւելւոջ» (Գծ. ԺԲ 21), «ի հայելւոջ» (Յկ. Ա 23), «ի ձի-
 թենւոջ» (Հռ. ԺԱ 24), «ի տարւոջն» (Եբր. Թ 7): Հմմտ. անկանոն հոլովվող «կին» և
 «գեղոջ» գոյականների սեռական-տրականի «կնոջ» և «գեղջ» ձևերը:

²¹⁸ Սակայն Դավիթ Անյաղթի «Վերլուծութիւն ի ներածութիւն Պոբփիւրի» տեքստում կան
 այսպիսի մեկնաբանություններ հակասող փաստեր: Երբեմն հունարեն սեռական հոլովը («բնո-
 ւոջման սեռական»՝ Գ 1բ, «ունենալ» նշանակությամբ էական բայի հետ սեռականը՝ Գ 1գ2)
 թարգմանվում է «ոչ բառացի»՝ դերանվան տրականով կամ արհեստական «ում»-ով տրակա-
 նով: Նման ձևերով է թարգմանվում նաև հունարեն κατηγορέομαι բայի սեռականով լրա-
 ցումը (Գ 3ե1): Այս ոչ բառացիությունը պայմանավորված չէ հայերենի շարահյուսական
 նորմերով և կարծես վերացնում է սեռականի և տրականի տարբերակումը:

«ստեղծեցելում» (*Փիլ. ալլաբ. 144, լին. 2.66*) – τῷ πλαστῷ (Ph. LA 2.4),
 διαπλασθέντι (Ph. QuGen. 2.66),
 «ընդունելում» (*Փիլ. ալլաբ. 168*) – ἀναλαμβάνοντι (Ph. LA 2.81),
 «կատարելում» (*Փիլ. ալլաբ. 172*) – τελείω (Ph. LA 1.94),
 «մարդոջ» (*Փիլ. ալլաբ. 143*) – τῷ ἀνθρώπῳ (Ph. LA 2.5),
 «յանմահում բնութեան» (*Փիլ. իմաստ. 36*) – ἐν ἀθάνατῳ τῇ φύσει (Ph. Abr. 11.4),
 «ներբողեցելումն» (*Պիտ. 95.20*) – τῷ ἐγκωμιασμένῳ (Aphth. 87.18),
 «ի սքանչելոջ նեղոսի» (*Փիլ. նիւ. բ 116*) – ἐν ἱεροτάτῳ Νείλῳ (Ph. Prov. 2.65.5),
 «ի կենդանոջ» (*Փիլ. լին. 1.3, Պղատ. Օր. 450*) – ἐν ζώῳ (Pl. Leg. 961d2),
 «ի սկզբան տարւոջ» (*Փիլ. լին. 2.17*),
 «յոգւոջ» (*Փիլ. լին. 4.2, 45, 105*),
 «յերեքանկիւնոջ» (*Փիլ. լին. 4.27*),
 «ի սափորոջն» (*Փիլ. լին. 4.102*),
 «ի բարւոջ մասին» (*Փիլ. լին. 4.139*),
 «յարփւոջ» (*Փիլ. լին. 4.111*),
 «ի նուաստոջ» (*Փիլ. լին. 4.195*),
 «ի կերակրի և յըմպելոջ» (*Փիլ. լին. 2.72*),
 «երեքանկիւնւոջ» (*Փիլ. լին. 4.27*),
 «ի լուսում» (*Տիմ. 15.2*),
 «երանելումն» (*Տիմ. 328.28*),
 «յաստուածում» (*Հերմ. 305.15*),
 «ի մարդոջ» (*Հերմ. 308.17*),
 «յաստուածոջ» (*Հերմ. 310.18*),
 «ի Գորգոջ» (*Թեոն 18*) – ἐν τῷ Γοργία (Theon 2.66.20),
 «յերկրորդումն... յերրորդումն... յառաջնումն... յութերորդումն... ի մետա-
 սաներորդում» (*Թեոն 22*) – ἐν τῇ δευτέρᾳ... ἐν τῇ τρίτῃ... ἐν τῇ
 δευτέρᾳ... ἐν τῇ ὀγδόῃ... ἐν τῇ ια΄ (Theon 2.68. 8-21),
 «կենցաղումս» (*Թեոն 34, Դ. Սահմ. 104.11*) – τῷ βίῳ (Theon 3.97.8, D.
 Prol. 44.13),
 «ի ներ պիտոջն» (*Թեոն 44*) – ἐν τῇ χρεία (Theon 3.101.10),
 «տեսելում» (*Թեոն 46*) – ἰδόντι (Theon 3.102.25),
 «ըմբռնեցելումս» (*Թեոն 48*) – ἀλόντι (Theon 3.102.28),
 «յոսկոջ և յարծաթում» (*Թեոն 48*) – ἐν χρυσῷ καὶ ἀργύρῳ (Theon
 3.103.12),
 «ի տրամաբանոջ» (*Թեոն 58*) – ἐν διαλόγῳ (Theon 4.73.30),
 «յառաջադասելում» (*Թեոն 62*) – τῷ προτεθέντι (Theon 4.76.1),
 «յեղանակում» (*Թեոն 70*) – τῷ τρόπῳ (Theon 5.79.12),
 «ներնթրոջ» (*Թեոն 78*) – ἐν δείπνῳ (Theon 5.83.1),
 «յոլիւսոջ» (*Թեոն 84*) – ἐν Ὀδυσσεΐᾳ (Theon 5.86.12),

«ծերունոջն և պատանոջն» (*Թեոն 122*) – πρεσβυτέρω καὶ νεωτέρω (Theon 8.115.29),

«ի պղնձում սափորոջ» (*Թեոն 168*) – χαλκέω δ' ἐν κεράμω (Theon 12.129.30),

«կենդանոջն» (*Պորփ. 141*) – τῷ ζῳῳ (Porph. 8.21),

«նենթակայում» (*Պորփ. 145, Անան. Ստոր. 22, 26*) – ἐν ὑποκειμένῳ (Porph. 13.5),

«նենթակայոջ» (*Ար. Ստոր. 109, Անան. Ստոր. 26*) – ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 2a27),

«նենթակայում... նենթակայոջ» (*Ար. Ստոր. 113*) – ἐν ὑποκειμένῳ... ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 3a9-10),

«նումք մարդոջ» (*Ար. Ստոր. 113*) – ἐν τῷ τινι ἀνθρώπῳ (Arist. Cat. 3a15),

«ըն մարդոջ» (*Ար. Ստոր. 114*) – ἐν τῷ ἀνθρώπῳ (Arist. Cat. 3a24),

«մարդոջ կամ կենդանոջ» (*Ար. Ստոր. 115*) – τῷ ἀνθρώπῳ ἢ ζῳῳ (Arist. Cat. 3b26),

«երկկանգնոջն» (*Ար. Ստոր. 115*) – τῷ διπλήχει (Arist. Cat. 3b28),

«սակաւումն... փոքումն» (*Ար. Ստոր. 116*) – τῷ ὀλίγῳ... τῷ μικρῷ (Arist. Cat. 3b31),

«եռականգնումն, մակերևութոջն» (*Ար. Ստոր. 122*) – τῷ τριπλήχει, τῇ ἐπιφανείᾳ (Arist. Cat. 5b12),

«սալմ ինչ ներհական» (*Ար. Ստոր. 122*) – τούτῳ τι ἐνάντιον (Arist. Cat. 5b32)՝ «ում» *վերջավորության սղված* «ըմ» *տարբերակը, ինչպես «մուլմ» ձևում (տե՛ս Բ 1բ),*

«առընչւոջն» (*Ար. Ստոր. 125*) – ἐν τοῖς πρὸς τι (Arist. Cat. 6b15),

«կիսւոջ... բարւոջ» (*Ար. Ստոր. 141*) – τῷ ἡμίσει... τῷ ἀγαθῷ (Arist. Cat. 11b21),

«զերեսս ունելում» (*Ար. Ստոր. 144*) – τῷ ὅψιν ἔχειν (Arist. Cat. 12b5)՝ *ս-նորոշ զերբայի տրականն է,*

«ծիւոջ և մարդում» (*Ար. Մեկն. 162*) – ἵππῳ καὶ ἀνθρώπῳ (Arist. Int. 18a19),

«ներ ձայնոջքն» (*Ար. Մեկն. 155՝ «ձայնի մեջ եղածները»*) – τὰ ἐν τῇ φωνῇ (Arist. Int. 16a3),

«ներ ձայնոջցն» (*Ար. Մեկն. 155՝ «ձայնի մեջ եղածները»*) – τῶν ἐν τῇ φωνῇ (Arist. Int. 16a4),

«յերանելում» (*Պետ. Գ.Թ. 101*), «հիւանդացելումն» (*Պետ. Գ.Թ. 104*),

«ի հոգւոջ» (*Դ. Սահմ. 96.17*) – ἐν τῇ ψυχῇ (D. Prol. 41.7),

«սեւում» (*Դ. Պորփ. 68.12, 80.35, 82.5, 25, 84.5*) – τῷ γένει (D. Porph. 133.16, 143.26, 144.8, 23, 145.12),

«ի սեւում» (*Դ. Պորփ. 136.16, 29, 138.24, 142.7, 15, 158.11, 13*) – ἐν τῷ γένει (D. Porph. 187.8, 18, 188.4, 189.12, 18, 197.4, 5),

«տեսակում» (Դ. Պորփ. 166.27, 28, 168.5, 14) – τῷ εἶδει (D. Porph. 201.8, 9, 16, 23),

«ի տեսակում» (Դ. Սաζմ. 80.17, Դ. Պորփ. 136.15, 29, 138.24, 158.14) – ἐν τῷ εἶδει (D. Prol. 34.32, D. Porph. 187.8, 18, 197.6),

«մարդում» (Պորփ. 145, Դ. Պորփ. 28.35, 166.29, 168.1, 3, 8, 10, 196.13, Դ. Վերլուծ. 44) – τῷ ἀνθρώπῳ (Porph. 12.14, D. Porph. 201.10, 11, 15, 19, 20, 215.14),

«ի մարդում» (Դ. Սաζմ. 102.30, Դ. Պորփ. 122.4, 154.13, 192.4, Կիրղ. պրպ. 111) – ἐν τῷ ἀνθρώπῳ (D. Prol. 43.35, D. Porph. 179.6, 194.29, 211.6, PG 75.1385),

«միայնում» (Պորփ. 144, Դ. Պորփ. 68.5, 31, 166.28, 29, 30, 168.1, 2, 3, 7, 8, 10, 17, 19, 21, 170.5, 21, 24, 28, 172.3, 4, 22, Դ. Ստոր. 250, Դ. Վերլուծ. 40) – μόνῳ (Porph. 12.13, D. Porph. 133.11, 134.3, 201.9, 10, 11, 14, 15, 18, 19, 20, 25, 27, 29, 202.13, 24, 26, 30, 203.3, 4, 20), μόνῃ (D. Cat. 154.10),

«ամենայնում» (Դ. Պորփ. 68.5, 166.27, 30, 168.1, 2, 4, 10, 13, 18, 21, 170.5, 21, 23, 29, 172.2, Դ. Ստոր. 250, Դ. Վերլուծ. 68, 82, 84) – παντί (D. Porph. 133.11, 201.8, 10, 11, 14, 15, 20, 23, 26, 28, 202.13, 24, 25, 203.1, 3), πάσῃ (D. Cat. 154.10),

«ամաչեցելում» (Դ. Պորփ. 22.12) – αἰσχυνομένῳ (D. Porph. 91.28),

«ի պիտանացումն» (Դ. Պորփ. 24.12) – ἐν τῷ χρησίμῳ (D. Porph. 92.30),

«ի նոյն ժամանակում» (Դ. Պորփ. 44.13) – ἐν ταῦτῳ καιρῷ (D. Porph. 112.27), բայց «ի նոյնում²¹⁹ ժամանակի» (Դ. Պորփ. 44.14) – ἐν τῷ αὐτῷ καιρῷ (D. Porph. 112.31), «ըստ նոյնում» (Դ. Ստոր. 237) – κατὰ τὸ αὐτό (D. Cat. 144.8),

«ի նիւթում» (Դ. Պորփ. 46.21) – ἐν τῇ ὕλῃ (D. Porph. 114.22),

«ի ձիւումն» (Դ. Պորփ. 54.9) – ἐν τῷ ἵππῳ (D. Porph. 118.26),

«ի յատկում» (Դ. Պորփ. 54.14) – ἐν τῷ ἰδίῳ (D. Porph. 119.4),

«յեզերեցելում տեղւոյ» (Դ. Պորփ. 96.26) – ἐν τόπῳ πεπερασμένῳ (D. Porph. 160.9),

«ի տէրումն» (Դ. Պորփ. 122.1) – ἐν τῷ δεσπότῃ (D. Porph. 179.4),

«ի տեսակում... ի սեռում» (Դ. Պորփ. 136.15) – ἐJn... τῷ εἶδει... ἐJn... τῷ γένει (D. Porph. 187.8),

«յանտեսակում նիւթում» (Դ. Պորփ. 148.12) – ἐν τῷ ἀνειδέῳ ὕλῃ (D. Porph. 191.29),

«յամենայնում» (Դ. Պորփ. 148.15, 18) – ἐν πᾶσιν (D. Porph. 191.30, 32),

«ի հրեշտակում» (Դ. Պորփ. 154.13) – ἐν ἀγγέλῳ (D. Porph. 194.29),

«յերկրորդումն» (Դ. Պորփ. 168.7) – ἐν τῷ δευτέρῳ (D. Porph. 201.17),

«նիւթում» (Դ. Պորփ. 194.18) – ὕλῃ (D. Porph. 214.4),

²¹⁹ Մինչ «նոյն» դերանվան կանոնավոր տրականն է «նմին». հմտ. մեկ այլ շինծու ձև՝ «ըստ նոյնին» (Դ. Պորփ. 40.6, 9) – κατὰ τὸ αὐτό (D. Porph. 110.1, 2), «նոյնի» (Դ. Ստոր. 230) – ταύτου (D. Cat. 139.13):

«ըստ առաւելումն և նուազումն» (*Դ. Պորփ. 198.27*) – κατὰ τὸ μᾶλλον καὶ τὸ ἥττον (*D. Porph. 218.27*),

«ի Գորգիում» (*Դ. Ստոր. 252*) – ἐν τῷ Γοργία (*D. Cat. 155.28*),

«Սոկրատում... Արիստոտելում» (*Դ. Ստոր. 214*) – Σωκράτει... Ἀριστοτέλει (*D. Cat. 122.2*),

«ըստ ժամանակականում մտածութեան» (*Դ. Ստոր. 231*) – κατὰ χρονικὴν ἔννοιαν (*D. Cat. 140.5*),

«նոյնում վարդապետում» (*Դ. Ստոր. 197*) – τῷ αὐτῷ διδασκάλῳ (*D. Cat. 109.18*),

«ըստ յոսում» (*Դ. Ստոր. 231*) – κατ' ἐλπίδα (*D. Cat. 140.7*),

«ումեքում» (*Դ. Վերլուծ. 68, 82, 84, 130*),

«իմաստնումն» (*Սահմանք 380*),

«կատարեցելում» (*Սահմանք 390*),

«ի միում ենթակայումն» (*Ջեն. 1.4.2*),

«ըստ ներկայումն» (*Ջեն. 5.2.5*),

«ի չարչարեցելումն մարմնի» (*Կիւրղ. պրպ. 112*) – ἐν τῷ πάσχοντι σώματι (*PG 75.1385*),

«ի գեկուցելումն» (*Եւտիք. 29-30.21*),

«մերկում խորհրդոյ» (*Եւտիք. 191-2*),

«ընդ ոչ երեւելումն» (*Եւտիք. 191-2.85*),

«ի կռումում» (*Եւտիք. 193-4*),

«ըստ տեսականումն» (*Եւտիք. 195-6*),

«Հայելոյ» (*Եւտիք. 195-6*),

«ի մարմնում» (*Բրս. ծն. 421-422*) – ἐν σαρκί (*PG 31.1460.28*),

«յերկաթում» (*Բրս. ծն. 421-422*) – ἐν σιδήρῳ (*PG 31.1460.35*),

«յորպիսի մարմնում» (*Բրս. ծն. 437-8*) – ἐν ποταπῇ σαρκί (*PG 31.1473.33*):

«Սեռ և «տեսակ» և մի շարք այլ գոյականներ «ո» հոլովման չեն, բայց նույնպես ստացել են «ում» վերջավորութիւնը:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ զասական թարգմանութիւնների հետ

«Որդւոյ նորա» (*Տիմ. 14.26*) ≠ «ի... որդւոյ նորա» (*Ա Յովհ. Ե 20*) – ἐν τῷ υἱῷ αὐτοῦ (*1Jn. 5:20*),

«ի ձիթենւոյ» (*Տիմ. 14.26*) ≠ «ի ձիթենիս» (*Ոսկ. Պող. 447*) – ἐν ἐλαίᾳ (*PG 62.437.26*),

«յԱստուածումն» (*Տիմ. 304*) ≠ «յԱստուած» (*Ա Յովհ. Դ 20*) – ἐν τῷ θεῷ (*1Jn. 4:20*),

«բոլորում տան» (*Տիմ. 55*) ≠ «յամենայն տան» – (*Եբր. Գ 5*) – ἐν τῷ ὅλῳ τῷ ὅκῳ (*Hebr. 3:5*),

«ի ճշմարտում Որդւոյ» (*Տիմ. 305*) ≠ «ի ճշմարտի Որդւոյ» – (*Ա Յովհ. Ե 20*) – ἐν τῷ ἀληθινῷ, ἐν τῷ υἱῷ (*1Jn. 5:20*),

«յաւուրն վեցերորդում» (*Փիլ. ալլաբ. 105*) ≠ «յաւուրն վեցերորդի» (*Ծնն. Բ 2*) – ἐν τῇ ἡμέρᾳ τῇ ἕκτῃ (Ph. LA 1.2 = Gen. 2:2),

«յաւուրն եօթներորդում» (*Փիլ. ալլաբ. 109*) ≠ «յաւուրն եօթներորդի» (*Ծնն. Բ 2*) – τῇ ἡμέρᾳ τῇ ἑβδόμῃ (Ph. LA 1.16 = Gen. 2:2),

«երկրորդում» (*Փիլ. ալլաբ. 126*) ≠ «երկրորդի» (*Ծնն. Բ 10-14*) – τῷ δευτέρῳ (Ph. LA 1.63 = Gen. 2:10-14),

«մարդոջ» (*Փիլ. ալլաբ. 157*) ≠ «առն միում» (*Բ Օրին. ԻԱ 15-16*) – ἀνθρώπου (Ph. LA 2.48 = Deut. 21:15-16),

«ի կաղնուջ... ի ջերմոջ» (*Փիլ. լին. 4.1*) ≠ «առ կաղնեաւ... ի միջաւելի» (*Ծնն. ԺԸ 1*) – πρὸς τῇ δρυσί... μεσημβρίας (Gen. 18:1):

Այսպիսով, հունարեան թարգմանություններում ևս խնդրո առարկա վերջավորությունները հաճախ մասնակցում են եզակի ներգոյականը կազմելու համար, սակայն առանց նախդրի կամ ուրիշ նախդրով տրականի դեպքերն էլ քիչ չեն՝ 106-ից քառասունչորսը:

2բ եզակի սեռականի «ը» վերջավորությունը

Հունարեան դպրոցի երկրորդ խմբի թարգմանություններում «ո» հոլովման գոյականների, անորոշ և անցյալ դերբայների վերջավորությանը երբեմն կցվում էր «ը»՝ արդյունքում ունենք «ոյը» վերջավորություն: Այդ վերջավորությունն առաջին անգամ մատնացույց է արել Հր. Աճառյանը²²⁰: Վերջավորության «ը»-ն հավանաբար փոխառված է դերանվանական հոլովումից, հմմտ. «այսը» («այս»-ի սեռականն է), «սորա» («սա»-ի սեռականն է), «սուրին» («սոյն»-ի սեռականն է), «իրիք» («իմն»/«ինչ»-ի սեռականն է), «ուրումն» («ոմն»-ի սեռականն է), «ուրուք» («ոք»-ի սեռականն է), «ոյը» («ո»/«ով»-ի սեռականն է), «էր» («զի»/«զինչ»-ի սեռականն է): Օրինակներն ավանդված են Թեոնի ճարտասանական երկում և Պորփյուրի «Ներածության» մեջ:

«ասացելոյը» (*Թեոն 46*) – λέγοντος (Theon 3.102.3),

«կախեցելոյը» (*Թեոն 46*) – κρεμασθέντος (Theon 3.102.16),

«հարցելոյը» (*Թեոն 46*) – πείσαντος (Theon 3.102.19),

«ելոյը» (*Պորփ. 133*) – ὄντος (Porph. 1.3),

«այլոյը» (*Պորփ. 140*) – ἄλλου (Porph. 8.2),

«եռակի սեռոյը ասացելոյը» (*Պորփ. 134*) – Τριχῶς οὖν τοῦ γένους λεγομένου (Porph. 1.3),

«զմիոյը միայնոյը ստորոգեցելոյը» (*Պորփ. 135*) – Τῶν μὲν οὖν καθ' ἐνὸς κατηγορουμένων (Porph. 2.22-23),

²²⁰ ԱՃԱՌՅԱՆ 1951, 155. Աճառյանը որպես սեռականի վերջավորություն է բնորոշում նաև «ոջ»-ը, սակայն նախորդ ենթադրություն մեր բերած բոլոր օրինակներում այն հանդես է գալիս հունարեն տրականի դիմաց:

«մարդ տեսակ ելոյր Սոկրատոյր և Պլատոնոյր» (*Պորփ. 135*) – ἄνθρωπος εἶδος ὢν Σωκράτους καὶ Πλάτωνος (Porph. 2.26),
 «ծիւոյր» (*Պորփ. 135, 139*) – τοῦ ἵππου (Porph. 2.28, 7.5),
 «յատկոյրն» (*Պորփ. 135*) – τοῦ ἰδίου (Porph. 3.1),
 «միւոյր տեսակոյր» (*Պորփ. 135*) – ἐνὸς εἶδους (Porph. 3.4),
 «երկաքանչիւրոյր» (*Պորփ. 136*) – ἐκατέρου (Porph. 4.8),
 «բացատուեցելոյր սեռոյր և տեսակոյր» (*Պորփ. 139*) – ἀποδοδεομένου τοῦ γένους καὶ τοῦ εἶδους (Porph. 6.24),
 «սեռոյր եզոյր ելոյր» (*Պորփ. 139*) – τοῦ γένους ἐνὸς ὄντος (Porph. 7.1),
 «ի վերայ միւոյր միայնոյր զմասնայց» (*Պորփ. 140*) – ἐφ' ἐνὸς μόνου τῶν κατὰ μέρος (Porph. 7.19),
 «մանկան ելոյր և այրացելոյր և ներգործելոյր և դադարեցելոյր» (*Պորփ. 141*) – Παιδὸς τε ὄντος καὶ ἀνδρωθέντος καὶ ἐνεργοῦντος ἢ παυσάμενου (Porph. 8.11-12),
 «տեսակոյր» (*Պորփ. 155*) – τοῦ εἶδους (Porph. 21.9),
 «ծարտասանի ելոյր» (*Պղատ. Մին. 473*) – σοφιστοῦ ὄντος (Pl. Min. 319c6):
 «Սեռ և «տեսակ» գոյականները «ի» հոլովման են, բայց նույնպես ստացել են «ոյր» վերջավորութիւնը:
 «սոցայցը» (*Պորփ. 134*) – τούτων (Porph. 2.11) և «մարդոցը» (*Պորփ. 135, 140*) – ἀνθρώπων (Porph. 3.4, 7.26) օրինակներում հունարեն հոգնակի սեռականի դիմաց ունենք հոգնակի սեռական ձևեր՝ լրացուցիչ «ը» վերջավորութիւնը²²¹:

2գ Հոգնակի սեռական-տրականի «ց» վերջավորութիւնը

Փաստորեն «ց» վերջավորութիւնը կցվում է բառի ուղիղ ձևին՝ առանց հոլովիչի, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հոլովումների պատկանող բառերի դեպքում. հետևաբար կանոնավոր հոլովման հնչյունափոխութիւնն էլ տեղի չի ունենում, քանի որ բառավերջին վանկ չի ավելանում: Այս երևույթը համեմատելի է դասական լեզվում «ջուր» գոյականի հոգնակի սեռական-տրականի կանոնավոր «ջրոց» ձևին զուգահեռ կիրառվող «ջուրց» ձևի հետ.

«աղբիւրցն» (*Փիլ. լին. 1.3 փխ. «աղբերաց»*) – τῶν πηγῶν (Ph. QuGen. 1.3),

«ակամայցն» (*Փիլ. լին. 3.52 փխ. «ակամայից»*) – τῶν ἀκουσίων, «յակամայցն» (*Փիլ. լին. 4.73*) – ἀκουσίων (Ph. QuGen. 3.52), «ի վերայ ակամայց» (*Թեոն 126 փխ. «ակամայից»*) – ἐπὶ τοῖς ἀκουσίοις (Theon 8. 117.9),

²²¹ Ռ. Սգարբին ենթադրում է, որ «մարդոցը» ձևը կարելի էր բացատրել որպես «մարդոյր» ձևի աղավաղված տարբերակ, SGARBI 1972, 392:

«յայսքանց» (*Թեոն 128 փխ. «յայսքանեաց»*) – ἐκ τοσούτων (Theon 8.118.1),
 «աստուածազանազոյնց» (*Փիլ. ալլաբ. 106 փխ. «աստուածազանազունից»*) – θειοτέρων (Ph. LA 1.5),
 «աստուածայինց» (*Փիլ. ալլաբ. 126, Եւտիբ. 191-2.85 փխ. «աստուածայինց»*) – θείων (Ph. LA 1.61),
 «եղջերց» (*Նիւս. կազմ. 65*) – κεράτων (PG 44.140.53),
 «ենթակայց» (*Փիլ. ալլաբ. 113 փխ. «ենթակայից»*) – τῶν ὑποκειμένων (Ph. LA 1.25),
 «երկնայինց» (*Բրս. քակեցից 3.138, Փիլ. ել. 1.23, Դիոն. երկ. քՀ. 2.14, Բրս. ծն. 433-4 փխ. «երկրայինց»*) – ἐπουρανίου (Bas. destruam 3.10), τῶν οὐρανίων (Dion. cael. hier. 1.3, PG 31.1469.35),
 «Հողածինց» (*Փիլ. ել. 2.55*) – γηγενῶν (Ph. QuEx. 2.55),
 «Հակակայց» (*Ար. Մեկն. 167, 178, Դ. Վերլուծ. 84 փխ. «Հակակայից»*) – τῶν ἀντικειμένων (Arist. Int. 19b1, 23a5),
 «առաջինց» (*Պորփ. 137*) – τῶν πρώτων (Porph. 6.10),
 «մարդկայինց» (*Դ. Ստոր. 201*) – τῶν ἀνθρωπίνων (D. Cat. 112.20),
 «Հոմանունց» (*Դ. Ստոր. 231*) – τῶν ὁμωνύμων (D. Cat. 139.30),
 «յարանունց» (*Դ. Ստոր. 234*) – τῶν παρωνύμων (D. Cat. 142.16),
 «միայնց» (*Պորփ. 147 փխ. «միայնոց»*) – μόνων (Porph. 14.17),
 «պատուէրց» (*Փիլ. Սամփս. 555*),
 «սայց» (*Ար. Ստոր. 121, 123, Մեկն. 158, 167 փխ. «սոցա»*) – τούτων (Arist. Cat. 5b4, 6a16, Int. 17a21, 20a1),
 «ամենայնց» (*Անան. Ստոր.*):

2դ եզակի բացառականի «ուստ» վերջավորութիւնը

Մակաբայակերտ «ուստ» վերջածանցը հանդես է գալիս եզակի բացառականի վերջավորութեան դերում.

«յերկնուստ» (*Նազ. ճ.4.19, Փիլ. լին. 2.33*) – ἐξ οὐρανοῦ (PG 35.548.20),
 «ի խորուստ» (*Նազ. ճ.4.30*) – ἐκ βάθους (PG 35.556.44),
 «յաստուածուստ» (*Նիւս. սքանչ.²²²*) – ἐκ θεοῦ (PG 46.912.56),
 «յաներեւութուստ» (*Փիլ. ել. 2.24*) – ἐξ ἀφανοῦς (Ph. QuEx. 2.24),
 «յաստուածուստ» (*Նոննոս II.12.20*) – ἐκ θεοῦ (Nonnos 43.8.8),
 «յետուստ» (*Նոննոս II.8.10*) – ὁπίσθεν (Nonnos 43.4.4),
 «ի դրուստ» (*Նեմես. 10*) – θύραθεν (Nemes. 1.18),
 «յերկնուստ» (*Բրս. ծն. 437-8*) – ἐξ οὐρανῶν (PG 31.1473.37):

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ դասական թարգմանութիւնների հետ

²²² Վկայակոչումը քաղած է ՆԲՀԼ-ից, տե՛ս ծ. 443:

«յերկնուստ» (*Տիմ. 298, 299*) ≠ «յերկնից» (*Յովհ. Ա 32*) – ἐκ τοῦ οὐρανοῦ (Jn. 3:13),

«ի ներքուստ և արտաքուստ» (*Փիլ. ել. 2.54*) ≠ «ներքոյ և արտաքոյ» (*Ել. ԻԵ 11*) – ἔξωθεν καὶ ἔσωθεν (Ex. 25:11),

«արտաքուստ և ներքուստ» (*Կիւրղ. պրպ. 105*) ≠ «ներքոյ և արտաքոյ» (*Ել. ԻԵ 11*) – τῶν αὐτοῦ παθῶν (PG 75.1381 = Ex. 25:11):

2ե Կոչական «ե» վերջավորությամբ

Հունարենում առաջին և երկրորդ հոլովման արական սեռի գոյականները եզակի թվում ունենին հատուկ կոչական հոլովի ձև՝ երկրորդ հոլովման բառերը ուղղականի օՏ վերջավորության փոխարեն ստանում էին ϵ վերջավորությունը, իսկ առաջին հոլովման պատկանողները՝ $\alpha\varsigma$ -ի փոխարեն՝ α :

Արդեն դասական թարգմանություններում մի քանի հատուկ անունների կոչականի ձևեր տառադարձվել են հայերեն: Մ. Մինասյանը բերում է Նոր Կտակարանում հանդիպող հատուկ անձնանունների «Հունարենաձև եզակի կոչականի» օրինակներ²²³.

«Ագրիպպա՛» (*Գժ. ԻԶ 2, 19, 27*) – Ἀγρίππα (Acts 26:2, 19, 27),

«Զակքէ՛» (*Ղկ. ԺԹ 5*) – Ζακχαῖς (Lk. 19:5),

«Կոռնելիէ՛» (*Գժ. Ժ 3, 31*) – Κορνήλιε (Acts 10:3, 31),

«Ղազարէ՛» (*ՅՀ. ԺԱ 43*) – Λάζαρε (John 1:43),

«Պաւղէ՛» (*Գժ. ԻԶ 24, ԻԷ 24*) – Παῦλε (Acts 26:25, 27:24),

«Պետրէ՛» (*Ղկ. ԻԲ 34*) – Πέτρε (Lk. 22:34),

«Փիլիպպէ՛» (*ՅՀ. ԺԴ 9*) – Φίλιππε (John 14:9),

«Տիմոթէէ՛» (*Ա Տիմ. Զ 20*) – Τιμόθεε (1Tim. 6:20):

Հունաբան թարգմանություններում մենք արձանագրել ենք հետևյալ օրինակները.

«Աղեքսանդրէ՛» (*Աղեքս. 372*) – Ἀλέξανδρε (Alex. β 1.16.13),

«Նիկոլայէ՛» (*Աղեքս. 373*) – Νικόλαε (Alex. β 1.18.22),

«Անտիգոնէ՛» (*Աղեքս. 429*) – Ἀντίγονε (Alex. β 3.19.32),

«Նժդ Թեոդորէ՛» (*Նիւս. Կ. Մ. 214*) – ὁ Θεόδωρε (PG 46.741.44),

«Պատրոկղէ՛» (*Թրակ. 11.22*) – Πάτροκλε (Thrax 21.3),

«Քրիստաւորիէ՛» (*Պորփ. 133, Դ. Պորփ. 32.2, 34.3*) – Χρυσασόριε (Porph. 1.3, D. Porph. 101.25),

«Նժդ Պորփիրիէ՛» (*Դ. Պորփ. 40.21*) – ὁ Πορφύριε (D. Porph. 110.22),

«Նժդ Աղեքսանդրէ՛» (*Դ. Ստոր. 204*) – ὁ Ἀλέξανδρε (D. Cat. 115.6),

«Պորփիրիէ՛» (*Դ. Ստոր. 268*) – Πορφύριε (D. Cat. 173.35),

«Նժդ Մելիտէ... Սոկրատէ՛» (*Եւթփռ. 16*) – ὁ Μέλητε... ὁ Σώκρατες (Pl. Euthph. 5a9, 5b8),

²²³ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 15 (22):

«ո՛վ Կլինիա» (Պղատ. Օր. 20, 77, 448) – ὦ Κλεινία (Pl. Leg. 635d1, 677d7, 960c4),

«Տիմոթեես» (Դիոն. խորհ. ածաբ. 224.15) – Τιμόθεε (Dion. myst. theol. 1.1),

«Սոսիպատրէ» (Դիոն. թղթ. 234.7) – Σώπατρε (Dion. epist. 6.1):

2դ Այլ անկանոն հոլովական ձևեր

1) Արիստոտելի թարգմանություններում կիրառված «նոջա» և «սոջա» արհեստական հոգնակի տրականների համար դժվար է բացատրություն գտնել. թերևս նպատակը հոգնակի սեռականից տարբերակելն է.

«ներ նոջա» (Ար. Մեկն. 156) – ἐν ἐκείνοις (Arist. Int. 16a24՝ «սրանց մեջ»),

«ներ սոջա» (Ար. Մեկն. 156, 162) – ἐν τούτοις (Arist. Int. 16a25՝ «սրանց մեջ»), ἐν ταύταις (Arist. Int. 18a26՝ «սրանց (իգական) մեջ»):

Գուցե այսպիսի ձևեր կառուցելու համար հիմք է հանդիսացել եզակի տրականի «ոջ» վերջավորությունը:

2) Փորձեր են ձեռնարկվել հաղթահարելու «մարդ» գոյականի հոլովման անկանոնությունը՝

«մարդք» (Եւտիք. 19-20, 21-22.9), «մարդոցն» (Պորփ. 135) – ἀνθρώπων (Porph. 3.4), «մարդոցը» (Պորփ. 140) – τῶν... ἀνθρώπων (Porph. 7.26):

3) Անկանոնություն է գոյականի հոլովիչի փոփոխությունը՝

«ծննդից» (Զեն. 5.3.9)՝ փխ. «ծննդոց»:

4) Զհոլովվող «իւրաքանչիւր» դերանունը հոլովվել է՝

«իւրաքանչիւրում» (Պետ. Գ.Թ. 101),

«ըստ իւրաքանչիւրումն» (Նիւս. Կ. Մ. 214) – καθ' ἑκαστον (PG 46.741.34),

«ըստ իւրաքանչիւրն» (Ար. Մեկն. 160) – τῶν καθ' ἑκαστον (Arist. Int. 17b1),

«յիւրաքանչիւրում ի բանի» (Թեոն 24) – ἐν ἐκάστῳ λόγῳ (Theon 2.69.14),

«իւրաքանչիւրում» (Թեոն 56) – ἐκάστου (Theon 4.73.5՝ եզակի սեռական),

«մակ ըստ իւրաքանչիւրն» (Ար. Մեկն. 162) – ἐπὶ τῶν καθ' ἑκαστα (Arist. Int. 18a30),

«ըստ իւրաքանչիւրք» (Պորփ. 139) – καθ' ἑκαστα (Porph. 6.20),

«իւրաքանչիւրոցն» (Պորփ. 134), «իւրաքանչիւրոյ» (Ար. Մեկն. 181, Դ. Պորփ. 62.10) – ἐκάστου (Arist. Int. 23b17, Porph. 1.23-24, D. Porph. 127.21),

«իւրաքանչիւրիցն» (Պորփ. 150) – ἐκάστου (Porph. 17.16),

«իւրաքանչիւրում երկրի» (Պղատ. Մին. 470) – ἐκάστῃ γῇ (Pl. Min. 317d5),

«իւրաքանչիւրում աւուր» (Պղատ. Սոկր. 68) – ἐκάστης ἡμέρας (Pl. Apol. 38a3),

«Իւրաքանչիւրոց հետեւել» (*Պղատ. Օր. 446*) – ἐκάστοις ἔπεσθαι (Pl. Leg. 959b1),
 «զիւրաքանչիւրսն» (*Դ. Պորփ. 74.25*) – τὴν καθ' ἑκάστα (D. Porph. 138.25),
 «յիւրաքանչիւրում տեսակի» (*Դ. Պորփ. 174.30*) – ἐν ἐκάστῳ εἶδει (D. Porph. 204.20),
 «Իւրաքանչիւրոյ ուրուք» (*Դ. Ստոր. 251*), «Իւրաքանչիւրոյ ումեք» (*Դ. Ստոր. 251*) – ἐκάστῳ (D. Cat. 154.27, 155.4),
 «Իւրաքանչիւրոյ» (*Դ. Պորփ. 60.1*) – ἐκάστου (D. Porph. 123.30),
 «Իւրաքանչիւրովքն» (*Զեն. 5.2.6*), «յիւրաքանչիւրսն» (*Զեն. 5.2.7, 9, 11*),
 «յիւրաքանչիւրոցն» (*Զեն. 5.3.6*),
 «ըստ իւրաքանչիւրցն» (*Եւտիք. 17-18.2*) – *τῶν καθ' ἑκάστον, «յաղապս
 իւրաքանչիւրոցն» (*Եւտիք. 25-26.15*) – *περὶ ἐκάστων:

3 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐ

3ա «ն/նի/ըն» նախդիրը հայցական և տրական հոլովների հետ

Այս տարբերակները հանդես են գալիս «ի» նախդրի փոխարեն՝ եզակի տրականի և հոգնակի հայցականի հետ, որպես հունարեն εἰς, ἐν, ἐπὶ նախդիրների համարժեք.

«նէնն, յէղն, նիթն, ի գէնն, նէճն, յակն... նին, յոյչն, նուհին, նոցն» (*Թրակ. 14*) – ὁ εἰς δης, ὁ εἰς ὦν, ὁ εἰς αδιος (Thrax 26.2),

«նիգոյն, ի գին» (*Թրակ. 15*՝ «գոյն-ով, գին-ով ավարտվող»՝ խոսքը բաղդատականների վերջավորությունների մասին է) – εἰς τερος... εἰς ὦν (Thrax 27.6),

«ըն բաղդատութեան» (*Թրակ. 15.14*) – ἐν συγκρίσει (Thrax 28.4),

«նեղն, նելին» (*Թրակ. 15*՝ «եղ-ով, ելի- ով ավարտվող»՝ գերադրականի վերջավորություններ) – εἰς τατος... εἰς τος (Thrax 28.4-5),

«ըն բարդութեան» (*Թրակ. 30.9*) – ἐν συνθέσει (Thrax 70.2),

«նանգին» (*Թրակ. 38.21*) – ἐπὶ τοῦ τέλους (Thrax 109.1), հմտ. «յանգին» (*Թրակ. 39.14*) – ἐπὶ τοῦ τέλους (Thrax 110.1),

«նենթակայում» (*Պորփ. 145*) – ἐν ὑποκειμένῳ (Porph. 13.5),

«ներկոցունց բանս» (*Պորփ. 136*) – ἐν τοῖς ἀμφοτέρων λόγοις (Porph. 4.8՝ «երկուսի խոսքերի մեջ»),

«նենթակայում» (*Ար. Ստոր. 108*) – ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 1a21, 23),

«նիմեքըն» (*Ար. Ստոր. 108, Անան. Ստոր. 12*) – ἐν τινι (Arist. Cat. 1a24),

«նանձին» (*Ար. Ստոր. 108, Անան. Ստոր. 26*) – ἐν... ψυχῇ (Arist. Cat. 1a26),

«նենթակայոջ» (*Ար. Ստոր. 109, 111*) – ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 2a13, 28),

«ըն տեսակոջ է ըն մարդոջ» (*Ար. Ստոր. 109*) – ἐν εἶδει μὲν ὑπάρχει τῷ ἀνθρώπῳ (*Arist. Cat. 2a16*),

«ըն մարմնի» (*Ար. Ստոր. 111*) – ἐν σώματι (*Arist. Cat. 2b3*),

«ըն սոսայ» (*Ար. Ստոր. 112*) – ἐν τούτοις (*Arist. Cat. 2b17*),

«ըն մակարդակին» (*Ար. Ստոր. 120*) – ἐν ἐπιπέδῳ (*Arist. Cat. 5a19*), «նամենեսին» (*Ար. Մեկն. 158*) – ἐν ἀπάσι (*Arist. Int. 17a3*),

«նամանոջ» (*Ար. Ստոր. 154*) – ἐν τῷ ἀγγείῳ (*Arist. Cat. 15b27*),

«ըն տեսակի... ըն սեռի... ըն բոլորի... ըն մասունս» (*Անան. Ստոր. 12*),

«նումեքն նորում» (*Անան. Ստոր. 48*),

«ըն խորհրդում» (*Անան. Մեկն. 492*),

«նարտաբերութեան» (*Անան. Մեկն. 492*),

«ըն բոլորումն» (*Անան. Մեկն. 498*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«ներկինս» (*Տիմ. 48*) ≠ «յերկինս» (*Յովբ. ԺԶ 20*) – ἐν οὐρανοῖς (*Job 16:20*),

«նաուուրս» (*Տիմ. 182*) ≠ «յաուուրս» (*Եբր. Ե 7*) – ἐν ταῖς ἡμέραις (*Hebr. 5:7*),

«ըմեզ» (*Տիմ. 54*) ≠ «ի մեզ» (*Յովհ. Ա 14*) – ἐν ἡμῖν (*Jn. 1:14*):

Յբ «ն/ըն» նախդիրը բացառական հոլովի հետ

Դարձյալ «ի» նախդրի փոխարեն՝ որպես հոլնարեն՝ ἀπό **և** ἐκ **նախդիրների համարժեք.**

«ներկուց ըն պակասեցելոց» (*Թրակ. 16.16*) – ἐκ δύο ἀπολείπόντων (*Thrax 30.2*), **հմմտ.** «յերկուց աւարտեցելոց» (*Թրակ. 16.14-15*) – ἐκ δύο τελείων (*Thrax 30.1*),

«ըն պակասեցելոյ և նաւարտեցելոյ» (*Թրակ. 16.18-19*) – ἐξ ἀπολείποντος καὶ τελείου (*Thrax 30.3*),

«նոզույ և ի մարմնոյ և նարտաքնոցն» (*Թրակ. 18.19-20*) – ἀπὸ ψυχῆς, ἀπὸ σώματος, ἀπὸ τῶν ἐκτός (*Thrax 30.4-5*),

«նիմեքէ» (*Թրակ. 19.14*) – ἀπὸ τινος (*Thrax 37.1*),

«ներկուց» (*Թրակ. 20.26, 43.11*) – ἐκ δύο (*Thrax 41.2*),

«նորմէ» (*Թրակ. 23.21*) – ἀφ' οὗ (*Thrax 51.4*),

«նեզականէն» (*Թրակ. 29.19*) – ἀπὸ... ἐνικῶν (*Thrax 69.1*),

«նիմոյ» (*Թրակ. 29.20*) – ἀπὸ τοῦ ἐμοῦ (*Thrax 69.1-2*),

«ներկականաց» (*Թրակ. 29.20*) – ἀπὸ... δυϊκῶν (*Thrax 69.2*),

«ներկայնէ և ներկուց աղաւտաց» (*Թրակ. 44.1-2*) – ἐκ μακρᾶς καὶ δύο βραχείων (*Thrax 118.3-4*),

«ըն տեղոյր» (*Թրակ. 32.9*) – ἐκ τόπου (*Thrax 76.3*),

«նառասպելէն» (*Թեոն 14*) – τοῦ μύθου (*Theon 64.31*):

Ակնհայտ է, որ «ն/նի/ըն» շարքում «ն» և «ըն» (Տիմոթեոս Կուզի մոտ՝ «ն» և «նը») տարբերակները զուտ հնչյունական են՝ առաջինը հանդես է գալիս ձայնավորից, երկրորդը՝ բաղաձայնից առաջ. դրանց ծագումը կարելի է բացատրել որպես հունարեն *ἐν* նախդրի փոխառություն փորձ²²⁴: Միայն մեկ անգամ վկայված «նի» տարբերակը («նիգոյն») հավանաբար «ն»-ի և «ի»-ի զուգակցումն է:

Տեղի կամ ուղղության իմաստն խնդրո առարկա նախդրի համար՝ եզակի տրականի և հոգնակի հայցականի հետ, թվում է առաջնային, իսկ անջատման իմաստը բացառականի հետ նույն նախդրով արտահայտելու գաղափարը հավանաբար հուշել է «ի» նախդրի նույնպիսի բազմիմաստությունը:

3գ Այլ արհեստական նախդիրներ

Արհեստական նախդիրներից «ապ», «արտ», «բաց», «գեր», «մակ», «յար», «նախ», «ներ» և «ստոր»-ը ձևով նույնանում են համապատասխան նախածանցների հետ, ինչպես դա սովորական է հունարենի համար (հմտ. ὑπέρ — υπέρ, παρά — παρα, πρό — προ, ἐν — ἐν, κατά — κατα զույգերը և մյուս նախդիր-նախածանցները): «ի ներ»-ի մեջ զուգակցվում են հայերեն «ի» և արհեստական «ներ» նախդիրները, «ներում»-ն ու «ի ներում»-ն ունի նաև տրականի «ում» վերջավորությունը, քանի որ համապատասխան հունարեն *ἐν* նախդիրը պահանջում է տրական հոլով:

Դասական «առանց»-ի փոխարեն կիրառված «թանց»-ը (Տիմոթեոս) կարող է դիտվել որպես նույնիմաստ «թարց»-ի հնչյունական տարբերակ: Վերջինս հիշեցնում է «ապաթարց» բառի արմատը²²⁵, սակայն իմաստային կապ նրանց միջև դժվար է նշմարել:

- «ապ ումեքէ» (Ար. Մեկն. 159) — ἀπό τινος (Arist. Int. 17a26),
- «ապ ըստբոլորէցն» (Ար. Մեկն. 161) — ἀπο τῶν καθόλου (Arist. Int. 18a1),
- «ապ այլոյ» (Ար. Մեկն. 161) — ἀπ' ἄλλου (Arist. Int. 18a3),
- «արտ յորոց» (Թեոն 36) — ἐξ ὧν (Theon 3.97.23),
- «արտասայց» (Ար. Ստոր. 112) — ἐκ τούτων (Arist. Cat. 2b21),
- «յարտանունէ և ի բայէ» (Ար. Մեկն. 167) — ἐξ ὀνόματος καὶ ῥήματος (Arist. Int. 19b11),
- «նարտաբայէ» (Ար. Մեկն. 158) — ἐκ ῥήματος (Arist. Int. 17a10),
- «արտակայցն» (Ար. Մեկն. 167) — ἐκ τῶν κειμένων (Arist. Int. 19b14),

²²⁴ Ջ. Գրեպինը մի հոդված է նվիրել ապացուցելուն, որ դա իսկապես այդպես է, և որ Ագուլիսի բարբառում Հր. Աճառյանի նշած մեկ դեպքը բավարար չէ ապացուցելու, որ տեղի իմաստով «ն» նախդիրը բնիկ հայկական երևույթ է, տե՛ս GREPPIN 1984, 307-314:

²²⁵ Հմտ. Հր. Աճառյանի՝ «ապաթարց» բառի բացատրությունը «ապադարձ»-ից (ἀπόστροφος-ի թարգմանությունն է, Թրակ. 38.6, 15, 41.22). տե՛ս ԱՃԱՌՅԱՆ 1971-1979, Գ, 445, «ներբող» բառահոդվածի տակ:

«արտաստորագրիցից» (*Ար. Մեկն. 167*) – ἐκ τῶν ὑπο γεγραμμένων (Arist. Int. 19b26),

«բաց սայց» (*Ար. Ստոր. 123*) – ἀπὸ τούτων (Arist. Cat. 6a16),

«գեր զոր ոչինչ եղիցի» (*Պորփ. 138*) – ὑπὲρ ὃ οὐκ ἄν ἕη ἄλλο (Porph. 5.18),

«գեր զամենայն» (*Եւտիք. 37-38*),

«թանց ճշմարտի աստուածութեանն» (*Տիմ. 136.14*),

«թարց դիմաց» (*Թրակ. 26.27*) – δίχα προσώπων (Thrax 60.4),

«թարց պատերազմողացն» (*Բրս. արբեց. 7.104*) – ἄνευ πολέμων (PG 31.437.24),

«մակ ոմանց» (*Ար. Ստոր. 111*) – ἐπ' ἐνίων (Arist. Cat. 2a29),

«մակ այլոցն» (*Ար. Ստոր. 113*) – ἐπὶ τῶν ἄλλων (Arist. Cat. 3a6),

«մակ առաջնոց գոյացութեանցն» (*Ար. Ստոր. 115*) – ἐπὶ τῶν πρώτων οὐσιῶν (Arist. Cat. 3b10),

«մակ այլոյ ուրուք» (*Պորփ. 140*) – ἐπ' ἄλλου τινός (Porph. 7.23-24),

«մակ էակաց և եղից» (*Ար. Մեկն. 162*) – ἐπὶ τῶν ὄντων καὶ γενομένων (Arist. Int. 18a28),

«մակ ըստ բոլորէցն» (*Ար. Մեկն. 162*) – ἐπὶ τῶν καθόλου (Arist. Int. 18a29),

«մակ ըստ իւրաքանչիւրցն» (*Ար. Մեկն. 162*) – ἐπὶ τῶν καθ' ἑκάστα (Arist. Int. 18a30),

«մակագոյացութեանցն» (*Ար. Ստոր. 117*) – ἐπὶ τῶν οὐσιῶν (Arist. Cat. 4a30),

«մակ այլոցն» (*Անան. Ստոր. 16*),

«յար յանուն» (*Թրակ. 15.15-16*) – παρ' ὄνομα (Thrax 29.1),

«նախ ելով <վանգիւ>» (*Թրակ. 39.3-4*) – πρὸ μιᾶς συλλαβῆς (Thrax 109.2-3),

«նախ երկուք <վանգիւք>» (*Թրակ. 39.6-7*) – πρὸ δύο συλλαβῶν (Thrax 109.4),

«ներ արհեստիս» (*Թրակ. 2.2*) – ἐν τῇ τέχνῃ (Thrax 6.3),

«ներ տեղւոջ» (*Թրակ. 32.8*) – ἐν τόπῳ (Thrax 76.2-3),

«ներ տան» (*Թրակ. 32.9*) – οἴκοι (Thrax 76.3),

«ներ թուումն» (*Պորփ. 139*) – ἐν ἀριθμῷ (Porph. 6.12),

«ներ նոջա» (*Ար. Մեկն. 156*) – ἐν ἐκείνοις (Arist. Int. 16a24՝ «*նրանց մեջ*»),

«ներ սոջա» (*Ար. Մեկն. 156, 162*) – ἐν τούτοις (Arist. Int. 16a25՝ «*սրանց մեջ*»), ἐν ταύταις (Arist. Int. 18a26, «*սրանց (իգական) մեջ*»):

«ներ պարզս անուանս» (*Ար. Մեկն. 156*) – ἐν τοῖς ἀπλοῖς ὀνόμασιν (Arist. Int. 16a23),

«ներ քանում ժամանակի» (*Ար. Մեկն. 381*) – ἐν ὅποσῳ χρόνῳ (Arist. Int. 19a1),

«ներ Տեղականս» (*Ար. Մեկն. 387*) – ἐν τοῖς Τοπικοῖς (Arist. Int. 20b26),

«ներ թուումն» (*Պորփ. 139*) – ἐν ἀριθμῷ (Porph. 6.10),
 «ներ ամենեսին» (*Թեոն 54*) – ἐν πάσαις (Theon 3.105.23),
 «ներ առասպելսն» (*Թեոն 58*) – ἐν τοῖς μύθοις (Theon 4.74.11),
 «ներ լսելութեան» (*Թեոն 179*) – *ἐν τῷ ἀκροάσει,
 «ներում յաղագս վերձանութեան» (*Թեոն 179*) – *ἐν τῷ περὶ ἀναγνώ-
 σεως,
 «ներում որ ըստ Քրիստոփորոսայն» (*Թեոն 184*) – *ἐν τῷ περὶ Κτεσιφόν-
 τως,
 «ներում յաղագս պսակին» (*Թեոն 184*) – *ἐν τῷ περὶ στεφάνου,
 «ներում տեսական» (*Ար. Ստոր. 109*) – ἐν τοῖς εἰδεσιν (Arist. Cat. 2a15),
 «ստոր բայի» (*Թրակ. 31.3*) – κατὰ ῥήματος (Thrax. 72.4):
 «Արտասայց», «արտակայցն», «արտաստորագրիցելոց» և «մակագոյացու-
 թեանցն» կազմությունները, որոնցում «արտ» և «մակ» նախդիրները միացած
 են հիմքին հոգակապի միջոցով, փաստորեն նախածանցավոր բառերի տալ-
 վորություն են թողնում. սակայն նախդրավոր կապակցությունների ցուցակի
 մեջ դրանք ընդգրկելու երկու պատճառ կա՝ դրանք հունարեն նախդրավոր
 կապակցությունների համարժեք են, և դրանցում թեկուզ և հոգակապով միա-
 ցած նախդիրն հետևում են սեռական հոլովածներ՝ նախդրի հետ բացառակա-
 նի իմաստ տալով, «յարտանուանէ» և «նարտաբայէ» կազմություններում՝
 բացառականի ձևեր, իսկ «արտ»-ին նախորդող «ի» և նրան փոխարինող «ն»
 նախդիրը լրացուցիչ կերպով ընդգծում են բացառականի իմաստը: Նույնը
 կարելի է ասել վերը հիշատակված «յարտունողացն դիր» (այս մեկն էլ՝ «ի»
 նախդրով «ուժեղացված»), «արտադիրունողացն» և «ներբողենիւք» արտա-
 հայտությունների (տե՛ս Ա 1.3.4) և «արտաստորագրիցելոց» բառի (տե՛ս Բ 7դ)
 մասին (բոլորը, բացի «ներբողենիւք»-ից, Արիստոտելի թարգմանությունից
 են):
 Ուշագրավ է նախդիրների խնդրառությունը. միտում կա հետևելու հունա-
 րեն բառերի հոլովներին՝
 «արտ յորոց» (*ի/ւ. «*յորոց»՝ այդտեղ էլ «արտ»-ն «ուժեղացված է» «ի»*
նախդրով, որը, սակայն, ոչ թե նախորդում, այլ հաջորդում է իրեն) – ἐξ ὧν,
 «բաց սայց» (*ի/ւ. «*ի սոցանէ»*) – ἀπὸ τούτων, «գեր զոր» (*ի/ւ. «ի վերայ*
քան զոր») – ὑπὲρ ὃ,
 «թարց դիմաց» (*ի/ւ. «*առանց դիմաց»*) – δίχα προσώπων,
 «մակ ոմանց» (*ի/ւ. «*ի վերայ ոմանց»*) – ἐπ' ἐνίων,
 «մակ այլոցն» (*ի/ւ. «*ի վերայ այլոցն»*) – ἐπὶ τῶν ἄλλων,
 «մակ առաջնոց գոյացութեանցն» (*ի/ւ. «*ի վերայ առաջնոց գոյացու-*
թեանց») – ἐπὶ τῶν πρώων οὐσιῶν,
 «մակ այլոյ ուրուք» (*ի/ւ. «*ի վերայ այլոյ ուրուք»*) – ἐπ' ἄλλου τινός,
 «ներ արհեստիս» (*ի/ւ. «*յարհեստիս»*) – ἐν τῇ τέχνῃ,
 «ներ տեղւոյ» (*ի/ւ. «*ի տեղւոյ»*) – ἐν τόπῳ,
 «ներ քանում ժամանակի» (*ի/ւ. «*յորքան ժամանակի»*) – ἐν ὁποσσοῦν
 χρόνῳ,

«ստոր բայի» (փխ. «ի ներքոյ բայի») – κατὰ ῥήματος
օրինակներում հոլովաձևերը նույնանում են ինչպես համապատասխան
դասական նախդիրների կամ նախադրությունների պահանջած հոլովներին,
այնպես էլ հունարեն արտահայտություններում կիրառված հոլովներին:

«Ներ թուումն» (փխ. «*ի թիւ») – ἐν ἀριθμῷ օրինակում «ում» հունարեն
վերջավորությունն օգնում է ստանալ «դասական» եզակի տրականով կազմ-
ված ներգոյական հոլով («ո» հոլովման համար անխուսափելի հայցականի
փոխարեն), ինչը նաև համապատասխանում է հունարենի տրական հոլովին:

Մեկ այլ խմբում ունենք՝

հայերենի համար օրինաչափ բացառական՝ հունարեն սեռականի դիմաց՝
«ապ ումեքէ» (փխ. «*յումեքէ») – ἀπό τινος, «յարտանունէ և ի բայէ»
(փխ. «*յանունէ և ի բայէ») – ἐξ ὀνόματος καὶ ῥήματος,

հայերենի համար օրինաչափ հոգնակի հայցական՝ հունարեն հոգնակի
տրականի դիմաց՝ «ներ Տեղականսն» (փխ. «*ի տեղականսն») – ἐν τοῖς Το-
πικοῖς, «ներկոցունց բանս» (փխ. «*ի բանս երկոցունց») – ἐν τοῖς ἀμφοτέ-
ρων λόγοις, «ներ ամենեսին» (փխ. «*յամենեսին») – ἐν πάσαις, «ներ առա-
պելսն» (փխ. «*յառապելսն») – ἐν τοῖς μύθοις:

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«զեր ամեն անուն» (Տիմ. 312) ≠ «որ ի վեր է քան զամենայն անուն» (Փի-
լիպ. Բ 9) – ὑπὲρ πᾶν ὄνομα (Phil. 2:9),

«զեր զամենայն» (Տիմ. 212) ≠ «ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ» (Նփես.
Ա 22) – ὑπὲρ πάντα (Eph. 1:22),

«Թանց նորա» (Տիմ. 84) ≠ «առանց նորա» (Թովհ. Ա 3) – χωρὶς αὐτοῦ (Jn.
1:3),

«նախ ամենայնի» (Տիմ. 313) ≠ «յառաջ քան զամենայն» (Կող. Ա 17) – πρὸ
πάντων (Col. 1:17):

4 ԵՐԿԱԿԻ ԹԻՎ

Արդեն դասական հունարենում երկակի թիվը (հատուկ քերականական ձև՝
երկու առարկայի նշանակությամբ) դարձել էր հազվագյուտ օգտագործելի,
ավելի «հնազիտական» հետաքրքրություն էր ներկայացնում. հետևաբար՝
Դիոնիսիոսի «Քերականության» մեջ այդպիսի ձևերի հայտնվելը բնական է:
Թարգմանության մեջ հորինվել են համապատասխան «ձևեր».

«երկուորական Պետրու» (Թրակ. 17.1-2) – δυϊκὸς δὲ Ὁμήρω (Thrax 31.1),

«երկական որպիսի գանոմ» (Թրակ. 23.18-29 «գանեմ» բայից) – δυϊκὸς δὲ
οἶον τύπτετον (Thrax 51.3),

«երկական իմէն, քովրա, նովրա» (Թրակ. 28.18-19 «իմ», «քո», «նորա» դե-
րանուններից) – δυϊκὸς ἐμῶ σὼ ὦ (Thrax 67.2),

«երկուորական մոնք, դոնք, նոնք» (Թրակ. 28.14-15՝ «ես», «դու», «նա» գերանուններից) – δυῖκός νῶϊ σφῶϊ (Thrax 66.3),

«(նեզականէն, որ մու զստացաւըն յայտնեն, որպէս նիմոյ իմն. և) ներկականաց երկու, որպէս նովք, նովը» (Թրակ. 29.21-22՝ ստացական գերանուններ՝ կազմված անձնականների սեռական հոլովից) – δυῖκῶν δύο, ὡς ἀπὸ τοῦ νῶϊ νῶϊτερος (Thrax 69.2):

Թեոնի ճարտասանական երկի «Յաղագս պիտոյից» բաժնում կան միևնույն ասույթը տարբեր թվերով և հոլովներով փոփոխելու օրինակներ. ներկայացված է և երկակի թիվը՝

«երկուց առ երկուս՝ Իսոկրատիկոս ճարտասանիկոս զքաջաբոյս աշակերտացն աստուածոց մանկունս ասէր գոլ» (Թեոն 44) – δυοῖν δὲ πρὸς δύο, Ἰσοκράτее τῷ ρήτορε τῷ εὐφύεε τῶν μαθητῶν θεῶν παῖδε ἐλεγέτην εἶναι (Theon 3.101.19)²²⁶:

Թրակացու «Քերականության» վերջում բերվող κόπτω բայի խոնարհման հարացույցի թարգմանության մեջ առկա են բազում հորինված արհեստական ձևեր՝ հունարեն բոլոր ժամանակաձևերի համար. դրանց թվում՝ և երկակի թվի համար, օրինակ՝

«երկուորական կոփոմ կոփոս կոփոյ» (Թրակ. 45.9-10՝ «ներկայի») – δυῖκός τύπτετον, τύπτετον (Thrax 125.col. 1.13),

«երկուորական կոփոյի կոփոյի կոփոյը» (Թրակ. 45.16-17՝ «յարաձգականի», այսինքն՝ անկատար անցյալի) – δυῖκός ἐτύπτετον, ἐτυπτέτην (Thrax 125.col. 1.23), և այլն:

5 «ԵՐԿԱՔԱՆՉԻՒՐ» ԴԵՐԱՆՈՒՆԸ

Այս արհեստական գերանունը նշանակում է «(երկուսից) յուրաքանչյուրը». կերտվել է որպես հունարեն ἑκάτερος-ի համարժեք. երբեմն համապատասխանում է ἀμφοτέρος-ին («և՛ մեկը, և՛ մյուսը»).

«երկաքանչիւր» (Քրս. բարկ. 6.189, 7.190, Բ պհ. 87) – ἄμφω (PG 31.368[29]), ἀμφοτέρος (PG 31.369[30]), ἑκάτερος (PG 31.369[32], 360[(8), 192.14),

«երկաքանչիւր» (Աթ. 137, Թրակ. 21.2) – ἑκάτερος (PG 28.3[442], Thrax 41.3),

²²⁶ Ինչպես երևում է ընդգծված հատվածներից, հայ թարգմանչին հաջողվել է հայերեն «համարժեքներ» հորինել հունարեն երկակի թվով ոչ բոլոր բառերի համար: Բերված օրինակին նախորդում է նույնի եզակին՝ «զմիոյն առ մի՝ որդոն Իսոկրատէս ճարտասան զքաջաբոյս աշակերտն աստուածոց մանուկ ասէր գոլ» – ἐνὸς μὲν πρὸς ἓνα, Ἰσοκράτης ὁ ῥήτορ τὸν εὐφύεα τῶν μαθητῶν θεῶν παῖδε ἔλεγεν εἶναι, և հաջորդում է նույնի հոգնակին՝ «յոքունս առ յոքունս՝ Իսոկրատիկք ճարտասանիկք զքաջաբոյսս աշակերտացն աստուածոց մանկունս ասէին գոլ» – πλείνων δὲ πρὸς πλείους, Ἰσοκράτεις οἱ ῥήτορες τοὺς εὐφύεις τῶν μαθητῶν θεῶν παῖδας ἔλεγον εἶναι:

«երկաքանչիւրից» (*Աթ. 69*) – ἑκατέρων (PG 26.1133.32),
 «երկաքանչիւրոցն» (*Նազ. ճ.2.22, Բրս. Բ պզ. 3.83, Պետ. Գ.Թ. 107*) –
 ἀμφοτέρων (PG 35.432.7), ἀμφοτέροις (PG 31.189.5),
 «երկաքանչիւրք» (*Նազ. ճ.4.104*) – ἄμφω (PG 35.640.31),
 «որ յերկաքանչիւրոցն» (*Պիտ. 30.13*) – τὸ ἐξ ἀμφοτέρων (Aphth. 63.6),
 «երկաքանչիւր ոք» (*Փիլ. տես. 20, Ժ բան 237, Նիւս. կազմ. 88*) – ἑκάτερος
 (Ph. Cont. 39.2, Decal. 51.5, PG 44.157.3),
 «երկաքանչիւրք» (*Հերմ. 306.25*) – *ἑκάτεροι,
 «երկաքանչիւր» (*Ար. Ստոր. 107, Դ. Սահմ. 36.20, Դ. Պորփ. 10.28, 26.6, 29,
 46.15, 110.31, 198.19, Դ. Վերլուծ. 48, 84*) – ἑκάτερος (Arist. Cat. 5a5, D. Prol.
 15.13, D. Porph. 84.2, 95.15, 96.20, 114.15, 172.22, 218.21),
 «երկաքանչիւրոցս» (*Պղատ. Օր. 455*) – ἀμφοῖν (Pl. Leg. 963d6),
 «երկաքանչիւրք» (*Դ. Ստոր. 198, Դ. Պորփ. 8.29*) – ἀμφότερα (D. Cat.
 109.28), ἑκάτερα (D. Porph. 84.2),
 «երկաքանչիւր» (*Կիւրղ. պրպ. 105*) – συναμφότερος (PG 75.1380),
 «զերկաքանչիւրսն» (*Նեմես. 10*) – τὸ συναμφότερον (Nemes. 1.25),
 «երկաքանչիւր» (*Եւտիք. 21-22.10*):
Սակայն՝
 «երկաքանչիւր» (*Աթ. Դ. Պորփ. 186.4*) – ἑκαστος (D. Porph. 208.26), *որի*
սովորական համարժեքն է «իւրաքանչիւր»-ը,
 «երկաքանչիւր» (*Դ. Պորփ. 142.25, 196.7*) – δύο (D. Porph. 190.26, D. Porph.
 215.10՝ «երկու»),
 «իւրաքանչիւր» (*Դ. Պորփ. 10.14*) – ἑκάτερος (D. Porph. 84.26),
 «երկաքանչիւրովքս» (*Դ. Պորփ. 42.13*) – διχόθεν (D. Porph. 111.14՝ «եր-
 կուստեք»):

6 «ԻՐ» ՎԵՐՋԱԾԱՑՈՎ ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Աճառյանը որպէս հունաբանություն է նշել դասական թվականների «երկիր», «երիր», «չորիր» ձևերը, սակայն ինչպէս Մ. Մինասյանն է ցույց տվել, «երկրորդ», «երրորդ», «չորրորդ» դասական թվականներին զուգահեռ դասական լեզվում օգտագործվել են «երիր», «չորիր» ձևերը՝ «յերիր աւուր» (Մթ. ԺԶ 21, ԺԷ 22, Ի 19, Մկ. Ը 31, Թ 30, Ժ 34, Ղկ. Թ 22, ԺԳ 32, ԺԸ 33, Ամովս Դ 4), «չորիր» (Եզեկ. Ե 12) ձևերը:

Իսկ «հինգերիր», «վեցերիր», «տասներիր» ձևերը Մարտիրոս Մինասյանի բնորոշմամբ հունաբան են²²⁷.

«երկիր... երիր... չորիր... հինգերիր... վեցերիր» (*Թրակ. 1*) – δεύτερον... τρίτον... τέταρτον... πέμπτον... ἑκτον (Thrax 5-6),

²²⁷ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 37 (74ա):

«Երիր... չորիր... հինգերիր... վեցերիր» (Պող. Աղ. 151) – τρίτος... τέταρτος (P. Al. 150),

«Երիր... երիր... չորիր...» (Փիլ. լին. 4.157),

«Երիր... երիր...» (Փիլ. ել. 2.55):

7 ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7ա «Իլ»-ով կրավորական անորոշ դերբայ

Դասական լեզվում «իլ» վերջածանցով կրավորական սեռի անորոշ դերբայ չի օգտագործվել. «ել»-ն ընդհանուր է եղել ինչպես «ե» լծորդության ներգործական և կրավորական, այնպես էլ չեզոք սեռի «ի» լծորդության բայերի անորոշ դերբայի համար²²⁸:

Խնդրո առարկա ձևը ներկայացված է Թրակացու «Քերականությանը» կցված բայի խոնարհման հարացույցում՝ բազում այլ արհեստական ձևերի թվում, «(աներևոյթք կրաւորականք, ներկայ ամանակի և յարաձգականի) կոփիլ» (Թրակ. 47.14).

«սնանիլ» (Ոսկ. Թեոդ. 23.2) – τρέφεσθαι (Chrys. Theod. 4.24),

«ցնդիլ» (Նազ. ճ.2.43) – συγγεῖσθαι (PG 35.452),

«կերակրիլ» (Նազ. ճ.2.45) – τρέφεσθαι (PG 35.453),

«անուանիլ» (Նազ. առ Նիւս. 230) – ὀνομάζεσθαι (PG 35.832),

«ողորմիլ» (Նիւս. կազմ. 65) – ἐλεεῖσθαι (PG 44.140.52),

«ստեղծանիլ» (Բրս. Հայեաց 6.119) – διαπλασθῆναι (PG 31.212),

«խառնակիլ» (Աղեքս. 75) – κοινωνεῖν (Alex. α 6.1.4),

«կոտորիլ» (Թրակ. 21.14) – διαιρεθῆναι (Thrax 43.1),

«բուսանիլ» (Պիտ. 30.7) – φύεσθαι (Aphth. 63),

«հոսիլ» (Պիտ. 49.2) – ῥίπτειν (Aphth. 68),

«շարժիլ» (Փիլ. այլաբ. 106) – κινεῖσθαι (Ph. LA 1.4),

«գրիլ և գծիլ» (Փիլ. այլաբ. 111) – ἐγγράφεσθαι καὶ ἐγχαράττεσθαι (Ph. LA 1.19),

«մոծանիլ» (Փիլ. այլաբ. 122) – εἰσάγεσθαι (Ph. LA 1.54),

«երևիլ... վայելիլ» (Փիլ. այլաբ. 123) – ὀφθῆναι (Ph. LA 1.57),

«գիտիլ և ճանաչիլ» (Իրեն. հերձ. 22) – γινώσκεισθαι (Ir. Her. IV.5),

«առաքիլ» (Իրեն. հերձ. 144) – πεμφθήσεσθαι (Ir. Her. IV.27),

«կենսագործել» (Բրս. երրորդ. 3.257, Իրեն. հերձ. 159) – ζωοποιέω (PG 31.469, Ir. Her. V.5),

«համբառնիլ» (Իրեն. հերձ. 162) – ἀνελήφθαι (Ir. Her. V.6),

«գործիլ» (Թեոն 102) – παραχθῆναι (Theon 5.94.1),

«արհամարհիլ» (Պիտ. Գ.Թ. 99),

²²⁸ Մ. Մինասյանը «իլ մասնիկը» ետգասական է անվանում. տե՛ս ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 66 (136):

«Հետևիլ» (Դ. Պորփ. 4.11) – ἀκολουθῆσαι (D. Porph. 81.16),
 «անշատիլ» (Դ. Պորփ. 120.25) – χωρισθῆναι (D. Porph. 178.22),
 «տեսանիլ» (Դ. Պորփ. 144.20, 146.8, 12, 148.5, 148.27, 174.23) – θεωρεῖ-
 σθαι (D. Porph. 190.12, 26, 30, 191.24, 192.4, 204.13),
 «ստորագրիլ» – (Դ. Պորփ. 66.9) – ὑπογράφεσθαι (D. Porph. 131.31),
 «փոփոխիլ» (Դ. Պորփ. 146.10) – μεταβάλλειν (D. Porph. 190.29),
 «յափշտակիլ» (Նոննոս 1.11.9) – ἀναρπασθῆναι (Nonnos 39.11.3),
 «զերծանիլ» (Նոննոս II.17.22) – ἐκφυγεῖν (Nonnos 43.13.5):

7բ «Ե» լծորդության բայերի կրավորական սեռի և «ի» լծորդության
 բայերի անցյալ անկատարի եզակի թվի երրորդ
 դեմքի «իւր» վերջավորությունը

Դասական լեզվում անկատար անցյալում «ե» լծորդության բայերի ներ-
 գործական և կրավորական սեռի վերջավորությունները համընկնում են՝
 «էի», «էիր», «էր», «էաք», «էիք», «էին»: Նույնպիսին էին «ի» լծորդության
 բայերի (դրանց մեծ մասը չեզոք սեռի են, կան և հասարակ բայեր, որոնց
 միևնույն ձևերն ունեն և՛ ներգործական և՛ կրավորական իմաստ) խնդրո ա-
 ռարկա բայերի վերջավորությունները: Հունարան դպրոցի թարգմանիչները
 կրավորական սեռի և «ի» լծորդության բայերի երրորդ դեմքի եզակի թվի
 համար հորինեցին «իւր» վերջավորությունը²²⁹: Այդ «իւր» վերջավորությու-
 նը Դիոնիսիոս Թրակացու «Քերականությանը» կցված «կոփեմ» բայի հարա-
 ցույցի բազմաթիվ արհեստական ձևերից միակ կիրառվողն էր: Հմմտ. այս
 ձևն իր ժամանակաձևի մյուս դեմքերի կոնտեքստում՝ «սահմանական կրաւո-
 րական յարաձգականի» (երկակի թիվը զանց ենք առնում)՝ «կոփիի, կոփիիւր,
 կոփիւր, կոփիաք, կոփիիք, կոփիին» (Թրակ. 47.14-16): Ակնհայտ է, որ փորձ է
 արվել ներկայի ձևերի նմանությամբ ներգործականի վերջավորությունների
 «ե» բաղադրիչը փոխարինել «ի»-ով:

«ընդարձակիւր» (Փիլ. տես. 31) – ἐρύνετο (Ph. Cont. 86.4),
 «ծնանիւր» (Փիլ. այլաբ. 157) – ἐγεννᾶτο (Ph. LA 2.45),
 «եթէ... թուիւր» (Փիլ. իմաստ. 43) – τὸ δοκοῦν (Ph. Abr. 41.2),
 «ասիւր» (Թրակ. 4.16, Դ. Ստոր. 246, Անան. Ստոր. 14) – ἐλέγετο (Thrax
 չիք, D. Cat. 151.20),
 «եղանիւր» (Իրեն. հերձ. 151) – ἐγένετο (Ir. Her. V.1.8),
 «կատարիւր» (Իրեն. հերձ. 104) – ἐπιτελεῖτο (Ir. Her. IV.14),
 «սնանիւր» (Իրեն. հերձ. 156) – τρέφεται (Ir. Her. V.4),
 «անգիտանիւր» (Դ. Պորփ. 140.11) – ἡγνοεῖτο (D. Porph. 188.20),
 «զտանիւր» (Փիլ. լին. 1.86),
 «պատկանիւր և յարմարիւր» (Փիլ. լին. 4.44),

²²⁹ Հմմտ. ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 79 (167):

«յիշիւր... կոչիւր» (Փիլ. լին. 4.138),
 «սահմանիւր» (Փիլ. Sieg. 15.36),
 «տեսանիւր» (Հերմ. 303.8),
 «կոչիւր» (Տիմ. 2.16), «թլպատիւր» (Տիմ. 26.22),
 «քաղաքավարիւր» (Պետ. Գ.Թ. 101),
 «Հանդիպիւր» (Նազ. Կ. Մ. 202.9, Դ. Ստոր. 201) – τυγχάνειν (PG 35.1236.36), ἐτύγχανε (D. Cat. 112.22),
 «տածիւր» (Դ. Ստոր. 216) – διατρίβων (D. Cat. 123.26),
 «Հետևիւր» (Դ. Ստոր. 229) – ἔπεται (D. Cat. 138.23),
 «ցուցանիւր» (Դ. Վերլուծ. 96, 134, Սոկր. 75) – ἐδείκνυτο (Socr. 1.23.16),
 «Հակադարձիւր» (Վերլուծ. 136),
 «ի ձեռն առեալ լինիւր» (Կիւղ. պրպ. 95) – προχέρισται (PG 75.1369),
 «ունիւր» (Դ. Ստոր. 243, Եւտիք. 191-2.85) – ἔσχεν (D. Cat. 149.14),
 «անուանիւր» (Պղատ. Օր. 16) – ὀνομάζεται (Pl. Leg. 633b9),
 «ստորոգիւր» (Անան. Ստոր. 16),
 «երևիւր» (Բրս. ծն. 433-4, 435-6) – φαίνεται (PG 31.1469.48), ἐξεφάνη (PG 31.1472.32):

ԲԱՂ ԴԱՏՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՄ

«Բերիւր» (Փիլ. այլաբ. 116) ≠ «չըջիւր» (Ծնն. Ա 2) – ἐπέφερετο (Ph. LA 1.33 = Gen. 1:2):

7գ «Ա» և «ՈՒ» լծորդության բայերի արհեստական կրավորական ձևեր

Դրանք կազմվել են «ե» լծորդության բայերի նմանությամբ՝ «ի»-ով հիմքերից.

«իմանի» (Նազ. ճ.2.39, Թրակ. 21.26, Փիլ. այլաբ. 118, Բրս. ծն. 419-20, Աթ. 68) – νοεῖται (PG 35.448, 26.1133.7, Thrax 44.6), νενόηται (Ph. LA 1.42), ἐ-πινενόηται (PG 31.1457.35),

«մոռանի» (Թեոն 12) – λανθάνει (Theon 1.64.4),

«իմանիլ» (Փիլ. այլաբ. 115) – νοηθῆναι (Ph. LA 1.39),

«ստացանի» (Բրս. յուղիտ. 6.371) – κέκτῃται (PG 31.252), «ստացանի» (Փիլ. լին. 3.5)՝ «ստանամ» բայի անցյալ կատարյալի հիմքին կցված է «ան» ածանց և կրավորական ներկայի վերջավորությունը (թերևս «*ստանի» սպասելի ձևը չատ կարճ է թվացել, գուցե անցյալ կատարյալի հիմքի ընտրությունը պայմանավորված է հունարեն բայի պերֆեկտ ժամանակաձևով),

«իմանի» (Տիմ. 15.1),

«իմանիս» (Հերմ. 307.32, Զեն. 5.2.11),

«բացաբառնիլ» (Պորփ. 147) – ἀναιρεῖσθαι (Porph. 14.10-11),

«չարաբառնիմ» (Պորփ. 148) – συναναιρέομαι (Porph. 15.19),

«Հանանի» (Նիւս. կազմ. 92 փխ. «Հանի», «ե» խոնարհման «Հանեմ», բայից՝ նմանակությամբ) – ἐξωθεῖται (PG 44.161.9),

«Երկբայանի» (Դ. Սահմ. 6.10) – ἀμφιβάλλεται (D. Prol. 2.23),

«Իմանի» (Դ. Պորփ. 98.2, Դ. Ստոր. 251, Կիւրղ. պրպ. 104) – νοεῖται (D. Porph. 160.14, D. Cat. 154.32, PG 75.1380),

«Հարաբերի... հարաբառնի» (Դ. Պորփ. 92.14, 19, 23 156.1) – συνεισφέρεται... συναναιρεῖται (D. Porph. 155.29, 156.1, 7),

«Ի բաց բառնի(ն)» (Դ. Պորփ. 190.21, Անան. Ստոր. 12) – ἀναιρεῖται (D. Porph. 210.27),

«Լուանի» (Վերլուծ. 132),

«Վերանիլ» (Եւտիք. 39/40.40),

«Թուլանի» (Եւտիք. 195/6):

«Ու» լծորդության բայերում կրավորական վերջավորությունից առաջ հայտնվում է մի «ան» ածանց (ինչպես «ստացանի» ձևում). այսպիսով, ինչպես և «ա» խոնարհման բայերի դեպքում, ստացվում են «անիմ»-ով ավարտվող ձևեր.

«Ընթերցանի» (Բրս. սղ. ԾԹ 2.221՝ «Ընթեռնում» բայի անցյալ կատարյալի հիմքից) – ὑπαναγινωσκεται (PG 29.464.35),

«առաւելու և առաւելանի» (Փիլ. Ժ բան 228) – ὑπερέχει καὶ ὑπερέχεται (Ph. Decal. 21.2),

«արդելանի» (Բրս. եւս. 325, Թէ չէ պատճառ 4.443, Փիլ. այլաբ. 110) – κατέχεται (Bas. epist. 82.1.3, PG 31.337), ἐπέχεται (Ph. LA 1.18),

«զենանիլ» (Փիլ. ել. 1.3),

«Թողանի» (Թեոն. 6) – ἀπολείπεται (Theon 1.60.8),

«Թողանիլ» (Պետ. Գ.Թ. 99), «Թողանին» (Պետ. Գ.Թ. 101),

«լնանին» (Դ. Պորփ. 108.21) – συμπληροῦται (D. Porph. 168.21),

«առնանին» (Անան. Մեկն. 489):

Բոլոր օրինակներում «ան» ածանցը կցվել է ներկայի պարզ հիմքերին, բայցի վերջին՝ «առնանին» ձևից, հավանաբար «առնում» բայից, որի ներկայի հիմքն օժտված է «ն» ածանցով, իսկ առաջին՝ «Ընթերցանի» ձևում՝ անցյալ կատարյալի ցոյական հիմքին:

7դ «Իցեալ»-ով անցյալ դերբայներ

Դերբայի կազմութիւնը «ից» ածանցով արհեստական բայական հիմքից, կարելի է բացատրել որպես հատուկ կրավորական սեռի դերբայ ստեղծելու փորձ (կարծես ի հակադրութիւն «եցեալ»-ով ներգործական ձևերի), քանի որ բոլորն էլ կրավորական սեռի դերբայների (մեկ անգամ՝ գոյականի) թարգմանութիւն են.

«ծնիցելումն» (Փիլ. լին. 3.47՝ «Ի» խոնարհման բայից),

«ծնիցելոյ» (Բրս. երրորդ 2.256) – γεννηθέντος (PG 31.468),

«ծնիցելոց» (*Բրս. սղ. Ա 4.211, Փիլ. այլաբ. 107*) – γεννωμένων (Ph. LA 1.7), γεννηθέντων (PG 29.220),

«փորձիցելոց» (*Թեոն 48*) – δεδοκιμασμένοις (Theon 3.103.6՝ *կրավորական*),

«ներգործիցեալ» (*Թեոն 114*) – ἐνεργούμενον (Theon 6.109.1՝ *կրավորական*),

«զգատիցեալն» (*Տիմ. 16.14՝ կրավորական*),

«զասեցելոցն» / *տարընթ. «զասիցելոցն»* (*Ար. Ստոր. 108, Դ. Ստոր. 252*) – τε-ταγμένων (Arist. Cat. 1b16, D. Cat. 155.16՝ *կրավորական*),

«յասիցելոցս» (*Ար. Ստոր. 109*) – τῶν εἰρημένων (Arist. Cat. 2a19՝ *կրավորական*),

«ստորոգիցելոյն» (*Ար. Ստոր. 109*) – τοῦ κατηγορουμένου (Arist. Cat. 1b11՝ *կրավորական*), «արտաստորագրիցելոց» (*Ար. Մեկն. 167*) – ἐκ τῶν ὑπογεγραμμένων (Arist. Int. 19b26՝ *կրավորական*),

«ասիցեալք» (*Ար. Ստոր. 138*) – λεγόμενα (Arist. Cat. 10b14՝ *կրավորական*),

«զրիցեալքն» (*Ար. Մեկն. 155*) – τὰ γραφόμενα (Arist. Cat. 16a4՝ *կրավորական*),

«քատակիցելոց» (*Դ. Սահմ. 6.11*) – ἐοικόσι (D. Porph. 2.24՝ *կրավորական*),

«շարաքանիցելոց» (*Դ. Սահմ. 6.11*) – συλλογιζομένοις (D. Porph. 2.25՝ *կրավորական*),

«նշանակիցեալսն» (*Դ. Սահմ. 142.4*) – σημαινόμενα (D. Prol. 65.19՝ *կրավորական*),

«ստորոգիցեալ» (*Պորփ. 135, Դ. Պորփ. 76.17*) – κατηγορούμενον (Porph. 2.17, D. Porph. 139.18՝ *կրավորական*),

«ներածիցելոցն» (*Դ. Պորփ. 54.26՝ կրավորական*),

«վերաբերիցելոց» (*Դ. Ստոր. 253*) – ἀναγομένων (D. Cat. 156.8՝ *կրավորական*),

«հակաբաժանիցելոց» (*Դ. Ստոր. 253*) – ἀντιδιαιρουμένων (D. Cat. 156.22՝ *կրավորական*),

«զրիցեալն» (*Դ. Ստոր. 231*) – ὁ γεγραμμένος (D. Cat. 139.23՝ *կրավորական*),

«նայիցեալք» (*Դ. Ստոր. 232*) – τὰ... ἀφοροῦντα (D. Cat. 140.23՝ «ի» *խոնարհման բայից*),

«առնիցելոց» (*Դ. Ստոր. 233*) – λαμβανομένων (D. Cat. 141.21՝ *կրավորական*),

«հաղորդիցեալն» (*Դ. Ստոր. 236*) – μετεχόμενον (D. Cat. 143.18՝ *կրավորական*),

«տեսակարարիցելոյ» (*Դ. Ստոր. 246*) – εἰδοπεποιουμένου (D. Cat. 151.29՝ *կրավորական*),

«հոտոտիցելոց» (*Դ. Ստոր. 248*) – ὁσμαιμένων (D. Cat. 152.28՝ *կրավորական*),

«ճառիցեալը» (*Դ. Ստոր. 250, Անան. Ստոր. 12*) – ὁ λεχθείς (D. Cat. 154.4՝ *կրավորական*),

«զրիցելոց» (*Դ. Վերլուծ. 90, 96, 98, 100*),

«խոստովանիցելոց» (*Դ. Վերլուծ. 96՝ կրավորական*),

«ստորոգիցելոց» (*Անան. Ստոր. 16*),

«յարիցեալ» (*Անան. Ստոր. 34*),

«յափեցելոց» (Անան. Մեկն. 487),

«ծնիցելոյն» (Բրս. ծն. 433-4) – γεννηθέντος (PG 31.1472.31):

Հետևյալ օրինակում սպասելի «իցելոց»-ի փոխարեն ունենք «իլոց»՝ կրավորական անորոշ դերբայի «իլ» վերջածանց և հոգնակի սեռականի վերջավորություն.

«Հաստատիլոց» (Ար. Ստոր. 136) – ἀποκαθισαμένων (Arist. Cat. 9b28),

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ դասական թարգմանությունների հետ

«գրիցեալն» (Տիմ. 296) ≠ «որ գրեալն էր» (Յովհ. ԺԲ 16) – γεγραμμένα (Jn. 12:16),

«գրիցեալսն» (Տիմ. 47) ≠ «գգիրս» (Մթ. ԻԲ 29) – τὰς γραφάς (Mt. 22:29),

«ծնիցեալ է» (Տիմ. 304) ≠ «ծնեալ է» (Ա Յովհ. Ե 1) – γεγέννηται (1Jn. 5:1),

«ծնիցեալն» (Տիմ. 73, 292) ≠ «որ ծնանելոցն է» (Ղկ. Ա 35) – τὸ γεννώμενον (Lk. 1:35),

«ծանիցեալք» (Տիմ. 307) ≠ «ծանուցայք» (Գաղ. Դ 9) – γνωσθέντες (Gal. 4:9):

7 Բայի սեռի տարբերական այլ դեպքեր

1) «Ի» լծորդություն «ծնանիմ» ընդհանուր բայն ունի և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ: Հետևաբար «ծնիցալ» անցյալ կատարյալը կրավորական՝ «ծնվեց» իմաստով, հակադրվում է «ծնալ» օրինաչափ ձևին, որին վերապահվում է ներգործական իմաստ: Փաստորեն, կիրառված է նույն՝ «իցեալ» կրավորական անցյալ դերբայի մաս կազմող «ից» ածանցը.

«Հաւր Համագոյ ելով Որդի, արգանդաւ ծնիցալ» (Տիմ. 283):

2) Արհեստական ներգործական «ծնանեն» ձևը ստեղծված է «ե» լծորդություն բայերի նմանակությամբ.

«Կամ ծնանին կամ ծնանեն» (Փիլ. այլաբ. 109) – ἢ γεννῶνται ἢ γεννῶσι (Ph. LA 1.15):

8 ԱՃԱԿԱՆԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Աճականը, որ պիտի կցվեր միայն բաղաձայնով սկսվող բայերի անցյալ կատարյալի 3-րդ դեմքի եզակի թվի միավանկ ձևերին, կիրառվել է նաև ձայնավորով սկսվող և ոչ միավանկ ձևերի դեպքում²³⁰. արձանագրել ենք նաև հոգնակի առաջին դեմքի մեկ դեպք.

²³⁰ Ըստ Մ. Մինասյանի՝ «ա» ձայնավորով սկսվող արմատական ու միավանկ եզակի 3-րդ դեմքն էլ անցյալ կատարյալում «ետդասական գրաբարում» ստացել է «ե» նախադասվելածը, որը, միջնադարում «է» արտասանվելով, փոխարինվել է «է»-ով դասական բնագրերում, օր. «էած, էանց, էառ, էարկ», տե՛ս ՄԻՆԱՍՅԱՆ 1996, 59 (117):

«էանց էգնաց զհետ ճառագայթիցն» (*Փիլ. իմաստ. 52*) – ἡκολούθησε τῷ φέγγει (Ph. Abr. 70.4),

«էանց էգնաց» (*Փիլ. ալլաբ. 170*) – ἀνεχώρησεν (Ph. LA 2.85),

«էկորոյս» (*Փիլ. իմաստ. 93*) – ἀπέβαλε (Ph. Abr. 235.3),

«էստեղծ» (*Իրեն. հերձ. 158*) – ἐποίησε (Ir. Her. V.5),

«եարար» (*Տիմ. 141.23*),

«եասաց» (*Ար. Մեկն. 165*) – εἶπεν (Arist. Int. 19a4),

«զմեռանելն... էմեռանելն» (*Պղատ. Սոկր. 71*), «զմեռանելն և զէմեռանելն» (*Դ. Սահմ. 66.24-25*) – τὸ τεθνάναι... τὸ τεθνάναι (Pl. Apol. 40c1, 5), θνήσκειν τε καὶ τεθνάναι (D. Prol. 29.17)՝ *ածականով անորոշ դերբայ՝ որպես հունարեն պերֆեկտի դերբայի համարժեք*:

Դիոնիսիոս Թրակացու «Քերականությանը» կցված «կոփեմ» բայի հարացուցումը ածականը լայնորեն օգտագործված է մի քանի արհեստական ժամանակաձևերի մեջ (որոնք չեն օգտագործվել թարգմանություններում)՝

«յարակայի՝ էկոփէի» (*Թրակ. 46՝ համապատասխան հունարեն ձևերը պերֆեկտ են*),

«կրավորական յարակայականի՝ էկոփիի, էկոփիի, էկոփիւր...» (*Թրակ. 47*),

«գերակատարի՝ էկոփեցի...» (*Թրակ. 47՝ համապատասխան հունարեն ձևերը պլուսկվամպերֆեկտ են*),

«կրաւորական... առաւելակատարականի՝ էկոփեցայ...» (*Թրակ. 48՝ նախորդի հետ նույն ժամանակաձևերն են*),

«աներեւոյթ յարակայի՝ էկոփել... կրավորական՝ էկոփիլ... գերակատարի՝ էկոփոցել... կրավորական՝ էկոփոցիլ» (*Թրակ. 49*),

«հրամայական յարակայի և վաղակատարի՝ էկոփեա, էկոփեսցէ» (*Թրակ. 50*), և այլն:

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«եարար» (*Տիմ. 242*) ≠ «արար» (*Մկ. Ե 19, 20*) – πεποίηκεν, ἐποίησεν (Mk. 5:19, 20),

«եասաց» (*Տիմ. 292, 293, 293*) ≠ «ասէ» (*Ղկ. Ա 34, Մկ. Բ 8, Ղկ. Զ 22*) – εἶπεν (Lk. 1:34), λέγει (Mk. 2:8), εἶπεν (Lk. 6:22),

«եաւծ» (*Տիմ. 57*) ≠ «օծ» (*Ես. ԿԱ 1*) – ἔχρισεν (Is. 61:1),

«եառաք» (*Տիմ. 57*) ≠ «առաք» (*Յովհ. Ա 16՝ հոգնակի առաջին դեմք*) – ἐλάβομεν (Jn. 1:16),

«եգերեաց» (*Տիմ. 311*) ≠ ἡχμαλώτευσεν (*Եփես. Դ 7*) – «գերեաց»,

«եստեղծ» (*Փիլ. ալլաբ. 145*) ≠ «ստեղծ» (*Ծնն. Բ 19*) – ἔπλασεν (Ph. LA 1.31 = Gen. 2:19),

«էարկ... էառ» (*Փիլ. ալլաբ. 149*) ≠ «արկ... առ» – (*Ծնն. Բ 22-23*) – ἐπέβαλεν... ἔλαβε (Ph. LA 2.19 = Gen. 2:22-23),

«էած» (*Փիլ. ալլաբ. 155*) ≠ «ած» (*Ծնն. Բ 22-23*) – ἡγαγεν (Ph. LA 2.40 = Gen. 2:22-23):

9 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐ

9ա Ենթակայական դերբայ՝ ներկայի հիմքից

Դասական լեզվում «ա» խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից, իսկ ներկայի հիմքից կազմությունն արտառոց է.

«Իմանող» (Բրս. ընչեղ. 3.154, Հայեաց 6.119, Նաղ. Կ. Մ. 217.20) – λογίζο-
μενος (Bas. div. 3. 30, Attende 33.6, Պետ. Գ.Թ.), συλλείς (PG 36.273.42)՝ օրի-
նաչափ ձևն է «իմացող»:

9բ «Եղանիլ» բայը

Հունարան թարգմանիչները կիրառել են արհեստական «եղանիմ» ներկան՝ անցյալ կատարյալի «եղ» հիմքից՝ «ան» ածանցով, մինչդեռ այդ անցյալ կատարյալին համապատասխանող ներկան «լինիմ» բայն է. «եղանիլ»-ն ազնի-հայտորեն կերտվել է որպես հունարեն անցյալ ժամանակների (aoristus-ի և perfectum-ի) անորոշ դերբային (infinitivus-ին) համապատասխանող ձև.

«Եղանեիլ» (Իրեն. հերձ. 77, Փիլ. իմաստ. 41՝ ունի և «իլ» տարբերությունը, այլաբ. 105-106) – γεγονέναι (Ph. Abr. 34.2, LA 1.2),

«Եղանեիլ» (Փիլ. այլաբ. 112) – γενέσθαι (Ph. LA 1.22),

«Եղանիլ» (Իրեն. հերձ. 192, Փիլ. այլաբ. 111, 157) – γεγενῆσθαι (Ir. Her. V.15, Ph. LA 1.20, 2.46),

«Եղանեիլ» (Փիլ. այլաբ. 144, 145) – γενητός (Ph. LA 2.5, 7),

«Եղանիւր» (Իրեն. հերձ. 151),

«Եղանիլ» (Տիմ. 7.11, 27.15),

«Եղանեին» (Ար. Ստոր. 118) – γεγενῆσθαι (Arist. Cat. 4b8),

«Եղանիլ» (Ար. Մեկն. 163) – γενήσθαι (Arist. Int. 18b14),

«Եղանի» (Դ. Սահմ. 66.2) – καταγίνεται (D. Prol. 28.28),

«Եղանիմ» (Դ. Պորփ. 96.21, 22, Դ. Ստոր. 255, Դ. Վերլուծ. 38) – γίνομαι (D. Porph. 160.5, 6, D. Cat. 158.3),

«Եղանիլ» (Թեոն 162, Անան. Մեկն. 491, Եւտիք. 37-38) – γεγονέναι (Theon 11.127.18):

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ Դասական թարգմանությունների հետ

«Եղանիլ» (Տիմ. 47) ≠ «զլինեին» (Յովհ. Ը 58) – γενέσθαι (Jn. 8:58),

«Եղանի» (Տիմ. 324) ≠ «լինիցի» (Ոսկ. Պող. Բ 446)²³¹ – ἔσται (PG 62.437):

²³¹ Հետաքրքրական է, որ Աստվածաշնչում հունարեն էական բայի ապառնիի դիմաց կանոնա-կան թարգմանության մեջ արձանագրել ենք «լինիմ» բայի առաջին կամ երկրորդ ապառնիի ձևերը՝ կազմված «լինից» հիմքից, իսկ նույն հատվածների մեջբերումներում Փիլոնի թարգմանիչը գերադասել է «եղից» հիմքով երկրորդ ապառնին. «եղիցին» (Փիլ. այլաբ. 110)

9դ Պատճառական բայեր ոչ բայական հիմքերից

- «երաժշտացոյց» (*Փիլ. այլաբ. 166*) – μεμούσῳκε (Ph. LA 2.75),
 «իրաւացոյց» (*Նազ. ճ.4.12, Փիլ. քհ. 195*) – ἐδικαίωσε (PG 35.541.36, Ph. Spec. 1.140),
 «իրաւացուցաբ» (*Եփես. Գ 280*) – ἐδικαιώσαμεν (Ephes. III.59.14), *հմմտ.*
 «իրաւացի համարեցաբ» (*Եփես. Ե 281.4-5*) – ἐδικαιώσαμεν (Ephes. V.61.2),
 «իւրացուցանէ» (*Կիւրղ. պրպ. 102*) – οἰκείοῦται (PG 75.1377),
 «հոգիացուցեալ» (*Պիսիդ. 146.168*):

9դ «Եմ» բայի անորոշ դերբայը

«Եմ» բայը պակասավոր է և, ի թիվս այլ ձևերի, չունի անորոշ դերբայ. այդպիսի արհեստական դերբայ, նաև թեք հոլովներով, գտնում ենք նախահունարան և հունարան թարգմանություններում: «Ել», «Ելոյ», «Ելով» ձևերը, նաև եզակի տրականի «Ելում» և հոգնակի սեռական-տրականի «Ելոց», չնայած լեզվում կային «լինել» և «գոլ» հոմանիշները, ավելի հարմար էին թվում հունարեն *εἶναι* անորոշ դերբայը և *ὄν* ներկա դերբայը թարգմանելու համար (վերջինիս համար՝ նաև «է» ձևը).

- «Ելով» (*Բրս. հց. 46[119]*) – ὑπάρχων (PG 31.913[72]),
 «Ելով» (*Աթ. 146*) – παρόντος (PG 48.12[452]),
 «Ել» (*Փիլ. Ել. 1.1, բազն. 202, Sieg. 14.22, Պորփ. 134*) – εἶναι (Ph. Spec. 1.290, Porph. 2.5),
 «Ելոյ» (*Փիլ. իմաստ. 35, այլաբ. 119*) – ὄντος (Ph. Abr. 10.3), *οὔσαν* (Ph. LA 1.45),
 «Ելով» (*Փիլ. լին. 2.3, իմաստ. 48, այլաբ. 116*) – οὔσα (Ph. Abr. 58.1), *ὦν* (Ph. LA 1.34),
 «Ելով» (*այլաբ. 112*) – ὄν (Ph. LA 1.23),
 «Ելով» (*Հերմ. 300.29, Զեն. 5.2.6*),
 «ի հարկէն Ելում» (*Ար. Մեկն. 179*) – τῷ ἐξ ἀνάγκης ὄντι (Arist. Int. 23a17),
 «Ել» (*Պորփ. 134, Անան. Ստոր. 20, 44*) – εἶναι (Porph. 2.5),
 «Ելով» (*Պորփ. 137, Անան. Ստոր. 18, Զեն. 1.6.8*) – οὔσα (Porph. 5.1),
 «ողջ Ելն» (*Պորփ. 141*) – ὑγιαίνειν (Porph. 9.9),
 «Ելով» (*Թեոն 98*) – ὦν (Theon 5.92.12),
 «պատահման Ելում» (*Դ. Ստոր. 243*) – συμβεβηκότι ὄντι (D. Cat. 149.15՝ *եզակի տրական*),

≠ «լիցին» (Թիւք. Զ 12) – ἔσονται (Philo I.156 = Num. 6:12), «եղիցի» (Փիլ. այլաբ. 151) ≠ «լինիցի» (Բ Օրին. ԻԳ 13) – ἔσται (Philo VI. 241 = Deut. 23:13), «եղիցին» (Փիլ. այլաբ. 157) ≠ «լինիցին» (Բ Օրին. ԻԱ 15-16) – γένωνται (Philo I.254 = Deut. 21:15-16):

«սատահմանց ելոց» (Դ. Ստոր. 244) – συμβεβηκόσιν οἷσι (D. Cat. 150.9՝
հոգնակի տրական),

«ելոյ» (Դ. Վերլուծ. 38, 68, 78, 84),

«ելով» (Եւտիք. 17-8.1):

ԲԱՂ ԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

«ելով» (Տիմ. 308) ≠ «որ է, որ... էր» (Եբր. Ա 3, Բ Կոր. Ը 9) – ὧν (Hebr. 1:3,
2Cor. 8:9),

«ելոյ» (Տիմ. 57) ≠ «որոյ է» (Եփես. Բ 20) – ὅντος (Eph. 2:20),

«դու մարդ ելով» (Տիմ. 47) ≠ «դու մարդ ես» (Յովհ. Ժ 33) – σὺ ἄνθρωπος
ὧν (Jn. 10:33):

9ե Բայական հիմքեր՝ «ոց» վերջածանցով

Այդպիսի բայական հիմքերի ստեղծումը դժվար է բացատրել: Դիոնիսիոս
Թրակացու «Քերականութեան» վերջին կցված խոնարհման հարացույցի մեջ
զգալի թվով արհեստական բայական ձևերի շարքում մի քանի ձև ենք
գտնում «ոց» ածանցով՝

«սահմանական ներգործական գերակատարի» (plusquamperfectum indicativi
activi) «երկուորական» (երկակի) թվի առաջին դեմք՝ «էկոփոցի» (Թրակ.
46.11), «կրաւորական»²³² «էկոփոցայ» (Թրակ. 48.7),

«սահմանական ներգործական անսահմանականի» (aoristus indicativi activi)
երկակի թվի առաջին դեմք՝ «կոփոցի» (Թրակ. 46.16), «կրաւորական»՝ «կոփո-
ցայ» (Թրակ. 48.15),

«սահմանական ներգործական ապառնոյ» (futurum indicativi activi) երկակի
թվի առաջին դեմք՝ «կոփոցից» (Թրակ. 47.1), «կրաւորական»՝ «կոփոցայց»
(Թրակ. 48.22),

«աներևոյթ գործաւորականք գերակատարի» (infinitivus plusquamperfecti
activi)՝ «էկոփոցել» (Թրակ. 49.8),

«աներևոյթ գործաւորականք անորիշի» (infinitivus aoristi activi)՝ «կոփո-
ցել» (Թրակ. 49.10):

Որոշ դեպքերում «ոց» ածանցը երկակի թվի ցուցիչ է, այն հանդես է գա-
լիս նաև տարբեր անցյալ ժամանակաձևերում, իսկ Փիլոնի Թարգմանութեան-
ների օրինակներում այն վկայված է որպէս հայերենին ոչ բնորոշ ապառնի ա-
նորոշ դերբայի բաղկացուցիչ: Մնացած օրինակներում ածանցը որևէ քերա-
կանական իմաստ չունի. թերևս այն ծառայում է նոր նախածանցավոր բառե-
րի ստեղծման համար նոր հիմքեր տրամադրելուն.

²³² Նույն՝ «գերակատար» ժամանակը կրավորականի դեպքում հորջորջվում է «առաւելակա-
տարական» երկուսն էլ համապատասխանում են հունարեն ὑπερσυντελικός-ին:

«յարկացոցեն» (Թրակ. 3.3) – παρίστησιν (Thrax 6.13՝ *Համարժեք է «*յարկացուցանեն» ձևին*),

«յարառոցեալ» (Թրակ. 15.15) – παραλαμβάνονον (Thrax 7.6՝ *Համարժեք է «*յարառեալ» ձևին*),

«ածանցոցեալ» (Թրակ. 16.3-4) – παρηγμένον (Thrax 29.3՝ *Համարժեք է «*ածանցեալ» ձևին*),

«յարառոցին» (Թրակ. 36.16, Պորփ. 144) – παραλαμβάνονται (Thrax 93.1, Porph. 13.10՝ *Համարժեք է «*յարառնուն» ձևին կրավորական առումով*),

«քերդոցեալ» (Թրակ. 16.1) – ποιηθέν (Thrax 29.1, *Համարժեք է «*քերդեալ» ձևին*),

«գտոցիլ» (Փիլ. իմաստ. 78) – ἐρέθησεν (Ph. Abr. 175.5՝ *ապառնի ինֆինիտիվ*),

«ուռնոցել» (Փիլ. իմաստ. 90) – σχεῖν (Ph. Abr. 224.3՝ *անցյալ կատարյալի ինֆինիտիվ*),

«պիտառոցել» (Թեոն 4) – συλλήψεσθαι (Theon 1.59.17՝ *ապառնի ինֆինիտիվ*),

«բաղարկոցէ» (Պորփ. 144, Դ. Պորփ. 164.6) – συμβάλλεται (Porph. 13.3, D. Porph. 199.15՝ *Համարժեք է «*բաղարկանէ» ձևին*),

«յարառոցին» (Պորփ. 144) – παραλαμβάνονται (Porph. 12.10),

«բացերկոցել» (Ար. Մեկն. 159) – ἀποφαίνεσθαι (Arist. Int. 17a19՝ *Համարժեք է «*բացերկիմ» ձևին*),

«բացասոցել» (Ար. Մեկն. 161) – ἀποφῆσαι (Arist. Int. 17b38՝ *անցյալ կատարյալի ինֆինիտիվ*),

«ապասոցել, ստորասոցել» (Ար. Մեկն. 160, 161) – ἀποφῆσαι, καταφῆσαι (Arist. Int. 17a31, 17b38՝ *անցյալ կատարյալի ինֆինիտիվներ*),

«բացերկոցէ» (Ար. Մեկն. 160) – ἀποφαίνεται (Arist. Int. 17b3՝ *Համարժեք է «*բացերկի» ձևին*),

«լինոցել» (Ար. Մեկն. 163, 166) – ἔσσεσθαι (Arist. Int. 18a36, b12, 19a30՝ *ապառնի ինֆինիտիվ*),

«եղոցել» (Ար. Մեկն. 166) – ἔσσεσθαι (Arist. Int. 19a28՝ *ապառնի ինֆինիտիվ*),

«յարառոցեալք գոն» (Դ. Սահմ. 28.3) – λαμβάνεσθαι (D. Prol. 11.19՝ *Համարժեք է «*յարառեալք» ձևին*),

«յարառոցալ» (Դ. Ստոր. 250) – παρελήφθη (D. Cat. 154.8՝ *Համարժեք է «*յարառալ» ձևին*),

«պարառոցեմ» (Դ. Վերլուծ.),

«պարառոցէ» (Անան. Ստոր. 18):

«Յարկացոցեմ» ձևը, որ կազմված է «ոց» ածանցով անցյալ կատարյալի ցոյական հիմքից, հիշեցնում է համապատասխան պատճառական «յարկացուցանեմ» բայը և ստիպում ենթադրել, որ գուցե այն կազմվել է վերջինիս հետ նմանակությամբ, իսկ հետո ածանցն օգտագործվել է ուրիշ բայական հիմքերի հետ:

**9գ Ավելորդ «եաց» ածանցի կցումը
անցյալ կատարյալի արմատական հիմքին**

Անցյալ դերբայի -եցեալ (-եաց/եց + -եալ) վերջածանցն անհարկի կցվել է անցյալ կատարյալի ոչ ցոյական հիմքերին, ստեղծելով արհեստական ձևեր.
«տուեցելոց» (Բրս. առ Նազ. 6.333) – τῶν δεδομένων (Bas. epist. 2.6.34),
«տուեցելովը» (Բրս. մկրտ. 7.435) – τῇ δεδομένη (PG 31.441)՝ *վերջածանցը կցվել է «տամ» բայի անցյալ կատարյալի «տու» հիմքին,*
«արտաքս բարձեցելոց» (Բրս. պհ. Բ 5.88) – ἐξαίθετων (PG 31.192)՝ *վերջածանցը կցվել է «բառնամ» բայի անցյալ կատարյալի «բարձ» հիմքին,*
«ի բաց բարձեցելոյ» (Դ. Պորփ. 78.14, 190.21) – ἀναιρουμένης (D. Poprh. 142.13, 210.27),
«բերեցելոց» (Դ. Պորփ. 6.1) – τοῖς φέρουσιν (D. Poprh. 82.9)՝ *վերջածանցը կցվել է «բերեմ» բայի անցյալ կատարյալի «բեր» հիմքին,*
«բերեցելոյ» (Դ. Պորփ. 94.11)²³³ – ἐνέγκαντος (D. Poprh. 158.3),
«տարբերեցելոց» (Դ. Պորփ. 66.33, 68.27, 29, 70.13, 15, 72.10, 23, 74.10, 78.24, 82.7, 23, 154.1, 25, 26, 158.18) – διαφερόντων (D. Poprh. 133.7, 26, 134.23, 25, 137.10, 12, 138.12, 144.9, 19, 145.12, 146.5, 194.21, 195.8, 15, 197.8)՝ *այս արհեստական բայը նույն «բերեմ» բայից է,*
«եղեցելովք» (Պիսիդ. 222.253)՝ «դնեմ» բայի անցյալ կատարյալի «եղ» հիմքին կցված է ավելորդ ցոյական «եաց» ածանցը (փխ. «եղելովք»):

10 ԷԱԿԱՆ ԲԱՅԻ ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ «է»-ՈՎ

Հունարեն εἶναι – «լինել» բայի ներկա դերբայը երբեմն թարգմանվել է «է» դիմավոր ձևով, որը դերբայների նման կարող էր հոլովական վերջավորությամբ օժտվել.

1) որոշչի առումով՝

«ի մի յէ ոգին» (Փիլ. ալլաբ. 125) – ἐπὶ μίαν οὖσαν τὴν ψυχὴν (Ph. LA 1.61),

«էին աստուծոյ» (Փիլ. լին. 4.1),

«Հասարակ է տեղի բան աճեցական էից բարեաց կամ չարեաց» (Պիտ. 71.2-3) – Κοινὸς ἐστὶ τόπος λόγος αὐξητικὸς τῶν ὄντων καλῶν ἢ κακῶν (Aphth. 80),

«Պարսաւ է բան արտաբերական էից չարեաց» (Պիտ. 124.2) – Ψογος ἐστὶ λόγος ἐκθετικὸς τῶν ὄντων κακῶν (Aphth. 93):

Իսկ հետեյալ օրինակում «եղելոց» ձևն ավելի օրինաչափ է՝ «Ներբողեան է բան արտադրական եղելոց բարեաց» (Պիտ. 71.2-3) – Ἐγκώμιον ἐστὶ λόγος ἐκθετικὸς τῶν ὄντων καλῶν (Aphth. 86),

²³³ Երկու հրատարակություններում էլ նախընտրելի է համարված «բերեցելոյ» տարբերակը: մը, սակայն այն կրավորական իմաստ ունի, տե՛ս նախորդ ենթագլուխը:

2) *գոյականացված՝*

«ոչ էիցն, և ոչ լինելոցն» (*Բրս. Հայեաց. 5.116*) – μήτε ὄντων μήτε ἔσο-
μένων (PG 31.208),

«պատճառ գոլ էիցն» (*Բրս. Երրորդ. 2.255*) – ἡ αἰτία τοῦ εἶναι τοῖς οὖσιν
(PG 31.465),

«է» (*Փիլ. Ժ Բան 238*) – ὁ ὢν (Ph. Decal. 59.4),

«էիցս» (*Փիլ. Իմաստ. 35, 48*) – τῶν ὄντων (Ph. Abr. 10.2, 57.4),

«էիցս տեսութիւն» (*Նեմես. 15*) – ἡ τῶν ὄντων θεωρία (Nemes. 1.144),

«էիցս» (*Դիոն. Եկեղ. ք. 57.11*) – τῶν ὄντων (Dion. eccl. hier. 1.3),

«ամենայն էքս» (*Դիոն. աստ. անու. 131.20*) – τὰ ὄντα πάντα (Dion. div.
nom. 1.4),

«էիցս» (*Կիւրղ. պրպ. 102*) – τῶν ὄντων (PG 75.1376),

«էից» (*Եւտիք. 195-6*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

«զոչինչս, զի զէսն իմն խափանեսցէ» (*Ա Կոր. Ա 28*) – τὰ μὴ ὄντα, ἵνα
τὰ ὄντα καταργήσῃ (1Cor 1:28):

11 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ «ԴԱՍԱԿԱՆ»

ԵՎ «ՀՈՒՆԱԲԱՆ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

*Հունարեն համեմատական աստիճանով հանդես եկող ածականները թարգ-
մանելիս՝ Տիմոթեոսի թարգմանիչն անպայման կիրառում է «զոյն» վերջա-
ծանցով համեմատական աստիճանը, իսկ Նոր Կտակարանում այն կարող է
արտահայտված լինել այլ եղանակներով կամ արտահայտված չլինել.*

«այսոցիկ սրբազնագոյն» (*Պղատ. Մին. 473*) – τούτων ἱερώτατον (Pl. Min.
319a7),

«թագաւորականագոյն» (*Պղատ. Մին. 475*) – βασιλεύτατος (Pl. Min.
320d3),

«մեծագոյն» (*Տիմ. 305*) ≠ «մեծ» (*Յովհ. Ե 9*) – μείζων (1Jn. 5:9),

«զիւրավաստակագոյն» (*Տիմ. 293*) ≠ «զիւրին» (*Մկ. Բ 9*) – εὐκοπώτερον
(Mk. 2:9),

«զանազանագոյն քան զնոսա» (*Տիմ. 308*) ≠ «լաւ ևս քան զնոսա» (*Եբր. Ա
4*) – διαφωρότερον παρ' αὐτοῦς (Hebr. 1:4),

«նորագունագոյն» (*Տիմ. 324՝ ածանցը կրկնվել է*) ≠ «մատաղ» (*Ոսկ. Պող. Բ
447*) – νεώτατον (PG 62.437),

«լաւագոյն եղեալ հրեշտակաց» (*Տիմ. 308*) ≠ «առաւել եղեալ քան զհրեշ-
տակս» (*Եբր. Ա 4*) – κρείττων γενόμενος τῶν ἀγγέλων (Hebr. 1:4):

*Վերջին օրինակում համեմատութեան եզր հանդիսացող բառի սեռական
հոլովի («համեմատութեան սեռական») ճշգրիտ վերարտադրումը («հրեշտա-
կաց») չարահայտական հունաբանութիւն է (տե՛ս Գ 1ե):*

Գ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Շարահյուսական հունաբանությունները տեքստերում հայտնաբերելը լեզվական քննության ամենադժվար մասն է: Այն պահանջում է երկարատև և ուշադիր ընթերցում՝ հունարեն սկզբնագրի մշտական ուղեկցությամբ: Այնուամենայնիվ՝ չենք կարող վստահ լինել, որ մեզ հաջողվել է նկատել հունարենի շարահյուսության ազդեցության բոլոր արտահայտումները: Ձէ^o որ գրաբարի շարահյուսությունն այդ լեզվի ամենից քիչ նկարագրված բաժինն է, և որոշ երևույթների մասին մեր գիտելիքները շատ ընդհանուր բնույթ ունեն: Հետևաբար մեր նշած առանձնահատկությունները հավանաբար միայն կարևորագույններն են:

Թվարկելով տարբեր հետազոտողների (այդ թվում և մեր) նկատած քսանմեկ տեսակի շարահյուսական հունաբանությունները՝ Վայտենբերգը բաժանել է դրանք երկու խմբի²³⁴: Առաջինն այն շարահյուսական կառույցներն են (1-14), որոնք գերազանցապես հունաբանությունն են, այսինքն՝ դժվար թե ի հայտ գային լեզվի ինքնուրույն զարգացման ընթացքում, առանց հունարենի ազդեցության: Երկրորդ խմբում (15-21), նրա կարծիքով, հունարենի ազդեցությունը, ճիշտ է, առկա է, սակայն այդքան վճռական չէ՝ այդ կառույցները լեզվի ներքին հնարավորությունների ընդլայնման արդյունք են: Երկրորդ խումբը, սակայն, երկու վիճելի կետ է պարունակում՝ դրանցում ներկայացված են հունարեն համեմատության սեռականի թարգմանությունը «քան զ-» + հայցականով (17) և գոյականացված դերբայի (20) թարգմանությունը հարաբերական նախադասությամբ, երկուսն էլ՝ դասական եղանակներ: Սխալի պատճառն այն է, որ դրանք ևս կիրառվել են հունաբան թարգմանություններում և արձանագրվել դրանց նկարագրություններում, սակայն հետազոտողները հատուկ չեն նշել այդ եղանակների դասական բնույթը՝ ըստ երևույթին այն ակնհայտ համարելով:

1 ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1ա «Էթիկական տրական» (dativus ethicus)

Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների տրականը հունարենում կարող էր արտահայտել խոսողի կամ հասցեատիրոջ շահագրգռվածությունը, ուներ հոլգական և խոսակցական լեզվին բնորոշ երանգ («խնդրեմ», «տես», «ասեմ քեզ» և նման իմաստներով, հաճախ էլ անթարգմանելի է)²³⁵.

²³⁴ WEITENBERG 2001-2002:

²³⁵ Այս կիրառությունը մոտ էն ռուսերեն խոսակցական "смотри у меня!" տիպի արտահայտությունները:

«Իմասցիս ինձ գայրաձևն» (Դ. Պորփ. 194.20) – νοήσεις μοι τὸν ἀνδριάντα (D. Porph. 214.5),

«Իմասցիս ինձ զՍոկրատես» (Դ. Պորփ. 108.9-10) – տարբեր է հունարեն բնագրից:

1բ «Բնորոշման սեռական» (genetivus characteristicus)

*Կարելի է խոսել և չտարբերակված սեռական-տրականի մասին*²³⁶.

«Նորին բնութեան է բարեպաշտն գոլ» (Փիլ. իմաստ. 86.14) – αὐτῆς φύσεως ἐστὶν εὐσεβὴ εἶναι (Ph. Abr. 208.3),

«այս է փարթամին» (Դ. Պորփ. 42.5-6) – τοῦτο ἐστὶ πλουσίου (D. Porph. 111.9-10),

«Քանզի և ոչ վերնագոյն գոյացութեան է մտաց և հանճարոյ ընդունակն գոլ» (Դ. Պորփ. 28-29) – οὐτε γὰρ τῆς ὑπερέρας οὐσίας ἐστὶ τὸ νοῦ καὶ ἐπιστήμης δεκτικὸν εἶναι (D. Porph. 12-13),

«Լինիցի ամսոց ինունց» (Նոննոս I.4.6) – γένηται τῶν ἐννέα μηνῶν (Nonnos 39.4.15):

Պատահում է և տարբերակված տրական՝ հունարեն սեռականի դիմաց.

«Բժշկելն միայնում մարդոյ գոյ, այլ ոչ ամենայնում» (Դ. Պորփ. 172.1) – τὸ ἰατρεύειν μόνου ἀνθρώπου ἐστὶν... μὴ ἐκάστου (D. Porph. 203.1-2):

1գ «Ունենալ» նշանակությունամբ էական բայի հետ սեռական և տրական

*Ջ. Բոլոնյեզին բնորոշել է հունարեն տրականը էական բայի հետ տարբերակված տրականով թարգմանելը որպես դասական թարգմանություններում արձանագրված չարահայտական հունարանություն*²³⁷.

«որում անուն էր Նազարեթ» (Ղկ. Ա 26) – ἦ ὄνομα Ναζαρέθ (Lk. 1:26),

«որում անուն էր Յովսեփ» (Ղկ. Ա 27) – ὦ ὄνομα Ἰωσήφ (Lk. 1:27),

²³⁶ Գ. Խաչատրյանը սակայն (ԽԱՉԱՏՐՅԱՆ 2002, 110-114) բնորոշում է նշված կառույցը որպես «բնութագրական սեռական + միադիմի բանաձև + անորոշ դերբայ»: Օրինակներ է բերել Եզնիկից, Ագաթանգեղոսից, Ոսկերեանից («Քանզի չէ մարդկեղէն մտաց զօրութեան այնմ ամենայնի, որ հաւատացաւ մեզ՝ բաւական լինել ի պահպանութիւն» [Պօղ. Ա 192] – Οὐ γάρ ἐστὶν ἀνθρωπίνης ψυχῆς οὐδὲ δυνάμεως, τοσαῦτα ἐμπιστευθέντα ἀρκέσαι πρὸς τὴν φυλακὴν [PG 62.613.36]), Մակարայեցիների երկրորդ գրքից («Բայց սակայն սա անագորոյն մտաց է զճառս մատենին յառաջագոյն երկայնել» [Բ 33] – εὐθὺς γὰρ τὸ μὲν πρὸ τῆς ἱστορίας πλεονάζειν [2:32] «անագորոյն մտաց է» համապատասխանում է հունարենի մեկ ածականի), Առակաց գրքից («Իմանալ զօրէնս՝ մտաց առատաց է» [Թ 10] – τὸ γὰρ γινῶναι νόμον διανοίας ἐστὶν ἀγαθῆς [9:10]): Խաչատրյանը նշում է իր հետազոտած մասնակաղապարի հազվագյուտ լինելը հինգերորդ դարի հեղինակների և առատ կիրառությունը Գրիգոր Նարեկացու մոտ (ԽԱՉԱՏՐՅԱՆ 2002, 114):

²³⁷ BOLOGNESI 1961, 682-683:

«որում անունն էր Յաիրոս» (Ղկ. Ը 41) – ὄνομα Ἰαῖρος (Lk. 8:41):

Բոլոնյեզիի բնորոշումը որոշ ճշգրտման կարիք ունի հետևյալ փաստերի լույսի ներքո: Հունարենում երկու հոլովին էլ հատուկ է այսպիսի կիրառությունը. խոսվում է նույնիսկ դրանց զուգահեռ հանդես գալու մասին²³⁸: Նման իրավիճակ է և դասական հայերենում. ավելին, «եզակի սեռական և տրական հոլովների նույնաձևությունը դեպքում և հոգնակիում (ուր այդ երկու հոլովները միշտ նույնաձև են, բացի «մեր» – «մեզ», «ձեր» – «ձեզ»²³⁹) անհնարին է որոշել նրանց սեռական կամ տրական լինելը»²⁴⁰: Հետևաբար դժվար է ասել, թե թարգմանությունը որ եղանակն է օրինաչափ, իսկ որը կարելի էր բնորոշել որպես հունաբանություն: Այդ պատճառով դասական և հունաբան թարգմանություններում մեր արձանագրած հետևյալ զուգահեռները վկայում են տարբերակների ազատ ընտրության մասին՝ հունարեն նմանօրինակ տարբերակները թարգմանելու համար.

1) *Հունարեն սեռականի դիմաց՝ տարբերակված սեռական-տրական.*

«ոչ սակաւ զանազանութիւնք են պղատոնականացն» (Դ. Պորփ. 48.2) – οὐκ ὀλίγη γέγονε διαφορὰ τῶν Πλατωνικῶν (D. Porph. 115.3),

«Սեռականազունից սեռիցն ոչ են բաղկացուցիչ զանազանութիւնք» (Դ. Պորփ. 128.10-11) – τῶν γενικωτάτων γενῶν οὐκ εἶσι συστατικαὶ διαφοραὶ (D. Porph. 181.16).

2) *Հունարեն սեռականի դիմաց՝ տարբերակված տրական.*

«ոչ է ձեզ դիտել զժամս» (Գծ. Ա 7) – οὐχ ὑμῶν ἐστὶν γινῶναι χρόνους (Act. 1:7),

«Թոյլ տացէ որ զբանականն զանազանութիւն գոլ սեռում որպէս սեռում» (Դ. Պորփ. 138.1) – συγχωρηθῆναι τὸ λογικὸν διαφορὰν εἶναι τοῦ γένους ὡς γένους (D. Porph. 187.18),

«սա և ամենայնում և միայնում» (Դ. Պորփ. 168.28) – τοῦτο δὲ καὶ τοῦ παντός ἐστὶ καὶ μόνου (D. Porph. 202.4).

3) *Հունարեն սեռականի դիմաց՝ «ունիմ» բայն ուղղական ենթակայի հետ.*

«յանհասուն տարածանելով մարդ՝ ոչ այնչափ ինչ ունի զանազանութիւն» (Դ. Պորփ. 138.7-8) – τοῦ ἐπὶ τὰ ἄτομα ἐξαπλουμένου ἀνθρώπου οὐ τοσαῦταί εἰσιν (διαφοραί) (D. Porph. 187.23-24).

4) *Հունարեն տրականի դիմաց՝ տարբերակված սեռական.*

«Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի» (Ղկ. Է 41) – δύο χρεοφειλέται ἦσαν δανειστῇ τινι (Lk. 7:41),

«և էր անուն նորա Էմմաուս» (Ղկ. ԻԲ 13) – ἦ ὄνομα Ἑμμαοῦς (Lk. 12:13),

²³⁸ SMITH 1984, 342:

²³⁹ Եզակի թվում տարբերակված են «ո» հոլովման մի քանի գոյականների, ածականների և դերանունների սեռականի և տրականի ձևերը. սեռականի «ո» և տրականի «ում»/«ոջ» վերջավորությունների արհեստականորեն ընդլայնված կիրառությունը (ԲՁա, 2բ) ընդլայնված է և այդ հոլովների տարբերակման հնարավորությունը:

²⁴⁰ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 235 (581), 238-239 (590):

«որոյ անունն էր Սիմէոն» (Ղկ. Բ 25) – ὄνομα Συμεών (Lk. 2:25),
«(ծիծաղականն) սորա միայնոյ է» (Նեմես. 19) – (τὸ γελαστικὸν) μόνῳ
τούτῳ πρόσσεστι (Nemes. 1.274).

5) Հունարեն «ունենալ» բայի դիմաց՝ սեռական կամ տրական հոլովի հետ
էական բայ.

«առն միոջ էին երկու որդիք» (Մթ. ԻԱ 28) – ἄνθρωπος εἶχεν τέκνα δύο
(Mt. 21:28),

«ոյց իցեն երկու հանդերձք» (Ղկ. Գ 11) – ὁ ἔχων δύο χιτῶνας (Lk.
3:11),

«երեք բարք են առիւծու» (Phys 2.3) – ὁ λέων... τρεῖς φύσεις ἔχει,

«գոյ ինչ... յաւձին բարի» (Phys. 6.17) – ἔχει καλόν τι ὁ ὄφις,

«իգին չիք որովայն» (Phys. 3.6) – ἡ θήλεια οὐκ ἔχει κόλπον,

«հրէից որոց որդեգրութիւնն էր» (Phys. 8.2) – τῶν Ἰουδαίων τῶν τὴν
υἱοθεσίαν ἐσχηκότων,

«երեք բարք են աւձի» (Phys. 14.2) – (ὄφις) τρεῖς φύσεις ἔχει,

«երեք բարք են մըջման» (Phys. 15.2) – ὁ μύρμηξ... τρεῖς φύσεις ἔχει,

«ինձ պիտոյ է» (Մթ. Գ 14) – χρεῖαν ἔχω (Mt. 3:14),

«պիտոյ է ձեզ» (Մթ. Զ 8) – χρεῖαν ἔχετε (Mt. 6:8),

«աղուեսուց որջք գոն... որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զպիւլի իւր»
(Մթ. Թ 19) – αἱ ἀλώπекες φάλοους ἔχουσιν... ὁ δὲ υἱὸς ἀνθρώπου οὐκ
ἔχει ποῦ τὴν κεφαλὴν κλίνῃ (Mt. 9:19),

«դէ գոյ ի նմա» (Մթ. ԺԱ 18) – δαιμόνιον ἔχει (Mt. 11:18):

1դ Մասնական սեռական (genetivus partitivus)

Հայերենի համար օրինաչափ է մասնականութեան գաղափարն արտահայ-
տել բացառական հոլովով, օրինակ՝

«մի յանդամոց քոց» (Մթ. Ե 29), – ἐν τῶν μελῶν σου (Mt. 5:29),

«իբրեւ զմի ի նոցանէ» (Մթ. Զ 29) – ἐν τούτων (Mt. 6:29),

«միում ի փոքրկանցս յայսցանէ» (Մթ. Ժ 42) – ἓνα τῶν μικρῶν τούτων
(Mt. 10:42),

«արք սակաւ յոլով յերեք հարիւրոց» (Թեոն 94) – ἄνδρες ὀλίγω πλείους
τρικοσίων (Theon 5.90.30-31),

«իւրաքանչիւր ոք ի սոցանէ» (Դ. Պորփ. 10.14) – ἐκάτερον τούτων (D.
Porph. 84.28),

«ի ներգործութեանցն ոմանք» (Դ. Պորփ. 46.25) – τῶν ἐνεργειῶν αἱ μέν
(D. Porph. 114.26-27):

Մ. Մինասյանի բնորոշմամբ, դասական թարգմանություններում հանդի-
պող մասնական սեռականի սակավաթիվ դեպքերը կամ ուղղելի են բացառա-
կանի, կամ էլ, եթե նախնական են, հունաբանություն են.

«եւ նա ի մի նաւուցն» (Ղկ. Ե 3) – ἐμβὰς εἰς ἓν τῶν πλοίων (Lk. 5:3),

«ի միում աւուրց» (Ղկ. Ը 22, Ի 1) – ἐν μία τῶν ἡμερῶν (Lk. 8:22, 20:1):
Բերենք հունարեն մասնական սեռականի բառացի թարգմանությունը բազմաթիվ այլ դեպքեր.
 «ընդ իւրաքանչիւրս արդարոցն» (Բրս. հց. 14[38]) – μεθ' ἐκάστου τῶν ἀγίων (PG 31.897[27]),
 «զերեւելիս քարացն» (Բրս. ընչեղ. 7.161) – τοὺς διαφανεῖς τῶν λίθων (Bas. div. 7.5),
 «ո՛վ աստուածայինը թագաւորաց» (Նազ. ճ.4.34) – ὁ θειότατε βασιλέων (PG 35.560.43),
 «ո՛վ սիրելեաց առաքինիդ» (Նազ. առ Նիւս. 232) – ὁ φίλων ἄριστε (PG 35.833[87]),
 «առ բազմածաղիկսն բուրաստանացն» (Նիւս. Կ. Մ. 77) – πρὸς τοὺς πολυανθεῖς τῶν λειμώνων (PG 46.741),
 «ձայնաւորաց երկայնք» (Թրակ. 5.6) – τῶν φωνηέντων μακρά (Thrax 10.1),
 «զեղեցկադոյնք էիցս» (Փիլ. իմաստ. 48) – τὰ κάλλιστα τῶν ὄντων (Ph. Abr. 57.4),
 «զհարկաւորադոյնս զգայութեանց» (Փիլ. տես. 8) – τὴν ἀναγκαιοτάτην τῶν αἰσθήσεων (Ph. Cont. 10.3),
 «ընդ ում ումեք... այնոցիկ որ խոստանան զբարեպաշտութիւնն» (Փիլ. տես. 6) – οἷς τινας... τῶν ἐπαγγελλομένων εὐσέβειαν (Ph. Cont. 3.1),
 «աւգտակարադոյնս արուեստից» (Փիլ. ալլաբ. 109) – τὰς ὠφελιμωτάτας τῶν τεχνῶν (Ph. LA 1.14),
 «սողնոցն թունաբերքն» (Փիլ. նիւ. 114) – τῶν ἐρπετῶν τὰ ἰόβολα (Ph. Prov. 2.59.2),
 «գազանաց չարադոյնն» (Փիլ. նիւ. 116) – θηρίων ἀργαλεώτατον (Ph. Prov. 2.65.3),
 «բնութիւն ուրուք եղելոցս» (Իրեն. հերձ. 162) – φύσις τινὸς τῶν γεγονότων (Ir. Her. V.6),
 «վաղք ճարտասանացն» (Թեոն 4) – οἱ παλαιοὶ τῶν ῥητόρων (Theon 1.59.1),
 «տարբերացն են ինչ... և են» (Պորփ. 141) – τῶν διαφορῶν αἱ μὲν... αἱ δέ... (Porph. 8.19),
 «ամենեցուն այսոցիկ սրբազնադոյն է մարդ» (Պղատ. Մին. 473) – πάντων τούτων ἱερώτατόν ἐστιν ἄνθρωπος (Pl. Min. 319a7),
 «թագաւորականադոյն եղև մահկանացու թագաւորաց» (Պղատ. Մին. 475) – βασιλεύτατος γένετο θνητῶν βασιλέων (Pl. Min. 320d3),
 «զվերջինսն չարեաց» (Պղատ. Սոկր. 71) – ἔσχατα κακῶν (Pl. Apol. 40a8),
 «երկաքանչիւրոցս այսոցիկ» (Դ. Պորփ. 26.29) – ἐκατέρου... τούτων (D. Porph. 96.20),
 «տարբերութեանցն ոմանք են հանրականք, և ոմանք մասնականք» (Դ. Պորփ. 154.10) – τῶν διαφορῶν αἱ μὲν μερικαὶ εἰσιν αἱ δὲ καθολικαί (D. Porph. 194.27),

«որոց առաջինն» (*Դ. Պորփ. 160.13*) – ὧν ἡ πρώτη (D. Porph. 197.28-29),
 «տարերցս է ինչ» (*Նեմես. 17*) – τῶν στοιχείων τὰ μέν (Nemes. 1.204),
 «Իւրաքանչիւր ոք սոցա» (*Զեն. 2.5.1*):
 Հատկապես արհեստական են հնչում եզակի մասնական սեռականի դեպ-
 քերը.
 «Խրատուս ոմն է բացասական... և ոմն՝ հրաժարական» (*Պիտ. 44.4-5*) – τῆς
 δὲ γνώμης τὸ μέν ἐστὶ προτρεπτικόν, τὸ δὲ ἀποτρεπτικόν (Aphth. 67.3),
 «է նորա որ անշատական է, և է որ անանշատելի» (*Պորփ. 145*) – τὸ μέν
 αὐτοῦ χωριστόν ἐστίν, τὸ δὲ ἀχώριστον (Porph. 12.25),
 «սպիտակին ոմանք ձիւն են և ոմանք բուռ» (*Դ. Սահմ. 136.22-23*) – λευ-
 κοῦ τὸ μέν ἐστὶ χίτων, τὸ δὲ ψιμύθιον (D. Prol. 66.11):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ
 «սոցուն այսոցիկ ոմն» (*Տիմ. 323*) ≠ «ի նոցանէ ոմն» (*Ոսկ. Պող. Բ 446*) –
 αὐτῶν δὴ τούτων ὁ μέν (PG 62.436),
 «ձկանց իւրաքանչիւր» (*Տիմ. 323*) ≠ «ի ձկանց իւրաքանչիւր ոք» (*Ոսկ.
 Պող. Բ 445*) – τῶν ἰχθύων ἕκαστος (PG 62.436.39),
 «այսոցիկ ոմն» (*Տիմ. 323*) ≠ «ի նոցանէն ոմն» (*Ոսկ. Պող. Բ 446*) – τούτων
 ὁ μέν (PG 62.436),
 «ի վերջինս աւուրցս» (*Տիմ. 313*) ≠ «ի վախճան աւուրցս» (*Եբր. Ա 2*) – ἐπ’
 ἐσχάτου τῶν ἡμερῶν (Hebr. 1:2),
 «մի սացա... և մի սացա» (*Փիլ. ալլաբ. 157*) ≠ «ի նոցանէ մին... և միւսն» (*Բ
 Օրին. ԻԱ 15-16*) – μία αὐτῶν... καὶ μία αὐτῶν (Ph. LA 2.48 = Deut. 21:15-
 16):

1ե «Համեմատության սեռական» (genetivus comparationis)

Ածականի համեմատական աստիճանի հետ համեմատության եզր ցույց
 տվող բառերը դասական լեզվում ևս արտահայտվում էին բացառական հոլո-
 վով կամ «քան» + հայցականով, իսկ սեռական հոլովը նման դեպքում հու-
 նաբանություն է.
 «մեծ մերոցս և պատուականագոյն» (*Նազ. ճ.2.4*) – μέγιστον τῶν ἡμετέ-
 ρων καὶ τιμιώτατον (PG 35.412.12),
 «մեծագոյն է ծովու» (*Հերմ. 301.14-15*),
 «վատթարի լաւագոյն» (*Ար. Ստոր. 132*) – χείρονος κάλλιον (Arist. Cat.
 8b10),
 «աւելիք սայց» (*Ար. Մեկն. 167*) – πλείους τούτων (Arist. Int. 20a1),
 «երրորդն՝ երկրորդին յայտնագոյն» (*Դ. Պորփ. 168.20*) – τὸ τρίτον τοῦ
 δευτέρου ἐπιφανέστερον (D. Porph. 201.28),
 «Իսկ քառորդն երրորդին է յայտնագոյն» (*Դ. Պորփ. 168.21-22*) – τὸ τέ-
 ταρτον δὲ τοῦ τρίτου ἐστὶν ἐμφανέστερον (D. Porph. 201.29),

«նուազագոյն ինչ է նախասացելոցն, այլ լաւագոյն է, քան զայլ երիսն ևս» (Դ. Պորփ. 158.17-18) – ἐλάχιστος ἐστὶ τῶν προειρημένων· κρείττων ἐστὶ τῶν ἄλλων τριῶν (D. Porph. 197.14-15)՝ երկրորդ համեմատութեան սեռականը թարգմանված է ոչ բառացի՝ «քան» + հայցական հոլով:

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

«լաւագոյն եղեալ հրեշտակաց» (Տիմ. 308) ≠ «առաւել եղեալ քան զհրեշտակս» (Եբր. Ա 4) – κρείττων γενόμενος τῶν ἀγγέλων (Hebr. 1:4):

1գ «Տարբերական սեռական» (genetivus distinctionis/separationis)

«յատկոյրն տարբեր է սեռն» (Պորփ. 135) – τοῦ ἰδίου διαφέρει τὸ γένος (Porph. 3.1),

«այլոցն չորից տարբեր է» (Պորփ. 150) – τῶν ἄλλων τεττάρων διαφέρει (Porph. 17.14),

«սահմանականն նախադասի ապացուցականին» (Դ. Պորփ. 90.1-2) – ἡ δὲ ὀριστική προτερεύει τῆς ἀποδεικτικῆς (D. Porph. 18.35-36),

«իւր յառաջ է մարդոյ» (Դ. Պորփ. 194.5) – τὸ πρᾶγμα τοῦ ἀνθρώπου προτερεύει (D. Porph. 211.28),

«յառաջագոյն է Սոփրոնիսկոս Սոկրատայ» (Դ. Պորփ. 194.2) – προτερεύει ὁ Σωφρονίσκος τοῦ Σωκράτους (D. Porph. 211.26),

«զանազանի սեռ տարբերութեան» (Դ. Պորփ. 190.26, 192.2) – διαφέρει τὸ γένος τῆς διαφορᾶς (D. Porph. 210.30, 211.1),

Այս դեպքում նույնպէս ոչ բառացի համարժեքը «քան» + հայցականն է.

«քանզի սեռն... տարբեր է քան զտարբերութիւն» (Պորփ. 151) – τὸ γὰρ γένος διαφέρει τῆς διαφορᾶς (Porph. 17.21),

«նախադասել յառաջ քան զտարբերութիւն» (Դ. Պորփ. 80.9) – προτάσσεσθαι τῆς διαφορᾶς (D. Porph. 143.3),

«յառաջագոյն քան զնա... որ ի վերջոյ քան զնա» (Դ. Պորփ. 50.30-31) – πρὸ αὐτοῦ... τὸν μετ' αὐτόν (D. Porph. 117.14),

«քան զինքն գերազանցեալ սեռ» (Դ. Պորփ. 86.31) – ἐπαναβεβηκὸς... αὐτῆς... γένος (D. Porph. 148.4):

1է Բացականչութեան սեռական (genetivus exclamationis)

Բացականչական բառը հունարենում կարող էր արտահայտվել ոչ միայն կոչական կամ ուղղական հոլովով, այլև սեռականով. արձանագրել ենք այդպիսի սեռականի պատճենման դեպքեր.

«ո՛վ չար խաւարիս զծագումն լուսաւորին ոչ յուսարով» (Նիւս. Կ. Մ. 189) – ὦ κακῆς σκοτομήνης, ἀνατολὴν φωστῆρος οὐκ ἐλπίζούσης (PG 46.852),

«ո՛վ չար նաւաբեկութեանս» (Նիւս. Կ. Մ. 189) – ὁ πονηροῦ ναυαγίου (PG 46.852),
 «ո՛վ սքանչելեացն» (Նիւս. կաղմ. 55) – ὁ τοῦ θαύματος (PG 44.133.54),
 «ո՛վ զարմանալեացս» (Նազ. ճ.9.4, Բրս. մկրտ. 425) – ὁ τοῦ θαύματος (PG 35.825.2, 31.429.16),
 «ո՛վ սքանչելոյս» (Բրս. ի սկզբանէ 2.262) – ὁ τοῦ θαύματος (PG 31.476.18),
 «ո՛վ անբանութեանս» (Բրս. քակեցից 6.143) – ὁ τῆς ἀλογίας (Bas. destruat 6.4),
 «ո՛վ դաւաճանութեանս» (Նազ. ճ.4.3) – ὁ τῆς ἐπιτηρείας (PG 35.533.12),
 «ո՛վ իմաստուն հոգւոյն... ո՛վ աստուծոյ» (Նազ. ճ.4.26) – ὁ ψυχῆς σοφίης... ὁ θεοῦ (PG 35.553.18),
 «ո՛վ մեծի պարգևի» (Փիլ. լին. 3.43),
 «ո՛վ երիցս երանելոյ և երիցս բարեբաստիկ ոգւոյ» (Փիլ. լին. 4.9),
 «ո՛վ ամենաբարոյ և աստուածավայելուչ կարգի դասուն» (Փիլ. ել. 2.29),
 «ո՛վ երկրորդի իմաստութեան» (Փիլ. Սամփս. 574),
 «ո՛հնարագործ բազմաշուրջ յարկիդ» (Պիսիդ. 145.160),
 «ո՛հ անտեղւոյս այսորիկ և ահագին դրժութեանս» (Բրս. ծն. 437-8) – ὁ τῆς ἀτόπου ταύτης καὶ πονηρᾶς ἀγνωμοσύνης (PG 31.1473.31):

2 ԳՈՅԱԿԱՆԱՑՈՒՄ

Հունարեն հոդը, որ համաձայնեցվում է գոյականի հետ սեռով, թվով և հոլովով, բացի որոշյալ իմաստից, ունի նաև ցանկացած խոսքի մասի բառ կամ բառակապակցություն գոյականացնելու գործություն: Հունաբան թարգմանիչները ձգտում էին թարգմանել գոյականացնող հոդը՝ երբեմն նույնիսկ ոչ հայցական հոլովով կիրառված, հայցականի հետ օգտագործվող «զ» նախդրով, ավելի հազվադեպ՝ «ն» հոդով, երբեմն էլ՝ երկուսի զուգակցումով: Չհոլովվող խոսքի մասերին (օրինակ, մակբային) կցված հոլովական վերջավորությունները նույնպես գոյականացնում էին դրանք:

2ա Գոյականացված ածական

«աստուածայինսն» (Նազ. ճ.2.5, Պետ. Գ.Թ. 102) – τὰ θεῖα (PG 35.412.20),
 «Պելեպալեսիականքն» (Պիտ. 184.19, 185.1) – *τὰ Πηλοπονησιακά («Պելոպոնեսի պատերազմը»),
 «զվերինսն... զստորինսն» (Հերմ. 301.17-18),
 «աստուածայինքն» (Դ. Սահմ. 14.11, Դիոն. աստ. անու. 128.22) – τὰ θεῖα (D. Prol. 5.16, Dion. div. nom. 1.1),

«զմարդկայինսն» (Դ. Սահմ. 66.3) – τὰ ἀνθρώπινα (D. Prol. 28.29),
 «ծիծաղականն» (Դ. Պորփ. 10.21, 54.17, Նեմես. 19) – τὸ γελαστικόν (D. Porph. 85.6, 119.6, Nemes. 1.274՝ «ծիծաղելու ունակությունը»),
 «խխնջականն» (Պորփ. 139, 145, Դ. Պորփ. 110.12) – τὸ χρεμετιστικόν (Porph. 7.5, 12.20՝ «խրխնջալու ունակությունը»),
 «զաստուածայինսն... զմարդկայինսս» (Դիոն. Թղթ. 233.11) – τὰ θεῖα... τὰ ἀνθρώπεια (Dion. epist. 4.1):

2բ Գոյականացված անորոշ դերբայ

«զբարեպաշտապէս... զկեալն» (Նիւս. Կ. Մ. 215) – τῷ δὲ εὐσεβῶς... ζῆν (PG 46.744)՝ *Հոգը տրական հոլովով է*,
 «զյաղթելն... զսատակելն» (Աղեքս. 111) – τὸ νικῆσαι... τὸ ἀνελεῖν (Alex. α 1.19.4.4),
 «ի վեցսն աւուրս եղանիլն ամենայն» (Փիլ. ալլաբ. 111) – τὸ ἐν ἑξ ἡμέραις γεγενῆσθαι τὸ πᾶν (Ph. LA 1.20),
 «զամուսնանալն» (Թեոն 164) – τὸ γαμεῖν (Theon 11. 128.14),
 «զգոլն» (Աթ. 143, Դ. Պորփ. 142.24, 28) – τὸ εἶναι (PG 28.10[448], D. Porph. 189.25, 29),
 «ասելն» (Դ. Սահմ. 138.5) – τὸ λέγειν (D. Prol. 67.1),
 «զհետեւիլն» (Դ. Պորփ. 4.11) – τὸ ἀκολουθῆσαι (D. Porph. 81.16),
 «հետեւիլն» (Դ. Պորփ. 32.21) – τὸ ἔπεσθαι (D. Porph. 100.24),
 «զլիւնելն» (Դ. Պորփ. 140.31) – τὸ εἶναι (D. Porph. 189.5),
 «զգալն» (Նոննոս 1.3.5) – τὸ ἐληλυθῆναι (Nonnos 39.3.6),
 «ոչ ելն» (Եւտիք. 19-20.4):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

1) *գոյականացված ինֆինիտիվը թարգմանված է անորոշ դերբայի համապատասխան հոլովով՝*

«աչս տեսանելոյ և ականջս լսելոյ» (Բ Օր. ԻԹ 4) – ὁφθαλμοὺς βλέπειν καὶ ὠτα ἀκούειν (Deut. 29:4),

2) *Հոգի օգնությամբ գոյականացված ինֆինիտիվը թարգմանված է սոսկ անորոշ դերբայով՝*

«ի միտ առնուլ» (Ծնն. ԻԴ 21) – τοῦ γινῶναι (Gen. 24:21՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«անարգել» (Հռ. Ա 24) – τοῦ ἀτιμάζεσθαι (Rom. 1:24՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«արժան... երթալ» (Ա Կոր. ԺԶ 4) – ἄξιον τοῦ πορευθῆναι (1Cor. 16:4՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«մատնեսցեն զնա... ապանել» (Մթ. Ի 19) – παραδώσουσιν εἰς τὸ ἐμπαῖξαι (Mt. 20:19՝ *Հոգը նախդրով հայցական հոլովով է*).

3) *Հոգի օգնությամբ գոյականացված ինֆինիտիվը թարգմանված է գոյականով՝*

«ի կամաց» (*Բ Կոր. Ը 11*) – τοῦ θέλειν (2Cor. 8:11),

«գիտելոյ զբարի և զչար» (*Փիլ. ալլաբ. 136*) ≠ «գիտութեան բարւոյ և չարի» (*Ծնն. Բ 16-17*) – τοῦ γινώσκειν καλὸν καὶ πονηρόν (Ph. LA 1.60 = Gen. 2:16-17՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«յոչն էութենէ ի գոլն» (*Տիմ. 324*) ≠ «յոչնչէ ի գոյ» (*Ոսկ. Պող. Բ 445*) – ἐκ τοῦ μὴ ὄντος εἰς τὸ εἶναι (PG 62.436՝ *Հոգը նախդրով հայցական հոլովով է*),

4) *Հոգի օգնությամբ գոյականացված ինֆինիտիվը թարգմանված է հարաբերական նախադասությամբ՝*

«աչս որովք ոչ տեսանիցին և ականջս որովք ոչ լսիցեն» (*Հռ. ԺԱ 8*) – ὁφθαλμοὺς τοῦ μὴ βλέπειν καὶ ὦτα τοῦ μὴ ἀκούειν (Rom. 11:8՝ *Հոգը սեռական հոլովով է*):

2գ Բայի դիմավոր ձև

«ողջացան կամ ողջացիրն» (*Ար. Մեկն. 157*) – τὸ ὑγιανεν ἢ τὸ ὑγιανεῖ (Arist. Int. 16b16),

«Հանդերձ էին կամ էրն կամ եղիցիրն» (*Ար. Մեկն. 156*) – μετὰ τοῦ ἔσ-
τιν ἢ ἦν ἢ ἔσται (Arist. Int. 16b3),

«զենթակայացան» (*Դ. Պորփ. 54.22*) – τὸ ὑφέστηκε (D. Porph. 119.14),

«զփորձեցայցն» (*Դ. Պորփ. 36.16*) – τὸ πειράσομαι (D. Porph. 107.23),

«որ ամենայն գնայն մարդ» (*Դ. Վերլուծ. 136*),

«հաճոյ եղևն» (*Թեոն 46*) – τὸ ἔδοξεν (Theon 3.102.23),

«զասին» (*Թեոն 48*) – τὸ λέγεται (Theon 3.102.31):

2դ Գոյականացված մակբայ

«զաստուստն» (*Ոսկ. Թեոդ. 24.23*) – τὰ ἐνθένδε (Chrys. Theod. 5.27),

«զեր ի վերոյք» (*Նազ. ճ.2.3*) – ἀνωτέρω (PG 35.409.27),

«ի զկնիսն» (*Բրս. քակեցից 3.138*) – εἰς ὑστερον (Bas. destruam 3.9),

«զայծմուս» (*Փիլ. ալլաբ. 138*) – τὰ νῦν (Ph. LA 1.95),

«զարտաքոյս» (*Փիլ. ալլաբ. 160*) – τὰ ἐκτός (Ph. LA 2.56), «զարտաքոյսն» (*Դ. Սահմ. 96.18*) – τὰ ἐκτός (D. Prol. 41.9), «զարտաքոյսն» (*Բրս. հայեաց 5.118*) – τὰ ἔξω (Bas. Attende 33.22), «զարտաքինսն» (*Բրս. մախ. 1.192*) – τοὺς ἔξωθεν (PG 31.372),

«զաստին» (*Փիլ. լին. 4.219*),

«առաջոյքս ոչ տեսանեն զկնիսն» (*Փիլ. լին. 4.13*),

«ի վերայ բերէ զյորժամ եղևն, գերբն» (*Փիլ. ալլաբ. 111*) – ἐπιφέρει τὸ ὅτε ἐγένετο. τό ποτε (Ph. LA 1.20),
 «արտաքոյքն... զարտաքոյսն» (*Հերմ. 307.31-32*),
 «զ' ի ներքսն» (*Հերմ. 307.33*),
 «զկնիքն» (*Թեոն 22*) – τὰ ἐξῆς (Theon 2.68.3),
 «երբին, ուրին» (*Ար. Ստոր. 141*) – τοῦ τε ποτὲ καὶ τοῦ πού (Arist. Cat. 11b12' *Հոգը սեռական հոլովով է*),
 «զմիչտն» (*Դ. Պորփ. 168.22*) – τὸ ἀεί (D. Porph. 201.29),
 «զքանաբարն» (*Դ. Պորփ. 176.14*) – τὸ ποσαχῶς (D. Porph. 205.3),
 «զոչ երբէք ոչ ուրեք» (*Դ. Պորփ. 140.32, 142.1*) – τὸ μηδαμῇ μηδαμῶς (D. Porph. 189.6, 7),
 «զընդդէմսն» (*Թեոն 14, 50*) – τοῦνάντιον (Theon 1.64.13, 3.103.3),
 «զյատկապէսն» (*Եւտիք. 29-30.21*),
 «երբն... զիարդն» (*Բրս. ծն. 419-20*) – τὸ πότε... τὸ πῶς (PG 31.1457.41):

2դ1 Մակբայ որոշի դերում

Թեև տվյալ դեպքում գոյականացում տեղի չի ունենում, սակայն կրկին ունենք «զ» նախդրով ներմուծվող մակբայ.
 «զաստի զտանջանսն» (*Նազ. ճ.4.50*) – τὰς ἐντεῦθεν βασάνους (PG 35.573.34),
 «զգեր ի վերոյ զօրութեանցն պատճառն» (*Փիլ. լին. 4.25*),
 «զչուրջանակի լոյս» (*Փիլ. իմաստ. 64*) – ταῖς ἐν κύκλῳ... αὐγαῖς (Ph. Abr. 119.4' *Հոգը տրական հոլովով է*),
 «զէապէսն բարօրութիւն» (*Փիլ. տես. 13*) – τὴν ὄντως εὐημερίαν (Ph. Cont. 27.3),
 «զյանկարծօրէն յարձակումն» (*Փիլ. նխ. 113*),
 «զընդդէմսն վարդապետութիւն» (*Իրեն. հերձ. 22*),
 «զվերստին ծնունդ» (*Իրեն. հերձ. 155*):

2ե Այլևայլ ժխտական արտահայտություններ

«զոչ անուանելն» (*Բրս. հց. 2[3]*) – τὸ μὴ ἐπονομάζεσθαι (PG 31.881[73]),
 «զոչ ցաւելին» (*Բրս. բարկ. 3.182*) – τὸν μὴ ἀλγοῦντα (PG 31.360[8]),
 «զոչ Խորթելին» (*Նազ. ճ.4.10*) – τὸ ἀηδές (PG 35.540.43),
 «զոչ մնացելոյ» (*Աթ. 143*) – μὴ μένοντος (PG 28.9[448]),
 «զոչ գոյն» (*Դ. Պորփ. 52.9-10*) – τὰ μὴ ὄντα (D. Porph. 117.22),
 «զոչ ներ բոլորում» (*Դ. Վերլուծ. 112, 118*),
 «զոչ նոյնպիսիսն» (*Ճարտ. 374*),
 «զոչ էսն» (*Դիոն. խորհ. ածաբ. 224.18*) – οὐκ ὄντα (Dion. myst. theol. 1.1),

«զոչ տեսանելն» (Դիոն. խորհ. ածաբ. 226.19) – τῷ μὴ ἰδεῖν (Dion. myst. theol. 2):

24 Թեք հոլովներով բառեր

Սեռական հոլովի հետ հունարեն հոդը նշանակում է (այսինչի/ այսինչ բանի) պատկանելիքը, հանգամանքները, արտահայտումները և այլն. երկու օրինակ ավանդված է դասական թարգմանություններում՝

«երթայք տուք զկայսեր՝ կայսեր, և զաստուծոյ՝ աստուծոյ» (Մթ. ԻԲ 21) – ἀπόδοτε οὖν τὰ Καίσαρος Καίσαρι καὶ τὰ τοῦ θεοῦ τῷ θεῷ (Mt. 22:21),

«զաստուծոյս... զմարդկան» (Մթ. ԺԶ 23) – τὰ τοῦ θεοῦ... τὰ τῶν ἀνθρώπων (Mt. 16:21),

«զԱստուծոյն» (Առաբ. ԼԸ 85.5) – τὰ τοῦ θεοῦ (Ap. XXXIX.6.8),

«զնորայն» (Նազ ճ.4.47) – τὰ ἐκείνου (PG 35.572.23),

«զքոյսն» (Նազ ճ.5.42) – τὰ σά (PG 35.720.7),

«զԵւնմիւնոսացն... զԱրիւնոսացն... զԿէսարիւնոսացն... զՍարբեղիւնոսացն և զՄարկեղիւնոսացն և զՓոտիւնոսացն և զԱպողինարոսացն» (Կոնստ. Ա 274.5-8) – τὴν τῶν εὐνομιανῶν... τὴν τῶν ἀρειανῶν... τὴν τῶν ἡμιαρείων... καὶ τὴν σαβελλιανῶν καὶ τὴν μαρκελλιανῶν καὶ τὴν φωτεινιανῶν καὶ τὴν ἀπολιναριανῶν (Const. I.46.1-2),

«զՊոնտացւոցն... զԹրակացւոցն» (Կոնստ. Բ 275.5-6) – τὰ τῆς ποντικῆς... τὰ τῆς θρακικῆς (Const. II.47.5),

«զՆեովբայ» (Պիտ. 60.13) – *τῶν τῆς Νιόβης (Nik. 310),

«զԿանտուղեայ» (Պիտ. 63.1) – *τῶν τοῦ Κανδαύλου (Nik. 287),

«զԵրակլեայ» (Պիտ. 65.13) – *τῶν τοῦ Ἡρακλέως,

«զՄեդեայ» (Պիտ. 68.10) – *τῶν τῆς Μηδείας²⁴¹ (Nik. 312),

«զԷրիւն արդարակ» (Փիլ. այլաբ. 116) – τὰ θέσει δίκαια (Ph. LA 1.35),

«զոք զներսոյց տասնեկի թուոցն» (Փիլ. այլաբ. 109) – τινὰ τῶν ἐν τὸς δεκάδος ἀριθμῶν (Ph. LA 1.15),

«զԷրեանց... զմիմեանց» (Թեոն 10) – τὰ ἐαυτῶν... τὰ ἀλλήλων (Theon 1.62.23),

«զաշխարհիսս» (Հերմ. 303.22),

«զունակութեամբն» (Դ. Պորփ. 152.19) – τὸ ἐν ἔξει (D. Porph. 194.15),

«զմիայնում» (Դ. Պորփ. 168.19) – τὸ μόνω (D. Porph. 201.27),

²⁴¹ Վերականգնում ենք վերնագրի այս տարբերակները, իսկ Նիկողայոսի մոտ դրանց նախորդականները հետևյալն են. 'Ανασκευὴ ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Νιόβην («եղծում, որ Նիոբեին վերաբերող [պատմությունը] անհավանական է»), 'Ανασκευὴ ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Κανδαύλην («եղծում, որ Կանդավլեսին վերաբերող [պատմությունը] անհավանական է»), համապատասխան հունարեն նախադրությունը չի պահպանվել, 'Ανασκευὴ ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Μηδεῖαν («եղծում, որ Մեդեային վերաբերող [պատմությունը] անհավանական է»):

«զամենայնում, և զմիայնում» (*Դ. Պորփ. 168.21*) – τὸ παντὶ καὶ μόνῳ (D. Porph. 201.28-19):

25 Գոյականացված նախդրավոր բառակապակցութիւններ

Եթե հունարեն նախդրավոր կապակցութեանը նախորդում է հայցական հոլովով գոյականացնող հոդ, այն թարգմանվում է «զ»-ով, որին անմիջապես այլ նախդիր կամ նախադրութիւն է հաջորդում («առ», «ի», «ի վերայ», «յաղագս», «ընդդէմ», «ընդ», և այլն), ինչի արդյունքում նախդիրների կուտակում է տեղի ունենում.

«զառ ի նմանէ զբաղումն» (*Բրս. Հց. 50[131]*) – τὰς ἀπὸ αὐτοῦ ἀσχολίας (PG 31.920[91]),

«զառ ինքն անմիաբանութիւն» (*Բրս. Ընչեղ. 1.148*) – τὸ πρὸς ἑαυτὸν ἀσύμφορον (PG 31.280[69]),

«զյաղագս այսորիկ խնդիրն» (*Աթ. 134*) – τὴν περὶ τούτου ζήτησιν (PG 28.1[52]),

«զառ Աստուած գոհութիւնն» (*Նիււ. Կ. Մ. 216*) – τὴν εἰς θεὸν εὐχαριστίαν (PG 46.748),

«զ'ի վերայ նորա սահմանեալ» (*Առաք. ԺԴ 78.12*) – τὴν κατ' αὐτῶν ὀρισθεῖσαν (Ap. XV.3.2),

«զընդդէմն սորին» (*Առաք. ԻԵ 81.4*) – τοῦναντίον (Ap. XXVIII. 4.8),

«զ'ի մասին գյանգումն» (*Փիլ. ալլաբ. 105*) – τὴν ἐν μέρει πέρασ (Ph. LA 1.1),

«զյառաջնմէ հասակէն զարգացեալս» (*Փիլ. տես. 25*) – τοὺς ἐκ τῆς πρώτης ἡλικίας ἐνηβήσαντας (Ph. Cont. 67.4),

«զ'ի նոսայն զգասս» (*Փիլ. իմաստ. 51*) – τὴν ἐν ἐκείνοις τάξιν (Ph. Abr. 69.5),

«զ'առ ըստ իւրաքանչիւրսն առաքինութեանն կարծիս» (*Փիլ. իմաստ. 85*) – τὰ καθ' ἑκάστην ἀρετὴν δόγματα (Ph. Abr. 220.6),

«զյառասպելումն դիմառնութիւնս» (*Թեոն 60*) – τὰς ἐν τῷ μύθῳ προσωποποιίας (Theon 4. 75.17),

«զյաստուածսն բարեբանութիւնս» (*Թեոն 130*) – τὰς εἰς θεοὺς εὐλογίας (Theon 9.109.28՝ «աստվածներին ուղղված գովասանքները»),

«զըստ տրամաչափսն» (*Ար. Մեկն. 168*) – τὰς κατὰ διάμετρον (Arist. Int. 19b35),

«զյաղագս այսոցիկ զխնդիրն» (*Դ. Պորփ. 162.14*) – τὸν ἐπ' αὐτὰ λόγον (D. Porph. 198.19),

«զ'ի գլուխսն զբաժանումն» (*Դ. Պորփ. 6.20*) – τὴν εἰς τὰ κεφάλαια διαίρεσιν (D. Porph. 82.25),

«զ'ի բազումս» (*Դ. Պորփ. 54.31*) – τὰ ἐν τοῖς πολλοῖς (D. Porph. 120.8-9),

«զյառաջ քան զբազումս» (*Դ. Պորփ. 54.29-30*) – τὰ πρὸ τῶν πολλῶν (D. Porph. 120.10),

«զընդ սեռին տեսակաց» (*Դ. Պորփ. 188.30-31*) – τῶν ὑπὸ γένους εἰδῶν (D. Porph. 210.8-9՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«զըստ ներկայումս բայ» (*Անան. Մեկն. 494*),

«զըստ մտաց տեսականին լրութեան» (*Դիոն. Երկ. քհ. 2.19*) – τῆς κατὰ νοῦν θεωρητικῆς ἀναπληρώσεως (Dion. cael. hier. 1.3՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«զառ ի նոցունց ներբողեալսն» (*Նեմես. 14.4*) – *τοὺς ὑπ' αὐτῶν ἡγκωμι-ασμένους,

«զառ ի յաստուծոյ բանն» (*Կիւրղ. պրպ. 112*) – τὸν ἐκ θεοῦ λόγον (PG 75.1385),

«զյաղագս այսոցիկ բանն» (*Եւտիք. 27-8*) – *τὸν περὶ τούτων λόγον:

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանություն դասական եղանակի հետ

Նման արտահայտությունների ոչ բառացի՝ նորմալ հայերեն համարժեքը հարաբերական նախադասությունն էր. այն պատահում է և հունարեն թարգմանություններում.

«զ'ի յերկինս և զ'ի վերայ երկրիս» (*Տիմ. 313*) ≠ «որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի» (*Կող. Ա 16*) – τὰ... ἐν τοῖς οὐρανοῖς καὶ ἐπὶ τῆς γῆς (Col. 1:16),

«զ'ի վերայս երկրի, եթէ զ'ի յերկինս» (*Տիմ. 313*) ≠ «որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս» (*Կող. Ա 20*) – τὰ ἐπὶ τῆς γῆς εἶτε τὰ ἐν τοῖς οὐρανοῖς (Col. 1:20),

«զ'յիսն խաւսողի Քրիստոսի» (*Տիմ. 211*) ≠ «զՔրիստոսի, որ ինեւ... խօսի» (*Բ Կոր. ԺԳ 3*) – τοῦ ἐν ἐμοὶ λαλοῦντος Χριστοῦ (2Cor. 13:3՝ *Հոգը սեռական հոլովով է*),

«զ'ի նոսայն Հոգին» (*Տիմ. 302*) ≠ «ի նոսա Հոգին» (*Ա Պետ. Ա 11*) – τὸ ἐν αὐτοῖς πνεῦμα (1Pet. 1:11),

«զ'ի պահանջութեան Հոգւոյ» (*Տիմ. 302*) ≠ «ոգւոցն որ էին ի բանտին» (*Ա Պետ. Գ 19*) – τοῖς ἐν φυλακῇ πνεύμασιν (1Pet. 3:19՝ *Հոգը տրական հոլովով է*),

«որք ի նիւթումս են» (*Դ. Պորփ. 54.32*) – τὰ ἐν ὕλῃ (D. Porph. 120.10-11),

«որ ընդ նովաւ են տեսակք» (*Դ. Պորփ. 190.21-22*) – τὰ ὑπ' αὐτὸ εἶδη (D. Porph. 210.27):

2ը Այլ նախդիրների կուտակումներ

Գոյականի կամ դերանվան թեք հոլովին թարգմանություն մեջ կարող էր նախորդել երկու նախդիր,

1) *եթե նախդրավոր բառակապակցությունը գոյականացնող հունարեն հոգին մեկ այլ նախդիր էր նախորդում.*

«յաղագս ըստ միոջէցն դատաստանք» (Տիմ. 6.2-3),
 «ներ յաղագս պիտիցն» (Թեոն 58՝ «պետքի մասին (գլխում)») – էն τῷ
 περὶ τῆς χρείας (Theon 4.74.10),
 «ներ յաղագս ներբողենիցն» (Թեոն 140՝ «ներբողյանի մասին (գլխում)» –
 էն τῷ περὶ ἐγκωμίων (Theon 4.113.17),
 «ներ յաղագս պատմութեան» (Թեոն 64՝ «պատմության մասին (գլխում)» –
 էն τῷ περὶ διηγῆματος (Theon 4.76.33),
 «ներ յաղագս դասու» (Թեոն 158՝ «դասի մասին (հատվածում)») – էն τοῖς
 περὶ τάξεως (Theon 11. 126.2),
 «ներում յաղագս վերծանութեան» (Թեոն 179՝ «ընթերցանության մասին
 (գլխում)») – *էն τῷ περὶ ἀναγνώσεως,
 «ներում որ ըստ Քսենոփոնոտայն» (Թեոն 184՝ «Տիգրենի դեմ (ճառում)») –
 *էն τῷ κατὰ Κτεσιφόντους,
 «ներում յաղագս պսակին» (Թեոն 184՝ «պսակին նվիրված (ճառում)») –
 *էն τῷ περὶ στεφάνου,
 «ներ յաղագս ոգւոյն» (Ար. Մեկն. 155) – էն τοῖς περὶ ψυχῆς (Arist. Int.
 16a9՝ «հոգու մասին գրվածքում»),
 «ի վերայ ըստ ժամու ժամու անտեղաբար շարժմանց» (Պետ. Գ.Թ. 100՝ «ի
 լրումն ժամանակին տեղի ունեցող տարօրինակ շարժումներին»),
 «յաղագս առ մեզ ազգակցութեան» (Պետ. Գ.Թ. 102՝ «մեզ հետ ազգակցա-
 կան կապի վերաբերյալ»),
 «ըստ յսկզբանէ բնութեանն» (Նեմես. 15՝ «համաձայն սկզբից եղած բնու-
 թյան») – κατὰ τὴν ἐξ ἀρχῆς φύσιν (Nemes. 1.164),
 «վասն ի գազանաց խոյս տալոյ» (Նեմես. 18՝ «գազաններից խուսափելու
 մասին») – διὰ τὰς τῶν θηρίων ἀποφυγὰς (Nemes. 1.231).
 2) եթե մի կողմից գոյականի, իսկ մյուս կողմից՝ նրան վերաբերող նախդրի
 և հոգի «շրջանակի» մեջ էր առնված այդ գոյականի լրացում նախդրավոր
 բառակապակցությունը.
 «յաղագս ի բանս անաւրէնութեանն» (Նազ. ճ.4.4) – ὑπὲρ τῆς εἰς λόγους
 παρανομίας (PG 35.256.1),
 «սակս առ ի յԱստուածն հաւատոյ» (Աթ. 137՝ «առ աստված հավատի մա-
 սին») – περὶ τῆς εἰς τὸ θεῖον πίστεως (PG 28.4[442]),
 «վասն առ ամենեսին անխտրութեանն» (Եփես. Ե 280-281՝ «ամեն ինչում
 անխտրության մասին») – διὰ τὴν ἐν πᾶσιν ἀδιαφορίαν (Ephes. V.60.17),
 «յըստ բնութեանն ճանապարհէ» (Փիլ. ել. 2.26) – τῆς κατὰ φύσιν ὁδοῦ
 (Ph. QuEx. 2.26),
 «ըստ առ կանայս հակառակադասութեան» (Փիլ. Sieg. 14-15.31):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«յաղագս առ ձեզ շնորհին» (Տիմ. 302) ≠ «վասն որոյ ի ձեզ լինելոց էին
 շնորհքն» (Ա Պետ. Ա 10) – περὶ τῆς εἰς ὑμᾶς χάριτος (1Pet. 1:10):

2թ Երկու Հոլովական վերջավորության միացում

Երբ հունարեն թեք հոլովով կամ նաև նախդրով բառակապակցությունը գոյականացնող հոգը հայցականից տարբեր հոլովով է, թարգմանության մեջ համապատասխան թեք հոլովի վերջավորությունը հետևում է հոգի հոլովին ու թվին համապատասխանող վերջավորություն: Մեկ օրինակ գտել ենք Աստվածաշնչում՝

«Եկին առ իւրեանցս» (Գծ. Դ 23) – ἦλθον πρὸς τοὺς ἰδίους (Act. 4:23՝ «Իրենց (մտերիմների) մոտ»): ճիշտ է, հունարեն «սեփական» ածականը հայցական հոլովով է, սակայն այն թարգմանված է անձնական դերանվան սեռականով, ինչը հնարավոր է դարձնում սույն օրինակն այս բաժնում դիտարկելու,

«Եկեղեցւոյքն» (Առաք. ՀԲ 94.15՝ սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ ἐκκλησιαστικά (Ap. LXXVIII.11.28-29՝ «եկեղեցու պատկանելիքը»), հմմտ. «զեկեղեցւոյ պէտս» (Գանգր. Զ 194.4) – τὰ τῆς ἐκκλησίας (Gangr. VI.81.18),

«Ի սկբանէցն» (Փիլ. լին. 4.194՝ բացառական հոլովաձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն՝ «սկզբից եղածների»),

«Ընդ յարենէսն մերձաւորս» (Փիլ. տես. 10՝ բացառական հոլովաձևին կցված է հոգնակի հայցականի վերջավորություն) – τοῖς ἀφ' αἵματος (Ph. Cont. 15.4՝ «արյունակիցների հետ»)՝ «մերձաւորս» նույն արտահայտության լեզվում առկա հոմանիշն է,

«Եղիա յերկրէցս յերկինս ի վեր հասեալ» (Փիլ. լին. 1.86)՝ «յերկրէցս» հավանաբար աղավաղումն է «յերկրիցս» ձևի – *ἀπὸ τῶν ἐπὶ γῆν («երկրի վրա եղածներից»)՝ տրական հոլովաձևին՝ «ի» նախդրով ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորություն՝ «ի» նախդրի հետ բացառականի իմաստով. փաստորեն «ի» նախդիրը չկրկնվելով՝ երկու դեր է կատարում),

«Ի դրաստոջացն» (Փիլ. այլաբ. 140՝ տրական հոլովաձևին՝ «ի» նախդրով ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν ἐν τῷ παραδείσῳ (Ph. LA 1.100՝ «դրախտում եղածների»),

«Ի մեզոյցս» (Փիլ. իմաստ. 75՝ տրական հոլովաձևին՝ «ի» նախդրով ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν ἐν ἡμῖν (Ph. Abr. 164.3՝ «մեզանում եղածների»),

«միւստմիոջէքն» (Փիլ. լին. 1.91՝ բացառական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն՝ «մեկ առ մեկ եղածները»),

«[ի²⁴²] միւստմիոջէքն» (Փիլ. լին. 2.1՝ բացառական հոլովաձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն՝ «մեկ առ մեկ եղածների») – ἐκ τῶν κατὰ μέρος (Ph. QuGen. P 2.1),

²⁴² Նախդիրն արտացոլված է տողատակի տարբերակներում. հրատարակիչ Պարամելլն էլ նշում է, որ այս ընթերցումը նախընտրելի է, քանի որ համապատասխանում է հունարենին:

«զ'ի նմայսն» (Իրեն. հերձ. 11՝ տրական հոլովաձևին՝ «ի» նախդրով ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի հայցականի վերջավորություն՝ «նրա մեջ եղածները»),

«ի մասնէքն» (Իրեն. հերձ. 31՝ բացառական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն՝ «մասից բխածները»),

«յետ այսոցիկքն» (Թեոն 28՝ հոգնակի սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ μετὰ ταῦτα (Theon 2.70.32՝ «սրանց հետևողները»),

«լստ մասինքն» (Թեոն 62՝ սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ κατὰ μέρος (Theon 4.76.13՝ «մասնակիները»),

«զյետ այսոցիկսն» (Թեոն 88՝ հոգնակի սեռական հոլովաձևին կցված է հոգնակի հայցականի վերջավորություն) – τὰ μετὰ ταῦτα (Theon 5.88.6՝ «սրանց հետևողներին»),

«ընդ նմայքն» (Թեոն 94՝ տրական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ μετ' αὐτοῦ (Theon 5.90.15՝ «նրա հետ եղածները»),

«լստ շարամանութեանքն... առանց շարամանութեանքն» (Ար. Ստոր. 108՝ սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ κατὰ συμπλοκὴν... τὰ ἄνευ συμπλοκῆς (Arist. Cat. 1a16-17՝ «կապակցված... առանց կապակցության (բառեր)»),

«լստբոլորէցն» (Ար. Մեկն. 161) – τῶν καθόλου (Arist. Int. 18a1՝ «ընդհանուրներին»)՝ καθ' ὅλου-ից սերող քարացած մակբայը տառացի թարգմանված է «լստ» նախդրի հետ բացառական հոլովով («օր լստ օրէ»-ի նմանությունով), որին կցված է հունարեն հոգի հոլովաձևին համապատասխանող հոգնակի սեռականի վերջավորություն,

«սոցայք» (Պորփ. 134՝ հոգնակի սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – οἱ τούτων (Porph. 2.7՝ «որոնք սրանցն են»),

«ընդ սովաւցն» (Պորփ. 134՝ գործիական հոլովաձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν ὑφ' ἑαυτοῦ (Porph. 2.12՝ «սրա տակ եղածներին»),

«յառաջ քան զնոսայցն» (Պորփ. 137՝ հոգնակի (եզակիի փոխարեն) հայցականի հոլովաձևին կցված է հոգնակի սեռականի (օրինաչափ հայցականի փոխարեն) վերջավորություն) – τὰ πρὸ ἑαυτοῦ (Porph. 5.11՝ «որոնք իրենից առաջ են»)՝ հունարեն արտահայտության «ճշգրիտ համարժեքը» կլիներ «յառաջ քան զնայսն»,

«լստ պատահմանքն» (Պորփ. 142՝ սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – αἱ κατὰ συμβεβηκός (Porph. 9.11՝ «պատահմանը համապատասխանողները»),

«զընդոտեսական» (Պորփ. 146) – τῶν ὑπὸ τὸ εἶδος (Porph. 13.12),

«նենթակայոջացն» (Ար. Ստոր. 113՝ տրական հոլովաձևին՝ «ն» նախդրի հետ ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորութ-
յուն) – τῶν ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 3a21՝ «ենթակայի մեջ եղածներին»),

«նենթակայոջք» (Ար. Ստոր. 114՝ տրական հոլովաձևին՝ «ն» նախդրի հետ
ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի ուղղականի վերջավորութ-
յուն) – τὰ ἐν ὑποκειμένῳ (Arist. Cat. 3a31՝ «ենթակայի մեջ եղածները»),

«նինքեանց» (Ար. Ստոր. 115՝ տրական հոլովաձևին՝ «ն» նախդրի հետ ներ-
գոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորութ-
յուն) – τῶν ἐν αὐτοῖς (Arist. Cat. 4b21՝ «իրենց մեջ եղածներին»),

«ամենայն գոյացութեանցքն և տարբերացքն» (Ար. Ստոր. 118՝ հոգնակի
սեռական հոլովաձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորութ-
յուն) – πάντα τὰ ἀπὸ τῶν οὐσιῶν καὶ τῶν διαφορῶν (Arist. Cat. 3b8-9՝ «գոյացու-
թյուններից և տարբերություններից բաղկացած բոլորը»),

«ի նմինց սեռի» (Ար. Ստոր. 123՝ տրական հոլովաձևին՝ «ի» նախդրի հետ
ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորութ-
յուն) – τῶν ἐν τῷ αὐτῷ γένει (Arist. Cat. 6a17՝ «նույն սեռի մեջ եղածներին») ²⁴³,

«ի վերոյքն» (Ար. Ստոր. 108՝ մակբայի քարացած սեռական հոլովաձևին
կցված է հոգնակի ուղղականի վերջավորութ-
յուն) – τὰ ἐπάνω (Arist. Cat. 1b22՝ «վերևում եղածները»),

«տեղւոյքն» (Ար. Ստոր. 120՝ սեռական հոլովաձևին կցված է հոգնակի
ուղղականի վերջավորութ-
յուն) – τὰ τοῦ τόπου (Arist. Cat. 5a23՝ «տեղիներ-
ը»),

«ներ ձայնոջքն» (Ար. Մեկն. 155՝ տրական հոլովաձևին՝ «ներ» նախդրի
հետ ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի ուղղականի վերջավորութ-
յուն) – τὰ ἐν τῇ φωνῇ (Arist. Int. 16a3՝ «ձայնի մեջ եղածները»),

«ներ ձայնոջացն» (Ար. Մեկն. 155՝ տրական հոլովաձևին՝ «ներ» նախդրի
հետ ներգոյականի իմաստով, կցված է հոգնակի սեռականի վերջավորութ-
յուն) – τῶν ἐν τῇ φωνῇ (Arist. Int. 16a4՝ «ձայնի մեջ եղածներին»),

«զումեքեացն» (Ճարտ. 374՝ «զ» նախդրի հետ բացառական հոլովաձևին
կցված է հոգնակի սեռականի վերջավորութ-
յուն՝ «ինչ-որ մեկի մասին պատ-
մածներից»),

«զնորայսն» (Կիւրղ. պրպ. 104՝ սեռականի ձևին կցված է հոգնակի հայցա-
կանի վերջավորութ-
յուն) – τὰ αὐτῆς (PG 75.1380՝ «նրա պատկանելիքը»):

Այն դեպքերում, երբ նկարագրված տիպի բառակապակցությունը ոչ թե
գոյականացված է, այլ որոշչի դեր է կատարում, և հոգը վերաբերում է նրան
հետևող որոշյալին, հայերենում հոգի հոլովին համապատասխանող երկրորդ
վերջավորութ-
յան կցումն այդ բաղադրյալ որոշչին ավելորդաբանություն է.

²⁴³ Քանի որ հոգնակի սեռականով հոգը հունարենում գոյականացնում է ողջ «ի նմին սեռի»-
ին համապատասխանող բառակապակցությունը, ապա ընդհանուր տրամաբանությամբ համա-
ձայն, հոգնակի սեռականի վերջավորությունը պետք է կցվեր ամբողջին՝ «ի նմին սեռից»,
սակայն այդ դեպքում վերջին բառի եզակի տրականի «ի» վերջավորությունը կուլ կզնար
հոգնակի սեռականի «ից» վերջավորությանը:

այն քերականական կապեր չի արտահայտում, այլ պարզապես որոշիչը համաձայնեցնում է որոշյալի հետ.

«ըստ մասինքն առաքինութիւնք և ըստ սոցայքն ներգործութիւնք» (Փիլ. ալլաբ. 123՝ տրականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – αἱ κατὰ μέρος ἀρῆται καὶ αἱ κατ' αὐτὰς ἐνέργειαι (Ph. LA 1.56՝ «մասնական առաքինություններ և սրանց համապատասխանող գործողություններ»),

«ի նմայցն բարեաց» (Իրեն. հերձ. 221՝ տրականի ձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν ἐν αὐτῷ ἀγαθῶν (Ir. Her. V.21՝ «նրա մեջ եղած բարիքներ»),

«ի մէնջիցն... պատճառանացս» (Թեոն 26՝ բացառականի ձևին կցված է հոգնակի տրականի վերջավորություն) – ταῖς ἡμῶν... ἀφορμαῖς (Theon 2.69.24՝ «մեր բերած պատճառաբանություններին»),

«սոցարք ազգակիցք» (Ար. Ստոր. 135՝ հոգնակի տրականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ τοῦτοις συγγενῇ (Arist. Cat. 9a30՝ «սրանց ազգակիցներ»),

«զայլմէց ասիցելոցն» (Ար. Մեկն. 155՝ բացառականի ձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – καθ' ἑτέρου λεγομένων (Arist. Int. 16a17),

«ըստ մասինցն մադոցր» (Պորփ. 140՝ եզակի սեռականի ձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν κατὰ μέρος ἀνθρώπων (Porph. 7.26՝ «մասնակի մարդկանց») ²⁴⁴,

«մարմնոյքն մասնկունքն» (Ար. Ստոր. 119՝ սեռականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ τοῦ σώματος μόρια (Arist. Cat. 5a6՝ «մարմնի մասնիկներ»),

«տեղւոյքն մասնկունքն» (Ար. Ստոր. 120՝ սեռականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ τοῦ τόπου μόρια (Arist. Cat. 5a11՝ «տեղի մասնիկներ»),

«մակարդիքն մասնկունքն» (Ար. Ստոր. 120՝ սեռականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τὰ τοῦ ἐπιπέδου μόρια (Arist. Cat. 5a21՝ «մակերեսի մասնիկներ»),

«մի ըստ միոջէց թուեցելոց» (Պորփ. 150՝ բացառականի ձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τῶν ἐφεξῆς καταριθμουμένων (Porph. 17.17՝ «մեկ առ մեկ թվարկվածներ»),

²⁴⁴ Հմմտ. նաև «ըստմասնեայքն» (Պորփ. 139) – τὰ κατὰ μέρος (Porph. 6.20), «զմասնեայք» (Պորփ. 140) – τῶν κατὰ μέρος (Porph. 7.19), «ըստմասնեայք» (Պորփ. 140) – τῶν κατὰ μέρος (Porph. 7.24), «զըստմասնէց» (Պորփ. 146) – τῶν κατὰ μέρος (Porph. 13.16), «զմասնայք» (Պորփ. 140) – τῶν κατὰ μέρος (Porph. 7.19), κατὰ μέρος արտահայտությունը թարգմանելու համար ստեղծված են «մասնեայ», «ըստմասնեայ», «զըստմասնէ» ածականները: Առաջինում հոլանդական նախդիրն արտացոլված է: Վերջին ձևը հիշեցնում է «ըստորոշէց» կազմությունը. երկուսում էլ փաստորեն բացառական հոլովի հետ կիրառված «ըստ» նախդիրն է, ինչպես, օրինակ, «օր ըստ օրէ» արտահայտության մեջ: Նախդիրը սերտաձև է հիմքին և նախածանցի կերպարանք ստացել, ինչպես և «ըստմասնեայ» ձևում:

«ի նորայոցն ինչ յէիցն» (Դիոն. թղթ. 231.8 եղակի սեռականի ձևին կցված է հոգնակի սեռականի վերջավորություն) – τι τῶν αὐτοῦ τῶν ὄντων (Dion. epist. 1՝ «ներանը եղածներից մի բան»),

«նորայոց ախտից» (Կիւրղ. պրպ. 102՝ սեռականի ձևին կցված է հոգնակի ուղղականի վերջավորություն) – τῶν αὐτοῦ παθῶν (PG 75.1376՝ «ներա կրքերի»):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«որք ընդ նովաւ տեղիքն են» (Առաք. ԼԲ 84.2) – ταῖς ὑπ' αὐτῶν χώραις (Ap. XXXV.5.15),

«քանզի այնոցիկ, որք ընդ նովաւն են, ոչ ումեք ենթակայանայ» (Դ. Պորփ. 106.18-19) – τινὲ γὰρ τῶν ὑπ' αὐτῶν οὐ ὑποκεῖται (D. Porph. 167.6):

2ժ Գոյականացված նախադասություններ

Մի շարք արտահայտություններ ավելի բարդ մեկնաբանություն են պահանջում: «Զինչէ» և «որպիսիինչէ» ձևերը կարող էին համարվել բառային նորաբանություն, սակայն դրանք համապատասխանում են հոգի օգնությունը գոյականացված կարճ նախադասությունների, ուստի կարող են դիտվել նաև որպես շարահյուսական հունաբանություն.

«զինչէն» (Դ. Սահմ. 4.6, Դ. Պորփ. 64.2, Դ. Ստոր. 234, Սահմանք 376) – τὸ τί ἐστι (D. Prol. 2.2, D. Porph. 130.23, D. Cat. 142.26՝ «այն, որ ինչ է»),

«որպիսիինչէն» (Դ. Սահմ. 4.17) – τὸ ὅποιόν τί ἐστι (D. Prol. 2.8՝ «այն, որ ինչպիսին է»):

Այդ բառերը հանդես են գալիս նաև արհեստական նախդիրների ու վերջավորությունների հետ. այդպիսի դեպքերում այդ պարզ նախադասությունները գոյականացված են հոգի նախդրով տրական հոլովաձևի օգնությամբ.

ἐν τῷ τί ἐστι («ներա մեջ, որ ինչ է») արտահայտությունը թարգմանված է հինգ եղանակով՝

«ի զինչէումն» (Պորփ. 135, Դ. Սահմ. 4.20, Դ. Պորփ. 10.24, Զեն. 4.2.5) – ἐν τῷ τί ἐστι (Porph. 3.8, D. Porph. 85.11),

«ի ներ զինչէումն» (Դ. Պորփ. 10.30) – ἐν τῷ τί ἐστι (D. Porph. 85.18),

«ներում զինչէ» (Պորփ. 143) – ἐν τῷ τί ἐστι (Porph. 11.10),

«ի ներում զինչէն» (Պորփ. 135, 136, 138, 148, 150, 155, Դ. Պորփ. 66.33) – ἐν τῷ τί ἐστι (Porph. 2.15, 3.9, 15.3, 20, 17.10, 18.17, 21.1, D. Porph. 133.7),

«ի ներում զինչէին» (Դ. Պորփ. 68.20, 22, 28, 70.13, 16, 72.11, 82.7, 18, 23, 84.6, 8, 112.3, 186.20, 190.30, 198.31) – ἐν τῷ τί ἐστι (D. Porph. 133.22, 23, 27, 134.23, 26, 136.11, 144.10, 19, 22, 145.13, 146.5, 173.3, 209.5, 211.3, 218.30),

ἐν τῷ (ὁ)ποῖόν τί ἐστι («ներա մեջ, որ ինչպիսին է») արտահայտությունը թարգմանված է հետևյալ եղանակներով՝

«ի որպիսիինչէումն» (Պորփ. 135) – ἐν τῷ ποῖόν τί ἐστι (Porph. 3.10),

«ի ներ որպիսիինչեումն» (*Դ. Պորփ. 10.27, 12.12-13, 70.21-22*) – ἐν τῷ ὁποῖον τί ἐστί (D. Porph. 85.15, 32, 134.31),

«ներ որպիսիինչեն» (*Դ. Պորփ. 70.25*) – ἐν τῷ ὁποῖον τί ἐστί (D. Porph. 135.4-5),

«ներում որպիսիինչեն» (*Պորփ. 152*) – ἐν τῷ ποῖόν τί ἐστί (Porph. 18.16),

«ի ներում որպիսիինչին» (*Պորփ. 136, Դ. Պորփ. 68.23, 112.3, 154.2, 22, 186.21-22, 192.1, 198.32*) – ἐν τῷ ὁποῖον τί ἐστί (Porph. 3.10, D. Porph. 133.23-24, 173.4, 194.22, 209.6, 211.3, 218.31),

«ի ներում որպիսիինչեն» (*Պորփ. 143, 148, 150, Դ. Պորփ. 154.1*) – ἐν τῷ ποῖόν τί ἐστί (Porph. 11.8, 15.3, 17.11),

«ներում որպիսիինչ» (*Պորփ. 143*) – ἐν τῷ ποῖόν τί ἐστί (Porph. 11.9),

«յաղագս ներում որպիսիինչին» (*Դ. Պորփ. 154.2*) – περὶ τοῦ ὁποῖον τί ἐστί (D. Porph. 194.22-23),

«ներ որպիսիինչ» (*Պորփ. 135*) – ἐν τῷ ποῖόν τί (Porph. 3.11):

Դասական «ի» նախդրից բացի (որը եզակի տրականի հետ տալիս է ներգոյականի իմաստ), օգտագործված են արհեստական «ի ներ», «ներում» և «ի ներում» նախդիրները: «Ներում» ձևում տրականի արհեստական «ում» վերջավորությունը կցված է նախդրին, իսկ «զինչ» և «որպիսիինչ» բառերն առանց վերջավորության են («ի ներում զինչեն», «ի ներում որպիսիինչեն»): «ի ներում զինչին» և «ի ներում որպիսիինչին» տարբերակներում ունենք տրականի հունաբան «ում» վերջավորություն՝ կցված նախդրին, և տրականի մեկ այլ՝ դասական «ի» վերջավորություն՝ կցված հիմնական բառին:

Հետևյալ օրինակներում «զինչպիսիինչ» (տὸ ὁποῖον τί ἐστί), «զիարդէ» (տὸ πῶς ἔχει), «եթէ» (τὸ εἰ ἐστίν), «ոչ» (τὸ μὴ ἐστί), «զինչէր» (τὸ τί ἦν), «վասնէր» (τὸ διὰ τί ἐστί) բառերն են գոյականացված նախադասությունների համարժեք.

«ներում զինչպիսի է կամ որպէս ունի» (*Պորփ. 155*) – ἐν τῷ ποῖον ἢ πῶς ἔχον (Porph. 21.10),

«ի զիարդէումն» (*Դ. Պորփ. 12.15*) – ἐν τῷ πῶς ἔχει (D. Porph. 86.6),

«զեթէն» (*Դ. Սահմ. 44, 6, Դ. Պորփ. 62.27, Դ. Ստոր. 234, Դ. Վերլուծ. 94*) – τὸ εἰ ἔστί (D. Prol. 2.1, D. Porph. 130.18, D. Cat. 142.27),

«յաղագս եթէին կամ ոչին» (*Դ. Պորփ. 104.8*) – τοῦ εἰ ἔστί ἢ μὴ ἔστί (D. Porph. 131.8-9),

«ի զինչէն» (*Դ. Պորփ. 62.27*) – ἀπὸ τοῦ τί ἐστί (D. Porph. 130.18),

«ի խնդրոյն որ յաղագս եթէին և կամ ոչին» (*Դ. Պորփ. 62.8*) – τήν ζητησιν τοῦ εἰ ἔστί ἢ μὴ ἔστί (D. Porph. 130.8-9),

«զզինչէրն» (*Պորփ. 144, Դ. Պորփ. 164.8, Սահմանք 376*) – τοῦ τί ἦν (Porph. 12.3, D. Porph. 199.17),

«ներում զինչէրն գոլ» (*Պորփ. 144*) – ἐν τῷ τί ἦν εἶναι (Porph. 12.10),

«զվասնէրն» (*Դ. Սահմ. 4.27*) – τὸ διὰ τί ἐστί (D. Prol. 2.14),

«յեթեումն» (Գ. Սահմ. 50.23) – ἐν τῷ εἰ ἔστι (D. Prol. 21.11)²⁴⁵:

«Եւ ո՞ր ոք ներհական է... բան բանի, որ ասէն թե ամենայն մարդ արդար ոչ ոքումն մարդ արդար կամ ամենայն մարդ արդար. ոչ ամենումն մարդ անիրաւ է» (Ար. Մեկն. 180ժ փխ. «*որ ասէ ամենայն մարդ արդար նմա որ ասէ ոչ ոք մարդ արդար... նմա որ ոչ ամեն մարդ անիրաւ») – Πότερον δὲ ἐναντία ἐστὶν... ὁ λόγος τῷ λόγῳ ὁ λέγων ὅτι πᾶς ἄνθρωπος δίκαιος τῷ οὐδεὶς ἄνθρωπος δίκαιος, ἢ τὸ πᾶς ἄνθρωπος δίκαιος τῷ πᾶς ἄνθρωπος ἄδικος/ (Arist. Int. 23a29-30). *Վաստորեն «ոչ ոք մարդ արդար» և «ամեն մարդ արդար» գոյականացված նախադասություններն են, և դրանք գոյականացնող տրական հոլովով հոգն արտահայտվել է յուրաքանչյուրի առաջին բառին կցված տրականի «ու՛մ» վերջավորությունը,*

«ոչումն բարւոյ (զի ոչ բարի ճշմարտի) ելով կարծեաց» (Ար. Մեկն. 182) – τῇ οὖν τοῦ μὴ ἀγαθοῦ (ὅτι οὐκ ἀγαθὸν ἀληθεῖ) οὕση δόξη τίς ἐναντία/ (Arist. Int. 23b35):

3 ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Յա ենթակայական դերբայի և «իչ» ածանցով գործող անձի անվան հետ ուղիղ խնդրի կիրառությունը

Հունարեն դերբայները, հատկապես ներկա ժամանակի ներգործական սեռի, երբեմն թարգմանվում էին ենթակայական դերբայով կամ «իչ» ածանցով գործող անձի անունով: Դերբայի ուղիղ խնդիրն էլ հաճախ թարգմանվում էր ուղիղ խնդրով՝ հայերենին հատուկ առարկայական սեռականի փոխարեն»²⁴⁶.

«սիրողաց զմեզ» (Նազ. ճ.2.1) – ἀγαπόντων ἡμᾶς (PG 35.408.18),

«յաղազս զինքեանս ստացողաց» (Նազ. ճ.2.66) – περὶ τῶν βοσκομένων ἐαυτοῦς (PG 35.476),

«խոսորեցուցչաց գտունն Իսրայէլի» (Նազ. ճ.2.65) – πλαγιαζόντων τὸν οἶκον τοῦ Ἰσραήλ (PG 35.476),

«ի միասին ի ներքս բերողաց առ ի միոյ չարին ձայնակցութիւն» (Նազ. ճ.5.88) – συνεισφέροντων πρὸς ἐνὸς κακοῦ συμφωνίαν (PG 35.617.34-35),

²⁴⁵ Բացի «ներում», «ի ներում»-ից, որտեղ հոլովական վերջավորությունը կցված է նախդրին, արձանագրել ենք հոլովական վերջավորությունը (հոգնակի սեռականի «ց») «ի վերայ» նախադրությամբ կցելու օրինակներ. «ի վերայց սեռիցն և տեսակաց ոչ այսպէս ունի» (Պորփ. 138) – ἐπὶ τῶν γενῶν καὶ τῶν εἰδῶν οὐκ οὕτως ἔχει (Porph. 6.4), «ի վերայց ամենեցուն» (Պորփ. 140) – ἐπὶ πάντων (Porph. 7.26), «ի վերայց արտաքոյ ամանակաց» (Ար. Մեկն. 167) – ἐπὶ τῶν ἐκτὸς χρόνων (Arist. Int. 19b18): Հավանաբար «վերայ» ընկալվել է որպես թեք հոլովածե, և ստացվել է երկու հոլովական վերջավորությունների կուտակում, համտ. Գ 2թ:

²⁴⁶ Հմմտ. «արարչին իւրոյ» – τῷ ποιήσαντι αὐτόν (Եբր. Գ 2), «ճշմարտութեանն յաղթող», «զծնողն իւր», «լսողք իմ», տե՛ս ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 225, 234 (556, 577):

«զկամս անաբշին զիս Հաւր» (*Բրս. Հց. 10.6.38*) – τὸ θέλημα τοῦ πέμψαν-
 τος με πατρός (PG 31.921[99]),

«զԱստուած անարգողացն» (*Բրս. Հց. 187.538*) – τὸν θεὸν ἀτιμαζόντων
 (PG 31.1104),

«ուրացողացն զՔրիստոս» (*Բրս. յուղիտ. 1.362*) – ἀρνούμενοις τὸν Χρισ-
 τόν (PG 31.240.11),

«սուռղին զչնորհս» (*Բրս. յուղիտ. 3.365*) – τῷ δεδωκότι τὴν χάριν (PG
 31.244),

«բարձողաց զապաշաւանս» (*Բրս. ապաշխ. 2.125*) – τῶν τὴν μετανοαί-
 ναιρῆναι τολμώντων (PG 31.1476.7),

«ի Ստացողէն զքեզ» (*Բրս. արբեց. 3.97*) – παρὰ τοῦ κτίσαντός σε (PG
 31.448.35),

«զսուռղացն զմտերմութիւն» (*Փիլ. լին. 1.27*) – τὴν δεδωκότων εὐνοίαν
 (Ph. QuGen. 1.27),

«սեսուռղին բուն զինքն զօրութիւն» (*Փիլ. լին. 3.42*),

«սեսաւ զաստուած» (*Փիլ. իմաստ. 48*) – ὁρῶν θεόν (Ph. Abr. 57.2),

«սիրաւ զճմարիտ աստուած» (*Փիլ. իմաստ. 46*) – ἀγαπήσαντας τὸν
 ἀληθի θεόν (Ph. Abr. 50.3),

«չնչողի զմտածութիւնն» (*Փիլ. այլաբ. 117*) – ἐμπνεύσαντα εὐνοίαν (Ph.
 LA 1.35),

«սնկողի և սերմանողի... զբարիս» (*Փիլ. այլաբ. 121*) – σπείραντος καὶ
 φυτεύοντος... τὰ καλὰ (Ph. LA 1.49),

«մարդ զխաչեցեալս Քրիստոս ասացողս» (*Տիմ. 2.25*),

«բնութիւն ունողաց» (*Տիմ. 13.29*),

«զսող զիմաստութիւն» (*Տիմ. 326.14*),

«ենթադրութիւնսն ասողաց» (*Թեոն 6*) – τὰς ὑποθέσεις λεγόντων (Theon
 1.60.8),

«զսողաց զչափն» (*Թեոն 58*) – ἐξευρόντων τὰ μέτρα (Theon 4.73.24-25),

«զպաշտողս զինքն» (*Թեոն 160*) – τοὺς σεβομένους αὐτόν (Theon
 11.126.27),

«զբաղկացութիւն ունողացն» (*Պորփ. 143*) – τὴν σύστασιν ἐχόντων
 (Porph. 11.13),

«պարունակողացն զանհատսն» (*Պորփ. 146, Դ. Պորփ. 188.10*) – τῶν περι-
 χόντων τὰ ἄτομα (Porph. 13.21, D. Porph. 209.26),

«զաստուածայինսն գործողի» (*Պետ. Գ.Թ. 102*), «զայս սիրողաց» (*Պետ.
 Գ.Թ. 99*), «ածողք զնա» (*Պետ. Գ.Թ. 104*),

«ուրացողին զայրն ճմարիտ մարմնանալն» (*Պետ. Գ.Թ. 104*),

«եղծանողացն զիմաստասիրութիւն» (*Դ. ՍաՀմ. 12.8*) – οἱ ἀνατρέποντες
 τὴν φιλοσοφίαν (D. Prol. 5.1),

«բնդունողին յաւելուած» (*Դ. Պորփ. 44.8*) – τοῦ δεχομένου τὴν προσθή-
 κην (D. Porph. 112.18),

«բնդունող զառաւելն և զնուազն» (*Դ. Պորփ. 124.20*) – τὸ δεχόμενον τὸ
 μᾶλλον καὶ ἥττον (D. Porph. 180.4),

«անջատողացն զընդ նովին սեռիւ» (*Դ. Պորփ. 164.2*) – τῶν χωριζόντων τὰ ὑπὸ τὸ αὐτὸ γένος (*D. Porph. 199.11*),
 «ունողաց անուն» (*Դ. Ստոր. 233*) – ἐχόντων ὄνομα (*D. Cat. 141.27*),
 «վարդապետութիւն ունակութեան ունողին» (*Դ. Վերլուծ. 72*), «վերալցողս զպակասումն» (*Դ. Վերլուծ. 100*),
 «ունողաց զվերաբերութիւն» (*Սահմանք 386*),
 «զԱբբելի կարծիսն մուծանող» (*Սոկր. 77*) – τὴν Σαβελλίου δόξαν εἰσάγοντα (*Socr. 1.23.46*),
 «ունողացն զսննդական զօրութիւն» (*Նեմես. 12*) – τῶν ἐχόντων φυτῶν τὴν θρεπτικὴν δύναμιν (*Nemes. 1.69*),
 «զունողս զամենայն զգայութիւնս» (*Նեմես. 13*) – τὰ πάσας ἔχοντα τὰς αἰσθήσεις (*Nemes. 1.100-101*),
 «զամենայն գիտողին» (*Կիւրղ. պրպ. 102*) – τῷ πάντα εἰδότε (*PG 75.1376*),
 «ունողին զբանականն» (*Կիւրղ. պրպ. 103*) – ἐχούσῃ τὴν λογικὴν (*PG 75.1377*),
 «ստադրողս զմեզ» (*Պօղ. Աղ. 149*) – ἐψευδογραφηκότας ἡμᾶς (*P. Al. 148*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«յաղթողն զաշխարհ» (*Տիմ. 304*) ≠ «որ յաղթեցէ աշխարհի» (*Ա Յովհ. Ե 5*) – ὁ νικῶν τὸν κόσμον (*1Jn 5:5*),
 «տեսանալն զիս» (*Տիմ. 135*) ≠ «որ ետես զիս» (*Յովհ. ԺԴ 9*) – ἑωρακῶς ἐμέ (*Jn. 14:9*),
 «ուտողն զիս» (*Տիմ. 139*) ≠ «որ ուտէն զիս» (*Յովհ. Զ 58*) – ὁ τρώγων μου τὴν σάρκα (*Jn. 6:58*),
 «լսալն ձեզ... և արհամարհալն զձեզ» (*Տիմ. 211*) ≠ «որ ձեզ լսէ... որ զձեզ անարգէ» (*Ղկ. Ժ 16*) – ὁ ἀκούων ὑμῶν... ὁ ἀθετῶν ὑμᾶς (*Lk. 10:16*),
 «տուիչ զինքն» (*Տիմ. 98*) ≠ «որ ետ զանձն» (*Ա Տիմ. Բ 6*) – ὁ δοὺς ἑαυτὸν (*1Tim. 2:6*),
 «գերիչ զգերութիւն, և տուիչն տուրս մարդկան» (*Տիմ. 86*) ≠ «գերեաց զգերութիւն և ետ պարգևս մարդկան» (*Եփես. Դ 8*) – ἡχμαλώτευσεν αἰχμαλωσίαν, ἔδωκεν δόματα τοῖς ἀνθρώποις (*Eph. 4:8*),
 «արարիչ գերկին և մածուցիչն զնա... ցուցաւ զերկիր և արարիչ զնա» (*Տիմ. 175*) ≠ «որ արար գերկինս... որ Հաստատեաց գերկիր և արար զնա» (*Ես. ԽԵ 18*) – ὁ ποιήσας τὸν οὐρανόν... ὁ καταδείξας τὴν γῆν καὶ ποιήσας αὐτήν (*Is. 45:18*):

Յբ Բայի խնդրառության փոփոխութիւն

Բառացի թարգմանելիս՝ երբեմն նմանակում էին հունարեն բայի խնդրառութիւնը.

«ոչ երկնչելով դարդարութեան հատուցումն» (Բրս. ընչեղ. 4.157) – οὐ φοβούμενος τὸ δίκαιον τῆς ἀνταποδόσεως (PG 31.292[11])՝ «երկնչիմ» բայը պահանջում է բացառականով խնդիր,

«Լուայ ոչ ուղիղ խօսելով ձեր» (Աթ. 137) – ἀκήκοα ὁρθῶς μὴ ὁμιλούντων ὑμῶν (PG 28.4[442]). ἀκούω բայի կառավարումով պահանջվող սեռական հոլովով խնդիր՝ իր հետ համաձայնեցված դերբայով. հունաբանությունն է և՛ բայի կառավարման պատճենումը, և՛ սեռականով խնդրի հետ համաձայնեցված դերբայի թարգմանությունն անորոշ դերբայի գործիական հոլովով (տե՛ս Գ 4դ),

«ոչ դադարէ ինքն առնելով» (Փիլ. այլաբ. 107) – οὐ παύεται δὲ ποιῶν αὐτός (Ph. LA 1.6)՝ հունարենն քայքայում է «դադարել» բայն անորոշ դերբայի փոխարեն պահանջում է ուղղական հոլովով ներկա դերբայ, որը և թարգմանված է անորոշ դերբայի գործիական հոլովով,

«դադարէ առնելով» (Փիլ. այլաբ. 110) – παύεται ποιῶν (Ph. LA 1.18):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանությունն դասական եղանակի հետ

«յաղթողն զաշխարհ» (Տիմ. 304) ≠ «որ յաղթիցէ աշխարհի» (Ա Յովհ. Ե 5) – ὁ νικῶν τὸν κόσμον (1Jn. 5:5)՝ ոչ միայն ենթակայական դերբայի հետ, այլև «յաղթեմ» բայի հետ առհասարակ ուղիղ խնդիրը հայերենի համար արհեստական է,

«խօսեցաւ հարանց... խաւեցաւ մեզ» (Տիմ. 313 խնդիրները տրականով են, ինչպես հունարենում) ≠ «խօսեցաւ... ընդ հարս... խօսեցաւ ընդ մեզ» (Եբր. Ա 1–2) – λαλήσας τοῖς πατράσιν... ἐλάλησεν ἡμῖν (Hebr. 1:1),

«ոչ ժամանեցուք զննջեցալսն» (Տիմ. 323 խնդիրը հայցականով է, ինչպես հունարենում) ≠ «ոչ ժամանեցուք ննջեցելոցն» (Ոսկ. Պօղ. Բ 445) – μὴ φθάσωμεν τοὺς κοιμηθέντας (PG 62.43):

3դ Նախդրի խնդրառությունն պատճենումը հունարենից

«Ըստ» և «յաղագս» նախդիրների հետ հայցական հոլովի կիրառությունը, եզակի տրականի և սեռականի փոխարեն, հունաբանությունն է.

«ըստ եզ» (Թրակ. 11.21) – καθ' ἑν (Thrax 21.2),

«յաղագս զի՞նչ» (Դ. Վերլուծ. 72) – հմմտ. περὶ τί (Arist. APr. 24a10),

«յաղագս զապացոյցն» (Դ. Վերլուծ. 72) – հմմտ. περὶ ἀπόδειξιν (Arist. APr. 24a10),

«ըստ բնականն» (Զեն. 1.2.3):

3դ Նախդիրների ընտրություն

Միևնույն հատվածների դասական և հունաբան թարգմանություններում հունարեն նախդիրների համար տարբեր համարժեքների ընտրությունը ևս

բացահայտում է ավելի բառացի և ավելի ազատ մոտեցումների տարբերությունը.

«ըստ մարմնոյ» (ՏԻՄ. 307) ≠ «մարմնով» (Բ Կոր. Ե 16) – κατὰ σάρκα (2Cor. 5:16),

«մինչ մահու» (ՏԻՄ. 312) ≠ «մահու չափ»²⁴⁷ (ՓԻԼԻԿ. Բ 8) – μέχρι θανάτου (Phil. 2:8),

«ի տուն» (ՏԻՄ. 292) ≠ «ի վերայ տանն» (ՂԿ. Ա 33) – ἐπὶ τὸν οἶκον (Lk. 1:33),

«առ նոսա» (ՏԻՄ. 293) ≠ «ցնոսա» (ՂԿ. Ե 22) – πρὸς αὐτοῦς (Lk. 5:22),

«արտաքս քան զիս» (ՏԻՄ. 175) ≠ «ոք բաց յինէն» (Ես. ԽԵ 21) – πάρεξ ἐμοῦ (Is. 45:21),

«ի վերայ նորա գրեցեալն» (ՏԻՄ. 296) ≠ «որ գրեալն էր վասն նորա» (Յովհ. ԺԲ 16) – ἐπ' αὐτῷ γεγραμμένα (Jn. 12:16),

«առաջի իմ... նախ իմ» (ՏԻՄ. 298) ≠ «զկնի իմ... նախ քան զիս» (Յովհ. Ա 15) – ἔμπροσθέν μου... πρῶτός μου (Jn. 1:15),

«վասն նոցա» (ՏԻՄ. 300) ≠ «ի վերայ նոցա» (Յովհ. ԺԷ 19) – ὑπὲρ αὐτῶν (Jn. 17:19),

«առ ինչ... ժամանակ» (ՏԻՄ. 302) ≠ «յորում... ժամանակի» (Ա Պետ. Ա 11) – εἰς τίνα... καιρόν (1Pet. 1:11),

«ըստ ամենայնի» (ՓԻԼ. լին. 4.84) ≠ «ամենայնի» (Ծնն. ԻԴ 1) – κατὰ πάντα (Gen. 24:1):

3ե «Ստորոգիմ» բայի խնդրառությունը

1) Հունարեն կատեգորիայի բայը, որ սկզբնապես «զեմ խոսել», «մեղադրել»²⁴⁸ բայի կրավորականն է, բայց և հայտնի տրամաբանական իմաստն է ձեռք բերել («մի բանի մասին ասվել»), պահանջում է սեռականով խնդիր, որը հաճախ թարգմանված է նույնությամբ, կամ, ավելի ճիշտ, չտարբերակված սեռական-տրականով.

«բանականին ստորոգի» (Պորփ. 147) – τοῦ λογικοῦ κατηγορεῖται (Porph. 14.7),

«որ ստորոգի տեսակաց» (Դ. Պորփ. 54.10) – τὸ οὖν κατηγορούμενον εἰδῶν (D. Porph. 118.27),

զերանվան տրականով կամ «ում» վերջավորությունն ունեցող տրականով.

«ոչ ումեք ստորոգի» (Դ. Պորփ. 68.16) – οὐ τινος κατηγορεῖται (D. Porph. 133.18),

²⁴⁷ Հմմտ. սակայն ἕως θανάτου (Jona 4:9) – «մինչև ցմահ» (Յովն. Դ 9): Հղում ենք ըստ հետևյալ հրատարակության. WEITENBERG 1992:

²⁴⁸ Հետևյալ հատվածներում հենց այդ ուղիղ իմաստն է՝ կատեգորի (Pl. Apol. 17a2) – «ստորոգողք» (Պլատ. Սոկր. 73), κατεψηφίζοντό μου καὶ κατηγοροῦν (Pl. Apol. 41d8) – «դատապարտեին զիս և ստորոգեին» (Պլատ. Սոկր. 73):

«որում սենն ստորոգի» (*Դ. Պորփ. 82.5-6*) – օ՞ կατηγορεῖται τὸ γένος (D. Porph. 144.8),

«Սոկրատում միայն ստորոգի» (*Դ. Պորփ. 154.20*) – Σωκράτους μόνον (κατηγορεῖται) (D. Porph. 195.5),

«միում տեսական ստորոգեալ» (*Դ. Պորփ. 168.25-26*) – ἐνὸς εἶδους κατηγορούμενον (D. Porph. 201.1),

«և մարդում և անհատում ստորոգեսցի» (*Դ. Պորփ. 190.17-18*) – καὶ τοῦ ἀνθρώπου καὶ τῶν ἀτόμων κατηγορεῖται (D. Porph. 210.24),

«սենի, այս ինքն գոյացութեան, ներշնչականումն զգայականումն [ոչ] ստորոգի» (*Դ. Պորփ. 190.11-13*) – τοῦ γένους, τοῦτ' ἔστι τῆς οὐσίας ἐμψύχου αἰσθητικῆς, οὐ κατηγορεῖται (D. Porph. 210.20-21),

«առաջինն երկրորդումն ստորոգի» (*Դ. Ստոր. 249*) – τὸ πρῶτον τοῦ δευτέρου κατηγορεῖται (D. Cat. 153.11):

2) κατηγορέομαι *բայի մեկ այլ խնդրառությունն է* κατὰ + *սեռական, որը թարգմանվում է երկու եղանակով՝*

ա) «լստ» + *բացառական տարբերակն ավելի տառացի է.*

«լստ յուրվից և տարբերեցելոց տեսակալ... ստորոգեալ» (*Պորփ. 135, Դ. Պորփ. 66.33-68.1*) – κατὰ πλειόνων καὶ διαφερόντων τῷ εἶδει... κατηγορούμενον (Porph. 2.15-16, D. Porph. 133.7-8),

«ստորոգիլ լստ յուրվիցն տեսակաց» (*Պորփ. 135*) – κατηγορεῖσθαι τῶν κατὰ πλειόνων κατὰ εἰδῶν (Porph. 2.24),

«ոչ սահմանեն զլստ յուրվիցն և տարբերեցելոցն թուով... ստորոգեալն» (*Դ. Պորփ. 82.22-23*) – οὐχ ὀρίζουσι... τὸ κατὰ πλειόνων καὶ διαφερόντων τῷ ἀριθμῷ ἐν τῷ τί ἔστι κατηγορούμενον (D. Porph. 144.22),

«որ լստ յուրվից և տարբերեցելոց տեսակալ... ստորոգի» (*Դ. Պորփ. 154.1*) – κατὰ πλειόνων καὶ διαφερόντων τῷ εἶδει... κατηγορούμενον (D. Porph. 194.21-22),

«Հասարակ ամենեցուն՝ լստ յուրվից ստորոգիլ» (*Պորփ. 146, Դ. Պորփ. 187.30*) – Κοινὸν μὲν δὴ πάντων τὸ κατὰ πλειόνων κατηγορεῖσθαι (Porph. 13.10, D. Porph. 209.14),

բ) *մյուս եղանակն է «պատմական» բացառականը «զ» նախդրի հետ.*

«այլ զայլմէ ստորոգիցի, իբր զենթակայէ» (*Ար. Ստոր. 108*) – ἕτερον καθ' ἑτέρου κατηγορεῖται ὡς καθ' ὑποκειμένου (Arist. Cat. 1b10),

«մարդ գումեմնէ մարդոյ ստորոգի» (*Ար. Ստոր. 108*) – ἄνθρωπος κατὰ τοῦ τινὸς ἀνθρώπου κατηγορεῖται (Arist. Cat. 1b13),

«կենդանի զմարդոյն ստորոգի» (*Ար. Ստոր. 111*) – τὸ ζῶον κατὰ τοῦ ἀνθρώπου κατηγορεῖται (Arist. Cat. 2a37),

«զսոցանէ ստորոգիլ» (*Ար. Ստոր. 112*) – κατὰ τούτων κατηγορεῖσθαι (Arist. Cat. 2a37),

«որ զմիոյր միայնոյր զանհատիցն ստորոգիցի» (*Պորփ. 136*) – καθ' ἐνὸς μόνου τῶν ἀτόμων κατηγορουμένων (Porph. 3.15),

«բայց զորոց տեսակն ստորագրիցի զնոցանէ» (*Պորփ. 139*) – καθ' ὧν δ' ἂν τὸ εἶδος κατηγορεῖται κατ' ἐκείνων (*Porph. 7.8*),

«ստորագրի... զմարդոյր և զձիոյր և զհաւէ և զօձէ» (*Պորփ. 142*) – κατηγορεῖσθαι... ἐπ' ἀνθρώπου καὶ ἵππου καὶ ὀρνέου καὶ ὄφεως (*Porph. 14.15-16*),

«զյուզիցն և զտարբերեցելոց տեսակաւ... ստորագեալն» (*Պորփ. 143*) – κατὰ πλείονων καὶ διαφερόντων τῷ εἶδει... κατηγορούμενον (*Porph. 11.7-8*),

«զմիոյր միայնոյր ստորագրեցելոյն» (*Պորփ. 135*), «զմիոյ միայնոյր ստորագրեցելոյն» (*Դ. Պորփ. 78.5*) – καθ' ἐνὸς... κατηγορουμένων (*Porph. 2.22, D. Porph. 140.20*),

«զյուզիցն է բացատուեալ ստորագրի» (*Պորփ. 135, Դ. Պորփ. 78.5*) – κατὰ πλείονων ἀποδοθέντα κατηγορεῖσθαι (*Porph. 2.23, D. Porph. 140.20*),

«զյուզիցն և զզանազանեցելոց թուով... ստորագեալ» (*Դ. Պորփ. 82.17-18, 82.20-21*) – κατὰ πλείονων καὶ διαφερόντων τῷ ἀριθμῷ... κατηγορούμενον (*D. Porph. 144.18-19, 144.20-21*),

«զյուզիցն ստորագրի» (*Դ. Պորփ. 68.28, 78.6, 194.9*) – κατὰ πλείονων κατηγορεῖται (*D. Porph. 133.26-27, 140.21-22, 213.32*).

Հետեյալ օրինականերում բացառականը «զ» նախդրի հետ կիրառված է որպես սեռականով խնդրի համարժեք.

«Իսկ անասունն զձիոյ և զարջառոյ ստորագրի և զըստմասնէց» (*Պորփ. 146*) – τὸ δὲ ἄλογον ἵππων καὶ βόων κατηγορεῖται καὶ τῶν κατὰ μέρος (*Porph. 13.16*),

«և զ'ի նոցանէց տեսակացն ստորագեցի քանզի սեռ է զկենդանոյն իբր զսեռէ ստորագրի գոյացութիւն» (*Պորփ. 147*) – καὶ τοῦ ἐξ αὐτῆς εἶδους κατηγορηθήσεται. γένους τε γὰρ τοῦ ζώου ὄντος ὥς γένους κατηγορεῖται ἢ οὐσία (*Porph. 14.4-6*),

«Իսկ սեռն ոչ զումեքէ հակաստորագրի» (*Պորփ. 146*) – τὸ δὲ γένος οὐδενὸς ἀντικατηγορεῖται (*Porph. 16.13*),

«ստորագրի զսեռականագունից սեռիցն» (*Դ. Պորփ. 90.10*) – κατηγορεῖται τῶν γενικωτάτων γενῶν (*D. Porph. 154.19*)²⁴⁹,

«զԱնաքսագորոսէ թուիս ստորագել» (*Պղատ. Սոկր. 51*) – Ἀναξαγόρου οἶει κατηγορεῖν (*Pl. Apol. 26d6*՝ բայը նախնական՝ «մեղադրել» իմաստով է):

3զ «Ուրոյն» ածականի խնդրառությունը

Հունարեն ἴδιος («սեփական») ածականը պահանջում է սեռականով խնդիր. թարգմանվել է «ուրոյն» ածականով՝ սեռականով խնդրի հետ.

«առանձինն ուրոյն է այս սորա» (*Փիլ. ալլաբ. 153*) – ἴδιον ἐστὶ τοῦτο αὐτοῦ (*Ph. LA 2.33*),

²⁴⁹ «Ստորագրի» բայի խնդրառությանը Պորփյուրի մոտ անդրադարձել է Ռ. Սգարբին, տե՛ս SGARBI 1972, 444-448:

«զոր աւրինակ ուրոյն է այրելն հրոյ, և ձեան ցրտուցուցանելն, այսպէս և աստուծոյ առնելն» (*Փիլ. ալլաբ. 107*) – ὥσπερ ἴδιον τὸ καίειν πυρὸς καὶ χιόνος τὸ ψύχειν, οὕτως καὶ θεοῦ τὸ ποιεῖν (Ph. LA 1.5),

«ոչ ուրոյն է այս գոյացութեան» (*Դ. Ստոր. 267*) – οὐκ ἴδιον τοῦτο οὐσίας (D. Cat. 172.29):

4 ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

4ա Որոշի առումով կիրառված դերբայական կապակցություն

Դրանց սովորական դասական համարժեքը հարաբերական նախադասությունն էր, իսկ հունարան թարգմանություն մեջ այն պատճենվում էր անցյալ կամ ենթակայական դերբայով՝

«ի միոջէ կենդանւոյ ի միասին եղելոյ» (*Նազ. ճ.2.44*) – ἐνὸς ζώου συνθέτου (PG 35.452),

«իբրև հուր որջացեալ ի նիւթս» (*Նազ. ճ.4.88*) – ὥσπερ πῦρ ἐμφωλεῖον ὕλαις (PG 35.617.13-14),

«դու տեսանելով զբարկացեալն ամաչեցեալ» (*Բրս. բարկ. 3.183*) – σὺ δὲ, βλέπων ἀσχημονοῦντα τὸν ὀργιζόμενον (PG 31.361[12]),

«ախտիս, ոչ ի մեզ եղելում» (*Բրս. բարկ. 1.177*) – τοῦ πάθου, οὐκ ἐν ἡμῖν γενομένου (PG 31.353[89]),

«մանկանն իմոյ վախճանեցելոյ» (*Աղեքս. 92*) – τοῦ τελευτήσαντός μου παιδός (Alex. β 1.13.4),

«զՈլումբիւ՝ ի բաց հանեալ ի Փիլիպոսէ» (*Աղեքս. 375*) – Ὀλυμπιάδα ἀπόβλητον γενομένον ὑπὸ Φιλίππου (Alex. β 1.20.2),

«էր լեալ հայրն Նիկողայոսի ի պատերազմի սպանեալ» (*Աղեքս. 111*) – ἦν ὁ πατήρ Νικολάου ἐν τῷ πολέμῳ... ἀναιρεθείς (Alex. α 1.19.4.5),

«ի ներքոյ եղելոյ գրոյս» (*Փիլ. լին. 1.1*) – τοῦ ὑποκειμένου τεύχους (Ph. QuGen. 1.1),

«միում էացելոյ Աստուծոյ Բանին մարմնացելոյ» (*Պետ. Գ.Թ. 103*),

«Ընդհանուր է մի թուով ըստ տեսակի ի բազմաց ընկալեալ» (*Դ. Պորփ. 38.33-34*) – καθόλου τοίνυν ἐστὶ τὸ ἐν τῷ ἀριθμῷ κατ' εἶδος, ὑπὸ πολλῶν δὲ μετεχόμενον (D. Porph. 109.27-28),

«պատահումն հակադարձեալ» (*Դ. Պորփ. 170.8-9*) – συμβεβηκὸς ἀντιστρέφον (D. Porph. 202.15),

«ոչ պարտ է զՊլատոնի կարծեօքն զանց առնել, զառն՝ զիմաստասիրութիւն ի լոյս բերիցելոյ» (*Դ. Պորփ. 94.9-10*) – οὐκ ἐχρῆν τὰ Πλάτωνος δόγματα παριδεῖν ἀνδρὸς τὴν φιλοσοφίαν εἰς φῶς ἐνέγκαντος (D. Porph. 158.2-3),

«զիրէ իմեքէ ներգործեցելոյ» (*Կիւրղ. պրպ. 95*) – πράγματός τινος ἐνεργουμένου (PG 75.1369),

«նորայոց ախտից... ի վերայ եկելոց» (*Կիւրղ. պրպ. 102*) – τῶν αὐτοῦ παθῶν ἐπαγομένων (PG 75.1376),

«ի նոցունց կարծեցելոց» (*Նոննոս II. առաջ. 14*) – ἄλλων τῶν νομισθέντων (Nonnos 43.1.4),

«ի հիւրոցն եկելոց» (*Նոննոս III. 7.28*) – τῶν ἐπιξενουμένων (Nonnos 4.7.5-6):

Ավանդված է ածականով թարգմանություն.

«զեղականս» (*Աթ. 144*) – τὰ γινόμενα (PG 28.11[449]),

«ստացական յԱստուծոյ» (*Աթ. 144*) – κτισθεὶς ὑπὸ θεοῦ (PG 28.11[449] «*աստծուց ստեղծված*»)' «յԱստուծոյ» բացառական հոլովը ցույց է տալիս գործող անձ, ինչպես սովորաբար կրավորական սեռի բայաձևերի հետ, հունարեն համապատասխան դերբայն էլ կրավորական սեռի է (հմմտ. նաև «ստացական» (*Աթ. 146*) – κτίσμα (PG 28.14[453]):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ թարգմանության դասական եղանակի հետ

«զկարասին, որ էր ի նաւին» (*Յոնին. Ա 5*) – τῶν σκευῶν τῶν τῷ πλοίῳ (Jona 1:5),

«նաւ որ երթայր» (*Յոնին. Ա 3*) – πλοῖον βαδίζων (Jona 1:3),

«յեղանակք²⁵⁰ ստորոգութեանց, որ ըստ²⁵¹ այսոցիկ ձայնից բերին» (*Դ. Պորփ. 12.9-10*) – οἱ τρόποι τῶν κατηγοριῶν... οἱ κατὰ τῶν τούτων φωνῶν φερόμενοι (D. Porph. 85.26-27):

«զգնաւն զնոսա՝ զՏէրն» (*Տիմ. 303*) ≠ «զոր Տէր գնեաց զնոսա» (*Բ Պետ. Բ 1*) – τὸν ἀγοράσαντα αὐτοὺς δεσπότην (2Pet. 2:1),

«խաւսողի Քրիստոսի» (*Տիմ. 211*) ≠ «զՔրիստոսի, որ... խօսի» (*Բ Կոր. ԺԳ 3*) – τοῦ... λαλοῦντος Χριστοῦ (2Cor. 13:3),

«հաւրն յարուցաւ զնա» (*Տիմ. 310*) ≠ «հօր՝ որ յարոյց զնա» (*Գաղ. Ա 1*) – πατὴρ τοῦ ἐγείραντος αὐτόν (Gal. 1:1),

«ժառանգութիւն... պահեցեալն» (*Տիմ. 301*) ≠ «ժառանգութիւն որ պահեալ է» (*Ա Պետ. Ա 4*) – κληρονομίαν... τετηρημένην (1Pet. 1:4),

«սերմնս վայրարեալս» (*Տիմ. 324*) ≠ «սերմն որ սերմանի» (*Ոսկ. Պող. Բ 447*) – σπέρμα τὸ καταβαλλόμενον (PG 62.437),

«ի... հետեցելոյ վիմէն» (*Տիմ. 307*) ≠ «ի... վիմէն, որ երթայր զհետ նոցա» (*Ա Կոր. Ժ 4*) – ἐκ... ἀκολουθούσης πέτρας (1Cor. 10:4),

«ըստ օրինակին ցուցելում» (*Փիլ. ել. 2.90*) ≠ «ըստ օրինակին որ ցուցաւ» (*Ել. ԻԶ 30*) – κατὰ τὸ εἶδος τὸ δεδειγμένον (Ex. 26:30):

4բ Գոյականացված դերբայներ

Այսպիսի կիրառությունն ածանցյալ է որոշչի առումով կիրառությունից. դասական համարժեքը ևս հարաբերական նախադասություն է, իսկ հունարեն թարգմանության մեջ գոյականացված դերբայները թարգմանվում են

²⁵⁰ «յեղանակ» ընթերցումն ուղղել ենք ըստ Մատենադարանի 1746 ձեռագրի:

²⁵¹ «յետ» ընթերցումն ուղղել ենք ըստ Մատենադարանի 1746 ձեռագրի:

բառացի՝ ենթակայական և անցյալ դերբայներով, երբեմն ապառնի դերբայով կամ գործող անձի «իջ» վերջածանցով գոյականներով.

«ասացելոցն» (Փիլ. լին. 1.1) – τῶν εἰρημένων (Ph. QuGen. 1.1),

«զեղեալսն» (Թեոն 92) – τὰ γεγεννημένα (Theon 5.89.33),

«շարագրող» (Դ. Պորփ. 4.18, 19, 22) – συγγραψάμενος (D. Porph. 81.19, 20, 23),

«ստանողաց» (Դ. Պորփ. 6.3) – τοῖς φέρουσιν (D. Porph. 82.9),

«ասացեալը» (Դ. Պորփ. 46.6) – τὸ λεγόμενον (D. Porph. 114.7),

«զամենայն բաժանեալսն ի նմանէ» (Դ. Պորփ. 106.26) – πάντα τὰ διαιρούμενα ἐξ αὐτῆς (D. Porph. 167.12),

«սահմանելոյն» (Դ. Պորփ. 170.20) – τῷ ὀρίζομένῳ (D. Porph. 202.23),

«ի վերայ եկելոցն» (Կիւրղ. պրպ. 103) – τῶν ἐπενηνεγμένων (PG 75.1377),

«երևցելոցն և իմացելոց» (Դիոն. խորհ. ածաբ. 226.3-4) – τῶν ὁρουμένων καὶ νοουμένων (Dion. myst. theol. 1.3),

«լինելոցքս և եղեալքս» (Զեն. 5.2.4)՝ «ոց»-ով ապառնի դերբայը հանդես է եկել միայն օժանդակ բայի հետ՝ որպես ապառնի ժամանակաձև. նրա գոյականացումը և հոգնակի ուղղականի վերջավորության կցումը նրան լեզվի նորմերի խախտում է:

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

«որ պահէին» (Յովն. Բ 9) – φυλασσόμενοι (Jona 2:9),

«իջեալ» (Տիմ. 299) ≠ ὁ... καταβάς (Յովհ. Գ 13) – «որ էջն» (Jona 3:13),

«որ ոչ թշնամւոյ անգամ վնաս առնել յանձն առնու» (Փիլ. ել. 2.11) – ὁ μηδὲ ἐχθρὸν ζημιοῦν ὑπομένων (Ph. QuEx. 2.11),

«որ հակորոշի կարևորին» (Դ. Պորփ. 32.11) – τὸ ἀντιδιαστελλόμενον τῷ ἀναγκάῳ (D. Porph. 100.18),

«ի խաւարի և ի ստուէրս մահու նստելով» (Տիմ. 291) ≠ «որոց»²⁵² ի խաւարի և ի ստուէրս մահու նստէին» (Ղկ. Ա 79) – τοῖς ἐν σκοτει καὶ σκιᾷ θανάτου καθημένοις (Lk. 1:79),

«հաւատացեալն» (Տիմ. 299) ≠ «որ հաւատայ» (Յովհ. Գ 15) – ὁ πιστεύων (Jn. 3:15),

«հաւատացեալն» (Տիմ. 304) ≠ «որ հաւատայցէ» (Ա Յովհ. Ե 5) – ὁ πιστεύων (1Jn. 5:5),

«եկեալն» (Տիմ. 304) ≠ «որ եկն» (Ա Յովհ. Ե 6) – ὁ ἐλθών (1Jn. 5:6),

«եկեալն» (Տիմ. 297) ≠ «որ գալոց է» (Յովհ. Ա 9) – ἐρχόμενον (Jn. 1:9),

«ասացելոցս» (Տիմ. 309) – τοῖς λεγομένοις (Hebr. 8:1) – «խօսիցս» (Եբր. Ը 1)՝ հարաբերական նախադասութիւնն է, այլ գոյական,

«տեսանելիք և անտեսանելիք» (Տիմ. 313) ≠ «որ երևին և որ ոչն երևին» (Կող. Ա 16) – τὰ ὁρατὰ καὶ τὰ ἀόρατα (Col. 1:16),

²⁵² Հարաբերական դերնվան ձևը (հոգնակի տրական՝ ուղղականի փոխարեն) հունարեն հոդի հոգնակի տրական ձևի արտացոլումն է:

«սրբիչն և սրբեալք» (Տիմ. 309) ≠ «որ սրբէն և որ սրբին» (Եբր. Բ 11) – ὁ ἁγιαζὼν καὶ οἱ ἁγιαζόμενοι (Hebr. 2:11),

«առաքիչն» (Տիմ. 298) ≠ «որ առաքեացն» (Յովհ. Ա 33) – ὁ πέμψας (Jn. 1:33),

«Մկրտիչն» (Տիմ. 298) ≠ «որ մկրտէ» (Յովհ. Ա 33) – ὁ βαπτίζων (Jn. 1:33),

«վկայիչքն» (Տիմ. 304) ≠ «որ վկայեն» (Ա Յովհ. Ե 7) – οἱ μαρτυροῦντες (1Jn. 5:7),

«վկայիչ» (Տիմ. 304) ≠ «որ վկայէ» (Ա Յովհ. Ե 6) – τὸ μαρτυροῦν (1Jn. 5:6):

4գ Պարագայի առումով կիրառված դերբայներ

Այդպիսի դերբայները թարգմանվում էին՝

1) անորոշ դերբայի գործիական հոլով.

«ոգիք... լինին կոյսք՝ զկանացիս ի բաց ընկենլով զապականութիւնս» (Փիլ. Ել. 2.3) – ψυχαί... γίνονται παρθένοι, τὰς μὲν γυναικῶδεις ἀποβάλ-λουσαι φθοράς (Ph. QuEx. 2.3),

«բայց ստեղծելով ոչ թաքչի յաստուծոյ» (Դ. Պորփ. 48.22) – δημιουργοῦσα δὲ τὸν θεὸν οὐ λανθάνει (D. Porph. 116.1-2),

«առնթեր գոլով գոյացուցանէ, և ոչ գոլով ապականէ» (Դ. Պորփ. 12.17-18) – παρὸν μὲν σώζει ἀπὸν δὲ φθείρει (D. Porph. 86.21),

«ամենայն մարմին մարմնում առադրելով, աճումն առնէ» (Դ. Պորփ. 44.7-8, անորոշ դերբայի գործիական հոլովի կրավորական իմաստն արտառոց է) – πᾶν σῶμα σώματι προστιθέμενον αὐξήσιν ποιεῖται (D. Porph. 112.17-18),

2) անցյալ դերբայով.

«ի նմին յամառեալ լուծցի» (Առաք. Ե 76.5-6) – ἐπιμένων καθαιρείσθω (Ap. VI.1.19),

«աղքատութիւն... ի դատաստանս եկեալ դատաւորաւ վարի» (Փիլ. Ել. 2.10) – πενία... εἰς κρίσιν ἰοῦσα, βραβευτῇ χρῆται (Ph. QuEx. 2.10),

«եօթներորդ կոչի օր, այսու զանազանեալ յառաջաստեղծէ ի հողածնէն» (Փիլ. Ել. 2.46) – ἔβδομῃ δὲ ἀνακαλεῖται ἡμέρα, ταύτη διαφέρων τοῦ πρωτοπλάστου (Ph. QuEx. 2.46),

«մեր մակամտածութիւն բռնադատեալ բնութիւն իմացաւ» (Դ. Պորփ. 38.7) – ἢ ἡμετέρα ἐπίνοια τυραννήσασα τὴν φύσιν... ἐπενόησε (D. Porph. 109.1),

«Իսկ սեռ և տեսակ... առադրեալ Սոկրատումն, ոչ ինչ յաւելուն» (Դ. Պորփ. 44.10-11) – γένος καὶ τὸ εἶδος προστιθέμενον τῷ Σωκράτει... οὐδὲν προστίθησιν (D. Porph. 112.20):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

Դասական եղանակը

- 1) *Համադաս նախադասութիւն է՝*
 «դարձան և ասեն» (*Յովն. Գ 2*) – ἀπέστρεψαν λέγοντες (Jn. 3:2),
 «գիտելով... եսաց» (*Տիմ. 293*) ≠ «գիտաց... և ասէ» (*Մկ. Բ 8*) – ἐπιγινούσ...
 λέγει (Mk. 2:8),
 «Հաւատարով կենդանութիւն յաւիտենական ունիցիք» (*Տիմ. 300*) ≠ «Հաւա-
 տայցէք և զկեանս յաւիտենականս ընդունիցիք» (*Յովհ. ԻԴ 31*) – πιστεύ-
 οντες ζώην αἰώνιον ἔχητε (Jn. 24:31),
 «գրել ձեզ մաղթելով» (*Տիմ. 305*) ≠ «գրել ձեզ և աղաչել» (*Յուդ. 3*) – γρά-
 ψαι ὑμῖν παρακαλῶν (Jud. 3),
 «պատասխանեալ եսաց» (*Տիմ. 293*) ≠ «պատասխանի ետ և ասէ» (*Ղկ. Է 22*)
 – ἀποκριθεὶς εἶπεν (Lk. 7:22),
 «զնացեալ պատմեցէք» (*Տիմ. 293*) ≠ «երթայք պատմեցէք» (*Ղկ. Է 22*) –
 πορευθέντες ἀπαγγείλατε (Lk. 7:22),
 «պատասխանեալ... ասէ» (*Տիմ. 296*) ≠ «պատասխանի ետ... և ասէ» (*Յովհ. ԺԲ 23*) –
 ἀποκρίνεται... λέγων (Jn. 12:23),
 «ունիցի... թաքուցեալ ինչ» (*Սոկր. 27*) ≠ «տեսանիցի առ ումեք կամ իբրեւ
 թաքոյց» (*Նիկ. Կոնստ. 132.8-9*) – φωραθείη (*ընթերցվել է* ώραθείη) κρύψας
 (Socr. 34.7-8),
 «Հարաւ... թշնամանեցաւ... չարչարեցաւ» (*Առաք. ԻԵ 81.4-5*) – τυπτό-
 μενος... λοιδορούμενος... πάσχων (Ap. XXVIII.4.9-10),
 «ամբառնայ զթեւ և հակառակի ընդ նաւս» – ὑψοῖ τὰς πτέρυγας... ἐρί-
 ζον τοῖς πλοίοις (Phys. 5.2),
 «դարձան և ասեն» (*Յովն. Գ 9*) – ἀπέστρεψαν... λέγοντες (Jona 3:9),
 2) *պարագա երկրորդական նախադասութիւն է.*
 «Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր՝ եւ ոչ կամէր առակել զնա, խոր-
 հեցաւ լուելայն արձակել զնա» (*Մթ. Ա 19*) – Ἰωσήφ δὲ ἀνὴρ αὐτῆς, δίκαιος
 ὢν καὶ μὴ θέλων αὐτὴν δειγματίσαι, ἐβουλήθη λάθρα ἀπολῦσαι αὐτήν (Mt.
 1:19),
 «Իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ» (*Մթ. Բ 3*) – ἀκούσας δὲ ὁ βα-
 -σιλεὺς Ἡρώδης ἐταράχθη (Mt. 2:3),
 «Ի գոչիւն հարկանի, քանզի գերծանել կամի» – κράζει βουλόμενον ἐκφυ-
 γεῖν (Phys. 3.6),
 «ընդունիմք, իբրեւ ոչ փակեմք կամ գրաւեմք» (*Գանգր. վերջ. 200.11*) –
 ἀποδεχόμεθα, οὐ συγκλείοντες (Gangr. ep. 83.23-24),
 «Իսկ գոյացութիւնք ոչ ունին ընդդիմակս, վասն զի ոչ են յենթակայում»
 (*Դ. Պորփ. 146.3-4*) – αἱ δὲ οὐσίαι οὐκ ἔχουσιν ἐναντία ἐν ὑποκειμένῳ μὴ
 οὔσαι (D. Porph. 190.23-24),
 «զօրութեամբն, յորժամ ունակութեամբ եղանի, ոչ նոյն մնայ» (*Դ. Պորփ.
 152.20-21*) – τὸ δυνάμει ἐν ἔξει γινόμενον οὐ τὸ αὐτὸ μένει (D. Porph.
 194.16),
 «Զվարդապետութիւն տարբերութեան ընկալաւ տեսակ, ընդ որում և վասն
 նախադասութեան հակառակի» (*Դ. Պորփ. 192.9-10*) – Τὴν διδασκαλίαν τῆς

ներում հողով սկսվող դերբայական դարձվածներին ընդունված է որոշչի արժեք վերագրել, իսկ հողի բացակայության դեպքում դերբայական դարձվածները պարագայի իմաստ են ձեռք բերում, ընդ որում դերբայը համաձայնեցվում է նախադասության այն գոյական անդամի հետ, որն այդ դարձվածի տրամաբանական ենթական է²⁵⁴: Այսպես, κατὰ τὴν φωνὴν ταύτου τοῦ κυρίου... εἴποντος, ὅτι նշանակում է «համաձայն նույն տիրոջ ձայնի, երբ նա ասաց, որ...» (և ոչ՝ «... որն ասաց, որ»), իսկ διὰ τοῦ προ-φύτου λέγοντος՝ «մարգարեի օգնությամբ, մինչ նա ասում էր»: Այսպիսի դերբայների թարգմանությունը հայերեն անորոշ դերբայի գործիական հոլովով արդարացված է այն առումով, որ վերջինիս հատուկ էր պարագայական իմաստը: Ենթակայի հետ համաձայնեցված դերբայի նման թարգմանության արդյունքում ստանում ենք հայերենի համար օրինաչափ նախադասություն, օրինակ՝ «զի՞արդ կեցցուք զամենայն ի բաց ստանալով» (Բրս. ընչեղ. 3.154) – πῶς βιωσόμεθα πάντα ἀποκτησάμενοι (PG 31.288[95]), կամ «մի այդպէս խրոխտայր, Նիկոլայէ, թագաւորութեան պատուով իբր բաւական ունելով զվաղուեանսն դիպուած բախտի» (Աղեքս. 109) – μὴ οὕτως γαυριῶ Νοκόλαε βασιλεῦ, ὥς ἱκανὸν ἔχων περὶ τῆς αὐριον ἐνέχυρον ζῶῃς (Alex. a 1.18.7.3): Սակայն հայերենի շարահյուսական նորմերից չեղում է առաջանում, երբ նման ձևով են թարգմանվում հունարեն թեք հոլովներով հանդես եկող գոյականի հետ համաձայնեցված կամ ուղղական հոլովով՝ «լինել», «գտնվել», «թվալ» իմաստ արտահայտող բայերի լրացում դերբայները:

1) Ենթակայի հետ համաձայնեցված դերբայներ, եթե ստորոգյալն է «լինել», «գտնվել», «թվալ».

«գտցի... պահելով» (Առաք. ԾԹ 91.1-2) – εὐρεθῆ... νηστεύων (Ap. LXVI. 10.7-8՝ «պետք է պաս պահելու մեջ գտնվի»),

«երևիս ունելով ստացուածս բազումս» (Բրս. ընչեղ. 1.151) – φαίνῃ ἔχων κτήματα πολλά (PG 31.281[76]՝ «թվում է, բազում ունեցվածք ունես» / «բազում ստացվածք ունեցող ես թվում»),

«գտանին երկուք ոմանք զանազան անուանս ունելով» (Դ. Պորփ. 4.25) – εὐρεθῶσι δύο τινες διάφορα ὀνόματα ἔχοντες²⁵⁵ (D. Porph. 80.25՝ «գտնվում են ինչ-որ երկուսը, որ ունեն զանազան անուններ»),

«է իմն գումեմնէ կամ ստորասութիւն նշանակելով» (Ար. Մեկն. 167) – ἐστι τὰ κατὰ τινὸς ἢ κατάφασιν σημαίνουσα (Arist. Int. 19b19),

«լայնութիւն է... պակաս ունելով չորս բիւր ստադիոն» (Ար. աշխ. 523) – πλάτος ἐστι... ἀποδέον τετρακισμυρίων σταδίων (Arist. Mu 393b18՝ «լայնությունն է, որին պակասում է քառասուն հազար ասպարեզ»),

«իցէ՞ իբրու զի թերևս միտս յաղաքս այսոցիկ երևեսցի ունելով... ոք զդիտողութիւն... երևեսցի ոչ գիտելով» (Պղատ. Օր. 451) – ἔσθ' ὅπως ἂν νοῦν περὶ

²⁵⁴ Հմմտ. SMITH 1984, 455-457:

²⁵⁵ Շեղատառով նշվածը հայերեն թարգմանությանը համապատասխանող տարբերակներում է Բուսսեի հրատարակած տեքստից. այն քաղել ենք այդ հրատարակության մեջ չօգտագործված, բայց առաջաբանում նմուշ-հատվածներով ներկայացված B և P ձեռագրերից:

τι τούτων ἂν ἔχων φαίνοιτο/... εἴ τις τὸν σκοπὸν... φαίνοιτο ἀγνοῶν (Pl. Leg. 962a7-10),

«բազմաբան է բարի պատճառ ամենայնի... որպէս ոչ բան և ոչ իմացումն ունելով» (*Դիոն. խորհ. ածաբ. 225.17-18*) – πολύλογός ἐστιν ἡ ἀγαθὴ πάντων αἰτία... ὥς οὐτε λόγον οὐτε νόησιν ἔχουσα (Dion. myst. theol. 1.3' «ամեն ինչի բարի պատճառը չատախոս է, որ կարծես չունի ոչ բանականություն, ոչ իմացություն»),

2) ստորոգյալի անվանական մասի հետ համաձայնեցված դերբայներ.

«անուն է մասն բանի հոլովական մարմին կամ իր նշանակելով» (*Թրալ. 12.22*) – ὄνομα ἐστὶ μέρος λόγου πτωτικὸν σῶμα ἢ πρᾶγμα σημαῖνον (Thrax 24.3-4' «անունը հոլովոգ խոսքի մաս է, որ նշանակում է մարմին կամ իր»),

«Խրատ է բան բացասությամբ գլխաւորեալ յորդորելով յինչ կամ հրաժարեցուցանելով» (*Պիտ. 44. 3-4*) – Γνώμη ἐστὶ λόγος ἐν ἀποφάσεσι κεφαλαιώδης ἐπὶ τι προτρέπων ἢ ἀποτρέπων (Aphth. 67' «խրատը ասույթի պէս համառոտ խոսք է, որ հորդորում է ինչ-որ բան (անել) կամ խանգարում է»),

«Արտասանութիւն է բան պատմական ի դէմս ածելով երեւելապէս զյայտնեալն» (*Պիտ. 201.3-4*) – Ἐκφρασις ἐστὶ λόγος περιγηγηματικὸς ὑπ' ὅψιν ἄγῳ ἐναργῶς τὸ δηλούμενον (Aphth. 103.8' «նկարագրությունը պատմողական խոսք է, որ հայտնի բանը տեսանելի ձևով աչքի առաջ է բերում»),

«Երկդիմի է փառացն գիտութիւն, է որ առէութիւնն ցուցանելով զօրութեանցն» (*Փիլ. ել. 2.45*) – διττὴ ἡ περὶ δόξαν ἐκδοχή· ἡ μὲν τὴν παρουσίαν ἐμφαίνουσα τῶν δυνάμεων (Ph. QuEx. 2.45' «փառքի մեկնաբանությունը երկակի է, մեկը, որ ցույց է տալիս զօրությունների առկայությունը»),

«բազում մեզ յայտք են, այսպէս ունելով» (*Ար. Մեկն. 165*) – πολλὰ ἡμῖν διῆλὰ ἐστὶν οὕτως ἔχοντα (Arist. Int. 19a12),

«Արտասանութիւն է բան պարունական յայտնապէս ի դէմս ածելով զազդեցեալն» (*Թեոն 116*) – Ἐκφρασις ἐστὶ λόγος περιγηγηματικὸς ἐναργῶς ὑπ' ὅψιν ἄγῳ τὸ δηλούμενον (Theon 118.7' «նկարագրությունը պատմողական խոսք է, որ հայտնի բանը տեսանելի ձևով աչքի առաջ է բերում»),

«յառաջարկութիւն է տեսութիւն շարաձգելով առ նպերտ և փախուստ և կամ առ տեսութիւնս պիտանութեան» (*Սահմանք 386*),

3) հայցական հոլովի հետ համաձայնեցված դերբայներ.

«Հաւատամ ի մի աստուած... միշտ ելով աստուած հայր» (*Աթ. 137*) – πιστεύω εἰς ἓνα Θεόν... ἀεὶ ὄντα θεὸν Πατέρα (PG 28.5[442]' «հավատում եմ մի աստծուն, որ միշտ հայր աստվածն է»),

«ես զքեզ եղի ծառայ ելով ազատ» (*Թեոն 64*) – ἐγὼ σ' ἔθηκα δοῦλον ὄντ' ἐλεύθερον (Theon 3.76.28' «ես քեզ, որ ազատ էիր, ծառա դարձրի»),

«եղծանելով զոչն գոռոզն զՀիպարքոսն ելով» (*Թեոն 100*) – ἀνασκευάζων τὸ μὴ τύραννον ὄντα Ἴππαρχον (Theon 5.93.9' «մխտելով Հիպարքոսի բռնապետ չլինելը»),

«կանգնեսցէ Արեայ պատկեր ոսկի ունելով նիզակ» (*Թեոն 168*) – ἀνατιθέ-
τω τοῦ Ἀρεως ἄγαλμα χρυσοῦν ἔχον δόρυ (Theon 12.130.12-13՝ «*Թող Արե-
սի՝ ոսկե նիզակ բռնած արձանը կանգնեցնի*»),

«Դիողենէս Շնական իմաստասէր տեսեալ զհամբաւ ի շան տանէ քարինս
արտաքս ընկենլով...» (*Թեոն 42*) – Διογένης ὁ Κυνικός φιλόσοφος ἰδὼν
μειράκιον ἐκ μοιχοῦ λίθους βάλλον... (Theon 3.100.34-35՝ «*կիրիկյան փրի-
սոփա Դիողենեսը՝ տեսնելով անառակ կնոջ տնից քարեր գցող մի պատա-
նու*»),

«Քանզի սեռ ասի՝ և ոմանց ունելով առ մի ինչ իմն և առ միմեանս հաւա-
քումն» (*Պորփ. 134*) – Γένος γὰρ λέγεται καὶ ἡ τινῶν ἐχόντων πὼς πρὸς
ἓν τι καὶ πρὸς ἀλλήλους ἄθροισις (Porph. 1.18՝ «*ուրեմն սեռ է կոչվում ինչ-
որ մի բանի կամ միմյանց հանդեպ առնչություն ունեցող ոմանց հանրագու-
մարը*»),

«Իսնդրել զգլուխս ութ գոլով թուով» (*Դ. Պորփ. 2.6*) – ζητεῖσθαι κεφάλαι-
α, ὅκτῳ ὄντα τὸν ἀριθμὸν (D. Porph. 80.6՝ «*փնտրել թվով ութ եղած գլուխ-
ները*»),

«ոչ ինչ ունելով հարկեցուցիչ քարչելով ի մեղս» (*Նեմես. 19*) – μηδὲν
ἔχουσιν ἐπανάγκασμα περιέλκον εἰς ἁμαρτίαν (Nemes. 1.266՝ «*չունենալով
դեպի մեղքը շեղող ոչ մի ստիպողական անհրաժեշտություն*»),

«զբազումս յաստուածաբանիցն գտցես ոչ միայն որպէս աներևոյթ և
անհասանելի աւրհնաբանելով զնա» (*Դիոն. աստ. անու. 129.18-19*) – Καὶ
πολλοὺς τῶν θεολόγων εὐρήσεις οὐ μόνον ὥς ἀόρατον αὐτὴν καὶ ἀπερί-
ληπτον ὑμνηκότας (Dion. div. nom. 1.2),

«զիտացեալ զնա գերազոյն գոլով իմաստ» (*Դիոն. թղթ. 233.24*) – γνοὺς
αὐτὸν ὑπὲρ πᾶσαν ὄντα νόησιν (Dion. epist. 5.1՝ «*իմանալով նրան, որ վեր
է...*»),

3ա) ուղիղ խնդրի դերում հանդես եկող գոյականացված դերբայն է
թարգմանվել անորոշ դերբայի գործիական հոլովով.

«ճանաչել... զվարդապետն և զանցանելով զփարիսեցւոցն հպարտու-
թեամբն» (*Բրս. ընչեղ. 1.148*) – γνωρίσαι τὸν... διδάσκαλον καὶ παρελθόντα
τὴν Φαρισαίων ἀλαζονείαν (PG 31.280[66-67]՝ «*ճանաչել ուսուցչին և փարի-
սեցիներին մեծամտությունն արհամարհողին*»),

«Թիւ ամաց ի միասին գլխաւորելով» (*Փիլ. լին. 1.1*) – τοὺς συγκεφάλαιο-
μένους ἀριθμὸν ἑτῶν (Ph. QuGen. 1.1՝ «*տարիների թիվն ամփոփողներին*»),

3բ) եթե հայցական հոլովով հանդես եկող դերբայը համաձայնեցված է
«հայցականն անորոշ դերբայի հետ» դարձվածի բացակայող տրամաբանական
ենթակայի հետ, արդյունքում ստացվում է հայերեն օրինաչափ թարգմանու-
թյուն՝ պարագայի առումով կիրառված անորոշ դերբայի գործիական հոլով.

«Ի սարգենի մահակէ պար գոլով երգել զհոմերական քերականն» (*Թրակ. 4.7-
9*) – ἀπὸ τοῦ δαφνίνη ῥαβδῷ περιεχομένους ἄδειν τὰ Ὅμηρου ποιήμα-
τα (Thrax 8.5՝ «*այն բանից, որ դափնու ձողեր բռնած էին երգում Հոմերոսի պոեմ-
ները*»՝ «բռնել»-ը περιέχομαι բայի փոխաբերական իմաստն է, իսկ թարգմա-
նիչն ընկալել է այն առաջին՝ «չըղապատել» («պար գոլով») իմաստով),

«Եւ է Հնազէտ պատմութեանց և զբոլոր բանս ընդ միմեանս Հարկանել զիտելով և նկատելով զլաւագոյն արտագործեալն» (Թեոն 26) – «Ἔστι δὲ καὶ ἱστορίας καὶ ὅλους λόγους ἀντιπαραβάλλειν σκοποῦντα τὸ ἄμεινον ἐξείργασμένον (Theon 2.70.2-4՝ «և պետք է պատմություններ ու ամբողջական ճառեր կողք-կողքի դնել՝ նկատելով ավելի լավ մշակվածը»),

«Եւ եղծանելով պարտ է նախ առաջին սուղ ինչ բամբասանս ասել իրացն ասողին» (Պիտ. 60.4-5) – Δεῖ δὲ ἀνασκευάζοντας πρῶτον μὲν εἰπεῖν τὴν τῶν φησάντων διαβολήν (Aphth. 72.8-9):

Այդպիսի դերբայական դարձվածները կարող են թարգմանված լինել և ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ՝

«Հրամայեմք, թէ կամեսցին, ամուսնանալ» (Առաք. ԺԴ 80.10) – κελεύομεν βουλευομένους γαμεῖν (Ap. XXVII.4.4),

«Պիտոյից գրքի» հետեյալ օրինակում հունարեն նույնատիպ դերբայը թարգմանված է «ի» նախդրի հետ անորոշ դերբայով՝

«պարտ է յարտասելն զգէմսն՝ յառաջնոց մարմնոյ սկսանել...» (Պիտ. 201.14) – ἐκφράζοντας δὲ δεῖ πρόσωπα μὲν ἀπὸ τῶν πρώτων ἐπὶ τὰ τελευταῖα ἵεναι... (Aphth. 104.6-7՝ «պետք է, որ անձին նկարագրողները գնան սկզբից մինչև վերջ»),

իսկ հետեյալ օրինակում բառերի շարահյուսական կապերը փոփոխված են, սակայն իմաստը հիմնականում նույնն է.

«պարտ և արժան է բաղդատել, կամ զբարի ընդ բարիս յարարկանելով...» (Պիտ. 153.3-4) – Δεῖ δὲ συγκρίνοντας ἢ καλὰ παραθεῖναι χρῆστοις... (Aphth. 97.19՝ «պետք է, որ բաղդատողները լավ բաները հարադրեն ավելի լավերի հետ»),

4) այլ թեք հոլովներով գոյականների հետ համաձայնեցված դերբայներ.

«ո՛վ չար խաւարիս գծագումն լուսաւորին ոչ յուսալով» (Նիւս. Կ. Մ. 189) – ὦ κακῆς σκοτομήνης, ἀνατολήν φωστῆρος οὐκ ἐλπίζούσης (PG 46.852)՝ «լուսաւորին» սեռական հոլովի հետ,

«արեգական...՝ ընդ երկրաւ և կամ գեր ի վերոյ երկնի գնալով ի հարկէ» (Փիլ. այլաբ. 106) – ἡλίου... ὑπὲρ γῆν καὶ ὑπὸ γῆν ἰόντος ἐξ ἀνάγκης (Ph. LA 1.2՝ «երկրի վրայով ու երկրի տակով հարկադրված շարժվող արեգակի»)' «արեգական» սեռական հոլովի հետ,

«Եւ պարսաւանքս՝ մարմնոյն են առաւել քան ոգւոյ, բազում ունելով իւրաց» (Փիլ. շն. 268) – ἡ δὲ μέμφις σώματός ἐστι μᾶλλον ἢ ψυχῆς... πολλὴν μὲν ἔχοντος εἴσω φλόγα (Ph. Spec. 3.10՝ «իսկ հանդիմանությունն ավելի շատ մարմնինն է, քան ներսում բոց ունեցող հոգունը»)' «ոգւոյ» սեռական հոլովի հետ,

«պանդխտացն վասն դրացութեանն հպելով» (Փիլ. քհ. 190) – τοῖς παροίκοις ἔνεκα τοῦ γειτνιαῖν ἐφαψομένοις (Ph. Spec. 1.122՝ «մերձավոր լինելու պատճառով օտարականներին, որոնք ձեռք են գցում»)' «պանդխտացն» տրական հոլովի հետ,

«Քանզի սեռ ասի՝ և ոմանց ունելով առ մի ինչ իմն և առ միմեանս հաւաքումն» (Պորփ. 134, Դ. Պորփ. 62.1-2) – Γένος γὰρ λέγεται καὶ ἡ τινῶν ἐχόντων πῶς πρὸς ἓν τι καὶ πρὸς ἀλλήλους ἄθροισις (Porph. 1.18, D. Porph. 126.23-24),

«յայսպիսի բոլորս ըստ կարգի կալով» (Ար. աշխ. 520) – ἐν τοσούτοις κύκλοις ἐφέξεις κειμένοις (Arist. Mu 392a19՝ «այսպիսի՝ հերթականությամբ դասավորված շրջանների մեջ»)՝ «բոլորս» հայցական հոլովի՝ «ի»-ով ներգոյականի հետ:

5 ԲԱՑԱՐՁԱԿ ՍԵՌԱԿԱՆ (genetivus absolutus)

Հին հունարենում գոյություն ունեւ ժամանակի կամ պատճառի պարագայի իմաստով օժտված բացարձակ դերբայական դարձված, որի տրամաբանական ստորոգյալը սեռական հոլովով դերբայ է, իսկ տրամաբանական ենթական՝ վերջինիս հետ համաձայնեցված գոյական կամ դերանուն: Նման յուրահատուկ շարահյուսական կառույցները շատ լեզուներում չունեն համարժեք և դժվարություն են հարուցում թարգմանելիս (այն համեմատելի է լատիներեն ablativus absolutus²⁵⁶ և հին սլավոներեն дательный самостоятельный դարձվածների հետ):

5ա «Բացարձակ սեռական»-ի պատճենում

Մեկ դեպք գտել ենք դասական թարգմանություններում՝

«Եւ մինչ դեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյն նորա, եւ ահաւասիկ արք երկու երեւեցան նոցա ի հանդերձս սպիտակս» (Գծ. Ա 10) – Καὶ ὥς ἀτενίζοντες ἦσαν εἰς τὸν οὐρανὸν πορευομένου αὐτοῦ, καὶ ἰδοὺ ἄνδρες δύο παρειστήκεισαν αὐτοῖς ἐν ἐσθήσεσι λευκαῖς (Act. 1:10՝ «... մինչ նա գնում էր դեպի երկինք»),

«գործոց ի բաց հրաժարելոց» (Առաք. ԾՁ 90.7) – ἀπηγορευμένης πράξεως (Ap. LXI.9.9),

«տրամախոհութեան չե ևս հանգիցելոյ» (Թրակ. 3.16-17) – διανοίας μηδέπω ἀπαρτισμένης (Thrax 7.6),

«ամենեցուն մեծաւ լռութեամբ ունգնդրութիւն արարելոց» (Փիլ. տես. 29) – πάντων κατὰ πολλὴν ἡσυχίαν ἀκροωμένων (Ph. Cont. 80.6՝ «երբ բոլորը սաստիկ լռությամբ լսում էին»),

«մտաց և զգայութեան և զգալոյն երից ելոց՝ է մէջ զգայութիւն» (Փիլ. ալլաք. 114) – νοῦ καὶ αἰσθήσεως ἔτι δὲ αἰσθητοῦ τριῶν ὄντων μέσον

²⁵⁶ Ablativus հոլովն օժտված է բացառական և գործիական հոլովների իմաստներով:

ἐστιν αἴσθησις (Ph. LA 1.28՝ «*քանի որ միտքը, զգայությունն ու զգալին երեքն են, զգայությունը մեջտեղում է*»),

«բազմաց էից քերթողաց» (Փիլ. իմաստ. 35) – Ὁμηρος μυρίων ποιητῶν ὄντων, κατ' ἐξοχὴν λέγεται (Ph. Abr. 10.2, 57.4՝ «*քանի որ շատ պոետներ կային*»),

«Պինդարոս առական ասաց, եղելոյ պակասութեան լուսոյն» (Փիլ. նիւ. 110) – Πίνδαρος ἡνίξάτο γενομένης ἐκλείψεως (Ph. Prov. 2.50.6՝ «*Պինդարոսն ականարկեց, երբ խավարում եղավ*»),

«Զի՞նչ արդեօք ասիցէ բանս ծով՝ ծովակալ եղելոց լակեղմոնացւոց» (Պիտ. 184.11-12՝ «*Արդյոք ի՞նչ խոսքեր կասեր ծովը, երբ լակեղմոնացիները ծովի վրա իշխող դարձան*»),

«Զի՞նչ արդեօք ասիցէ բանս Աքիլլեւ՝ Պատրոկլի ի բաց բարձելոյ» (Պիտ. 184.6-7՝ «*Արդյոք ի՞նչ խոսքեր կասեր Աքիլլեսը, երբ Պատրոկլեսը սպանվեց*»)²⁵⁷,

«Զիարդ գիշերի ելոյ և դրացն փակելոցն... դիւրաւ եկին մտին» (Թեոն 94) – Πῶς οὖν νυκτὸς οὔσης καὶ τῶν πυλῶν κεκλεισμένων... ῥαδίως εἰσελθόντες/ (Theon 5.90.11-13՝ «*Ինչպե՞ս, չնայած գիշեր էր, դռներն էլ փակ էին, հեշտությամբ մտան*»),

«Եռակի սեռոյր ասացելոյր յաղագս երրորդին առ իմաստասէրս է բան» (Պորփ. 134) – Τριχῶς οὖν τοῦ γένους λεγομένου περὶ τοῦ τρίτου παρὰ τοῖς φιλοσόφοις ὁ λόγος (Porph. 1.3՝ «*սեռը սեռ կոչվելով երեք առումներով՝ երրորդն է, որով զբաղվում են փիլիսոփաները*»),

«խորագունի ելոյր աշափսւոյր իրողութեան» (Պորփ. 133) – παραιτήσομαι λέγειν βαθυτάτης οὔσης τοιαύτης πραγματείας (Porph. 1.13),

«բացատուեցելոյր սեռոյր և տեսալոյր... սեռոյր եզոյր ելոյր... սեռն միշտ գտեսալէ ստորոգի» (Պորփ. 139) – ἀποδεδομένου τοῦ γένους καὶ τοῦ εἵδους... τοῦ μέν γένους ἐνὸς ὄντος τῶν δὲ εἰδῶν πλείονων... τὸ μέν γένος ἀεὶ τοῦ εἵδους κατηγορεῖται (Porph. 6.24-7.2),

«տարբերութեան ելոյր բանականին ստորոգի իբր գտարբերութենէ բանիւն վարիլ» (Պորփ. 147) – διαφορᾶς οὔσης τῆς τοῦ λογικοῦ κατηγορεῖται ὡς διαφορᾶς τὸ λόγῳ χρῆσθαι (Porph. 14.7),

«տեսալին ելոյր՝ է և սեռն, իսկ սեռոյրն ելոյր՝ ոչ ամենայն իրօք է տեսալին» (Պորփ. 148) – εἶδους μέν ὄντος πάντως ἔστι καὶ γένος, γένους δὲ ὄντος οὐ πάντως ἔστι καὶ τὸ εἶδος (Porph. 15.19-20),

²⁵⁷ Այս հատվածների համապատասխան մասերն Ափթոնիոսի մոտ խմբագրման հետևանքով ձևափոխված են. օրինակ՝ «զի՞նչ արդեօք ասիցէ բանս Աքիլլեւ՝ Պատրոկլի ի բաց բարձելոյ» բարաբոնության օրինակը հանդես է գալիս ինչպե՛ս «ἄν εἴποι λόγους Ἑρακλῆς Εὐρυσθέως ἐπιτάσσοντος-ի» (Aphth. 101.6-7՝ «*Ի՞նչ խոսքեր կասեր Հերակլեսը, երբ Եվրիսթեսը նշանակվեց նրա վերադաս*») դիմաց, որի կառուցվածքը, սակայն, նույնն է և պարունակում է «բացարձակ սեռական», իսկ «զիմառնության» օրինակը՝ «զի՞նչ արդեօք ասիցէ բանս ծով՝ ծովակալ եղելոց լակեղմոնացւոց», Ափթոնիոսի մոտ բացակայում է:

«քառից ելոց սեռին առ այլան տարբերութեանց և երից տարբերութեան, և երկուց տեսակին, և միոյ յատկին առ պատահումն՝ տասն եղիցին ամենայն» (*Պորփ. 151*) – τεσσαράων λαμβανομένων τοῦ γένους πρὸς τὰ ἄλλα διαφορῶν τριῶν δὲ τῆς διαφορᾶς, δύο δὲ τοῦ εἶδους, μιᾶς δὲ τοῦ ἰδίου πρὸς τὸ συμβεβηκός, δέκα ἔσονται αἱ πᾶσαι (*Porph. 18.5-8*),

«սորա ստոյ ելոյ, գստութիւնն պատահեցէ ոչ ճշմարիտ գոյ» (*Աբ. Մեկն. 164*) – ταύτης ψευδοῦς οὐσῆς τὴν κατάφασιν συμβαίνει μὴ ἀληθῆ εἶναι (*Arist. Int. 18b19*՝ «քանի որ սա սուտ էր»),

«միոյ մասին պակասելոյ հարկ է զբոլորն անկատար գոյ» (*Դ. Սահմ. 142.32-33*) – ἐνὸς τῶν μερῶν ἀπολιμπανομένου ἀτελές τὸ ὅλον γίνεται (*D. Prol. 70.35*՝ «եթե մի մասը պակասում է, ամբողջն անկատար է լինում»),

«այսոցիկ այսպէս եղելոց իմաստասէրք... դյօղեալն և գնշանականն առնուն ի կեր» (*Դ. Պորփ. 10.3-6*) – τούτων οὕτως ἐχόντων οἱ φιλόσοφοι... περὶ δὲ τῆς ἐνάριθρου καὶ σημαντικῆς φωνῆς διαλαμβάνουσιν (*D. Porph. 84.11-17*՝ «քանի որ այս բաներն այսպես են, փիլիսոփաներն... արծարծում են յոգաբաշխ և նշանակութիւն ունեցող (հնչյունները)»),

«կամեցելոց ոմանց յարուցանել նմա պատկեր՝ արգել ասելով» (*Դ. Պորփ. 22.14*) – βουλομένων δέ τινων ἀναθέσθαι αὐτῷ εἰκόνα ἔφη (*D. Porph. 91.28*՝ «երբ ոմանք կամեցան նրան հուշարձան կանգնեցնել, նա արգելեց՝ ասելով»),

«գ ելոց»²⁵⁸ յեղանակաց անհաւաստութեան... դա ինքն Պորփիրիոս ամենայն հաւաստութեան²⁵⁹ հոգ տանի» (*Դ. Պորփ. 24.4-6*) – τριῶν ὄντων τρόπων καθ' οὓς ἡ ἀσάφεια γίνεται... αὐτὸς πάνυ τῆς σαφηνείας φροντίζει (*D. Porph. 92.21-22*՝ «քանի որ անհավաստութեան եղանակները երեքն են, ինքն է խիստ հոգում հավաստութեան մասին»),

«Ելոյր հարկաւորի... գիտել զինչ սեռ... փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր ներածութեան յեղանակի զառ ծերունեացն անցանել բանիւ» (*Պորփ. 133, Դ. Պորփ. 22.37*) – "Οὐτος ἀναγκαῖου... πειράσομαι διὰ βραχέων ὥσπερ ἐν εἰσαγωγῇς τρόπῳ τὰ παρὰ τοῖς πρεσβυτέροις ἐπελθεῖν (*Porph. 1.3-7*),

«Համատեսական գնեցելոցն և ի գննումն եկելոցն՝ նոքա խայտան» (*Դ. Վերլուծ. 46*՝ «երբ յուրայինները սպանվել են կամ գնում են սպանվելու, նրանք ուրախանում են»),

«քառից ելոց իրաց» (*Անան. Մեկն. 490*՝ «քանի որ չորս բան կար»),

«խոստովանեցելոց պատրաստաբար նոցա թագաւորն հրամայեաց նոցա գրով զհաւատսն տալ» (*Սոկր. 83*) – τῶν δὲ συνθεμένων ἐτοίμως ὁ βασιλεὺς ἔγγραφον αὐτοῦς ἐπιδιδόναι τὴν πίστιν ἐκέλευσεν (*Socr. 1.25.44-45*՝ «քանի որ նրանք պատրաստակամորեն խոստովանեցին...»),

«ի բաց գատուցելոյ հոգւոյն» (*Նեմես. 10*) – χωρισθείσης τῆς ψυχῆς (*Nemes. 1.36*՝ «երբ հոգին անջատվում է»),

²⁵⁸ Ուղղել ենք «գրելոց» ընթերցումը՝ ըստ հունարենի:

²⁵⁹ Ուղղել ենք «հաւաստութեամբ» ընթերցումը՝ ըստ ՄՄ 2326, 1716, 8722, 1753, 1500, 1750, 1687, 1688, 1765, 4027, 1808, 1826, 1812, 3683 և Փարիզի Ազգային գրդարանի 240, և 242 ձեռագրերի:

«Չորին և խոնաւին և ոգւոյն թափեցելոյ՝ հարկ է չորին և խոնաւ կերակրոյ կարօտ լինել կենդանւոյ և ոգւոյ» (*Նեմես. 17*) – ξηρῶν δὲ ὄντων καὶ ὑγρῶν καὶ πνεύματος τῶν κενουμένων, ἀνάγκη καὶ ξηρᾶς καὶ ὑγρᾶς τροφῆς δεῖσθαι τὸ ζῶον καὶ πνεύματος (Nemes. 1.199-201),

«փոխադրութեան ըստ որակութեան եղելոյ հարկ է վասն հակառակ որակութեան՝ ի չափաւորն ածել զկարգ մարմնոյն» (*Նեմես. 18*) – τῆς μεταβολῆς κατὰ ποιότητα γινομένης ἀνάγκη διὰ τῆς ἀντικειμένης ποιότητος εἰς τὸ σύμμετρον ἀγαγεῖν τὴν κατάστασιν τοῦ σώματος (Nemes. 1.234),

«այրացելոյ աստուծոյ» (*Դիոն. թղթ. 233.15*) – ἀνδρωθέντος θεοῦ (Dion. epist. 4.1),

«այսոցիկ եղելոցս, որպէս ասացեալս եղև, առանձնաւորութեանս բնութիւնքս, և էութիւնքս և կերպարանք և հասարակն և սեռն ասին լինելով» (*Եւտիք. 17/18-19/20.4*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

«այսքանւոյ խառնութեանն եղելոյ և ցանութեան՝ ի՞բր դարձեալ (յար)իցէ այրն» (*Տիմ. 323*) – τοσαύτης δὲ τῆς συγχύσεως γενομένης καὶ διασπορᾶς πῶς πάλιν ἀναστήσεται ὁ ἀνὴρ/ (PG 62.436) – «և արդ որ այնչափ չփոթք և ցրումն անդամոց զի՞բրդ իցէ զի միւսանգամ այրն յարիցէ» (*Ոսկ. Պօղ. Բ 446*):

5բ Թարգմանություն «սեռն ասելով» տիպի դարձվածով

Սեռականով ենթակայի հետ անորոշ դերբայի գործիական հոլովն այսպես է բնորոշել Գ. Ուլուհոջյանը²⁶⁰: Նա փորձել է բացատրել այդ վերջին՝ մի տեսակ կայուն բանաձևի ծագումը, որակելով այն որպես դասական լեզվին ոչ հատուկ, բայց և՛ ոչ լրիվ բառացի պատճենում: Դրա առաջացումը տեղի է ունեցել հետևյալ փուլերով՝ 1) անուն-անորոշ դերբայի կիրառությունը գործիական հոլովով, 2) անուն-անորոշ դերբայի՝ սեռականով հատկացուցիչ ընդունելը, 3) անորոշ դերբայի գործիական հոլովաձևի կողմից զուտ գործիականի արժեքի կորուստը և դերբայի նման պատճառային կամ ժամանակային արժեքի ձեռքբերումը, 4) հունարեն «բացարձակ սեռականի» բայական մասի և հայերեն անորոշ դերբայի գործիականի միջև համարժեքության առաջացումը, 5) հունարենում և հայերենում ենթակայի սեռական հոլովաձևի ձևական համընկնումը և անցյալ դերբայով դարձվածի սեռական ենթակայի զուգահեռ ձևի հետ բաղադրությունը, 6) հունարեն «բացարձակ սեռականի» դիմաց երկու տիպի դարձվածների նույնացումը. դրանք են ենթակայի սեռական հոլովաձևը անցյալ դերբայի հետ և անորոշ դերբայի գործիական հոլովի հետ, որոնք ընկալվում են որպես միևնույն արժեքն ունեցող ձևեր:

«ընդ մեղադրութեամբ զմեզ արարեր որպէս ոչ խորհողաց մեր յաղագս Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն» (*Աթ. 138*) – ὑπὸ αἰτίαν ἡμᾶς ἐποίησας,

²⁶⁰ ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ 1989, 167-176:

ὥς μὴ ὀρθῶς φρονούντων ἡμῶν περὶ Πατρὸς, καὶ Υἱοῦ, καὶ ἁγίου Πνεύματος (PG 28.7[448]) «*մեղադրանք ներկայացրիր մեզ, քանի որ մենք չենք մտածում Հոր, Որդու և սուրբ Հոգու մասին*»),

«իմ գայս ասելով յանկարծակի ի սրտի իմում եղև խորհուրդ ասելով յիս յինքեան» (Աթ. 134-135) – ἐμοῦ τοῦτο εἰρηκότος αἰφνιδίως τις κατοχή τῆς εὐσεβείας γίνεται ἐν τῇ καρδίᾳ μου (PG 28.444.7' «*երբ ես ասացի սա...*»),

«այսպիսեաց բազմաց եղելոց հաստատէր մանաւանդ առ խոստովանութիւնն և բարեպաշտութիւնն» (Նիււ. Կ. Մ. 216) – ἐπειδὴ δὲ πολλῶν γινομένων ἤκμαζε πρὸς τὴν ὁμολογίαν καὶ τὴν εὐσέβειαν (PG 46.745),

«մերձ գոլով բարկացուցանողին» (Նիււ. Կ. Մ. 215) – ἐπισυμβαίνοντος τηλικούτου τοῦ παροξύνοντος (PG 46.744),

«սրբոյն անդրէն դարձուցանելով կռապաշտին գծիծաղելին... ասեն» (Նիււ. Կ. Մ. 214) – τοῦ ἁγίου διπλοῦν ἀντιστρέψαντος τῷ εἰδωλολάτρῃ τὸν καταγέλωτα... φασί (PG 46.744' «*երբ սուրբը կրկին վերադարձրեց կռապաշտին ծաղրը...*»),

«պահելով որ ինչ ի կանոնի կայ Նիկիայ ժողովոյն աւագութեան» (Կոնստ. Բ 275.2-3) – φυλαττομένων τῶν ἐν τοῖς κανόσι τοῖς κατὰ Νικαίαν πρεσβείων (Const. II.46.21-22' «*քանի որ Նիկիայի համաձայն կանոնների մեջ եղած ավագությունները պահպանվում են*»),

«պիտոյիւք կրթութիւն ոչ միայն գորութիւն բանից գործէ, այլև ազ(ն)իւս արարս կրթելով մեր յիմաստնոցն բարբառեալս» (Թեոն 6) – ἡ διὰ τῆς χρείας γυμνασία οὐ μόνον τινὰ δύναμιν λόγων ἐργάζεται, ἀλλὰ καὶ χρηστόν τι ἦθος ἐγγυμναζομένων ἡμῶν τοῖς τῶν σοφῶν ἀποφθέγμασιν (Theon 1.60.18' «*«պետք»-ի միջոցով վարժությունը ոչ միայն խոսքի գորություն է առաջ բերում, այլև ազնիվ բարք, քանի որ մենք կրթվում ենք իմաստունների ասույթներով*»),

«աւաղելով և ողբալով բարեկամացն զնա գայլն ամենայն... ասէ» (Թեոն 50) – ὀλοφυρομένων τῶν φίλων τά τε ἄλλα... ἔφη (Theon 3.104.10' «*երբ բարեկամները ողբում էին ինչպես այլ բաների համար,... ասաց*»),

«այսոցիկ այսպէս գոլով զինչ ունիմք ասել վասն Պղատոնի» (Դ. Սահմ. 70.28) – τούτου οὕτως ἐχόντος τί ἔχομεν εἰπεῖν περὶ Πλάτωνος (D. Prol. 31.3' «*երբ հանգամանքներն այսպես են, ի՞նչ ունենք Պղատոնի մասին ասելու*»),

«երկաքանչիւրոցս այսոցիկ գմեզ առ ինքն յարաքարչելով... Պորփիրիոս խառնեաց զերկոսին» (Դ. Պորփ. 26.29-31) – ἐκατέρου οὐδὲν... τούτων... ἡμᾶς πρὸς ἑαυτὸ ἀνθέλκοντος ὁ Πορφύριος ἐκέρασε τὸ χρήσιμον τῷ σκοπῷ (D. Porph. 96.20-22' «*քանի որ սրանցից երկուսն էլ մեզ գրավում են զեպի իրենց... Պորփյուրիոսը խառնեց պիտանացուն զիտավորության հետ*»),

«Արդ վասն զի այսպիսի խնդիրք և երկբայութիւն ի հնոցն եղեն, արիստոտէլականացն և պղատոնականացն²⁶¹ ասելով, թէ...» (Դ. Պորփ. 42.19-20) – Ἐπειδὴ δὲ τοιαύτη ζήτησις καὶ ἀμφιβολία παρὰ τοῖς παλαιοῖς γέγονεν, τῶν

²⁶¹ Տպագրի «յարիստոտէլականաց և ի պղատոնականաց» ընթերցումն ուղղել ենք ըստ ՄՄ1746 ձեռագրի:

μὲν Ἀριστοτελικῶν καὶ Πλατωνικῶν λεγόντων (D. Porph. 111.19-20՝ «*և քանի որ այսպիսի քննություն և երկբայություն հների մոտ էր առաջ գալիս, երբ արիստոտելականներն ու պլատոնականներն ասում էին, թե*»),

«լինելով մանկանցն արուաց և իգաց՝ զսնունդն իսկ և զխրատն որ յետ այնոցիկ է ասել ուղղագոյն եղիցի մեզ» (*Պղատ. Օր. 223*) – γενομένων δὲ παίδων ἄρρένων καὶ θηλειῶν τροφήν μὲν που καὶ παιδείαν τὸ μετὰ ταῦτα λέγειν ὀρθότατ" ἂν γίγνοιθ" ἡμῖν (Pl. Leg. 788a1՝ «*քանի որ մանուկները արու և էգ են լինում...*»),

«արդ կամ միոյ գոլով պատմութեանն խառնախօսութեանն և կարասին շարադասութիւնն լծակցեալ լինի, և կամ երկու գոլով պատմութեանց՝ շարադասիլ պարտ է գիտագենեայ խառնախօսութիւնն ընդ ոճոյ» (*Նոննոս III.26.37*) – ἢ οὖν μιᾶς οὐσῆς τῆς κατὰ τὴν στωμυλίαν καὶ τὸν πίθον, ἢ σύνταξις συνδέεται, ἢ, δύο οὐσῶν τῶν ἱστοριῶν, συντάξαι δεῖ τὴν Διογένους στωμυλίαν μετὰ τοῦ ὑφ' ἧς (Nonnos 4.26.25-27),

«որպէս մարդ ոչ ունի զանազանութիւն՝ զանազանութեանց ոչ գտանելով» (*Եւտիք. 19-20.5*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանություն դասական եղանակի հետ

1) Ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ՝

«ուր լինէր աղաւթք» (*Գանգր. նախ. 580*) – γινομένων ἐν χῶν (Gangr. Prol. 80.11),

«իբրև ոչ իցէ երէցն» (*Գանգր. 2 194.4-5*) – μὴ συνόντος τοῦ πρεσβυτέρου (Gangr. VI.81.19),

«յորժամ ժողով լինիցի» (*Անտ. 2 210.1*) – συνόδου γενομένης (Ant. VI.45.3),

«մինչդեռ նա գայս խօսէր ընդ նոսա» (*Մթ. Թ 12*) – ταῦτα αὐτοῦ λαλοῦντος αὐτοῖς (Mt. 9:12), *Հմմտ. նաև Մթ. ԻԴ 3, Մկ. ԺԳ 3, Ղկ. ԺԷ 12, ԻԹ 11,*

«և մինչդեռ այն ամենայն յարացեալ կայցէ միախուռն» – οὕτω δὲ τῶν ὅλων συνεστηκότων (*Եւս. քր. ա 24*),

«և մինչդեռ նա գայս ածէր զմտաւ ահա հրեշտակ Տեառն ի տեսեան՝ երեւեցաւ նմա» (*Մթ. Ա 20*) – ταῦτα δὲ αὐτοῦ ἐνθυμηθέντος ἰδοῦ ἄγγελος κυρίου κατ' ὄναρ ἐφάνη αὐτῷ (Mt. 1:20),

«մինչ էի անդրէն յերկրին իմում» (*Յովն. Դ 2*) – ὄντος μου ἐν τῇ γῇ μου (Jona 4:2),

«և իբրև սկսաւ առնուլ» (*Մթ. ԺԸ 24*) – ἀρξαμένου δὲ αὐτοῦ συναίρειν (Mt. 18:24), *նաև Մթ. Բ 13, ԻԶ 6, ԻԷ 17, Ղկ. ԺԴ 29, Դ 42, Գձ. Ա 6, 9,*

«յորժամ գայցէ և բախիցէ» (Lk. 12:36) – ἐλθόντος καὶ κρούσαντος (*Ղկ. ԺԲ 36*).

2) Պատճառի պարագա երկրորդական նախադասություններ.

«և այն զի կարօղ գոյր տեսալ տարբերութեամբ և սեռիւ սահմանիլ» (*Դ. Պորփ. 138.19-20*) – καίτοι δυναμένου τοῦ εἶδους διὰ τῆς διαφορᾶς καὶ τοῦ γένους ὀρίζεσθαι (D. Porph. 188.1),

«վասն զի լաւագոյն է ներգործութեամբն, քան գորութեամբ» (*Դ. Պորփ. 144.31-146.1*) – τοῦ ἐνεργείᾳ κρείττονος τοῦ δυνάμει ὑπάρχοντος (D. Porph. 190.21-22),

«իսկ դուք՝ որպէս զի խոստովանաբար մակագոյեղք են՝ այսպէ՞ս ներանիւթեցէք» (*Դ. Պորփ. 172.28-29*) – ἡμεῖς δὲ ὡς ὁμολογουμένων αὐτῶν ἐπουσιωδῶν τὸ τοιοῦτον κατασκευάζετε (D. Porph. 203.24).

3) «ի» *նախդրի հետ անորոշ դերբայ.*

«յեւանեւն նորա» (*Մկ. ԺԳ 1*) – ἐκπορευομένου αὐτοῦ (Mk. 13:1), *նաև Մթ. Բ 19, Գժ. Ա 8,*

«ի ծագել արեգական» (Phys. 1.4) – ἀνατέλλοντος τοῦ ἡλίου,

«ի մտանել արեգականն» – τοῦ ἡλίου δύναντος (*Եւս. քր. ա 21*)²⁶²,

«ի ծնանելն Յիսուսի» (*Մթ. Բ 1*) – τοῦ δὲ Ἰησοῦ γεννηθέντος (Mt. 2:1).

«ի հարցանելն մերում» (*Դ. Պորփ. 156.6*) – ἡμῶν ἐρωτῶντων (D. Porph. 195.19).

4) *Համադաս նախադասութիւններ.*

«և սաստիկ իցէ վիշապս» (Phys. 26.2) – δριμυτάτου ὄντος τοῦ δράκοντος,

«և ոմանք ի նոցանէ անպարտ և արդար յայտ առնել կամիցին և ոմանք ի նոցանէ պարտաւորել» (*Անտ. ԺԴ 214.13-215.1*) – τῶν μὲν ἀθῶον τὸν κρινόμενον ἀποφαινόντων, τῶν δὲ ἔνοχον (Ant. XIV.47.6-7):

«և առաջնորդէր արանցն Մովսէս մարգարէ և կանանցն Մարիամ մարգարէ» (*Փիլ. տես. 31*) – ἐξαρχόντος τοῖς μὲν ἀνδράσι Μωϋσέως τοῦ προφήτου, ταῖς δὲ γυναιξὶ Μαριάμ τῆς προφήτιδος (Ph. Cont. 87.4),

«մասունք ի բաց անջատեցան, ի յարմարութենէն յորմէ ըմբռնեալք էին ի միաւորութիւն լուծեալք քակտեցան» (*Փիլ. տես. 23*) – μέρος... διεζεύχθησαν, τῆς ἀρμονίας ὑφ' ἧς συνείχοντο λυθείσης (Ph. IX.150),

«սեռակ է, որ յոլով զանազանութիւնս ունի քան զսեռ, նմանապէս և սեռ կարող գոյր բացագայիլ» (*Դ. Պորփ. 138.22*) – γείδος ἐστὶ τὸ πλείονας ἔχον διαφορὰς τοῦ γένους, ὁμοίως δὲ καὶ τοῦ γένους δυναμένου παραδίδοσθαι (D. Porph. 188.2-3).

5) *անցյալ դերբայը սեռական ենթակայի հետ՝ հայերենին հատուկ դարձված.*

«սերմանեալ ի նա (անձն) զճառագայթսն զմտաւոր հաւրն» (*Փիլ. տես. 24*) – σπειρόντος εἰς αὐτὴν ἀκτῖνας νοητὰς τοῦ πατρός (Ph. Cont. 68.6),

«և նշան արարեալ նոցա աւրաւրակին» (*Փիլ. տես. 25*) – ὑποσημαινοντός τινος τῶν ἐφημερευτῶν (Ph. Cont. 66.2).

6) *ուղղականով ենթակայի հետ անորոշ դերբայի գործիական հոլով.*

«իսկ ստոյիկեանքն զամենայն էակսս մարմին կարծելով» (*Դ. Պորփ. 42.22*) – τῶν δὲ Στωϊκῶν πάντα τὰ ὄντα σώματα εἶναι λεγόντων (D. Porph. 111.21-22),

²⁶² Ավելի բարդ դեպք է հետևյալը՝ «*նուստալ զմայր նորա Մարիամ Յովսեփու...*» – μνησθείσης τῆς μητρὸς αὐτοῦ Μαρίας τῇ Ἰωσήφ... (Մթ. Ա 18). Հունարեն կրավորական դերբայի իմաստն արտահայտված է ներգործական դերբայով, իսկ սեռականով տրամաբանական ենթակայի փոխարեն ունենք հայցականով ուղիղ խնդիր:

7) սեռական հոլովով ենթակայի հետ հոգով անորոշ դերբայ. բացառված է, որ անորոշ դերբայն աղավաղված անցյալ դերբայ է (⁶).

«Քրիստոսի այսուհետև կրելով վասն մեր մարմնով» (Տիմ. 302 «տեառն ասելով» կառույց), «Քրիստոսի կրողի մարմնով վասն մեր» (Տիմ. 131 «բացարձակ սեռականը»՝ բառացի) ≠ «Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր» (Ա Պետ. Դ 1) – Χριστοῦ οὖν παθόντος σαρκὶ ὑπὲρ ἡμῶν (1Pet 4:1):

6 ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Ճա Բացարձակ անորոշ դերբայ (infinitivus absolutus)

Հունարեն «ասել» անորոշ դերբայով ներմուծվող միջանկյալ նախադասութիւնները կարող էին պատճենվել.

«Համառատագոյնս ասել» (Նազ. առ Նիւս. 232) – συνελόντα εἰπεῖν (PG 35.840[15]),

«և կամ ճշմարտագոյն ասել» (Նազ. ճ.4.27) – ἢ τό γε ἀληθέστερον εἰπεῖν (PG 35.553.26-27),

«ոչ էր կարող ի վեր հայել..., զճշմարիտն ասել, իբրև ի դատաւորէ կշտամբեալ ի կնոջն հարկեալ լինէր» (Փիլ. Սամփս. 549),

«զգուշաբար այժմ ասելն տիկինն՝ զՍառայ» (Փիլ. լին. 3.22),

«և ճշմարտապէս ասել» (Դիոն. եկեղ. քհ. 54.13-14) – ἀληθῶς τε εἰπεῖν (Dion. eccl. hier. 1.2),

«և համանգամայն իսկ ասել» (Պող. Աղ. 155) – καὶ καθόλου εἰπεῖν (P. Al. 154):

Ճբ Հրամայական իմաստով կիրառված անորոշ դերբայ

Այդպիսի կիրառութիւն դասական բնագրերում մատնանշել է Մ. Մինասյանը²⁶³.

«Ի բաց կալ ի զոհելոյ կռոց, եւ յարենէ, եւ ի հեղձուցելոյ, եւ ի պոռնկութենէ» (Գծ. ԺԵ 29) – ἀπέχεσθαι εἰδωλοθύτων καὶ αἵματος καὶ πνικτωῶν (Act. 15.29), սակայն սա նախորդ տան՝ «Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ եւ մեզ. մի ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց միայն ի կարեւորացս յայսոցիկ» (Գծ. ԺԵ 28), «Հաճոյ թուեցաւ» եղանակավորող բայից կախված անորոշ դերբայ է,

«Խնդա՛լ ընդ խնդացաւդս, լա՛լ ընդ լացաւդս» (Հռ. ԺԲ 15) – χαίρειν μετὰ χαιρόντων, κλαίειν μετὰ κλαιόντων (Rom. 12:15), և այլն,

և Գ. Խաչատրյանը²⁶⁴.

²⁶³ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 140 (349):

«ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս Հանճարոյ» (*Առակ. Ա 2*) – γινῶναι σοφίαν καὶ παιδείαν νοῆσαι τε λόγους φρονήσεως (Pr. 1:2),

«մի բազում վարդապետս լինել» (*Յակ. Գ 1*) – Μὴ πολλοὶ διδάσκαλοι γίνεσθε (Jac. 3:1),

«Խնդա՛լ ընդ խնդացողս, լա՛լ ընդ լացողս» (*Հռովմ. ԺԲ 15*) – χαίρειν μετὰ χαιρόντων, κλαίειν μετὰ κλαιόντων (Rom. 12:15):

Մեր գտած օրինակներում հունարեն ինֆինիտիվը երբեմն ունի հայցական հոլովով տրամաբանական ենթակա («հայցականն անորոշ դերբայի հետ» դարձվածն է, հմտ. Գ 6գ), և այն թարգմանված է հայերենի համար օրինաչափ տրական հոլովով.

«մի ընդունել» (*Առաք. ԶԹ 94.1-2*) – μὴ προσδέχεσθαι (Ap. LXXV.11.17),

«ոչ խոտել զհաւատ սուրբ հարցն ՅԺԸ-իցն, որք ի նիկիայ՝ ի Բիւթանիայ ժողովեցան, այլ մնալ նմա հաստատուն» (*Կոնստ. Ա 274.4*) – μὴ ἀθετεῖσθαι τὴν πίστιν τῶν πατέρων τῶν τριακοσιῶν δεκαοκτώ, τῶν ἐν Νικαίᾳ τῆς Βυθανίας συνελθόντων, ἀλλὰ μένειν ἐκείνην κυρίαν (Const. I.45.19-20),

«Կոստանդնուպոլսեցոյ եպիսկոպոսին ունել զպատիւ աւագութեան» (*Կոնստ. Բ 276.2*) – τὸν Κωνσταντινουπόλεως ἐπίσκοπον ἔχειν τὰ πρέσβεια τῆς τιμῆς (Const. III.48.1),

«սոցա... աւտար լինել» (*Եփես. Բ 279.15-280.1*) – τούτους... ἄλλοτρίους εἶναι (Ephes. II.59.3-5),

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանություն դասական եղանակի հետ

Հրամայական անորոշ դերբայը թարգմանված է հարկադրանքի նշանակություն ունեցող բայական ձևերով.

«անկցին» (*Եփես. Զ 281.2*) – ἀποπίπτειν (Ephes. VI.61.12),

«կացցեն ի պաշտաման» (*Նիկ. Ը 122.1*) – μένειν ἐν τῷ κλήρῳ (Nic. VIII.30. 8),

«չէ արժանն... ընդունել» (*Անտ. Զ 209.14-15*) – μὴ... δεχθῆναι (Ant. VI.45.2),

«չէ մարթ» (*Լաւոդ. Թ 236.1*) – περὶ τοῦ μὴ συγχωρεῖν (Laod. IX.73.16):

²⁶⁴ ԽԱՉԱՏՐՅԱՆ 2002, 168-178: Գ. Խաչատրյանն այն կարծիքին է, որ «բայական անդեմ նախադասությունները գրաբարին են անցել թարգմանական գրականությունից: Որ այս նախադասությունները բնորոշ չեն հայ լեզվամտածողությանը, հաստատվում է նաև հայերենի բարբառներում դրանց բացակայության փաստով» (էջ 178): Նա նաև նշում է, որ «ասացական բայերով արտահայտվող որոշ կառույցների մեջ անորոշ դերբայն իր լրացումներով պետք է դիտել ոչ թե անդեմ նախադասություն, այլ դերբայական դարձված, որը կատարում է նպատակի պարագայի շարահյուսական գործառույթ» (էջ 174): Ինչ վերաբերում է նրա բերած «*ներել միմեանց, շնորհել իրերաց*» (Կողոս. Գ 13) օրինակին (էջ 175), ապա սա նախորդ նախադասության («*Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝ սուրբ եւ սիրեցեալք, զգուծ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեղուծիւն, զերկայնմտութիւն*» [Գ 12]) շարունակությունն է, իսկ դերբայները հունարեն համապատասխան հատվածում (ἀνεχόμενοι ἀλλήλων καὶ χαρίζόμενοι ἑαυτοῖς) վկայում են, որ «*ներել*» և «*շնորհել*» անորոշ դերբայների փոխարեն սկզբական ընթերցումն եղել է «*ներեալ*» և «*շնորհեալ*»: հետևաբար գործ ունենք դերբայական դարձվածների հետ:

Ծգ Հայցականն անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo)

Հունարենում «ասել», «կարծել», «ցանկանալ», «հրամայել», «պետք է» և նման իմաստներով բայերի լրացումը հաճախ մի դարձված էր, որի տրամաբանական ենթական հայցական հոլովով գոյական կամ դերանուն էր, իսկ տրամաբանական ստորոգյալը՝ անորոշ դերբայ (տարբեր ժամանակների պատկանող ինֆինիտիվներից մեկը)²⁶⁵:

Այն բառացի և զանազան ոչ բառացի թարգմանելու եղանակներ կային: Աստվածաշնչում «Հայցականն անորոշ դերբայի» հետ դարձվածի վկայություններ է մատնանշել Մ. Մինասյանը՝ առանց հունարեն զուգահեռները ներկայացնելու²⁶⁶: Բառացի պատճենելու այդ հինգ դեպքից չորսում անորոշ դերբայն է «լինել» (դրանք թարգմանություն համար ամենահեշտ դեպքերն են)։

«որ ոչ կամէին զիս թագաւորել» (Ղկ. ԺԹ 27) – μή θελήσαντες με βασιλεῦσαι (Lk. 19:27),

«կամիմ զձեզ անհոգս լինել» (Ա Կոր. է 32) – θέλω δὲ ὑμᾶς ἀμερίμνους εἶναι (1Cor. 7:32),

«Արարից զձեզ լինել որսորդս մարդկան» (Մկ. Ա 17) – ποιήσω ὑμᾶς γενέσθαι ἁλιεῖς ἀνθρώπων (Mk. 1:17),

«կամիմ զձեզ իմաստունս լինել» (Հռ. ԺԶ 19) – θέλω δὲ ὑμᾶς σοφοὺς εἶναι (Rom. 16:19),

«նշանակեաց հոգովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ» (Գծ. ԺԱ 28) – ἐστήμανεν διὰ τοῦ πνεύματος λιμὸν μεγάλην μέλλειν ἔσεσθαι ἐφ' ὅλην τὴν οἰκουμένην (Act. 11:28),

«արժան է... զսէրս լինել» (Բրս. հց. 3[8]) – προσήκει... τὴν ἀγάπην εἶναι (PG 31.884[77]),

«զբանն ասեմ ի մարմնի լինել» (Աթ. 138) – τὸν λόγον φημί ἐν σαρκὶ γεγόνειν (PG 28.5[444]),

«զայնպիսին հրամայեմք ոչ ևս քահանայանալ» (Առաք. ԺԴ 78.8) – τοῦτον κελεύομεν μηκέτι λειτουργεῖν (Ap. XV.2.29-30),

«զեօթներորդն ամենասուրբ... զոլ կարծեցեալք» (Փիլ. տես. 15) – τὴν ἐβδομήν πανίερων... εἶναι νομίζοντες (Ph. Cont. 36.1),

«քանզի ոչ է պարտ և արժան զմեծութիւն առաքինութեան արանցս՝ պատճառ անձայնութեան լինել» (Փիլ. տես. 5) – οὐ γὰρ δεῖ τὸ μέγεθος τῆς ἀνδρῶν ἀρετῆς αἷτιον ἀφωνίας γενέσθαι (Ph. Cont. 1.9),

«զառաքինութեան զոսոս քրտամբք և աշխատութեամբ Պղատոն ասաց բուսանիլ» (Պիտ. 30.6-7) – τῆς ἀρετῆς τοὺς κλῶνας ἰδρῶτι καὶ πόνοις Πλάτων ἔλεγε φύεσθαι (Aphth. 63.1),

²⁶⁵ Accusativus cum infinitivo դարձված կա և լատիներենում, ժամանակակից լեզուներից՝ անգլերենում:

²⁶⁶ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ 1996, 136 (341):

«այսքան գոլ զժամանակն ընձեռեաց, որքան և տեսութեան չափ» (*Պիտ. 30.10-11*) – μέτρον τοῦ βίου τὴν θέαν ποιούμενος (*Aphth. 63*),

«զանազանեցաւ խրատ ի պիտոյից, զխրատն առանց զիմաց գոլ» (*Պիտ. 44.15*) – διενήνοχε δὲ ἡ χρεία τῆς γνώμης τῷ... τὴν δὲ γνώμην ἀπροσώπως ἐκφέρεσθαι (*Aphth. 68.7-11*). **Հունարենում դարձվածը կախված է հոգի գործիականի իմաստ ունեցող տրական հոլովից՝ «ներանով, որ», որը գրեթե անհնար է թարգմանել,**

«զոր առանց մարմնի անկար է բաղկանալ» (*Հերմ. 298.22-23*),

«մարդոյ ասեմք յատուկ գոլ զծիծաղականն» – (*Դ. Պորփ. 10.21*) τοῦ μὲν ἀνθρώπου εἴπωμεν ἴδιον εἶναι τὸ γελαστικόν (*D. Porph. 85.6*),

«ասես կարող գոլ զքեզ» (*Դ. Պորփ. 40.22*) – λέγεις... δύνασθαι σε (*D. Porph. 110.23*),

«ասեմք գոլ զընդհանուրն» (*Դ. Պորփ. 52.4-5*) – φημι εἶναι τὸ καθόλου (*D. Porph. 117.18-19*),

«գիտացաք երիս գոլ զիրսն և չորս զբաղադանութիւնսն» (*Դ. Պորփ. 86.16-17*) – ἐγνώκαμεν τρία εἶναι τὰ πράγματα, τέσσαρας δὲ τὰς σχέσεις (*D. Porph. 147.18-19*),

«պարտ էր յետ առաջարկութեան գսահմանն գոլ» (*Դ. Վերլուծ. 70*),

«ասելով մի այլատարազ իմանալ գԱրիոս» (*Սոկր. 82*) – φάσκων μὴ ἄλλως φρονεῖν Ἀρείον (*Socr. 1.25.20*),

«նորին ինքեան իշխանական գոլ զիմացականն համարին» (*Նեմես. 10*) – τῆς οὐσίας αὐτῆς ἡγεμονικὸν εἶναι τὸ νοερὸν ἡγοῦνται (*Nemes. 1.15-16*),

«արտադրել զինչ գոլ զգիտումն» (*Դիոն. երկ. քհ. 3.12*) – ἐκθέσθαι τίνα μὲν εἶναι σκοπόν (*Dion. cael. hier. 2.1*),

«միաւորիլ ասեմք... զբանն աստուած» (*Գիւրղ. պրպ. 102*) – ἐνοῦσθαι λέγομεν τὸν θεοῦ λόγον (*PG 75.1376*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ թարգմանություն դասական եղանակի հետ (բերված ոչ բառացի եղանակները հաճախ կիրառվել են և հունարեն թարգմանությունում).

1) տրական հոլովով ենթակայով օժտված անորոշ դերբայ²⁶⁷.

«տացես թոյլ ոգնոյն ելանել» (*Phys. 17.7*) – ἀφήκας τὴν ἐχῖνον ἀναβῆναι,

«Եւ եղև... իջանել հոգւոյն սրբոյ» (*Ղկ. Գ 21-22*) – ἐγένετο δὲ... καταβῆναι τὸ πνεῦμα τὸ ἅγιον (*Lk. 3:21-22*)՝ **դարձվածը կախված է երբայեւրենի ազդեցությունը համարվող ἐγένετο («եղև») բայից,**

«պարտ էր կատարել գրոյն» (*Գծ. Ա 16*) – ἔδει πληρωθῆναι τὴν γραφὴν (*Act. 1:16*),

«պարտ է վկայ լինել միում» (*Գծ. Ա 22*) – δεῖ... μάρτυρα... γενέσθαι ἕνα (*Act. 1:22*),

²⁶⁷ Մ. Մինասյանի հավաստմամբ, «անորոշ դերբայի հայցական ենթական դասական հայերենում հունարենություն է, ի տարբերություն հարադատ տրական ենթակայի», տես ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 135 (339):

«ոչ տայր նոցա թոյլ խաւել» (ՂԳ. Դ 41) – οὐκ εἶα αὐτὰ λαλεῖν (Lk. 4:41),

«Իբրեւ եղև ելանել մեզ» (Գժ. ԻԱ 1) – ὥς δὲ ἐγένετο ἀναχθῆναι ἡμᾶς (Act. 21:1),

«ոչ է պարտ եպիսկոպոսի արկանել զինքն» (Առաք. ՀԵ 95.7) – οὐ χρὴ ἐπίσκοπον... καθιέναι ἑαυτόν (Ap. LXXXI.12.8-9),

«պարտ և արժան է այնոցիկ, որ... ընկալան... տեղի տալ և ընձեռել» (Փիլ. տես. 9) – δεῖ τοὺς... λαβόντας... παραχωρῆσαι (Ph. Cont. 13.5),

«վայելուչ և արժանի իսկ էր... իսկ այլոցն ընդ նմանսն նախանձել» (Փիլ. տես. 30) – προσήκον... τοὺς δὲ ἄλλους τὰ μὲν ὅμοια ζηλοῦν (Ph. Cont. 82.3),

«խորթացոյց՝ յագուսն շահելոյն ոչ ունել փարթամաց» (Դ. Պորփ. 42.7-8) – ἐνοθεύσε κόρον τοῦ πορίζειν μὴ ἔχειν τοὺς πλουτοῦντας (D. Porph. 111.10-11),

«ասէ Արիստոտէլ ստեղծանել բնութեանն զայսոսիկ» (Դ. Պորփ. 48.20) – ἔλεγεν ὁ Ἀριστοτέλης δημιουργεῖν τὴν φύσιν χωρὶς λόγου (D. Porph. 115.32),

«(ասաց) ոչ գոլ բարւոք գմարդն միայն» (Փիլ. ալլաք. 142) ≠ «(ասաց) ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել» (Ծնն. Բ 18) – (εἶπεν) Οὐ καλὸν εἶναι τὸν ἄνθρωπον μόνον (Ph. LA 2.1 = Gen. 2:18),

«բարձրանալ պարտ է զնրդին մարդոյ» (Տիմ. 299) ≠ «բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ» (Յովհ. Գ 14) – ὑψωθῆναι δεῖ τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου (Jn. 3:14),

2) ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւն.

«զիտէին զնա թէ Քրիստոսն է» (ՂԳ. Դ 42) – ᾗδειςαν τὸν Χριστὸν αὐτὸν εἶναι (Lk. 4:42),

«ոչ կամիմ եթէ տգէտք իցէք» (Ա Կոր. Ժ 1) – οὐ θέλω γὰρ ὑμᾶς ἀγνοεῖν (1Cor. 10:1),

«ասելով՝ թէ ոմանք անմարմինք են, և ոմանք եռակի տրամակացեալք» (Դ. Պորփ. 42.20-21) – λεγόντων... τὰ μὲν εἶναι ἀσώματα τὰ δὲ τριχῇ διαστατά (D. Porph. 111.20-21՝ «ասելով, թէ մի մասն անմարմին են, մի մասն էլ՝ եռաչափ»),

«ասեն ի հրոյ ծախիլ և հանդերձիցն յարութիւն եղանել» (Տիմ. 323) ≠ «ասեն ի հրոյ ծախիւն և հանդերձից յարութիւն լինի» (Ոսկ. Պող. Բ 446) – φασὶν ὑπὸ πυρός ἀναλίσκεσθαι καὶ ἱματίων ἀνάστασιν γίνεσθαι (PG 62.437),

«մաղթելով նահատակիլ» (Տիմ. 305) ≠ «աղաչել զի ճգնիցիմ» (Յուդ. 3) – παρακαλῶν ἀγωνίζεσθαι (Jud. 3),

«զո՞ գիս ասեն մարդիկ գոլ զորդիս մարդոյ» (Տիմ. 97) ≠ «զո՞ ոք ասեն զինչն մարդիկն, թէ իցէ որդի մարդոյ» (Մթ. ԺԶ 13) – τίνα με λέγουσιν οἱ ἄνθρωποι εἶναι τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου (Mt. 16:13).

«պարտ ասէ, և հերձուածս ի ձեզ գոլ» (Տիմ. 149) ≠ «և հերձուածք լինելոց են ի ձեզ» (Ա Կոր. ԺԱ 19) – δεῖ... καὶ αἰρέσεις ἐν ὑμῖν εἶναι (1Cor. 11:19),

3) անորոշ դերբայ և «զ» նախդրով բացառական հորով.

«որպէս ասեն ոմանք զմէնջ ասել» (Հռ. Գ 8) – καθώς φασίν τινες ἡμᾶς λέγειν (Rom. 3:8),

«բայց Թագաւորել աշխարհին նախ զաղովրայ ասեն» – βασιλεῦσαι δὲ τῆς χώρας πρῶτον λέγεται Ἀλῶρον (Եւս. քր. ա 46),

«ասացաք զնմանէ փախչել ի խնդրոյն» (Դ. Պորփ. 64.7-8) – εἵπομεν φεύγειν τὴν ζήτησιν (D. Porph. 131.8),

«Ասեն ոմանք զառաջին սահմանէն, թէ նուազ գոյ և աւելորդ» (Դ. Պորփ. 176.30-31) – φασὶ δὲ τὸν πρῶτον ὅρισμόν ἐλλείπειν καὶ περισσεύειν (D. Porph. 205.14-15),

4) անորոշ դերբայ և ուղղական հոլովով ենթակա.

«Իսկ անկոչ եպիսկոպոսք... ոչ ի վերայ երթալ առ ի ձեռնադրել» (Կոնստ. Բ 275.7-8) – ἀκλήτους ἐπισκόπους... μὴ ἐπιβαίνειν ἐπὶ χειροτονίαις (Const. II.47.7-8)՝ անորոշ դերբայն այստեղ հրամայականի արժեք ունի, հմմտ. Գ 6բ,

«(Իրաւացուցաք) որք զնոյն խորհին մի իւրք ընդ վնասու լինել» (Եփես. Գ 280.6-10) – (ἐδικαιώσαμεν) συμφρονούντας μηδ' ὅλως ὑποκεῖσθαι (Ephes. III.59.16-60.1).

5) անորոշ դերբայը Թարգմանված է համապատասխան գոյականով, իսկ տրամաբանական ենթական փոխարինվել է նրա որոշիչով.

«Իւրում ապականութեան տենչայ» (Դ. Պորփ. 180.22) – ἐαυτὸ ἴδεται φθεῖραι (D. Porph. 206.27):

6գ1 Նախդրով գոյականացված անորոշ դերբայ կամ հայցականն անորոշ դերբայի հետ

Հունարենում ինֆինիտիվը կամ դարձվածը գոյականացնող հոդն է ստանում նախդրի խնդրառությամբ պահանջվող հոլովաձևը: Բառացի Թարգմանելիս՝ անորոշ դերբայը չէին օժտում սովորական հոլովական վերջավորությամբ.

1) առանց հայցականով ենթակայի.

«ըստ խոսորել ի չարէ» (Նաղ. ճ.2.14) – κατὰ τὴν ἐκκλίνειν ἀπὸ κακοῦ (PG 35.424),

«վասն առ միոյն նմանել» (Բրս. հց. 2[6]՝ փխ. «նմանելոյ») – διὰ τὸ τῷ ἐνὶ ὁμοιωσθαι (PG 31.884[75]),

«փոխանակ զայսոսիկ ունել ի խորհուրդս» (Բրս. արքեց. 1.95՝ փխ. «ուներլոյ») – ἀντὶ τοῦ ταῦτα ἔχειν ἐν τοῖς διαλογισμοῖς (PG 31.445.29),

«վասն յաւետախաղաց գոլ» (Նիւս. կազմ. 88) – διὰ τὸ ἀεικίνητον εἶναι (PG 44.157.6),

«ի ձեռն զհիւանդութիւն ի բաց դարձուցանել» (Փիլ. ել. 2.18՝ փխ. «դարձուցանելոյ») – διὰ τοῦ μαλακίαν ἀποστρέφειν (Ph. QuEx. 2.18),

«վասն ոչինչ արժանի գոլ» (Փիլ. ել. 2.101՝ փխ. «գոլոյ»),

«յաղագս գողիս ազատացն բարի յուսովք լցուցանել» (*Փիլ. իմաստ. 36 փիլ. «լցուցանելոյ»*) – περὶ τοῦ τὰς ψυχὰς τῶν ἐλευθέρων χρηστῶν ἀνα-
πλῆσαι ἐλπίδων (Ph. Abr. 16.3),

«վասն զհինն... ի բաց ջնջել զկեանս վարուցն» (*Փիլ. իմաստ. 37 փիլ. «ջնջելոյ»*) – τῷ τὸν ἀρχαῖον... ἀπαληλίφθαι βίον (Ph. Abr. 19.3),

«յաղագս զգաւառն... բառնալ լքանել թողուլ» (*Փիլ. իմաստ. 49 փիլ. «բառ-
նալոյ լքանելոյ թողուլ»*) – περὶ τοῦ πατρίδα... καταλιπεῖν (Ph. Abr. 62.1-2),

«վասն ոչ այլովք տեսանել գործովք» (*Փիլ. Sieg. 14.22 փիլ. «տեսանելոյ»*),

«յաղագս միւսնոյն լինել» (*Տիմ. 1.15 փիլ. «լինելոյ»*),

«վասն ընդ այլովքն ամենեքումք կալ» (*Ար. Ստոր. 113 փիլ. «կալոյ»*) –
διὰ τὸ τοῖς ἄλλοις ἄπασιν ὑποκεῖσθαι (Arist. Cat. 2b38),

«վասն կրել ինչ» (*Ար. Ստոր. 135 փիլ. «կրելոյ»*) – τῷ πεποινθέναι τι
(Arist. Cat. 9a37),

«առանց ճշմարտել կամ ստել» (*Ար. Մեկն. 155 փիլ. «ճշմարտելոյ կամ ստե-
լոյ»*) – ἀνευ τοῦ ἀληθεύειν ἢ ψεύδεσθαι (Arist. Int. 16a10),

«յաղագս գոլ ինչ կամ ոչ գոլ» (*Ար. Մեկն. 159 փիլ. «գոլոյ»*) – περὶ τοῦ εἰ
ὑπάρχει τι ἢ μὴ ὑπάρχει (Arist. Int. 17a24),

«վասն ահա առեալն լինել» (*Պորփ. 150 փիլ. «լինելոյ»*) – διὰ τὸ ἦδη εἰ-
ληφθαι (Porph. 17.18),

«վասն... առ մարտս զբանսն առնել» (*Թեոն 26 փիլ. «առնելոյ»*) – τῷ...
πρὸς ἀγῶνας τοὺς λόγους πεποιῆσθαι (Theon 2.69.25-26),

«վասն թուելն» (*Նիւս. կազմ. 87 փիլ. «թուելոյն»*) – διὰ τὸ δοκεῖν (PG
44.156.38).

2) *Հայցականով ենթակայով, որը թարգմանվել է բառացի.*

«առանց այնորիկ որ զսկիզբն լինելութեան նոցա ըմբռնելի և բարելի
գոլ» (*Փիլ. տես. 7 փիլ. «գոլոյ»*) – δίχα τοῦ καὶ τὴν ἀρχὴν τῆς τούτων
γενέσεως ἐπίληπτον εἶναι (Ph. Cont. 6.3),

«վասն զանձն ի զգայութեանց և ի զգալեացն խուճապէ ամենեկն թեթև ե-
ղեալ, յիւրում խորհրդարանի և բնակութեանն եղեալ՝ զճշմարտութիւն հետա-
խուզել» (*Փիլ. տես. 13, փիլ. «հետախուզելոյ»*) – ὑπὲρ τοῦ τὴν ψυχὴν τοῦ
τῶν αἰσθήσεων καὶ αἰσθητῶν ὅχλου παντελῶς ἐπικουφισθεῖσαν, ἐν τῷ
ἐαυτῆς συνεδρίῳ καὶ βουλευτηρίῳ γενομένην, ἀλήθειαν ἱχνηλατεῖν (Ph.
Cont. 27.6),

«վասն զհինսն... առնել... բարեբանութիւնս» (*Թեոն 130 փիլ. «առնելոյ»*)
– τῷ τοὺς παλαιούς... τὰς... ἐὺλογίας ποιεῖν (Theon 9.109.27-28),

«վասն զամանակն բազում գոլ» (*Ար. Ստոր. 121 փիլ. «գոլոյ»*) – τῷ γὰρ
χρόνον πολὺ εἶναι (Arist. Cat. 5b3),

«վասն զսահմանս բնութեանն ամանակի հաստատունն ունել զչարժմունս»
(*Զեն. 1.6.17*):

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ զասական թարգմանությունների հետ

*Անորոշ դերբայն օժտվում է հոգին համապատասխան հորմոնալ վերջա-
վորությամբ.*

1) առանց հայցականով ենթակայի՝

«վասն յայտնի լինելոյ» (*Բ Կոր. Է 12*) – ἐνεκεν τοῦ φανηρωθῆναι (2Cor. 7:12),

«առ ի ցանկանալոյ նմա» (*Մթ. Ե 28*) – πρὸς τὸ ἐπιθυμῆσαι αὐτῆς (Mt. 5:28),

«վասն հասարակ ամենեցուն յարմարելոյ» (*Պիտ. 71.3*) – ἀπὸ τοῦ κοινῇ πᾶσιν ἀρμόττειν (Aphth. 80-81),

«յաղագս հնոյն ի գեղս գովութիւնս առնելոյ» (*Պիտ. 95.3*) – ἐκ τοῦ ἐν κώμαις ᾄδειν τὸ παλαιόν (Aphth. 86.7),

«վասն հակադարձելոյն» (*Պորփ. 153*) – διὰ τὸ ἀντιστρέφειν (Porph. 19.15),

«վասն յօժարագոյնս առնելոյ զընթերցողսն» (*Դ. Պորփ. 2.10-11*) – διὰ τὸ προθυμότερους ποιεῖν τοὺς ἀναγινώσκοντας (D. Porph. 80.15-16),

«վասն ասելոյն» (*Դ. Պորփ. 46.19*) – ἐν μὲν τῷ λέγειν (D. Porph. 114.20),

«Յետ անջատելոյ զհոմանունութիւնն» (*Դ. Պորփ. 62.24*) – Μετὰ τὸ διαστέλλασθαι (D. Porph. 130.16),

«յասելն» (*Դ. Պորփ. 36.24, 68.14, 16, 27, 100.28, 126.26, 158.17, 162.11, 178.33*), «վասն ասելոյն» (*Դ. Պորփ. 46.19*) – ἐν τῷ λέγειν (D. Porph. 108.2, 133.17, 18-19, 25, 162.24, 181.4-5, 197.8, 198.16, 206.9, 114.20).

2) հայցականով ենթակայի հետ.

ա. վերջինիս թարգմանությունը սեռական հոլովով ենթակայով ընդգծում է անորոշ դերբայի գոյականացված լինելը՝

«վասն լինելոյ նորա» (*Ղկ. Բ 4*) – διὰ τοῦ εἶναι αὐτόν (Lk. 2:4),

«յետ յառնելոյ իմոյ» (*Մթ. ԻԶ 32*) – μετὰ τὸ ἐγερθῆναι με (Mt. 26:32),

«ի քահանայանալն նորա» (*Ղկ. Ա 5*) – ἐν τῷ ἱερατεύειν αὐτόν (Lk. 1:5),

«ի չարախօսելն նորա» (*Մթ. ԻԷ 12 «չարախօսելն» կրավորական իմաստով է, ինչպես և հունարենում*) – ἐν τῷ κατηγορεῖσθαι αὐτόν (Mt. 27:12),

«ի մտանելն նոցա ընդ ամպովն» (*Ղկ. Թ 34*) – ἐν τῷ εἰσελθεῖν αὐτοὺς εἰς τὴν νεφέλην (Lk. 9:34),

«ի ձգել զձեռն քո» (*Գժ. Դ 30*) – ἐν τῷ τὴν χεῖρα ἐκτείνειν σε (Act. 4:30),

«ի նուազել հոգւոյ իմոյ» (*Յովհ. Բ 8*) – ἐν τῷ ἐκλείπειν... τὴν ψυχὴν μου (Jn. 2:8),

«ի ծագել արևուն» (*Յովհ. Դ 8*) – ἅμα τῷ ἀνατεῖλαι τὸν ἥλιον (Jn. 4:8),

«նախ քան զԱբրահամ եղանիլ» (*Տիմ. 100*) ≠ «յառաջ քան զլինելն Աբրահամին» (*Յովհ. Ը 58*) – πρὶν Ἀβραάμ γενέσθαι (Jn. 8:58)²⁶⁸,

²⁶⁸ «Յառաջ քան զլինելն Աբրահամին» օրինակը կարելի է մեկնաբանել նաև որպես վերը ներկայացված «անորոշ դերբայը տրականի հետ» դասական եղանակ: Թերևս անորոշ դերբայի տրամաբանական ենթակայի մասին խոսելիս, կարող ենք ասել, որ այն կարող է լինել և՛ չտարբերակված սեռական-տրական, և՛ տարբերակված տրական, ինչպես վերահիշյալ «անորոշ դերբայը տրականի հետ» բաժնի երեք օրինակում, նաև տարբերակված սեռական, ինչպես սույն բաժնի հինգ օրինակում (տե՛ս նաև ստորև՝ Գ 6գ2գ): Այս իրավիճակը համեմատե-

«յաղագս ոչ գոլոյ գէական սեռ» (*Դ. Պորփ. 92.25*) – ὑπὲρ τοῦ μὴ εἶναι τὸ ὄν γένος (D. Porph. 156.7)՝ *հոլովված անորոշ դերբայի (նկարագրական թարգմանություն տարր) հայցականով տրամաբանական ենթական (տառացի թարգմանություն տարր) արտառոց թարգմանություն է,*

բ. անորոշ դերբայը թարգմանված է համապատասխան գոյականով, իսկ տրամաբանական ենթական փոխարինվել է նրա որոշիչով.

«յետ չարչարանացն իւրոց» (*Գծ. Ա 3*) – μετὰ τὸ παθεῖν αὐτόν (Act. 1:3),

«ի միւսանգամ գալստեան իմում» (*Ղկ. Ժ 35*) – ἐν τῷ ἐπανέρχεσθαι με (Lk. 10:35),

*գ. ողջ դարձվածը թարգմանվում է պարագա երկրորդական նախադասությո-
ւուններով.*

ժամանակի՝

«իբրեւ լուաւ» (*Ծնն. ԻԴ 52, ԼԹ 15*) – ἐν τῷ ἀκοῦσαι (Gen. 24:52, 39:15),

«իբրեւ ոչ տեսանիցէ» (*Ծնն. ԽԴ 31*) – ἐν τῷ ἰδεῖν (Gen. 44:31),

«յառաջ քան զեղանիլ... յառաջ քան զբուսանիլ ինչ ի վեր» (*Փիլ. ալլաբ. 111*) ≠ «մինչ զի լեալ էր... մինչ զի բուսեալ էր» (*Ծնն. Բ 4*) – πρὸ τοῦ γενέ-
σθαι... πρὸ τοῦ ἀνατεῖλαι (Ph. LA 1.20 = Gen. 2:4),

պատճառի՝

«քանզի ինքն գիտէր զամենայն» (*ԅՀ. Բ 4*) – διὰ τὸ αὐτὸν γινώσκειν
πάντας (Jn. 2:4),

«վասն զի ոչ խնդրէք» (*ՅԿ. Դ 2*) – διὰ τὸ μὴ αἰτεῖσθαι ὑμᾶς (Jac. 4:2),

«վասն զի չէր նոցա տեղի» (*Ոսկ. Մթ. 42-43*) – διὰ τὸ μὴ εἶναι τόπον
(PG 57.82.47),

«վասն զի ոչ ինչ ընդ վայր առնէ բնութիւն» (*Դ. Պորփ. 88.23*) – ἐκ τοῦ
μὴ ποιεῖν τι τήν φύσιν μάτην (D. Porph. 148.25),

«վասն զի ի ներկայումս են և անորիչք են» (*Դ. Պորփ. 102.5-6*) – διὰ τὸ
ἐν ἐνεστώτι εἶναι καὶ ἀόριστον ἔχειν (D. Porph. 163.5),

«զի բաղկացականք գոն զանազանութիւնքն» (*Դ. Պորփ. 136.21-22*) – ἐκ
τοῦ συστατικὰς εἶναι τὰς διαφορὰς (D. Porph. 187.12),

գ. նախդիրը չի թարգմանվում՝

«ոչ է պարտ ձեռնադրութիւնս առնել» (*Լաւոդ. Զ 229.14*) – περὶ τοῦ μὴ
δεῖν τὰς χειροτονίας... γίνεσθαι (Laod. V.72.22)՝ *հունարեն «լինել»-ու փո-
խարեն՝ «առնել»,*

«ոչ է արժան քահանայի փոխ տալ» (*Լաւոդ. Ե 229.15*) – περὶ τοῦ μὴ δεῖν
ἱερατικοῦς δανείζειν (Laod. IV.75.19-20),

«համանգամայն հարկեցուցանելով զՊողեմեան վերաբերութիւնսն... ար-
տադրել» (*Պող. Աղ. 149*) – μετὰ τοῦ καταναγκάσαι καὶ τὰς κατὰ τὰς
Πτολεμαῖον ἀναφορὰς... ἐκθέσθαι (P. Al. 148):

լի է «ռւնենալ» իմաստ արտահայտելու համար էական բայի հետ սեռական կամ տրական հո-
լովի հանդէս գալու հավասար հնարավորություն հետ (Գ 1գ):

642 ὥστε կամ ἔως²⁶⁹ («մինչ»/«մինչև»/«մինչ ց», նաև «իբր զի», «որպէս զի») չաղկապին հետևող անորոշ դերբայ կամ «Հայցականն անորոշ դերբայի հետ»

Այս բաժնի օրինակների մեծ մասը քաղած է դասական թարգմանություններից, որոնցում արձանագրված են թարգմանության տարբեր եղանակներ.

1) առանց հայցականով ենթակայի.

ա. նկարագրական՝ չաղկապին հետևող ստորադասական եղանակի դիմափոք բայով.

«մինչև անցցէ սրտմտութիւն բարկութեան եղբաւր քո ի քէն» (Ծնն. ԻԷ 44) – ἔως τοῦ ἀποστρέψαι τὸν θυμὸν καὶ τὴν ὀργὴν τοῦ ἀδελφοῦ σου ἀπὸ σοῦ (Gen. 27:44)՝ «մինչև քո եղբոր զայրույթն ու բարկութիւնը քեզանից հեռացնելը»՝ փոխված է բայի իմաստը,

բ. բառացի՝

«մինչև զծառս սղոցել» (Phys. 3.3) – ὥστε πρίττειν τὰ δένδρα,

«մինչև մերձենալ առ եղբայրն իւր» (Ծնն. ԼԳ 3) – ἔως τοῦ ἐγγίσει τοῦ ἀδελφοῦ αὐτοῦ²⁷⁰ (Gen. 33:3),

«մինչ զի ոչ մեծ կարծել» (Նազ. ճ.2.5) – ὥς μὴ μέγα νομίζειν (PG 35.413.1),

«մինչ զի և դատաւածային զգիրսն ընթեռնուլ» (Նազ. ճ.4.23) – ὥστε καὶ τὰς θείας ὑπαναγινώσκειν... βίβλους (PG 35.552.12),

«որպէս թէ մի զընչեղութիւնն յաղագս նոցա երթալ առ աղքատսն» (Բրս. ընչեղ. 4.156) – ὥστε τὸν πλοῦτον διὰ ταῦτα μὴ διαβαίνειν πρὸς τοὺς πτωχοὺς (Bas. div. 4.44),

«մինչ զի տալ քեզ զերկիրս զայս» (Փիլ. լին. 3.1) ≠ «տալ քեզ զերկիրդ զայդ» (Ծնն. ԺԵ 7) – ὥστε δοῦναι σοι τὴν γῆν (Gen. 15:7),

«իբր զի կարել ասել» (Բրս. Հց. 55[146]) – ὥστε δύνασθαι εἰπεῖν (PG 31.928[17]),

«որպէս զի աւգտեցուցանել» (Առաք. ԺԳ 78.2-4) – ὥς... συμβάλλεσθαι (Ap. XIV.2.23-24),

«որպէս զի ունել ի վերայ երկրի իշխանութիւն թողուլ զմեզս» (Տիմ. 12.5),

2) հայցականով ենթակայով.

ա. նկարագրական՝ չաղկապին հետևող երկրորդական նախադասությունում՝

«մինչ որսորդաց չէ հնար զնա ի բուռն հարկանել» (Phys. 3.2) – ὥστε κυ-
νηγὸν μὴ δύνασθαι αὐτῷ ἐγγίξειν,

«զի Մաքսիմոս եպիսկոպոս ոչ եղիցի» (Կոնստ. Գ 276.5) – ὥστε μήτε Μά-
ξιμον ἐπίσκοπον γενέσθαι (Const. IV.48.9-10),

²⁶⁹ Այն ավելի ճիշտ կլիներ բնորոշել որպես ἔως նախդիր, որին հետևում է անորոշ դերբայի սեռական հոլովը, այսինքն՝ անորոշ դերբայը սեռական հոլովով հոդով:

²⁷⁰ JINBACHIAN 1998, 184-185:

«քրտամբք երեսաց քոյ կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր» (Ծնն. Գ 19) – ἐν ἰδρωτί τοῦ προσώπου σου φάγη τὸν ἄρτον σου ἕως τοῦ ἀποστρέψαι σε εἰς τὴν γῆν (Gen. 3:19),

«մինչև արարից ամենայն» (Ծնն. ԻԸ 15) – ἕως τοῦ ποιῆσαι με πάντα (Gen. 28:15),

«մինչև եկից առ տէր իմ» (Ծնն. Լ Գ 14) – ἕως τοῦ με ἐλθεῖν πρὸς τὸν κύριον μου (Gen. 33:14),

«մինչև եկին նոքա» (Ծնն. Լ Դ 5) – ἕως τοῦ ἐλθεῖν αὐτούς (Gen. 4:5),

«մինչև տացես ածել» (Ծնն. ԼԸ 17) – ἕως τοῦ ἀποστεῖλαι σε (Gen. 38:17),

«մինչև յայտնի լիցին բանք ձեր» (Ծնն. ԽԲ 16) – ἕως τοῦ φανερὰ γενέσθαι τὰ ῥήματα ὑμῶν (Gen. 42:16),

բ. նկարագրական՝ համադաս նախադասությամբ.

«և հակառակորդ զաւրութիւնքն վտարանդի առնեն զառաքինութիւնն քո» (Phys. 17.7) – ὥστε τὴν πολιτείαν σου ταῖς ἀντικειμέναις δυνάμεσι διασταλῆναι,

«ապա ուրեմն ոչ ընդ վայր ասացեալ է» (Փիլ. ել. 2.21) – ὥστε οὐκ ἀπὸ σκοποῦ λελέκται,

գ. ինֆինիտիվը տառացի թարգմանված է անորոշ դերբայով, իսկ հայցական հոլովի դիմաց հայերենի համար օրինաչափ տրական է՝ նկարագրական թարգմանության տարր. պատահում է և սեռական հոլով, որը չհշտում է անորոշ դերբայի գոյականացված լինելը՝

«մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ» (Ծնն. Ը 7) – ἕως τοῦ ξηρανθῆναι τὸ ὕδωρ ἀπὸ τῆς γῆς (Gen. 8:7),

«մինչև ի գալ նորա» (Գծ. Ը 40) – ἕως τοῦ ἐλθεῖν αὐτόν (Act. 8:40)՝ *ենթական տարբերակված սեռական հոլովով է,*

«մինչև մեկնել նոցա» (Գծ. ԺԵ 39) – ὥστε ἀποχωρισθῆναι αὐτούς (Act. 15:39)²⁷¹,

«մինչև առաւել ուրախ լինել ինձ» (Բ Կոր. է 7) – ὥστε με μάλλον χαρῆναι (2Cor. 7:7),

«մինչ նաւին ծածկել յալեաց անտի» (Մթ. Ը 24) – ὥστε τὸ πλοῖον καλύπτεσθαι ὑπὸ τῶν κυμάτων (Mt. 8:24),

«մինչև մտանել նմա ի նաւն՝ և նստել» (Մթ. ԺԳ 2) – ὥστε αὐτόν εἰς πλοῖον ἐμβάντα καθῆσθαι (Mt. 13:2),

«մինչև գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա» (Մթ. ԺԳ 32) – ὥστε ἐλθεῖν τὰ πετεινὰ τοῦ οὐρανοῦ καὶ κατασκηνοῦν ἐν τοῖς κλάδοις αὐτοῦ (Mt. 13:32),

«մինչ զի և հաց ևս՝ ոչ ժամանել ուտել նոցա» (Մկ. Գ 20) – ὥστε μὴ δύνασθαι αὐτοὺς μηδὲ ἄρτον φαγεῖν (Mk. 3:20),

²⁷¹ Հմմտ. ՄԻՆԱՍԵԱՆ, 138-139 (347-8):

«մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել» (*Մկ. 7. 32*) – ὥστε δύνασθαι ὑπὸ τὴν σκιάν αὐτοῦ τὰ πετεινὰ τοῦ οὐρανοῦ κατασκηνοῦν (Mk. 4:32),

«մինչև կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս» (*Փղպ. Ա 13*) – ὥστε τοὺς δεσμούς μου φαιηροὺς ἐν Χριστῷ γενέσθαι (Phil. 1:13),

«մինչ զի և ոչ անգամ ումեք իշխել բարբառել և կամ շունչ կլանել սաստկագոյն» (*Փիլ. տես. 27*) – ὥς μηδὲ γρύξαι τινα τολμᾶν ἢ ἀναπνεῦσαι βιαιότερον (Ph. Cont. 75.5),

«մինչ զի լինել քերդողին Հոմերոնեայ ասացեալն» (*Թեոն 32*) – ὥστε γενέσθαι τὸ ὑπὸ Ὀμήρου λεγόμενον (Theon 2.72.2),

դ. ողջ դարձվածը թարգմանված է տառացի.

«մինչ զի լինել ոչ կանխագիտութիւն» (*Նաղ. ճ.4.47*) – ὥστε εἶναι μὴ πρόγνωσιν (PG 35.572.30),

«մինչև երկուս մարդս ի դրաստն մուծանիլ» (*Փիլ. այլաբ. 122*) – ὥστε δύο ἀνθρώπους εἰς τὸν παράδεισον εἰσάγεσθαι (Ph. LA 1.53),

«մինչ կարծել զաստուած՝ բերանոյ և կամ ըռընգացն գործեալք վարիլ առ ի փչել» (*Փիլ. այլաբ. 117*) – ὥστε νομίσαι θεὸν στόματος ἢ μυκτῆρων ὀργάνοις χρῆσθαι πρὸς τὸ ἐμφυσῆσαι (Ph. LA 1.36),

«որպէս զի մերձ ի բանաւորսն երևել նոցա» (*Նեմես. 13*) – ὥς ἐγγὺς λογικῶν αὐτὰ φαίνεσθαι (Nemes. 1.105),

«որպէս զի կարող գոլ կենդանացուցանել զմեռեալս» (*Կիւրղ. պրպ. 103*) – ὥστε δύνασθαι καὶ ζωοποιεῖν τοὺς νεκρούς (PG 75.1377),

«մինչև գողանալ և մոլորեցուցանել զձայն լալոյ մանկանն» (*Նոննոս I. առաջ. 3*) – ὑποκλέπτειν καὶ παρακρούειν τὸν ἐξ τοῦ κλαυθμοῦ τοῦ παιδίου ἦχον (Nonnos 39.1.10-11):

6դ Ուղղականն անորոշ դերբայի հետ (nominativus cum infinitivo)

Նման է նախորդ դարձվածին, սակայն ներմուծվում է կրավորական կամ «թվալ» նշանակությամբ բայով. բառացի պատճենվել է՝

«ոչ թուի քեզ մեծ գոլ երկին» (*Աթ. 151*) – οὐ δοκεῖ σοι μέγιστος εἶναι ὁ οὐρανός (PG 28.16[456]),

«ոմանք ինձ թուին յաղթել կարել» (*Փիլ. իմաստ. 102*) – ἔνια μοι δοκεῖ νικᾶν δύνασθαι (Ph. Cont. 267.4),

«մահկանացուքն առնել թուին» (*Փիլ. այլաբ. 110*) – θνητὰ ποιεῖν δοκεῖ (Ph. LA 1.16),

«թուին տեսալք լաւագոյնք գոլ, քան զսեռսն» (*Դ. Պորփ. 146.23*) – δοκεῖ τὰ εἶδη κρεῖττονα ὑπάρχειν τῶν γενῶν (D. Porph. 191.12),

«երկակի ասի գոլ ապացուցականն» (Դ. Վերլուծ. 62):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանության դասական եղանակի հետ

ա. ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն՝

«ցուցանի, թէ սեռ զօրութեամբ ունի զտարբերութիւն յինքեան» (Դ. Պորփ. 144.13-14) – δεικνυται τὰ γένη δυνάμει ἔχειν τὰ ἐναντία (D. Porph. 190.8-9),

բ. «լինել» անորոշ դերբայի բացթողումով՝

«արդեւք ո՞չ յովագոյն գոլ քեզ թուի սոցայն գոլ տարակուսանք» (Տիմ. 324) ≠ «ե չթուեսցի՞ այս քեզ առաւել տարակուսանք» (Ոսկ. Պօղ. Բ 447) – ἄρα πολλῶ σοι δοκεῖ τούτων εἶναι τοῦτο ἀπορώτερον (PG 62.437):

7 «Լի»-ով ԲԱՅԱԾԱԿԱՆԸ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՌՈՒՄՈՎ

Ապառնի «լի»-ով դերբայը կամ բայածականը կարող էր հանդես գալ էական բայի հետ անդեմ կիրառությամբ և հայցական ուղիղ խնդրի հետ, հունարեն –τέος-ով բայածականների չեզոք սեռի անդեմ կիրառության նմանակությամբ՝ արտահայտելով հարկադրանքի իմաստ, ինչը հունաբանություն է, իսկ դասական լեզվում ավելի սովորական էր նրա կրավորական սեռի առումով գործածությունը ուղղական հոլովով ենթակայի հետ²⁷².

«զորս հովուելի է» (Նազ. ճ.9.6) – τίνας ποιμαντέον (PG 35.825.22),

«զ... ոգիս նմա հաւատալի է» (Առաք. ԼԹ 86.8) – τὰς ψυχὰς αὐτῶ πιστευτέον (Ap. XLI.28-29),

«ոչ... ի լերդին զառաջնորդ սկզբնականն համարելի է» (Նիւս. կազմ. 91) – οὐτε τῷ ἡπατι τὸ ἡγεμονικὸν λογιστέον (PG 44.160.42-43),

«քանզի զայս ի վերայ նոսա ասելի է» (Փիլ. տես. 17) – τοῦτο γὰρ αὐτοῖς ἐπιφημιστέον (Ph. Cont. 41.5),

«արդ զի՞նչ ասելի է» (Փիլ. ալլաբ. 121) – τί οὖν λεκτέον (Ph. LA 1.48),

«զմարդն յերկրէն համարելի է գոլ» (Փիլ. ալլաբ. 115) – ἀνθρώπον ἐκ τῆς γῆς λογιστέον εἶναι (Ph. LA 1.32),

«քանզի զայս ի վերայ նոսա ասելի է» (Փիլ. տես. 17) – τοῦτο γὰρ αὐτοῖς ἐπιφημιστέον (Ph. Cont. 41.5),

«զպատիւ քահանայիցն ոչ է տալի» (Փիլ. քհ. 190) – τὰ γέρα τῶν ἱερέων οὐ δοτέον (Ph. Spec. 1.122),

«դասելի է դամանակի յարակայականն» (Թրակ. 31.12) – ὑποτακτέον τὰ τοῦ καιροῦ παραστατικά (Thrax 74.1),

²⁷² ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1953, 137: Մ. Մինասյանը (ՄԻՆԱՍՅԱՆ 1996, 326 [765.2]) հիշատակում է միայն «ստորոգելիական վերադիր կրավորական բայածականներ» («ներգործականների» թվում ստորոգելիական վերադիր չի հիշատակում՝ 325 [754]) և բերում մի շարք օրինակներ, ինչպես, «ատելի է Լիա» (Մն. ԻԹ 31), «զխոտն, որ... ի հնոցն արկանելի է» (Ղկ. ԺԲ 28), «զինի նոր ի նոր տիկս արկանելի է» (Մկ. Բ 22) և այլն: Իսկ «ի բաց ընկենլի է... զանվայելուչ կռիւ» (Բրս. Հց. 4[10]) – ἀπόβλητός ἐστιν... ἀπρεπὴς μάχη (PG 31.885[81]) օրինակում խնդրո առարկա ներգործական բայածականը համապատասխանում է հունարեն ΤΟΣ-ով բայածականին, որը կրավորական իմաստ ունի: Սա վկայությունն է այն բանի, որ ներկա բաժնում քննարկվող կիրառությունը համընդհանուր էր դարձել թարգմանություններում:

«Եղծանելի է ոչ գյոյժ հաւաստին» (*Պիտ. 60.2*) – 'Ανασκευαστέον δὲ τὰ μήτε λίαν σαφῆ (*Aphth. 72.6*),

«Ներբողելի է զդէմս» (*Պիտ. 95.4*) – 'Εγκωμιαστέον δὲ πρόσωπα (*Aphth. 86.12*),

«արտասանելի է զդէմս» (*Պիտ. 201.3*) – 'Εκφραστέον δὲ πρόσωπα (*Aphth. 103.19*),

«զայլոցն ոչ մի դնելի է» (*Ար. Մեկն. 180*) – τῶν ἄλλων οὐδεμίαν θετέον (*Arist. Int. 23b9*),

«զիւրաքանչիւր ոք առդնելի է» (*Թեոն 46*) – ἕκαστον προσθετέον (*Theon 3.102.14*),

«Եղծանելի է զպէտսն» (*Թեոն 52*) – 'Ανασκευαστέον δὲ τὰς χρείας (*Theon 3.104.17*),

«զամենայն նմա ճառելի է» (*Թեոն 175*) – *πάντα αὐτῷ ῥητέον,

«զայնոսիկ առնելի է» (*Պղատ. Օր. 461*) – ταῦτα ποιετέον (*Pl. Leg. 969a1*),

«զըստ ծիծաղելն բնաւորեալ առնելի է» (*Պորփ. 154*) – κατὰ τὸ πεφυκέναι γελᾶν ληπτέον (*Porph. 20.14*),

«Հայցելի է զերկբայացեալն խոստովանեալ առնելով» (*Դ. Վերլուծ. 94*),

«վերծանելի է զքերթածսն» (*Անան. Մեկն. 488*),

«երկնիցն շրջանս իմանալի է զպարունակս աւդոցն ասել» (*Զեն. 1.3.3*):

Ապառնի դերբայը կարող էր նույնպիսի իմաստով կիրառվել և առանց ուղղի խնդրի.

«Ասա յորպիսի իրս արաւստ ածելի է, ի յոր աղբււրս երթալի և յորոց պահելի յարաւտից կամ յաղբերաց, զորս հովուելի է ցպով և զոյս սուղելով. երբ ածելի է յարաւստն և երբ կոչելի ի ճարակոցն. զիարդ կռուելի ընդ գայլսն և որպէս ընդ հովիւս ոչ պատերազմելի» (*Նազ. ճ.9.6*) – Εἰπέ τίσι τῶν νομῶν προσακτέον, ἐπὶ ποίας πηγᾶς ἰτέον, καὶ τίνας φευκτέον, ἢ νομᾶς, ἢ νάματα· τίνας ποιμαντέον τῇ βακτηρίᾳ, τίνας τῇ σύριγγι· πότε ἀκτέον ἐπὶ νομᾶς, καὶ πότε ἀνακλητέον ἀπὸ νομῶν· πῶς πολεμητέον τοῖς λύκοις, καὶ πῶς τοῖς ποιμέσιν οὐ πολεμητέον· (*PG 35.825.20-25*),

«յաղագս որոյ այժմ ասելի է» (*Փիլ. իմաստ. 44*) – περὶ ἧς νυνὶ λεκτέον (*Ph. Abr. 48.2*),

«ցուցանելի է» (*Դ. Պորփ. 172.13*) – ἀποδεικτέον (*D. Porph. 203.12*),

«ասելի է» (*Դ. Պորփ. 174.17*) – λεκτέον (*D. Porph. 204.7*),

«գիտելի է» (*Դ. Պորփ. 14.3, 16.10, 22.8, 31, 24.9, 15, 20, 29, 144.10, 148.22, 189.6, 208.8*) – ἰστέον (*D. Porph. 82.7, 87.3, 88.6, 17, 91.23, 92.16, 32, 93.6, 26, 94.7, 140.31, 184.11*),

«ոչ է յանդգնելի ասել» (*Դիոն. աստ. անու. 128.13*) – οὐ τολμητέον εἰπεῖν (*Dion. div. nom. 1.1*):

Նկարագրական եղանակ՝

«պարտ է գիտել» (*Դ. Պորփ. 8.1, 12.16, 18.4, 20.11, 82.28, 100.15, 118.16, 132.3, 152.19, 162.10*) – ἰστέον (*D. Porph. 83.10, 86.21, 88.25, 90.26, 145.4, 162.10, 177.4, 183.1, 194.16, 198.15*):

8 ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՀԵՏ

«է» («գոյ») երրորդ դեմքի եզակի թվի անդեմ կիրառությունը՝ «Հնարավոր է» իմաստով, անորոշ դերբայի հետ, որպես հունարեն ἔστι + infinitivus արտահայտության համարժեք.

«զայս ոչ է այլազգ ուղղել» (Բրս. Հց. 1[3]) – τοῦτο δὲ οὐκ ἔστιν ἄλλως κατορθωθῆναι (PG 31.881[73]),

«ոչ... տեսանել է տեսութիւնս» (Բրս. բարկ. 2.180) – οὐτε... ἐπιδεῖν ἔστι θεάματα (PG 31.357[99]),

«զիգացեալս տեսանել (v.l. է)» (Փիլ. շն. 278) – τοὺς ἀνδρογύνους ἔστιν ἰδεῖν (Ph. Spec. 3.40),

«ոչ գոյ հասանել և պատահել» (Փիլ. իմաստ. 36) – οὐκ ἔστιν ἐντυχεῖν (Ph. Abr. 16.1),

«էր... ոչ... դժուարել» (Փիլ. իմաստ. 99) – ἦν... μήτε... σφαδάζειν (Ph. Abr. 257.2),

«է ինչ և որ ի վերայ սնոտի իմաստն իմացեալ յոմանց՝ անխնամութիւն գոլ» (Փիլ. նխ. 17),

«է ոչ զանիմաստն ընդ միտ ածել» (Փիլ. նխ. 28), «եղիցի և այլոցն յանձն առնուլ» (Փիլ. նխ. 78),

«ոչ է այնուհետև վրիպել» (Փիլ. նխ. 21),

«մինչև ցայսօր է տեսանել» (Փիլ. նխ. 114) – μέχρι νῦν ἔστιν ἰδεῖν (Ph. Prov. 2.60.9),

«տեսանել գոյ» (Փիլ. նխ. 116 – ἰδεῖν ἔστιν (Ph. Prov. 2.60),

«նոցա մասն գալ էր» (Փիլ. Լիւս. 131),

«իւրաքանչիւր ումեք է ասել» (Փիլ. Լիւս. 136),

«կարծել գոյ» (Փիլ. լին. 4.172),

«հաւատալ է նմա» (Իրեն. հերձ. 22),

«ի վերայ սրբոցն իսկ արանց է գտանել» (Տիմ. 327.24),

«առ հինսն գտանել է» (Թեոն 22) – παρὰ τοῖς παλαιοῖς ἔστιν εὐρεῖν (Theon 2.67.31-32),

«ոչ ևս գոյ զսա առնուլ» (Ար. Ստոր. 120) – οὐκ ἔστιν ἔτι τοῦτο λαβεῖν (Arist. Cat. 5a34),

«Արդ է տեսանել երիս իրողութիւնս» (Դ. Պորփ. 86.11) – ἔστιν οὖν κατανοῆσαι τρία ὄντα τὰ πράγματα (D. Porph. 147.14),

«է և այլազգ յանդիմանել» (Դ. Պորփ. 124.22) – ἄλλως δὲ ἔστιν ἐλέγξει (D. Porph. 180.5),

«Բայց է առ այսուիկ այսպէս պատասխանատրել» (Դ. Պորփ. 138.26-27) – ἔστι δὲ οὕτως πρὸς ταῦτα ἀπολογήσασθαι (D. Porph. 188.6),

«քանզի է ասել» (Դ. Պորփ. 144.2) – ἔστι γὰρ εἰπεῖν (D. Porph. 189.30),

«Բայց արդ է այսպէս բացատրել» (Դ. Պորփ. 170.17) – ἔστιν οὖν αὐτὸ ἀποδοῦναι οὕτως (D. Porph. 202.21),

«ոչ է արհամարհել զինչդ» (Դ. Վերլուծ. 104),

«որպէս է ասել» (*Դիոն. Երկ. քհ. 4.14*) – ὥς εἰπεῖν (Dion. cael. hier. 2.1):
Հմմտ. և ըստ իմաստի թարգմանութեան դեպքերը.
 «Կարողութիւն է ցուցանել» (*Դ. Պորփ. 198.13*) – ἔστι δεῖξαι (D. Porph. 218.13),
 «ոչ է կարողութիւն զսպիտակն... իմանալ» (*Դ. Պորփ. 120.20-21*) – οὐκ ἔστιν ἐπινοῆσαι λευκὸν (D. Porph. 178.20),
 «ոչ գոյ կարողութիւն զսպիտակ մարմին արտաքոյ սպիտակութեան իմանալ» (*Դ. Պորփ. 126.2*) – οὐκ ἔστιν ἐπινοῆσαι τὸ λευκὸν σῶμα ἐκτὸς τῆς λευκότητος (D. Porph. 180.9),
 «յընդդիմակէն մարթ գոյ հակադարձել զբանն» (*Դ. Պորփ. 130.5*) – ἐκ τοῦ ἐναντίου ἔστιν ἀντιστρέψαι τὸν λόγον (D. Porph. 182.3-4),
 «ոչ գոյ մարթ այսօր բանական իմանալ զկենդանին» (*Դ. Պորփ. 142.16*) – οὐτε γὰρ ἔστιν σήμηρον ἐπινοῆσαι τὰ ζῶα λογικά (D. Porph. 189.20),
 «առ որս պարտ է այսպէս պատասխանատրել» (*Դ. Պորփ. 154.9*) – ἔστι δὲ πρὸς τοῦτο οὕτως ἀπολογήσασθαι (D. Porph. 194.27):
*Ամենայն հավանականութեամբ հունարենի ազդեցութեամբ այս կառուցը գրաբարում ավանդված է բավական վաղ՝ դասական բնագրերում*²⁷³:

9 ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԲԱՅԹՈՂՈՒՄՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունարեն սղված հական բայով անվանական նախադասութիւնը կարող էր թարգմանվել բառացի.
 «Բարեկամ հաւատարիմ՝ աշտարակ ամուր» (*Սիր. 2 14*) – φίλος πιστός σκέπη κραταία (Sir. 6:14),

²⁷³ ԽԱՉԱՏՐՅԱՆ 2002, 101-110, որտեղ օրինակներ են բերված Ագաթանգեղոսից, Եղնիկից, Հովհան Մանգաղունցի, Սիրաքի գրքից («ոչ է ասել թէ այս քան զայն յոռագոյն էր» [ԼԹ 40] – οὐκ ἔστιν εἰπεῖν Τοῦτο τοῦτου ποιηρότερον [39:34], «չէ ասել թէ զի՞ այս կամ է՞ր այս» [ԼԹ 26] – οὐκ ἔστιν εἰπεῖν Τί τοῦτο/ εἰς τί τοῦτο/ [39:21], «ոչ գոյ նուազեցուցանել» [ԺԸ 5] – οὐκ ἔστιν ἐλαττώσαι [18:6]), Հորի գրքից («Մի լիցի ինձ ասել զձեզ արդար» [ԻԷ 5] – μή μοι εἶη δίκαιους ὑμᾶς ἀποφῆναι [27:5]), Մակաբայեցիների երկրորդ գրքից («Եւ որչափ ինչ ցուցանել էր թագաւորին՝ ցուցի» [ԺԱ 18] – ὅσα μὲν οὖν ἔδει καὶ τῷ βασιλεῖ προσεγενέσθαι, διεσάφησα [11:18] «էր» ձեռն համապատասխանում է Հունարեն չէ՞ «պետք էր» բայաձևին), Ոսկեբերանի Մատթեոսի ավետարանի մեկնութիւնից («Եւ չիք ուրեք տեսանել, եթէ զօրինաց դատաստանին անփոյթ առնիցեն» [Բ 28]): Խաչատրյանը «անդ էր տեսանել» տիպի մասնակաղապարի (էջ 115-120) մասին արգարացիորեն նշում է, որ այն զուտ գրաբարյան է, քանի որ Մակաբայեցիների երկրորդ գրքում իր մատնանշած օրինակների հունարեն սկզբնաղբում տեղի պարագա բացակայում է («Եւ անդ էր լսել թնդիւն վահանաց...» [Ե 3] – καὶ ἀσπίδων κινήσεις... [5:3], «Եւ անդ էր ոչ զաւրէնս շաբաթուց տեսանել և ոչ զտաւնս տարեկանաց զհայրենիս պահել» [Զ 6] – ἦν δ' οὕτε σαββατίζειν οὕτε πατρώους ἑορτάς διαφυλάττειν [6:6], «Եւ անդ էր տեսանել շտապ տագնապի տառապանս չարչարելոցն» [Զ 9] – παρῆν οὖν ὅραν τὴν ἐνεστῶσαν ταλαιπωρίαν [6:9]):

«Բարեկամ հաւատարիմ դանձ կենդանի» (*Նազ. առ Նիւս. 230*) – φίλος πιστός θησαυρός ἔμψυχος (PG 35.832),

«Կարելի քեզ ատել զնա» (*Բրս. բարկ. 5.187*) – δυνατόν σοι μισῆσαι αὐτόν (PG 31.365[23]),

«այսպէս և աղբիւր՝ ամենայն երակք երկրի, ըմպելի ջուր բղխելով» (*Փիլ. լին. 1.3*) – οὕτω καὶ πηγῇ πᾶσα φλέψ τῆς γῆς πότιμον ὕδωρ ἀνομβροῦσα (Ph. QuGen. 1.3),

«Աստուած իմանալի աշխարհ. աշխարհ զգալի աստուած. մարդ քակտելի աշխարհ» (*Հերմ. 298.3-5*),

«սոցա անուն միայն հասարակ» (*Ար. Ստոր. 107*) – τούτων ὄνομα μόνον κοινόν (Arist. Cat. 1a3),

«որ ինչ մարդ, նոյն և կենդանի» (*Դ. Սահմ. 30.22-23*) – εἴ τι μὲν ἄνθρωπος, τοῦτο καὶ ζῶον (D. Prol. 13.3),

«մարդ կենդանի... կենդանին գոյ» (*Դ. Պորփ. 104.22-23*) – ὁ ἄνθρωπος ζῶον... τὸ ζῶον οὐσία (D. Porph. 166.9),

«այս անուն նորա եղբայր» (*Դ. Վերլուծ. 110*),

«ամենայն մարդ կենդանի» (*Դ. Վերլուծ. 118*):

ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ Թարգմանութեան դասական եղանակի հետ

Դասական թարգմանիչն օժանդակ բայ է ավելացնում՝

«այս գիր լինելութեան» (*Փիլ. լին. 1.1, իմաստ. 35*) ≠ «այս է գիր արարածոց» (*Ծնն. Բ 4*) – αὕτη ἡ βίβλος γενέσεως (Ph. QuGen. 1.1, Abr. 9.3 = Gen. 2.4),

«հաւատարիմ բանս» (*Տիմ. 314*) ≠ «հաւատարիմ է բանս» (*Տիմ. Գ 8*) – πιστός ὁ λόγος (Tit. 3:8),

«գիւնջ դիւրագոյն» (*Տիմ. 323*) ≠ «ն՞ր դիւրագոյն իցէ» (*Ոսկ. Պօղ. Բ 446*) – τί ἐύκολώτερον (PG 62.437):

10 ԹՎԱՐԿՈՒՄ ՀՈՂԻ ՀՈԼՈՎԱԶԵՎԵՐԻ ԵՎ ՄԵՆ ՈՒ ԴԵՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ («ՄԵԿԸ... ՄՅՈՒՍԸ»)

10ա Թարգմանված՝ «է որ/ինչ որ/զի» կրկնվող կապակցութեամբ

«է ինչ որ ամբաստանեցից զինէն, և է որ պատասխանիս արարից յաղագս իմ» (*Նազ. ճ.2.66*) – τὸ μὲν τι κατηγορήσας ἑμαυτοῦ, τὸ δὲ ὑπεραπολογησάμενος (PG 35.408.27-28),

«է ինչ արդ հասու լեալ և է ինչ խնդրել» (*Նազ. Կ. Մ. 211.21*) – τὸ μὲν ἄρτι καταλαμβανόμενος, τὸ δὲ ζητούμενος (PG 35.1252.42),

«է զի յընտանիս և ի սիրելիս մոլեալք են» (*Փիլ. չն. 269*) – ἔστιν ὅτε οἱ-κείων καὶ φίλων ἐπιμεληνότας (Ph. Spec. 3.11),

«է ինչ... և է որ...» (*Փիլ. ժ բան 235*) – αἱ μέν... αἱ δέ... (Ph. Spec. 1.158)²⁷⁴,

«է որ... և է որ» (*Փիլ. այլաբ. 115*) – ὁ μέν... ὁ δέ (Ph. LA 1.31),

«է ինչ որ... և է ինչ որ» (*Իրեն. հերձ. 151*),

«տարբերացն են ինչ... և են» (*Պորփ. 141*) – τῶν διαφορῶν αἱ μέν... αἱ δέ... (Porph. 8.19),

«է նորա որ անշատական է, և է որ անանշատելի» (*Պորփ. 145*) – τὸ μέν αὐτοῦ χωριστόν ἐστιν, τὸ δὲ ἀχώριστον (Porph. 12.25),

«է ինչ որ ըստ շարամանութեան ասի, և է ինչ որ...» (*Ար. Ստոր. 108*) – τὰ μέν κατὰ συμπλοκὴν λέγεται, τὰ δ' ὕστερον (Arist. Cat. 1a16),

«էական է ինչ որ զենթական է իմեմն է և նենթականում ոչ յումեմն է... և է ինչ որ նենթականում է և զենթական ոչ զումեք է ասի» (*Ար. Ստոր. 108*) – τῶν ὄντων τὰ μέν καθ' ὑποκειμένου τινὸς λέγεται, ἐν ὑποκειμένῳ δὲ οὐδενὶ ἐστιν... τὰ δὲ ἐν ὑποκειμένῳ μέν ἐστι, καθ' ὑποκειμένου δὲ οὐδενὸς λέγεται (Arist. Cat. 1a20),

«է ինչ որ նախկին գոլ է ամանակին, և է որ վերջին» (*Ար. Ստոր. 121*) – τὸ μέν πρότερον εἶναι τοῦ χρόνου (Arist. Cat. 5a29-30),

«է գոր պատմել ըստ բացերևականին յեղանակի... և է գոր անշողկապաձև» (*Թեոն 96*) – τὰ μέν ἀπαγγεῖλαι κατὰ τοῦ ἀποφαινομένου τρόπου... τὰ δὲ ἀσυνδέτως (Theon 5.91.9-10),

«է որ առ արտաբերութիւն... և է որ անուամբ» (*Թեոն 166*) – ἡ μέν περὶ τὴν προφοράν... ἡ δὲ περὶ τὸ ὄνομα (Theon 12.129.13-14),

«է ինչ... և է ինչ» (*Սահմանք 378*),

«Իւրաքանչիւր է ինչ որ ընտանեաւ և նմանեաւ կերակրի, և է ինչ՝ որ ի հաւաքականութեան ուրախանայ» (*Նեմես. 17*) – ἕκαστον γὰρ τῷ μέν οἰκείῳ καὶ ὁμοίῳ τρέφεται, τῷ δὲ ἐναντίῳ θεραπεύεται (Nemes. 1.202-203),

«է որ դար ասի... և է որ կոճատ» (*Զեն. 1.4.3*),

«է ինչ որ վայելուչ է ի ձեռն նմանիցն սրբազնատիպ պատկերաց գալ յառաջ, և է ինչ որ ի ձեռն աննմանիցն կերպաւորութեանց ի յամենեւիմբ աննման և անպատշաճն ստեղծեալ» (*Դիոն, երկն. քհ. 5.24-26*) – ὁ μέν ὡς εἰκὸς διὰ τῶν ὁμοίων προΐων ἱεροτύπων εἰκόνων, ὁ δὲ διὰ τῶν ἀνομοίων μορφοποιῶν εἰς τὸ παντελῶς ἀπεικὸς καὶ ἀπεμφαῖνον πλαττόμενος (Dion. cael. hier. 2.3),

«է ինչ որ հասարակ է ի սուրբ Երրորդութեան, և է ինչ որ յատուկ» (*Եւտիք. 31/32.25*):

²⁷⁴ Ֆ. Զիգերտի՝ Փիլոնի «Յաղագս գաստուած» գրվածքի վերոհիշյալ ետադարձ թարգմանության մեջ «է որ... և է որ»-ի (SIEGERT 1988, 16.48) τοῦ μέν... τοῦ δέ (SIEGERT 1988, 26.48) համարժեքը միանգամայն արդարացիված է:

10բ Թարգմանված՝ «ոմն» անորոշ դերանվամբ, հաճախ՝ իրի առումով

«և մակբայիցս ոմանք պարզք են և ոմանք ջոկադիրք» (*Թրակ. 31.5-6*) – τῶν δὲ ἐπιρρημάτων τὰ μὲν ἐστὶν ἀπλᾶ, τὰ δὲ σύνθετα (*Thrax 73.1*),

«և պիտոյիցս ոմանք են բանականք, և ոմանք դործականք» (*Պիտ. 30.4*) – τῆς δὲ χρείας τὸ μὲν ἐστὶ λογικόν, τὸ δὲ πρακτικόν (*Aphth. 62*),

«և խրատուս ոմն է բացասական... և ոմն՝ հրաժարական... և ոմն՝ յորդորական» (*Պիտ. 44.4-6*) – τῆς δὲ γνώμης τὸ μὲν ἐστὶ προτρεπτικόν, τὸ δὲ ἀποτρεπτικόν, τὸ δὲ ἀποφαντικόν (*Aphth. 67.2*),

«և բարառնութեանց ոմանք են տրտմականք, ոմանք բարոյականք, և կէսք խառնք» (*Պիտ. 185.5-6*) – τῶν δὲ ἡθοποιῶν αἱ μὲν εἰσὶ παθετικά, αἱ δὲ ἠθικά, αἱ δὲ μικταί (*Aphth. 101.17-18*),

«և արտասանութեանցս ոմանք են պարզք, և ոմանք շարլծեալք» (*Պիտ. 201.9-10*) – τῶν δὲ ἐκφράσεων αἱ μὲν εἰσὶν ἀπλᾶ, αἱ δὲ συνεζευγμέναι (*Aphth. 104.12*),

«և ի դրութեանցս ոմանք են քաղաքականք, և ոմանք տեսականք» (*Պիտ. 221.11*) – τῶν δὲ θέσεων αἱ μὲν εἰσὶ πολιτικά, αἱ δὲ θεωρητικά (*Aphth. 106. 10*),

«ի կենդանեացն զոմանս» (*Պորփ. 144*) – τῶν ζώων τὰ μὲν (*Porph. 13.5*),

«ոմն մարդ, ոմն ձի» (*Ար. Ստոր. 108*) – ὁ τις ἄνθρωπος ἢ ὁ τις ἵππος (*Arist. Cat. 1b4*),

«զումեքէ ձիոյ» (*Ար. Ստոր. 112*) – κατὰ τοῦ τινος ἵππου (*Arist. Cat. 2b25*),

«ոմն մարդ, ոմն արջառ» (*Ար. Ստոր. 112*) – ὁ τις ἄνθρωπος, ὁ τις βοῦς (*Arist. Cat. 2b27*),

«ոմն... իսկ միւսն» (*Դ. Պորփ. 168.11*) – τὸ μὲν... τὸ δέ (*D. Porph. 201.20-21*),

«ոմանք... ոմանք» (*Դ. Պորփ. 42.21, 178.6-7*) – τὰ μὲν... τὰ δέ (*D. Porph. 111.20-21, 205.21*),

«ոմանք... և ոմանք» (*Դ. Պորփ. 122.14-16, 154.10, 184.7-834, 186.1*) – αἱ μὲν... αἱ δέ (*D. Porph. 179.12-13, 194.27-28, 208.23-24, 209.5-6*),

«ոմն է՝ յաղազս որոյ է բան, իսկ ոմն՝ յաղազս նորա ասացեալ» (*Դ. Վերլուծ. 86*):

10գ Դերանունների այլ տարօրինակ կիրառություններ

Հունարեն «սաստկացուցիչ» αὐτός և «անդրադարձ» ἑαυτοῦ, σεαυτοῦ և այլն, դերանունները դժվար էր հայերեն թարգմանել. հետևաբար կարդում ենք.

«յիս ինքն» (*Նաղ. ճ.9.3*) – εἰς ἑμαυτόν (*PG 35.821.42*),

«մեր ինքեանց» (*Դ. Վերլուծ. 44*) – *ἡμῶν αὐτῶν,

«Իւր Պորփիւրի թուի» (Դ. Պորփ. 158.28) – αὐτῷ τῷ Πορφυρίῳ φαίνεται (D. Porph. 197.15՝ *օրինաչափ կլիներ «ինքն» անձնական դերանվան տրական հոլովի կիրառությունը՝ «ինքեան»*),

«Իւր է բնութեան նորա ծիծաղական» (Նեմես. 19) – ἰδιὸν ἐστὶν τῆς οὐσίας αὐτοῦ τὸ γελαστικόν (Nemes. 1.273):

11 ՀՈՒՆԱՐԵՆ ԼՔԿԱՅԱԶԵՎՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ասեմ» («այսինքն» իմաստով) բայական ձևով ներմուծված միջանկյալ նախադասությունները մատնում են, որ դրանք թարգմանություն են ԼՔԿ – ի («ասում եմ, նկատի ունեմ, այսինքն»).

«Հարացն ասեմ վարդապետութեանց և աւանդութեանց» (Նազ. ճ.2.43) – ποιηρῶν λέγω διδαγμάτων τε καὶ δογμάτων (PG 35.452),

«զմարմին լուսաւորեսցուք եկեղեցւոյ՝ աստուածայնովքն ասեմ տեսութեամբ» (Նազ. ճ.5.35) – τὸ σῶμα φωτίζουσι τῆς Ἐκκλησίας, θείοις λέγω θεωρήμασι (PG 35.709.7),

«զմերն ասեմ» (Նազ. առ Նիւս. 230) – τήν τε ἡμετέραν λέγω (PG 35.832),

«յայնսսիկ բաժանեցելոց բնութեանց, յառաքինութիւն ասեմ և ի չարութիւն» (Նազ. ճ.4.101) – εἰς δύο ταῦτα διηρημένων τῶν ἔξω, ἀρετὴν τε φημί, καὶ κακίαν (PG 35.632.35-36),

«Իսկ բազմութեան և մեծութեան գովութեանցս ի վերայ եղեալ, իբրև գլուխ իմն իմաստնոցն ասեմ» (Փիլ. իմաստ. 104) – τῷ δὲ πλήθει καὶ μεγέθει τῶν ἐπαίνων ἐπιτιθεῖς ὥσπερ τινὰ κεφαλὴν τοῦ σοφοῦ φησιν (Ph. Abr. 275.2),

«անբոյժ և առանց սփոփանաց լիցին, որք..., և ասեմ ոչ զմարմնոյս, այլ զանձին» (Փիլ. տես. 8) – ἀθεράπευτοι διατελείτωσαν... λέγω δὲ οὐ τὴν σῶματος, ἀλλὰ τὴν ψυχῆς (Ph. Cont. 10.3),

«զպողածնութեանն բոլորի պակասեցելոյ, զբուսանելն ասեմ» (Փիլ. նիւ. 8),
«զտարերց երկնի ասեմ և երկրի, հանդերձեալ լինել կործանումն» (Փիլ. նիւ. 9),

«ի մէջն սա առատապէս յանձանձաբար լուիցէ, ոչ ճախարակեալ ասեմ բանիւք» (Փիլ. նիւ. 29),

«զիւր դեւն, այսինքն ասեմ զիւր միտսն» (Փիլ. նիւ. 55) – ἰδιὸν δαίμονα, λέγω δὲ τὸν ἑαυτοῦ νοῦν (Ph. Prov. 2.8),

«ո՞ք տաժանագործ նիւթող և կամ ոստայնանկ բաւական է՝ ոչ հակառակելով ասեմ, բայց նմանացուցանելով, կարել տանել արուեստի զերկրորդութիւնն» (Փիլ. Լիւս. 130),

«զ՝ի բաց չըջումն զԱթանասի ասեմ զմեծին» (Պետ. Գ.Թ. 101),

«անփորձք էին լաւագունիցն, աշխարհի ասեմ և որ ի սմա են» (*Ար. աշխ. 518*) – δια τὸ ἀθέατοι τῶν κρειττόνων εἶναι, κόσμου λέγω καὶ τῶν ἐν κόσμῳ μεγίστων· (*Arist. Mu 391a25*),

«կատարեալ իմաստասէրն երեքումբք այսոքիւք կերպարանի, բարեաւն ասեմ և գիտնականաւն և կարելեաւն» (*Դ. Սահմ. 40.20*) – ὁ τέλειος φιλόσοφος τοῖς τρισὶ τούτοις χαρακτηρίζεται, λέγω δὴ τῷ ἀγαθῷ καὶ τῷ γνωστικῷ καὶ τῷ δυνατῷ (*D. Prol. 17.11*):

Դավիթ Անհաղթի մոտ *լέγω և նույնիմաստ* *փղմլ* *δέ* (*D. Prol. 8.26, 30.9, 30.19, D. Porph. 87.10, 153.13, 164.22, 189.17, բառացի՝ «խկ ես ասում եմ»*) *հաճախ թարգմանվում է ըստ իմաստի՝ «այս ինքն»* (*Դ. Սահմ. 20.14, 68.25, 70.4, Դ. Պորփ. 14.14, 90.8, 104.13, 142.13*):

12 ՀՈՐԴՈՐԱԿԱՆ «ԲԵՐ» ՁԵՎԸ

Հունարեն *φέρω* («տանել», «կրել») բայի *հրամայականի* *φέρε* *ձևը* *հորդորական մակբայի իմաստ է ձեռք բերել՝ «դե՛հ» նշանակությամբ. հաճախ հանդիպում է հորդորական իմաստով՝ բայի ստորադասական ձևերի հետ (հատկապես հոգնակի առաջին դեմքի)։ Բառացի թարգմանվել է «բեր». կա նաև «եկ բեր»-ի երկու դեպք.*

«բեր... երգեսցուք» (*Նազ. ճ.4.12*) – *φέρε... ἄδωμεν* (*PG 35.541.27*),

«բեր քեզ յանդիման կացուցից» (*Նազ. ճ.4.110*) – *φέρε σοι παραστήσω* (*PG 35.648.2*),

«եկ բեր փորձեսցուք» (*Թեոն 158*) – *φέρε παραθῶμεν* (*Theon 11.125.22*),

«եկ բեր խնդրել» (*Թեոն 164*) – *φέρε ζητεῖν* (*Theon 11.128.12*),

«եկ բեր ասել» (*Պորփ. 137*) – *φέρε* (*Porph. 6.3*),

«բեր տեսցուք» (*Պղատ. Մին. 466*) – *φέρε ἴδωμεν* (*Pl. Min. 315b2*),

«բեր ասացուք» (*Դ. Պորփ. 34.17*) – *φέρε διδάξωμεν* (*D. Porph. 105.9*),

«բեր... ցուցցուք» (*Դ. Պորփ. 42.24*) – *φέρε... δείξωμεν* (*D. Porph. 111.22-23*),

«բեր... ասացուք» (*Դ. Պորփ. 46.6-7, 82.1-2, 114.19*) – *φέρε... εἴπωμεν* (*D. Porph. 114.7, 143.27, 174.27-28*),

«բեր... ուսցուք» (*Դ. Պորփ. 48.30, 140.15*) – *φέρε... εἰσόμεθα* (*D. Porph. 116.7, 188.22*),

«բեր... սահմանեսցուք» (*Դ. Պորփ. 66.32*) – *φέρε χωρήσωμεν ἐπὶ τὸν ὀρισμόν* (*D. Porph. 133.5-6*),

«բեր... յարադրեսցուք» (*Դ. Պորփ. 86.23-24, 124.11-12, 176.27-28, 184.5-6*) – *φέρε... παραθῶμεν* (*D. Porph. 147.32*), *παραθήσομεν* (*D. Porph. 179.31*), *παραθησόμεθα* (*D. Porph. 205.12-13, 208.3*),

«բեր... արտադրեսցուք» (*Դ. Պորփ. 94.10-11*) – *φέρε... ἐκθεσόμεθα* (*D. Porph. 158.3-4*),

«բեր... ի կիր արկցուք» (*Դ. Պորփ. 120.10-11*) – *φέρε... ἀναπληρώσωμεν* (*D. Porph. 178.11-12*),

«բեր... լուծցուք» (Դ. Պորփ. 154.4-5) – φέρει... ἐπιλυσώμεθα (D. Porph. 194.23-24),

«բեր... խաղասցուք» (Դ. Պորփ. 166.21-22) – φέρει... χωρήσωμεν (D. Porph. 201.4-5),

«բեր... երթիցուք» (Դ. Պորփ. 180.6-7) – φέρει... χωρήσωμεν (D. Porph. 206.16-17),

«բեր... հանգանակեսցուք» (Դ. Պորփ. 192.14-16) – φέρει... καταβάλωμεν (D. Porph. 213.12-13),

«բեր... արասցուք» (Դ. Ստոր. 256) – φέρει... ποιησώμεθα (D. Cat. 158.33),

«բեր արդ, թէ ո՞րպիսի պարտ է զմտաւ ածել մեզ լինել քաղաքին» (Պղատ. Օր. 124) – φέρει δὴ, τίνα δεῖ διανοηθῆναι ποτε τὴν πόλιν ἔσεσθαι/ (Pl. Leg. 704a1՝ «դեհ, ուրեմն, պետք է մտածել, թե ինչպիսի՞ն պիտի լինի քաղաքը»),

«բեր ասացուք» (Կիւրղ. պրպ. 103) – φέρει λέγωμεν (PG 75.1377):

Հունարենից պատճենված «բեր» վերաբերականը Գ. Խաչատրյանը դիտարկում է նույնպիսի գործառույթ և հրամայականի եզակիի ձև ունեցող «ած», «առ», «արի», «գող», «գոնեա», «գրեա», «գրեսջիր», «եկ», «թող», ինչպես նաև ստորագասական եղանակի «գողցես», «գրեսցուք» բայաձևերի շարքում²⁷⁵:

13 ՀՈՒՆԱՐԵՆ ՄԱԿԱՅ «ՈՒՆԵՆԱԼ» ԲԱՅԻ ՀԵՏ

Հունարեն ἔχω («ունենալ») բայը ձևի մակբայների հետ արտահայտում է «որևէ վիճակում լինել» իմաստը. ուստի մակբայն «ունենալ» բայի հետ նշանակում է «որևէ վիճակում լինել». այդպիսի արտահայտությունը կարող է թարգմանված լինել՝

1) ըստ իմաստի՝ էական բայերով.

«այլազգ լեալք» (Նազ. ճ.4.12) – ἄλλως ἔχοντα (PG 35.541.44),

«բարևոք է» (Դ. Պորփ. 156.32) – καλῶς ἔχει (D. Porph. 192.19),

«յոռի գոլ» (Դ. Պորփ. 158.30) – κακῶς ἔχειν (D. Porph. 197.16-17),

«այսոցիկ այսպէս ելոց» (Դ. Պորփ. 140.5, 142.5, 144.13) – οὕτως ἔχοντος (D. Porph. 188.15-16, 189.11, 190.8՝ բառացի պատճենված է «բացարձակ սեռականը»),

2) բառացի.

«տենչողաբար ունիս» (Բրս. ընչեղ. 7.161) – λίχνως ἔχεις (PG 31.297 [32]),

«բարևոք ունել» (Նազ. ճ.2.6) – καλῶς ἔχειν (PG 35.460),

«այսպէս ունին» (Նազ. ճ.4.60) – οὕτως ἔχοντα (PG 35.584.6),

«անզգայաբար ունին» (Նազ. ճ.4.87) – ἀναισθητῶς ἔχωσι (PG 35.616.33),

²⁷⁵ ԽԱՉԱՏՐՅԱՆ 2002, 64-70:

«ուենել չարաչար» (*Նաղ. ճ.5.41*) – ἔχειν κακῶς (PG 35.717.35),
 «այսպէս ունի» (*Փիլ. ալլաբ. 110*) – οὕτως ἔχει (Ph. LA 1.18),
 «նմանապէս ունի» (*Թեոն 52, Ար. Մեկն. 167*) – ὁμοίως ἔχει (Theon 3.104.23, Arist. Int. 19b32),
 «այսոքիկ ունին իսկ այսպէս» (*Պղատ. Սոկր. 68*) – τὰ δὲ ἔχει οὕτως (Pl. Apol. 38a7),
 «զանազանապէս ունի» (*Դ. Սահմ. 10.18*) – ἄλλως ἔχουσι (D. Prol. 4.8),
 «հակադարձապէս ունի» (*Դ. Պորփ. 20.2*) – ἐναντίως ἔχει (D. Porph. 90.6),
 «ունի այսպէս» (*Դ. Պորփ. 52.26*) – ἔχει... οὕτως (D. Porph. 118.8),
 «ողջաբար ունեւոր» (*Դ. Պորփ. 170.15*) – ὅγιως ἔχων (D. Porph. 202.20),
 «անկատարեւարար ունի» (*Դ. Պորփ. 180.30*) – ἀτελῶς ἔχει (D. Porph. 206.35),
 «ներհակաբար ունին» (*Դ. Վերլուծ. 134*):

14 ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

14ա Որոշչի համաձայնությունը որոշյալի հետ

Նախադաս որոշչի համաձայնեցումը որոշյալի հետ դասական լեզվի նորմերի խախտում է՝ հունարենում համատարած համաձայնության նմանակում՝
 «թաղեցելոյ ոսկոյ» (*Բրս. Ընչեղ. 3.153*) – τοῦ κατορυγμένου χρυσίου (PG 31.285[91]),
 «սղի և սղացելոյ ձայնաւորի» (*Թրակ. 10.10-11*) – βραχεῖ ἢ βραχυνομένῳ φωνήεντι (Thrax 18.4),
 «ի ներքոյ եղելոյ գրոյս» (*Փիլ. լին. 1.1*) – τοῦ ὑποκειμένου τεύχους (Ph. QuGen. 1.1),
 «մեծաւ լութեամբ» (*Փիլ. տես. 29*) – κατὰ πολλὴν ἡσυχίαν (Ph. Cont. 80.6),
 «երիցս երանելոյ... ոգւոյ» (*Փիլ. լին. 4.9*),
 «ամենաբարւոյ... դասուն» (*Փիլ. ել. 2.29*),
 «երկրորդի իմաստութեան» (*Փիլ. Սամփս. 574*),
 «այսպիսւոյս ձեռնարկութեան արուեստ» (*Պիտ. 154.1-2 հունարենը չի համապատասխանում*),
 «կատարելականօք գլխովք» (*Պիտ. 222.5*) – τοῖς τελικοῖς κεφαλαίοις (Aphth. 109.13),
 «յաղաքս բանականաց և սրբոց արանց» (*Տիմ. 327.1*),
 «թանց ճշմարտի աստուածութեանն» (*Տիմ. 136.14*),
 «որքանք այլք» (*Ար. Մեկն. 178*) – ὅσα ἄλλα (Arist. Int. 23a3),
 «ըստ բացերեականին յեղանակի» (*Թեոն 96*) – κατὰ τοῦ ἀποφαινομένου τρόπου (Theon 5.91.9),

«ի վերայ որոշեցելոց դիմաց» (*Թեոն 122*) – ἐπὶ ὠρισμένων προσώπων (Theon. 106.23),

«ի լաւէ քաղաքին» (*Թեոն 140*) – ἐκ τῆς ἀρίστης πόλεως (Theon 10. 113.33)՝ «քաղաք» գոյականն էլ պիտի ունենար բացառական հոլովի վերջավորութիւն. նրա ձևն ազդված է հունարեն բացառականի իմաստով սեռական հոլովաձևից,

«իւրաքանչիւրոցն սերմանց» (*Պորփ. 134*) – ἐκάστου τῆς γενέσεως (Porph. 1.23-24),

«միայնում իմիք տեսալի» (*Պորփ. 144*) – μόνῳ τινὶ εἶδει (Porph. 12.13),

«միում էացելոյ Աստուծոյ» (*Պետ. Գ.Թ. 103*),

«իւրաքանչիւրոյ սերման» (*Դ. Պորփ. 62.10-11*) – ἐκάστου τῆς γενέσεως (D. Porph. 127.21-22),

«յառաջիկայում տեսութեան» (*Դ. Սահմ. 6.21*) – ἐν τῇ προτέρᾳ θεωρίᾳ (D. Prol. 2.31),

«պարզիցն իմացմանցն» (*Անան. Մեկն. 493*),

«յանմահիցն կենդանեացն» (*Նեմես. 22*) – τῶν ἀθανάτων λογικῶν (Nemes. 1.298),

«երկնայնոցն իմացութեանց» (*Դիոն. երկն. քհ. 5.7*) – τῶν οὐρανίων νοῶν (Dion. cael. hier. 11.8),

«աստուածպետականաց լծոց» (*Դիոն. աստ. անու. 130.9*) – θεαρχικοῖς ζυγοῖς (Dion. div. nom. 1.3),

«յաղապս իւրաքանչիւրոցն իմացելոց յատկութեանց» (*Եւտիք. 25-26.15*):

ձիշտ է, նույնիսկ խիստ հունարան թարգմանութիւններում այսպիսի դեպքերը հաճախակի չեն:

14բ Ենթակայի և ստորոգյալի անհամաձայնութիւն

Դասական հունարենում չեզոք սեռի հոգնակի ենթական հավաքականության իմաստ ունենք և պահանջում էր եզակի ստորոգյալ (τὰ ζῶα τρέχει կանոնն է). երբեմն թարգմանելիս տառացի վերարտադրում էին այս առանձնահատկութիւնը՝

«ապականեալ լինէր որ միանգամ սերմանիք և ծառք էին» (*Փիլ. իմաստ. 44*) – ἐφθείρετο ὅσα σπαρτὰ καὶ δένδρα (Ph. Abr. 45.1),

«այսք... անդամք բռնադատեալ ածեալ է» (*Փիլ. լին. 2.2*) – τὰ... μέλη βεβίασται (Ph. QuGen. P 2.2),

«մի խռովեցուցէ զմեզ մասունք գոյացութեանն» (*Ար. Ստոր. 114*) – μὴ παραττέτω δὲ ἡμᾶς μέρη τῶν οὐσιῶν (Arist. Cat. 3a129),

«այլք ամենայն կամ զենթակայէ ասի» (*Ար. Ստոր. 111*) – τὰ δ" ἄλλα πάντα ἤτοι καθ' ὑποκειμένου λέγεται (Arist. Cat. 2a34),

«առ ճարտասանս ասացեալ է դրական գլուխք» (*Թեոն 24*) – παρὰ ῥήτορσιν εἴρηται θετικὰ κεφάλαια (Theon 69.4),

«որքանք միանգամ ստորագին գսեռէն... և զընդ նովաւ տեսակացն ստորագեսի... և զ'ի նոցանէց տեսակացն ստորագեսի» (*Պորփ. 146*) – ὅσα τε κατηγορεῖται τοῦ γένους καὶ τῶν ὑπ' αὐτὸ εἰδῶν κατηγορεῖται... καὶ τοῦ ἐξ' αὐτοῦ εἶδους κατηγορηθήσεται (Porph. 14.3-4),

«այսոքիկ գոյացութեան ներչնչականումն զգայականումն պատահեաց» (*Ք. Պորփ. 190.8-9*) – ταῦτα γὰρ τῇ οὐσίᾳ ἐμψύχῳ αἰσθητικῇ ἐπισυμβέβηκε (D. Porph. 210.17-18):

Արդյունքն այնքան արտառոց էր, որ ավելի հաճախ, նույնիսկ խիստ հունարան թարգմանություններում, ստորագյալը հոգնակի է (այդ ուղղումը կարելի է վերագրել և հետագա գրիչներին).

«Եւ ևս յատուկքն ի բաց բարձեալք ոչ շարաբառնան գսեռն բայց սեռքն ի բաց բարձեալք շարաբառնան գտեսակսն ոյր իցեն յատուկքն որոց ի բաց բարձելոց և այլքն շարաբառնին» (*Պորփ. 149*) – ἔτι τὰ μὲν ἴδια ἀναιρούμενα οὐ σταναναιρεῖ τὰ γένη, τὰ δὲ γένη ἀναιρούμενα σταναναιρεῖ τὰ εἶδη, ὧν ἐστὶν ἴδια, ὥστε καὶ ὧν ἐστὶν ἴδια ἀναιρουμένων καὶ αὐτὰ σταναναιρεῖται (Porph. 16.16-18):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1 ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտողները բազմիցս նշել են Աստվածաշնչի թարգմանության դասական բնույթը, որով պայմանավորված՝ հունարենի լեզվական ազդեցությունը նվազագույն է եղել:

Ս. Կոզյանը որպես «խիստ հայկաբան» է որակել Մակաբայեցիների երկրորդ գրքի հայերեն թարգմանությունը²⁷⁶. այդ հանգամանքը, ինչպես և թարգմանության սխալները, նա բացատրում է «անկատար հունագիտությամբ», և անվանում այն «ազատ թարգմանություն»²⁷⁷: Կոզյանն իր գրքում բերում է նկարագրական թարգմանության բազմաթիվ օրինակներ՝ առանձնացնելով դրանց թվում «կրկին» թարգմանությունները, որոնք հավանաբար լուսանցքից հետագայում թափանցել են տեքստի մեջ, իսկ պատճառն այն է, որ թարգմանիչը հաճախ չի կարողացել հունարեն բառի զանազան իմաստներից ընտրել «հարմարագույնը» և միանգամից բոլորն է նշել, կամ էլ, առաջին թարգմանությունից դժգոհ, կցել է մի երկրորդը²⁷⁸: Անուղղակի խոսքի բոլոր դեպքերն ուղղակի են վերածված²⁷⁹:

Գ. Կյուլանդեն՝ «Ճշգրտությունը և հնարամտությունն Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ» հոդվածում²⁸⁰ նշում է, թե թարգմանիչներն ավելի շատ հարգել են իմաստը, քան ձևը՝ նախապատվությունը տալով բնագրի ոգուն և ոչ տառին: Իր այդ կարծիքը նա ամրապնդում է հետևյալ փաստերով. հունարեն բազմիմաստ բառերը թարգմանվել են կոնտեքստից ելնելով (σπέρμα – «սերմ», «զաւակ», ἀσθενής – «հիւանդ», «տկար», παῖς – «մանուկ», «մանկուի», «ծառայ», «որդի», μονογενής – «ուսուր միածին» (խոսքը մարդու մասին է՝ ՂԿ. է 12) և «որդի միածին» (Աստծո մասին է՝ Յովհ. Ա 14), πνεῦμα – «հոգի», «այս», «հոգի» կամ «ոգի»), հունարեն կոյնեին հատուկ՝ համեմատության երկրորդ մասի παρά և ὑπέρ նախդիրները (դասական ἦ – «քան» չաղկապի փոխարեն) միշտ թարգմանվել են հայերենի համար կանոնավոր «քան»-ով, հունարեն հոգի և գոյականի միջև ներմուծված մակ-

²⁷⁶ ԿՈԳԵԱՆ 1923, 74. Ըստ հեղինակի՝ թարգմանությունն իրականացվել է 432 (Եփեսոսի ժողովից հետո) և 450 թվականների միջև, քանի որ այն հիշատակում է եղիշեն. ԿՈԳԵԱՆ, 1923, 15:

²⁷⁷ ԿՈԳԵԱՆ 1923, 75:

²⁷⁸ ԿՈԳԵԱՆ 1923, 8. այդպիսի 21 դեպք տե՛ս էջ 9-14. հմտ., օրինակ, «զկուռս քանդակեալս, պատկերս կերպարանեալս» (Բ Մկ Բ 2) – ἀγάλματα (2Ma 2:2), որն Աստվածաշնչի մեկ այլ հատվածում (Եսթ. ԺԹ 9) թարգմանված է «պատկեր», «զյայտնութեան վճիռն» (Բ Մկ Բ 23) – τὸ διεγνώσμενον (2Ma 3:23), «խոստովան լինէին և փառաւորէին» (Բ Մկ Ը 27) – ἐξομολογούμενοι (2Ma 8:27), «զրամածողով ի վարձս» (Բ Մկ ԺԱ 3) – ἀργυρολόγητον (2Ma 11:3՝ «զրամածողով»-ը հունարեն բառի պատճենումն է):

²⁷⁹ ԿՈԳԵԱՆ 1923, 77:

²⁸⁰ CUENDET 1935, 563-570:

բայր թարգմանելիս բառերը տեղափոխվել են՝ ἀπελθόντες εἰς τοὺς κύκλῳ ἀγροῦς (Mk. 6:36) – «Երթեալ շուրջ յագարակս» (Մկ 2 36), կամ մակբայը փոխարինվել է ածականով՝ εἰς τὰς ἔξω πόλεις (Act. 26:11) – «յարտաքին քաղաքսն» (Գծ ԻԶ 11), հունարեն հոգը փոխարինվել է հարաբերական դերանվամբ՝ ἀγουσιν αὐτὸν πρὸς τοὺς φαρισαίους, τὸν ποτε τυφλόν (Jn. 9:13) – «ածէին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյր էր» (Յովհ. Թ 13): Դերբայի դիմաց դիմավոր բայ օգտագործելիս՝ հայ թարգմանիչները որոշակի պատկերացում էին տալիս դեպքերի ժամանակային հաջորդականության մասին, մինչդեռ հունարենում այն այդքան ակնհայտ չէ՝ πληγὰς ἐπιθέντες ἀπῆλθον ἀφέντες ἡμιθανῆ (Lk. 10:30) – «վէրս ի վերայ եղին, թողին կիսամահ և զնացին» (Ղկ. Ժ 30):

Հունարեն Ավետարաններում և դրանց գոթերեն, հայերեն ու հին սլավոներեն թարգմանություններում շարադասությունը նվիրված իր հետագոտություն մեջ²⁸¹ նույն հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տվել, թե ինչպես այս կամ այն տիպի բառակապակցություններում հունարենի շարադասությունը հետևելը կամ չհետևելը պայմանավորված է զուտ հայերենի ներքին տրամաբանությամբ:

Սկարդելլին²⁸² խոսում է Ավետարանների թարգմանիչներին՝ բնագրին հարազատ մնալու ճիգերի և մյուս կողմից՝ դրան հասնելու լեզվական դժվարությունների մասին, ինչը բերում էր հունարեն սկզբնագրից որոշակի տարբերությունների: Դրանք պայմանավորված էին կամ ներքին դժվարություններով, կամ տեքստը մեկնաբանելու միտումով²⁸³: Սկարդելլին ուշադրություն է դարձնում թարգմանության բազմազանության՝ միևնույն բառերը, քերականական դարձվածներն ու արտահայտությունները տարբեր եղանակներով թարգմանելու վրա. օրինակ՝ հունարեն ἄρτος բառի համար օգտագործվել են «հաց» (Մթ. Դ 4) և «նկանակ» (Մթ. ԺԵ 34) համարժեքները, կամ հմմտ. τί πρὸς σέ (Jn. 21:22) – «քեզ զի փոյթ է» (Յովհ. ԻԱ 22): Իսկ τὰ τῶν δαιμονιζομένων (Mt. 8:33) – «զիրս դիւահարացն» (Մթ. Ը 33) մեկնողական թարգմանությունը²⁸⁴ զուգահեռ առկա է նման մի արտահայտության ավելի բառացի թարգմանությունը՝ οὐ φρονεῖς τὰ τοῦ θεοῦ ἀλλὰ τὰ τῶν ἀνθρώπων (Mt. 16:23) – «ոչ խորհիս զաստուծոյսն, այլ զմարդկան» (Մթ. ԺԶ 23)²⁸⁵:

Երկրորդումն Օրինաց գրքի հրատարակությունը կից իր ուսումնասիրության մեջ Կլոդ Կոքսը մի գլուխ է նվիրել թարգմանչի մեթոդի նկարագրությանը²⁸⁶: Թարգմանությունը դասական է՝ դերբայների դիմաց հաճախ դիմավոր

²⁸¹ CUENDET 1929. Կյուանդեի գրքի «Հայապատկան մասերու ամփոփումը» տե՛ս ՎԱՐ-ԴԱՆԵԱՆ 1929-1931:

²⁸² SCARDIGLI 1959:

²⁸³ SCARDIGLI 1959, 378:

²⁸⁴ Հունարեն հոգը (τῷ) գոյականացրել է սեռական հոլովով բառը. «զիրս» գոյականը դրա ոչ բառացի, մեկնողական թարգմանություն է:

²⁸⁵ Հմմտ. նման արտահայտությունները բառացի թարգմանելու մյուս դեպքերը՝ Գ 24:

²⁸⁶ COX 1981, 223-241: “Characteristic of the translator”:

բայեր են (Հատկապես λέγων – «ասելով» – «(և) ասէ»²⁸⁷), իսկ որոշ չի առումով կիրառվող դերբայների դիմաց՝ Հարաբերական նախադասություններ, հունարեն ներկա ժամանակով հանդես եկող բայերն ըստ իմաստի երբեմն թարգմանվում են ապառնիով, թարգմանիչը սիրում է ավելացնել դերանուններով արտահայտված ենթականեր, ազատորեն ներմուծում կամ բաց է թողնում «և» շաղկապը, «ահա», «արդ», «այլ», «իսկ», «զի», «աւադիկ», «երբեմն» «մասնիկները», ազատորեն փոխում բառերի դասավորությունը: Կոքսը նշում է նաև մեկնողաբար թարգմանելու հետաքրքրական դեպքեր (օրինակ՝ οὗτος καταφέυγεται (Deut. 19:5) – «փախիցէ նա և անկցի» (Բ Օր. ԺԹ 5), προσπορεύεσθε (Deut. 20:3) – «նստեալ պաշարեսցէ» (Բ Օր. Ի 3), θάλλῃ (Deut. 22:6) – «ջեռեալ նստիցի» (Բ Օր. ԻԲ 6), βιασάμενος (Deut. 22:6) – «բռնաբար» (Բ Օր. ԻԲ 25), περικαθαριῖ (Deut. 30:6) – «պարուրեսցէ» (Բ Օր. Լ 6)) և այն փաստը, որ թարգմանիչը խիստ համարժեքների չի դիմում և բազմազանում է իր բառապաշարը (ἐῖπον – «ասեմ», «խօսիմ», «խոստանամ», ἀφανίζω – «եղծանեմ», «բառնամ», «սատակեմ», ἰμάτιον – «հանդերձ», «ծորձ»), կամ ընդհակառակը՝ տարբեր բառեր թարգմանում է միևնույն բառով («անկանիմ» – παραπορεύεσθαι, διαπίπτω, «հանճար» – σύνεσις, «հանճարեղ» – ἐπιστήμων), ածականի դիմաց էլ հաճախ օգտագործում է համապատասխան գոյականը սեռական հոլովով:

Պ. Քառլին մի մեծ հոգիված է նվիրել «Մնացորդաց» գրքի երկու թարգմանությունների բաղդատությանը²⁸⁸: Վիճարկելով նախորդ հետազոտողների կարծիքն այն մասին, թե Զոհրապյանի Աստվածաշնչում տեղ գտած տարբերակից զանազանվող՝ Գր. Խալաթյանցի հրատարակած տեքստը թարգմանված է ասորերենից²⁸⁹, Քառլին ապացուցում է, որ թարգմանությունը կատարված է հունարեն բնագրից, սակայն թարգմանչական մեթոդի ավելի վաղ փուլ է ներկայացնում: Եթե կանոնական Աստվածաշնչի մեջ մտածը ճշգրիտ ու հարազատ թարգմանություն է²⁹⁰, ապա այս վաղ թարգմանությանը հատուկ են մեկնաբանության տարրեր²⁹¹, նրանում նկատվում է զուգահեռ հատվածների փոխադրեցություն²⁹², առկա են մեկ բառը երկու բառով թարգմանելու դեպքեր («դուբլետներ»)²⁹³, նրա թարգմանիչը խուսափում է նպատակի պարագա

²⁸⁷ Հմմտ. պարագայի առումով դերբայական դարձվածները (Գ 4դ) համադաս նախադասություններով թարգմանելու դասական եղանակ 1:

²⁸⁸ COWE 1990-91:

²⁸⁹ ԽԱԼԱԹԵԱՆՑ 1899: Այդ տեսակետի կողմնակիցն էր նաև Մառը. տե՛ս MAPP 1995:

²⁹⁰ COWE 1990-91, 62, Հմմտ. նաև 92: Այս թարգմանության մեջ կան հունարենից պատճենված նոր բառեր. այդ առիթով Քառլին գրում է, որ բառապատճենման սկզբունքի որդեգրումը հեշտացրեց հետագայում նախածանցավոր բառերի և այլ հունաբան կազմությունների կերտումը:

²⁹¹ COWE 1990-91, 73:

²⁹² COWE 1990-91, 74:

²⁹³ COWE 1990-91, 78. «ուղղեցաւ աջողեցաւ սպաս պաշտաման» (Մնաց. ԼԵ 10) – καθορθώθη ή λειτουργία (Para. 35:10), «զաւրացոյց զնոսա և հաստատեաց» (Մնաց. ԼԵ 2) – κατίσχυσεν αὐτοὺς (Para. 35:2), «ըստ պատուիրանի հրամանի արքային» (Մնաց. ԼԵ 16) – κατὰ τὴν ἐντολὴν τοῦ βασιλέως (Para. 35:16):

անորոշ դերբայ կիրառելուց²⁹⁴, հարադիր բայեր է օգտագործում այնտեղ, որտեղ կանոնական թարգմանություն մեջ պարզ բայեր են²⁹⁵, կանոնական թարգմանության հոգի դիմաց հաճախ օգտագործում է տեղի մակբայ²⁹⁶, հաճախ անձնական դերանուն է ներմուծում այնտեղ, որտեղ հունարենի և մյուս թարգմանության մեջ ենթական արտահայտված չէ, ներմուծում է «ինչ» անորոշ դերանունը և դիմում ոչ բառացի թարգմանության այլ հնարքների²⁹⁷: Երկրների անունների փոխարեն նա հաճախ օգտագործում է բնակիչների անունը՝ սեռական հոլովով²⁹⁸:

Յուլյց տալով նաև, որ խնդրո առարկա թարգմանության մեջ կան արտահայտություններ, որոնք կարելի է գտնել վաղ շրջանի հայ հեղինակների երկերում²⁹⁹, Քաուլին այն բնորոշում է որպես բնիկ հայկական բառօգտագործման առավել վստահելի «վկա»³⁰⁰, որպես վերապատում, որը հիշեցնում է Փավստոս Բուզանդի ոճը³⁰¹ և ունի գուսանների արվեստում կիրառվող պատրաստի բանաձևեր³⁰²:

Կանոնական թարգմանության առիթով Քաուլին գրում է, որ թարգմանիչների նոր սերունդն ավելի տառացիություն կողմնակից էր, քան նախորդները. Կոստանդնուպոլսում և այլ կենտրոններում հունարեն սովորած լինելով՝ նրանք ավելի հակված էին քերականական կատեգորիաների ձևական ընդօրինակմանը: Նրանք պատրաստ էին հեռանալ սովորական հայերեն խոսքից՝ մոտեցնելով այն հունարենին³⁰³: Ճիշտ է, երկրորդ թարգմանությունն էլ, հունարենին հարազատ լինելով հանդերձ, նման չէ ստրկականի. նույն բառերը նրանում կոնտեքստի թելադրանքով ստացել են տարբեր համարժեքներ (οἶκος – «տուն», «տաճար», ἵσταναι – «կացուցանել», «հաստատել»)³⁰⁴, կամ ընդհակառակը, տարբեր հունարեն բառեր կարող են թարգմանվել միևնույն բառով (ἡγέρθησαν – «յարեան» և ἀνέστη – «յարեալ», κατὰ τὴν κρίσιν – «ըստ օրինին» և τοῦ νόμου – «օրինացն», προσάγειν, ἀναφέρειν, ἐνεργεῖν – «մատուցանել»), իսկ հունարեն եզակի բայը, որը համաձայնեցված է հա-

²⁹⁴ COWE 1990-91, 85՝ «(և յղեցին) աւետաւորս» (Մնաց. Ժ 9՝ մյուս թարգմանության մեջ՝ «աւետարանել») – τοῦ ἐναγγελίσασθαι (Para. 10:9):

²⁹⁵ COWE 1990-91, 86՝ «պատերազմ տային» (Մնաց. Ժ 1՝ մյուս թարգմանության մեջ՝ «պատերազմեցան») – ἐπολέμησαν (Para. 10:1):

²⁹⁶ COWE 1990-91, 87-88՝ «ի վաղիւ անդր», կանոնական թարգմանության մեջ՝ «ի վաղիւն» (Մնաց. Ժ 7):

²⁹⁷ COWE 1990-91, 88, օրինակ՝ «որ գրեալ է» (Մնաց. Լե 19) – τοὺς γεγραμμένους (Para. 35:19), կանոնական թարգմանության մեջ բառացի է՝ «զգրեալն»:

²⁹⁸ COWE 1990-91, 88, օրինակ՝ «արքայն եգիպտացւոց» (Մնաց. Ժե 19) – βασιλεὺς Αἰγύπτου (Para. 15:19), կանոնական թարգմանության մեջ՝ «արքայ եգիպտոսի», հմմտ. նույն երևույթը Մակաբայեցիների երկրորդ գրքում՝ ԿՈՒԵԱՆ 1923, 76:

²⁹⁹ COWE 1990-91, 86:

³⁰⁰ COWE 1990-91, 87:

³⁰¹ COWE 1990-91, 88:

³⁰² COWE 1990-91, 89:

³⁰³ COWE 1990-91, 91:

³⁰⁴ COWE 1990-91, 60:

մազոր ենթականերից առաջինի հետ՝ թարգմանվել հոգնակի բայով՝ ἀπέθανεν Σαούλ καὶ οἱ υἱοὶ αὐτοῦ – «մեռան Սաուլը և որդիքն նորա» (Ժ 2)³⁰⁵:

Մ. Զինբաշյանը, «Դասական Հայերենի թարգմանության եղանակները Ծննդոց գրքում»³⁰⁶ մենագրության մեջ, ասորերենից առաջին թարգմանությունների հետքերը Ծննդոց գրքում ցույց տալուց հետո³⁰⁷, մանրամասն ուսումնասիրել է նրա հարաբերությունները հունարեն բնագրի հետ, հատկապես հունարեն տարբեր շարահյուսական կառույցների և քերականական ու ոճական առանձնահատկությունների արտահայտումները հայերենում: Զինբաշյանի ձեռնարկած բաղդատությունը ծանոթանալիս՝ ընթերցողը համոզվում է, որ թարգմանիչը ձգտել է արտացոլել նախադասությունների ոչ թե արտաքին ձևը, այլ ներքին իմաստը, ինչը բերել է թարգմանության բազմազանությունը: Ամփոփելով հեղինակը նշում է³⁰⁸, որ տարբեր մասնիկների, դերանունների ու մակբայների օգնությամբ հայերենը ճշգրտում է մտցնում, ինչը բացակայում է հունարենում և ասորերենում: Հաճախ բնագրի համադասությունը փոխարինված է ստորադասությամբ, իսկ մասնիկներն ու դերանունները նպատակ ունեն ցույց տալու նախադասությունների տրամաբանական փոխհարաբերությունները: Ժամանակային հարաբերություններն ավելի բացահայտ են դարձել, ինչը նպաստում է հստակեցնելու, թե ով ինչ է արել, երբ և որտեղ: Թարգմանությունը վկայում է նաև բառերի բազմիմաստությունը քաջատեղյակության մասին. մեկ բառը թարգմանվում է մեկից ավելի համարժեքներով՝ միապաղաղությունից խոսսափելու, նաև բառի տարբեր իմաստները տարբերակելու համար: Մյուս կողմից միևնույն հայերեն բառը կարող է հանդես գալ հունարեն տարբեր բառերի դիմաց:

Բաղդատության արդյունքներից առավել հետաքրքրական են հունարեն հատուկ շարահյուսական դարձվածների հայերեն արտահայտումները: Այսպես, ἔως + անորոշ դերբայ դարձվածը³⁰⁹ թարգմանվել է ավելի բառացի եղանակով՝ «մինչ(չ)և (ց)» + անորոշ դերբայ՝ καὶ ἕξελθών οὐχ ὑπέστρεψεν ἔως τοῦ ξηρανθῆναι τὸ ὕδωρ ἀπὸ τῆς γῆς – «և ել և անդրէն ոչ դարձաւ մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ» (Ծնն. Ը 7)³¹⁰, և ավելի ազատ՝ չաղկապին հետևող՝ ստորադասական եղանակի դիմավոր բայով՝ ἐν ἰδρωτί τοῦ προσώπου σου φάγη τὸν ἄρτον σου ἔως τοῦ ἀποστρέψαι σε εἰς τὴν γῆν – «քրտամբք երեսաց քոյ կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր» (Ծնն. Գ 19)³¹¹. ἐν τῷ ἀκοῦσαι (Ծնն. ԼԸ 15, ԻԴ 52) և ἐν τῷ ἰδεῖν (Ծնն. ԽԴ 31) տի-

³⁰⁵ COWE 1990-91, 61:

³⁰⁶ JINBACHIAN 1998:

³⁰⁷ JINBACHIAN 1998, 32-74:

³⁰⁸ JINBACHIAN 1998, 302-303:

³⁰⁹ Հմմտ. Գ 6դ2:

³¹⁰ JINBACHIAN 1998, 184-185. Հմմտ. նաև Ծնն. Լ Գ 3:

³¹¹ JINBACHIAN 1998, Հմմտ. նաև ԺԸ 22, ԻԴ 11, ԻԷ 44, ԻԸ 15, Լ Գ 14, ԼԴ 5, ԼԸ 17, ԼԹ 16, ԽԱ 49, ԽԲ 16, ԽԴ 12, ԽԹ 10, ԽԳ 25, ԽԸ 8 (ընդամենը 14 դեպք):

պի արտահայտությունները³¹² թարգմանված են ժամանակի պարագա երկրորդական նախադասություններով՝ «Իբրև լուալ թէ», «Իբրև ոչ տեսանիցէ»:

Հունարեն Մենդոց գրքում հանդիպում է «բացարձակ սեռական» դարձվածի տասն օրինակ. յոթը թարգմանված են ժամանակի (հինգը՝ «մինչդեռ/մինչ», երկուսը՝ «Իբրև» շաղկապով), երկուսը՝ պայմանի («եթէ» շաղկապով) պարագա երկրորդական նախադասություններով, մնացածները թարգմանությունը շատ ճշգրիտ է:

Գ. Սարգսյանը, քննելով Աստվածաշնչում հունարեն κῶμη («գյուղ») և ἀγρός («դաշտ», «ագարակ») բառերի տարբեր թարգմանությունները, եկել է այն համոզման, որ դրանք մեխանիկական չեն, այլ համապատասխանում են կոնտեքստից բխող իմաստին³¹³:

Հր. Բարթիկյանը, բաղդատելով Մատթեոսի Ավետարանն իր հունարեն սկզբնագրի հետ, նկատել է հունարեն միևնույն բառը տարբեր բառերով և հունարեն հոմանիշները հայերեն միևնույն բառով թարգմանելու դեպքեր (ինչի հիման վրա նա ենթադրում է, որ թարգմանիչների ձեռքին բառարան չի եղել), ազատ թարգմանության, հունարենի քերականության առանձնահատկությունները հայերենի քերականական միջոցներով արտացոլելու օրինակներ³¹⁴:

Թարգմանության ազատ կամ բառացի բնույթն արտահայտվել է նաև շարադասության մեջ: Եվ չնայած դասական շրջանի թարգմանությունների թվում Աստվածաշնչին աչքի է ընկնում իր ճշգրտությամբ և, ինչպես ցույց է տվել Ռոդեսը, Նոր Կտակարանում կան հունարենի շարադասությունը պատճենող բազում նախադասություններ, այստեղ դիտվում են որոշակի սահմանափակումներ: Օրինակ, կապակցված բառերը խուսափում են իրենց միջև օտար տարրերի ներմուծումից:

«բազմութիւն ժողովրդեան կային յաղաւթս» (Ղկ. Ա 10) – πλῆθος ἦν τοῦ λαοῦ προσευχόμενον (Lk. 1:10)՝ բառերը տեղափոխված են հունարենի համեմատ՝ 13425,

«զամենայն զբանս զայսոսիկ պահէր» (Ղկ. Բ 19) – πάντα συνετίζει τὰ ῥήματα ταῦτα (Lk. 2:19)՝ բառերը տեղափոխված են հունարենի համեմատ՝ 13452,

«վասն իրացն հաստատելոց ի մեզ» (Ղկ. Ա 1) – περὶ τῶν πεπληροφορημένων ἐν ἡμῖν πραγμάτων (Lk. 1:1)՝ բառերը տեղափոխված են հունարենի համեմատ՝ 126345:

Ռոդեսը նկատել է, որ շեշտազուրկ և օժանդակ բառերն անմիջապես հետևում են այն բառին, որից կախման մեջ են:

«այս նշանակ ձեզ» (Ղկ. Բ 12) – τοῦτο ὑμῖν σήμειον (Lk. 2:12)՝ բառերը տեղափոխված են հունարենի համեմատ՝ 132,

³¹² Հմմտ. Գ 641:

³¹³ ՍԱՐԳՍՅԱՆ 1990, 28:

³¹⁴ ԲԱՐԹԻԿՅԱՆ 2002, 15-36:

«ի քաղաքի ուրեմն» (Ղկ. ԺԸ 2) – ἔν τινα πόλει (Lk. 18:2)՝ բառերը տեղափոխված են հունարենի համեմատ՝ 132³¹⁵:

* * *

Մեր ուշադրությունը գրավել են դասական թարգմանություններում հունարենի առանձնահատկությունների ոչ բառացի թարգմանության և այլ դեպքերը:

Ներկա ժամանակով բայերի ըստ իմաստի թարգմանությունն ապառնի ժամանակով՝ «որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, եւ սպանցեն զնա» (Մկ. Թ 30) – Ὁ υἱὸς τοῦ ἀνθρώπου παραδίδοται εἰς χείρας ἀνθρώπων, καὶ ἀποκτενοῦσιν αὐτόν (Mk. 9:31՝ հունարեն առաջին բայը ներկայով է՝ թարգմանված «մատնելոց է» ապառնիով, իսկ «սպանցեն» բայի համարժեք բայն ապառնիով է), «Դո՞ւ ես որ գալոցն ես» (Մթ. ԺԱ 3) – Σὺ εἶ ὁ ἐρχόμενος/ (Mt. 3:2՝ հունարենում ներկա ժամանակի դերբայ է):

Դասական շրջանում թարգմանված կարևոր հուշարձան է այսպես կոչված «Նիկիական»՝ Նիկիայի տիեզերական և Անկյուրայի, «Կեսարիայի»³¹⁶, Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լատրիկի տեղական ժողովների կանոնների ժողովածուն, որոնք կազմում են «Հայոց Կանոնագրքի» ամենավաղ թարգմանական շերտը: Չնայած հայերեն «Նիկիական» կանոնները մեզ են հասել ոչ նախնական՝ խմբագրված տեսքով, կան բավարար չափով զուգահեռ հատվածներ, որոնք թույլ են տալիս դատել թարգմանական տեխնիկայի մասին:

Այն աչքի է ընկնում որոշակի ազատություններ՝

ա) հաճախակի են բառերի տեղափոխությունները՝ τῶν ἐαυτῶν ἀνδρῶν ἀνεχώρησαν (Gangr. Prol. 79.20՝ 312) – «հեռացան յարանց իւրեանց» (Գանգր. նախ. 580), τὸν οἶκον τοῦ θεοῦ ἐκκαταφρόνητον εἶναι καὶ τὰς ἐν αὐτῷ συνάξεις (Gangr. V. 81.15-16) – «զտուն Աստուծոյ և որ ի նա ժողովն ժողովիցին արհամարհել» (Գանգր. Ե 194.1-2՝ 124563), εἰς τὸν πάντων ἔφορον καὶ κρίτην θεόν (Ant. XXIV. 49.20) – «յԱստուած, որ այցելուն է ամենայնի և օրէնսդիր դատաւոր» (Անտ. ԻԴ 220.6՝ 613245),

բ) երբեմն փոխված են բառերի քերականական կապերը՝ ἄξιον εὖρατο μισθόν (Socr. 33.23) – «ըստ արժանի գիւտի զհատուցումն չարեաց իւրոց» (Նիկ. Կոնստ. 131.10-11) (Հմմտ. Սոկր. 27 «զարժանն եգիտ վարձ»՝ բառացի թարգմանություն), γάμου συνοίκησιν σεμνήν (Gangr. epil. 83.17՝ «ամուսնության պարկեշտ կենակցություն») – «զամուսնութեան բնակութիւն պարկեշտ»

³¹⁵ RHODES 1977, 176-177:

³¹⁶ «Կեսարիայի կանոններ» գոյություն ունեն միայն հայերեն «Կանոնագիրք Հայոցում» (ՀԱԿՈՒՅԱՆ 1964 [Հրատ.], 168-176). այս կանոնախումբը բաղկացած է տասը կանոնից, որոնցից վեցը (Ա, Գ-Ե, Է, Թ) համապատասխանում է Անկյուրայի ժողովի վերջին վեց կանոններին (XX-XXV), մինչդեռ Անկյուրայի հայերեն կանոնները միայն քսանն են, տես ՇԻՐԻՆՅԱՆ – ՄՈՒՐԱԴՅԱՆ 2000, 211:

սուլթեամբ» (Գանգր. վերջ. 200.5), τῷ ἀγίῳ χρίσματι (Laod. VII.73.9՝ «սուրբ օծմամբ») – «զաւծումն սրբութեան» (Հաւոդ. է 230.6-7), αὕτη γὰρ πρώτη κατάγνωσις παρὰ τοῖς ἔθνεσιν (Laod. XXX.75.24՝ «քանզի սա է առաջին մեղադրանքը հեթանոսների մոտ») – «զի նախ այսու մեղադրեն զմեզ հեթանոսք» (Հաւոդ. է 236.1),

դ) որոշի առումով և գոյականցված դերբայները սովորաբար թարգմանված են հարաբերական նախադասություններով՝ τῶν ὀνομαζόντων ἑαυτοὺς καθαρούς (Nic. VIII. 30.3-4) – «ոյք անուանեն զինքեանս... սուրբ» (Նիկ. Հ 121.12), Πορφύριος... συστησάμενος (Socr. 33.22-24) – «Պորփիրիոս... հաստատեաց» (Նիկ. Կոնստ. 131.8-9, հմտ. Սոկր. 27 «Պորփիրիոս... կանգնեալ»), παρὰ πρεσβυτέρου γεγαμηκότος (Gangr. IV.81.12) – «յերիցուէ, որ ամուսնացեալ իցէ» (Գանգր. 193.12), τοῦ ἐγκεχειρισμένου τὰ τοιαῦτα (Gangr. VII.81.23) – «որ ձեռնադրեացն զայնպիսին» (Գանգր. 194.7-8), τοὺς τολμῶντας τούτοις κοινωνεῖν (Ant. I.43.21) – «որք սոցին հաւասարել համարձակեցան» (Անտ. Ա 206.1), πάντας τοὺς εἰσιόντας (Ant. II.43.24) – «ամենեքին, ով և մտանիցեն» (Անտ. Բ 206.6),

դ) պարագայի առումով կիրառված դերբայները հաճախ թարգմանված են ստորոգյալին համադաս զիմավոր բայով՝ καθαιρεθεῖς... τολμήσειε (Ant. IV.44.16-17) – «որոշեցաւ և համարձակեցաւ» (Անտ. Դ 208.8-9), φωραθείη (ընթերցվել է ὠραθείη) κρύψας (Socr. 34.7-8) – «տեսանիցի առ ումեք կամ իբրեւ թաքոյց» (Նիկ. Կոնստ. 132.8-9, հմտ. Սոկր. 27 «ուռնիցի... թաքուցեալ ինչ»), καταφρονῶν... ἐθέλοι (Gangr. VI.81.18) – «և արհամարհիցեն... և կամիցին» (Գանգր. Զ 194.4), ἐγκρατεύοιτο... ἀναχωρήσας (Gangr. IX.81.28-29) – «պահեն... և հեռանայցեն» (Գանգր. Թ 194.13-14), պարագա երկրորդական նախադասությամբ՝ ἀποδεχόμεθα, οὐ συγκλείοντες (Gangr. epil. 83.23-24) – «ընդունիմք, իբրեւ ոչ փակեմք կամ զրաւեմք» (Գանգր. վերջ. 200.11), «ի» նախդրի հետ անորոշ դերբայով՝ ἐπιστρέφοντας... κατηχεῖσθαι (Laod. VIII.73.12-14) – «ի դառնալն իւրեանց... ուսցին» (Հաւոդ. Հ 230),

ե) «բացարձակ սեռականը» թարգմանված է ժամանակի կամ տեղի պարագա երկրորդական նախադասություններով՝ γινομένων εὐχῶν (Gangr. Prol. 80.11) – «ուր լինէր աղաւթք» (Գանգր. նախ. 580), μὴ συνόντος τοῦ πρεσβυτέρου (Gangr. VI.81.19) – «իբրեւ ոչ իցէ երէցն» (Գանգր. Զ 194.4-5), συνόδου γενομένης (Ant. VI.45.3) – «յորժամ ժողով լինիցի» (Անտ. Զ 210.1), համադաս նախադասություններով՝ τῶν μὲν ἀθῶον τὸν κρινόμενον ἀποφαινόντων, τῶν δὲ ἔνοχον (Ant. XIV.47.6-7) – «եւ ոմանք ի նոցանէ անպարտ եւ արդար յայտ առնել կամիցին եւ ոմանք ի նոցանէ պարտաւորել» (Անտ. ԺԴ 214.13-215.1),

զ) որոշ քերականական կապեր արտահայտված են բառիմաստներով՝ τὰ τῆς ἐκκλησίας (Gangr. VI.81.18) – «զեկեղեցւոյ պէտս» (Գանգր. Զ 194.4), κατὰ τῆς ἐκκλησίας (Gangr. Prol. 79.25) – «զկարգս եկեղեցւոյ» (Գանգր. նախ. 580):

Մեր ուսումնասիրած՝ դասական շրջանում կատարված թարգմանություններից է զանազան իրական ու առասպելական կենդանիների վարք ու բարքին նվիրված «Բարոյախօս» ժողովածուն (Հունարեն Physiologus³¹⁷), որի լեզվական առանձնահատկությունները³¹⁸ հետևյալն են՝

ա) Բոլոր նախածանցավոր բառերը թարգմանված են ոչ տառացիորեն՝ հունարեն բառի կառուցվածքը չարտացոլող բառով, օրինակ՝ ἀντικείμενος – «Հակառակորդ» (Phys. 3.8, 5.6, 16.9, 17.7, 20.13, 31.8), կամ բառակապակցություն՝ օրինակ, συμπλέκεται – «շաղեալ կայ» (Phys. 3.6), καταβάλλει – «արկան է խոնարհ» (Phys. 17.4):

բ) Տասներեք բարդ բառ թարգմանված է բառացիորեն, օրինակ՝ σαρκόφαγος – «գիշակեր» (Phys. 23.3), λεπτοκλόνος – «մանրոստ» (Phys. 3.5), որոնց դիմաց արձանագրել ենք նկարագրական թարգմանության տասնվեց դեպք՝ պարզ բայով կամ բառակապակցությամբ. σῶφρων – «ցած» (Phys. 21.8), ἐὺωδία – «Հոտ անոյշ» (Phys. 19.8), ἑτεροδόξων – «աւտարաւտի ուսմանց» (Phys. 15.15):

գ) Նկարագրական թարգմանության այլ արտահայտումներ են հունարեն «ունենալ» բայի դիմաց սեռական կամ տրական հոլովի³¹⁹ հետ հական բայի կիրառությունը. (ὁ λέων) τρεῖς φύσεις ἔχει – «երեք բարք են առիւծու» (Phys. 2.3), նաև οἱ ἄνω – «վերին զուարթունք» (Phys. 2.9),

դ) ինչպես նաև հետևյալ դեպքերը՝ ἐπαινετά – «բարի» (Phys. 6.18)՝ բառացի կլիներ «գովելի», ψεκτά – «չար» (Phys. 6.18)՝ բառացի կլիներ «պարսաւելի», τοὺς πατέρας («ծնողներին», բառացի՝ «հայրերին») – «հայրն և մայրն» (Phys. 13.7), κατὰ κάρυν ἐστιν τὴν περιφέρειαν ἔχων («ընկույզի նման է՝ ունենալով կորություն») – «ընկույզազարդ է բոլորակ» (Phys. 22.4), λαμβάνεται ἢ θάλασσα ἐπὶ τὴν κόσμον («ծովը հասկացվում է աշխարհի առումով») – «ծովն աշխարհիս աւրինակ է» (Phys. 5.5), πρόσωπον λαμβάνει τοῦ Σωτῆρος («խորհրդանշում է փրկչին», բառացի՝ «փրկչի անձն է ընդունում») – «զաւրինակն բերէ կենարարին» (Phys. 6.7, 10.10), οἱ τοιοῦτοι... πρόσωπον λαμβάνουσι – «այսպիսիքն... աւրինակ բերեն յինքեան» (Phys. 16.9), φέρεται εἰς πρόσωπον τοῦ Σωτῆρος («բերվում է ի դեմս փրկչի») – «բերիցի աւրինակ Քրիստոսի» (Phys. 6.15):

ե) Այս փոքրածավալ տեքստում տասներեք անգամ մեկ բառը թարգմանվել է երկու հոմանիշով (տե՛ս հավելված 2), իսկ թարգմանության վաղ լինելու մի մասնավոր ապացույց է ավելի ուշ թարգմանություններում սովորական դարձած σωτήρ – «Փրկիչ», φύσις – «բնութիւն», φυσιολόγος – «բնախաւս», σῶφρων – «ողջախոհ» համարժեքների բացակայությունը: Դրանց փոխարեն ունենք σωτήρ – «կենարար» (Phys. 6.7, 8.3, 8.5, 13.7, 19.10, 28.6, 29.5, 32.4, 33.4,

³¹⁷ Նշում ենք պարբերությունները՝ ըստ մեր պատրաստած երկլեզվյան հրատարակության՝ MURADYAN 2005 (ed.):

³¹⁸ Մանրամասն տե՛ս MURADYAN 2005 (ed.), 58-70:

³¹⁹ Հմմտ. Գ 146:

34.4)³²⁰, ὁ Σωτήρ σου – «որ զքեզ պահէր» (Phys. 2.5). միայն առանձին դեպքերում ժողովրդի թարգմանված է «փրկիչ» (Phys. 1.7, 22.13, 29.4), մեկ անգամ ժողովրդի դիմաց գտնում ենք «փրկիչ» և «կենարար» (Phys. 10.10) տարրեր/թերացումները, բազմիցս ավանդված են φύσις – «բարք» (տե՛ս, սակայն, φυσικόν – «բնական բարք» (Phys. 20.7)), φυσιολόγος – «բարոյախօս» համարժեքները:

զ) Սույն տեքստում «Հայցականն անորոշ դերբայի հետ» թարգմանված է տրական հոլովով ենթակայի հետ անորոշ դերբայով, «բացարձակ սեռականը»՝ համադաս նախադասությունը և «ի» նախդրի հետ անորոշ դերբայով, որոշչի առումով հանդես եկող դերբայը քսանհինգ անգամ թարգմանված է հարաբերական նախադասությունը և միայն հինգ անգամ՝ անցյալ դերբայով,³²¹ գոյականացված դերբայը երեք անգամ թարգմանված է գոյականով և մեկ անգամ հարաբերական նախադասությունը, իսկ պարագայի առումով կիրառված դերբայը տասնութ անգամ թարգմանված է հիմնական բային համադաս դիմավոր բայական ձևով («ամբառնայ զթևս և հակառակի ընդ նաւս» – ἡψοῖ τὰς πτέρυγας... ἐρίζον τοῖς πλοῖσις (Phys. 5.2)), ութ անգամ՝ ժամանակի ու պատճառի երկրորդական նախադասություններով (օրինակ. «ի գոչիւն հարկանի, քանզի զերծանել կամի» – κράζει βουλόμενον ἐκφυγεῖν (Phys. 3.6)), և ոչ մի անգամ՝ դերբայով³²²:

է) Միակ շարահյուսական հունաբանությունը հունարեն ὥστε + infinitivus-ի բառացի թարգմանությունն է՝ ὥστε πρίζειν τὰ δένδρα – «մինչև զծառս սղոցել» (Phys. 3.3, հմտ. Գ 6գ2), սակայն նույն դարձվածք երկու այլ դեպքերում թարգմանված է համադաս նախադասություններով (Phys. 3.2, 17.7):

Պետք է նշել, որ «Բարոյախօս» ժողովածուի նախնական խմբագրությունը (այն ունի ևս երկու խմբագրություն, որոնցից մեկը ներկայացված է երեք ենթախմբագրություններով) մեր համոզմամբ դասական չրջանի ամենավաղ թարգմանություններից է, ինչը հաստատվում է Եզնիկ Կողբացու, ինչպես նաև Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մաս կազմող «Վարդապետություն» հեղինակի՝ «Բարոյախօս»-ի տեքստին ծանոթ լինելու հավանականությունը³²³, ինչպես նաև նրա մեջ եղած տոմարական տվյալներով:

³²⁰ Հմտ. «աստուած կենարար» – ὁ θεὸς τοῦ σώζειν (Սաղմ. ԿԷ 21), «գաստուած կենարար իւրեանց» – τοῦ θεοῦ τοῦ σώζοντος αὐτοῦς (Սաղմ. ձԵ 21): Մառն այսպիսի թարգմանությունը համարում էր ասորաբանություն, տե՛ս MAPP 1894, XLII:

³²¹ Նոր Կտակարանի՝ մեր ուսումնասիրած հատվածում (Մթ. Ա, Բ) որոշչի առումով կիրառված հունարեն դերբայի դիմաց մեկ անգամ հանդիպում է անցյալ դերբայ (Ա 24), սակայն ավանդված է հարաբերական նախադասության վեց դեպք (Ա 16, Ա 20, Բ 2, Բ 15, Բ 16, Բ 17). հմտ. Գ 4ա:

³²² Մթ. Ա, Բ գլուխներում պարագայի առումով կիրառված դերբային չորս անգամ համապատասխանում է հիմնական բային համադաս, «և» շաղկապով կապակցված դիմավոր բայը (հմտ. «դարձան և ասեն» (Յովն. Գ 9) – ἀπέστρεψαν... λέγοντες (Յո. 3:9), նաև երեք անգամ՝ առանց շաղկապի), յոթ անգամ՝ ժամանակի կամ պատճառի երկրորդական նախադասությունը, նաև յոթ անգամ՝ անցյալ դերբայը, հմտ. Գ 4գ:

³²³ Եզնիկ Կողբացու հետ մեր գտած գուգահեռները համոզիչ չի համարում Ա. Օրենգոն. տե՛ս նրա մեր հրատարակությունը նվիրված գրախոսությունը՝ ՕՐԵՆԳՈՒ 2007, 309-310:

Այսպիսով, ինչպես վկայում են և՛ հրապարակի վրա եղած մի շարք հետազոտություններ, և՛ մեր դիտարկումները, դասական թարգմանություններում իմաստային ճշգրտության կողքին դիտվում է զգալի ձևական անկախություն սկզբնաղբից՝ պայմանավորված երկու լեզուների առանձնահատկություններով: Սակայն վերն արդեն ցույց է տրվել, որ այդ անկախությունը բացարձակ չի եղել. հունարենի ազդեցության՝ թեկուզ և չգիտակցված, առանձին դեպքեր նկատելի են և այս խմբի թարգմանություններում:

Ի լրումն սույն գրքում տեղ գտած «Բաղդատություն թարգմանության դասական եղանակի հետ» խորագրով ենթաբաժինների, որ կցված է բառացի թարգմանության եղանակները նկարագրող բաժիններից շատերին, հիշատակենք Վ. Կալցոլարիի ձեռնարկած քննությունը, որտեղ նա բաղդատել է պարականոն «Անդրեսի վարքը» Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» հունարեն թարգմանության հետ: Բաղդատության արդյունքները թույլ են տվել նրան բնորոշելու վարքը որպես դասական թարգմանություն. վերջինիս հատուկ են՝

«բացարձակ սեռականի» (Հմմտ. Գ 5) թարգմանությունը ժամանակի, պատճառի կամ նպատակի պարագա երկրորդական նախադասություններով (ինը դեպք), համադաս նախադասությամբ (մեկ դեպք), նախդրի հետ գոյականով (մեկ դեպք), սեռական ենթակայով ուղեկցվող անցյալ դերբայով (երկու դեպք) և «տեսուն ասելով» տիպի կապակցությամբ (երկու դեպք),

պարագայի առումով հանդես եկող դերբայի (Հմմտ. Գ 4գ) թարգմանությունը անցյալ դերբայով (երեսունյոթ դեպք, երեսունչորսում՝ դերբայն առանց հոլովական վերջավորության), գլխավորի հետ համադաս նախադասությամբ (տասներկու դեպք), ժամանակի, պատճառի կամ նպատակի պարագա նախադասություններով (ինը դեպք), ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններով (հինգ դեպք), անորոշ դերբայի գործիական հոլովով (երկու դեպք),

գոյականացված դերբայի (Հմմտ. Գ 4բ) թարգմանությունը հարաբերական նախադասությամբ (տասնմեկ դեպք), գոյականով (երկու դեպք), «իլ» բառով ուղեկցվող դերբայով (երկու դեպք),

անորոշ դերբայի թարգմանությունը «զի»-ով ներմուծվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ (հունարենում անորոշ դերբայը կախված է հրաման, հորդոր, ցանկություն, խնդրանք, հույս, խոստում արտահայտող բայերից՝ տասնմեկ դեպք), պարզ անորոշ դերբայով (երեսունից ավելի դեպք), գոյականով (գոյականացված անորոշ դերբայի դիմաց՝ մեկ դեպք),

«Հայցականն անորոշ դերբայի հետ» դարձվածի բառացի թարգմանություն («գոլ» և «լինել» անորոշ դերբայների դեպքում՝ երկու օրինակ, Հմմտ. Գ 6գ՝ Նոր Կտակարանում սույն դարձվածի բառացի հինգ թարգմանություններից չորսում «լինել» անորոշ դերբայն է),

նախածանցավոր պատճենումների իսպառ բացակայությունը. միայն երեք անգամ հունարեն նախածանցները թարգմանված են «ի բաց» մակբայով՝

ἀπολείπω – «ի բաց թողում», ἀφίστημι – «ի բաց կամ» և «զնամ ի բաց»³²⁴
(Հմմտ. Ա 1.2ա):

2 ԴԱՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ «ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՆՈՒՅՆԱՆԻՇ
ԲԱՌԵՐԻ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՈՃԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՈՒՆԱԲԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դասական թարգմանություններում բնագրի ոչ ձևական, նկարագրական
թարգմանության դրսևորումներից մեկը մեկ բառի իմաստը երկու (կամ ավելի)
բառերով արտահայտելն է (hendiadys): Թվում է՝ տեքստը մեկնաբանելու
միտումն այստեղ զուգակցվում է «նույնանիշ և հոմանիշ բառերի ավելա-
դրություն» ոճական ձևի³²⁵ հետ:

Մակաբայեցիների Բ գրքում նման օրինակներ է մատնանշել Կոզյանը՝

«զ... կործանեալսն... և զցրուեալսն» (Բ Մկ Բ 14) – τὰ διαπεπτωκότα (2Ma
2:14),

«քաղցրութեամբ, հեզութեամբ և խաղաղութեամբ» (Բ Մկ Բ 22) – μετὰ...
ἐπιεικείας (2Ma 2:22),

«մխել... ի դոյն թաթաւել» (Բ Մկ Բ 24) – εἰσκυκλεῖσθαι (2Ma 2:24),

«վասն թանձրութեան հիւթոյ, խորութեան բանիցդ» (Բ Մկ Բ 24) – διὰ τὸ
πλήθος τῆς ὕλης (2Ma 2:24),

«պղծեալ և գարշեցեալ» (Բ Մկ Ե 8) – βδηλυσσόμενος (2Ma 5:8),

«խոստովան լինէին և փառաւորէին» (Բ Մկ Ը 27) – ἐξομολογούμενοι (2Ma
8:27),

«զրամաժողով ի վարձու» (Բ Մկ ԺԱ 3) – ἀργυρολόγητον (2Ma 11:3),

«միջնաբերդին գԱկառանց» (Բ Մկ ԺԵ 31) – ἐκ τῆς ἄκρας (2Ma 15:31)՝
միևնույն հունարեն բառը թարգմանված է մեկ որպես հասարակ անուն, մեկ
որպես հատուկ,

«եռացոյց և եհեղ» (Բ Մկ Բ 12) – ἐξέβρασε (2Ma 2:12)³²⁶:

Աստվածաշնչից այլ օրինակներ մատնացույց է արել Մ. Մինասյանը³²⁷.

«անմուռնի անբարբառ» (Բ Մկ Գ 29) – ἄφωνος (2Ma 3:29),

«այ, սէգ, հպարտ և ամբարտաւան դու» (Բ Մկ Է 9) – σὺ, μὲν, ἀλάστωρ
(2Ma 7:9),

«անկան, կործանեցան» (Բ Մկ Ա 13) – κατεκόπησαν (2Ma 1:13),

«Նա առ, ընկալաւ զնա ի գիրկն իւր» (ՂԿ. Բ 28) – αὐτὸς ἐδέξατο αὐτὸ
εἰς τὰς ἀγκάλας (Lk. 2:28),

«ընտրեսցես առցես դու ընդ քեզ» (Թդթ. Բ 5) – λήμψη μετὰ σεαυτοῦ (Ju.
2:5),

³²⁴ CALZOLARI 1993:

³²⁵ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ 1976, 381-385. Հմմտ. նաև ԶԱԼԸՆԵԱՆ 1885, 466-468:

³²⁶ ՏԵՍ ԿՈԳԵԱՆ 1923, 9-14:

³²⁷ ՄԻՆԱՍԵԱՆ 1996, 468-471 (1016-1022):

«Ժողովեցան գումարեցան առ նա բնակիչք լեռնակողմանն» (Յեթ. Ա 6) – συνήντησαν πρὸς αὐτὸν πάντες οἱ κατοικοῦντες τὴν ὄρεινὴν (Ju. 1:6),

«Ժամանեաց, եհաս ամիսն եւթներորդ» (Եզդ. Գ 1) – Καὶ ἔφθασεν ὁ μὴν ὁ ἔβδομος (Esd. 3:1),

«Աստուած կայ մնայ յաւիտեան» (Սաղ. Թ 8) – ὁ κύριος εἰς τὸν αἰῶνα μένει (Ps. 9:8),

«անդէն վաղվաղակի» (Մկ. Ե 30) – εὐθύς (Mk. 5:30)³²⁸:

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկում մի շարք օրինակներ է մատնանշել Լ. Տեր-Պետրոսյանը³²⁹.

«կատարեալ կատարեցաւ» (Կիւրղ. Կոչ. 18) – ἐτελέσθη (PG 33.396),

«բայց սակայն» (Կիւրղ. Կոչ. 19) – πλὴν (PG 33.397),

«զիջանել ներել» (Կիւրղ. Կոչ. 21) – συγκαταβῆναι (PG 33.400),

«արդար ճշմարիտ» (Կիւրղ. Կոչ. 21) – δίκαιος (PG 33.400),

«առակ օրինակի» (Կիւրղ. Կոչ. 27) – ὑπογραμμός (PG 33.424),

«հաշիւ մաշիւ եւ հալէր» (Կիւրղ. Կոչ. 20) – ἐξέτεξε (PG 33.397),

«բրեաց հան ընկեց» (Կիւրղ. Կոչ. 25) – ἐξήνεγκεν (PG 33.405).

Դրանց թվում դեպքեր, որոնցում երկու հոմանիշներն էլ արտացոլում են հունարեն բառի կառուցվածքը՝

«վիշաբեր տատասկաբեր» (Կիւրղ. Կոչ. 13) – ἀκανθοφόρος (PG 33.389),

«ոսկիապատ ոսկիակուռ» (Կիւրղ. Կոչ. 20) – χρυσοκόλλητος (PG 33.397),

«համբաւակոծ ցնորակոծ առնել» (Կիւրղ. Կոչ. 312) – φαντασιασκοπέω (PG 33. 884),

«զիւղապուտ գերեզմանակրկիտ» (Կիւրղ. Կոչ. 402) – τυμβώρυχος (PG 33.1021),

«անասուն անբան» (Կիւրղ. Կոչ. 405) – ἄλογος (PG 33.1028):

Հետեւյալ օրինակներն արձանագրել ենք Եվսեբիոսի «Քրոնիկոնում»՝

«յարդարել յօրինել» – διατάξαι (Եւս. քր. ա 25),

«զհինգ աստեղս պատրանաց» – τοὺς πέντε πλανήτας³³⁰ (Եւս. քր. ա 26),

«որոյ կերպարանք կիսադից դիւցազանցն էին» – τὴν ἰδέαν ἡμιδαίμονα (Եւս. քր. ա 47),

«միաշուրթն համալեզու» – ὁμόγλωστος (Եւս. քր. ա 52):

³²⁸ Մ. Մինասյանի բերած օրինակների թվում կան այնպիսիք, որոնցում հոմանիշները հունարեն սկզբնաղբի հոմանիշների համարժեքն են եւ ոչ հայերենի ոճական առանձնահատկութեան արտահայտում՝ «կոծեցաւ զնա անդ կոծ մեծ եւ սաստիկ յոյժ» (Ծնն. Ծ 10) – ἐκόψαντο αὐτὸν κοπετὸν μέγαν καὶ ἰσχυρὸν σφόδρα (Gen. 50:10), «սպանին ք սուր սոււերի» (Ծնն. Ծ 10) – ἀπέκτειναν ἐν στόματι μαχαίρας (Gen. 34:26), «աղաղակեմք Աբբա՛, Հա՛յր» (Հռ. Ը 15) – κράζομεν, Ἀββα ὁ πάτερ (Rom. 8:15):

³²⁹ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1981, 44, 47: Հոգւածում ապացուցվում է, որ չնայած հայագիտութեան մեջ տարածված կարծիքին՝ խնդրո առարկա երկը թարգմանվել է ոչ թե ասորերենից, այլ հունարենից:

³³⁰ Հունարեն πλάνης (ἀστήρ) նշանակում է «թափառող (աստղ)», հմմտ. «մոլորակ», իսկ «պատրանաց» բառի մեջ արտահայտվել է փլանաւ բայի (որից կազմվել է πλάνης-ը) «ուղուց շեղել, շփոթեցնել, խաբել» իմաստը:

*Մեկ բառը երկուսով թարգմանելու եղանակը շատ տարածված էր «նրկհա-
կան» կանոններում և ուներ հետևյալ տարատեսակները.*

ա) համադաս զույգեր կամ եռյակներ՝ «և» շաղկապով.

«վիճակին և աշխարհին» (Նրկ. Զ 119.4) – τῆς ἐπαρχίας (Nic. IV. 26.8),

«առանց քննելոյ և փորձելոյ» (Նրկ. Թ 123.6) – ἀνεξέταστος (Nic. IX. 31.21),

«ոյք յանցեան և անցին զկարգաւք» (Նրկ. ԺԱ 124.4) – τῶν παραβάντων (Nic. XI. 32.19),

«ի մօր դնիցէ և ցանկանայցէ» (Նեոկ. Դ 180.13) – ἐπιθυμῆσαι (Neoc. IV. 35.16),

«մեղադրեն և անգոսնեն» (Գանգր. Ա 192.11) – μέμφοιτο (Gangr. I. 80.34),

«երկմտեն և խորչեն» (Գանգր. Դ 193.12) – διακρίνοιτο (Gangr. IV. 81.12),

«չառնիցէ և չգործիցէ» (Գանգր. Է 194.8-9) – πράττειν (Gangr. VII. 81.24),

«ի գաւառ և յիշխանութիւն» (Անտ. ԺԸ 216.12-13) – εἰς παροικίαν (Ant. XVIII. 47.29),

«ուխտեցաւ և աւծաւ» (Անտ. ԻԱ 219.10) – ἐκληρώθη (Ant. XXI. 49.1),

«որ սեպհական և ուրոյն է» (Անտ. ԻԴ 221.2) – τὰ ἴδια (Ant. XXIV. 49.29),

«ծնունդս և տաւնս» (Լաւող. ԾԱ 239.8) – γενέθλιον (Laod. LI. 77.21),

«ծերք և պառաւք» (Լաւող. ԾԱ 231.9) – τὰς πρεσβύτιδας (Laod. LI. 77.21),

«ոյք մեղան և յանցեան» (Լաւող. Բ 229.6) – τοὺς ἐξαμαρτάνοντας (Laod. II. 72.11),

«նզովեալ և ուրացեալ» (Լաւող. Է 230.4) – ἀναθεματίσωσι (Laod. VII. 73.6),

«գիտէին և ուսեալ էին» (Լաւող. Է 230.4-5) – κατείχοντο (Laod. VII. 73.7),

«այլազգւոյն և հերձուածողին» (Լաւող. Զ 229.7) – τοῖς αἰρετικοῖς (Laod. VI. 73.1),

«բանդագուշել և դատարկեցուցանել զաւր շաբաթուն» (Լաւող. ԻԹ 235.9-10) – ἐν τῷ σαββάτῳ σχολάζειν (Laod. XXIX. 75.18),

*«ի հանգիստս և ի դիրս և ի բնակս» (Լաւող. Թ 231.1) – εἰς τὰ κοιμητή-
ρια (Laod. IX. 73.16),*

բ) համադաս զույգեր՝ «կամ» շաղկապով.

*«ըստ... անզգամութեան կամ հակառակութեան» (Նրկ. Զ 121.7) – δι'... φι-
λονεικίαν (Nic. VI. 29.11),*

«տեղի կամ գաւառ» (Նրկ. Ը 123.3) – τόπον (Nic. VIII. 31.1),

«փութով կամ մտերմութեամբ» (Նրկ. ԺԱ 124.8-9) – γνησίως (Nic. XI. 33.7),

«փակեմք կամ գրաւեմք» (Գանգր. վերջ. 200.11-12) – συγκλείοντες (Gangr. ep. 83.23-24),

«դատ խաւսել կամ իրաւ առնել» (Անտ. ԺԵ 215.12) – δικάζεσθαι (Ant. XV. 47.15),

«պատարագս կամ նուէրս» (Լաւոդ. ԼԷ 237.8-9) – τὰ πεμπόμενα (Laod. XXXVII. 76.18),

«ի ժողով կամ ժողովուրդ» (Լաւոդ. Խ 237.13) – εἰς σύνοδον (Laod. XL. 76.24),

«կոչունս... կամ գինարբուս» (Լաւոդ. ԾԲ 240.4-5) – συμπόσια (Laod. LV. 78.2),

զ) համադաս եռյակ առանց շաղկապի՝

«որոշել, սահմանել, կարգել» (Անտ. ԺԸ 217.3) – ὁρίσῃ (Ant. XVIII.48.4),

դ) գոյականի զիմաց՝ գոյական և «սեռական հոլովով ավելադրութիւն»՝

«պատիւ մեծութեան» (Նիկ. Զ 121.2) – τὰ πρεσβεῖα (Nic.VI.29.2),

«հակառակութիւն կեղծաւորութեան» (Անտ. ԺԴ 215.2, 5) – τὴν ἀμφοιβή-
τησιν (Ant. XIV. 47.7, 10),

ե) այլ ստորադասական կապերով զույգեր՝

«պատուհաս... անարգանաւք» (Նիկ. Կոնստ. 131.8՝ «գործիական հոլովով ավելադրութիւն») – ἀτιμίαν (Socr. 33.21),

«հակառակութիւն ինչ իցէ կեղծաւորութեամբ» (Անտ. Ի 218.5-6) – τῶν
ἀμφοιβητούμενων (Ant. XX. 48.18):

Հունարեն մեկ բառին համապատասխանող զույգերը մեծ մասամբ հոմա-
նիշներ են կամ հունարեն բառի տարբեր իմաստներ արտահայտող բառեր
(«փութով կամ մտերմութեամբ»), երբեմն մեկը լրացնում է մյուսի իմաստը
(«վիճակ և աշխարհ», «գաւառ և իշխանութիւն», «ծնունդ և տաւն», «կոչունք
կամ գինարբուք»), այլ դեպքերում մեկը ձևի առումով ավելի տառացի, իսկ
մյուսն՝ իմաստն ավելի ճշգրիտ արտահայտող թարգմանութիւն է («ուխտե-
ցաւ և աւծաւ», «բանդագուշել և դատարկեցուցանել», «ի հանգիստս և ի դիրս
և ի բնակս»):

Հետաքրքրական օրինակներ կան և «Բարոյախօս» ժողովածուի մեջ.

ա) թարգմանութիւն երկու հոմանիշ կամ իմաստով մոտ բառով՝
շաղկապով՝

«քաղցրութեամբ եւ աւրհնութեամբ» – διὰ χρηστολογίας (Phys. 16.10),

«մարդիկք խաւսուն եւ իմացուն» – οἱ λογικοὶ ἄνθρωποι (Phys. 11.6),

«նենգաւոր եւ դրժող» – δόλιος (Phys. 18.1),

«գեղեցիկ եւ զարդարուն» – ὡραῖος (Phys. 19.4),

«ծածկեաց եւ խաղաղեաց» – ἐκάλυψεν (Phys. 2.5),

առանց շաղկապի՝

«փախեար զերծար» – ἐξέφυγες (Phys. 21.8),

բ) գոյականի զիմաց՝ գոյական և «սեռական հոլովով ավելադրութիւն»՝

«թողութիւն ապաշխարութեան» – μετάνοια (Phys. 7.11),

գ) ածականի զիմաց՝ մեկ տառացի և մեկ մեկնաբանող համարժեք՝

«իմանալի եւ աներեւոյթ» (Phys. 2.5) – νοερός, «աներեւոյթ եւ իմանալի»
(Phys. 2.5) – νοερός³³¹,

³³¹ νοερός-ի սովորական համարժեքներն են տառացի «իմանալի»-ն (Phys. 9.4, 12.4, 13.7, 17.6,

դ) բայի դիմաց՝ բայ և «դերբայական ավելադրություն»՝

«նստեալ պահէ» – φυλάσσει (Phys. 2.16),

ե) բայի դիմաց՝ միմյանց հաջորդող գործողություններ նշանակող երկու բայ (մեծ մասամբ ավելադրությունը «երթալ» բայն է)։

«երթայ խնդրէ» – ζητεῖ (Phys. 1.4),

«թուչի երթայ» – ὑπάγει (Phys. 10.8),

«երթայ գտանէ» – ζητεῖ (Phys. 18.1),

«երթայ անկանի» – βάλλει αὐτήν (Phys. 18.1՝ «իրեն նետում է»),

«երթան կուտին» – στοβάζονται (Phys. 20.8),

«տանին ընկենուն» – ῥίπτουσιν (Phys. 25.3),

«արկան է խոնարհ... եւ սփռէ» – καταβάλλει (Phys. 7.4),

զ) բայի դիմաց՝ երկու՝ իմաստով մոտ անուղղակի խնդիր պարունակող բառակապակցությունը։

«ի սերմն եւ ի զարմ բազմանայցէ» – σπερματίσωσιν (Phys. 12.3),

է) ողջ բառակապակցությունների թարգմանություն երկու զուգահեռ կառույցներով։

«ուրախ լինին ընդ քեզ հրեշտակք եւ բերկրին ընդ քեզ զուարթունք» – συγχαίρουσίν σοι ἀγγελικαὶ δυνάμεις (Phys. 3.9),

«մեքենայք մեծամեծք են եւ հնարք նենգաւորք» – τὰ πρακτικὰ αὐτοῦ μεγála (Phys. 18.5):

Մեկ բառը երկու կամ ավելի բառերով թարգմանելու մեթոդը հատկապես լայն կիրառություն է ստացել և հանդես եկել զանազան տարատեսակներով հունաբան դպրոցի առաջին շրջանին պատկանող Փիլոնի երկերի թարգմանություններում։ Այն նկատել են Շ. Մերսյեն³³², Ա. Տերյանը³³³ և Ռ. Սգարբի³³⁴։ Մեկ բառի իմաստը երկու (կամ ավելի) բառերով արտահայտելը կարելի է համարել Փիլոնի թարգմանությունների ոճի բնորոշ առանձնահատկություններից մեկը, ինչն ամենից ցայտուն կերպով վկայում են այն օրինակները, որոնցում նշված երկույթը դիտվում է Աստվածաշնչից մեջբերումներում (մինչդեռ կանոնական թարգմանության համապատասխան հատվածներում մեկ բառ է)։

«Լքցէ թողցէ» (Փիլ. ալլաբ. 158) ≠ «թողցէ» (Ծնն. Բ 24) – καταλείψει (Ph. LA 2.49 = Gen. 2:24),

«եւ դնա» (Փիլ. ալլաբ. 160-161) ≠ «եւ դու» (Ծնն. ԺԲ 1) – ἔξελε (Ph. LA 2.59 = Gen. 12:1),

«ո՞չ ակնկորեալ պատկառեսցէ» (Փիլ. ալլաբ. 163) ≠ «չամաչէ՞ր» (Թիւք ԺԲ 14) – οὐκ ἐντραπήσεται (Ph. LA 2.66 = Num. 12:14),

«այն որ էած անցոյց» (Փիլ. ալլաբ. 169) ≠ «եւ ած» (Բ Օր. Ը 15-16) – τοῦ ἀγαγόντος (Ph. LA 2.84 = Deut. 8:15-16):

19.11, 22.8) և մեկնաբանող «աներեւոյթ»-ը (Phys. 22.13, 28.5, 29.4):

³³² MERCIER 1979 (Առաջաբան), 26-28:

³³³ TERIAN 1981, 10-12:

³³⁴ SGARBI 1989, 109, 112, 115, 121, 129, 134, 137, 142, 144, և այլն, ամփոփումը՝ 227:

Օրինակները մենք խմբավորել ենք ըստ իմաստի և շարահյուսական կապերի: Իհարկէ, բաժանումը որոշ չափով պայմանական է, և խմբերի միջև երբեմն խիստ սահմանագծեր չկան:

Իմաստային տարբերակները հետևյալն են.

1. Մեկ հոլնարեն բառի դիմաց հայերենում երկու հոմանիշ է հանդես գալիս (մենք արձանագրել ենք 114 այդպիսի օրինակ. սա, ինչպես և դասական թարգմանություններում, ամենից տարածված տարատեսակն է).

«հրահանգեալ և խրատեալ» (Փիլ. իմաստ. 38) – παιδαγεῖσθαι (Ph. Abr. 20.6),

«խրատ հանճարոյ» (Փիլ. բազն. 216) – παιδεία (Ph. Spec. 1.336),

«սպասաւորութիւն պաշտաման» (Փիլ. տես. 26) – ὑπουργία (Ph. Cont. 72.2),

«որոշեալ և զատուցեալ» (Փիլ. տես. 25) – διανενέμῃται (Ph. Cont. 69.1),

«մրցումն և գուպարք» (Փիլ. լին. 4.228) – ἀγωνίσματα (Ph. QuGen. 4.228):

Ֆ. Կոնիքիւրը Փիլոնի և Իրենեոսի թարգմանչի նույնությանը նվիրված հոդվածում³³⁵ նման օրինակներ է բերում Իրենեոսից.

«շահ աւգտին» – τὸ λυσίτελές (էջ 195),

«խրատեալք և հրահանգեալք» – παιδευσθέντες (էջ 197),

«անմուրցք և անգուպարք» – ἀπάλαιστρος (էջ 198):

1.1. Այդ հոմանիշների շարքում կան կայուն բառակապակցություններ.

«կամ մնամ» – (δια, παρα, ἐπι, κατα)μένω,

«կրթեմ և վարժեմ», «վարժ կրթութեան» և այլ տարբերակներ – ἀσκεώ, ἀσκησις, μελετάω:

2. Հոլնարեն բառը թարգմանված է հայերեն երկու՝ իմաստով միմյանց մոտ բառերով, որոնցից մեկը հոլնարեն բառի ճշգրիտ համարժեքն է՝ ձևով իմաստով (բառացի տարբերակներն ընդգծված են. 47 օրինակ)³³⁶.

«չափաւոր և համեստ» (Փիլ. տես. 21) – μέτριος (Ph. Cont. 56.2),

«սքզութիւն կուսութեան» (Փիլ. տես. 25) – ἀγνεία (Ph. Cont. 68.2),

«անբաւ և անճառ» (Փիլ. բազն. 217) – ἀμύθητος (Ph. Spec. 1.339),

«իշխանական առաջնորդական» (Փիլ. այլաբ. 126) – τὸ ἡγεμονικόν³³⁷ (Ph. LA 1.62),

«աւրէնք և գիր», ուղղում ենք՝ «գիր»³³⁸ (Փիլ. իմաստ. 34) – θεσμός (Ph. Abr. 6.5):

³³⁵ CONYBEARE 1911:

³³⁶ Ինչպես վերոբերյալ «որոյ կերպարանք կիսադից դիւցազանցն էին» – τὴν ἰδέαν ἡμιδαίμονα (Եւս. քր. ա 47), «ի հանդիստս և ի գիրքս և ի բնակս» (Լաւոդ. Թ 231.2) – εἰς τὰ κοιμητήρια (Laod. IX.73.12), «իմանալի և աներևոյթ» – νοερός (Phys. 2.5), «աներևոյթ և մանալի» – νοερός (Phys. 2.5) օրինակներում:

³³⁷ Այս օրինակը վկայում է, որ Ֆ. Զիգերտն իզուր է «Թաղաքս աստուծոյ» գրվածքում որպես «գիրխանն զառաջնորդն» (SIEGERT 1988, 15.44) արտահայտություն համարժեք գնում τῷ Πρώτῳ Ἡγεμόνι (SIEGERT 1988, 25.42). բավական կլինեի τῷ Ἡγεμόνι:

³³⁸ Ա. Վարդանյանը նկատել է, որ Փիլոնի և Իրենեոսի հայերեն թարգմանությունների մեջ «գիր» բառն օգտագործվում է «օրենքի» իմաստով. ՎԱՐԴԱՆՅԱՆ 1921, 454:

2.1. Այս տեսակի մեջ էլ կան կայուն կապակցություններ.

«սուրբ տէրունեան» (Փիլ. տես. 25, 27, այլաբ. 126), «տէրունեան սուրբ» (Փիլ. բազն. 225, տես. 28) – ἱερός (Ph. Cont. 65.1, 71.1, 78.2, LA 1.76, Spec. 1.344),

«կեանք վարուց» (Փիլ. իմաստ. 34, 37, 42), «վարք կենցաղոյս» (Փիլ. տես. 22), «կեանք կենցաղոյս» (Փիլ. տես. 13) – βίος (Ph. Cont. 25.2, 58.2, Abr. 6.5, 19.3, 38.1):

2.2. Որոշ դեպքերում երկու թարգմանությունն էլ կարելի է դիտել որպես հավասարապես բառացի (10 օրինակ).

«անբաժ և անմասն» (Փիլ. իմաստ. 53) – ἄμοιρος (Ph. Abr. 74.5),

«անճառ և անասելի» (Փիլ. նխ. 67) – *ἄρρητος,

«տրտմակից և ցաւակից լինել» (Փիլ. իմաստ. 100) – συναλγέω (Ph. Abr. 260.2):

3. Հունարեն բառի դիմաց հանդես եկող հոմանիշներից մեկը սովորական հայերեն բառ է՝ վկայված դասական տեքստերում, իսկ մյուսը նորաբանություն է, բառապատճենում, որի մեջ արտացոլված է հունարեն բառի ներքին կառուցվածքը (43 օրինակ).

«չարունակութիւն յաճախութեան» (Փիլ. իմաստ. 81) – συνέχεια (Ph. Abr. 188.5),

«անպարոյր և անպարագիւր» (Փիլ. իմաստ. 52) – ἀπερίγραφος (Ph. Abr. 71.4),

«չարաձայնութիւն միաբանութեան» (Փիլ. այլաբ. 130) – συμφωνία (Ph. LA 1.72),

«ներբողեան և գովութիւն» (Փիլ. բազն. 216) – ἐγκώμιον (Ph. Spec. 1.336),

«սնապարծ փառասիրութիւն» (Փիլ. իմաստ. 60) – φιλόδοξος (Abr. 104.6)՝ «սնապարծ» բառն ինքն էլ պատճենում է հունարեն κενόδοξος բառի՝ վկայված Աստվածաշնչում (Գաղ. Ե 26):

Հմտ. նաև Կոնիբերի մատնանշած օրինակն Իրենեոսից.

«միաբան և բաղաձայն» – συμφώνως (էջ 195)³³⁹:

Հունարեն ἐπιστήμη «գիտելիք» բառը թարգմանված է «Հանճար» (Փիլ. նխ. 117), կամ երկու հոմանիշով՝ «Հանճար գիտություն» (Փիլ. բազն. 213 – Ph. Spec. 1.328) և «Հանճար խրատու» (Փիլ. տես. 24 – Ph. Cont. 64.5): Երկու անգամ էլ՝ «մակացութիւն Հանճարոյ»³⁴⁰ (Փիլ. այլաբ. 107, 129 – Ph. LA 1.6, 68). «մակացութիւն» պատճենումը հիմնված է ἐπίσταμαι «գիտենալ» բայի «ժողովրդական ստուգաբանության» վրա, որպես ἐπι նախածանցի (Հմտ. «մակ») և ἵστημι «կանգնել» բայի արմատի (Հմտ. «կացութիւն») թարգմանություն՝ «մակ-կացութիւն» պարզեցվել է և դարձել «մակացութիւն»:

³³⁹ Նույն տեսակին են պատկանում և Դավթի՝ Պորփյուլիի «Ներածություն» մեկնության ներքոհիշյալ օրինակներից՝ «ներանձնական... այս ինքն շնչական», «տարադատէ, այս ինքն որոշէ»:

³⁴⁰ Հմտ. Դավիթ Անհաղթի վերը քննարկված թարգմանության մեջ ἐπιστήμη բառի «մակացութիւն» և «Հանճար» համարժեքները:

3.1. Հունարեն նախածանցավոր բառերի դեպքում զույգի մեկ անդամը երբեմն «կիսապատճենում» է՝ հունարեն նախածանցին համապատասխանում է հայերեն մակբայը.

«Ի բաց հանեալ ընկեցեալ» (Փիլ. իմաստ. 35) – ἀφῆρημένον (Ph. Abr. 9.1),

«Ի մի վայր էած ժողովեաց» (Փիլ. այլաբ. 165) – συνήγαγεν (Ph. LA 2.72),

«Ի բաց թափեցեալ և ազատեցեալ» (Փիլ. այլաբ. 142) – ἀπῆλλαγμένος (Ph. LA 1.108),

«Ի բաց կալ և հեռանալ» (Փիլ. այլաբ. 136) – ἀφίστασθαι (Ph. LA 1.89):

Այսպիսով, սովորական բառ – ճշգրիտ ձևական համարժեք զույգով թարգմանելը կարելի է բացատրել որպես նոր հայերեն բառ կերտելու և լեզվում գոյություն ունեցող բառով այն մեկնաբանելու փորձ. արդյունքում հունարեն բառի թարգմանությունը ճշգրիտ է ձևի և հստակ՝ իմաստի առումով: Հաջորդ՝ 4-րդ կետի օրինակներն էլ հարում են սրանց, քանի որ իմաստային պատճենման հետևանքով էլ փաստորեն նոր բառ է ստեղծվում:

4. Հունարեն բառն ունի երկու հայերեն համարժեք. մեկն իմաստային պատճենում է, որն առանձին օգտագործվելու դեպքում անհասկանալի կլիներ, մյուսը՝ թարգմանություն է ըստ իմաստի.

«դժնեայ և բաւական մեկնել» (Փիլ. այլաբ. 131) – δεινὸς ἐρμηνεύσαι (Ph. LA 1.74, δεινός – 1. «սարսափելի», 2. «ուժեղ, զորեղ», 3. «հմուտ»),

«դժնդակությունն ճարտարութեան բանից» (Փիլ. տես. 28) – δεινότης λόγων (Ph. Cont. 75.8),

«տիրազոյն և իսկազոյն» (Փիլ. լին. 2.59, 142-143) – κυριώτατα (Ph. QuGen. 2.59՝ κυρίως – 1. «որպես տեր», 2. «վստահաբար», 3. «իսկապես»),

«իսկազոյն և տիրազոյն» (Փիլ. իմաստ. 41) – κυριώτερον (Ph. Abr. 33.3)³⁴¹, հմտ. «տիրաբար իսկապէս» (Իրեն. Հերձ. 182) և «տիրազոյն և իսկազոյն» (Ար. Ստոր. 113) – κυριώτατα (Arist. Cat. 3a1),

«արդարև և էապէս» (Փիլ. իմաստ. 40, 82, 86, այլաբ. 130) – τῷ ὄντι (Ph. LA 1.72, Abr. 185.1, 191.4), ὄντως (Ph. Abr. 207.1). «արդարև»-ը թարգմանում է իմաստը, իսկ «էապէս»-ը բառացի թարգմանություն է՝ «է» բայական ձևից արհեստականորեն կազմված մակբայ:

5. Եթե հունարեն բառն ունի տարբեր իմաստներ՝ ուղիղ և փոխաբերական, նախնական և հատուկ քրիստոնեական, այն կարող է թարգմանվել երկու հայերեն բառով, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է նրա իմաստներից մեկին (24 օրինակ).

«վաճառ և հրապարակ» (Փիլ. իմաստ. 37) – ἀγορά (Ph. Abr. 20.1, ἀγορά – 1. «հրապարակ», 2. «շուկա»),

«օտար և հիւր» (Փիլ. լին. 4. 20, 260) – ξένος (1. «հյուր», 2. «օտար, օտարական»),

³⁴¹ Այս երկու օրինակները վկայում են, որ Ֆ. Զիգերտը, վերոհիշյալ ետադարձ թարգմանություն մեջ «անուն նորա իսկ է և տէր» (SIEGERT 1988, 15. 46) արտահայտությունը որպես ὄνομα αὐτῷ ἐστὶν ἴδιον καὶ κύριον (SIEGERT 1988, 25.46) վերարտադրելիս, օգտագործել է ավելորդ ἴδιον բառը (որպես «իսկ»-ի համարժեք):

«շարժեալ վրդովեցալ» (Փիլ. իմաստ. 44) – ἐκινήθη (Ph. Abr. 46.3՝ κινέω – 1. «շարժել», 2. «հուզել, անհանգստացնել»),

«նազելի և պարկեշտ» (Փիլ. տես. 13, 31, ժ բան 240), «պարկեշտ և նազելի» (Փիլ. տես. 12) – σεμνός (Ph. Cont. 25.1, 30.1, 89.6, Decal. 66.4՝ σεμνός – 1. «հանդիսավոր, հարգելի», հմմտ. «նազելի», ինչպես նաև՝ այդ բառի թարգմանությունը երկու հոմանիշով. σεμνότητος (Ph. LA 1.14) – «նազազոյն և հոչակաւոր» (Փիլ. այլաբ. 109), ἀποσεμνύνω (Ph. LA 1.64, Abr. 5.2, 13.4, 31.2) – «նազել և հրճուել» (Փիլ. այլաբ. 127), «հոչակեցուցեալ՝ պանծացուցանել» (Փիլ. իմաստ. 34), «պանծալի հոչակեցուցանել» (Փիլ. իմաստ. 40), 2. «համեստ», հմմտ. «պարկեշտ»):

Հունարեն γένεσις «արարչություն» բառը, որպես Աստվածաշնչի առաջին գրքի վերնագիր, ունի երկու դասական համարժեք. «ծնունդ» («Գիրք ծննդոց») և «արարածք»՝ «այս են գիրք արարածոց» (Ծննդ. Բ 4, Ե 1): Փիլոնի հայերեն տարբերակում այն սովորաբար թարգմանված է «լինելություն»: Հունարեն γίγνομαι բայը, որից կազմվել է γένεσις-ը, ունի երկու հիմնական իմաստ. 1. «ծնվել, ստեղծվել» (հմմտ. «ծնունդ», «արարածք»), 2. «լինել» («լինելություն»): Սակայն Փիլոնի մոտ հանդիպում է նաև՝

«ծնունդ լինելութեան» (Փիլ. շն. 273, 283) – γένεσις (Ph. Spec. 3.45),

«լինելություն ծննդեան» (Փիլ. քհ. 187) – γένεσις (Ph. Spec. 1.112),

«անեղ անծին» (Փիլ. այլաբ. 122) – ἀγέννητος (Ph. LA 1.51).

Հմմտ. և Իրենեոսի մոտ՝ γένεσις – «ծննդեան լինելություն» (էջ 195):

Հունարեն ἔργον (Ph. Spec. 1.129, 3.39) բառը՝ «որևէ բանից զուրկ» իմաստով թարգմանվել է «ամայի և անապատ» (Փիլ. քհ. 192) և «աւերակ և անապատ» (Փիլ. շն. 277), քանի որ այն ունի և «անապատ» իմաստը, իսկ ἔρημος (Ph. Cont. 62.1) – «անմարդություն և ամայություն» (Փիլ. տես. 23). Թերևս առաջին տեսակից է՝ երկու հոմանիշ:

5.2. Հունարեն բառի իմաստներից մեկը երբեմն արտահայտված է երկու հոմանիշով՝ արդյունքում ունենք երեք բառ.

«ետես և էգիտաց և եհաս» (Փիլ. իմաստ. 52) – κατιδεῖν (Ph. Abr. 104.1՝ ὁράω «տեսնել» բայի աորիստն է εἶδον, հմմտ. «ետես», իսկ պերֆեկտը՝ ὀίδα, ունի յուրահատուկ իմաստ՝ «գիտենալ», հմմտ. «էգիտաց և էհաս»):

6. Մեկ հունարեն բառի իմաստը երկու հայերեն բառով արտահայտելու արտառոց մի տեսակ էլ կա. ποίος («ինչպիսի») սովորաբար թարգմանվում է «որակ» բառով, իսկ ποίότης («որակասություն»)՝ «որակություն» կամ «որակ». հմմտ. նաև ποίον (Ph. Decal. 30.3) – «որակություն» (Փիլ. ժ բան 230) և ἄποιος (Ph. LA 2.80, Spec. 1.328) – «անորակ» (Փիլ. այլաբ. 168, բազմ. 213)³⁴²:

³⁴² Նմանօրինակ արհեստական կազմություններ են նաև «տեսակ» – ἰδέα, εἶδος (հմմտ. Ա 3բ3դ), «ուշակություն» – ἔξις (հմմտ. Գ 3բ3բ), «քանակություն» – ποσότης (հմմտ. Ա 3բ3ե), «քանիություն» (Փիլ. ժ բան 230, նխ. 81) – πόσον (Ph. Decal. 30.3), ποσότης (Ph. Prov. 1.1.19):

Սակայն որոշ դեպքերում «որակ» կամ «որակութիւն» բառին կցվում է «առնել» բայի հիմքից կազմված բայանուն, կարծես ποίος-ը ստանում է մի երկրորդ՝ զուգահեռ ստուգաբանություն, որպես ποίεω «անել» բայի հետ առնչվող մի բառ.

«որակք արարուածք» (Փիլ. այլաբ. 128, 133) – ποιοῦ (Ph. LA 1.67, 1.79),

«որակութիւն արարչութեան» (Փիլ. այլաբ. 168) – ποιότης (Ph. LA 2.80),

«որակութիւն և արարուած» (Փիլ. այլաբ. 122) – ποιότης (Ph. LA 1.51),

«անորակ և անարարուած» (Փիլ. այլաբ. 117, 122) – ἄποιος (Ph. LA 1.36, 51):

Սույն կետում նկարագրված օրինակներում փաստորեն թարգմանիչը կրկին, ինչպես նախորդ՝ 5-րդ կետում, հունարեն բառի մեջ երկու իմաստ է տեսել, սակայն տվյալ դեպքում այդ երկրորդ իմաստը մտացածին է՝ սխալ ստուգաբանության արդյունք: Թվում է, թե երկու տարբեր իմաստները զուգահեռաբար ներկայացնելու՝ առաջին հայացքից անտրամաբանական թվացող եղանակին (դասական թարգմանություններում նման օրինակներ չկան) թարգմանիչը դիմել է իր բազմիմացությունը կամ յուրահատուկ ընկալված հմտությունը ցուցադրելու նպատակով:

Իտալացի հայագետ Պաոլա Պոնտանիի մի փոքր, բայց շատ ուշագրավ ուսումնասիրության³⁴³ արդյունքները մատնանշում են վերը նկարագրված երեւույթը մեկնաբանելու այլ հնարավորություն: Հեղինակն, ի հաստատումն իրեն նախորդող բանասերների արտահայտած այն ենթադրության, թե հունաբան դպրոցի թարգմանիչներն օգտվել են հատուկ երկլեզվյան բառարաններից (նա կարծում է, որ դրանք կարող էին լինել նաև հունարենի բացատրական բառարաններ. մեկ այլ տեղում էլ նշում է, որ դրանցում կարող էին ավելացված լինել հայերեն համարժեքները), Փիլոնի De Abrahamo գրվածքի հայերեն թարգմանության մեջ («Կեանք իմաստնոց») մատնացույց է արել դեպքեր, որոնցում ոչ բառացի թարգմանությունը, հունարեն մեկ բառը երկու բառով արտահայտելը, հունարեն բառի ոչ սովորական, մասնավոր՝ միայն բառարաններում տեղ գտած իմաստն արտացոլելը բացատրվում է Հեսիքիոսի, «Սվիդասի» և Պոլլուքսի Onomasticon կոչվող բառարաններում արձանագրված զուգահեռների օգնությամբ (այդ բառարաններն ամփոփել են ավելի վաղ ժամանակների հսկայական բառարանագրական, ինչպես նաև՝ մեկնողական բնույթի սքոլիաներ³⁴⁴ գրելու ավանդույթը): Արժե մեջբերել նրա նշած օրինակներից ամենահետաքրքրականները.

πρόγονος (տառացի պատճենումը կլինի՝ «նախածնող») – «նախահայր» զուգահեռի ծագումը հասկանալի է դառնում Հեսիքիոսի πρόγονος· πρόπαππος, προπάτωρ («նախածնող. նախապապ, նախահայր») բառահոգվածից,

³⁴³ PONTANI 1997, 191-200:

³⁴⁴ Աքոլիաների՝ թարգմանության մեջ թափանցելու մասին է գրում նաև Ռոզա-Քիանկա Ֆինացցին (FINAZZI 1990)՝ օրինակ բերելով Պլատոնի «Օրենքներից». εὐφύμει բառի «լռեալ մի ասեր զանպատկան» թարգմանությունը ճշգրիտ համապատասխանում է նրա սքոլիային σῶπα, μὴ ἀκαιρολόγει:

γελῶν (տառացի կլինե՛ր՝ «ծաղրական») – «ծաղու արժանի», հմմտ. «Սվիդասում»՝ γελῶν γέλωτος ἄξιον («ծիծաղելի. ծիծաղի արժանի»),

φθονεῖν (տառացի կլինե՛ր «նախանձել») – «նախանձել և չարակնել», հմմտ. Հեսիքիոսի մոտ՝ φθονεῖς· ζήλοῖς, βασκάνεις («նախանձում ես. խանդում ես, կախարդում ես», վերջին բառի սովորական համարժեքն Աստվածաշնչում «չարակնել»-ն է),

φιλοτιμούμενος (տառացի կլինե՛ր՝ «պատուասիրելով») – «առատաբար շնորհելով». հմմտ. Հեսիքիոսի մոտ՝ φιλοτιμούμενοι· δαψιλῶς τιμώντες («պատվասեր լինելով. առատորեն պարգևատրելով»),

πρεσβύτατον – «երիցազոյն և պատուական» (ի տարբերություն 3-րդ դեպքի, Պոնտանին սա կոչել է “non-synonymic doublet”). հմմտ. Հեսիքիոսի մոտ՝ πρεσβυτάτη· ἐντιμωτάτη («ամենաավագ. ամենապատվալոր». նման բացատրություն կա և «Սվիդասում»):

Այսպիսով՝ օրինակներից երկուսում գործ ունենք մեկ բառը երկուսով թարգմանելու հետ, որի արմատները տանում են դեպի հունական բառարանագրական ավանդույթը, և հոգվածագիրը ենթադրում է, որ Փիլոնի թարգմանչի ձեռքին երկեզվյալ բառարան է եղել³⁴⁵:

Դժվար է վստահաբար որոշել՝ արդյո՞ք Փիլոնի թարգմանչի՝ մի կողմից հունաբան դպրոցի տառացիության սկզբունքին հակասող, մյուս կողմից էլ զուտ բնագիրը ճշգրիտ մեկնաբանելու դասական թարգմանիչների փորձերով չբացատրվող՝ մեկ բառը երկուսով թարգմանելու նախասիրության հիմքում ընկած է ոճական բազմազանության կամ սեփական հմտությունը ցուցադրելու ձգտումը, թե՞ ավելի առարկայական՝ երկեզվյալ բառարանից օգտվելու հանգամանքը: Վերջին ենթադրությունը չափազանց գայթակղիչ է, մանավանդ որ այն ընդունելու դեպքում ավելի հեշտ կլինե՛ր բացատրել թարգմանության մեջ հունարեն բառի տարբեր իմաստները կողք-կողքի արտացոլելու դեպքերը: Սակայն այն հիմնված է հունական բառարանագրական ավանդույթի ուսումնասիրման վրա և չի վերաբերում երկեզվյալ բառարանների հնարավոր գոյությանը: Կարելի էր Փիլոնի թարգմանչի մեթոդի՝ խնդրո առարկա առանձնահատկությունը փորձել բացատրել և նշված երկու գործոնների զուգակցումով:

Ինչ վերաբերում է այդ երեույթի շարահյուսական տարբերակներին, ապա գույգերի մեծամասնությունը կառուցվածքը

³⁴⁵ Լ. Տեր-Պետրոսյանն այլ կարծիք է հայտնել. նա գտնում է, որ միջնադարում գոյություն ունեին երկեզվյալ բառարաններ, և այդ պատճառով, թարգմանության դժվարությունները հաղթահարելու համար, թարգմանիչները դիմել են «կենդանի բառարանների»՝ հույն և ասորի վարդապետների օգնությանը, ինչի համար էլ նախաձեռնվել են նրանց հայտնի ուղեորությունները դեպի ժամանակի կրթության կենտրոնները: Նա ենթադրում է, որ նույն եղանակով են աշխատել նաև հունաբան դպրոցի ներկայացուցիչները. տե՛ս ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1984, 26: Այնուամենայնիվ՝ հույն և ասորի վարդապետների օգնությունը դիմելու փաստը չի բացառում բառարանների գոյության հնարավորությունը: Այլ հարց է՝ արդյո՞ք թարգմանությունների առանձնահատկությունները բավարար են բառարաններից օգտվելու վերաբերյալ որևէ ենթադրություն հիմնավորելու համար:

1. Համադասական է.

ա) *շաղկապով*. «Հրահանգեալ և խրատեալ» (Փիլ. իմաստ. 38) – πεπαιδευθαι (Ph. Abr. 20.6)՝ *բայեր*, «զարթուցանել և զրգուել» (Փիլ. տես. 27)՝ *անորոշ դերբայներ*, «անբաւ և անճառ» (Փիլ. բազն. 217) – ἀμύθητος (Ph. Spec. 1.339)՝ *ածականներ*, «սրբաբար և ազատաբար»՝ *մակբայներ*:

Հունարեն *ածականի կամ մակբայի համեմատական կամ գերադրական աստիճանն արտահայտվում է սովորաբար թարգմանության զույգի անդամներից մեկով*. «Նազագոյն և հոչակաւոր» (Փիլ. այլաբ. 109) – σεμνότετον (Ph. LA 1.14), «յայտնագոյն և երեւելի» (Փիլ. իմաստ. 41) – ἐναργέστερος (Ph. Abr. 35.3), «զիւղողագոյն և ի ճաճ» (Փիլ. այլաբ. 144) – ἐπιτηδειότατον (Ph. LA 1.28), «պարտ և արժան է և ճաճագոյն և ի դէպ» (Փիլ. իմաստ. 47) – ἐύλογώτερον (Ph. Abr. 55.2):

Երբեմն համեմատական կամ գերադրական աստիճանը թարգմանության մեջ ձևաբանորեն չի արտահայտվում. «յայտնապէս և երեւելի» (Փիլ. ել. 2.268, 468) – ἐμφανέστατος (Ph. QuEx. 2.2), «անզգամ և անիմաստ» (Փիլ. ժբան 236) – ἀγνωμονέστατος (Ph. Spec. 1.61.3), «գեղեցիկ և սքանչելի» (Փիլ. տես. 25) – κάλλιστον (Ph. Cont. 67.5), «կամակ և սրտահաճոյ» (Փիլ. իմաստ. 96) – θυμηρεστάτη (Ph. Abr. 245.1), «ինքնահաճ և վէս» (Փիլ. բազն. 206) – αὐθαδέστατος (Ph. Spec. 1.306), «նազելի և պարկեշտ» (Փիլ. տես. 13) – σεμνότερος (Ph. Cont. 30.1), «հեշտ և կամակ» (Փիլ. իմաստ. 38) – ἥδιον (Ph. Abr. 23.3):

Կան և առանձին դեպքեր, երբ թարգմանության մեջ համեմատական աստիճան է, իսկ հունարեն *ածականը կամ մակբայը դրական աստիճանով է*. «ճաճագոյն և ի դէպ» (Փիլ. այլաբ. 114) – πρόσφορος (Ph. LA 1.28):

բ) *առանց շաղկապի*. «մարտիկ ըմբիշ», «մարտիկ նահատակ» (Փիլ. իմաստ. 41) – ἀθλητής (Ph. Abr. 48.4), «դասուք կարգաւ» (Փիլ. տես. 27)՝ *գոյականներ*, «իշխանական առաջնորդական» (Փիլ. այլաբ. 126) – τὸ ἡγεμονικόν (Ph. LA 1.62), «սուրբ տէրունեան» (Փիլ. տես. 25, 27, այլաբ. 126) – ἱερός (Ph. Cont. 65.1, 71.1, LA 1.76)՝ *ածականներ*, «հակառակ ընդդէմ» (Փիլ. բազն. 158), «արդարեւ էապէս» (Փիլ. իմաստ. 40, 82, 86, այլաբ. 130) – τῷ ὄντι (Ph. LA 1.72, Abr. 185.1, 191.4), ὄντως (Ph. Abr. 207.1)՝ *մակբայներ*, «բառնալ լքանել թողուլ» (Փիլ. իմաստ. 49) – καταλιπεῖν (Ph. Abr. 62.2)՝ *անորոշ դերբայներ*, «կայ մնայ»՝ *բայեր*. *դասական կայուն կապակցություն է*:

2. Հանդիպում է և ստորադասական կառուցվածք.

ա) *երկու գոյական, որոնցից մեկը՝ սեռականով (դասական լեզվի՝ «գոյական անունների սեռականով ավելադրություն» է. 29 օրինակ)*. «խրատ հանճարոյ» (Փիլ. բազն. 216) – παιδεία (Ph. Spec. 1.336), «տուփանք ցանկութեան» (Փիլ. իմաստ. 51) – ἔρως (Ph. Abr. 67.1), «հաշիւ համարոյ» (Փիլ. իմաստ. 44), «սպասաւորութիւն պաշտաման» (Փիլ. տես. 26) – ὑπουργία (Ph. Cont. 72.2), «ցոյց օրինակի» (Փիլ. տես. 22), «տիպ կերպարանաց» (Փիլ. իմաստ. 52), «վարժ կրթութեան» (Փիլ. տես. 17, իմաստ. 46) – ἀσκησις (Ph. Cont. 41.5, Abr. 54.2),

բ) գոյական՝ ածական որոշիչով. «Համադամ ցանկութիւն» (Փիլ. չն. 268) – ἡδονή (Ph. Spec. 3.9), «սնապարծ փառասիրութիւն» (Փիլ. իմաստ. 68) – φιλόδοξος (Ph. Abr. 104.6), «նազելի պարկեշտանոց» (Փիլ. տես. 31) – σεμνεῖον (Ph. Cont. 32.1),

գ) զիմաւոր բայն անցյալ դերբայի հետ (գասական լեզվի «դերբայական ավելադրութուն» է). «միաբանեալ հաւանեցաւ» (Փիլ. իմաստ. 43), «բարձեալ թողին» (Փիլ. իմաստ. 50) – κατέλιπον (Ph. Abr. 65.10), «սուղեալ ընկղմեցան» (Փիլ. իմաստ. 44) – ἔδυν (Ph. Abr. 44.1), «արձակեալ բառնայ թողու» (Փիլ. իմաստ. 37):

դ) 31 օրինակով ներկայացված մի մեծ խումբ կա, որի մեջ «անցեալ» դերբայն է կցված զիմաւոր բային՝ «գնալ» (8 դեպք), «նստել» (8 դեպք), «կալ» (9 դեպք)³⁴⁶ և այլն: Որոշ դեպքերում (10 անգամ) իմաստը ճշգրտելու համար ավելացված է այս կամ այն մակբայը. «մատ անցեալ նստի» (Փիլ. այլաբ. 129) – περικάθηται (Ph. LA 1.68), «մեկուսի անցեալ կայ» (Փիլ. այլաբ. 134) – ἀφέστηκε (Ph. LA 1.82), «ի մէջ անցեալ ցոյցս առնեն» (Փիլ. տես. 14) – παρρησιάζονται (Ph. Cont. 31.4), «որք յոտն անցեալ կան» (Փիլ. տես. 28) – παρεστῶτες (Ph. Cont. 78.1), «որք ի վերայ անցեալ նստին» (Փիլ. քհ. 200) – τοὺς ἐφέδρους (Ph. Spec. 1.160), «որ ի վերայ անցեալ նստի» (Փիլ. այլաբ. 175) – τὸν ἐπιβεβηκότα (Ph. LA 2.99), «որ ի վերայ անցեալ կայր» (Փիլ. իմաստ. 52) – ἐφεστῶτα (Ph. Abr. 70.5), «ի բաց անցեալ կան» (Փիլ. իմաստ. 83) – ἀφίστανται (Ph. Abr. 197.4), «անցեալ գնայր ի բաց» (Փիլ. իմաստ. 77) – ἐξήει (Ph. Abr. 171.1), «ի խոնարհ անցեալ մնալ» (Փիլ. իմաստ. 77) – καταμένειν (Ph. Abr. 171.2):

Յոթ անգամ «անցանել» բայի զիմաւոր ձևն է կցված հիմնական բային, որպէս համադաս ստորոգյալ՝ առանց չաղկապի, մեկ անգամ՝ չաղկապով. «անցանէ գնայ» (Փիլ. իմաստ. 40) – ἀναχωρήσῃ (Ph. Abr. 30.3), «անցին մնացին» (Փիլ. այլաբ. 153) – κατέμειναν (Ph. LA 2.33), «էանց լռեաց» (Փիլ. այլաբ. 159) – παρεσιώπησεν (Ph. LA 2.55), «անցցէ վճարել» (Փիլ. այլաբ. 161) – ἐπεξέλθῃ (Ph. LA 2.61), «էանց եկաց» (Փիլ. իմաստ. 88) – στάς (Ph. Abr. 214.4), «էանց էգնաց» (Փիլ. իմաստ. 52) – ἡκολούθησε (Ph. Abr. 70.4), «էանց էգնաց» (Փիլ. այլաբ. 170) – ἀνεχώρησεν (Ph. LA 2.85):

Ակներև է, որ ո՛չ «անցեալ» դերբայը, ո՛չ էլ նույն բայի զիմաւոր ձևերը չեն փոխում հիմնական բայի իմաստը. թերևս դրանք կիրառվում են անցյալ կատարյալ կամ հարակատար ժամանակային նրբերանգներ արտահայտելու համար կամ նույնիսկ ոճական զարդարանքի դեր են կատարում: Վերջինս պարզորոշ արտահայտված է «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում, որոնք լեզվական առումով մեծապէս ազդված են Փիլոնի թարգմանութուններից, և որոնցում «անցեալ» դերբայը կցվում է ամենատարբեր բայերի³⁴⁷:

³⁴⁶ Հմմտ. «անցեալ եկաց» (Ոսկ. Թեոդ. 24.12) – ἔστηκεν (Chrys. Theod. 5.17):

³⁴⁷ Տե՛ս ՄՈՒՐԱԴՅԱՆ 1993 (հրատ.), 259:

Փիլոնի թարգմանություններում երբեմն մեկ բառի դիմաց հանդիպում են ավելի բարդ կապակցություններ.

«կցորդութիւն հասարակութեան տանել» (*Փիլ. իմաստ. 46*) – κοινωνήσαι (Ph. Abr. 51.1),

«այն որ եած անցոյց» (*Փիլ. ալլաբ. 169*) – ἀγαγόντος (Ph. LA 2.84),

«անուանի և նշանաւոր հռչակեալ» (*Փիլ. տես. 24*) – διωνομασμένος (Ph. Cont. 64.1),

«պանծալի հռչակեցուցանէ» (*Փիլ. իմաստ. 40*) – ἀποσεμνύνει (Ph. Abr. 31.2),

«ընդ վարժ կրթութեան անցեալք» (*Փիլ. տես. 20*) – ἡσκημένοι (Ph. Cont. 52.3),

«որակացեալ և արարուած ընկալեալ է» (*Փիլ. ալլաբ. 127*) – πεποιήται (Ph. LA 1.65),

«առանց բաղբաղայից և առանց բամբասանաց» (*Փիլ. բազն. 205*) – ἀνυπαίτιως (Ph. Spec. 1.103),

«որ յինքենէ ի բաց հանեալ ընկեցեալ է» (*Փիլ. իմաստ. 35*) – ἀφղρημένον (Ph. Abr. 9.1),

«որ նախահոգութիւն խնամոց տանի» (*Փիլ. ալլաբ. 114*) – προμηθουμένη (Ph. LA 1.28),

«ընդ հովուապետսն և ընդ հաւտերեցսն խաշանց» (*Փիլ. իմաստ. 87*) – προστηκόσι τῶν θρεμμάτων (Ph. Abr. 213.4),

«յորոց լուռ կալ և դադարել արժան է» (*Փիլ. իմաստ. 40*) – τῶν ἡσυχαστέων (Ph. Abr. 30.1):

Մեկ բառը մեկից ավելի համարժեքներով արտահայտելու՝ Փիլոնի թարգմանչի նախասիրած մեթոդի՝ այստեղ ներկայացրած ընտրանին իսկ բավական է, որպեսզի պատկերացում կազմենք, թե որքան լայն տարածում ունեն Նկարագրված երևույթը:

Հունարան դպրոցի հետագա թարգմանիչներն էլ երբեմն դիմել են այդ մեթոդին՝

«արարիչ զերկին և մածուցիչն զնա» (*Տիմ. 175*) – ὁ ποιήσας τὸν οὐρανόν (Is. 45:18),

«տիրազոյն և իսկազոյն» (*Ար. Ստոր. 113*) – κυριώτατα (Arist. Cat. 3a1),

«անշարժք և անխաղացք» (*Ար. Ստոր. 117*) – ἀκίνητα (Arist. Cat. 4a35),

«արդ աստէն իսկ վաղվաղակի» (*Պորփ. 133*) – αὐτίκα (Porph. 1.9-10),

«բաժանեալ որոշեցաւ» (*Պորփ. 142*) – διαιρεῖται (Porph. 9.19),

«եկն ժողովեցաւ» (*Պորփ. 145*) – συνεδεδράμηκεν (Porph. 12.17),

«խոշտանգանք կռուոյն» (*Թեոն 24*) – βάσανοι (Theon 2.69.16),

«ուղղիչս և կազմիչս» (*Թեոն 32*) – διορθώτας (Theon 2.72.16),

«ուղղութիւն և կազմութիւն» (*Թեոն 32*) – διόρθωσις (Theon 2. 72.4),

«սխալանք և յանցանք» (*Թեոն 32*) – ἁμαρτήματα (Theon 2.72.5),

«կազմութիւն պատրաստութեան» (*Թեոն 32*) – παρασκευή (Theon 2. 72.24),

«շինականաձևութիւն և տգիտութիւն» (Թեոն 82) – ἰδωτισμός (Theon 5.84.18),

«զկազմածսն և ստեղծականս» (Թեոն 158) – κατασκευαστικά (Theon 11.125.33),

«որոշեալ և սահմանեալ» (Դ. Պորփ. 74.27-28)³⁴⁸ – ὁριστή (D. Porph. 138.27),

«խնդրել և քննել» (Դ. Պորփ. 40.24) – ζητῆσαι (D. Porph. 110.24),

«կարևորապէս... այս ինքն հարկաւորապէս» (Դ. Պորփ. 32.20) – ἀναγκαίως (D. Porph. 100.24),

«ներանձնական... այս ինքն շնչական» (Դ. Պորփ. 16.26-27) – ἔμψυχος (D. Porph. 88.15),

«տարադատէ, այս ինքն որոշէ» (Դ. Պորփ. 68.16-17) – διακρίνει (D. Porph. 133.19)³⁴⁹,

«որոշեալ զանազանի» (Դ. Պորփ. 120.27) – διαφέρει (D. Porph. 178.24),

«որոշելով, այս ինքն սահմանելով» (Պորփ. 143, Դ. Պորփ. 150.1) – ὁρίζομενοι (Porph. 10.22, D. Porph. 192.9),

«տեսակի, այս ինքն կերպարանի» (Դ. Պորփ. 156.12-13) – τῇ μορφῇ (D. Porph. 195.23),

«որակ... այս ինքն որակիսութիւն» (Դ. Պորփ. 156.20) – ποῖον (D. Porph. 195.29):

3 ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՆՐԱ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻՆ

Լատինաբան հայերեն է կոչվում 17-րդ դարում Հռոմում «Հավատի տարածման սուրբ միաբանությունը» (S. Congregatio de propaganda fidei. Հիմնադրվել է 1622 թ.՝ արևելաքրիստոնեական երկրներում կաթոլիկություն քարոզելու նպատակով) կից 1627 թ. Հիմնված քարոզիչներ պատրաստող դպրոցից դուրս եկած կաթոլիկ քարոզիչների և նրանց հետևորդների՝ լատիններենի վրա ձևված գրաբարը³⁵⁰: Ողջ հայ գրականության մեջ տարածված այդ արհեստական գրաբարը մինչև 18-րդ դարի վերջերը համարվել է բարձր ու գիտական լեզու: Դեռևս Մխիթար Աբբահայրն՝ ակամա տուրք տալով լատինաբան հայերենին, 1730 թ. իր հրատարակած քերականության մեջ կոչ է արել հեռանալ լատինաբան հայերենի ծայրահեղ արտահայտումներից: Լատինա-

³⁴⁸ Հմմտ. «Նիկիական կանոններում» «որոշել, սահմանել, կարգել» (Անտ. ԺԸ 217.2) – ὁρίσσει (Ant. XVIII. 48.2), սակայն Դավթի մոտ պատկերն այլ է՝ «սահման», «սահմանեմ» բառերը նրա մոտ եզրեր են:

³⁴⁹ «Այսինքն»-ի հավելումն ընդգծում է մեկնաբանելու միտումը:

³⁵⁰ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 8, ԱՃԱՌՅԱՆ 1951, 311. Աճառյանը որպես միաբանության հիմնադրման թվական նշում է 1584 թ. նա շեշտում է նաև, որ լատինաբան հայերենը կապ չունի 14-րդ դարի ունիթոական շարժման հետ, այլ «կոլեջյան» հայերենն է:

բան հայերենը դուրս եկավ գործածությունից 1779 թ. Չամչյանի քերականության լույս ընծայումը հետո³⁵¹: Լ. Հովհաննիսյանը նշում է, որ լատինաբան հայերենը հին գրական հայերենի լայն գործածության յուրատեսակ արտահայտություն էր Եվրոպայի հայ գաղթօջախներում, մինչ մայր հայրենիքում գրում էին «ավանդական գրաբարով» (օրինակ, Առաքել Դավրիժեցի)³⁵²:

Սույն համառոտ ակնարկը նպատակ չունի լատինաբան հայերեն երկերի ինքնուրույն ուսումնասիրությունն ու նրա առանձնահատկությունների համակողմանի ներկայացումը: Սահմանափակվելու ենք հրապարակի վրա եղած նկարագրություններն ամփոփելով՝ շեշտը դնելով հունաբան հայերենից սերող լեզվական հատկանիշների վրա:

Լատինաբան հայերենով ոչ միայն թարգմանական և ինքնուրույն երկերն են հորինվել, այլև գոյություն ունեն այն կանոնակարգող քերականություններ: Այս վերջիններս էլ հիմք են հանդիսացել այդ լեզվի նկարագրությունների համար: Հր. Աճառյանը³⁵³ նշում է Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու քերականությունը³⁵⁴, Գ. Զահուկյանն իր «Գրաբարի քերականության պատմություն» երկրորդ՝ «Լատինատիպ ռացիոնալիստական քերականություններ (XVII դ. III քառորդ)» գլխում, բացի Հովհաննես Հոլովից, քննության է առնում նաև Ոսկան Երևանցու (1666 թ.) քերականությունը³⁵⁵, իսկ երրորդ՝ «հունա-լատինատիպ քերականություններ (XVIII դ. 30-90-ական թթ.)», գլխում անդրադառնում Սիմեոն Զուղայեցու, Հովհաննես Զուղայեցի Մրբուզի, Խաչատուր Արզրումեցու քերականություններին, որոնցում նույնպես զգալի են լատինաբան հայերենի ավանդույթները³⁵⁶: Յ. Վայտենբերգի բնորոշմամբ «լատինատիպ» քերականների նպատակը ոչ հայ գործիչներին, հիմնականում կաթոլիկ միսիոներներն էին, ինչպես նաև հայերին գրական հայերեն սովորեցնելն էր՝ «արտաքին գրքերի», այսինքն հունաբան գրաբարով գրված փիլիսոփայական գործերի հիման վրա: Հետևաբար լատիններեն քերականության կաղապարի օգտագործումը ոչ թե հայերենը լատինական

³⁵¹ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 210, ԱՃԱՌՅԱՆ 1951, 323:

³⁵² ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1980: Լատինաբան հայերենը համատարած չի իշխել գրականության մեջ. լատինաբանության ջատագով Հովհաննես Հոլովը Սաղմոսների մեկնությունը գրել է աշխարհաբարով (անդ, 176):

³⁵³ ԱՃԱՌՅԱՆ 1951, 314-323՝ «Եվրոպական փոխառությունները հայերենում և լատինաբան հայերեն» գլխում (296-324):

³⁵⁴ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՈՎ 1674: Նույն քերականությունը, որոշ տարբերություններով, լույս է տեսել նաև լատիներեն՝ HOLOV 1675: Հովհաննես Հոլովը նաև լատիներենի հայերեն քերականության հեղինակ է, տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՈՎ 1675:

³⁵⁵ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 63-88. 88-119 էջերը նվիրված են Հովհաննես Հոլովին: Հովհաննես Հոլովի կյանքի ու ստեղծագործության մասին տե՛ս նաև ՄԻՐՁՈՅԱՆ 1983, 116-125: Հետագայում պարզվել է, որ Ամստերդամում 1666 թ. լույս տեսած Ոսկանի «Քերականությունը» Տոմազո Կամպանելլայի «Քերականության» անտիպ թարգմանության համառոտ տարբերակն է, տե՛ս ORENGO 2004, 319:

³⁵⁶ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 120-174: Զահուկյանը շեշտում է Դիոնիսիոս Թրակացու և նրա մեկնիչների մեծ ազդեցությունը նշված հեղինակների վրա:

նացնելու փորձ էր, այլ հայագիտության համար Արևմուտքի հետ մրցակցությունը դիմանալու միակ միջոց³⁵⁷:

Լատինաբան հայերենի որոշ առանձնահատկություններ թվարկել էր դեռևս Գ. Զարպհանալյանը³⁵⁸: Նա այդպես էր բնորոշում 14-18 դարերի, հիմնականում «միաբանասերների» գրաբարը. Հր. Աճառյանը հետագայում ցույց տվեց, որ այն ոչ թե ունիթոոների, այլ Հռոմի «կոլեջյան հայերենն» է: Ն. Տեր-Ներսեյանի՝ Ոսկանին նվիրված հոդվածում³⁵⁹ նշված է լատինաբան հայերենի մի քանի կարևոր առանձնահատկություն: Վ. Համբարձումյանի «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու» գրքի «Գրաբարի լատինատիպ «մշակման» և լատինաբանության հաղթահարման շրջան [1601-1779 թթ.]» ենթագլխում ուշագրավ մեջբերումներ են արված լատինաբան թարգմանական տեքստերից՝ հաճախ այդ նույն երկերի «կրկին»՝ ոչ լատինաբան թարգմանությունների համապատասխան հատվածների ուղեկցությամբ³⁶⁰: Վերջերս հրատարակված հոդվածում³⁶¹ նա համակարգված ձևով ամփոփել է լատինաբան հայերենի լեզվական առանձնահատկությունները՝ նշելով 11 հնչյունական, 13 բառային, 76 ձևաբանական և 18 շարահյուսական նորամուծություն:

Հետագոտոհները մատնանշել են լատինաբան հայերենի հետևյալ առանձնահատկությունները:

1. Ներգոյականի կազմություն՝ «ըն/ն», «ներ» + եզակի տրական (նաև «ում» կամ «ոջ» վերջավորությամբ), հոգնակի հայցական՝ «ըն թղթում», «ըն տան», «նինքեան», «ներնոյնում տեղոջ», «ներ մերում խօսում», «ոչ թաքչի ոչ ընկատարում կայ», «ըն բանում», «նոսկում», «նարեան», «նաղբեր», «նԱղամում», «նեսայոջ», «նաստեղ», «ըն հօր», «ըն կնոջ», «ըն գեղջ», «ըն տեսուն», «նաուուր», «ըն քեռ», «ըն թուոջ», «ըն ճմարտում», «ըն գտում», «ըն սիրոյ», «ըն համբերութեան», «ըն հնում օրինում», «ըն յսկզբան», «նիրում իմիք», «նայսմիկ կենցաղում», «նորքանս չարիս»³⁶²,

այդպես է կազմվել ոչ միայն գոյականների, այլև ածականների, «միջակ անունների» (°), գերբայների, գերանունների (բացի անձնականներից) ներգոյականը՝ «ո՞ր»/«ո՞ր» — եզակի՝ «նորում», «նում» — հոգնակի՝ «նորս», «նոյս», «նելն» («ի լինելն»), «նեղանիլն», «ըն լինելն», «ըն սիրելն», կրա-

³⁵⁷ ՎԱՅՏԵՆԲԵՐԳ 1990:

³⁵⁸ ԶԱՐԴՀԱՆԱԼԵԱՆ 1878, 45-55:

³⁵⁹ ՏԵՐ-ՆԵՐՍԵՅԱՆ 1966:

³⁶⁰ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 90-98:

³⁶¹ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹. այս նկարագրության ոչ բոլոր կետերն են արտացոլված մեր ակնարկում:

³⁶² ԶԱՐԴՀԱՆԱԼԵԱՆ 1878, 51, ԱՃԱՌՅԱՆ 1951, 314, ՏԵՐ-ՆԵՐՍԵՅԱՆ 1966, 313, ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 92-93, ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 166 (35): Հովհաննես Կոստանդնուպոլսեցին առաջարկում է տարբերակներ՝ «ներգոյական՝ ի մտի կամ ըն մտում», տե՛ս ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ, 1674, 7. առաջինը ճիշտ դասական ձևն է, բայց և՛ «ներգոյական՝ յոսկւոջ կամ նոսկում», ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ, 1674, 12: Տե՛ս նաև «ներ բերանում... ներ գրման» (ORENGO 2004, 320) — “in ore... in scriptura” (ORENGO 2004, 323):

վորական՝ «ըն սիրելին», «ըն լուսնալն», «ըն լնուլն», «նիւրեան», «նիւրեանս», «նայսմիկ»³⁶³:

Ներգոյականի կազմութեան այս ձևերը՝ «ըն/ն», «ներ» նախդիրներով և եզակի տրականի «ում» ու «ոջ» վերջավորութիւններով, հունաբան հայերենի ժառանգութիւնն է (տե՛ս Բ 2ա, Բ 3ա):

2. «Բ» հոլովումն ընդհանրացել է՝ «ծաղը» – «ծաղեր», *փխ.* «ծաղու», «մեղը» – «մեղեր», *փխ.* «մեղու»³⁶⁴:

3. Անեզական բառերը դարձել են եզակի՝ «կեան», «միտ», «աչ», «վար», «մեղ», «փառ», «օրէն», «կամ», «բար», «արտեանուն», «հայրենի», *անհոգնականները* դարձել են հոգնակի՝ «մարդիկ»³⁶⁵: Զարպհանալյանը նկատել է նաև «արտեանունի քոյոյ», «խիղճ մտի» և «զկարս քոյինս»³⁶⁶:

Հունաբան թարգմանութիւններում մենք արձանագրել ենք անեզական գոյականների եզակի ձևեր՝ «երկին», «շնորհ», «հաւատ», «օրէն» (տե՛ս Ա 7.2), և «մարդ» գոյականի «մարդք» հոգնակին (տե՛ս Բ 2գ2):

4. Ածականների բաղդատական աստիճանն անխտիր կազմվել է «գոյն», *իսկ գերադրականը*՝ «գունեղ» վերջածանցով՝ «ի վերագունէ բարույ», «մեծագունեղ խնդուիւն», «խոնարհագոյն», «խոնարհագունեղ», «սպիտակագոյն», «սպիտակագունեղ», «բարեգոյն», «բարեգունեղ», «լաւագոյն», «փարթամագունեղ», «ողորմածագունեղ», «լաւագունեղ», «ուղղագունեղ», «վեհագունեղ», *Ոսկանը գերադրականի համար առաջարկել է* «եղ» վերջածանցը՝ «իմաստեղ», «եղ»-ը՝ «գունեղ»-ին զուգահեռ, նշել է նաև Շրյոդերը՝ «մեծագունեղ», «մեծեղ», նաև «մեծեղագունեղ»³⁶⁷:

Հունաբան թարգմանութիւններում ևս նախապատվութիւն էր տրվում «գոյն»-ով բաղդատականներին (տե՛ս Բ 11), արձանագրված են «եղ»-ով գերադրականի դեպքեր՝ «յատկեղ» «արագեղ», «յամբեղ» (տե՛ս Ա 3բ2):

5. Ածականները միշտ համաձայնեցվում են³⁶⁸ «ներտասնաղուջ սաղմոսարանում», «ի զանազանից ըզձից իւրաքանչիւրոյ իրի», «առբեր ինձ զօր մի

³⁶³ ԱՃԱՌՅԱՆ 1951, 314:

³⁶⁴ ԱՃԱՌՅԱՆ 1951, 314, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 100, 129, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 165 (27): Լ. Հովհաննիսյանը նկատել է «*փոքեր*» ձևն Առաքել Դավթիթեցու մոտ և եզրակացրել, որ այսպիսի հոլովումը պետք է վերագրել ոչ միայն լատինաբան հայերենին, այլ XVII դարի լեզվին առհասարակ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1980, 178):

³⁶⁵ ԶԱՐՊՀԱՆԱԼՅԱՆ 1878, 51, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 92, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 165 (25, 26): Հովհաննես Կոստանդնուպոլսեցին բերում է նաև այդ բառերի սեռականի ձևերը՝ անխտիր «ի» վերջավորութեամբ՝ «մեղ-մեղի, շնորհ-շնորհի, փառ-փառի, օրէն-օրինի, կեան-կենի», ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՆՎ. 1674, 9: Ի դեպ, գոյականն իր ուղղականով և սեռականով ներկայացնելը լատիներենի քերականութեան ավանդույթ է: Գ. Զահուկյանը նշում է, որ Հոլովը վիճարկում է այն կարծիքը, թե «մեղ», «շնորհ», «փառ», «օրէն», «կամ», «կեան» բառերը միայն հոգնակի թվով են գործածվում, և բերում է հին գրքերից այդ բառերի եզակի գործածութեան օրինակներ, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 99:

³⁶⁶ ԶԱՐՊՀԱՆԱԼՅԱՆ 1878, 51:

³⁶⁷ ԶԱՐՊՀԱՆԱԼՅԱՆ 1878, 52, ԱՃԱՌՅԱՆ 1951, 311, 315, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 69, 94, 168, 185, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 93, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 167 (39, 40):

³⁶⁸ «Ածական պարտի համաձայնիլ ընդ գոյականին միշտ և ամենուրեք, այսինքն ոչ միայն մինչ հետևի գոյականին, այլ և մինչ նախադրի նմին», տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՆՎ. 1674, 161:

վկայ ամբողջի առաքինութեան, որ չիցէն բծիւ իմիւ արատաւորեցեալ», «ան-
ուանց յատկից արականաց», «ըն չափաւորի քաղցեր», «յորժամ խորհիմք ներ-
տրամադրեցելոյ բանէ», «յարմարից բայից անկից գտեցելոց պատշաճաւորու-
թիւն» «ըն մարդում ումեք բեկանելում և մահկանացում», «համայնքն
խորհուրդք և արարմունք», «քոյք շնորհք»³⁶⁹:

Հունարան թարգմանություններում էլ հանդիպում են առաջագոյն ոչ
միավանկ որոշչի համաձայնեցման դեպքեր (տե՛ս Գ 14ա):

6. Օգտագործվել են «երկաքանչիւր», «իւրաքանչ», «երկաքանչ» արհես-
տական դերանունները³⁷⁰:

«Երկաքանչիւր» դերանունը վկայված է բազմաթիվ հունարան թարգմա-
նություններում (տե՛ս Բ 5):

7. Բայի համար սահմանվել են հետևյալ ժամանակները՝ ներկա՝ «սիրեմ»,
ապառնի՝ «սիրեցից», «անկատար»՝ imperfectum-ից³⁷¹, «կատարեալ»՝ perfectum-
ից³⁷², «յարակատար»՝ համապատասխան լատիներեն եզրն է paulo plus per-
fectum³⁷³ «սիրեալ եմ» (հմմտ. Թրակացու արհեստական ձևը՝ «էկոփէի»,
Թրակ. 46) և «գերակատար»՝ plusquamperfectum-ից³⁷⁴ «սիրեալ էի» (հմմտ.
Թրակացու արհեստական ձևը՝ «էկոփեցի», Թրակ. 48)³⁷⁵:

8. Բայի համար սահմանվել են հետևյալ եղանակները՝ «սահմանական»
(հմմտ. indicativus), «հրամայական» (հմմտ. imperativus), «ստորակցական»
(հմմտ. subjunctivus), «ըղձական» (հմմտ. optativus), «աներևոյթ» (անորոշ
դերբայ, հմմտ. infinitivus³⁷⁶) (Թրակացու եզրերն են՝ «սահմանական», «հրա-
մայական», «ստորադասական», «ըղձական», «աներևոյթ» Թրակ. 22) և «ըն-
դունելութիւն» (դերբայ), որն, ինչպես և Թրակացու մոտ, դիտվում է բայա-
կան համակարգից դուրս (Թրակ. 26)³⁷⁷:

³⁶⁹ ԶԱՐՊԱՆԱԼԵԱՆ 1878, 51-52, ԱՃԱՌՅԱՆ 1951, 315, ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ 1966, 314, ՀԱՄ-
ԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 94:

³⁷⁰ ԱՃԱՌՅԱՆ 1951, 316, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 110:

³⁷¹ Թրակացու համապատասխան «յարաձգական»-ը (Թրակ. 22) παρατατικόν-ի (Thrax 53.2) հա-
մարժեքն է:

³⁷² Թրակացու համապատասխան «անորիշ» և «անսահմանական» տերմինները (Թրակ. 22) հու-
նարեն άοριστος-ի (Thrax 53.3) համարժեքն են:

³⁷³ Թրակացու մոտ «յարակայ» կամ «յարակայական» (Թրակ. 22)՝ παρακείμενον-ից (Thrax
53.3-4): Համապատասխան լատիներեն տերմինները բերում ենք Հոլովի՝ գրաբարի լատինե-
րեն քերականությունից՝ HOLOV 1975, 56, 57, 63, 64 և այլն. paulo plus perfectum ժամանա-
կաձև լատիներենում չկա, այն բացակայում է նաև Հոլովի՝ լատիներենի քերականությունից՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ 1675, 67-68. «Ժամանակք են հինկ. ներկայ, անկատար, կատարեալ,
գերակատար, ապառնի»:

³⁷⁴ Այս եզրը նույնն է Թրակացու մոտ (Թրակ. 24)՝ υπερσυντελικόν-ից (Thrax 53.4), ունի և
«վաղակատար» տարբերակը (Թրակ. 50):

³⁷⁵ ԱՃԱՌՅԱՆ 1951, 316-317:

³⁷⁶ Համապատասխան լատիներեն տերմինները բերում ենք Հոլովի՝ գրաբարի լատիներեն քերա-
կանությունից՝ HOLOV 1975, 58, 60, 61 և այլն:

³⁷⁷ ԱՃԱՌՅԱՆ 1951, 316-317: Պետք է նշել, որ ըղձական եղանակ կա հին հունարենում, իսկ
լատիներենում այդպիսին չկա, սակայն Հոլովի լատիներենի քերականության մեջ (ՅՈՎՀ-
ՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ 1675, 68) կարգում ենք. «եղանակք են հինկ. սահմանական, հրամայա-

Աճառյանը թվարկել է «Հնարված» ժամանակաձևերը³⁷⁸.

1) Հրամայականի ապառնի՝ «սիրեսիր»։ այս ձևը Դիոնիսիոս Թրակացու «Կոփեմ» բայի հարացույցում հատկացված էր «անորիշի» (կատարյալի) համար՝ «կոփեսիր», իսկ ապառնու ձևն էր «կոփեսցէ» (Թրակ. 50),

2) ստորադասականի անկատար՝ «եթէ սիրիցէի»։ ստորադասականի մյուս ժամանակաձևերը, նույնպես կազմված «եթէ»-ով, համեմատաբար կանոնավոր են, բացի օժանդակ բայի արհեստական «իցէի» ձևից՝ ներկա՝ «եթէ սիրիցեմ», կատարյալ-հարակատար՝ «եթէ սիրեալ իցեմ», գերակատար՝ «եթէ սիրեալ իցէի», ապառնի՝ «եթէ սիրեալ եղցէ»:

Թրակացու հարացույցում ստորադասականը ևս կազմվել է «թե»-ով, սակայն արհեստական ձևերն ավելի շատ են՝ «ներկայ՝ թե կոփիցեմ», «յարակայ և գերակատար՝ թե էկոփեցի, էկոփեցեր, էկոփեցեր», «անսահմանական (կատարյալ) և ապառնի՝ թե կոփեցից» (Թրակ. 54). ուշագրավ է, որ անկատարը, հունարենի հետևություններով, ստորադասական չունի.

3) ըղձականի ներկա = ապառնի՝ «երանի թե սիրիցեմ», անկատար՝ «երանի թե սիրիցէի», կատարյալ = հարակատար՝ «երանի թե սիրեալ իցեմ», գերակատար՝ «երանի թե սիրեալ իցէի»։ այս՝ լեզվում գոյություն ունեցող տարրերից բաղկացած ժամանակաձևերը համեմատության ոչ մի եզր չունեն Թրակացու հարացույցի ծայրե ի ծայր արհեստական ձևերի հետ՝ «ներկայ՝ կոփեմ», «յարակայ և գերակատար՝ էկոփեցի», «անսահմանական և ապառնի՝ կոփեցից, կոփեսիր, կոփեսցե» (Թրակ. 51-53),

4) աներևույթի կատարյալ-հարակատար-գերակատար՝ «սիրեալ գոլ», ապառնի՝ «սիրելոց գոլ»³⁷⁹, կրավորական՝ «սիրիլ», «սիրեցեալ գոլ», «սիրելի գոլ»³⁸⁰:

Թրակացու հարացույցում անորոշ գերբայի ավելի բազմազան ձևեր են առջարկվում՝ «ներկայի և յարաձգականի»³⁸¹ կոփել, կրաւորական՝ կոփիլ», «յարակայի և գերակատարի՝ էկոփել, էկոփոցել, կրաւորական՝ էկոփոցիլ», «անորիշի՝ կոփոցել, կրաւորական՝ կոփոցիլ», «ապառնոյ՝ կոփոցոցել, կոփոցոտել, կրաւորական՝ կոփոցոցիլ, կոփոցոտիլ», (Թրակ. 49-50): Հմմտ. նաև «էմեռանել» ձևը, որով թարգմանված է հունարեն պերֆեկտի ինֆինիտիվը (տե՛ս Բ 8):

9. Դերբայները համաձայնեցվում են էական բայի հոգնակիի հետ՝ «սիրեցեալք եմք», «սիրեցեալք էք»³⁸²:

կան, ըղձական, ստորակցական, աներևույթ»: Ավելին, ըղձականի ձևեր են կազմված՝ utinam եղանակավորող բառով (համարժեք է «երանի թէ»-ին) և subjunctivus («ստորակցական») եղանակի զանազան ժամանակաձևերով (հաճախ երկուսը համընկնում են), տե՛ս ՅՈՒՆԵՍԿՈՒ չՈՒՈՎ 1675, 70-71, հմմտ. նաև HOLOV 1975, 65, 66, etc. (լատիներեն ձևերը բերվում են որպես հայերեն ձևերի թարգմանություն):

³⁷⁸ ԱՃԱՌՅԱՆ 1951, 316-317:

³⁷⁹ ՋԱՆՈՒԿՅԱՆ 1974, 77 (Ոսկան):

³⁸⁰ ՅՈՒՆԵՍԿՈՒ չՈՒՈՎ 1674, 42:

³⁸¹ «Յարաձգականն» անցյալ անկատարն է:

³⁸² ԱՃԱՌՅԱՆ 1951, 318:

Թրակացու «կոփեմ» բայի հարացույցում էլ այդպես է՝ «ստորադասական կրավորական յարաձգականի՝ թե կոփեալ լինէի... թե կոփեալք լինէաք» (Թրակ. 55), «ստորադասական կրավորական յարակայի՝ թե էկոփեալ եմ... թե էկոփեալք եմք... գերակատարի՝ թե կոփեցեալ էի... թե կոփեցեալք էաք» (Թրակ. 56):

10. *Կրավորականի ձևերը տարբերակելու համար Հոլովը «ե» լծորդության բայերի անկատարը կազմում է վերջավորությունից առաջ ներմուծելով «ե»՝ «սիրեէի», «սիրեէիր», «սիրիր», «սիրեէաք», «սիրեէիք», «սիրեէին», իսկ «ա» լծորդության բայերի՝ «ե» լծորդության բայերի նման՝ «լուանէի», «լնանէի», հիմքի «ա»-ի բացթողումով³⁸³. Հմմտ. նաև «տարաձգիւր»³⁸⁴, «սիրիր»³⁸⁵, «լինիր»³⁸⁶, «տեսանիր», «ուտիր», «բառնիր», «բանիր»³⁸⁷: Վ. Համբարձումյանը «գրեէի», «գրեցեէի», «պահանջեէի», «ելանեէին», «անուանեէին», «թուլեէին» ձևերը բնորոշում է որպես «ե» խոնարհման անկատար, առանց չեղտելու կրավորականի հանգամանքը³⁸⁸:*

Դիոնիսիոս Թրակացու մոտ կրավորական անցյալ անկատարի վերջավորություններից նշվածների հետ նույնն է միայն եզակի երրորդ դեմքի «իւր»-ը (Հմմտ. Բ 7բ):

11. *Կրավորական ձևեր ստեղծվել են նույնիսկ բայական հիմքերից կազմված գոյականների համար՝ «նկատումն» – «նկատեցումն», «ստիպումն» – «ստիպեցումն»³⁸⁹:*

12. *Բայի կատարյալի հիմքը կազմվել է ավելորդ ցոյականությամբ՝ «ածեցեալ», «մաքրեցմամբ» (թերևս նման է նախորդ կետի «նկատեցումն», «ստիպեցումն» ձևերին), «ստեղծեցեալ», «ներհեղեաց», «դրեցեալ»³⁹⁰, կրավորական իմաստ ստանալով³⁹¹. Հմմտ. հունարան հայերենում՝ «բերեցելոց», «բերեցելոյ», «տարբերեցելոց», «ի բաց բարձեցելոյ», «եղեցելովք» (Բ 9դ):*

13. *«Ի» լծորդությունը վերացված է, պահվում է կրավորականի համար³⁹²:*

14. *«Ու» լծորդության բայերի խոնարհման ժամանակ ներկայում և անկատարում «ու»-ն երբեմն փոխարինվում է «ոյ»-ով՝ «լնոյք», «լնոյի», «լնոյի», «լնոյիր», «լնոյր», «լնոյաք», «լնոյիք», «լնոյին»³⁹³:*

15. *«Ա» և «ու» լծորդության բայերը կրավորական ձևեր են ստացել՝ «իմ» կամ «անիմ» (=«ան» ածանց + «իմ» վերջավորություն) վերջավորությամբ՝ «բանամ» – «բանիմ», «հաւատամ» – «հաւատանիմ», «թանամ» – «թանիմ»,*

³⁸³ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 106, ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 168 (48):

³⁸⁴ ԱՃԱՌՅԱՆ 1951, 312:

³⁸⁵ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 106:

³⁸⁶ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 77: Հովհաննես Հոլովն առաջարկել է տարբերակներ՝ «եղանիր, լինիր, կամ եղանէր, լինէր», տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎ 1674, 33:

³⁸⁷ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ 1966, 314:

³⁸⁸ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 94, ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 168 (47), 169 (61):

³⁸⁹ ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ 1878, 53:

³⁹⁰ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 96:

³⁹¹ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 172 (88), Հմմտ. նաև 168-9 (50-56, 62-63):

³⁹² ԱՃԱՌՅԱՆ 1951, 316, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 76, 106, ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 167 (45):

³⁹³ ԱՃԱՌՅԱՆ 1951, 317:

«բառնամ» — «բառնիմ», «իմանամ» — «իմանիմ», «խոստանամ» — «խոստանիմ», «որսամ» — «որսանիմ», «աղամ» — «աղանիմ», «ողբամ» — «ողբանիմ», «հեղում» — «հեղանիմ»³⁹⁴, «լամ» — «լալիմ», «տամ» — «տուլիմ»³⁹⁵, «գնանի»³⁹⁶. այսպիսով, «ան» ածանցն ավելանում է ներկայում «ն» կամ «ան» ածանց չունեցող բայերի («հաւատամ», «որսամ», «աղամ», «ողբամ», «գնամ») հիմքին:

Այս ձևերը վկայում են հունաբան թարգմանություններում արձանագրված մեթոդի ընդլայնված կիրառություն մասին՝ «իմանի», «մոռանի», «ստացանի», «հանանի», «երկբայանի», «չարաբերի... շարաբառնի», «լուանի» (տե՛ս Բ 7գ):

16. Հասարակ բայերը վերացվում են, բացառությամբ «խոստովանիմ» բայի³⁹⁷,

17. Անկանոն բայերի համար կանոնավոր ձևեր են ստեղծված.

«լսեմ» բայի անցյալ կատարյալ՝ «լսեցի» (փխ. «լուայ»), ապառնի՝ «լսեցից», հրամայական՝ «լսեա», ստորագասական՝ «լսիցեմ», «լսեալ եմ»,

«ճանաչեմ» բայի կատարյալ՝ «ճանաչեցի» (փխ. «ծանեայ»), իսկ անցյալ կատարյալի հիմքից առանձին «ծանիմ» բայն է ստեղծվել,

«մեղանչեմ» բայի կատարյալ՝ «մեղանչեցի» (փխ. «մեղայ»),

«ուռնիմ» բայի կատարյալ՝ «ուռնեցի» (փխ. «կալայ»), իսկ կատարյալի հիմքից առանձին «կալնում» բայն է ստեղծվել (հմմտ. Պլատոնի թարգմանչի օգտագործած «ընկալում» բայը, տե՛ս Ա 8),

«տամ», «ետու» բայը ձևափոխվել է «տրեմ», «տրեցի» (հրամայականի «տուր» հիմքից)³⁹⁸:

18. Անկանոն բայերի կրավորականի մեջ հիշատակելի ձևեր՝

«ուտեմ» — անկատար՝ «ուտեչի», կատարյալ՝ «ուտեցայ», հարակատար՝ «ուտեցեալ եմ», գերակատար՝ «ուտեցեալ էի», ապառնի՝ «ուտեցայց»,

«լսեմ» — անկատար՝ «լսեչի», կատարյալ՝ «լսեցայ», հարակատար՝ «լսեցեալ եմ», գերակատար՝ «լսեցեալ էի», ապառնի՝ «լսեցայց»,

«ճանաչեմ» — անկատար՝ «ճանաչեչի», կատարյալ՝ «ճանաչեցայ», հարակատար՝ «ճանաչեցեալ եմ», ապառնի՝ «ճանաչեցայց»,

³⁹⁴ ԱՃԱՌՅԱՆ 1951, 320, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 75-76, 106, 169, ՏԷՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ 1966, 314-315: Վ. Համբարձումյանը բերում է հետևյալ օրինակները՝ «իմանանիմ», «առնանիմ», «թողանի», «լնանիմ», «կալանիմ» (ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 94, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 169 [57]) և «լուանիմ» (ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 168 [48]):

³⁹⁵ ԱՃԱՌՅԱՆ 1951, 319:

³⁹⁶ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 86:

³⁹⁷ ԱՃԱՌՅԱՆ 1951, 322: Հոլովը, սակայն, տարբերակում է ըստ սեռի այդ բայի որոշ ձևեր, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 108: Իսկ Ոսկանը հասարակ էր համարում միայն կրավորաձև («իմ»-ով վերջացող) բայերը, որոնք նույն վերջավորությամբ արտահայտում են և՛ կրավորականություն, և՛ ներգործականություն (օր. «ծնանիմ»), ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 75:

³⁹⁸ ԱՃԱՌՅԱՆ 1951, 319, ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 108-109, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 172-173 (89, 95, 96):

«տամ» — «տրիմ», «տրեկի», «տրեցայ», «տրեցեալ եմ», «տրեցեալ էի», «տրեցայց», «տրիր», «տրիցիմ», «տրիցեկի»,

«ունիմ» — «ունեցայ», «ունեցեալ եմ», «ունեցայց», «ունիր»³⁹⁹:

19. Ընդունվում են հունարան դպրոցի նախամասնիկները⁴⁰⁰ նախածանցները, վերջածանցները, նկատվում են «նախածանցների և վերջածանցների բունագրոսիկ գուգորդումներ»⁴⁰¹ «ներ այնքանում», «ըն մեծագունեղի հոգունակութեան», «ապագերծեցեալ», «արտահանեցեալ», «նախարտալածեալ», «ենթասուզեսցի», «առբերելոց», «մակ յաւելիլ», «նախասահմանեցեալք», «արդիւնաւորապէս», «չնորհացն վերընդունեցելոյ», «յաղօթելոյ մտավորապէս», «նահատակք... վերստացեալք են», «հրաշք և սքանչելիք համահաստատեալք են», «պտղունակապէս». մեջբերված օրինակները հետևյալ հստակեցման կարիքն ունեն. ավելի ճշգրիտ կլիներ տարբերակել առանձին բառ հանդիսացող նախդիրները բառի մաս կազմող նախածանցներից (տվյալ դեպքում՝ «ներ», «ըն», «մակ»):

20. Օգտագործվել են լատիներենից պատճենված բառեր՝ «բաւարարութիւն» (satisfactio), «հրապիրակ» (respublica), «լրունակ» (summa՝ «լրումն, ծագ»), «զգալ չարապէս» (male sentio), «վերատեսութիւն» (revisio), «փաղարկութիւն» (conjectura՝ «կարծիք»), «ստորաբառնալ», «մանաւանդականութիւն», «կացութիւն»⁴⁰², այսպիսի արհեստական բառեր՝ «հոլովախնդրու», «կատարունակել», «ստորակցական», «պարբեր» («շուրջը»), «երկպառկապէս», «համահաստումն», «եզերեցեալ» (terminé), «ստորանկիլ», «մանաւանդականութիւն»⁴⁰³, բառ բառեր՝ անսովոր և անհարկի կազմությամբ՝ «բարձրամտիցիմ»⁴⁰⁴, «ակնարկիցես», «կարգադրիցեմ», «կենցաղավարիլն»⁴⁰⁵, «առփորձեցումն» (adprobatio), «ներսունապէս» (intime), «վեհալուստր» (illustis)⁴⁰⁶:

21. Փոխառվել է լատիներեն ledere բայը՝ «լետեմ»:

22. Ըստ Հոլովի, բաղդատական ածականները պահանջում են «քան» նախդրով հայցական կամ բացառական, իսկ գերադրականը պահանջում է սեռական կամ ներգոյական. Գ. Զահուկյանը գրում է, թե այս խնդրառությունը տրվում է ավելի շատ լատիներենի նմանակությամբ, քան հայերենի փաստերի հիման վրա⁴⁰⁷: Տեր-Ներսեսյանը նկատել է լատիներենի հետևությամբ

³⁹⁹ ԱՃԱՌՅԱՆ 1951, 322: Իսկ Զարգանալյանը նշել էր «տամ» բայի այլ կրավորական ձևեր՝ «տուիմ», «տուեկի», փխ. «տուեալ լինիմ/լինէի», ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ 1878, 53, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 173 (93, 94, 97):

⁴⁰⁰ ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ 1878, 52, ԱՃԱՌՅԱՆ 1951, 322:

⁴⁰¹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 91:

⁴⁰² ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ 1878, 53:

⁴⁰³ ԱՃԱՌՅԱՆ 1951, 322-323:

⁴⁰⁴ Բառը կերտվել է արդեն հին թարգմանություններում՝ «բարձրամտութիւն» (Բրս. հց. 167 [483]) – նվηλοφροσύνη (PG 31.1164.24):

⁴⁰⁵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 1990, 90-91: Պետք է նշել, որ վերջին չորս բարդ բառերն ավանդված էին արդեն հին թարգմանություններում, սակայն կարող էին կրկին ձևված լինել լատիներեն բառերի հետևությամբ:

⁴⁰⁶ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2008¹, 164 (20):

⁴⁰⁷ ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 115-116:

բաղդատականի գործիականով խնդրառություն՝ «Պետրոս Հօրապոյն է Կիրակոսիւ»⁴⁰⁸: Հունաբանները հունարենի հետևությունյամբ օգտագործել են սեռականով խնդիր (տե՛ս Գ 1ե):

Վ. Համբարձումյանի մոտ գտնում ենք մի շարք ուշագրավ մեջբերումներ հետևյալ բնորոշումներով՝ ա) կայուն բառակապակցություններ՝ կայուն շարադասությունյամբ. «Ջերմեռանդապէս բաղձամ վերընդունիլ», «գտանես զժամանակ ուսանելոյ զմտածութիւն», «գի այդ ոչ գտանես զպարապորդութիւն և քրիստոնէաբար կենցաղավարելոյ», բ) անվանական լրացումների ետադաս կիրառություն՝ «նկատես յօրինակս կենդանարարս» (հետագայում խմբագրված՝ «հայեաց ի կենդանի օրինակս»), «անմտութիւն է հաւատալն ճշմարտի այսմիկ օրինադրութեանս քրիստոնէականի» (հետագայում խմբագրված՝ «անմտութիւն է հաւատալ, թէ այս վարդապետութիւն իցէ ճշմարիտ»), գ) բայական լրացումների խրթին շարադասություն՝ «արդ՝ դիւրապէս քամահեսցես զամենայն, եթէ յարածամ մտածեսցես՝ գոլ քո, մահկանացու» (հետագայում խմբագրված՝ «դիւրապէս զամենայն ինչ քամահեսցես՝ եթէ զմահկանացու գոլդ զմտաւ ածիցես»), «և այնպիսիք նեղասրտին, և յարածամ տրտնջեն, և զազատութիւն մտաց ոչ գտանեն, մինչև բոլորով սրտիւ վասն աստուծոյ հրատարակիցին» (հետագայում խմբագրված՝ «և այնպիսիք տանջին, և ընդ դոյզն իրաց տրտնջին: Եւ չստանան զազատութիւն մտաց, թէ ոչ ի բոլորէ սրտէ՝ վասն աստուծոյ հնազանդին զանձինս»)⁴⁰⁹:

Բացի հետադոտողների մատնանշած առանձնահատկություններից, հիշատակենց նրանց իսկ աշխատություններում արձանագրված՝ հունաբան հայերենում ակունքներ ունեցող շեղումներ դասական զրաբարի կանոններից, որոնք, սակայն հատուկ ուշագրություն չեն արժանացել:

1. Նախածանցավոր բառերի ևս մի քանի օրինակ՝ «գերազանց», «արտակացելոց», «տարածգիւր»⁴¹⁰, «բաղկանայ», «բազմաձէ», «բացերեութիւն», «տրամաբանութիւն», «չարամանութիւն», «նախադասութիւն», «բաղադանութիւն», «ենթակայ»⁴¹¹, «ստորակցական», «պարբեր», «ստորանկիլ»:

2. Նոր գոյականներ են կերտվել «ակ» վերջածանցով. «զգայութիւնք... տեսակ... լսակ... հոտոտակ... ճաշակ... շօշափակ»⁴¹² (հմմտ. Ա 3բ3):

3. Մակբայներ են կազմվել՝ հունաբանների նախասիրած վերջածանցներով՝ «արդիւնաւորապէս», «դիւրապէս»⁴¹³, «առողջատաբար», «փափկակի»⁴¹⁴ «սեռօրէն»⁴¹⁵, «մաքրապէս, որոշապէս և պարզապէս», «սապէս»⁴¹⁶, «քրիստոնէաբար», «մտաւորապէս»⁴¹⁷ (հմմտ. Ա 3բ4):

⁴⁰⁸ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ 1966, 314:

⁴⁰⁹ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 96-97:

⁴¹⁰ Մեջբերված է ԱՃԱՌՅԱՆ 1951, 312-313:

⁴¹¹ Մեջբերված է ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 151, 154 (Սիմեոն Զուղայեցու մոտ):

⁴¹² Մեջբերված է ԱՃԱՌՅԱՆ 1951, 312:

⁴¹³ Մեջբերված է ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1990, 96-97:

⁴¹⁴ Մեջբերված է ԱՃԱՌՅԱՆ 1951, 311, 313:

⁴¹⁵ Մեջբերված է ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 95:

⁴¹⁶ Մեջբերված է ԶԱՀՈՒԿՅԱՆ 1974, 362, 363 (Խաչատուր Արզրումեցու մոտ):

⁴¹⁷ Մեջբերված է ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 2008¹, 163 (16):

4. Օգտագործվել են հունաբանների ստեղծած՝ «ինչպես օրինակ» նշանակությամբ արհեստական մակբայները՝ «որբար», «որպակ», «հիկէն... որպակ», «հիզան», «որզոն... հիբար... որզան... հիկէն... զիբար», «որզոն», «որբար»⁴¹⁸ (Հմմտ. Ա 3բ5):
5. Կազմվել են ժխտական «ան» նախածանցով՝ «ի»-ով վերջացող բայածականներ՝ «անաղարտելի», «անստելի», «անեզրանալի»⁴¹⁹ (Հմմտ. Ա 4):
6. Հոգնակի սեռական-տրականի «ց» վերջավորությունն օգտագործվել է առանց հոլովիչ ձայնավորի՝ «նախկինց»⁴²⁰ (Հմմտ. Բ 2գ):
7. Վկայված է «մի» դերանվան զուգահեռ ձևերից մեկը՝ «մու»⁴²¹ (Հմմտ. Բ 1բ):
8. Օգտագործվել են հունաբանների ստեղծած արհեստական նախդիրները՝ «թարց»⁴²², «մակ», «ներ», «նը», «ըն»⁴²³, «մակ յաւելիլ»⁴²⁴ (Հմմտ. Բ 3ա, բ, գ):
9. Ոսկան Երևանցին օգտագործել է Արիստոտելի թարգմանություններում հանդիպող «ներ նոջա»⁴²⁵ արտահայտությունը. «ներ սոջա»⁴²⁶ նույնպես ավանդված է (տե՛ս Բ 2գ1):
10. Դասական գրաբարում չհոլովվող «իւրաքանչիւր» դերանունը հոլովվել է՝ «իւրաքանչիւրոյ», «իւրաքանչիւրոյ ուրուք»⁴²⁷ (տե՛ս Բ 2գ3):
11. Կրավորական անորոշ դերբայը կազմվել է «իլ»-ով՝ «սիրիլով»⁴²⁸, «ուսիլ», «միաբանիլ»⁴²⁹ (Հմմտ. Բ 7ա),
12. Խաչատուր Արզրումեցին «իցեալ»-ով դերբայը հատկացրել է միայն կրավորականին՝⁴³⁰ «ծնիցեալս»⁴³¹, «զրիցեալ», «ստորոգիցելոյ»⁴³² (Հմմտ. Բ 7բ):
13. Բայեր են կազմվել «ոց» ածանցով արհեստական հիմքերով՝ «բացերևոցէ», «յարառոցին»⁴³³, Ոսկանը որպես «աներևոյթի ապառնի» նշում է երկու զուգահեռ ձև՝ «բառնալոց գոլ» և «բառնոցել»⁴³⁴ (Հմմտ. Բ 9ե, որտեղ չորս

